ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ

ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 10

Նպատակը և խնդիրները 10

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները 12

ՀՀ 2017 – 2019թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը 12

Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները 14

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 15

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 16

1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 16

1.2 ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ 17

1.3 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 17

1.3.1 Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ 17

1.3.2 Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները 18

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 19

2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 19

2.1.1. Ներածություն 19

2.1.2. Համախառն առաջարկ 20

2.1.3. Համախառն պահանջարկ 28

2.1.4. Գնային փոփոխականներ 31

2.1.5. Ֆինանսական շուկա 33

2.1.6. Վճարային հաշվեկշիռ 35

2.1.7. Պետական հատված 42

2.2.ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ 45

2.3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 51

2.3.1. 2017-2019 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը 51

2.3.2. Պետական բյուջեի վրա կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները 57

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2017–2019ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 59

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 64

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ 64

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2017-2019ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 66
4.3 2017-2019ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 68
4.4 ՀՀ 2017-2019ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ 74
4.5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 75
4.6 ՀՀ 2017-2019ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ 78

ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 81

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2017-2019ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 82

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 84
6.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 84
6.1.1. Իրավիճակի նկարագրությունը 84
6.1.2. Հիմնական խնդիրներ 91
6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 93
6.2.1. Գերակայությունները 93
6.2.2. Նպատակները 94
6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները 95
6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 95

ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 101

7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 101
7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 101
7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 143
7.1.3 ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 150

7.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ 161
7.2.1 Գիտության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները 161
7.2.2 Գիտության ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 173
7.2.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 178
7.2.4 Ոլորտի գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2016-2019թթ. ժամանակահատվածի համար 180

ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 181
8.1 ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 181

8.1.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 181
8.1.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 190
8.1.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 213
8.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 216
8.2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 216
8.2.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 219
8.3 2017-2019թթ. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 223

ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 233
9.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 233
9.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը 233
9.1.2 Վերջին տարիների զարգացման միտումները ոլորտում 242
9.1.3 Ոլորտի հիմնական խնդիրները 251
9.2.ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 254
9.2.1 Նպատակները 254
9.2.2 Գերակայությունները 259
9.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 260

ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 277
10.1. ՄՇԱԿՈՒՅԹ 277
10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 277
10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 329
10.2. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ 335
10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 335
10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 360
10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 363
10.2.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 366
10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ 368
10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 368
10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 377
10.3.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 378
10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 379
10.4.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 379
10.4.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 384
10.4.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 385

ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....386
11.1. ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....386
11.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը.....386
11.1.2. Վերջին երկու տարիներին ոլորտի զարգացման միտումները.....387
11.1.3. Հիմնական խնդիրները.....389
11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 390
11.2.1. Նպատակները.....390
11.2.2. Գերակայությունները.....391
11.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)392
ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... 401
12.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....401
12.1.1 Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը.....401
12.1.2 Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները..... 402
12.2. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 409
12.2.1. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում..409
12.3. ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ.....412
ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ..... 418
13.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....418
13.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը..... 418
13.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները 422
13.1.3. Հիմնական խնդիրները 427
13.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 428
13.2.1 Նպատակները.....428
13.2.2. Գերակայությունները 431
13.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) 432
ԳԼՈՒԽ 14. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 444
14.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 444
14.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը 444
14.1.2 Հիմնական խնդիրները.....449
14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 450
14.2.1 Նպատակները.....450
14.2.2 Գերակայությունները 452
14.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)453

ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ.....463
15.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 463
15.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը. 463
15.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները 465
15.1.3. Հիմնական խնդիրները 471
15.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 472
15.2.1. Նպատակները..... 472
2.2. Գերակայությունները..... 474
15.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) 474
ԳԼՈՒԽ 16 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ 481
16.1 ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....481
16.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը. 481
16.1.2 Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 485
16.1.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները).....487
16.2 ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 487
16.2.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը.....487
16.2.2 Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում.....490
16.2.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները).....491
16.3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 491
16.3.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը.....491
16.3.2 Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում.....499
16.3.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները).....500
16.4 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....501
16.4.1. Ծրագրի ընդհանուր նկարագիրը. 501
16.4.2. Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 503
16.4.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 504
16.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 504
16.5.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը.....504
16.5.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 517

16.5.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 520
16.6 ՀՀ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 527
16.6.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը 527
16.6.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 532
16.6.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 533
16.7 ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՂ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 533
16.7.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը 533
16.7.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները 536
16.7.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 537
16.8 «ԳՅՈՒՄՐՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 537
16.8.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը 537
16.8.2. Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 544
16.8.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 545
16.9 «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 546
16.9.1. Ծրագրի ընդհանուր նկարագիրը 546
16.9.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 549
16.9.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագերը (պարտավորությունները) 549
16.10 «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 550
16.10.1. Ծրագրի ընդհանուր նկարագիրը 550
16.10.2. Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 553
16.10.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 554
16.11 ««ՄԱՅՔՐՈՍՈՖԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻՈՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 554
16.11.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը 554
16.11.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 557
16.11.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 558

16.12 «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 558
16.12.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը. 558
16.12.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 561
16.12.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 562
16.13 «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 563
16.13.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը 563
16.13.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 564
16.13.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 565
16.14 «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 565
16.14.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը. 565
16.14.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում 567
16.14.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 567
16.15 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 570
16.15.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները 570
16.15.2. Վիճակագրության ոլորտի նպատակները և գերակայությունները մժծծ ժամանակահատվածում 573
16.15.3. Ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը 576
16.15.4. Արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր 577
ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 578
17.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 578
17.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը.....578
17.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները 579
17. 1.3. Հիմնական խնդիրները 582
17.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 583
17.2.1 Նպատակները.....583
17.2.2 Գերակայությունները 583
17.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) 584
ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ.....586
18.1.ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....586
18.1.2 Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում.....586

18.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ 589
18.2.1 Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանում և պետավտոհամարանիշների ձեռքբերում 590
18.2.2 Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում 596
Ազգային անվտանգության համակարգում իրավիճակի նկարագրություն 596
18.2.3 Կալանավայրեր 599
18.2.4 ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն 601
18.2.5 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները 604
ԳԼՈՒԽ 19. 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ 608
19.1. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման հիմնադրույթները 608
19.2. 2013-2016 թվականների հիմնական զարգացումները 611
19.3. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը 614
19.4 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները 614
19.5. 2017-2019 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը 615
19.6. 2017-2019 թվականների պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ոլորտների 617
19.6.1. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ 618
19.6.2. Սոցիալական ծառայություններ 619
19.6.3. Տնտեսական ծառայություններ 624
ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 635
Հավելված N 1 659
2. 2017-2019թթ-ին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը 663
3.Պետական բյուջեի վրա կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները 667
ՀԱՎԵԼՎԱԾ N 1 - Ե 682
Հավելված N2 695
Հավելված N3 702
Հավելված N4 797

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում արձանագրված դրական տեղաշարժերը պայմանավորված են հիմնականում ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) տնտեսական գործառույթների իրականացմամբ:

Ինչպես և նախկինում առաջիկա տարիներին նույնպես Կառավարությունը կշարունակի տնտեսական միջոցառումների իրականացումը՝ պետական միջամտությունն ուղղելով ինչպես շուկայի «բացերի» մեղմմանը, այնպես էլ՝ եկամուտների և այլ ռեսուրսների վերաբաշխմանն ու տնտեսության կայունացմանը: Կառավարության այսպիսի ծավալուն սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունավետության և ամբողջականության ապահովման գրավականը գերակա խնդիրների հստակեցումն ու դրանք միջնաժամկետ (նաև երկարաժամկետ) ռազմավարական ծրագրերի հենքի վրա լուծելն է: Մասնավորապես, ներկայումս ՀՀ իշխանությունների գերակա խնդիրներից մեկը երկրում բնակչության բարեկեցության աճն ու աղքատության հաղթահարումն է:

ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման գործընթացն օրենքով հանդիսանում է ընդհանուր բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս և իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգով: ՀՀ բյուջետային գործընթացում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման փուլի առանձնացումը պայմանավորված է այդ փաստաթղթի քաղաքական կարևորությամբ: Հարկ է նշել նաև, որ համապարփակ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրն այն ռազմավարական հենքն է, որի շրջանակներում վարվում են նաև միջազգային ֆինանսական օժանդակության ներգրավման հիմնահարցերին առնչվող բանակցությունները:

Նպատակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության բյուջետային գործընթացի պրակտիկայում պետական բյուջեի նախագիծը մշակվում է մեկ տարվա կտրվածքով: Պետական ծախսերի կառավարման առումով մեկ տարվա կտրվածքով մշակվող և իրականացվող պետական բյուջեներն ունեն որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, տարեկան ծրագրերի հիմքում դրվում են կարճաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներ, իրականացվող քաղաքականությունների և տարեկան բյուջետային ծախսերի միջև կապը ժամանակային անհամապատասխանության պատճառով հստակ չէ: Այդ պատճառով, որպես կանոն, վերահսկման առարկա է հանդիսանում ծախսերի չափը և ոչ թե ակնկալվող արդյունքը (նաև մատուցվող ծառայության որակը): Պետական ծախսերի քաղաքականությունը հստակ ձևակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել պետական ծախսերի ծրագրային պահանջները միջնաժամկետ (հնարավորության դեպքում՝ նաև երկարաժամկետ) հեռանկարում, որն իր հերթին ենթադրում է մակրոտնտեսական միջավայրի ակնկալվող զարգացումների և հասանելի բյուջետային միջոցների ծավալի կանխատեսելիություն:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական նպատակը պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումն է:

Ըստ էության, պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը գնահատվում է հետևյալ երեք հայտանիշների հիման վրա՝

(i) Համընդհանուր հարկաբյուջետային կարգապահություն. բյուջետային ռեսուրսների փաթեթը պետք է լինի հստակ և համապարփակ ձևակերպված, ձևավորվի նախքան ըստ առանձին ուղղությունների ծախսերի բաշխումը և հիմնավորված լինի միջնաժամկետ մակրոտնտեսական կանխատեսումներով: Ծախսերի բաշխումը հստակորեն պետք է իրականացվի վերը նշված բյուջետային ռեսուրսների շրջանակներում, իսկ դրանց հետագա կատարումը՝ սահմանված ծախսային գերակայություններին համապատասխան ընտրված ծրագրերի գծով նախատեսված բյուջետային հատկացումների սահմանաքանակների շրջանակներում:

(ii) Տեղաբաշխման արդյունավետություն. պետական ծախսերը պետք է համահունչ լինեն պետական քաղաքականության գերակայություններին, և համակարգը պետք է հնարավորություն ընձեռի իրականացնել միջոցների միջոլորտային և ներոլորտային վերաբաշխում՝ նվազ գերակայություններից դեպի առավել կարևորները և ցածր արդյունավետություն ունեցող ծրագրերից դեպի բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերը:

(iii) Տեխնիկական (արտադրական) արդյունավետություն. ճյուղային նախարարությունները (գերատեսչությունները) պետք է ապահովեն արդյունավետության առավելագույն հասանելի մակարդակ, որը պետք է համադրելի լինի մասնավոր հատվածի համապատասխան ցուցանիշների հետ:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման համակարգի ներդրումը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ խնդիրները՝

(i) բարելավել մակրոտնտեսական հաշվեկշռվածությունը՝ ի հաշիվ ռեսուրսների իրատեսական և համապարփակ փաթեթի ձևավորման,

(ii) նպաստել պետական ֆինանսական միջոցների հաշվին կատարվող բյուջետային հատկացումների միջոլորտային և ներոլորտային արդյունավետ վերաբաշխմանը՝ ըստ գերակա ուղղությունների,

(iii) հնարավորինս նվազեցնել քաղաքականությունների և դրանց ֆինանսավորման միջև առկա անորոշությունները՝ նպաստելով ծրագրերի մշակման որակի բարձրացմանը,

(iv) ըստ ոլորտների սահմանել կոշտ բյուջետային սահմանափակումներ՝ ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) համար պայմաններ և խթաններ ստեղծելով հասանելի միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման համար,

(v) բարելավել բյուջետային ծրագրերի գնահատման համակարգը և մեծացնել պետական ֆինանսների կառավարման թափանցիկության աստիճանը:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրման մոտեցումները

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը շարունակական գործընթաց է և, ըստ էության, իրենից ներկայացնում է «քաղաքականությունների ձևակերպում - պլանավորում – բյուջետավորում» տրամաբանական ամբողջական շղթա: Այն հնարավորություն է ընձեռում մեղմել հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի միջև հնարավոր անհամապատասխանությունը, ինչպես նաև պետական ծախսերում կատարել առանձին բնագավառներում իրականացվող պետական քաղաքականության փոփոխություններին համարժեք փոփոխություններ: Այս առումով արդարացված է, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ նաև ՄԺԾԾ) մշակումը (և/կամ վերանայումը), ըստ ժամանակի, նախորդում է տարեկան պետական բյուջեի նախագծի մշակմանը՝ դառնալով տարեկան պետական բյուջեների կազմման ուղեցույց:

Պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ենթադրում է՝

(i) մակրոտնտեսական կայուն միջավայրին համապատասխանող բյուջետային ռեսուրսների (մուտքերի) համապարփակ և իրատեսական գնահատում,

(ii) քաղաքականությունների իրականացման նպատակով կատարվող ծախսերի՝ վարից վեր մոտեցմամբ գնահատում,

(iii) հասանելի բյուջետային ռեսուրսների և պահանջվող ծախսերի ներդաշնակության ապահովում համապատասխան մեխանիզմների օգնությամբ:

2017-2019թթ պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրումը ներառում է նաև ծրագրավորման հիմքում դրված կանխատեսումների իրականացման հետ կապված ռիսկերի բացահայտման և ներկայացման գործընթացը: Վերը նշված ռիսկերը հանգամանալի ձևով ներկայացված են սույն ծրագրի մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներին, ինչպես նաև պետական պարտքի կառավարման ռազմավարությանը վերաբերող գլուխներում (համապատասխանաբար 2-րդ, 4-րդ և 20-րդ գլուխների համապատասխան մասերում), իսկ ռիսկերի համառոտագիրը ներկայացված է սույն ծրագրի N 1 հավելվածում:

ՀՀ 2017 – 2019թթ ՄԺԾԾ-ի մշակման կազմակերպչական հիմքերը

ՀՀ 2017 – 2019թթ ՄԺԾԾ-ի մշակման գործընթացը կանոնակարգվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ վարչապետի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 1217-Ա որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումներով:

Ըստ էության, նման մոտեցումը խնդրին վկայում է այն մասին, որ Կառավարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը որպես բյուջետային գործընթացի բաղկացուցիչ մաս դիտելով, կարևորում է նաև վերջինիս քաղաքական նշանակությունը:

Ինչպես նախորդ տարիներին ընթացիկ տարում ևս ՄԺԾԾ – ի մշակման գործընթացը կառավարվել, վերահսկվել և համակարգվել է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված ստորև նշված երկու մարմինների կողմից.

(i) Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհուրդ (խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ), որն ապահովվել է ռազմավարական որոշումների կայացումը և մշակման գործընթացի վերահսկողությունը,

(ii) Հայաստանի Հանրապետությունում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման աշխատանքները համակարգող՝ մշտապես գործող խումբ (խմբի ղեկավար՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ), որը ապահովել է ՄԺԾԾ - ի մշակման աշխատանքների համակարգումը:

Նման մոտեցումը ընդգծում է բյուջետային գործընթացում ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) մասնակցության դերը, որը նպաստել է ճյուղային մակարդակում բյուջետային ծրագրման բարելավմանը և ռազմավարական հիմնավոր որոշումների կայացմանը՝ հնարավորինս ապահովելով նախանշված քաղաքականությունների և հասանելի ֆինանսական միջոցների համապատասխանությունը: Այս համատեքստում կարևորվում է ՀՀ ֆինանսների նախարարության ու ճյուղային նախարարությունների (գերատեսչությունների) գործողությունների փոխհամաձայնեցումը, որից մեծապես կախված է ոչ միայն ՄԺԾԾ-ի և պետական բյուջեի նախագծերի մշակման որակը, այլ նաև դրանց կատարումը:

Հարկ է նշել, որ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշտապես գործող բարձրագույն խորհրդի աշխատանքներին ՀՀ վարչապետի առաջարկությամբ ներգրավված են եղել ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն կազմող քաղաքական ուժը ներկայացնող մի շարք պատգամավորներ: Նման մոտեցումը ապահովում է այդ քաղաքական ուժի մասնակցությունը բյուջետային գործընթացին արդեն իսկ ՄԺԾԾ-ի մշակման նախնական փուլում, որը հնարավորություն է ընձեռում հենց սկզբից համադրել Կառավարության և նշված քաղաքական ուժի մոտեցումները և կողմնորոշումները նախատեսվելիք առանձին ռազմավարությունների և ծախսային գերակայությունների ընտրության հարցերում:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման բարելավմանն ուղղված բարեփոխումները

Ծրագրի նպատակների իրագործումն ապահովելու համար ՀՀ կառավարությունն իրականացնում է բարեփոխումներ նաև ծրագրային բյուջետավորումը հանրապետությունում ներդնելու ուղղությամբ: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման գերակա նպատակը պետական ծախսերի տնտեսական արդյունավետության բարձրացումն է՝ ռեսուրսներն առաջնահերթ ծախսային ծրագրերին ուղղելու համար Կառավարությանն աջակցելու միջոցով: Ծրագրային բյուջետավորման շրջանակներում այդ աջակցությունն իրականացվում է Կառավարությանը (և հանրությանը) պետական ֆինանսավորման դիմաց տրամադրվող ծառայությունների կամ անմիջական արդյունքների վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Հետևաբար, ծրագրային բյուջետավորումը հանդիսանում է գործիք սոցիալ-տնտեսական քաղաքականության առանձին օղակները շաղկապելու համար: Նշվածը կօգնի հասկանալ ծախսերի վերաբերյալ կայացված որոշումների նպատակաուղղվածությունը և ծախսային քաղաքականությունն ամբողջությամբ ուղղել Կառավարության ընդհանուր նպատակների իրագործմանը:

2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ կառավարության ներկայացմամբ ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով ծրագրային բյուջետավորումը դարձել է բյուջետային գործընթացի անբաժանելի մաս, մասնավորապես, Կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողով ներկայացվելիք պետական բյուջեի նախագծի կազմում այսուհետ ներկայացվում է նաև պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը:

2015 թվականին Կառավարությունն ընդունել է Ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, որի իրագործումը հնարավորություն կընձեռի համակարգված ձևով փոխկապակցել հանրային ֆինանսների կառավարման զանազան ոլորտներում Ծրագրային բյուջետավորման տարրերի ներդրման ուղղությամբ իրականացվող քայլերը:

ՄԱՍ Ա. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1.1 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են 2014 թվականի մայիսին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ Կառավարության ծրագրով և Կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշմամբ: Վերը նշված փաստաթղթերի համաձայն Կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (սույն ծրագրի իմաստով գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ).

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կպահպանվի վերը նշված գերակայությունների համաձայն իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար բյուջետային ռեսուրսները համալրելու պահանջը այլ՝ հիմնականում արտաքին աղբյուրներից պաշտոնական դրամաշնորհների և փոխառու միջոցների ներգրավման միջոցով: Վերը նշվածը, հաշվի առնելով նաև պետական պարտքի ցուցանիշները խելա-

միտ սահմաններում պահելու խնդիրը, էականորեն սահմանափակում է Կառավարության հնարավորությունները:

1.2 ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

ՄԺԾԾ-ն Կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներկայացնող այս փաստաթուղթը, ոլորտների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հետ միասին, կազմում է Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական բովանդակությունը:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությունը շարադրող մասը ներկայացնում է Կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք դրվելու են ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման հիմքում:

1.3 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1.3.1 Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքներ

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ Կառավարությունը ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ-ի մշակման ընթացքում առաջնորդվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի մայիսին հավանության արժանացած Կառավարության գործունեության և Կառավարության 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշմամբ: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ելքերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, Կառավարությունը մտադիր է շարունակել այդ սկզբունքների կիրառումը երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կծառայեն ընթացիկ քաղաքականությունների և Կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար:

1.3.2 Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները

Կառավարությունը առկա ծախսային գերկայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսերի մակարդակը որոշելու համար:

Համախառն ներքին արդյունքի (այսուհետև՝ ՀՆԱ-ի) նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2017-2019թթ կտատանվի 21.6%-21,8 %- ի սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող եկամուտների դեպքում՝ 21,1% – 21,6 %-ի սահմաններում: Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, Կառավարությունը ծրագրում է 2017-2019թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 24.3% -23.5%-ի սահմաններում:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

2.1.1. Ներածություն

Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2017-2019 թվականների մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի միջնաժամկետ կանխատեսումները նկարագրում են այն միջավայրը, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն իր հերթին ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, հետևաբար մակրոտնտեսական կանխատեսումները հնարավորություն են տալիս հասկանալու, թե կառավարության որդեգրած միջնաժամկետ հարկաբյուջետային քաղաքականությունը որքանով է համահունչ տնտեսության այլ հատվածների զարգացման միտումներին:

Տնտեսական կանխատեսումների իրականացումը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել ցուցանիշների հետևյալ հիմնական խմբերով.

- Համախառն առաջարկ (չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների իրական աճերով և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճով),
- Համախառն պահանջարկ (չափվում է պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով (սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ)),

- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը և գնաճ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական, ներմուծված ապրանքների գները) ինդեքսով (ՍԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորությունը (չափվում է փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ ցուցանիշներով և ցույց է տալիս, թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի և եկամուտների ծավալով (պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ)):

Աղյուսակում ներկայացված են տնտեսության ներկայիս և միջնաժամկետ հեռանկարային իրավիճակի հիմնական ցուցանիշները՝ ըստ վերը նշված գլխավոր տնտեսական բնութագրիչների: Միջնաժամկետ ծախսային ծրագրի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 2.1.Վերջին տարիների միտումներ և ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ, տոկոս

Չափորոշիչ	2013	2014	2015	2016	2017	2018	2019
	Փաստ	Փաստ	Փաստ	Կանխ.	Կանխ.	Կանխ.	Կանխ.
Տնտեսական աճ (ՀՆԱ-ի իրական աճ)	3.3	3.6	3.0	3.7	3.9	4.0	4.1
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ)	99.1	97.6	91.2	89.1	88.9	89.3	89.7
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ)	22.3	20.9	20.4	19.0	19.0	19.1	19.8
ՀՆԱ դեֆլյատոր	103.4	102.3	101.2	101.0	101.4	102.5	103.4
12-ամսյա գնաճ	5.6	4.6	-0.1	0.1	2.4	3.9	4.0
Բանկային համակարգի ներգրվածություն (փողի զանգված/ՀՆԱ)	33.9	34.7	36.9	36.3	37.9	37.6	38.5
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-7.6	-7.3	-2.7	-2.7	-3.3	-3.7	-4.0

2.1.2. Համախառն առաջարկ

Երկրի համախառն առաջարկն իրական արտահայտությամբ չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով: Դրա փոփոխությունը

նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի[1] միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2013-2015 թվականներին տնտեսության զարգացումը շարունակվել է հիմնականում ծառայությունների և գյուղատնտեսության հաշվին: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) միջին աճը 2013-2015 թվականներին կազմեց շուրջ 3.3%: Ընդ որում, 2013-2015 թվականներին աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության[2]: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.5 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 3.5%, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 0.7 տոկոսային կետը՝ 4.4% իրական աճի պայմաններում, իսկ գյուղատնտեսության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.6 տոկոսային կետը՝ 8.9% իրական աճի պայմաններում: Շինարարությունը միջինում նվազել է 5.0%-ով՝ 0.5 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

2016 թվականի հունվար-մայիսին տնտեսական ակտիվության (ՏԱՑ)[3] աճի տեմպն արագացել է: ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 5.5%-ով, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 2.5 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվությանը նպաստել են ծառայությունների (3.7 տոկոսային կետ), արդյունաբերության (1.7 տոկոսային կետ[4]) և գյուղատնտեսության (1.0 տոկոսային կետ) ճյուղերի համախառն թողարկումների իրական աճերը: Իսկ շինարարությունը շարունակել է բացասական (0.9 տոկոսային կետ) նպաստում ունենալ տնտեսական ակտիվության աճին:

Կանխատեսում. Միջնաժամկետում ՀՆԱ-ի միջին 4.0% կանխատեսվող աճը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների և արդյունաբերության ճյուղերով: 2016 թվականի համար կանխատեսվում է 3.7%, իսկ 2017-2019 թվականներին՝ համապատասխանաբար 3.9, 4.0 և 4.1% տնտեսական աճ: Ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի նպաստումը ՀՆԱ-ի միջին 4.0% աճին կկազմի համապատասխանաբար 1.9 և 1.0 տոկոսային կետ: Միջնաժամկետ կանխատեսումները հիմնվում են տնտեսության զարգացման արձանագրված միտումների ու առանձահատկու-

[1]ՀՆԱ-ի իրական աճ ասելով՝ հասկանում ենք տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի ծավալային աճը՝ առանց գնային փոփոխության:
[2]Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:
[3]2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել ՏԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱՉԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:
[4]ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

թյունների, միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված համաշխարհային տնտեսության վերաբերյալ սպասումների (տես՝ Ներդիր 1-ը) ու վերլուծությունների, ինչպես նաև ճյուղային նախարարությունների կողմից ներկայացված միջնաժամկետ պետական քաղաքականության ուղղությունների վրա:

Աղյուսակ 2.2. ՀՆԱ-ի իրական աճն ըստ տնտեսության ճյուղերի, %

	2013	2014	2015	2016	2017	2018	2019
	Փաստ	Փաստ	Փաստ	Կանխ	Կանխ	Կանխ	Կանխ
Ընդամենը ՀՆԱ	3.3	3.6	3.0	3.7	3.9	4.0	4.1
Արդյունաբերություն	6.3	-0.9	7.6	6.0	6.0	6.1	6.1
Գյուղատնտեսություն	7.6	6.1	13.2	3.3	4.0	4.0	4.3
Շինարարություն	-7.4	-4.5	-3.1	-0.2	0.2	1.0	1.5
Ծառայություններ	3.1	6.7	0.6	5.6	4.1	4.1	4.1
Զուտ անուղղակի հարկեր	3.6	1.8	-5.1	-3.9	3.0	3.2	3.2

Գծապատկեր 2.1. Տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող իրական աճին նպաստման չափերը



Արդյունաբերություն

2013-2015 թվականներին արդյունաբերության ճյուղը ՀՆԱ-ի աճին իր ունեցած նպաստումով զիջել է գյուղատնտեսությանն ու ծառայություններին, իսկ ճյուղի աճը պայմանավորվել է գլխավորապես հանքագործական արդյունաբերությամբ: Արդյունաբերության ճյուղում ավելացված արժեքի միջին հաշվով 4.4% իրական աճ է գրանցվել: Հատկանշական է, որ ճգնաժամից հետո արդյունաբերության ճյուղը շատ արագ է վերականգնվել և այժմ գերազանցում է նախաճգնաժամային մակարդակը շուրջ 40%-ով: Արդյունաբերության նշված աճը էապես պայմանավորված է ճգնաժամից հետո համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, ինչպես նաև արտահանմանն ուղղված արդյունաբերական նոր քաղաքականությամբ: Ընդ որում՝ արդյունաբերության աճին ամենամեծ նպաստումն է ունեցել հանքագործական արդյունաբերությունը՝ արդյունաբերության վերը նշված 4.4% աճին նպաստելով 2.6 տոկոսային կետով: Հանքարդյունաբերութան աճը պղնձի գների նվազման պայմաններում 2015 թվականին պայմանավորվել է Թեղուտի հանքավայրի շահագործմամբ: Արդյունաբերության աճին հաջորդ մեծ նպաստումն է ունեցել մշակող արդյունաբերությունը, որը 1.9 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել արդյունաբերության աճին և նշված ժամանակահատվածում արձանագրել է միջինում 3.2% աճի ցուցանիշ: Էլեկտրաէներգիայի արտադրությունը 2013-2015 թվականներին միջինում նվազել է 1.9%-ով, որը պայմանավորված էր 2014 թվականին էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների խոշոր անկմամբ: Վերջինս իր հերթին բացատրվում է 2014 թվականի էլեկտրաէներգիայի զուտ արտահանման նվազմամբ: Վերջին տարիներին արդյունաբերության աճից առաջանցիկ աճ է ունեցել արդյունաբերության՝ ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղը, որի միջին աճը կազմել է 20.2%, իսկ նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ: Ընդ որում նշված ենթաճյուղի աճը պայմանավորված է գերազանցապես ոչ վնասակար թափոնների հավաքման աճով:

2016 թվականի հունվար-ապրիլին արդյունաբերության ճյուղն աճել է՝ հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության աճերով: 2016 թվականի հունվար-ապրիլին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման ծավալի 10% իրական աճ: Վերջինիս հիմնականում նպաստել են հանքագործական արդյունաբերության 21.5% և էլեկտրաէներգիայի արտադրության 17.3 աճերը: Մշակող արդյունաբերությունը նույնպես աճ է արձանագրել՝ 3.8%, որը հիմնականում պայմանավորված էր ծխախոտի արտադրության 59.7%, խմիչքների արտադրության 21.0% և ոսկերչական արտադրատեսակների արտադրության 2.3 անգամ աճով:

Կանխատեսում. 2016 թվականին և միջնաժամկետում կանխատեսվում է արդյունաբերության առաջանցիկ աճ՝ պայմանավորված արտաքին աշխարհից եկող ռիսկերի նվազմամբ:

2016 թվականին արդյունաբերության իրական աճը կլինի շուրջ 6.0%, իսկ 2017-2019 թվականներին՝ միջինում 6.1%: Այս կանխատեսումները հիմնված են գործընկեր երկրների պահանջարկի աճի և հումքային ապրանքների գների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ներքին պահանջարկի վերաբերյալ մեր գնահատականների վրա:

Գյուղատնտեսություն

2013-2015 թվականներին գյուղատնտեսության ճյուղը բնութագրվել է բարձր աճով՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության ենթաճյուղով: Ճյուղում արձանագրվել է միջինում 8.9% աճ: Գյուղատնտեսության ճյուղի աճին նպաստել է բուսաբուծության բարձր աճը (համախառն թողարկման աճը միջինում կազմել է 9.6%): Ընդ որում բուսաբուծության ենթաճյուղի աճը պայմանավորված է եղել աճի թե էքստենսիվ, թե ինտենսիվ գործոններով:

2016 թվականի հունվար-ապրիլին գյուղատնտեսության բարձր աճի միտումները շարունակվել են: Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ աճել է 4%-ով[5], որը զուգակցվել է բուսաբուծության, անասնաբուծության և ձկնորսության 9.7, 3.3 և 2.6% աճերով:

Կանխատեսում. Միջնաժամկետում գյուղատնտեսության աճը կանխատեսվում է պատմական ներուժային մակարդակին համահունչ: 2016 թվականի տարեվերջին ակնկալվում է գյուղատնտեսության իրական աճ շուրջ 3.3%-ի շրջանակներում: 2017-2019 թվականներին ճյուղի միջին աճը կլինի 4.1%-ի շրջակայքում: Կանխատեսման համար հիմք են հանդիսացել ճյուղի զարգացմանն ուղղված կառավարության կողմից իրականացվող[6] ծրագրերի ակնկալվող արդյունքներն ու նախորդ տարիներին դրսևորած զարգացման միտումները:

Շինարարություն

2013-2015 թվականներին գրանցվել է շինարարության ծավալների նվազում: Շինարարության ավելացված արժեքի նվազումը միջինում կազմել է շուրջ 5.0%: Շինարարության նվազումը հիմնականում պայմանավորված է եղել կազմակերպությունների (6.2%) և համայնքների միջոցների հաշվին (7.3%) իրականացված շինարարության նվազմամբ, իսկ բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարությունը դրական է նպաստել ճյուղին՝ միջինում աճելով 4.8%-ով:

Ընդ որում՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների շինարարությանը հիմնականում բացասական է նպաստել ֆինանսական և ապահովագրական գործունեությունում իրականացված

[5]Ենթաճյուղերի նպաստումների ցուցանիշները այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:

[6]Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովման, ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանական գյուղատնտեսության զարգացման, տեղական կենսապարարտանյութերի զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման ծրագրեր:

շինարարության 69.1% նվազումը և արդյունաբերության ոլորտում իրականացված շինարարության նվազումը՝ մշակող արդյունաբերությունում՝ 4.6%, էներգետիկայում՝ 13.4%, հանքագործությունում՝ 16.6%: Շինարարությանը դրական է նպաստել մշակույթ, զվարճություններ և հանգիստ ճյուղում իրականացված շինարարության 41.5% աճը:

2016 թվականի հունվար-ապրիլին շինարարությունը շարունակել է նվազման միտումը: 2016 թվականի հունվար-ապրիլ ամիսներին շինարարության ծավալները իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել են 7.4%-ով: Շինարարության ծավալների նվազմանը նպաստել են ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները՝ բացառությամբ միջազգային վարկերի: Միջազգային վարկերի հաշվին իրականացված շինարարության ծավալներն աճել են 2 անգամ:

Ըստ տնտեսության ճյուղերի շինարարությանը դրական են նպաստել հիմնականում փոխադրումներ և մշակույթ, զվարճություններ և հանգսիստ ենթաճյուղերը, բացասական են նպաստել անշարժ գույքի հետ կապված գործունեության և ջրամատակարարման ենթաճյուղերը[7]:

Կանխատեսում. Միջնաժամկետում շինարարության ճյուղը դանդաղ աճի միտում կդրսևորի: Շինարարության ճյուղի ավելացված արժեքը 2016 թվականին կնվազի 0.2%-ով, իսկ միջնաժամկետում միջինում կաճի 0.9%-ով: Շինարարության աճի տեմպերը ՀՆԱ-ի աճից առաջանցիկ չեն լինի, սակայն կուղեկցվեն ճյուղի կառուցվածքում արտադրական շինարարության աճի միտումներով:

<u>Ծառայություններ</u>

2013-2015 թվականներին ծառայությունների ոլորտը ՀՆԱ-ի աճին համահունչ աճ է արձանագրել: Ծառայությունների ճյուղի ավելացված արժեքի միջին իրական աճը կազմել է 3.5%, որը հիմնականում պայմանավորված էր մշակույթ, զվարճություններ և հանգստի և տեղեկատվության և կապի ենթաճյուղերի աճերով:

2016 թվականին ծառայությունները շարունակում են աճել նախորդ տարվա համեմատ արագացող տեմպերով: 2016 թվականի հունվար-ապրիլին մատուցված ծառայությունների ծավալը 2015 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 9.3%-ով, ինչին հիմնականում նպաստել են մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղի 43.9% և տրանսպորտի ենթաճյուղի 28.6% աճը:

2016 թվականի հունվար-ապրիլ ամիսներին առևտրի ծավալները շարունակել են նվազել, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի ցածր տեմպերով: 2016 թվականի հունվար-ապրիլ

[7] Ըստ տնտեսության ճյուղերի շինարարության ծավալների վերլուծությունը ներկայացված է 2016 թվականի հունվար-մարտի ցուցանիշներով:

ամիսներին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել է 0.7%-ով, որին բացասական է նպաստել մանրածախ առևտուրը՝ նվազելով 4.6%-ով, իսկ մեծածախ առևտուրը դրական է նպաստել՝ աճելով 5.6%-ով:

Կանխատեսում. Ծառայությունների աճը միջնաժամկետում համահունչ կլինի ՀՆԱ-ի աճին: 2016 թվականին ակնկալվում է, որ ճյուղի աճը առաջանցիկ կլինի ՀՆԱ-ի աճից՝ կազմելով 5.6%, իսկ 2017-2019 թվականներին, ճյուղի աճը համահունչ կլինի ՀՆԱ-ի աճին՝ միջինում կազմելով 4.1%: Ծառայությունների կանխատեսման հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ ծառայությունները պետք է առնվազն համահունչ լինեն ՀՆԱ-ի աճին, քանի որ Հայաստանի տնտեսական զարգացման մոդելը ենթադրում է առավելապես ծառայությունների դիվերսիֆիկացում և աճ[8]:

Ամփոփելով նշենք, որ միջնաժամկետում տնտեսությունում կաճի արտահանելի հատվածի[9] մասնաբաժինը: Ամբողջական առաջարկի ճյուղային կառուցվածքում ետճգնաժամային տարիներին մեծացել է արտահանելի հատվածի մասնաբաժինը՝ կազմելով 2013-2015 թվականներին միջինում ՀՆԱ-ի 34.1%-ը: 2015 թվականին արտաքին պահանջարկով պայմանավորված արտահանելի հատվածի մասնաբաժինը նվազեց մինչև 33.2%, Միջնաժամկետում տնտեսությունը կշարունակի ընթանալ ետճգնաժամային տարիներին նախանշած ճանապարհով և տնտեսության արտահանելի հատվածը կկազմի ՀՆԱ-ի 34.3%-ը: (տես Գծապատկեր 2. 2):

Գծապատկեր 2.2. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում



[8]Աշխարհի զարգացած երկրներն իրենց տնտեսական զարգացման ճանապարհին աստիճանաբար մեծացրել են հատկապես ծառայությունների մասնաբաժինը:
[9]Արտահանելի հատվածի մեջ դիտարկվել են արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

Աշխատանքի շուկա

2013-2015 թվականներին գործազրկության մակարդակը շարունակել է բարձր լինել՝ նվազման միտում դրսևորելով ետճգնաժամային՝ 2010-2012 թվականների համեմատությամբ: 2013-2015 թվականներին գործազրկության մակարդակը միջինում կազմել է 17.4%: Համեմատության համար նշենք, որ 2010-2012 թվականներին նշված ցուցանիշը միջինում կազմել է 18.2 %: 2013-2015 թվականներին աշխատավարձի մակարդակն աճել է: Այսպես՝ միջին ամսական անվանական աշխատավարձը միջինում աճել է 6.7%-ով[10], որն ուղեկցվել է արտադրողականության և իրական աշխատավարձի աճով: Իրական արտադրողականությունը միջինում աճել է 6.4%-ով, իսկ իրական աշխատավարձը՝ 2.5%-ով, ինչը նպաստել է միավոր աշխատուժի ծախսի կրճատմանը, հետևաբար նաև տնտեսության մրցունակության բարձրացմանը:

2016 թվականի հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 3.5%-ով՝ կազմելով 183,960 ՀՀ դրամ, իսկ իրական աշխատավարձն աճել է 5.2%-ով: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը կրճատվել է 0.1%-ով՝ կազմելով 157,732 ՀՀ դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ աճել է 6.9%-ով՝ կազմելով 220,034 ՀՀ դրամ:

2.1.3. Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը պատկերացում է տալիս տնտեսությունում եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտները ուղղվելու են սպառմանը, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման և ներդրումների մասնաբաժիններով, որոնք արտացոլվում են սպառում/ՀՆԱ և ներդրումներ/ՀՆԱ ցուցանիշներով: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից հայրենական արտադրության ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2013-2015 թվականների տնտեսական աճը հիմնականում պայմանավորվել է արտաքին պահանջարկի աճով: Վերջին երեք տարիների տնտեսական աճը որակապես տարբերվում է

[10] 2015թ.-ի տվյալները նախնական են՝ ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների ցուցանիշները:

տնտեսության նախաճգնաժամային և հետճգնաժամային (2010-2012 թվականների) զարգացումներից՝ պայմանավորված այն հանգամանքով, որ եթե նախկինում տնտեսական աճը գերազանցապես պայմանավորված է եղել ներքին պահանջարկով, ապա 2013-2015 թվականներին՝ հիմնականում արտաքին պահանջարկով:

Համախառն սպառում

2013-2014 թվականների վերջնական սպառման իրական աճը և 2015 թվականի նվազումը համահունչ են եղել տնօրինվող եկամտի իրական աճի միտումներին: 2013-2014 թվականներին վերջնական սպառումը իրական արտահայտությամբ միջինում աճել է 1.2%-ով, սակայն 2015 թվականին նվազել 6.4%-ով՝ կրելով ներհոսող դրամական փոխանցումների նվազմամբ պայմանավորված մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի նվազման բացասական ազդեցությունը, որին կառավարությունն արձագանքել է խթանող հարկաբյուջետային քաղաքականությամբ: Արդյունքում՝ 2013-2015 թվականներին վերջնական սպառումը միջինում նվազել է 1.3%-ով՝ ՀՆԱ-ի միջինում 3.3% աճի պայմաններում, որի հետևանքով համախառն պահանջարկի կառուցվածքում սպառման մասնաբաժինը նվազել է՝ 2013-2015 թվականներին միջինում կազմելով 96%: Սպառման կառուցվածքում պետական սպառման տեսակարար կշիռն աճել է՝ 2013 թվականի 11.9%-ից 2015 թվականին հասնելով 13.1%-ի, իսկ մասնավոր սպառման տեսակարար կշիռը նվազել է 87.2%-ից 78.1%-ի:

Կանխատեսում. 2016 թվականին և միջնաժամկետում կանխատեսվում է վերջնական սպառման աճ: 2016 թվականին սպասվում է մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի աճ՝ պայմանավորված տնտեսական աճի տեմպերի արագացմամբ և ՌԴ-ից ներհոսող տրանսֆերտների աստիճանական վերականգնմամբ: Այս պայմաններում տնտեսությունում վերջնական սպառումն իրական արտահայտությամբ կաճի 3.6%-ով՝ պայմանավորվելով մասնավոր հատվածի սպառման աճով: Մասնավոր հատվածի սպառման վրա դրական ազդեցություն կունենա նաև 2015-2016 թվականներին իրականացված խթանող դրամավարկային քաղաքականությունը: Իսկ զսպող հարկաբյուջետային քաղաքականության հետևանքով պետական հատվածի սպառումը փոքր չափով կնվազի: 2017-2019 թվականներին տնտեսության աճի տեմպերի արագացման, արտաքին աշխարհից տրանսֆերտների աճի վերականգնման ազդեցությամբ պայմանավորված սպառման աճը աստիճանաբար կարագանա՝ կազմելով միջինում շուրջ 4.0%:

Համախառն ներդրումներ

2013-2015 թվականներին կապիտալ ներդրումների իրական նվազումը շարունակվել է, սակայն ուղեկցվել է ներդրումների որակի բարելավմամբ: 2013-2015 թվականներին կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ միջինում նվազել են 5.0%-ով: Ընդ որում այդ նվազումը

պայմանավորվել է մասնավոր ներդրումների միջինում 6.8% նվազմամբ: Մասնավոր ներդրումների նվազմանը ՀՀ կառավարությունը արձագանքել է պետական կապիտալ ծախսերի աճով, որի արդյունքում պետական ներդրումները միջինում աճել են 4.6%-ով:

Կանխատեսում. 2016 թվականին կանխատեսվում է ներդրումների նվազում, իսկ միջնաժամկետում՝ աճ: 2016 թվականին կապիտալ ներդրումները կնվազեն 4.7%-ով՝ կրելով պարտքի կայունության խնդրով պայմանավորված զսպող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում պետական ներդրումների իրական նվազման ազդեցությունը: Դրան զուգահեռ 2016 թվականին իրական հատվածում ներդրումային ակտիվության աճի պայմաններում սպասվում է մասնավոր ներդրումների չափավոր աճ: Միջնաժամկետում ներդրումները կդրսևորեն աճի միտում՝ միջինում շուրջ 5.0%-ի չափով՝ կրելով տնտեսության արտահանելի հատվածում ներդրումների աճի, ՀՀ կառավարության կողմից իրականացվող կառուցվածքային բարեփոխումների և հարկաբյուջետային խթանների աստիճանական վերականգնման ազդեցությունը:

<u>Զուտ արտահանում</u>

2013-2015 թվականներին արտահանման իրական աճի միտումը շարունակվել է, իսկ ներմուծումը ունեցել է նվազման միտում: Վերջին երեք տարիներին արտահանման իրական ծավալներն աճել են միջինում 6.6%-ով: Արտահանման աճը պայմանավորված է եղել արտահանվող նոր հանքավայրի շահագործմամբ, արտահանելի որոշ ոլորտներում ներդումների աճով, ինչպես նաև արտահանման խրախուսմանն ուղղված՝ կառավարության կողմից վարվող քաղաքականությամբ: Իսկ ներմուծումը 2013-2015 թվականներին իրական արտահայտությամբ միջինում նվազել է 6.5%-ով՝ ինչը պայմանավորված է եղել բնակչության տնօրինվող եկամտի 2013-2014 թվականների իրական աճի տեմպերի դանդաղմամբ և 2015 թվականի իրական նվազմամբ և տնտեսական ակտիվության ցածր մակարդակով:

Կանխատեսում. Ներմուծման աճի նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի պայմաններում զուտ արտահանումը ինչպես 2016 թվականին, այնպես էլ միջնաժամկետ հորիզոնում աստիճանաբար կբարելավվի: 2016 թվականին վերոնշյալ գործոնների ազդեցությամբ կանխատեսվում է արտահանման 15.4% իրական աճ, իսկ տնօրինվող եկամտի աճի պայմաններում ներմուծման 5.6% իրական աճ: 2017-2019 թվականներին, պայմանավորված Եվրասիական տնտեսական միության անդամակցությամբ, համաշխարհային տնտեսության զարգացումներով (ինչը կարտահայտվի հայրենական արտադրանքի նկատմամբ արտաքին պահանջարկի աստիճանական մեծացմամբ), կանխատեսվում է արտահանման ծավալների միջինում 7.4%-ի չափով իրական աճ, իսկ տնօրինվող եկամտի աճի պայմաններում՝ ներմուծման ծավալների միջինում 3.6%-ի չափով իրական աճ:

Աղյուսակ 2.3. ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը (%)

	2013	2014	2015	2016*	2017*	2018*	2019*
Սպառում	1.7	0.7	-6.3	3.6	3.6	3.8	4.0
Ներդրում	-9.1	-3.0	-2.9	-4.7	3.7	4.2	7.4
Արտահանում	8.6	6.4	4.9	15.4	7.7	7.4	7.2
Ներմուծում	-2.1	-1.0	-16.3	5.6	3.6	3.6	3.4
Ընդամենը ՀՆԱ	3.3	3.6	3.0	3.7	3.9	4.0	4.1

Գծապատկեր 2.3. Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում



Վերոնշյալ զարգացումների արդյունքում՝ միջնաժամկետ հորիզոնում վերջնական սպառման և ներդրումների կշիռները ՀՆԱ-ում աստիճանաբար կաճեն, իսկ զուտ արտահանման կշիռը աստիճանաբար կբարելավվի:

Ամփոփելով նշենք, որ միջնաժամկետ հորիզոնում ամբողջական պահանջարկի աճը պայմանավորված կլինի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճերով:

2.1.4. Գնային փոփոխականներ

Գների մակարդակը տնտեսության մեջ բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով, իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս ՀՀ սպառողական շուկայում որոշակի քանակությամբ ապրանքների (ներառյալ՝ ներմուծված) և ծառայությունների գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2013-2015 թվականներին ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը բնութագրվում է չեզոքից ընդլայնող ուղղվածությամբ: ՀՀ ԿԲ-ն այս ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, թուլացրել և մեղմել է դրամավարկային պայմանները՝ ակնկալելով նպաստել գնաճի ցուցանիշի կայունացմանն (4±1.5) ու համախառն պահանջարկի ընդլայնմանը: 2014 թվականի տարեվերջը կարելի է առանձնահատուկ նշել, որպես ֆինանսական և արժութային շուկաներում ձևավորված լարվածության ժամանակահատված, որին ՀՀ ԿԲ-ն արձագանքեց՝ ճշգրտելով դրամավարկային քաղաքականության ուղղությունը ընդլայնողից դեպի զսպող: 2013-2015 թվականներին միջին գնաճը միջինում կազմել 4.2 տոկոս: ՀՀ սպառողական շուկայում բարձր գնաճային միջավայր է ձևավորվել հատկապես 2013 թվականի երկրորդ կեսին, ինչը պայմանավորված է եղել էներգակիրների սակագների աճով, ինչպես նաև ներքին տնտեսությունում գյուղմթերքների գնաճով:

Կանխատեսում. 2016 թվականին մինչև տարեվերջ կպահպանվի ցածր գնանկումային միջավայր: Գնաճի ցուցանիշը կգտնվի (4±1.5) թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ներքև, սակայն միջնաժամկետում ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային պայմանների մեղմացման քաղաքականության արդյունքում կկայունանա կենտրոնական արժեքի շուրջ:

Գծապատկեր 2.4. 12-ամսյա գնաճի դինամիկան



Դեֆլյատոր

2013-2015 թվականներին ՀՆԱ ինդեքս դեֆլյատորը բավականին ցածր է եղել: Այն միջինում աճել է 2.3%-ով: Դեֆլյատորի աճին հիմնականում նպաստել է ծառայությունների գների ինդեքսը, որն աճել է միջինում 4.3%-ով: Հաջորդ, համեմատաբար մեծ նպաստումն ունեցել է շինարարության գների ինդեքսը, որն աճել է միջինում 3.6%-ով: Արդյունաբերության դեֆլյատորը փոքր նպաստում է ունեցել և միջինում աճել է 1.7%-ով: Գյուղատնտեսության գները բացասական նպաստում են ունեցել դեֆլյատորի աճին՝ միջինում նվազելով 4%-ով:

Կանխատեսում. Մինչև տարեվերջ կանխատեսվում է ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ 1.0%-ի չափով: Միջնաժամկետում դեֆլյատորը նույնպես կաճի և միջին աճը կկազմի շուրջ 2.4%: Դեֆլյատորի աճի կանխատեսման հիմքում ընկած է հումքային ապրանքների միջազգային գների, ՍԳԻ-ի և դեֆլատորի իներցիայի վերաբերյալ գնահատականները:

2.1.5. Ֆինանսական շուկա

Այս բաժնում կներկայացվեն ֆինանսական շուկաները բնութագրող երկու հիմնական ցուցանիշներ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունը և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է ֆինանսական ինստիտուտների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) տնտեսության մեջ ներգրավվածությունը:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Գնաճի տրված մակարդակի պայմաններում, եթե տոկոսադրույքները բարձր են, ապա ռիսկայնության աստիճանը բարձր է կամ հակառակը:

Այսինքն՝ ֆինանսական շուկայի միջոցով կարգավորվում է փողի նկատմամբ առաջարկը և պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար:

<u>Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները</u>

2013-2015 թվականներին տնտեսական աճին զուգահեռ փողի զանգվածի միջին աճը կազմել է 11.3%: Ընդ որում, նույն ժամանակահատվածի համար փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը նվազման միտում է ունեցել՝ կազմելով 3.4%, դրամային ավանդները աճել են 14%-ով, իսկ արտարժութային ավանդները՝ 17.9%-ով:

2013-2015 թվականներին փողի բազայի միջին աճը կազմել է 11.2%: Ընդ որում՝ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը միջինում նվազել է 2%-ով, ՀՀ դրամով պարտադիր պահուստները աճել՝ 31.1%-ով, իսկ արտարժույթով պարտադիր պահուստները՝ 56.3%-ով:

2013-2015 թվականներին, չնայած 2015 թվականի վարկավորման ծավալների զգալի նվազմանը, առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճը միջինում կազմել է 10.2%, կշիռը ՀՆԱ-ի մեջ՝ 42.3%: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2013 թվականի դեկտեմբերի վերջի դրու-

թյամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 192.6 մլրդ դրամով կամ 12%-ով[11] (ՀՆԱ-ի 39.5%): 2014 թվականին վարկերի աճը կազմել է 390.1 մլրդ դրամ (21.7%), ՀՆԱ-ի մեջ՝ 45.3%: 2015 թվականին վարկերը նվազել են 68.8 մլրդ դրամով (3.2%-ով), ՀՆԱ-ի մեջ կազմելով 42.1%:

2013-2015 թվականներին առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճը միջինում կազմել է 17.7%, կշիռը ՀՆԱ-ի մեջ՝ 36.9%: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2013 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 400.3 մլրդ դրամով կամ 33%-ով և ՀՆԱ-ի մեջ կազմել շուրջ 35.4%: 2014 թվականի վերջի դրությամբ ներգրավված ավանդները նախորդ տարվա համեմատ ավելացել են 145.1 մլրդ դրամով կամ 9%-ով և ՀՆԱ-ի մեջ կազմել 36.4%: 2015 թվականի վերջի դրությամբ ներգրավված ավանդները նախորդ տարվա համեմատ ավելացել են 193.6 մլրդ դրամով կամ 11%-ով և ՀՆԱ-ի մեջ կազմել 38.8%:

Աղյուսակ 2.4. Վարկերի և ավանդների դինամիկան

	2013	2014	2015	2016*	2017*	2018*	2019*
Վարկեր	1798	2188	2120	2194	2281	2384	2503
Վարկերի կշիռը ՀՆԱ-ում տոկոս[12]	39	45	42	42	41	40	39
Ավանդներ	1612	1758	1951	2028	2233	2349	2587
Ավանդների կշիռը ՀՆԱ-ում, տոկոս	35	36	39	38	40	40	41

*Կանխատեսումները հիմնված են ՀՀ ԿԲ և ՀՀ ՖՆ գնահատականների վրա

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով ՀՀ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների միջին ամսական մակարդակը 2014 թվականի դեկտեմբերին կազմել է 12.5%՝ 2015 թվականի 14.1%-ի համեմատ: Իսկ ՀՀ դրամով վարկավորման միջին ամսական տոկոսադրույքը 2014 թվականի դեկտեմբերին կազմել է 16.2%՝ 2015 թվականի նույն ամսում արձանագրված 15.9%-ի համեմատ:

Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով ՀՀ դրամով ներգրավված ավանդների և վարկերի միջին ամսական տոկոսադրույքների միջև սպրեդը 2015 թվականին 2014 թվականի նկատմամբ նվազել է 2.53 տոկոսային կետով՝ կազմելով 3.4 տոկոսային կետ:

Կանխատեսում. Միջնաժամկետ հորիզոնում, տնտեսական զարգացումներին համահունչ 2017-2019 թվականների համար փողի բազայի և փողի զանգվածի միջին աճերը կկազմեն համապատասխանաբար՝ շուրջ 7.9 և 8.7%:

[11]Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

[12]Ցուցանիշների համադրելիությունն ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

2.1.6. Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- Ընթացիկ հաշիվ (հիմնականում ցույց է տալիս արտահանման և ներմուծման հետ կապված հոսքերը),
- Կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս կապիտալի ներհոսքն ու արտահոսքը):

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Ընթացիկ հաշիվ

2013-2015 թվականներին վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը շարունակել է նվազման միտում դրսևորել ետճգնաժամային՝ 2010-2012 թվականների համեմատությամբ: Արտաքին անհաշվեկշռվածությունը աստիճանաբար կրճատվել է և 2013-2015 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի միջինում 5.9%-ը: Այն առավել բարելավվել է 2015 թվականին՝ կազմելով ՀՆԱ-ի 2.7%-ը և 4.6 տոկոսային կետով բարելավելով ՀՆԱ-ի նկատմամբ նախորդ տարվա մակարդակը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել համախառն ազգային տնօրինվող եկամտի իրական նվազման հետևանքով ներմուծման նշանակալի անկմամբ: Մյուս կողմից, ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը հակազդել է Հայաստան ներհոսող տրանֆերտների և աշխատողների վարձատրության եկամուտների նվազումը, ինչը մեծ մասամբ պայմանավորված է եղել հիմնական գործընկեր երկիր՝ Ռուսաստանի տնտեսական զարգացումներով: Գծապատկեր 5-ում ներկայացված են ընթացիկ հաշվի միտումները և սպասումները:

Արտաքին առևտուր[13]

Ցուցաբերելով նվազման միտում արտաքին ապրանքաշրջանառությունը 2013-2015 թվականներին կրճատվել է միջինում 5.0%-ով՝ նախորդող երեք տարիների միջինում երկնիշ աճի պարագայում: Կրճատումը ապահովվել է 2015 թվականի արտաքին ապրանքաշրջանառության կտրուկ՝ մոտ 21%-ով նվազման հաշվին, ընդ որում՝ տեղի է ունեցել ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների նվազում. Արտահանումը 2015 թվականին կրճատվել է 4.0%-ով (1485.3 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներմուծումը՝ 26.8%-ով (3239.2 մլն ԱՄՆ դոլար):

Ընթացիկ տարվա հունվար-մայիսի[14] նախնական տվյալներով արտաքին ապրանքաշրջանառության աճի միտումները վերականգնվել են. նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 6.8% (1892.7 մլն ԱՄՆ դոլար)՝ հիմնականում արտահանման ծավալների 20.1% աճի հաշվին, իսկ ներմուծման ծավալները աճել են 0.9%-ով:

Ներմուծում

2013-2015 թվականներին ներմուծման ծավալները դրսևորել են նվազման միտում՝ միջինում կրճատվելով 7.7%-ով: Ընդ որում՝ 2013-2014 թվականների համեստ աճից հետո 2015 թվականին տեղի է ունեցել ներմուծման անկում, երբ այն դոլարային արտահայտությամբ կրճատվել է 26.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել աշխատողների դրամական փոխանցումների կրճատման հաշվին բնակչության իրական տնօրինվող եկամուտների և սպառողական պահանջարկի նվազմամբ:

2015 թվականի ներմուծման կրճատման ամենաբարձր՝ 5.0 տոկոսային կետը պայմանավորվել է «Հանքահումքային արտադրանք», 4.2 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման նվազմամբ (նվազումը համապատասխանաբար կազմել է 25.5 և 61%): 2015 թվականին բոլոր խոշոր ապրանքախմբերով արձանագվել է ներմուծման անկում, բացառությամբ «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբի:

Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման[15] 2015 թվականին ներմուծման նվազմանը նպաստել են. «Միջանկյալ սպառման ապրանքները» 16.5 տոկոսային կետով, «Վերջնական սպառման ապրանքները»՝ 4.7, «Կապիտալ սպառման ապրանքները»՝ 2.0, իսկ «Մարդատար ավտոմեքենաները» 3.6 տոկոսային կետերով:

[13]Այսուհետ՝ ներկայացված են արտահանումը ՖՕԲ և ներմուծումը ՍԻՖ գներով, ինչը թույլ է տալիս կատարել հնարավորինս մանրամասն վերլուծություն:

[14] Ստորև բերված՝ ընթացիկ տարվա ներմուծման և արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ներկայացված է հունվար-ապրիլի տվյալներով, քանի որ հունվար-մայիսի համապատասխան տվյալները դեռևս բացակայում են:

[15] Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) խմբավորումները՝ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

2016 թվականի հունվար-ապրիլին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ներմուծման ծավալները (դոլարային արտահայտությամբ) նվազել են 3.5%-ով (943.2 մլն ԱՄՆ դոլար): «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի 28.6% նվազման հաշվին ապահովվել է ներմուծման կրճատման ամենաբարձր՝ 2.6 տոկոսային կետը: Ներմուծման կրճատմանը հակազդել է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (1.9 տոկոսային կետ) և «Պատրաստի սննդի արտադրանք» (1.7 տոկոսային կետ) ապրանքախմբերի աճը, որը համապատասխանաբար կազմել է մոտ 61.6 և 19.7%:

Կանխատեսում. 2016 թվականին սպասվում է ապրանքների ներմուծման 1.3% աճ (դոլարային արտահայտությամբ), ինչը հիմնականում պայմանավորված կլինի բնակչության տնօրինվող եկամուտների որոշակի վերականգնմամբ: 2017-2019 թվականներին ներմուծման աճի տեմպը կարագանա, միջին տարեկան աճը կկազմի 6.1%՝ պայմանավորված հիմնականում դրամական փոխանցումների աստիճանական վերականգնմամբ, ներքին տնտեսության զարգացումներով և բնակչության պահանջարկի աճով, իսկ ապրանքների և ծառայությունների համար՝ 5.3%:

Արտահանում

Ետճգնաժամային՝ 2010-2012 թվականների երկնիշ միջին աճի համեմատ 2013-2015 թվականներին արտահանման միջին աճը զգալի դանդաղել է՝ կազմելով 2.6% և, առաջին անգամ ճգնաժամից հետո, 2015 թվականին գրանցելով ծավալների նվազում: 2015 թվականի արտահանման 4.0% նվազման (դոլարային արտահայտությամբ) ամենաբարձր՝ 4.8 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 2.3 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման համապատասխանաբար՝ 24.7 և 15.8%-ով կրճատման հաշվին: Արտահանման նվազմանը հակազդել է արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող «Հանքահումքային արտադրանք» ապրանքախումբը՝ 5.9 տոկոսային կետով (23.6% աճ), ինչպես նաև «Մանածագործական իրեր» ապրանքախումբը՝ 1.2 տոկոսային կետով (35.8% աճ):

2016 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արտահանումն աճել է 22.2%-ով (514.5 մլն ԱՄՆ դոլար): «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբի հաշվին ապահովվել է արտահանման աճի 9.9 տոկոսային կետը (76.5% աճ): Համապատասխանաբար՝ 7.9 և 3.8 տոկոսային կետերով դրական են նպաստել նաև «Պատրաստի սննդի արտադրանք» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման 41.8 և 128.7%-ով աճերը: Արտահանման աճին 4.2 տոկոսային կետով հակազդել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի

20.8%-ով նվազումը, ինչը հիմնականում պայմանավորված էր միջազգային շուկայում մետաղների գների նվազմամբ:

Կանխատեսում. Չնայած ընթացիկ տարվա սկզբից գրանցվում է ապրանքների արտահանման բարձր աճի ցուցանիշ, այնուհանդերձ՝ հիմնական գործընկեր երկրների զարգացումները (տե՛ս Ներդիր 1-ը), միջազգային շուկայում մետաղների գների նվազումը և նախորդ տարվա երկրորդ եռամսյակից սկսած Թեղուտի հանքավայրի շահագործմամբ պայմանավորված հանքարդյունաբերության աճը արտահանման առավել զգուշավոր կանխատեսման հիմք են ծառայում: 2016 թվականին սպասվում է 11.7% արտահանման աճ (դոլարային արտահայտությամբ): Միջնաժամկետում համաշխարհային թողարկման աճին և ՀՀ կառավարության կողմից տնտեսության արտահանելի ոլորտում տարվող քաղաքականությանը համահունչ ակնկալվում է ապրանքների արտահանման միջին տարեկան 7.5% աճ: Նույն ցուցանիշը ապրանքների և ծառայությունների համար կկազմի շուրջ 5.8%:

<u>Գործընկեր երկրներ</u>

Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն, արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին. համաշխարհային տնտեսությունում նկատվող միտումներով (մասնավորապես, զարգացող տնտեսություններից կապիտալի նկատելի արտահոսքով) և տարածաշրջանային ռիսկերով (Ռուսաստանի տնտեսական զարգացման վատատեսությամբ) պայմանավորված արտարժույթի ներհոսքը դեպի հանրապետություն դանդաղեց՝ նպաստելով նաև տնօրինվող եկամուտների նվազմանը և ՀՀ տնտեսական աճի որոշակի զսպմանը:

Արտահանման հաշվին արտարժույթի ներհոսքը՝ հետճգնաժամային տարիներին արտահանման սպասվածից բարձր աճով պայմանավորված, արագ վերականգնվեց: Հայաստանյան ապրանքների նկատմամբ ներկայացնելով հիմնական պահանջարկը՝ 2013-2015 թվականների ՀՀ արտահանման 2.6% միջին աճի միջինում շուրջ 7.6 տոկոսային կետը ապահովել են. Չինաստանը 3.1, Իրաքը՝ 2.6, Վրաստանը՝ 1.2 և Գերմանիան՝ 0.8 տոկոսային կետ: Նշված երկրներ արտահանվող հիմնական ապրանքատեսակներն են՝ հանքաքար, խարամ, մոխիր, ծխախոտ, Էլեկտրաէներգիա, ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից: Մյուս հիմնական գործընկեր երկրների ազդեցությունը արտահանմանը հիմնականում բացասական է եղել, մասնավորապես՝ արտահանման միջինում 19.7% կշիռ ունեցող Ռուսաստանի հաշվին ապահովվել է աճի -0.6 տոկոսային կետը (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը):

Աղյուսակ 2.5. Արտահանման աշխարհագրական կառուցվածքը

	2010	2011	2012	2010-2012 միջին	2013	2014	2015	2013-2015 միջին	Հիմնական ապրանքատեսակները[16]
Ընդամենը արտահանման աճ	**46.6**	**28.2**	**3.4**	**26.1**	**7.1**	**4.6**	**-4**	**2.6**	
Ռուսաստանի Դաշնություն									Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ, բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	15.4	16.8	19.6	**17.3**	22.6	19.9	16.5	**19.7**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	7.5	6	4.3	**5.9**	4	-1.7	-4.1	**-0.6**	
Չինաստան									Հանքաքար, խարամ և մոխիր
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	3	1.2	2.3	**2.2**	4.7	11	11.1	**8.9**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	1.8	-1.4	1.1	**0.5**	2.7	6.9	-0.4	**3.1**	
Գերմանիա									Մետաղներ, այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	12.7	11.9	10.7	**11.8**	5.8	10.2	9.4	**8.5**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	2.5	2.4	-0.4	**1.5**	-1.4	4.9	-1.2	**0.8**	
Բուլղարիա									Հանքաքար, խարամ և մոխիր
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	15	11.5	9.1	**11.9**	10.3	5.5	5.3	**7.0**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	2.2	1.7	-1	**1.0**	0.1	0.2	-2.5	**-0.7**	
Վրաստան									Էլեկտրաէներգիա, հանքաքար, խարամ և մոխիր
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	4.7	4.7	5.1	**4.8**	5.8	5.5	8.4	**6.6**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	-0.5	-3.8	0.7	**-1.2**	1	-0.1	2.6	**1.2**	
Կանադա									Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	2.8	5.3	6	**4.7**	5.9	6	7.3	**6.4**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	-0.6	3.9	1.1	**1.5**	0.2	0.4	1	**0.5**	
Իրանի Իսլամական									Հանքային

[16] Առանձին երկրներով հիմնական պահանջարկը հայաստանյան ապրանքների նկատմամբ որոշվել է ըստ երկիր-ապրանք կտրվածքի ՀՀ ԱՎԾ-ի վերջին պաշտոնական հրապարակման (տվյալ դեպքում՝ 2014թ. տվյալների կառուցվածքով):

Հանրապետություն									վառելանյութեր, բիտումային միջոցներ, մոմանյութեր, կենդանի կենդանիներ
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	8.1	8	6.8	**7.6**	6.4	5.5	5.5	**5.8**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	7.3	2.1	-0.6	**2.9**	-1	-0.7	-0.2	**-0.6**	
Իրաք									Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ, մոմանյութեր
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	0	0.4	1.1	**0.5**	3.3	5.2	8.8	**5.8**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	0	0.1	0.8	**0.3**	2.4	2.2	3.2	**2.6**	
Բելգիա									Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, հանքաքար, խարամ և մոխիր
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	7	5.3	8.9	**7.1**	8.9	4	2.9	**5.3**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	3.6	-0.2	4.2	**2.5**	0.3	-4.7	-1.3	**-1.9**	
Միացյալ Նահանգներ									Ալյումին և իրեր դրանից
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	7.9	7.6	6.1	**7.2**	6	5.9	3.6	**5.2**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	2.2	1.7	-1	**1.0**	0.1	0.2	-2.5	**-0.7**	
Նիդերլանդներ									Սև մետաղներ, հանքաքար, խարամ և մոխիր
երկրի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ, %	9.5	8.8	5.6	**8.0**	4.5	4.8	3.2	**4.2**	
երկրի նպաստումը ՀՀ արտահանման աճին, տոկոսային կետ	6.5	1.8	-2.8	**1.8**	-1	0.5	-1.8	**-0.8**	

2013-2015 թվականներին ներմուծվող ապրանքների նկատմամբ երկրի սպառողական պահանջարկը բավարարվել է մեծ մասամբ Ռուսաստանի հաշվին. Ռուսաստանի մասնաբաժինը միջինում կազմել է ներմուծման 25.9% (հիմնականում ներմուծվում է. հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, գազ, հացահատիկներ և ալյումին): Նշանակալի են նաև Չինաստանից, Գերմանիայից, Իտալիայից ներմուծման մասնաբաժինները (կաթսաներ, սարքավորումներ, էլեկտրական մեքենաներ, ձայնագրող ապարատներ, կահույք, անկողնային պարագաներ, վերգետնյա տրանսպորտային միջոցներ, դրանց մասեր, քիմիական թելեր):

Արտահանման և ներմուծման նշված միտումների արդյունքում հիմնական գործընկեր երկրների կազմը գրեթե չի փոփոխվել, մինչդեռ ըստ աշխարհագրական կառուցվածքի՝ արտա-

քին առևտրի կշիռները փոխվել են՝ ԱՊՀ և Այլ երկրների մասնաբաժինների աճի ուղղությամբ: Արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի փոփոխության արդյունքում 2013-2015 թվականներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության միջինում շուրջ 29%-ը բաժին է ընկել ԱՊՀ, 26.7%-ը՝ ԵՄ երկրներին և 44.2%-ը՝ Այլ երկրներին՝ նախորդ երեք տարիների միջինում 28.2, 31.1 և 40.7%-ի դիմաց:

Դրամական փոխանցումներ[17]

2013-2015 թվականներին ՀՀ ներհոսող մասնավոր տրանսֆերտների ու աշխատողների վարձատրություն դրամական փոխանցումների ծավալը միջինում նվազել է մոտ 7.0%-ով: 2015 թվականին դրամական փոխանցումները կազմել են մոտ 1471 մլն ԱՄՆ դոլար՝ ընդհանուր առմամբ, նախորդ տարվա համեմատ կրճատվելով 29.8%-ով և նպաստելով բնակչության տնօրինվող եկամուտների կրճատմանը, տնտեսական ակտիվության և տնտեսական աճի հիմնական շարժիչ ճյուղերի պասիվացմանը: Ընդ որում՝ անձնական (մասնավոր) տրանսֆերտները տարվա ընթացքում նվազել են 28.7%-ով (մոտ 261 մլն ԱՄՆ դոլարով), սեզոնային աշխատողների կողմից ստացված զուտ աշխատավարձը՝ 32.2%-ով (շուրջ 314 մլն ԱՄՆ դոլարով), իսկ շինարարության ոլորտում ծառայություն մատուցող սեզոնային աշխատողների զուտ եկամուտները՝ 23%-ով (մոտ 48 մլն ԱՄՆ դոլարով):

Մասնավոր տրանսֆերտների և աշխատողների դրամական փոխանցումների հիմնական աղբյուր է հանդիսանում գործընկեր երկրների տնտեսական աճը. Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջին աճերը 2013-2015 թվականներին համապատասխանաբար կազմել են -0.6 և 2.3% (տես՝ Ներդիր 1-ը): 2015 թվականին դրամական փոխանցումների կառուցվածքում այդ երկրների կշիռները համապատասխանաբար կազմել են 83 և 9%՝ վկայելով հատկապես Ռուսաստանի տնտեսության զարգացումներից Հայաստան ներհոսող դրամական փոխանցումների մեծ կախվածության մասին: 2015 թվականի ընթացքում դրամական փոխանցումների վրա մեծ էր նաև փոխարժեքի ազդեցությունը. դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու ավելի խորը արժեզրկումը հանգեցրել է դոլարային արտահայտությամբ փոխանցումների էական կրճատման (ռուսական ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների կրճատումը համեմատաբար ավելի քիչ էր):

Փոխարժեք

2013-2015 թվականներին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակաբար արժեզրկվել է՝ միջինում շուրջ 5.5%-ով: 2015 թվականի նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել ՀՀ

[17]Որպես դրամական փոխանցումներ դիտարկվել են ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հետևյալ հոդվածները. «Աշխատողների վարձատրության» զուտ ներհոսքը (Սկզբնական եկամուտներում), «Անձնական տրանսֆերտների (ընթացիկ տրանսֆերտներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև)» ներհոսքը (Երկրորդային եկամուտներում) և „Շինարարության“ ոլորտում ծառայություն մատուցող սեզոնային աշխատողների զուտ եկամուտները (Ծառայություններում) (Դրամական փոխանցումներում չեն դիտարկվել „Կապիտալ տրանսֆերտներ” հոդվածի «Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և SSUՈԱԿ»-րի կողմից ստացված մասնավոր տրանսֆերտները):

դրամի անվանական արժեքի 13% արժեզրկում, ինչին՝ մասամբ նպաստել է դեռևս նախորդ տարիներից դիտարկվող կապիտալի ներհոսքի (հիմնականում դրամական փոխանցումների տեսքով) զգալի կրճատումը:

2016 թվականի առաջին հինգ ամսիներին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի վարքագիծը հարաբերականորեն կայուն է: 2016 թվականի առաջին հինգ ամիսներին միջին փոխարժեքը կազմել է 485.1 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2015 թվականի առաջին հինգ ամիսներին՝ 477.2)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի միջինի նկատմամբ արժեզրկվելով 1.6%-ով: Փոխարժեքի նման վարքագիծը համաշխարհային տնտեսության և տարածաշրջանային զարգացումների արդյունք է:

Ամփոփելով նշենք, որ միջնաժամկետ հորիզոնում վերը նշված միտումների արդյունքում 2016 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կկազմի ՀՆԱ-ի 2.7%-ը, իսկ 2017-2019 թվականներին այն կհասնի միջինը 3.7% մակարդակի: Ընթացիկ հաշվի բացասական մնացորդի կրճատմանը էապես կնպաստի նաև կառավարության հարկաբյուջետային քաղաքականության աստիճանական խստացումը՝ պետական հատվածի պակասուրդի աստիճանական կրճատման միջոցով:

Գծապատկեր 2.5. Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, տոկոս



2.1.7. Պետական հատված

Հարկաբյուջետային քաղաքականությունը 2013 թվականին տնտեսության վրա ունեցել է զսպող ազդեցություն, իսկ 2014-2015 թվականներին բնութագրվել է տնտեսության վրա խթանող ուղղվածությամբ: Ընդ որում, հատկանշական է 2015 թվականը՝ հատկապես ծախսային առավելապես ընդլայնող քաղաքականությամբ (1.86%), քանի որ նպատակ էր դրվել նպաստել

տնտեսական աճի վերականգնմանը և մակրոտնտեսական կայունության ապահովմանը՝ զուգահեռաբար ուշադրության կենտրոնում պահելով ՀՀ կառավարության պարտքի կայուն մակարդակի պահպանումը:

2013-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ում միջինը կազմել են 23.5%: 2014 և 2015 թվականներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի մեջ կազմել են համապատասխանաբար՝ 23.7 և 23.2%, իսկ հարկային եկամուտներ և տուրքերը՝ համապատասխանաբար 22.0 և 21.2%: 2015 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 2.0%, իսկ հարկային եկամուտներ և տուրքերինը՝ 0.4%:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի մեջ 2014 և 2015 թվականներին կազմել են համապատասխանաբար՝ 25.6 և 28.0%, որից կապիտալ ծախսերը նշված ժամանակահատվածներում կազմել են ՀՆԱ-ի 2.8 և 3.4%-ը:

ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2014 թվականին կազմել է ՀՆԱ-ի 1.9%-ը, իսկ 2015 թվականի առավել խթանող հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում ավելացել՝ կազմելով 4.8%:

Գծապատկեր 2.6. Հարկաբյուջետային ազդակը[18]



Կանխատեսում. Կանխատեսվող միջնաժամկետ հորիզոնում, հաշվի առնելով հարկաբյուջետային և պարտքային կայուն միջավայր ձևավորելու համար պետական բյուջեի դեֆիցիտի սահուն կրճատման անհրաժեշտությունը, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա հիմնականում բնութագրվելու է զսպող ազդեցությամբ:

[18] *Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է:*

2016 թվականին ակնկալվում է, որ ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի ՀՆԱ-ի 4.1%-ը, իսկ միջնաժամկետ հորիզոնում կիրականացվի դեֆիցիտի աստիճանական կրճատում, մինչև ՀՀ կառավարության պարտքի կայուն մակարդակի ապահովման անհրաժեշտ մակարդակ (1.7%):

Այս միջավայրում 2016 թվականի համար կանխատեսվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների 20.35% մակարդակի ապահովում: Իսկ 2017-2019 թվականներն ընդգրկող հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները հիմնված են այն սկզբունքների վրա, որ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների բարելավումը տարեկան կազմի 0.3 տոկոսային կետ ՀՆԱ-ի նկատմամբ:

Հավելված Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2013	2014	2015	2016	2017	2018	2019
	փաստ	փաստ	փաստ	ծրագիր	կանխ.	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	4555.6	4828.6	5032.1	5269.1	5551.3	5919.4	6372.0
Իրական ՀՆԱ ինդեքս	103.3	103.6	103.0	103.7	103.9	104.0	104.1
ՀՆԱ-ի ինդեքս դեֆլյատոր	103.4	102.3	101.2	101.0	101.4	102.5	103.4
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ), տոկոս	5.6	4.6	-0.1	0.1	2.4	3.9	4.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ), տոկոս	5.8	3.02	3.7	-1.2	1.5	3.1	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, տոկոս							
ՀՆԱ	3.3	3.6	3.0	3.7	3.9	4.0	4.1
Արդյունաբերություն	6.3	-0.9	7.6	6.0	6.0	6.1	6.1
Գյուղատնտեսություն	7.6	6.1	13.2	3.3	4.0	4.0	4.3
Շինարարություն	-7.4	-4.5	-3.1	-0.2	0.2	1.0	1.5
Ծառայություններ	3.1	6.7	0.6	5.6	4.1	4.1	4.1
Զուտ հարկեր	3.6	1.8	-5.1	-3.9	3.0	3.2	3.2
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, տոկոս							
Վերջնական սպառում	1.7	0.7	-6.3	3.6	3.6	3.8	4.0
Պետական	7.6	-1.2	4.5	-0.3	-2.0	-0.7	-1.7
Մասնավոր	0.9	1.0	-7.9	4.3	4.5	4.5	4.7
Կապիտալի համախառն կուտակում	-9.1	-3.0	-2.9	-4.7	3.7	4.2	7.4
Պետական	-6.9	3.8	17.0	-31.3	1.8	3.9	26.6
Մասնավոր	-9.5	-4.2	-6.6	1.5	4.0	4.3	4.4
Ապրանքների և ծառայությունների արտահանում	8.6	6.4	4.9	15.4	7.7	7.4	7.2
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-2.1	-1.0	-16.3	5.6	3.6	3.6	3.4
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլարով)							

Ապրանքների և ծառայությունների արտահանում	3156	3319	3139.7	3388.3	3575.9	3784.5	4016.8
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	5365	5468	4357.4	4452.1	4679.5	4922.6	5191.7
Ապրանքների արտահանում	1636	1698	1626.4	1816.7	1943.9	2089.7	2256.8
Ապրանքների ներմուծում	3728	3754	2780.3	2816.4	2983.2	3163.4	3367.3
Ապրանքների արտահանման աճ, տոկոս	7.9	3.8	-4.2	11.7	7.0	7.5	8.0
Ապրանքների ներմուծման աճ, տոկոս	2.8	0.7	-25.9	1.3	5.9	6.0	6.4
Ընթացիկ հաշիվ	-845	-849	-279.3	-291.1	-373.4	-436.2	-514.9
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսով							
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-19.9	-18.5	-11.6	-9.9	-9.9	-9.6	-9.2
Ապրանքների և ծառայությունների արտահանում	28.4	28.6	29.8	31.4	31.9	31.8	31.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	48.2	47.1	41.4	41.3	41.8	41.4	40.6
Առևտրային հաշիվ	-18.8	-17.7	-11.0	-9.3	-9.3	-9.0	-8.7
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-7.6	-7.3	-2.7	-2.7	-3.3	-3.7	-4.0
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-8.7	-8.2	-3.7	-3.4	-3.8	-4.1	-4.2
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	5.0	3.3	4.9	4.8	4.8	4.8	4.7

2.2.ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՀՆԱ-Ի ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՆԱԿԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում

- Հայաստանը, որպես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ է արձագանքում համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ ՀՀ տնտեսության զարգացումը կլինի համաշխարհային տնտեսական զարգացումների ուղղվածությանը համահունչ՝ պահպանելով ՀՀ տնտեսության աճի միտումները նաև միջնաժամկետ հատվածում: Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներով (տես՝ Ներդիր 1-ը) Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում և Եվրոպայում միջնաժամկետ հատվածում կանխատեսվում է տնտեսությունների հետագա զարգացում, թեև մյուս երկրների համեմատ Եվրոգոտու տնտեսական աճը կընթանա ավելի դանդաղ տեմպերով: Բացառություն է կազմում Ռուսաստանը, որի տնտեսական

դժվարությունները կարճաժամկետ հորիզոնում կպահպանվեն՝ հետագայում դանդաղ վերականգնման հեռանկարով:

- Գործընկեր երկրներում ակնկալվող տնտեսական աճի տեմպերի և Ռուսաստանի տնտեսական զարգացումներով պայմանավորված՝ միջնաժամկետում դեպի Հայաստան դրամական փոխանցումները աննշան կաճեն՝ համեստ մասնակցություն ունենալով համախառն պահանջարկի աճին:
- Արտաքին միջավայրով, մասնավորապես, Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում տնտեսական զարգացումներով, նոր շուկաների ձեռքբերման և կառավարության կողմից որդեգրված արդյունաբերական արտահանման խթանման քաղաքականության ազդեցությամբ պայմանավորված՝ արտահանումը ներմուծման համեմատ առաջանցիկ տեմպեր կունենա, որով էլ կպայմանավորվեն 2017-2019 թվականների արտաքին առևտրի զարգացումները:
- Ներքին տնտեսությունում տնտեսվարող սուբյեկտների գործունեության հեշտացմանն ու պարզեցմանն ուղղված բազմակողմ ինստիտուցիոնալ բարեփոխումները լագավորված դրական ազդեցություն կունենան տնտեսական դաշտի աշխուժացման վրա: Ակնկալվում է, որ 2017-2019 թվականներին տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:

Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ:

Միաժամանակ, Հայաստանի մեծ կախվածությունը գործընկեր երկրների տնտեսական զարգացումներից ընդգծում է, որ հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես կախված կլինեն համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներից:

<u>ՀՆԱ-ի աճի ուղղությամբ նպաստող ռիսկեր.</u>

Արտաքին միջավայր

- Եթե գործընկեր երկրների հետագա զարգացումները լինեն ավելի բարենպաստ, քան կանխատեսումներն են, ապա ՀՀ տնտեսական աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, հատկապես, եթե Ռուսաստանի տնտեսությունը վերականգնվի ավելի արագ, քան ակնկալվում է:
- Նավթի միջազգային գների ակնկալվածից ավելի բարձր մակարդակը և հումքային այլ ապրանքների գների աճը կազդեն մեր երկրի ՀՆԱ-ի կանխատեսվածից ավելի բարձր աճի

վրա հիմնականում երկու ճանապարհներով. ուղղակի՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով (մետաղների գների ավելի բարձր մակարդակի դրսևորման դեպքերում) և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով (վառելիքի գների աճի դեպքում):

- Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության արդյունքում սպասվածից ավելի ներդրումների ներգրավման և արտահանման շուկաների ավելի արագ ընդլայնման արդյունքում տնտեսական աճի մակարդակը նույնպես կարող է կանխատեսվածից ավելի բարձր լինել:
- Արտաքին ցնցումներով պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների գնային միջավայրի նվազումը կարող է նպաստել տեղական արտադրության աճին՝ արտադրության ցածր ծախսերի միջոցով: Բացի դրանից, ցածր գնաճային միջավայրը կարող է էականորեն խնայել սպառմանն ուղղված մասնավոր հատվածի դրամական եկամուտները, մեծացնելով ներդրումային ծախսերը, ինչը բազմարկիչի արդյունք կունենա հետագա տնտեսական աճի արագացման ուղղությամբ:

Ներքին միջավայր.

- Եթե ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումների արդյունքները՝ հատկապես գործարար միջավայրի, ինչպես նաև արդյունաբերական ապրանքների արտահանման խթանման քաղաքականության ուղղությամբ արդյունքները, արտահայտվեն ավելի արագ, քան ակնկալվում էր, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:
- Կառավարության կողմից ձեռնարկված բարեփոխումների շարքում, միջնաժամկետ հատվածում տնտեսական աճի տեմպերի վրա նշանակալի ազդեցություն կարող է ունենալ նաև կենսաթոշակային համակարգի ներդրումը, որը նպաստելու է Հայաստանում ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացմանը, հետևաբար նաև տնտեսության իրական հատվածի համար վարկային խոշոր, երկարաժամկետ և մատչելի ռեսուրսների հասանելիության ապահովմանը: Այս ոլորտում իրականացվող բարեփոխումների առավել հարթ և արդյունավետ ընթացքը կարող է հանգեցնել միջնաժամկետ հատվածում տնտեսական աճի առավել բարձր տեմպերի ձեռքբերման:
- 2015 թվականին ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում 2014 թվականի տարեվերջից ստեղծված լարվածությունը հիմնականում չեզոքացվել է, ինչի արդյունքում արձանագրվել է վարկերի նկատմամբ ցածր պահանջարկ: Կանխատեսվող հորիզոնում

վարկավորման պայմանների դյուրացումներով պայմանավորված ակնկալվում է վարկավորման աճի արագացում, ինչը կնպաստի նաև տնտեսության ակտիվացմանը:

<u>ՀՆԱ-ի աճի կանխատեսումները նվազեցնող ռիսկերը</u> **կպայմանավորվեն ստորև ներկայացված և՛ արտաքին, և՛ ներքին միջավայրի զարգացումներով:**

Արտաքին միջավայր.

- Աշխարհաքաղաքական իրավիճակը, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունները, ներքաղաքական անկայունությունները, ինչպես նաև հարևան պետությունների հետ քաղաքական հակադրությունները էական ռիսկեր են առաջացնում տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, որն ավելի է սրվում Ռուսաստանի տնտեսական խնդիրներով պայմանավորված:
- Համաշխարհային տնտեսական զարգացման վերաբերյալ առկա են անորոշություններ և ավելի ցածր աճի սցենարի հավանականություն: Եվրոգոտու և ԱՄՆ-ի տնտեսական աճի տեմպերի հնարավոր դանդաղումը կհանգեցնի մեր երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի շարունակական անկման, ինչպես նաև մետաղների գների շարունակական նվազման՝ հանգեցնելով Հայաստանից ապրանքների արտահանման նվազմանը, արտահանման հաշվին արտարժույթի ներհոսքի կրճատմանը, հետևաբար և ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղմանը:
- Միջազգային ապրանքային շուկաներում գների անկայունությունը բացասաբար կազդի ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններով ամրագրված նպատա-կադրումների արդյունավետ իրականացման վրա:
- Մետաղների գների նվազման հետ կապված միջնաժամկետում ուղղակի օտարերկրյա ներդրումների ներհոսքի շարունակվող նվազումը կարող է զսպող ազդեցություն ունենալ թողարկման ծավալների՝ հետևաբար ՀՆԱ-ի աճի տեմպերի վրա:
- Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման հետևանքով և նավթի գների ցածր մակարդակի պայմաններում Ռուսաստանի տնտեսական աճի տեմպերի դանդաղումը ռիսկ է առաջացնում ՀՀ ներհոսող տրանսֆերտների, արտահանման ծավալների, հետևաբար նաև Հայաստանի տնտեսական աճի տեմպի դանդաղման ուղղությամբ:
- Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում առկա են խնդիրներ՝ եկա-մուտների աճող անհավասարության և մակրոտնտեսական քաղաքականության վրա դրա ազդեցության հետ կապված: Միջնաժամկետում, եթե եկամուտների անհավասարության և

գործազրկության բարձր մակարդակի հետագա նվազեցում տեղի չունենա, կապված վերոնշյալ ռիսկերի դրսևորման հետ, ապա վերականգնման համար անհրաժեշտ տնտեսական աճի տեմպի պակասը բացասաբար կանդրադառնա գլոբալ տնտեսության հետագա աշխուժացման վրա: Արդյունքում, գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:

Ներքին միջավայր.

- Ներքին միջավայրից բխող հիմնական ռիսկը բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր ավելի ցածր աճի արձանագրումն է: Կանխատեսվող հորիզոնում կառավարությունը շարունակելու է գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված միջոցառումների իրականացումը, սակայն բնակլիմայական անբարենպաստ պամանները կարող են լրացուցիչ ռեսուրսների ներդրման պահանջ առաջացնել՝ դանդաղեցնելով կառավարության բարեփոխումները[19], որի պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի ցածր լինել:
- Մակրոտնտեսական քաղաքականության արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտման դեպքում տնտեսական աճի նվազեցման ուղղությամբ ռիսկ կարող է առաջանալ:

ՀՆԱ-ի աճի ուղղությամբ նպաստող ներքին և արտաքին միջավայրերի ռիսկերը կարող են հանգեցնել տնտեսության ներուժի վերականգնմանը: Այսպիսով, գնահատվում է, որ կանխատեսվող հորիզոնում տնտեսական աճի ռիսկերը հավասարակշռված են լինելու՝ պայմանավորված հիմնականում համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներով, ինչպես նաև հումքային ապրանքների գների բարենպաստ ճշգրտմամբ և տնտեսության զարգացման ներուժով:

Իրական տնտեսական աճի կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ վերոնշյալ միտումների ազդեցության քանակական գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող տնտեսական աճի հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 2.7 և Աղյուսակ 2.6):

[19]Սա հիմնականում աշխատում է այն տրամաբանությամբ, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում սոցիալական և տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար կառավարությունը պարտադրված է լինելու ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում այլ ծրագրից միջոցները վերաուղղել վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում կարտամղվեն բարեփոխումների ծրագրերի համար հատկացված միջոցները:

Գծապատկեր 2.7. Իրական ՀՆԱ-ի աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը[20]



Ակնհայտորեն իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ուղղությամբ ռիսկերը հավասարակշռված են: Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 2.6. Իրական ՀՆԱ կանխատեսումների հավանականային բաշխումը

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2016	2017	2018	2019
1-3	0.249	0.231	0.220	0.214
3-5	**0.315**	**0.291**	**0.287**	**0.286**
5-7	0.213	0.214	0.224	0.229

Աղյուսակ 2.6-ի 1-ին սյունը ներկայացնում է տնտեսական աճի հավանականային միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների:

Պարզության համար աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական կենտրոնական միջակայքը և հարակից միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության միջինում շուրջ 74%-ը, այսինքն՝ ընդհանուր հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 1-ից 7% միջակայքում, կազմում է մոտ 74%:

[20]Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է «2.3.1. 2017-2019 թվականներին ՄԺՀՕ հարկային եկամուտների վրա ազդող մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը» բաժնում:

Ակնհայտ է, որ վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 2016-2019 թվականներին 3-5% միջակայքում տնտեսական աճի ձևավորվելու հավանականությունն է ամենաբարձրը (Գծապատկեր 2.7-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 6-ում՝ հոծ նշումով): Բնականաբար, սույն ծրագրի «Համախառն առաջարկ» հատվածում ներկայացված տնտեսական աճի բազային կանխատեսման սցենարն ընկած է վերոնշյալ ամենաբարձր հավանականությամբ տնտեսական աճի կենտրոնական միջակայքի շրջանակներում:

Վերը նկարագրված ռիսկերը կարող են շեղումներ մտցնել 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի սցենարի հիմքում ընկած կանխատեսումներում և ենթադրություններում, ինչն էլ կարող է անդրադառնալ հարկային եկամուտների նախատեսված հոսքերի վրա: Ստորև ներկայացվում են կանխատեսումների և ենթադրությունների հետ կապված ռիսկերի ազդեցության քանակական գնահատականները:

2.3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.3.1. 2017-2019 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** վրա:

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներ իրականացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[21], նոր երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: ՄԺԾԾ տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ

[21]Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

ՄԺԾԾ սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է նախաճգնաժամային և ետճգնաժամային 12 տարիներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, ՀՆԱ-ի միջնաժամկետ կանխատեսումներից փաստացիի շեղումները նախաճգնաժամային 2003-2008թթ. ժամանակահատվածի համար եղել են 7.1-9.0 տոկոսային կետ, իսկ ետճգնաժամային 2010-2015թթ. համար 1.0-2.0 տոկոսային կետ: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ-ի ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը՝ որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի կանխատեսված մակարդակից 1.2 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը 2017 թվականին, 1.6 տոկոսային կետով ցածր 2018 թվականին և 2.0 տոկոսային կետով ցածր 2019 թվականին:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին գործոններից (օրինակ, ներքին տնտեսության գնաճը՝ միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի համաշխարհային գների հնարավոր փոփոխությունները):

Ենթադրություններց շեղումների ռիսկ է ԵՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի նպատակային ցուցանիշի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը:

ՀՀ ԿԲ-ի կողմից միջնաժամկետ հորիզոնում գնահատվում է գնաճի կայունացում նպատակային ցուցանիշի շուրջ: Հարկ է նկատել, որ 2016 թվականի տարեսկզբից ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է գնանկումային միջավայր, սակայն ՀՀ ԿԲ կողմից իրականացվող հետևողական դրամավարկային քաղաքականության արդյունքում միջնաժամկետ հորիզոնում գնաճի ցուցանիշը աստիճանաբար կմոտենա նպատակային կենտրոնական արժեքին: Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են հավասա-

րակշռված՝ գնաճի կենտրոնական արժեքից **դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով** (այսինքն՝ գնաճի ներքին սահմանը 2.5 տոկոս է) և **դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով** (վերին սահմանը 5.5 տոկոս է):

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գների նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2017, 2018 և 2019 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 1.7, 1.8 և 2.0 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա,ընդ որում, յուրաքանչյուր տարվա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 5.0 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 5 տոկոս արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 5 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2017, 2018 և 2019 թվականներին կարելի է ապահովել հարկային եկամուտների համապատասխանաբար 10.2, 10.8 և 11.9 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015 թվականից Հայաստանը ԵՏՄ անդամ պետություն է հանդիսանում, գնահատականներում մաքսատուրքերի մասնաբաժինը հանվել է ընդհանուր հարկային եկամուտներից, որպեսզի ավելի ճշգրիտ լինեն ներքին տնտեսությունից եկող ռիսկերը:

Հետճգնաժամային տարիներին ՄԺԾԾ-ում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 8.7-13%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2017, 2018 և 2019 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 8.7, 10.8 և 13% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է համապատասխանաբար՝ 11.2, 16.3 և 20.7 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 2.7. Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն[22]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ		
	2017	2018	2019
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում			
1. Կանխատեսվածից 1.2-2.0 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-5.0	-7.0	-9.6
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-1.7	-1.8	-2.0
3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	10.2	10.8	11.9
4. Ներմուծման 8.7-13.0 տոկոսով նվազման ռիսկ	-11.2	-16.3	-20.7
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	-10.1	-16.6	-22.6

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 10.1 մլրդ ՀՀ դրամ 2017 թվականին, 16.6 մլրդ ՀՀ դրամ 2018 թվականին և 22.6 մլրդ ՀՀ դրամ 2019 թվականին:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս

[22]ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների վրա ազդող գործոնի 1 տոկոս փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 2.8. Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Միջին տարեկան ազդեցություն	0.26	0.09	0.19	0.07

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և փոխարժեքի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 8 և Աղյուսակ 9)[23]:

Գծապատկեր 2.8. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը[24], տոկոս



Ինչպես երևում է վերոնշյալ գրաֆիկից, կենտրոնական արժեքից հարկային եկամուտների շեղման ռիսկերն ակնհայտորեն նվազման ուղղություն ունեն: Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

[23] *Հարկային եկամուտների գծով ռիսկերի ազդեցության գնահատականը կառուցվել է ՀՀ ֆինանսների նախարարության ռիսկերի գնահատման համակարգի ներքո կառուցված մոդելի հիման վրա:*

[24] Հավանականային կանխատեսման գրաֆիկի կառուցման ընդհանուր մեթոդաբանությունը ներկայացված է Ներդիր 2-ում:

Աղյուսակ 2.9. Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը		
	2017	2018	2019
2-6%	0.40	0.30	0.24
6-10%	***0.48***	***0.52***	***0.50***
10-14%	0.05	0.12	0.21

Աղյուսակ 2.9-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների:

Ակնհայտ է, որ 2017-2019 թվականների համար վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 6-10% միջակայքում հարկային եկամուտների աճի ձևավորվելու հավանականությունը ամենաբարձրն է (Գծապատկեր 2.8-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 2.9-ում՝ հոծ նշումով):

Ներդիր 2

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ-ի կանխատեումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի է առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել են իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման գրաֆիկները 2017-2019 թվականների համար (տես՝ Գծապատկերներ 7 և 8):

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է

դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

2.3.2. Պետական բյուջեի վրա կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խա թարող ռիսկերին (հարկային եկամուտների պլանավորված մակարդակից փաստացի ցածր մակարդակ, արտաքին ֆինանսական միջոցների չստացում), որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 2.10. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[25].
(ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2017	2018	2019
1. Կանխատեսածից 1.2-2.0%-ով ավելի ցածր ՀՆԱ ձևավորում	-5	-7	-9.6
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	1.7	1.7	1.5
3. Փոխարժեքի առավելագույնը 5%-ով արժեզրկման ռիսկ	3.0	3.7	4.5
4. Ներմուծման 8.7-13.0%-ով նվազման ռիսկ	-11.2	-16.3	-20.7
5. Արտաքին ֆինանսական միջոցների չստացման ռիսկեր	-14.4	-20.0	-20.0
Ընդամենը	**-25.9**	**-37.9**	**-44.3**

Աղյուսակ 2.10-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի և փոխարժեքի գնահատված տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ: Հարկ է առանձնացնել փոխարժեքի առավելագույնը 5%-ով արժեզրկման ռիսկի ազդեցության գնահատականը: Եթե այս ռիսկի առարկայացման պայմաններում միջնաժամկետում առաջանում է միջինում լրացուցիչ մոտ 11 մլրդ ՀՀ դրամ հարկային եկամուտ (Աղուսակ 7), ապա նույն ռիսկի ազդեցությամբ առաջանում են նաև լրացուցիչ ծախսեր (ապրանքների, ծառայությունների և կապիտալ ծախսերի գծով): Արդյունքում, այս ռիսկի ընդհանուր ազդեցությունը պետական բյուջեի վրա գնահատվում է դրական՝ միջնաժամկետ հատվածում միջինում 3.7 մլրդ ՀՀ դրամի չափով (ֆինանսավորման պահանջի նվազում):

[25]Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2017-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի 25.9-44.3 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.5-0.7%-ը: Ընդ որում՝ ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

Այս պարագայում 2017-2019 թվականների համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման պայմաններում ՀՀ կառավարության պարտքի նախորդ տարվա ՀՆԱ-ի հարաբերակցությունը գերազանցում է 50% շեմը[26], ինչը նշանակում է, որ պետական բյուջեի պակասուրդը պետք է սահմանափակվի վերջին երեք տարիների ՀՆԱ-ի միջին մակարդակի 3%-ով: Հետևաբար, միջնաժամկետ ֆինանսավորման պահանջի ռիսկերի նյութականացման պարագայում հնարավոր չի լինի այն չեզոքացնել լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ, այլ անհրաժեշտ կլինի նաև իրականացնել ծախսերի կասեցում՝ օրենսդրությամբ ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում:

Ընդ որում, 2017 թվականին ֆինանսական հնարավոր պահանջն ամբողջությամբ պետք է չեզոքացվի ծախսերի կասեցմամբ՝ առավելագույնը 2017 թվականին նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 5%-ի կամ շուրջ 67.6 մլրդ ՀՀ դրամի (ՀՆԱ-ի շուրջ 1.2%-ը)[27] չափով, իսկ հետագա տարիներին աստիճանաբար հնարավոր կլինի այն բավարարել նաև պակասուրդի հաշվին:

[26] Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, եթե կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը:

[27] Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում 2009 թվականին հնարավոր է եղել կասեցնել բյուջեով ծրագրավորված ծախսերի ընդհանուր գումարի մոտ 5 տոկոսը (ոչ գերակա համարվող ծախսեր):

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2017–2019ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1, ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԺՈՒ առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղվածությունը և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու պահանջը, ինչպես և նախորդ տարիներին, պետական եկամուտների քաղաքականության հիմնական խնդիրն է, որի լուծումը հնարավորություն է ընձեռում ՀՀ կառավարությանն ի հաշիվ սեփական ռեսուրսների իրականացնել արդյունավետ, խթանող ծախսային քաղաքականություն: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը:

Հարկային եկամուտների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ դրանց հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների իրականացման արդյունավետությունից:

2017-2019 թթ պետական եկամուտների քաղաքականությունը կիրականացվի 2014 թվականի մայիսին ՀՀ Ազգային ժողովի հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստտված ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան: ՀՀ կառավարությունը բյուջետային քաղաքականության առավել կարևոր ուղղություն է համարում հիմնականում ներքին ռեսուրսների օգտագործման վրա հիմնված հարկաբյուջետային քաղաքականության վարումը և դրամավարկային քաղաքականության հետ արդյունավետ կոորդինացման միջոցով թիրախային արդյունքների ապահովումը: Մասնավորապես, շարունակվելու է պետական եկամուտների հավաքագրման վարչարարության արդյունավետության բարձրացումը և օրենսդրական բարեփոխումների իրականացումը:

Առաջիկա տարիներին հարկային և մաքսային համակարգերի կատարելագործման կարևոր ուղղություններն են լինելու՝

- հարկման դրույքաչափերի չեզոքության ապահովումը, որի դեպքում կարևորվելու է հարկման այնպիսի դրույքաչափերի կիրառությունը, որոնք մի կողմից չեզոք ազդեցություն կունենան հարկային միջավայրի վրա, մյուս կողմից հնարավորություն կընձեռեն տնտեսության տարբեր ոլորտների, տարբեր չափերի, ինչպես նաև հարկման տարբեր համակարգերում գտնվող հարկ

վճարողների համար սահմանել հավասարակշռված և տնտեսապես հիմնավորված հարկային բեռ: Բացի այդ, հարկման դրույքաչափերի որոշման տեսանկյունից կարևոր դերակատարություն է ունենալու նաև Եվրասիական տնտեսական միությունում իրականացվող՝ ծխախոտի արտադրանքի և ալկոհոլային խմիչքների մասով ակցիզային հարկի դրույքաչափերի աստիճանական ներդաշնակեցման քաղաքականությունը,

- հարկման բազաների օպտիմալացումը հարկման բազաների որոշման սկզբունքների ու կանոնների վերանայման միջոցով,

- հարկերի հաշվարկման և վճարման կարգի կատարելագործումը հարկերի հաշվարկումը և վճարումը պարզեցնելու և ազատականացնելու միջոցով,

- հարկման այլընտրանքային համակարգերի կիրառության շրջանակի նեղացումը,

- տնտեսության ստվերային շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով գործարքների և առանձին ապրանքների փաստաթղթավորման նկատմամբ պահանջների ու հսկողության խստացումը,

- աստիճանաբար հարկային վարչարարության կատարելագործումը՝ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների ու ուսումնասիրությունների հետ կապված հարաբերությունները կարգավորելու, անուղղակի եղանակներով հարկային պարտավորությունների հաշվարկման համակարգը զարգացնելու, իսկ հարկման բազաների պաշտպանության նպատակով տրանսֆերային գնագոյացման կարգավորումներ ներդնելու, հարկային օրենսդրության պահանջների խախտման դեպքերը, հասկացությունները հստակեցնելու, հարկային հաշվառման տեսակետից պաշտոնատար անձանց լիազորությունները ու պատասխանատվության շրջանակները հստակեցնելու, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները կատարելագործելու միջոցով,

- հարկ վճարողների սպասարկման մակարդակը բարելավելու համար նոր համակարգերի ու գործիքների ներդրումը, ինչպես նաև գործող համակարգերի կատարելագործումը, մասնավորապես՝ միջազգային պրակտիկայում վերջին շրջանում լայն տարածում գտած՝ հորիզոնական մոնիթորինգի համակարգի, միասնական գանձապետական հաշվի համակարգի ներդրումը, հարկ վճարողներին տարբեր իրազեկումների հիշեցում-ծանուցումների ուղարկման համակարգի կատարելագործումը, հարկային ծառայողների գործողությունների կամ անգործության դեմ բողոքարկման արտադատական համակարգի զարգացումը,

- մաքսային օրենսդրության փոփոխությունները կատարվելու են ԵՏՄ մաքսային օրենսգրքի շրջանակներում, որով մասնավորապես նախատեսվում է՝

- էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման առաջնահերթության ստեղծում, իսկ թղթային եղանակով հայտարարագրումն իրականացվելու է միայն առանձին դեպքերում,

- մաքսային հայտարարագրերի գրանցման և ապրանքների բաց թողնման հետ կապված մաքսային գործառույթների իրականացման ավտոմատացված համակարգերի ներդրում,
- մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրման դեպքերում ապրանքները ներմուծողին փոխանցելու հնարարվորության ստեղծում, եթե մինչև ապրանքների բաց թողնումը սկսված մաքսային հսկողությունը դեռ ավարտված չէ,
- լիազորված տնտեսական օպերատորների ինստիտուտի կատարելագործում,

- 2017-2019 թթ հարկային օրենսդրության հնարավոր փոփոխությունները, հարկային և մաքսային մարմինների կողմից այդ ժամանակաշրջանում իրականացվելիք վարչարարական միջոցառումները միտված կլինեն այս և ՀՀ կառավարության կողմից ուղենշված՝ հարկային և մաքսային քաղաքականությանն առնչվող մյուս սկզբունքներն արտացոլող նպատակների հասանելիության, ինչպես նաև 2017-2019թթ համար սույն փաստաթղթով նախատեսված հարկային եկամուտների ծրագրային մակարդակի ապահովմանը:

3.2 . ՀՀ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2017-2019 թվականների պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 1,196.50 մլրդ. դրամի, 1,286.80 մլրդ. դրամի և 1,390.29 մլրդ. դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 3.1. 2017-2019 թթ համար ծրագրված բյուջետային եկամուտները (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	2017	2018	2019
	կանխատեսում		
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,196.50	1,286.80	1,390.29
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	21.55%	21.74%	21.82%
1. Հարկային եկամուտներ	1,146.35	1,240.11	1,354.06
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	20.65%	20.95%	21.25%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	95.81%	96.37%	97.39%
2. Այլ եկամուտներ	22.45	21.70	22.20
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.40%	0.37%	0.35%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	1.88%	1.69%	1.60%
3. Պաշտոնական դրամաշնորհներ	27.70	24.98	14.03
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	0.50%	0.42%	0.22%
տոկոսով ընդհանուրի նկատմամբ	2.31%	1.94%	1.01%

ՀՀ 2017-2019 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտների գծով 2017-2019 թվականների բյուջետային մուտքերը ծրագրվել են՝ հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի տարեկան 0.3 տոկոս աճ ապահովելու սկզբունքի հիման վրա:

Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկերի գծով 2016 թվականի համար ծրագրված հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի ծրագրային մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Աղյուսակ 3.2. ՀՀ 2017-2019 թթ հարկային եկամուտներին առնչվող առանձին ցուցանիշներ

Ցուցանիշներ	2017	2018	2019
	կանխատեսում		
Հարկային եկամուտներ	1,146.35	1,240.11	1,354.06
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%-ով)	20.65%	20.95%	21.25%

Պաշտոնական դրամաշնորհները 2017, 2018 և 2019 թվականների համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը, դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները և Եվրոմիությունից ակնկալվող դրամաշնորհների դեպքում՝ սպասումները:

Աղյուսակ 3.4. 2017-2019թթ. հաստատված/ծրագրված պաշտոնական դրամաշնորհները (մլրդ դրամներով)

Ցուցանիշներ	2017	2018	2019
	կանխատեսում		
Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝	27.70	24.98	14.03
ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրեր)	9.49	10.03	9.92
Այլ նպատակային դրամաշնորհներ	18.21	14.95	4.10

Այլ եկամուտները ներառում են բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետական ձեռնարկությունների գույքի օգտագործման վճարները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսավճարները), իրա-

վախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը, պետական մարմինների կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքերը և այլ եկամուտները:

Այլ եկամուտները 2017-2019թթ համար ծրագրվել են համապատասխանաբար 22.5 մլրդ դրամի, 21.7 մլրդ դրամի և 22.2 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2017 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված հավաքագրման միտումները:

Այլ եկամուտների ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 3.4. Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումները (մլրդ դրամներով)

Եկամտատեսակը	2017թ	2018թ	2019թ
	կանխատեսում		
Այլ եկամուտներ, այդ թվում՝	22.45	21.70	22.20
1. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	1.96	2.34	3.13
2. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ	12.00	10.82	10.46
3. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	2.60	2.63	2.67
4. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, որից՝	4.83	4.84	4.86
4.1 ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացվող վճարներ	4.22	4.22	4.22
4.2 Այլ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ	0.61	0.62	0.64
5. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	1.06	1.07	1.08

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2016-2019 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տե՛ս Աղյուսակ 4.1):

Աղյուսակ 4.1. ՀՀ 2016-2019թթ. պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2016	2017	2018	2019
	հաստատված	ծրագիր		
Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ՝ ընդամենը	**190,758.1**	**155,000 .0**	**115,910.0**	**108, 700.0**
այդ թվում՝				
1. Ներքին աղբյուրներ	68,088.7	54,346.7	34,740.8	9, 805.6
որից՝				
Փոխառու զուտ միջոցներ	41,982.4	44,997.9	45,000.0	45, 000.0
ֆինանսական զուտ ակտիվներ	26,106.2	9,348.8	(10,259.2)	(35,194.4)
2. Արտաքին աղբյուրներ	92,617.5	90,398 .3	34,542.4	87,383.4
որից՝				
Փոխառու զուտ միջոցներ	141,073.2	139, 225.3	84,036.1	139,975.6
ֆինանսական զուտ ակտիվներ	(48,455.7)	(48,827.0)	(49,493.7)	(52,592.2)
3.Ֆինանսավորման այլ աղբյուրներ	30,051.9	10,255.0	46,626.8	11,511.0

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2016 թվականի համար ծրագրավորված 3.5%-ի դիմաց 2017-2019 թվականին կտատանվի ՀՆԱ-ի 2.8- %-ից 1.7% միջակայքում: Ինչպես նախորդ միջնաժամկետ ծախսային ծրագրերում, ՀՀ 2017-2019 թթ. ՄԺԾԾ-ում նույնպես պահպանվել է ՀՀ պետական բյուջեի կախվածությունն արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (արտասահմանյան վարկերից և պաշտոնական դրամաշնորհներից), որը կպահպանվի նաև առաջիկա տարիներին (տե՛ս Գծանկար 4.1):

Գծանկար 4.1 ՀՀ 2016-2019թթ պետական բյուջեների ֆինանսավորումը արտաքին աղբյուրների հաշվին



Տարբեր մեթոդներով հաշվարկված դեֆիցիտների համեմատական վերլուծությունները նույնպես հաստատում են այդ փաստը (տե՛ս Աղյուսակ 4.2):

Աղյուսակ 4.2. Ընդհանուր, ընթացիկ և առաջնային դեֆիցիտները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ) 2016-2019թթ

Ցուցանիշներ	2016 հաստատված պետական բյուջե	2017 ծրագիր	2018 ծրագիր	2019 ծրագիր
Ընդհանուր դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը	***3.5***	***2.8***	***2.0***	***1.7***
Ընթացիկ դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ընթացիկ ծախսերի տարբերությունը	*1.2*	*0.8*	*0.0*	*-0.8*
Առաջնային դեֆիցիտ՝ Ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը	*1.7*	*0.8*	*0.0*	*-0.3*

Քանի որ պետական բյուջեի դեֆիցիտի զգալի մասը ֆինանսավորվում է փոխառու միջոցների հաշվին, ապա դրա մեծությունը և կառուցվածքը էապես առնչվում են պետական ներքին և արտաքին պարտքը բնութագրող ցուցանիշների հետ:

Պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում առկա ռիսկը.

Սույն ծրագրով բյուջետային եկամուտների գծով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակի ձևավորման պարագայում՝ առաջացած ֆինանսական ճեղքվածքը լրացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով ողջամիտ չափով փոխառու և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր հանդիսա-

ցող այլ միջոցների ներգրավման հնարավորության դեպքում 2017-2019թթ. համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի մեծությունները կարող են գերազանցել սույն ծրագրով կանխատեսվող դեֆիցիտի չափերը: Դրան հակառակ, բյուջետային եկամուտների գծով մուտքերի ծրագրվածից բարձր մակարդակի ձևավորման և/կամ ծախսերում տնտեսումների կամ թերակատարումների առաջացման պարագայում՝ 2017-2019թթ. համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի մեծությունները կարող են պակաս լինել սույն ծրագրով կանխատեսվող դեֆիցիտի չափերից:

Բացի այդ, անկախ 2017-2019թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների առկայության հանգամանքից, պետական բյուջեի դեֆիցիտի մեծության վրա կարող է բացասական ազդեցություն ունենալ մակրոկանխատեսումներում պարունակված ռիսկերով պայմանավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծությունը: Մասնավորապես, խոսքը գնում է այնպիսի հանգամանքների մասին, որոնց առկայությամբ պետական բյուջեի դեֆիցիտի մեծության նկատմամբ գործողության մեջ կդրվի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ այն է.

«Եթե կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3%-ը:»:

4.2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ 2017-2019ԹԹ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ 2017-2019 թվականների պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունից երևում է, որ 2016 թվականի ծրագրային մակարդակի համեմատ, 2017 թվականի անվանական ՀՆԱ-ի շուրջ 2.0% աճի պայմաններում, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մուտքերի ծավալը ծրագրավորվում է շուրջ 25.5 մլրդ դրամ նվազեցմամբ: Միաժամանակ 2017 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 3.8 % աճ է կանխատեսվում 2018 թվականին (անվանական ՀՆԱ-ի 6.6% կանխատեսվող աճի պայմաններում) և 2018 թվականի մակարդակի համեմատ՝ 2019 թվականին՝ 6.9 %-ով (անվանական ՀՆԱ-ի 7.6 % կանխատեսվող աճի պայմաններում):

Աղյուսակ 4.3. Բյուջետային ռեսուրսների փաթեթում 2017-2019թթ կանխատեսվող փոփոխությունները (մլն դրամ)

Ցուցանիշներ	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
1. Եկամուտներ	1,196,496.0	1,286,797.0	1,390,285.4

Ցուցանիշներ	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	21.6	21.7	21.8
2. Դեֆիցիտի ֆինանսավորման զուտ աղբյուրներ	155,000.0	115,910.0	108,700.0
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.8	2.0	1.7
ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	1,351,496.0	1,402,707.0	1,498,985.4
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.4	23.7	23.5
ՆՈՒՅՆԸ՝ ԸՍՏ 2016-2018ԹԹ ՄԺԾԾ-ի	1,414,330.5	1,517,078.7	**x**
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	26.7	26.5	x
3.ՄՈՒՏՔԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ մլն դրամ)	(25,527.6)	51,210.9	96,278.4
նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ %	(1.9)	3.8	6.9
ՆՈՒՅՆԸ՝ ԸՍՏ 2016-2018ԹԹ ՄԺԾԾ-ի	67,694.8	102,748.2	**x**
նախորդ տարվա մուտքերի մակարդակի նկատմամբ՝ %	5.0	7.3	x
4.Ոլորտային կտրվածքով նախորդ տարվա մակարդակի նկատմամբ ազատված զուտ միջոցներ (մլն դրամ)	41,616.6	6,983.6	3,083.8
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՅԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (նախորդ տարվա ռեսուրսների մակարդակի նկատմամբ՝մլն դրամ)	16,089.0	58,194.6	99,362.3
Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.29	0.98	1.56
Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2017-2019թթ՝ ըստ ոլորտների (մլն դրամ)	16,089.0	58,194.4	99,362.3
այդ թվում՝			
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	5,766.0	18,727.1	24,190.0
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգեր	2,783.5	14,090.6	13,933.5
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-	14,689.8	44,058.5
4. Պետական կառավարում	-	605.9	4,159.5
5. Պետական պարտքի սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	7,539.5	10,081.1	8,849.8
7. Այլ ոլորտներ	-		4,172.0

2017-2019 թվականներին, նախորդ տարվա համեմատ ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը՝ 107.4 մլրդ դրամը կամ ընդհանուրի 61.9%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 28.04 %-ը, որը վկայում է այն մասին, որ 2017-2019թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 36.2 %-ը կտրամադրվի կրթության բնագավառին և շուրջ 58.5 %-ը՝ սոցիալական պաշտպանության բնագավառին:

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության համակարգերի պահպանման և փրկարար ծառայության համակարգի ծախսերին կուղղվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի շուրջ 17.7%-ը, որը պայմանավորված է վերոհիշյալ համակարգի մարմինների կենսագործունեության ապահովման համար համապատասխան միջոցների հատկացման անհրաժեշտությամբ:

Տնտեսության ճյուղերին 2017-2019 թվականներին կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 33.8%-ը: Պետական պարտքի սպասարկմանը (տոկոսավճարների կատարման համար) նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 15.2 %-ը:

4.3 2017-2019ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՀՀ 2017-2019 թվականների պետական բյուջեների ծախսերի կանխատեսումները՝ ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված աղյուսակի ցուցանիշներով[28]:

Աղյուսակ 4.4. ՀՀ 2016-2019թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների (մլն դրամ)

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,377,023.7	1,351,496.0	1,402,707.0	1,498,985.4
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	1,346,635.7	1,414,330.5	1,517,078.7	X
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	**653,726.4**	**653,383.2**	**669,293.6**	**692,195.4**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12.01	11.77	11.31	10.86
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	47.47	48.35	47.71	46.18
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**654,881.5**	**687,170.1**	**722,841.6**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	13.31	12.99	12.63	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	48.63	48.59	47.65	x
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	283,926.0	286,266.7	300,357.3	314,290.8

[28] Այսուհետև սույն գլխում «Սոցիալ-մշակութային ճյուղեր», «Տնտեսության ճյուղեր» և «Այլ ոլորտներ» խմբերը ներկայացվում են առանց պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների ապարատների պահպանման ծախսերի, որոնք միավորված են «Պետական կառավարում» խմբում

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.22	5.16	5.07	4.93
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	20.62	21.18	21.41	20.97
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	278,730.9	292,315.7	309,142.5	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.67	5.52	5.40	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	20.70	20.67	20.38	x
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	139,746.7	110,072.8	123,058.4	165,320.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.57	1.98	2.08	2.59
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	10.15	8.14	8.77	11.03
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	110,720.4	116,242.7	156,487.3	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.25	2.20	2.73	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.22	8.22	10.32	x
4. Պետական կառավարում	96,177.0	92,473.8	93,079.7	97,239.2
- տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)	1.77	1.67	1.57	1.53
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.98	6.84	6.64	6.49
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	97,789.9	99,702.3	99,025.1	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.99	1.88	1.73	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	7.26	7.05	6.53	x
5. Պետական պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)	100,616.6	108 ,156.0	118,237.1	127, 086.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.85	1.95	2.00	1.99
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	7,31	8,00	8,43	8,48
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	92,838.8	99,013.7	103,828.7	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.89	1.87	1.81	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.89	7.00	6.84	x
6. Այլ ոլորտներ	102,831.0	101,143.5	98,680.7	102,852.8
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.89	1.82	1.67	1.61
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	7.47	7.48	7.04	6.86
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	111,674.3	119,885.9	125,753.5	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.27	2.26	2.20	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.29	8.48	8.29	x

Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության խմբում 2017-2019 թվականներին ևս կարևորվելու է հատկապես կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառների զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը:

Աղյուսակ 4.5. Սոցիալ-մշակութային ճյուղերի և գիտության ոլորտի 2016-2019թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) (մլն դրամ)

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	**653,726.4**	**653,383.2**	**669,293.6**	**692,195.4**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	12.01	11.77	11.31	10.86
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	47.47	48.35	47.71	46.18
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**654,881.5**	**687,170.1**	**722,841.6**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	13.31	12.99	12.63	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	48.63	48.59	47.65	x
այդ թվում՝				
1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	127,614.5	133,269.2	137,494.9	145,216.7
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.34	2.40	2.32	2.28
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.27	9.86	9.80	9.69
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	129,428.0	134,463.1	140,202.0	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.63	2.54	2.45	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	9.61	9.51	9.24	x
2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**399,986.0**	**394,839.1**	**408,145.1**	**423,323.0**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	**7.35**	**7.11**	**6.90**	**6.64**
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	29.05	29.21	29.10	28.24
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**403,986.5**	**429,454.5**	**457,359.8**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	**8.21**	**8.12**	**7.99**	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	30.00	30.36	30.15	x
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**86,492.8**	**86,392.5**	**83,575.8**	**82,287.6**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.59	1.56	1.41	1.29
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.28	6.39	5.96	5.49
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**82,507.6**	**83,321.2**	**83,886.9**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.68	1.57	1.47	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.13	5.89	5.53	x
4. ՄՇԱԿՈՒՅԹ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՍՊՈՐՏ ԵՎ ԿՐՈՆ	25,479.7	24,617.6	24,735.7	24,792.2
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.47	0.44	0.42	0.39
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.85	1.82	1.76	1.65
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**24,805.9**	**24,666.6**	**24,830.2**	**x**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.50	0.47	0.43	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.84	1.74	1.64	x
5. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ	14,153.5	14,264.8	15,342.2	16,575.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.26	0.26	0.26	0.26
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.03	1.06	1.09	1.11
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**14,153.5**	**15,264.7**	**16,562.7**	**x**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.29	0.29	0.29	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.05	1.08	1.09	x

2017-2019 թվականների ժամանակահատվածում կրթության ոլորտում՝ համակարգի բարեփոխումների ուղղությամբ իրականացվող միջոցառումները դիտվում են որպես կրթության որակի բարձրացման գրավական: Հանրակրթության ոլորտում ծրագրային ժամանակահատվածում կշարու-

նակվեն բարեփոխումները, որոնք նպատակ են հետապնդում լրիվ միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ լրիվ միջնակարգ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Առողջապահության բնագավառում 2017-2019 թվականներին բյուջետային միջոցները կնպատակաուղղվեն ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակների իրականացմանը այն է՝ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, ախտորոշումը և բուժումը, բուժօգնության մատչելիության բարձրացումը և որակի ապահովումը:

Սոցիալական պաշտպանության բնագավառում առաջիկա տարիներին նույնպես շեշտը կդրվի ընտանեկան նպաստների համակարգի կատարելագործմանը:

2014թ ներդրված «Կենսաթոշակային ապահովություն (պարտադիր կուտակային համակարգ)» ծրագրի ծախսը կազմում է 2017 թվականին՝ 28,69 մլրդ դրամ, 2018 թվականին՝ 40,65 մլրդ դրամ և 2019 թվականին՝ 55,53 մլրդ դրամ: Ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեության ընթացքում կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից զատ կենսաթոշակային եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված կենսաթոշակային վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը: Կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց հնարավորություն կընձեռնվի ազդել կուտակային կենսաթոշակների չափի վրա՝ ընտրելով իր կուտակած միջոցները կառավարող անձին և այդ միջոցների կառավարման քաղաքականությունը:

Տնտեսության ճյուղերի 2017-2019 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Աղյուսակ 4.6. Տնտեսության ճյուղերի 2017-2019թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	139,746.7	110,072.8	123,058.4	165,320.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.57	1.98	2.08	2.59
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	10.15	8.14	8.77	11.03
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	110,720.4	116,242.7	156,487.3	**x**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.25	2.20	2.73	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	8.22	8.22	10.32	x
այդ թվում՝				
1. Բնապահպանություն, էներգետիկա և բնական պաշարներ	21,886.9	14,927.5	16,739.3	24,425.0
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.40	0.27	0.28	0.38

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.59	1.10	1.19	1.63
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	13,636.1	18,621.9	38,235.0	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.28	0.35	0.67	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.01	1.32	2.52	x
2. Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն	13,203.6	11,467.9	12,397.6	19,174.8
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.24	0.21	0.21	0.30
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.96	0.85	0.88	1.28
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**11,389.0**	**13,543.0**	**12,593.5**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.23	0.26	0.22	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.85	0.96	0.83	x
3. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ	54,372.9	45,563.4	55,106.3	77,804.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.0	0.82	0.93	1.22
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.95	3.37	3.93	5.19
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**36,006.0**	**41,139.8**	**65,436.9**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.73	0.78	1.14	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	2.67	2.91	4.31	x
4. Բնակարանային-կոմունալ տնտեսություն	27,453.4	17,417.7	19,225.1	18,142.6
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.50	0.31	0.32	0.28
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.99	1.29	1.37	1.21
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**25,207.5**	**18,287.1**	**13,827.1**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.51	0.35	0.24	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.87	1.29	0.91	x
5. Ջրային տնտեսություն	14,999.5	13,408.0	11,703.8	18,600.3
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.28	0.24	0.20	0.29
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.09	0.99	0.83	1.24
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	**13,429.6**	**13,779.9**	**16,793.6**	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.27	0.26	0.29	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	1.00	0.97	1.11	x
6. Տնտեսության այլ ճյուղեր	7,830.5	7,288.3	7,886.2	7,173.1
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.14	0.13	0.13	0.11
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.57	0.54	0.56	0.48
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	11,052.3	10,871.0	9,601.2	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.22	0.21	0.17	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	0.82	0.77	0.63	x

Պետության կողմից հատկապես կկարևորվեն գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի, ճանապարհային, ջրային և բնակարանային-կոմունալ տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը, որոնց զգալի մասը նախատեսվում է իրականացնել արտաքին ֆինանսական աջակցությամբ:

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար ծառայության համակարգերի պահպանման ծախսերի աճը պայմանավորված է լինելու նշված կառույցների կենսագործունեության ապահովման համար բավա-

րար պայմանների ստեղծման և դրա շնորհիվ այդ կառույցների պատրաստականության բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտությամբ:

Պետական կառավարման բնագավառում ծախսերը, 2016 թվականի համեմատությամբ, 2017-2019 թվականներին կունենան որոշակի աճ՝ պայմանավորված պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովման անհրաժեշտությամբ:

Այլ ոլորտներ խմբի համար 2017-2019 թվականներին նախատեսվող ծախսերի գերակշիռ մասը բաժին կընկնի պետական պարտքի սպասարկման և վերը չնշված այլ բնագավառներին:

Աղյուսակ 4.7. Այլ ոլորտների 2016-2019թթ բյուջետային ծախսերը՝ ճյուղային կտրվածքով (մլն դրամ)

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ	203,447.6	209,299.5	216,917.9	229,939.8
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.74	3.77	3.66	3.61
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	14.77	15.49	15.46	15.34
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	204,513.0	218,899.6	229,582.2	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	4.16	4.14	4.01	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	15.19	15.48	15.13	x
այդ թվում՝				
1. ՀՀ պետական պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)	100,616.6	108,156.0	118,237.1	127,086.9
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.8%	1.95	2.00	1.99
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	7.31	8.00	8.43	8.48
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	92,838.8	99,013.7	103,828.7	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.89	1.87	1.81	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	6.89	7.0	6.84	x
2. Պետական աջակցություն համայնքներին՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ	49,671.6	49,002.1	49,134.6	50,362.4
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.91	0.88	0.83	0.79
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.61	3.63	3.50	3.36
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	48,981.3	53,468.7	56,836.7	
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.00	1.01	0.99	
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.64	3.78	3.75	
3. Այլ	53,159.4	52,141.4	49,546.1	52,490.4
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.98	0.94	0.84	0.82
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	3.86	3.86	3.53	3.50
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	62,693.0	66,417.2	68,916.8	x
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.27	1.26	1.20	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	4.66	4.70	4.54	x

Ինչպես արդեն նշվեց, 2017-2019թթ ժամանակահատվածում ևս պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալն որոշ կախվածության մեջ կլինի արտաքին հոսքերից:

Աղյուսակ 4.8. Արտաքին աղբյուրներից 2016-2019թթ ստացվելիք միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլրդ դրամ)	207.9	215.0	176.3	227.5
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.82	4.37	3.33	3.97
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	15.10	15.91	12.57	15.18
Նույնը ըստ 2016-2018թթ ՄԺԾԾ-ի	161.30	108.0	137.0	**x**
- Հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.3	2.0	2.4	x
- տեսակարար կշիռը ծախսերի ամբողջ ծավալում (%)	12.0	7.6	9.0	x

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին կանխատեսվող 2017-2019 թվականների ծախսերի միջին տարեկան տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 14,5 % և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 3.9%:

4.4 ՀՀ 2017-2019ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Դիտարկվող 2017-2019 թվականների ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 22.4%-ից 21.0%-ի միջակայքում: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի համապատասխանաբար 2.0%-ից 2.5% միջակայքում:

Աղյուսակ 4.9. 2016-2019թթ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները

Ցուցանիշներ	2016թ հաստատված պետական բյուջե	2017թ ծրագիր	2018թ ծրագիր	2019թ ծրագիր
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, (մլն դրամ)	1,377,023.7	1,351,496.0	1,402,706.9	1,498,985.4
այդ թվում՝				
- ընթացիկ ծախսեր, (մլն դրամ)	1,249,420.2	1,243,914.8	1,287,218.5	1,338,249.8
- %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	22.96	22.41	21.75	21.00
- ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսեր, (մլն դրամ)	127,603.5	107,581.2	115,488.5	160,735.6
%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	2.34	1.94	1.95	2.52

2017-2019 թվականների ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 91,0 %-ը կկազմեն ընթացիկ ծախսերը, (2016 թվականին այդ ցուցանիշը նույնպես ծրագրվել է 90.7 %):

Դիտարկվող ժամանակահատվածում **ընթացիկ ծախսերի** մեծ մասի կատարումը ուղղված կլինի պետական կարիքների համար ապրանքների և ծառայությունների գնումներին, բնակչությանը տարբեր տեսակի նպաստների և կենսաթոշակների վճարմանը, ՀՀ պետական ներքին և արտաքին պարտքի սպասարկմանը (տոկոսավճարների), տնտեսության որոշ ճյուղերում բնակչությանը ջրամատակարարման, ոռոգման և փոխադրումների բնագավառում ծառայություններ մատուցող առանձին ընկերությունների սուբսիդավորմանը, պետական ավտոճանապարհների պահպանությանը և շահագործմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության տրամադրմանը և պետական կառավարման մարմինների աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը:

2017-2019 թվականների ընթացքում կանխատեսվող 383,9 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ընդհանուր ծավալի 61,3 %-ը (235,4 մլրդ դրամ) նախատեսվում է ֆինանսավորվել արտաքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները լինելու են ճանապարհային, տրանսպորտային, ջրային տնտեսության, գյուղատնտեսության, բնակշինարարության և դպրոցաշինության ոլորտները:

4.5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող միջնաժամկետ ժամանակահատվածում պետական ծառայողների և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի և դրան հավասարեցված վճարների գծով կպահպանվեն ներկայումս վարվող քաղաքականությունը, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների, այնպես էլ ներոլորտային առկա տարբերությունները, հաշվարկման մեխանիզմները և չափերը:

Ըստ ոլորտների այն կունենա հետևյալ պատկերը՝

Առողջապահության ոլորտ. Ոլորտի կազմակերպությունների վարչական (ղեկավար) աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության կրտսեր խմբի 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի միջին չափը[29]:

Պոլիկլինիկաներում և այլ բժշկական հիմնարկներում մասնագիտական (բժշկական անձնակազմի) աշխատողների (բացի հիվանդանոցների բժշկական անձնակազմի) աշխատավարձի ֆոնդը

[29] Այստեղ նախատեսվում է 2 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով:

հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության առաջատար խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի միջին չափը[30]:

Հիվանդանոցների աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս կկիրառվի միայն նվազագույն աշխատավարձի ապահովման սկզբունքը՝ պայմանավորված վերջիններիս կողմից իրականացվող մեծածավալ վճարովի ծառայություններով, որոնք այդ կազմակերպություններին հնարավորություն են ընձեռում իրականացնել ավելի ճկուն աշխատավարձային քաղաքականություն:

Ոլորտի մնացած բոլոր աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության համակարգի սկզբնական աշխատավարձը:

Կրթության ոլորտ. Ոլորտի կազմակերպությունների (բացառությամբ հանրակրթական և հատուկ հաստատությունների ուսուցչական անձնակազմի) վարչական (ղեկավար) և մանկավարժական աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կկիրառվի քաղծառայության կրտսեր խմբի 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի չափը[31]

Հանրակրթական և հատուկ հաստատությունների մասնագիտական (ուսուցչական) անձնակազմի աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության առաջատար խմբի 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի չափը[32]:

ԲՈՒՀ-երի աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կկիրառվի միայն նվազագույն աշխատավարձի ապահովման սկզբունքը՝ պայմանավորված վերջիններիս կողմից իրականացվող մեծածավալ վճարովի ծառայությունների առկայությամբ, ինչը հնարավություն է տալիս նրանց իրականացնել ավելի ճկուն աշխատավարձային քաղաքականություն:

Ոլորտի մնացած բոլոր աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության համակարգի սկզբնական աշխատավարձը:

Սոցիալական պաշտպանության ոլորտ. Ոլորտի կազմակերպությունների (բացի հատուկ մանկատներից, որոնց աշխատողների աշխատավարձը կարգավորվում է ՀՀ օրենքով) վարչական և մասնագիտական պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համա-

[30] Այստեղ նախատեսվում է 2.70 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով

[31] Այստեղ նախատեսվում է 2 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով:

[32] Այստեղ նախատեսվում է 2.3 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով:

դրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության առաջատար խմբի 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի չափը[33]:

Ոլորտի մնացած բոլոր աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության համակարգի սկզբնական աշխատավարձը:

Հանգստի, մշակույթի և կրոնի ոլորտ. Ոլորտի կազմակերպությունների (բացառությամբ ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական բնագավառի ընկերությունների և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի) վարչական անձնակազմի և մասնագիտական աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կդիտարկվի քաղծառայության կրտսեր խմբի 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի միջին չափը[34]:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական բնագավառի ընկերությունների և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս կկիրառվի քաղծառայողների աշխատավարձերի հաշվարկման համար հիմք ընդունված բազային կամ նվազագույն աշխատավարձը:

Ոլորտի մնացած բոլոր աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կվերցվի քաղծառայության համակարգի սկզբնական աշխատավարձը:

Այլ ոլորտներ. Այլ ոլորտների (տնտեսության ճյուղեր, սեյսմիկ պաշտպանություն, փորձաքննություն և կառավարության գործունեության գնահատում իրականացնող կազմակերպություններ) աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս որպես համադրելի ուղենիշ կկիրառվի քաղծառայության կրտսեր խմբի 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի միջին չափը[35]:

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների աշխատողների վարձատրության չափերը (ներառյալ բոլոր տեսակի հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները) տվյալ կազմակերպության բյուջետային մուտքերի շրջանակներում կսահմանվեն համապատասխան կազմակերպությունների կողմից՝ համաձայնեցնելով վերադաս պետական կառավարման մարմինների և ֆինանսական ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

Նշված սահմանափակումը չի վերաբերի այն կազմակերպություններին, որոնց աշխատողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկելիս կկիրառվի նվազագույն աշխատավարձը, ինչպես նաև

[33] Այստեղ նախատեսվում է 2.3 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով:
[34] Այստեղ նախատեսվում է 1.7 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով:
[35] Այստեղ նախատեսվում է 1.70 գործակից, որն ընդհանուր տրամաբանության ներքո կարող է ճշգրտվել յուրաքանչյուր տարի՝ պետական բյուջեի կոնկրետ հնարավորություններից ելնելով:

վճարովի ծառայություններից և այլ աղբյուրներից ստացված աշխատավարձի ֆոնդին ուղղվող միջոցներին:

4.6 ՀՀ 2017-2019ԹԹ ՄԺԾԾ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԸ

ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ իրատեսության տեսանկյունից հարկ է առանձնացնել այն գործոնները, որոնք կարող են ազդել հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարի վրա: Այդ գործոնների կազմում առավել կարևորվում են նրանք, որոնք կարող են հանգեցնել ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ կատարելու անհրաժեշտության: Այդ իմաստով ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր:

Ռիսկերի աղբյուրները

ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից շեղումների.

(i) ներքին ռեսուրսների գծով,

(ii) արտաքին օժանդակության գծով:

<u>Ներքին ռեսուրսների մասով</u> 2017-2019թթ բյուջետային ռեսուրսների փաթեթը հիմնականում համալրվելու է հարկային եկամուտների հաշվին, որոնց գծով ծրագրային մուտքերը 2017-2019թթ կկազմեն ներքին ռեսուրսների ընդհանուր մուտքերի միջինում 98.2 %-ը: Հարկային եկամուտների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ դրանց հավաքագրման բնագավառում Կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր կունենան նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները: Մասնավորապես,

<u>ա) Մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանություն</u>. Մակրոտնտեսական շրջանակում կատարված կանխատեսումների մասով 2017-2019թթ. առկա ռիսկերի մասին նշվել է սույն փաստաթղթի 2-րդ գլխի համապատասխան մասում:

<u>բ) Վարչարարական միջոցառումների իրականացում.</u> 2017-2019թթ, երբ բյուջետային միջոցների սղությունը դեռևս լուծում պահանջող խնդիրներից մեկն է լինելու, առաջադրելով հարկային եկամուտների հնարավոր հասանելի մակարդակի ապահովում, Կառավարությունը սկզբունքայնորեն շարունակելու է իրականացնել իր կողմից որդեգրված՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականությունը, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս դեպքում տնտեսության

ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային, մաքսային, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է:

գ) Արտաքին գործոնների ազդեցություններ. Ռիսկը հնարավոր է արտաքին գործոնների (արտաքին տնտեսական շուկաներում, ինչպես նաև ՀՀ արտաքին սահմաններում իրավիճակի սրում) ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և այն գնահատել հնարավոր չէ:

Արտաքին օժանդակության մասով 2017-2019թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ վարկերի հաշվին:

ա) Պաշտոնական դրամաշնորհների հատկացման կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու Կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների բնագավառում դոնորների հետ փոխհամաձայնեցված որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով (ընդհանուր բնույթի բյուջետային աջակցության մասով) և ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով (նպատակային դրամաշնորհային ծրագրերի մասով):

բ) Վարկերի մասով ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու Կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների բնագավառում վարկատուների հետ փոխհամաձայնեցված որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով (ընդհանուր բնույթի բյուջետային աջակցության մասով) և ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով (նպատակային վարկային ծրագրերի մասով):

Արտաքին օժանդակության մասով 2017-2019թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրման վրա կարող է ազդեցություն ունենալ նաև տարադրամի փոխարժեքի փոփոխությունը:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը (առաջացած ճեղքվածքը այլ ռեսուրսների հաշվին լրացնելու հնարավորության բացակայության դեպքում) ենթադրում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով Կառավարությանը վերապահված իրավասության շրջանակներում ծախսերի վերանայում՝ դրանց կրճատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական եկամուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, այս դեպքում ծախսերի վերանայումն իրականացվելու է՝ հիմք ընդունելով դրանց գերակայությունները. առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված գումարները, որոնք կրճատման պահին

կունենան գերակայության ավելի ցածր աստիճան (հաշվի առնելով նաև ծախսերի կրճատման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների առաջացումը):

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը:

Աղյուսակ 4.10. Արտաքին օժանդակությունը՝ ըստ նշանակության (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	2017	2018	2019
Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	**116,2**	**39,8**	**39,7**
Պաշտոնական դրամաշնորհներ	*9,5*	*10,0*	*9,9*
Վարկեր	106,7	29,8	*29,8*
Ծրագրային (նպատակային) օժանդակություն	98.8	136.5	187.8
Պաշտոնական դրամաշնորհներ	*18,2*	*15,0*	*4,1*
Վարկեր	*80,6*	*121,5*	*183,7*
Ընդամենը արտաքին օժանդակություն	**215,0**	**176,3**	**275,5**

Բյուջետային ռեսուրսների փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում և առաջացած ճեղքվածքը այլ ռեսուրսների հաշվին լրացնելու հնարավորության բացակայության դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով Կառավարությանը վերապահված իրավասության շրջանակներում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը որպես կանոն հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրների հետ, թեև առանձին դեպքերում չի կարելի բացառել այդ ծրագրերի գծով արտաքին աղբյուրներից ստացվող միջոցների փոխարինումը ներքին ռեսուրսներով:

Փոխհատուցման հնարավորությունները

2017-2019թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի վրա դրական հետևանքներ կարելի է ակնկալել բարենպաստ մակրոտնտեսական զարգացումներից, որոնք կարող են որոշ չափով փոխհատուցել արտաքին օժանդակության գծով հնարավոր «կորուստները»: Նախատեսվածի դիմաց մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման համար: Այս դեպքում հարկային եկամուտների լրացուցիչ մուտքերի՝ այլ մուտքերի հնարավոր կորուստների փոխհատուցմանն ուղղելուց հետո Կառավարությունը կարող է քննարկման առարկա դարձնել լրացուցիչ եկամուտների՝ ըստ ծախսային գերակայությունների ծախսերի ավելացմանը և (կամ) պետական բյուջեի դեֆիցիտի չափը կրճատելուն ուղղելու հարցը:

ՄԱՍ Բ. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 5. ՀՀ 2017-2019ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են 2017-2019թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ ոլորտների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են Կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (Կառավարության ծրագիր, տարբեր ոլորտներում Կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել էր Կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Աղյուսակ 5.1. ՀՀ պետական բյուջեի ծախսերի փաթեթում 2017-2019թթ կանխատեսվող փոփոխությունները նախորդ տարվա համեմատությամբ՝ ըստ խոշորացված ոլորտների (մլն դրամ)

Ցուցանիշներ	2017	2018	2019
Հավելյալ բյուջետային ռեսուրսների կանխատեսվող բաշխումը 2017-2019թթ՝ ըստ ոլորտների (մլն դրամ)	16,089.0	58,194.4	99,362.3
այդ թվում՝			
1. Սոցիալ – մշակութային ճյուղեր և գիտություն	5,766.0	18,727.1	24,190.0
2. Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և փրկարար	2,783.5	14,090.6	13,933.5

ծառայության համակարգեր			
3. Տնտեսական հարաբերություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-	14,689.8	44,058.5
4. Պետական կառավարում	-	605.9	4,159.5
5. Պետական պարտքի սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	7,539.5	10,081.1	8,849.8
6. Այլ ոլորտներ	-		4,172.0

2017-2019 թվականներին, նախորդ տարվա համեմատ ստացվելիք լրացուցիչ մուտքերի զգալի մասը՝ 107.4 մլրդ դրամը կամ ընդհանուրի 61.9%-ը նախատեսվում է ուղղել սոցիալ-մշակութային ճյուղերի ու գիտության, ինչպես նաև տնտեսության ճյուղերի ֆինանսավորմանը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը բաժին կհասնի լրացուցիչ մուտքերի ընդհանուր գումարի 28.04 %-ը, որը վկայում է այն մասին, որ 2017-2019թթ նախատեսվում է շարունակել բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածության ավելացումը:

Սոցիալ-մշակութային ճյուղերին և գիտությանը հատկացված հավելյալ միջոցների շուրջ 36.2 %-ը կտրամադրվի կրթության բնագավառին և շուրջ 58.5 %-ը՝ սոցիալական պաշտպանության բնագավառին:

Պաշտպանության, ազգային անվտանգության, հասարակական կարգի պահպանության համակարգերի պահպանման և փրկարար ծառայության համակարգի ծախսերին կուղղվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի շուրջ 17.7%-ը, որը պայմանավորված է վերոհիշյալ համակարգի մարմինների կենսագործունեության ապահովման համար համապատասխան միջոցների հատկացման անհրաժեշտությամբ:

Տնտեսության ճյուղերին 2017-2019 թվականներին կհատկացվի հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 33.8%-ը: Պետական պարտքի սպասարկմանը (տոկոսավճարների կատարման համար) նախատեսվում է հատկացնել հավելյալ միջոցների ընդհանուր գումարի 15.2 %-ը:

ԳԼՈՒԽ 6. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6.1.1. Իրավիճակի նկարագրությունը

ՀՀ կառավարությունը շարունակում է իրագործել պետական կառավարման համակարգի բարեփոխումների լայնածավալ ծրագիր՝ համակարգի արդյունավետության, ծառայությունների որակի և մատչելիության, թափանցիկության և հաշվետվելիության, վերահսկելիության բարձրացման նպատակով:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հանդիսանում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ռազմավարական փաստաթուղթը, ինչպես նաև հիմք է ծառայում ՀՀ միջնաժամկետ, ոլորտային և ծրագրային այլ ռազմավարական փաստաթղթերի համար:

Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը՝ որպես ՀՀ կառավարության գործունեության առաջնային ուղեցույց, սահմանել է ծրագրային չորս հիմնական գերակայություն, որոնցից մեկը կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացումն է (կետ 38):

Երկրի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացման գործողությունները, ապահովելով որդեգրած հիմնարար քաղաքականությունների շարունակականությունը, միտված են լինելու պետության արդյունավետության աճին, պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների ընդլայնմանը և նպատակային օգտագործմանը, տրամադրվող ծառայությունների որակի և մատչելիության ավելացմանը, կոռուպցիայի նվազեցմանը, որոշումների ընդունման թափանցիկության և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության աստիճանի մեծացմանը (կետ 42):

Պետական կառավարման համակարգի կառուցվածքային և գործառութային բարեփոխումներ.

ՀՀ կառավարության կողմից շարունակվում է պետական կառավարման համակարգի բարեփոխումների ծրագիրը, որի շրջանակներում իրականացվող գործողությունները բխում են Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով առաջադրված նպատակներից: Պետական կառավարման համակարգի բարեփոխման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները միտված են կոռուպցիոն երևույթների նվազեցմանն ու հնարավորինս բացառմանը, և այդ նպատակով էլ տարբեր օրենսդրական կարգավորումների շնորհիվ հնարավոր է դառնում պետական իշխանության մարմինների գործունեության թափանցիկության աճը, պետական կառավարման գործընթացներին

քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության աստիճանի բարձրացումը, կառավարման համակարգում տարբեր հանրային ու հասարակական խորհուրդների առկայությունը և այլն:

Նախարարությունները ներկայումս իրականացնում են իրենց բնագավառի քաղաքականության մշակման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները, իսկ ծառայությունների մատուցման, կանոնակարգման, վերահսկողական ու տեսչական գործառույթների իրականացման իրավասությունները հիմնականում փոխանցվեցին նախարարություններում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով ստեղծված գործակալություններին և տեսչություններին:

ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2008թ. ընդունվել է «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը, որին համապատասխան ձևավորվում են ՀՀ կառավարության կազմում ներառվող գործադիր իշխանության մարմինները՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման նպատակով:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների արդյունքում հստակեցվել են նախարարությունների կանոնադրական խնդիրները և միասնականացվել նրանց աշխատակազմերի կառուցվածքները:

2016 թվականի փետրվարի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն վերակազմակերպվեց ՀՀ տարածքային կառավարման արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմը. առանձնացվեցին ՀՀ արտակարգ իրավիճակների և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների աշխատակազմերը:

Առանձին բնագավառներում քաղաքականության մշակման ու իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծվել են մշտական գործող նախարարական կոմիտեներ՝ ֆինանսատնտեսական, սոցիալական, տարածքային զարգացման և բնապահպանական, պետաիրավական:

Պետական կառավարման ոլորտում ներդրվել է հանրային ծառայության համակարգը, որը հնարավորություն է տալիս դասակարգել պետական ծառայության պաշտոնները ըստ տարբեր մակարդակների և ոլորտային առանձնահարկությունների, ինչին համապատասխան էլ ձևավորվում են առանձին գերատեսչությունների աշխատակազմերը և կազմակերպվում դրանց աշխատանքը:

Հանրային ծառայության ոլորտում աշխատանքի վարձատրության համակարգի կարգավորման նպատակով 2013 թվականին ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ հանրային ծառայությունների ոլորտում ընդգրկված աշխատողների աշխատանքի վարձատրության գործող համակարգի արմա-

տական բարեփոխմանը և ներդրվեց վարձատրության միասնական և կանոնակարգված համակարգ:

Պետական իշխանության մարմիններում աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ներդրվել է և շարունակում է բարելավվել աշխատանքային ծրագրերի կազմման և դրանց կատարողականների գնահատման համակարգը:

Տեսչական համակարգի բարեփոխումներ.

Ներկայումս ՀՀ կառավարությունը ստանձնել է տեսչական համակարգի բարեփոխումների գործընթացը՝ նպատակ ունենալով բարելավել գործող տեսչական համակարգը, կարգավորել տեսչական ստուգումների ծրագրավորման և իրականացման գործընթացները, որը ենթադրում է վերացնել հաճախակի և ոչ տեղին ստուգումները, ոչ թափանցիկ տեսչական գործընթացները, վարչական կոռուպցիան և վերացնել տեսչական գործընթացում գործառույթների կրկնորդումները՝ անցում կատարելով ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգի: Առաջնային կարևորություն ունի նաև ստուգում իրականացնող մարմինների համար կառավարման նոր համակարգի ներդրումը, համաձայն որի տեսչական մարմինը ղեկավարվում է ինչպես տեսչական մարմնի ղեկավարի, այնպես էլ տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից, որն իրենից ներկայացնում է տեսչական մարմնի կառավարման համակարգում գործող կոլեգիալ մարմին և որի կազմում օրենքով սահմանված կարգով, բացի համապատասխան ոլորտների համար պատասխանատու պետական կառավարման մարմինների պաշտոնյաներից, ընդգրկվում են նաև տվյալ տեսչական մարմնի իրավասության բնագավառում քաղաքացիների կամ սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, տեսչական մարմնի իրավասության բնագավառում համապատասխան գործունեություն իրականացնող գործարար միավորումների ներկայացուցիչը և համապատասխան բնագավառների գիտական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ, որոնք չեն կարող լինել համապատասխան բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ենթակայությամբ գործող մարմնի կամ կազմակերպության աշխատակից:

ՀՀ կառավարությունը՝ նպատակ ունենալով արմատական բարեփոխումներ իրականացնել տեսչական համակարգում և բարելավել գործող համակարգը, 2009թ. սեպտեմբերի 17-ի N 1135-Ն որոշմամբ հավանություն է տվել Տեսչական բարեփոխումների հայեցակարգին և ՀՀ տեսչական համակարգի օպտիմալացման նպատակով ՀՀ կառավարությունը 2014 թվականի սեպտեմբերի 25-ի նիստի N 40 արձանագրային որոշմամբ (կետ 59) հավանություն է տրվել ՀՀ տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և գործողությունների համառոտ ծրագրին, և ինչպես նախատեսված էր գործողությունների ծրագրի 1-ին կետով, 2014 թվականի դեկտեմբերի 17-ին

ընդունվել և 2015 թվականի հունվարի 9-ից գործում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը: Օրենքը կարգավորում է ՀՀ գործադիր իշխանության համակարգում գործող տեսչական մարմինների իրավական կարգավիճակը, դրանց ստեղծման, գործունեության կազմակերպման և ղեկավարման առանձնահատկությունները, վերակազմակերպման և գործունեության դադարեցման կարգը, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

2015 թվականի հունիսի 4-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 632-Ն որոշումը, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում նոր տեսչական համակարգին անցնելու ծրագիրը:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի նիստի N 40 արձանագրության 12-րդ կետով հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության համակարգում գործող տեսչական մարմինների օրինակելի կանոնադրությանը և կառուցվածքին, որին էլ պետք է համապատասխանեցվեն հետագայում հանրապետական գործադիր մարմինների կազմում ստեղծվող տեսչական մարմինների կանոնադրությունները և կառուցվածքները:

Այս գործընթացի շրջանակներում 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1063-Ն որոշմամբ ստեղծվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, որի պահպանման ծախսերը օրենքով սահմանված կարգով, սկսած 2016 թվականից, արտացոլվում են ՀՀ պետական բյուջեում առանձին տողով:

Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացում.

Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում որպես գերակայություն առանձին ուշադրություն է դարձվում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ու զարգացմանը, ինչը պետական կառավարման համակարգի բարեփոխման ու արդիականացման կարևորագույն բաղկացուցիչ է:

Այս ուղղությամբ պետական կառավարման մարմիններում արդեն իսկ ներդրվել ու արդյունավետորեն գործում են բազմաթիվ Էլեկտրոնային ծրագրեր ու համակարգեր, որոնք թե ժամանակային և թե աշխատանքային իմաստով առավել արդյունավետ են դարձնում պետական կառավարման համակարգի աշխատանքը, իսկ ընդհանուր առմամբ՝ ավելի մատչելի ու հրապարակային են դարձնում պետական կառավարմանն առնչվող տեղեկատվությունը հանրության համար:

Մասնավորապես, պետական կառավարման մարմիններում ներդրվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, հաշվապահական հաշվառման ծրագրերը, մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգը, ֆինանսների կառավարման և գնումների գործընթացի հետ կապված ծրագրերն ու համակարգերը, ինչպես նաև առանձին մարմիններում ըստ անհրաժեշտության ներդրվել են տվյալների մշակման ու ամփոփման բազմաթիվ

էլեկտրոնային ծրագրեր: Անհամեմատ բարձրացել է պետական կառավարման համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման մակարդակը:

Էլեկտրոնային կառավարման, մասնավորապես՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և դրանց փոխանակման հնարավորության ստեղծումը զգալիորեն դյուրացնում է ծանրաբեռնված թղթատարությունը՝ նպաստելով աշխատաժամանակի տնտեսմանը, պետական ծառայողների թվաքանակի օպտիմալացմանն ու նրանց որակավորման բարձրացմանը:

Բացի այդ, էլեկտրոնային համակարգի ներդրումը մի կողմից բարձրացնում է պետական կառավարման համակարգի գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը, իսկ մյուս կողմից նվազեցնում կոռուպցիոն ռիսկերը՝ պետական ծառայողների և մասնավոր հատվածի միջև ուղղակի և անձնավորված շփումների էական կրճատման ճանապարհով:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 18-ի N 678-Ն որոշմամբ սահմանվել է տեսչական մարմինների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման, օգտագործման և վերահսկողություն իրականացնող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև հանրությանը տեղեկատվություն տրամադրելու կարգը: Տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակը տեսչական մարմինների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետության ապահովման և վերահսկողության հետ կապված տեղեկատվությունը հանրությանը և տնտեսավարող սուբյեկտներին մեկ տեղում հասանելի դարձնելն է:

«Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան տեղեկատվություն հավաքելու միջոցով շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների հետ կապված տեղեկատվության հասանելիությանը նպաստելու, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների էլեկտրոնային տվյալների միասնական գրանցամատյանի անխափան աշխատանքը, շարժական գույքի հետ կապված իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների գրանցման և տեղեկատվության պահպանումն ապահովելու, ինչպես նաև վիճակագրական տվյալների հավաքմանը նպաստելու նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 5-ի N 210-Ն որոշմամբ ստեղծվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման գործակալությունը:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ անձնական տվյալների մշակողների ռեեստրի վարման աշխատանքների, անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության և անձնական տվյալների մշակման օրինականության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 734-Ն որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության համակարգում ստեղծվել է անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը:

Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման գրավականներից է էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը և մեկ պատուհանի սկզբունքով բնակչությանը ծառայությունների մատուցումը: Այս ուղղությամբ պետական կառավարման մարմիններում արդեն իսկ ներդրվել ու արդյունավետորեն գործում են բազմաթիվ Էլեկտրոնային ծրագրեր ու համակարգեր, որոնք թե ժամանակային և թե աշխատանքային իմաստով առավել արդյունավետ են դարձնում պետական կառավարման համակարգի աշխատանքը, իսկ ընդհանուր առմամբ՝ ավելի մատչելի ու հրապարակային են դարձնում պետական կառավարմանն առնչվող տեղեկատվությունը հանրության համար:

Քաղաքացիական ծառայության համակարգ.

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից ենթաօրենսդրական իրավական ակտերի հիման վրա իրականացվեց քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման գործընթացը: Իրականացված բարեփոխումների շնորհիվ քաղաքացիական ծառայողները տարանջատվել են քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող անձանցից և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներից, սահմանվել են քաղաքացիական ծառայության մուտքի և ծառայությունից ազատվելու հավասար պայմաններ, ապահովվել են մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ: Այդ ընթացքում հստակեցվել են քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պատասխանատվության սահմանները և քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգը:

2010 թվականին օրենսդրորեն սկզբունքային փոփոխությունների ենթարկվեց քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթներում հաղթող ճանաչելու կարգը, սահմանվեց արդյունքների գնահատման նոր ընթացակարգ՝ ըստ որի մրցութային հանձնաժողովները ոչ թե քվեարկության միջոցով են մրցույթում հաղթող ճանաչելու, այլ մասնակիցներին տրված միավորների հանրագումարով: Սահմանվեց նաև քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու համար թեստավորում անցկացնելու և քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու կարգը:

2014 թվականին սկզբունքային փոփոխությունների ենթարկվեց այս անգամ քաղաքացիական ծառայողների ատեստավորման ընթացակարգը (ՀՕ-104-Ն 21.06.2014թ.): Ատեստավորմանը գալիս է փոխարինելու քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատումը, ինչը ըստ օրենքով տրվող սահմանման՝ համապատասխան մարմնի կողմից քաղաքացիական ծառայողի վերապատրաստման կարիքների բացահայտմանը և խրախուսմանը (պարգևատրմանը) ուղղված միջոցառում է:

Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատումն իրականացվում է կիսամյակային կատարողականի արդյունքների հիման վրա՝ քաղաքացիական ծառայողի անմիջական ղեկավարի կողմից:

Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման մեխանիզմի ներդրման կապակցությամբ որոշակի փոփոխություններ են կատարվել նաև քաղաքացիական ծառայողի վերապատրաստման ընթացակարգի հետ կապված: Փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո նախատեսվում է, որ քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման և վերապատրաստումների արդյունքում սահմանված միավորների (կրեդիտների) նվազագույն շեմը չհաղթահարելու դեպքում քաղաքացիական ծառայողը ենթակա է ամփոփիչ գնահատման, որը կանցկացվի երեք տարին մեկ անգամ:

Նշված փոփոխություններն ուժի մեջ կմտնեն և կսկսեն գործել 2017 թվականի հունվարի 1-ից:

Պետական ծառայության մյուս խմբերի համար համապատասխան օրենսդրական հենքի ստեղծման, այդ ծառայությունների ներդաշնակեցման, միասնական սկզբունքների ապահովման նպատակով ընդունվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը:

Հանրային ծառայության ոլորտում աշխատանքի վարձատրության համակարգի կարգավորման (մասնավորապես նաև պետական ծառայողների աշխատավարձերի բարձրացման) նպատակով 2013 թվականին ՀՀ կառավարությունը ձեռնամուխ եղավ հանրային ծառայությունների ոլորտում ընդգրկված աշխատողների աշխատանքի վարձատրության գործող համակարգի արմատական բարեփոխմանը և նշված ոլորտը կարգավորելու նպատակով մշակվեց և ընդունվեց համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ: Նշված կարգավորումները, այդ թվում նաև «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ են մտել 2014 թվականի հուլիսի 1-ից: Այս օրենսդրական փոփոխություններով սահմանվեց աշխատանքի վարձատրության հաշվարկման համար բազային աշխատավարձի չափը, որը չի կարող ցածր լինել նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսից և գերազանցել 120 տոկոսը:

Միասնական համակարգով մշակվել է նաև պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց վարձատրության չափերը (ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 30-ի N 737-Ն որոշում):

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով կանոնակարգվել են նաև՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահմանյան երկրներ ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերը և վճարման կարգը,

- պետական իշխանության մարմինների պաշտոնատար անձանց սպասարկման համար անհրաժեշտ ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակները, այդ ավտոմեքենաների առանձին չափորոշիչները (մասնավորապես նաև՝ ավտոմեքենայի ձեռք բերման առավելագույն գինը՝ ըստ պաշտոնատար անձանց զբաղեցրած պաշտոնների),

- կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի կանոնները,

- կոմունալ ծախսերի՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռք բերման ծավալները, ինչպես նաև ջրի օգտագործման նորմաները:

ՀՀ պետական իշխանության մարմիններում ծառայողների սոցիալական երաշխիքների ապահովումը սահմանվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Այդ նպատակով ներդրվել է օրենքով սահմանված պարտադիր պետական բժշկական ապահովագրության համակարգը:

6.1.2. Հիմնական խնդիրներ

ՀՀ Նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի ՆՀ-207-Ն հրամանագրով նախաձեռնվեց ՀՀ սահմանադրական բարեփոխումների գործընթացի կազմակերպումը, և ՀՀ Սահմանադության փոփոխություններն ընդունվեցին 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ացկացված հանրաքվեով, որից հետո ՀՀ Սահմանադրության նոր դրույթների ամբողջական կենսագործման, ընդունման ենթակա իրավական ակտերի շրջանակի հստակեցման, դրանց մշակման գործընթացի համակարգման անհրաժեշտությունից ելնելով ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի «Սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովման գործընթացի կազմակերպման մասին» ՆՀ-170-Ա հրամանագրի համաձայն հաստատվել է անվանականորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը: Այդ նպատակով ստեղծվել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների իրավական ապահովմանն աջակցող մասնագիտական խորհրդակցական խորհուրդ և հանձնարարվել է ՀՀ կառավարությանը՝ ապահովել համապատասխան օրենքների նախագծերի մշակումը և դրանք սահմանված կարգով և ժամկետներում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելը:

Այս գործընթացի շրջանակներում վերանայման ենթակա են մի շարք օրենսդրական ակտեր, որոնք կարող են որոշակի ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծավալների վրա, մասնավորապես՝

- Ընտրական օրենսգիրքը (ընդունվել է 28.05.2016թ. ՀՕ-54-Ն),

- Ազգային ժողովի կանոնակարգը (մինչև 2016թ. նոյեմբերի 1-ը),

- Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը (մինչև 2016թ. մայիսի 1-ը),

- Դատական օրենսգիրքը (մինչև 2017թ. մարտի 1-ը),

- Սահմանադրական դատարանի մասին օրենքը (մինչև 2017թ. փետրվարի 1-ը),

- Տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքը (մինչև 2016թ. սեպտեմբերի 1-ը),

- Դատախազության մասին օրենքը (մինչև 2017թ. ապրիլի 1-ը),

- Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը (մինչև 2017թ. հունիսի 1-ը),

- Հաշվեքննիչ պալատի մասին օրենքը (մինչև 2017թ. հոկտեմբերի 1-ը):

Բացի այդ, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների առանցքային խնդիրներից է կառավարման համակարգի բարեփոխումը, որի համաձայն անցում է կատարվում խորհրդարանական կառավարման համակարգի, ինչը նշանակում է պետական իշխանության մարմինների դերի ու լիազորությունների փոփոխություններ:

Պետական կառավարման ոլորտում, վարչարարության արդյունավետության բարձրացմանը զուգահեռ, հսկողական գործառույթներից անցում է կատարվելու դեպի անձանց որակյալ, մրցունակ պետական ծառայություն մատուցելը, ինչը նպատակ ունի հանրությանը ապահովել մասնավոր ծառայություններին համադրելի որակով պետական ծառայությունների մատուցում: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

- պետական քաղաքականությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխան հետևողական կատարելագործել պետական պաշտոնյաների վարձատրության ներդրված միասնական և արդարացի համակարգը,
- օպտիմալացնել պետական համակարգի ծախսերը,
- պետական աշխատանքը գրավիչ դարձնելու նպատակով շարունակել սոցիալական երաշխիքների ներդրման քաղաքականությունը, մասնավորապես, նպաստավոր պայմաններ ստեղծելով պետական ծառայողների համար մատչելի պայմաններով հիփոթեքային վարկերի հասանելիության համար,
- բարելավել մասնագետների ընտրության, վերապատրաստման և որակավորման գործընթացները,
- հստակեցնել պետական իշխանության մարմինների գործառույթները, մասնավորին պատվիրակել գործակալական, սպասարկման կամ մասնագիտական այն ծառայությունները, որոնք կարող են առավել արդյունավետ իրականացվել մասնավորի կողմից,
- վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն ու քաշքշուկ բիզնեսի և քաղաքացիների համար, ուժեղացնել պետության կարգավորիչ դերը՝ կանոնների սահմանման առումով, նվազագույնի հասցնել միջամտությունը տնտեսավարողի գործերին,
- բացառել հանրային կառավարման ոլորտում աշխատողների սեփական բիզնես շահերը,
- պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով մշակել և իրականացնել պետական գույքի կառավարման միասնական քաղաքականություն,

• շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքը՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է բնակչության և գործարարների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով,

• իրականացնել հանրային ռեգիստրների հետագա բարեփոխում՝ որպես անձանց գույքային իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմ, ապահովելով միասնական սպասարկման կենտրոնների կողմից մի շարք հանրային ռեգիստրների՝ «Մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների մատուցումը (ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշման կետ 2.5.1.):

Պետական կառավարման համակարգի բնագավառում աշխատանքի արդյունավետության բարձրացման համար լուծում պահանջող հիմնական խնդիրներն են՝

- համակարգում աշխատելու գրավչության բարձրացումը,

- պետական իշխանության մարմինների և դրանցում աշխատողների տեխնիկական և մասնագիտական կարողությունների զարգացումը,

- միջազգային լավագույն փորձին համապատասխանող կառավարման համակարգի ներդրումը:

ՀՀ կառավարությունը նախաձեռնել է պետական կառավարման ապարատի օպտիմալացման գործընթաց: Այդ կապակցությամբ ՀՀ վարչապետի 2016 թվականի մայիսի 24-ի N 429-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ պետական կառավարման ապարատի օպտիմալացման ուսումնասիրություն, իրավիճակի վերլուծություն իրականացնելու և առաջարկություն ներկայացնելու նպատակով: Նախատեսվում է ներկա իրավիճակի վերլուծության, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա ձեռնարկել համապատասխան քայլեր կառավարման ապարատի հնարավորինս օպտիմալացման ուղղությամբ, մասնավորապես՝ բացառելու տարբեր մարմինների կողմից համանման գործառույթների իրականացումը, միասնականացնելու տարբեր մարմիններում ստեղծված որոշակի ծառայություններ և այլն: Այս ուղղությամբ ձեռնարկվող բոլոր փոփոխությունները կհանգեցնեն նաև ՀՀ պետական բյուջեի ծախսերի օպտիմալացման:

6.2. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

6.2.1. Գերակայությունները

ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական կառավարման հիմնական գերակայություններից են.

1) էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման հետևողական շարունակումը.

- պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման կարգի հետևողական կիրառումը,

- պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների առցանց եղանակի ներդրումը,

- էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը և այդ համակարգով աշխատանքային ծրագրերի կազմման ու աշխատողների կատարողականների գնահատման գործընթացի իրականացման արմատավորումը,

- պետական իշխանության մարմինների աշխատողների կատարողականների հիման վրա պարգևատրման կարգի կիրառումը,

2) Աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կառավարման մարմինների և նրանցում յուրաքանչյուր աշխատատեղի վերազինումը ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով.

3) Պետական կառավարման բնագավառում բարեփոխումների և համակարգի կատարելագործման իրականացումը, որոնք պետք է հանգեցնեն միջազգային լավագույն փորձին համապատասխանող համակարգի ձևավորմանը.

4) Պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով համակարգում աշխատելու գրավչությունը, աշխատանքի որակը և աշխատավարձի մակարդակը մրցունակ դարձնելով մասնավոր հատվածին՝ միջնաժամկետ հատվածում ձեռնպահ մնալով աշխատողների թվի ավելացումից.

5) Քաղաքացիական ծառայության համակարգում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավմանն ու աշխատանքային շարունակական առաջխաղացման ընթացակարգերի կիրառումն ապահովող համապատասխան համակարգի և կարողությունների զարգացումը.

6) Պետական կառույցների աշխատողների մասնագիտական գիտելիքների ու հմտությունների շարունակական կատարելագործումը.

7) Պետական մարմինների հաշվետվողականության համակարգերի զարգացումը (այդ թվում նաև ծրագրային բյուջետավորման մոտեցման արմատավորման շնորհիվ):

6.2.2. Նպատակները

ՀՀ պետական կառավարման համակարգին ուղղվող ծախսերի հիմնական նպատակը պետական ծառայողների կողմից հանրության համար առավել մատչելի, որակյալ և անաչառ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է արմատավորել պետական ծառայողների ֆինանսական և իրավական պաշտպանվածությունն ապահովող հուսալի երաշխիքները, ինչպես նաև պետական ծառայողների տեսական և մասնագիտական գիտելիքների բարձրացումն ապահովելու համար կատարելա-

գործել պարբերաբար անցկացվող պարտադիր վերապատրաստման և կատարողականի գնահատման ընթացակարգերը, նվազեցնել համակարգում կոռուպցիոն ռիսկերը (այդ թվում՝ հաշվետվողականության և պատասխանատվության համակարգերի կատարելագործման շնորհիվ):

6.2.3. Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Պետական կառավարման համակարգում 2017-2019թթ. իրականացվելիք բյուջետային ծախսերի կառուցվածքի և ծավալների վրա հիմնականում ազդեցություն ունեն հետևյալ գործոնները.

1) «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան առանձին պաշտոնատար անձանց պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարները և պետական ծառայողների աշխատավարձերի բնականոն աճերը,

2) ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առանձին մարմինների բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով պահուստային ֆոնդերի նախատեսումը,

3) պետական իշխանության մարմինների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ միջոցների նախատեսումը:

ՄԺԾԾ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ծրագրավորվող ծախսերի մակարդակի վրա ազդեցություն կունենան նաև.

ա) օրենսդրական կարգավորումները և փոփոխությունները,

բ) հանրային ծառայությունների ոլորտում մատուցվող ծառայությունների համար կարգավորող մարմնի կողմից սահմանվող սակագները,

գ) կառավարման ապարատի օպտիմալացման գործընթացի արդյունքում ինչպես կառավարության, այնպես էլ առանձին մարմինների կառուցվածքների հնարավոր փոփոխությունները,

դ) պետական իշխանության մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը և այլ գործոններ:

6.3. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական կառավարման համակարգի բնականոն գործունեության համար անհրաժեշտ պետական ֆինանսավորման ծավալների պահպանումը առաջնահերթ խնդիր է: Նախատեսվող միջոցներով կստեղծվեն նախադրյալներ դեպի որակյալ, մրցունակ պետական ծառայությունների մատուցմանն անցում կատարելու համար: Պետական իշխանության մարմինների 2017-2019թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խոշորացված խմբերի ներկայացված է ստորև բերված գծանկարում:

Գծանկար 6.1 Պետական իշխանության մարմինների 2017-2019թթ. պահպանման համար նախատեսված ծախսերի բաշխումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խոշորացված խմբերի (%)



**Ներառված չեն վարչական օբյեկտների հիմնանորոգման և շենքերի ձեռքբերման, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով այս ոլորտում նախատեսված ծախսերը:*

Ծախսերի մակարդակի փոփոխությունը կզուգակցվի ՀՆԱ-ի նկատմամբ դրանց հարաբերակցության փոփոխությամբ: Այսպես, պետական իշխանության մարմինների պահպանման համար պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2017-2019թթ. ժամանակահատվածի համար կկազմեն համապատասխանաբար՝ ՀՆԱ-ի 1.62%, 1.53% և 1.43%-ը (2016թ-ին՝ 1.7%-ը):

Պետական իշխանության մարմինների պահպանման ծախսերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ծախսերի ամբողջ ծավալում 2017-2019թթ. ժամանակահատվածի համար կկազմի համապատասխանաբար 6.66%, 6.46% և 6.09% (2016թ.՝ 6.7%):

Ընթացիկ ծախսերի փոփոխությունը 2017-2019թթ. ժամանակահատվածի համար նախորդ տարիների համեմատությամբ կկազմի համապատասխանաբար՝ նվազում - 2.2 մլրդ դրամ, աճ - 0.6 մլրդ դրամ և 0.7 մլրդ դրամ:

Պետական իշխանության մարմինների պահպանման 2017 թվականի ընթացիկ ծախսերը 2016 թվականի հաստատվածի նկատմամբ նվազել են շուրջ 2.2 մլրդ դրամով, որը հիմնականում

պայմանավորված է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքին համապատասխան աշխատավարձի ֆոնդի կանոնակարգմաբ, էներգետիկ ծառայությունների գծով նախատեսված ծախսերի (էլեկտրաէներգիայի և գազի սակագների նվազեցման հետ կապված) - 138.4 մլն դրամ և ծառայողական ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսերի - 177.3 մլն դրամ պակասեցմամբ: Միաժամանակ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվարկված աշխատավարձերի բնականոն աճերի և պետական ծառայողների պարգևատրման ֆոնդի հետ կապված աշխատավարձի ֆոնդը աճել է շուրջ 0.8 մլրդ դրամով: Մյուս ծախսերի գծով աճը հիմնականում պայմանավորված է 2017 թվականի հաշվարկներում տարադրամի փոխարժեքի փոփոխման հետ կապված լրացուցիչ միջոցների նախատեսմամբ շուրջ 310.5 մլն դրամ և առանձին հոդվածների գծով ծախսերի կանոնակարգմամբ:

2018 թվականի պահպանման ընթացիկ ծախսերը 2017 թվականի մակարդակը գերազանցում են 0.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի ֆոնդի աճով՝ շուրջ 0.7 մլրդ դրամ (աշխատավարձի բնականոն աճ):

2019 թվականի պահպանման ընթացիկ ծախսերը 2018 թվականի մակարդակը գերազանցում են 0.7 մլրդ դրամով, որից շուրջ 0.7 մլրդ դրամ կազմում է աշխատավարձի բնականոն աճը:

2017 թվականին ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է 121.4 մլն դրամ:

2017 թվականին ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների և Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրությունների անցկացման համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 1692.3 մլն դրամ և 422.4 մլն դրամ:

Պետական իշխանության մարմինների 2017-2019թթ. ժամանակահատվածի համար ծրագրավորված ծախսերի ամբող շրջանակը՝ ներառյալ վարչական շենքերի ձեռքբերման և վարկային ու դրամաշնորհային ծրագրերի գծով ծախսերը, ամփոփված են ստորև բերված աղյուսակում.

(մլն դրամներով)

	2017թ.	2018թ.	2019թ.
Ընդամենը	92,509.4	93,115.3	97,274.8
այդ թվում՝			
Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսեր	89,952.4	90,597.6	91,273.8
Վարչական շենքերի ձեռքբերում	35.6	35.6	35.6
Վարկային և դրամաշնորհային ծրագրեր	2,521.4	2,482.1	5,965.4

Միաժամանակ պետական կառավարման (ապարատի) շրջանակներում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագիր

Ծրագիր նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետության բարձրացման և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա) քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,

բ) հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,

գ) կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,

դ) ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն

ե) ծրագրի կառավարում և իրականացում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թվականին նախատեսվում է 7.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 73.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 14.4 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երրորդ ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել հանրային հատվածի ֆինանսական հաշվետվությունների որակը և հանրության հասանելիությունը ընդլայնված էլեկտրոնային պետական ծառայություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

A. Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր,
B. Էլեկտրոնային կառավարման լուծումներ բարելավված ծառայությունների մատուցման համար,
C. Կարողությունների զարգացում և զարգացման փոքր ինտերվենցիաներ,
D. Ծրագրի կառավարում

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019թթ.-ին նախատեսվում է 2017թ. 291.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 259.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝

31.9 մլն. դրամ, 2018թ.՝ 455.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 396.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 59.2 մլն. դրամ, 2019թ. 879.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 749.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 129.9 մլն. դրամ:

3. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրով կապահովվի հիմնական ՏՀՏ ենթակառուցվածքում կարևոր ներդրումների ֆինանսավորումը՝ հնարավորություն ընձեռելով արդիականացնել իր բիզնես գործընթացները, ընդլայնել էլ. կառավարման կիրարկումը, այդ թվում՝ հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև ներդնել առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարություն՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

ա) ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,

բ) գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,

գ) տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,

դ) ծրագրի կառավարում և իրականացում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թվականին նախատեսվում է 1,570.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,393.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 176.8 մլն. դրամ:

4. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակն է հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները:

Ծրագիրը կազմված է 4 բաղադրիչից՝

ա) երկրում առևտրի խթանման և որակի համակարգի արդյունավետության բարելավում,

բ) ներդրումների և արտահանման խթանում,

գ) որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,

դ) ծրագրի կառավարում և մոնիթորինգի ու գնահատում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թթ-ին նախատեսվում է 2017թ. 389.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 301.8 մլն. դրամ, ՀՀ

համաֆինանսավորում՝ 87.5 մլն. դրամ, 2018թ. 1,844.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,653.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 191.5 մլն. դրամ, 2019թ. 4,903.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,711.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 191.7 մլն. դրամ:

5. ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի ընդհանուր նպատակն է գյուղական աղքատության կրճատումը՝ գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով, գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության մեծացումը՝ ոռոգման համակարգերի ընդգրկումն ընդլայնելու և որակի բարելավման, համակարգը կառավարող մարմինների հզորացման և ֆերմերների արտադրանքի եկամտաբերությունն ավելացնելու հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թթ-ին նախատեսվում է՝ 2017թ. դրամաշնորհային միջոցներ՝ 114.8 մլն. դրամ, 2018թ. դրամաշնորհային միջոցներ՝ 114.8 մլն. դրամ, 2019թ. դրամաշնորհային միջոցներ՝ 114.8 մլն. դրամ:

2017-2019թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրում յուրաքանչյուր տարվա համար 20.0 – ական մլն դրամ է նախատեսվել Եվրոմիության աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխումների գործողությունների ծրագրի իրականացման ապահովման համար:

ԳԼՈՒԽ 7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

7.1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության կայուն զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող կարևոր գործոն:

Կրթության զարգացման գլխավոր նպատակն է՝ ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.

- լիարժեք ծառայում է ազգային շահերին,
- արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին,
- յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

Կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը:

Կրթության ոլորտը ներառում է հանրակրթության և մասնագիտական կրթության, արտաուսումնական դաստիարակության բնագավառները, ինչպես նաև սփյուռքի կրթօջախներին օժանդակությունը:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հիմնական հանրակրթական ծրագրերի շրջանակում կրթական և կրթաօժանդակ ծառայությունների մատուցման, ինչպես նաև հանրակրթության համակարգի զարգացման ծրագրերի իրականացման եղանակով: Այս բնագավառում շահառուներ են հանդիսանում 6-

18 տարեկան երեխաները, իսկ նախադպրոցական կրթության մեջ միկրոծրագրերով ընդգրկվելու դեպքում՝ շահառուների տարիքն սկսվում է 5 տարեկանից:

2015-2016 ուսումնական տարում հանրապետությունում գործում են 1389 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ (այդ թվում՝ 23 հատուկ և 7 մասնագիտացված հանրակրթական հաստատություն), «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ը, որոնցում ընդգրկված են շուրջ 363.2 հազար աշակերտ: Երեխաների նշված թվաքանակում ներառված են հանրապետության 156 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկվածները՝ 4.7 հազար աշակերտներ, փորձնական կարգի իրականացման շրջանակներում Տավուշի մարզի 14 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկված 0.3 հազար երեխաները, ինչպես նաև նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածները՝ 5310 երեխաներ, որոնցից 212-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում, 85-ը՝ Երևանի քաղաքապետարանի, 5013-ը՝ մարզպետարանների ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում: ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբերում (5-6 տարեկաններ) սաների ընդգրկվածության թիվը կազմում է 31345, ինչը հանրապետությունում բնակվող 5-6 տարեկանների ընդհանուր թվի՝ 44313-ի, շուրջ 71 տոկոսն է:

2016 թվականին հանրակրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև դրանց իրականացմանն օժանդակող ծրագրերի գծով պետական բյուջեից կհատկացվի 97,595.2 մլն դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի 1.79 %-ը կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 76.5 %-ը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության ոլորտում ներկա բարեփոխումները հիմնականում ուղղված են մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը, ինչպես նաև եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագրեր իրականացվում են 55 պետական ուսումնական հաստատություններում (25 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն, 24 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 4 կրթահամալիր, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 1 հիմնադրամ), որոնցում սովորում են 7.7 հազար ուսանողներ (այդ թվում՝ 7.4 հազարը՝ անվճար հիմունքներով) և աշխատում են շուրջ 983 դասախոսներ ու արտադրական

ուսուցման վարպետներ: Բոլոր 25 արհեստագործական պետական ուսումնարանները գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, միաժամանակ, նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ծրագիր իրականացվում է «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են 82 պետական ուսումնական հաստատություններում (71 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն, 7 ԲՈՒՀ, 2 կրթահամալիր, 2 հիմնադրամ): Նշված 71 հաստատություններից 67-ը գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, միաժամանակ, միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացվում են ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության «Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» և «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ներում, «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ում, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ում: 82 պետական ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորում է շուրջ 28.3 հազար ուսանող (որոնցից՝ 14.8 հազարը՝ անվճար հիմունքներով) և աշխատում է շուրջ 4000 դասախոս:

2015 թվականին վերանայվել և ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1139-Ն որոշմամբ հաստատվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի, տևողության և որակավորումների, որոնք ներառում են արհեստագործական կրթության 112 մասնագիտություն՝ 299 որակավորմամբ, որոնցից ներկայումս ուսուցանվում է շուրջ 55 մասնագիտություն, միջին մասնագիտական կրթության 247 մասնագիտություն՝ շուրջ 252 որակավորմամբ, որոնցից ներկայումս ուսուցանվում է շուրջ 100 մասնագիտություն:

Պետական բյուջեի միջոցների հաշվին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծառայություններ մատուցվում են միայն պետական ուսումնական հաստատություններում:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի ծրագրերով, առկա և հեռակա ուսուցման ձևերով, վճարովի և անվճար հիմունքներով:

2014/2015 ուսումնական տարում հանրապետության 62 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ և 12 մասնաճյուղեր բարձրագույն կրթության առաջին աստիճանում իրականացրել են մասնագիտական կրթություն բակալավրի ծրագրերով: Այդ հաստատություններ ընդունվել է 17473 (կանայք՝ 51.5%), սովորել՝ 79 623 (կանայք՝ 52.2%), ավարտել՝ 19702 (կանայք՝ 59.7%) մարդ: Բարձրագույն կրթության առաջին աստիճանի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 46.9%, իսկ գենդերային հավասարության ցուցանիշը՝ 1.12:

2016 թվականին բուհերում պետության կողմից նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կսովորեն 13.2 հազար ուսանողներ, որոնցից 7.7 հազարը՝ բակալավրի, 2.9 հազարը՝ մագիստրոսի ծրագրով:

2016 թվականին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև դրանց իրականացմանն օժանդակող ծրագրերի գծով պետական բյուջեից կհատկացվի 23,379.2 մլն դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի 0.43 %-ը կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 18.3 %-ը :

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արտադպրոցական կրթության և դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է: Այն նպատակաուղղված է երեխայի հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Նախորդ տարիներին արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում ռազմավարությունն ուղղված է եղել համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը, որն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրում (ՀՕ-246-Ն): Գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, մատուցվող ծառայությունների մատչելիությունը, ընդգրկվածության ընդլայնումը և որակի շարունակական բարելավումը:

Արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտի ռազմավարությունը միտված է հստակեցնելու ոլորտի զարգացման գերակա հիմնախնդիրները: Առաջնորդվելով «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներով՝ կրթության ոլորտի առաջանցիկ զարգացման ապահովման, արտադպրոցական կրթական

հաստատությունների գործունեության բարելավման, արտադպրոցական կրթական համակարգի զարգացման, պատանիների ռազմահայրենասիրական, ֆիզիկական, գեղագիտական դաստիարակության, ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով իրականացվում են մի շարք մարզական, կրթամշակութային՝ այդ թվում գեղագիտական և ստեղծագործական միջոցառումներ: Մասնավորապես.

- ՀՀ «Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն: Մեկնարկը 2000-2001 ուսումնական տարվանից: Խաղարկությանը մասնակցում են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ից 6-րդ դասարանների աշակերտներ:
- Հայաստանի Անկախության հռչակման օրվան նվիրված ՀՀ դպրոցականների մարզական խաղեր: Մեկնարկը 1992 թվականից: Մարզական խաղերին մասնակցում են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-12-րդ դասարանների աշակերտներ:
- Սենյակային թռչող գերթեթև մոդելների դպրոցականների հանրապետական մրցումներ՝ մասնակիցներ ՀՀ ուսումնական հաստատություններում գործող ավիամոդելային խմբակների դպրոցահասակ սաներ:
- Ազատ թռչող մոդելների գծով դպրոցականների հանրապետական մրցումներ: Մասնակիցներ՝ ՀՀ ուսումնական հաստատություններում գործող ավիամոդելային խմբակների դպրոցահասակ սաներ:
- Մանկապատանեկան մարզադպրոցների միջև խաղային հինգ մարզաձևերից ՀՀ առաջնություն: Մասնակիցներ՝ ՀՀ մարզադպրոցների դպրոցահասակ սաներ:
- ՀՀ դպրոցականների հանրապետական մարզատուրիստական խաղեր: Մասնակիցներ՝ ՀՀ հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում գործող մարզատուրիստական խմբակների սաներ:
- «Դիպուկ հրաձիգ» հրաձգության առաջնություն: Մասնակիցներ՝ ՀՀ հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում գործող հրաձգության խմբակների սաներ:
- ՀՀ մանկապատանեկան փողային նվագախմբերի մրցույթ-փառատոն: Փառատոնին մասնակցում են ՀՀ հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում գործող մանկապատանեկան փողային նվագախմբերի սաները:

ՀՀ պետական բյուջեից ներկայումս ֆինանսավորվող 55 արտաուսումնական դաստիարակության հիմնարկներում՝ մարզադպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական, տեխնիկական, բնապահպանական, գեղագիտական կենտրոններ, ընդգրկված են շուրջ 27.6 հազար դպրոցականներ: Նշված թվաքանակում ներառված են նաև հանրապետության 148 երաժշտական և

արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման մեջ ընդգրկված շուրջ 2.4 հազար աշակերտները:

Արտադպրոցական դաստիարակության, ինչպես նաև դրա իրականացմանն օժանդակող ծրագրերի գծով 2016 թվականին պետական բյուջեից կհատկացվի 5,171.7 մլն դրամ:

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կշարունակի աջակցությունը Սփյուռքում իրականացվող հայապահպան ծրագրերին և համակողմանիորեն կսատարի սփյուռքահայ կրթօջախների գործունեությանը:

Մասնավորապես. կիրականացվեն կրթամշակութային ծրագրեր սփյուռքի երիտասարդության շրջանում մայրենի լեզվի ուսուցման համար, աջակցություն կցուցաբերվի սփյուռքի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների ստեղծմանը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստմանը: Նշված ծրագրերի իրագործման անհրաժեշտությունն ամրագրված է ՀՀ կառավարության ծրագրում:

Հաշվի առնելով այն, որ Սփյուռքի կրթօջախները տկարեցնող կարևորագույն պատճառներից է ուսուցչական կադրերի խնդիրը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում է վերապատրաստման մեկամսյա դասընթացներ Հայաստանում: Վերապատրաստումը կազմակերպվում է Սփյուռքի բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում հայոց լեզու և գրականություն ու հայագիտական այլ առարկաներ դասավանդող ուսուցիչների, լրացուցիչ կրթության ոլորտում աշխատանք իրականացնող մանկավարժների և սփյուռքում կրթական գործի կազմակերպման պատասխանատուների համար:

2016 թվականին Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման նպատակով պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 36.3 մլն դրամ, որի շրջանակներում կվերապատրաստվի 175 ուսուցիչ:

Սփյուռքի հայկական կրթական հաստատությունների համար ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման և տրամադրման նպատակով 2016 թվականին պետական բյուջեից կհատկացվի 100.0 մլն դրամ, որի շրջանակներում օժանդակություն կստանան արտերկրում գործող 300 հայկական դպրոցներ և կենտրոններ:

Կարևոր խնդիրներից մեկը կրթական բոլոր մակարդակներում Հայաստան-Սփյուռք կապերի, ինչպես նաև Սփյուռքում ազգային ինքնության պահպանմանն ու հետագա ամրապնդմանը նպաստող գործոնների բազմակողմանի զարգացումն է: Դրա նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, 2004 թվականից սկսած, երկու տարի պարբերությամբ կազմակերպում է

Համահայկական կրթական խորհրդաժողովներ: 2016 թվականին նշված խորհրդաժողովի անցկացման նպատակով պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 13.0 մլն դրամ:

Համահայկական միջոցառումներից են Համահայկական օլիմպիադաները: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը կազմակերպում է բնագիտական և հայագիտական օլիմպիադաներ՝ յուրաքանչյուրը՝ երկու տարի մեկ անգամ պարբերականությամբ: Համահայկական օլիմպիադաների կազմակերպումն իրականացվում է «Դպրոցականների օլիմպիադաների անցկացում» ծրագրի շրջանակներում:

Կարևորվում է նաև Սփյուռքում բարձրագույն կրթության ոլորտում հայագիտական կառույցների պահպանմանը և հայագիտությանը նպաստելու խնդիրը: Այս կապակցությամբ Պրահայի, Բուխարեստի և Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարաններում հայոց լեզվի դասավանդմանն աջակցության գծով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից կհատկացվի 20.6 մլն դրամ, միաժամանակ, 3.6 մլն դրամ կհատկացվի Ավստրիայի Զալցբուրգի համալսարանում հայագիտության ուղղությամբ հետազոտական ծրագրերի ֆինանսավորման և հայագիտության ամբիոնին աջակցության գծով: Օտարերկրյա համալսարաններում հայերենի դասավանդման համար իրավական հիմք են հանդիսանում Ռումինիայի և Չեխիայի հետ կրթության և մշակույթի ոլորտում համագործակցության մասին միջպետական պայմանագրերը և համապատասխան երկրներում ՀՀ դեսպանությունների և համալսարանների, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի և նշված համալսարանների միջև առկա համաձայնագրերը:

Սփյուռքում հայապահպան գործունեությանը նպաստելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է մասնագիտական կադրերի պատրաստում ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի աստիճանի առկա ուսուցման համակարգում նախատեսվում է 70 սփյուռքահայերի ուսուցում անվճար հիմունքներով: Ընդունելության նշված տեղերը տրամադրվում են մանկավարժական, հայագիտական, արվեստի և սպորտի մասնագիտություններով դիմող սփյուռքահայերին՝ մրցութային կարգով: Միաժամանակ, 13 տեղ էլ նախատեսվում է միջպետական համաձայնագրերի շրջանակներում ընդունելության գծով:

1.2. ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 2015 թվականին կազմել են ՀՆԱ-ի 2.40 %-ը (Տես՝ աղյուսակ 7.1-ը):

Աղյուսակ 7.1. Հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի 2013-2015 թվականների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում

	2013թ.	2014թ.	2015թ.
Ընդամենը կրթություն	**2.40**	**2.54**	**2.40**
այդ թվում՝			
Հանրակրթական ծրագրեր	1.95	2.00	1.85
Մասնագիտական կրթական ծրագրեր	0.35	0.41	0.42

Ծանոթություն. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը (հանրակրթական ուսուցում, նախադպրոցական կրթություն, ներառական կրթություն, հատուկ կրթություն, մասնագիտացված հանրակրթական ուսուցում և այլն), ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերը, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր:

Կրթության ոլորտին ուղղված պետական հատկացումների գերակշիռ մասը՝ շուրջ 77.1 %-ը, 2015 թվականին ուղղվել է հանրակրթության ոլորտի ֆինանսավորմանը, իսկ 17.3 %-ը՝ մասնագիտական կրթական ծրագրերի ֆինանսավորմանը՝ 2014 թվականի համապատասխանաբար 78.9 և 16.2 %-ի դիմաց (2013 թվականին նշված ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար՝ 81.3 և 14.6 %):

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համախառն ընդգրկվածության առումով, ըստ միջնակարգ կրթության աստիճանների, կան որոշ տարբերություններ, մասնավորապես. 2013 թվականին համախառն ընդգրկվածությունը միջնակարգ կրթությունում 2012 թվականի համեմատությամբ նվազել է՝ 89.2%-ից դառնալով 87.9%, հիմնական դպրոցում՝ 94.8%-ից դառնալով 92.6%, տարրական դպրոցում՝ 95.2%-ից դառնալով 94.1%: Ավագ դպրոցում ընդգրկվածության ցուցանիշը, հանրակրթության այլ օղակների համեմատ, շարունակել է մնալ 74%:

Հանրակրթական դպրոցներում 2014-2015 ուսումնական տարում դասավանդել է 39018 ուսուցիչ, այդ թվում 1458-ը՝ ոչ պետական հաստատություններում, նախորդ տարվա 39843-ի դիմաց:

Նախորդ տարիների համեմատությամբ հանրակրթության ոլորտում աշխատող ուսուցիչների թիվը նվազել է, ինչը պայմանավորված է ինչպես սովորողների թվի նվազմամբ (ժողովրդագրական միտումների պատճառով կրթահամակարգի շահառուների թվաքանակն անընդմեջ նվազում է), այնպես էլ համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերով: Հանրակրթական դպրոցներում աշակերտ/ ուսուցչական դրույք հարաբերակցության մակարդակը 2015 թվականին նախատեսվել է 14.1:

Հանրակրթության բնագավառում շարունակվել են բարեփոխումները՝ ուղղված կրթության արդիականացմանը, որակի բարելավմանն ու մատչելիության մեծացմանը, կառավարման համակարգի ապակենտրոնացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես. ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 16-Ն և 2015 թվականի հուլիսի 8-ի N 749-Ն որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշման մեջ: Արդյունքում՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի բաղադրիչներից մեկը՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը, տարանջատվել է 2 մասի: Ընդ որում, մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը 2016 թվականին պահպանվել է 2015 թվականի չափով, այն է՝ 19,000.0 հազար դրամ՝ 2014 թվականի 16,876.0 հազար դրամի դիմաց (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը), որը հետագա տարիներին ենթակա է վերահաշվարկման՝ ելնելով ընթացիկ ցուցանիշներից: Իսկ 101-ից մինչև 300 աշակերտ ու 301 և ավելի աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից, որը 2016 թվականին կազմում է 3,727.5 հազար դրամ՝ 2014 և 2015 թվականների, համապատասխանաբար՝ 3,239.1 և 3,481.5 հազար դրամի դիմաց և, աշակերտների թվից ելնելով, ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից:

Միաժամանակ, ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևում ավելացվել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցման, ինչպես նաև տարրական դասարանների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման գծով բաղադրիչներ (2016 թվականին սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների

դասագրքերի վարձավճարի փոխհատուցվող գումարը միջին մակարդակում սովորողների մասով կազմում է 5342.3 դրամ, ավագ մակարդակում սովորողների մասով՝ 6059.9 դրամ, իսկ պետական բյուջեով նախատեսված գումարի շրջանակներում սննդով կապահովվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության Ջերմուկի կրթահամալիրի և Գորիսի Ա.Բակունցի անվան N1 ավագ դպրոցի, ՀՀ Արարատի, Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարանների ենթակայության հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, միջին տարեկան հաշվարկով, 23.4 հազար երեխաները): «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի շրջանակներում 2015 թվականին սնունդ են ստացել Ջերմուկի կրթահամալիրի և Գորիսի Ա.Բակունցի անվան N1 ավագ դպրոցի տարրական դասարանների՝ ընդամենը 384 աշակերտ, ՀՀ Արարատի, Սյունիքի և Վայոց ձորի մարզպետարանների ենթակայության հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված՝ համապատասխանաբար, 13740; 5900 և 2428 երեխաներ: Միաժամանակ, շարունակվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՄԱԿ ՊՀԾ) կողմից իրականացվող դպրոցական սննդի ծրագիրը, որով պայմանավորված՝ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ սննդամթերքի ցամաքային տեղափոխման համար: Ընդհանուր առմամբ, «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի գծով պետական բյուջեից 2015 թվականին հատկացվել է 565.7 մլն դրամ:

Ավարտվել է 12-ամյա կրթակարգի բովանդակային ապահովման գործընթացը: Հանրակրթության պետական չափորոշիչը 2011 թվականին հաստատելուց հետո մշակվել են հիմնական և ավագ դպրոցի նոր առարկայական չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերը, վերանայվել է ուսումնական պլանը: 2011-2012 ուսումնական տարվանից տարրական դպրոցի 2-րդ և 3-րդ դասարաններում ներդրվել է «Շախմատ» առարկան, իսկ 2013-2014 ուսումնական տարվանից նշված առարկան ներդրվել է նաև 4-րդ դասարանում: Մշակվել ու տպագրվել են մեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար: 2015 թվականին վերահրատարակվել են 3-րդ դասարանի դասագրքերը և աշխատանքային տետրերը, իսկ 2016 թվականին կվերահրատարակվեն 2-4-րդ դասարանների տետրերն ու 4-րդ դասարանի դասագրքերը: 2015 թվականին փորձաքննություն են անցել ուսումնական հաստատությունների հիմնադիր և նորմատիվ փաստաթղթերի նախագծեր, դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնամեթոդական նյութեր, ծրագրեր և այլ ուսումնական գրականություն: Նշված ծառայություններն իրականացվել են ՀՀ պետական բյուջեից այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին, որը 2015 թվականին կազմել է շուրջ 280.0 մլն դրամ:

2016 թվականին ուսուցիչների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի մասով կպահպանվի 2014 թվականի հուլիսի 1-ից նախատեսվող մակարդակը, այն է՝ 152.1 հազար դրամը:

Միաժամանակ, ուսուցիչների ատեստավորման կարգի ներդրումը հնարավորություն է տալիս իրականացնել տարբերակված ֆինանսավորում և ստեղծել խթաններ՝ մասնագիտական հետագա կատարելագործման համար: 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 67.9 մլն դրամ՝ որակավորման տարակարգ ստացած 572 ուսուցիչների հավելավճարներ տրամադրելու նպատակով (2014 թվականին հավելավճար է տրամադրվել 303 ուսուցչի): 2016 թվականին նախատեսվում է, որ ատեստավորման արդյունքում տարակարգ ստացած ուսուցիչների թիվը կկազմի 660, որոնց հավելավճարներ տրամադրելու համար պետական բյուջեից կհատկացվի 120.5 մլն դրամ:

Հանրակրթության օղակում իրականացվող ամենահիմնական բարեփոխումը՝ առանձին գործող եռամյա ավագ դպրոցների համակարգի (10-12-րդ դասարաններ) ձևավորումն է, որպես հիմնական ընդհանուր կրթության շարունակություն: Այս համակարգի ստեղծման նպատակն է՝ բարձրացնել ավագ դպրոցում կրթության որակը և արդյունավետությունը, ինչպես նաև դրանց շրջանավարտներին, իրենց նախասիրություններին համապատասխան, հոսքային ուղղության և նախնական մասնագիտական կրթության ընտրության հնարավորություն տալ: Ավագ դպրոցների ցանցում 2015 թվականի դրությամբ ընդգրկված է 107 դպրոց, որոնք գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ: Ավագ դպրոցները որոշ չափով ապահովվել են անհրաժեշտ դպրոցական գույքով, համակարգչային սարքավորումներով, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաներով, գրականությամբ համալրված ժամանակակից գրադարան-ներով: 2013 թվականին 17 ավագ դպրոցների ռեսուրս կենտրոնները համալրվել են նոր կահույքով ու համակարգչային սարքավորումներով: 2014 թվականին բոլոր ավագ դպրոցներին տրամադրվել են շարժական համակարգչային լաբորատորիաներ և ակտիվ գրատախտակներ: 2015 թվականին բոլոր ավագ դպրոցներին տրամադրվել է նոր գույք: 2015 թվականին ավարտվել է մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների համար Էլեկտրոնային կրթական նյութերի գնման գործընթացը, էլեկտրոնային կրթական նյութերը տեղադրվել են կրթական պորտալում և հասանելի են բոլորին:

Կրթության ազգային ինստիտուտի և հանրապետության բոլոր մարզերում ձևավորված նրա մասնաճյուղերի կողմից իրականացվել են մանկավարժական կադրերի շարունակական վերա-պատրաստումներ, ինչի արդյունքում 2011-2015 թվականներին ավարտվել է հանրակրթական դպրոցների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը: Այդ ընթացքում վերապատրաստվել են ՀՀ հանրակրթական դպրոցների 30224 ուսուցիչներ, ևս 3035-ը՝ ԼՂՀ-ում: Մանկավարժական աշխատողների վերապատրաստումները պետք է լինեն շարունակական, և 2016-2020 թվականներին կապահովվի հերթական ատեստավոր-ման ենթակա ուսուցիչների վերապատրաստումների նոր չափորոշչի և ծրագրի ներդրումը:

2014-2015 թվականներին համապատասխան վերապատրաստում են անցել ներառական դպրոցների ցանկում նոր ընդգրկվող հանրակրթական դպրոցների մանկավարժները:

2015 թվականին վերապատրաստման դասընթացներում ընդգրկվել է 8077 ուսուցիչ՝ 2014 թվականի 9099-ի դիմաց, 19 հանրակրթական առարկաների գծով կազմակերպվել են սեմինարներ, որոնց մասնակցել է 4026 մարդ՝ 2014 թվականի 6014-ի դիմաց: Մշակվել են հանրակրթական ուսումնական տարբեր չափորոշիչներ, մոդուլներ, հրատարակվել են հոդվածներ, ուղեցույցեր, ընդհանուր առմամբ 159 հատ՝ 2014 թվականի 141-ի դիմաց, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 71032՝ 2014 թվականի 44403-ի դիմաց: Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման գծով պետական բյուջեից 2015 թվականին հատկացվել է 505.8 մլն դրամ, 507.9 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2016 թվականին (նշված գումարի շրջանակներում 2016 թվականին կվերապատրաստվի 10000 ուսուցիչ):

Շարունակվել են դպրոցները համակարգչային սարքավորումներով համալրման աշխատանքները: Հայաստանի դպրոցներում առկա են 18606 համակարգիչներ՝ 2010-2011 ուսումնական տարվա 14061-ի դիմաց, մեկ դպրոցին բաժին է ընկնում միջինը 13 համակարգիչ՝ 2010-2011 ուսումնական տարվա 9.7-ի դիմաց: Բարելավվել է մեկ համակարգչին համապատասխանող աշակերտների միջին քանակը բնութագրող ցուցանիշը, որը կազմում է 19.3՝ 2010-2011 ուսումնական տարվա 26.4-ի դիմաց:

Դպրոցների համակարգչային սարքավորումների վերաբերյալ Հայաստանի բոլոր դպրոցներից ստացված տվյալները պարբերաբար թարմացվում և մուտքագրվում են ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի շտեմարանում:

Հայաստանի կրթական ցանցում (ՀԿՑ) ուսումնական հաստատությունները միավորված են մեկ միասնական տեղեկատվական միջավայրում՝ տեղային ցանցում: Ցանցի կենտրոնական հանգույցը, բացի ուսումնական հաստատություններին և ՀԿՑ կառավարող օղակներին (ԿՏԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային 16 աշխատակիցներ) շուրջօրյա ինտերնետային կապ մատակարարելու գործառույթից, ցանցը պաշտպանում է արտաքին միջամտություններից, հնարավորինս սահմանափակում անցանկալի ինտերնետային բովանդակությունը, ապահովում ցանցի համակարգիչների կենտրոնացված հակավիրուսային պաշտպանությունը, mail.schools.am տիրույթում դպրոցներին տրամադրում էլեկտրոնային փոստի հասցեներ, իրականացնում շուրջ 400 դպրոցական վեբ-կայքերի և «Հայկական կրթական միջավայր» պորտալի և դրա ենթակայքերի ու ԿՏԱԿ-ի կայքի տեխնիկական սպասարկումը, հավաքում վիճակագրական տվյալներ կապի օգտագործման մասին, ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրին տրամադրում իրական IP հասցե:

ՀԿՑ-ի տեխնիկական սպասարկման արդյունավետ կազմակերպմանը նպաստում է համակարգի ընթացիկ վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանը: Տեխնիկական սպասարկումը, մասնավորապես, ներառում է ցանցի կենտրոնական հանգույցը, շուրջ 200 մարզային հանգույցները և ուսումնական հաստատությունների տեղային ցանցերի համակարգիչների ծրագրային ապահովումն աշխատունակ վիճակում պահելու գործառույթը:

2013-2014 թվականների ընթացքում փոխարինվել են շարքից դուրս եկած կամ հնացած ցանցային սարքավորումները, որոշ դպրոցներում փոխվել է կապի տեսակը, բարելավվել է որակը (արագությունը):

Հեռավոր բնակավայրերի աշակերտների և ուսուցիչների համար 12-օրյա համակարգչային դասընթացներ է իրականացնում Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը: 2015 թվականին դասընթացները հիմնականում կազմակերպվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում, որոնց մասնակցել է 447 աշակերտ և 338 ուսուցիչ: 2016 թվականին ևս Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի աշխատանքների կազմակերպման հիմնական թիրախը կլինեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունները:

Համակարգչային սարքավորումներով համալրմանը զուգընթաց իրականացվել են աշխատանքներ էլեկտրոնային բովանդակության (ռեսուրսներ, համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր, դասագրքեր, ուսուցողական նյութեր և այլն) ստեղծման ուղղությամբ:

Մասնավորապես. «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում 7-9-րդ դասարանների համար ստեղծվել են «Հայոց լեզու և քերականություն» ուսուցողական համակարգչային խաղը, «Հանրահաշիվ և երկրաչափություն» ուսուցողական համակարգչային ծրագիրը, «Էլեկտրոնային անգլերեն» և «Ռուսաց լեզու» ուսումնական ձեռնարկները:

Մշակվել և ՀԴԻՑ–ի կենտրոնական հանգույցում տեղադրվել է «Համացանցի օգտագործման ուղեցույց» ուսումնաօժանդակ ձեռնարկի կայք–տարբերակը (handbook.ktak.am):

2013 թվականին ԿՏԱԿ-ը մշակել և հրատարակել է «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի» օգտագործման ուղեցույցը, միաժամանակ դպրոցներին է տրամադրել «Դպրոցական կայքերի պատրաստումը» ձեռնարկը, որը հիմնականում նախատեսված է Հայաստանի բոլոր ավագ դպրոցների համար՝ վեբ կայքերի ստեղծման և զարգացման նպատակով:

Շարունակվել է «Հայկական կրթական միջավայր» պորտալի (www.armedu.am) շահագործումը, հարստացվել և թարմացվել է բովանդակային պարունակությունը, կազմակերպվել են առցանց կրթական միջոցառումներ (մրցույթներ, օլիմպիադաներ, խորհրդաժողովներ, քննարկումներ, հարցումներ և այլն):

«Հայկական կրթական միջավայր» ֆորումում (http://forum.armedu.am, ավելի քան 998 թեմա, 13627 գրառում, շուրջ 3885 գրանցված օգտվողներ) կազմակերպվել են կրթական փաստաթղթերի,

դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների նախագծերի հանրային քննարկումներ, կրթության ոլորտում ՏՀՏ կիրառությունների վերաբերյալ առցանց խորհրդաժողովներ, միջոցառումներ (2014 թվականի ընթացքում՝ Թարգմանչաց տոնին նվիրված ստեղծագործական աշխատանքների մրցույթը՝ «Լուսանկար», «Պոստեր», «Դասի կամ միջոցառման պլան» անվանակարգերով), տրամադրվել մասնագիտական խորհրդատվություն և այլն:

Իրականացվել է «Հեռավար ուսուցում» համակարգը (http://learning.armedu.am/), որում ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպվել են 10-րդ դասարանի խորացված հոսքի ութ ուսումնական առարկաների (Հայոց լեզու, Ռուսաց լեզու, Օտար լեզու (Անգլերեն), Հանրահաշիվ, Ֆիզիկա, Քիմիա, Կենսաբանություն, Հայոց պատմություն) հեռավար դասընթացները, ուսուցիչների և աշակերտների խմբերի համար կազմակերպվել են «Գրաֆիկական խմբագրիչ (Adobe Photoshop) ծրագրի ուսուցում», «Դպրոցի տեղային ցանցի շահագործման հմտությունների ուսուցում», «Գրաֆիկական ծրագրի (CorelDRAW) ուսուցում», «Մեդիա գործիքների ուսուցում», «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» «Անգլերեն» դասընթացները:

Համալրվել է «Պաշարների շտեմարան» կայքը (http://lib.armedu.am), որում ըստ դասակարգված բաժինների տեղադրվել է ավելի քան 2320 էլեկտրոնային նյութ, այդ թվում՝ դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, ուսումնամեթոդական նյութեր, առարկայական չափորոշիչներ և ծրագրեր, «Կրթություն» շաբաթաթերթի 2012-2015 թվականների համարները և այլն (կայքը պատրաստվել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի հովանավորությամբ):

Շահագործվել են «Բարձրագույն կրթությունը Հայաստանում» (http://studyinarmenia.org/), «Հանրակրթությունը Հայաստանում-վիճակագրական տեղեկատու» (http://stat.armedu.am/), «Դպրոցների ազգային վարկանիշավորման համակարգ» (http://schoolrate.armedu.am/) և «Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգ» (http://ranking.armedu.am/), «Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգ» (http://students.armedu.am/) և ԿՏԱԿ-ի ինտերնետային կայքերը (www.ktak.am), ինչպես նաև «Հայկական կրթական ալիքը» (http://www.youtube.com/armeduchannel)՝ տեսանյութերի տարածման միջազգային «ՅուԹուբ» համակարգում:

Մշակվել են ԱՊՀ երկրների ուսուցիչների ու կրթության աշխատողների երկրորդ համագումարի (http://sng.armedu.am/), Բոլոնիայի գործընթացի նախարարների երևանյան համաժողովի (http://bologna-yerevan2015.ehea.info) կայքերը:

Իրականացվել են աշխատանքներ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) գործունեության և զարգացման ուղղությամբ, մասնավորապես, ամփոփվել և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն են ներկայացվել հանրակրթության 2013-2014, 2014-2015 ուսում-

նական տարիների վիճակագրական տվյալները, նախապատրաստվել և հրատարակվել են «Հանրակրթությունը Հայաստանում» տարեկան տեղեկագրերը:

2013 թվականին ավարտվել են «Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի» ստեղծման աշխատանքները և համակարգը տեղադրվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ՀԿՑ կենտրոնական հանգույցում:

2013 թվականին ավարտվել են ՀՀ բոլոր մարզերի պետական հանրակրթական դպրոցներում «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի» տեղակայման աշխատանքները, որը սկսել է գործել 2014 թվականից:

2015 թվականին Կրթական հաստատություններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտոնագրված ծրագրային համակարգեր օգտագործելու նպատակով ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակում ձեռք են բերվել Windows և Office ծրագրային համակարգերի 18000 արտոնագրեր, որոնք տրամադրվել են ՀՀ կրթական ուսումնական հաստատություններին:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների գծով պետական բյուջեից 2015 թվականին հատկացվել է 861.4 մլն դրամ, 2016 թվականին էլ նախատեսվում է հատկացնել 860.9 մլն դրամ:

Պետական բյուջեից համապատասխան միջոցներ են նախատեսվել թեստերի և ուղեցույցերի մշակման և տպագրության, ավարտական քննությունների անցկացման գծով: 2014-2015 թվականներին լրամշակվել են ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը և, դրանից բխող, միասնական քննությունների մասնակիցների աշխատակարգերը, արձանագրությունների ձևերը:

Լրամշակվել և տպագրվել են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Հայոց պատմություն», «Անգլերեն», «Ռուսերեն», «Գերմաներեն», «Ֆրանսերեն» առարկաների պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների «Շտեմարանները»: Գնահատման և թեստավորման կենտրոնի համակարգչային բաժնում մշակվել են կանոնակարգային փաստաթղթերին համապատասխան համակարգչային ծրագրեր, ստեղծվել է տվյալների բազա: Ամբողջովին անցում է կատարվել դիմորդների դիմում-հայտերի հավաքագրման նոր՝ առցանց եղանակին:

Դիմորդներին օժանդակելու, քննական գործընթացի առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով հանրապետության մարզերում և Երևանում կազմակերպվել և անցկացվել են փորձնական միասնական քննություններ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» առարկաներից, որոնց մասնակցել է մոտ 4500 շրջանավարտ:

Կազմվել, տպագրվել և ըստ մարզերի բաշխվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունների առարկայական թեստերը:

Կազմակերպվել և անցկացվել են հիմնական և լրացուցիչ փուլի պետական ավարտական և միասնական քննությունները:

Հանրակրթական դպրոցներում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում 11-րդ դասարանում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից: Հանրապետության մի շարք դպրոցների 4-րդ և 8-րդ դասարաններում՝ «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաներից կազմակերպվել է ազգային ստուգատես, որին մասնակցել է շուրջ 3500 սովորող:

Հանրակրթական դպրոցների 4-րդ և 8-րդ դասարաններում կազմակերպվել և անցկացվել է TIMSS միջազգային ստուգատեսի հիմնական փուլը:

2016 թվականին կշարունակվեն քննական առարկաների շտեմարանների լրամշակման, դրանց բովանդակության վերանայման աշխատանքները: Հանրակրթական դպրոցներում արտաքին ընթացիկ գնահատումը հիմնականում կիրականացվի ավագ դպրոցներում «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից: Կգնահատվեն 10-12-րդ դասարանների աշակերտները, դրանով իսկ կապահովվի գնահատումների շարունակականությունն ու յուրաքանչյուր սովորողի վերաբերյալ տեղեկատվության ամբողջականությունը:

2016 թվականին իրականացվող ազգային ստուգատեսը նվիրված կլինի հանրակրթական դպրոցների 8-րդ դասարաններում հայագիտական առարկաներից սովորողների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրմանը:

Գնահատման և թեստավորման ծառայությունների գծով պետական բյուջեից 2015 թվականին հատկացվել է 416.9 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 405.3 մլն դրամ (նշված գումարի շրջանակներում կազմակերպվող միջնակարգ դպրոցի ավարտական քննություններին կմասնակցեն 23258, հիմնական դպրոցի քննություններին՝ 29614 սովորողներ):

Շարունակվել են տարրական դասարանների աշակերտներին անվճար բոլոր դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման, ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման աշխատանքները: Նշված նպատակով պետական բյուջեից 2015 թվականին հատկացվել է 965.5 մլն դրամ, 969.1 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման նպատակով 2015 թվականին պետական բյուջեից հատկացված 35.0 մլն դրամի շրջանակներում անցկացվել են ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 24-րդ խաղերը 9 մարզաձևերից (յուրաքանչյուր մարզաձև անցկացվել է չորս փուլով), որոնց մասնակցել են 1026 երեխաներ: Նշված նպատակով 35.0 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

Անցկացվել են նաև դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկաներից, որոնց մասնակցել են 1404 աշակերտներ՝ 2014 թվականի 1461-ի դիմաց, և համահայկական հայագիտական 7-րդ օլիմպիադան. որին մասնակցել է 83 դպրոցական: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից 48 լավագույնները մասնակցել են նաև միջազգային 8 օլիմպիադաների՝ շահելով 3 ոսկե, 11 արծաթե, 24 բրոնզե մեդալներ: 2015 թվականին Հայաստանում անցկացվել է քիմիայի Մենդելեևյան 49-րդ միջազգային օլիմպիադան, որում Հայաստանը շահել է 1 բրոնզե մեդալ, օլիմպիադային մասնակցել են 95 դպրոցականներ: Դպրոցականների օլիմպիադաների անցկացման գծով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 64.7 մլն դրամ, նույնքան գումար էլ կհատկացվի 2016 թվականին:

«Փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին» ծրագրի շրջանակներում 2015 թվականին գործուղված մանկավարժների թիվը կազմել է 236՝ նախորդ տարվա 253-ի դիմաց: Նշված նպատակով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 40.3 մլն դրամ, ևս 41.0 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

2015 թվականին ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող «Հայ ասպետ» հեռուստամրցաշարին մասնակցել են 96 դպրոցների 1056 աշակերտներ: Հեռուստամրցաշարի անցկացման համար 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 69.1 մլն դրամ, 69.3 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացման գծով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 125.2 մլն դրամ, որի շրջանակներում մշակվել և վերամշակվել են ավելի քան 30 ծրագրեր, ուսուցման կազմակերպման 30-ից ավելի կարգեր, իրականացվել է 10-12 դասարաններում «Արվեստ» առարկայի նոր դասընթացների փորձարկում, մեդիագրադարանում պատրաստվել են 14 նոր ուսումնական փաթեթ, էլեկտրոնային նյութեր, մանկավարժական աշխատողների վերապատրաստման 6 մոդուլներ, կազմակերպվել է 2-րդ հանրապետական բնագիտական-տեխնիկական ստեղծագործության ստուգատեսը՝ 8 անվանակարգով և այլն: Նշված նպատակով ևս 125.5 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

Առաջընթաց է նկատվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդհանուր դպրոցներում ներգրավելու գործում: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերին ընդունվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղվում է յուրաքանչյուր երեխայի կրթության

մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը: Վերոնշված օրենքով սահմանվում են.

- Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները,
- Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը,
- Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն էլ կիրականացվի երեխայի կենսագործունեության բնական միջավայրում (ընտանիք, ուսումնական հաստատություն և երեխայի շփման այլ միջավայրում):

Ընդ որում, մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի: Իսկ եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները կպատվիրակվեն այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ:

2016 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը, որի համաձայն՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման գործընթացը կսկսվի 2016 թվականին, ՀՀ Սյունիքի մարզից: Ընդ որում, յուրաքանչյուր մարզում, հատուկ դպրոցների վերակազմակերպմանը զուգահեռ, կիրականացվեն.

- նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների վերապատրաստում,
- սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոց,
- հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում:

Նախադպրոցական կրթության ոլորտում 2013 թվականին զուտ ընդգրկվածությունը (3-5 տարեկաններ) կազմել է 47.9%՝ 2012 թվականի 49.1%-ի դիմաց (3-6 տարեկանների թվում Կենտ-

րոնական և Արևելյան Եվրոպայի և Անկախ պետությունների համագործակցության երկրների նույն ցուցանիշի միջինը՝ 59% է), իսկ 0-5 տարեկանների համախառն ընդգրկվածության ցուցանիշը 2013 թվականին կազմել է 27.3%՝ 2012 թվականի 27.9%-ի դիմաց: Համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի հիման վրա էլ ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի նոյեմբերի 4-ին հաստատվել է «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» N1427-Ն որոշումը: Նշված իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, որդեգրել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համընդհանուր կրթության ապահովման պետական քաղաքականությունը: Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործել են համայնքային ենթակայությամբ և նշված ոլորտում, մինչ 2011 թվականը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

Ոլորտին աջակցելու և ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձնական ծրագրեր իրականացնելու համար: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման ծրագրի շրջանակներում դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ իրականացվել են միկրոծրագրեր, մասնավորապես. 2015 թվականին ստեղծվել են 33 նախակրթարաններ ՀՀ Կոտայքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի՝ համապատասխանաբար, 13; 12 և 8 համայնքներում, որտեղ իրականացվել են համապատասխան տարածքների բարեկարգման, գույքով համալրման աշխատանքներ, ձեռք են բերվել անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր, խաղալիքներ, պիտույքներ և այլն: Նշված միկրոծրագրերի իրականացման արդյունքում նախադպրոցական կրթության մեջ լրացուցիչ ընդգրկվել է շուրջ 1170 երեխա, միաժամանակ, Կրթության Ազգային ինստիտուտի կողմից վերապատրաստվել են 33 նախակրթարանների 79 դաստիարակներ:

«Քայլ առ քայլ» կազմակերպության կողմից շարունակվել են նախադպրոցական հաստատությունների դաստիարակների (2-ական մանկավարժ յուրաքանչյուր հաստատությունից) վերապատրաստումները:

Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 596.8 մլն դրամ՝ հանրապետության բոլոր մարզերում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների նախադպրոցական կրթության գծով, 657.4 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

«Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության գործունեության ընթացքում ՀՀ-ում գործող դպրոցների միջև ստեղծվեց համագործակցության ցանց, որը հնարավորություն ընձեռեց փոխանակել ՀՀ տարբեր մարզերի դպրոցներում առկա առաջավոր փորձը և ներդնել նորարարությունները: «Դպրոց կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության աջակցության ծրագրի շրջանակներում կազմակերպվել են տարբեր մասնագիտական հավաքներ, հանդիպումներ, սեմինարներ, քննարկումներ՝ ուղղված մանկավարժների մասնագիտական կարիքների վերհանմանը և դասակարգմանը, ուսուցման խնդիրներին, դասավանդման ծրագրերին և մեթոդներին, մշակված նյութերի ներկայացմանը և լուսաբանմանը, գնահատման գործիքներին և այլ հարցերի: 2015 թվականի ընթացքում միության կողմից կազմակերպված մասնագիտական հավաքներին մասնակցել են «Դպրոց կենտրոնների միության» անդամ 110 դպրոց-կենտրոնների տնօրեններ: 2015 թվականին Դպրոց-կենտրոնների միությանը պետական բյուջեից հատկացվել է 20 մլն դրամ, նույնքան գումար էլ նախատեսվում է հատկացնել 2016 թվականին:

2015 թվականից սկսած՝ իրականացվում է Կրթության գերազանցության ազգային ծրագիրը (ԿԳԱԾ), որն ուղղված է հանրակրթության որակի բարձրացմանը, համակարգային բարեփոխումների իրականացմանը: 2015 թվականի ընթացքում ԿԳԱԾ-ի շրջանակներում իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրի լրամշակված տարբերակի լիակատար փորձարկում և լրամշակման ամփոփում, վերապատրաստող խմբի 20 ավագ և 20 վերապատրաստող-մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև ծրագրի թեկնածուների հավաքագրում և ընտրություն: «Արարատյան բակալավրիատը» (ԱԲ), որպես հայկական կրթական լավագույն ավանդների և ժամանակակից կրթության առաջատար փորձի հիման վրա սովորելու միջազգայնորեն ճանաչելի և մրցունակ համակարգ, լրամշակվել և ներդրվել է «Այբ» ավագ դպրոցում: Մշակվել է ԱԲ դպրոցների արդյունավետ տեղակայման խորհրդատվական ծեռնարկը, կատարվել են դպրոցների ֆիզիկական միջավայրի տեղական և միջազգային չափանիշների ուսումնասիրություն, Ստեփանակերտում կազմակերպվել է ԱԲ համակարգի դպրոցի ներդրման նպատակով ճանաչողական այց: 2014 թվականին Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի մասնագետների կողմից մշակվել է ուսուցիչների, իսկ 2015 թվականին՝ նաև ԿԳԱԾ-ի ուսուցիչների վերապատրաստման և

մասնագիտական զարգացման բաժնի մասնագետների վերապատրաստման ծրագիրը: Վերապատրաստումը տևել է 20 շաբաթ: Վերապատրաստման ծրագիրը բաղկացած էր 6 բաղադրիչից, որոնք ուղղված էին դասավանդման արդյունավետության բարձրացմանը խոչընդոտող հիմնական խնդիրների լուծմանը: ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից «Այբ» կրթական հիմնադրամի ներկայացրած «Արարատյան բակալավրիատ» ծրագիրը հաստատվել է որպես այլընտրանքային: Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացման նպատակով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 587.8 մլն դրամ, նույնքան գումար էլ նախատեսվում է հատկացնել 2016 թվականին:

«Ազգային երգ ու պար» առարկայի ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում» ծրագիրը բխում է ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի նիստի N 46 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների ծրագիր»-ից: Առարկայի ներդրման նպատակն է՝ հայրենասիրական ոգու և գիտակցության բարձրացումը, ազգային երգարվեստի և պարարվեստի ավանդույթների պահպանումն ու զարգացման հիմքերի ապահովումը: Ծրագրի շրջանակներում 2015 թվականին վերապատրաստվել են Երևան քաղաքի 25 և մարզերի 50 ուսուցիչներ, այդ նպատակով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 7.8 մլն դրամ, 8.2 մլն դրամ էլ նախատեսվում է հատկացնել 2016 թվականին:

«Ռոբոտաշինությունն սկսվում է դպրոցից» ծրագրի նպատակն է՝ նպաստել աշակերտների մոտ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես ռոբոտատեխնիկայի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, վաղ տարիքից ճարտարագիտական մտածելակերպի զարգացմանը:

2009 թվականից Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը նպատակադրել է Հայաստանի համայնքներում, մասնավորապես բոլոր դպրոցներում, ստեղծել ռոբոտատեխնիկայի խմբակներ: Խմբակներում աշակերտները կսովորեն նախագծել, հավաքել, ծրագրավորել ռոբոտներ, միաժամանակ, խմբակային աշխատանքը թույլ կտա աշակերտներին ուսումնասիրել մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ծրագրավորման և ռոբոտատեխնիկայի հիմունքները, աշակերտների մոտ կզարգանա ճարտարագիտական և համակարգային մտածողությունը, թիմային աշխատաոճն ու համագործակցության ձգտումը:

2016 թվականի մարտի 25-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության համայնքներում և հանրակրթության համակարգում նախնական ինժեներական կրթության ներդրում» ծրագրի շրջանակներում համագործակցելու մասին հուշագիրը, որում ամրագրվեցին համագործակցության սկզբունքները, այն է՝

- խմբակներում մշակված ծրագրային փաթեթները, ինչպես նաև սարքավորումների գծագրերը բաց են հանրության համար, ինչն ապահովում է ծրագրի հասանելիությունը, մատչելիությունը և հիմք է հանդիսանում ծրագրի զարգացման և տարածման համար,

- համակարգչային ծրագրերն ու համակարգերը հնարավորինս տեղայնացվում (հայաֆիկացվում են),

- ծրագրի իրականացման շրջանակներում սարքավորումներ և ծրագրային միջոցներ ձեռք բերելիս նախապատվություն է տրվում տեղական արտադրողին և այլն:

«Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» ծրագրի գծով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 23.4 մլն դրամ:

2015 թվականի ապրիլին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» ծրագիրը, որի շրջանակներում աշակերտներին անհատույց տրամադրվելու են «Արմթաբ» պլանշետներ: Ծրագիրը փորձնական կիրականացվի մեկ մարզում՝ 2015 թվականի սեպտեմբերից մինչև 2019 թվականի օգոստոս ամիսը (փորձնական փուլի ֆինանսավորումն իրականացվելու է Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցներով), այնուհետև ծրագիրն աստիճանաբար կընդլայնվի՝ ընդգրկելով նաև մնացած մարզերը և Երևան քաղաքը:

Հանրակրթական (ներառյալ՝ ավագ դպրոցների) օբյեկտների ջեռուցման համակարգերի և շենքային բարենպաստ պայմանների ապահովման նպատակով զգալի միջոցներ են նախատեսվել այդ հաստատությունների հիմնանորոգման և կապիտալ շինարարության ուղղությամբ, մասնավորապես՝ 2015 թվականին նշված նպատակներով պետական բյուջեից հատկացվել է 3,006.9 մլն դրամ, 1,866.3 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիների ընթացքում շարունակվել են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ ուղղված կրթության որակի բարելավմանն ու մատչելիության բարձրացմանը, ինչպես նաև կառավարման համակարգի արդյունավետության զարգացմանը:

Ոլորտում իրականացվող բարեփոխումներին զգալի աջակցություն է ցուցաբերվել ինչպես պետական բյուջեից, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից:

Բարեփոխումների ուղղությամբ իրականացվել են հետևյալ քայլերը.

2013 թվականին ստորագրվել և ՀՀ Նախագահի դեկտեմբերի 23-ի ՆՀ-331-Ն հրամանագրով հաստատվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒՀ) բարեփոխման շարունակություն և զբաղվածության հայեցակարգի մշակում»

ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի թիվ 3 լրացումը», որի նպատակն է ապահովել ՄԿՈՒՀ համակարգի շարունակական բարեփոխումները, ինչպես նաև բարելավել կառավարման համակարգը:

ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N1330-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը:

2014 թվականին մշակվել և հաստատվել են ՄԿՈՒՀ ոլորտը կարգավորող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման քննության կազմակերպման և հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով դիմած անձին վերապատրաստող կազմակերպության ընտրության (երաշխավորման) և դիմած անձին վերապատրաստման կարգը,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կարգը,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգը,

- նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններ ՀՀ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների ընդունելության ու գործուղման կարգը,

- նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգով ուսումնառության օրինակելի կարգը:

ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ ամբողջությամբ վերանայվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների՝ ըստ ուսուցման հիմքի, ձևի, տևողության և որակավորումների ցանկերը, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N1139-Ն որոշմամբ և ուժի մեջ են մտել 2016 թվականի հունվարի 1-ից:

«ՀՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» և «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտություն-

ների գծով կրեդիտային համակարգի փորձնական ներդրման մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի համաձայն՝ 2014-2015 ուսումնական տարվանից կրեդիտային համակարգը վերոնշյալ մասնագիտությունների գծով փորձնական ներդրվել է Երևանի տարածաշրջանային թիվ 1, Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2, Լոռու տարածաշրջանային և Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջներում:

Վերջին տարիներին մշակվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական 160 չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր: Պետական կրթական 150 չափորոշիչներ արդեն իսկ ներդրվել են ուսումնական հաստատություններում, իսկ 10 -ը կներդրվեն 2016-2017 ուսումնական տարվանից:

2015 թվականին վերանայվել են նախկինում մշակված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության 10 մասնագիտությունների ու որակավորումների պետական կրթական չափորոշիչներ: Վերանայված պետական կրթական 10 չափորոշիչներին համապատասխան կազմվել են ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը:

2014-2015 թվականներին ՄԿՈՒ համակարգի համար մշակվել և հրատարակվել են թվով շուրջ 25 ուսումնական ձեռնարկներ և ուսումնամեթոդական նյութեր:

Մշակվել և Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի նիստով հաստատվել են ՄԿՈւ պլանավորման և կատարողականի կառավարման համակարգի մոդելը և դրա հիման վրա մշակված վերապատրաստման ծրագիրը: 2015 թվականին իրականացվել է վերապատրաստում ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենների տեղակալների, կոլեգիալ կառավարման խորհրդի անդամների, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՄԿՈՒՀԱԿ-ի և Ուսուցման ազգային հիմնադրամի 184 աշխատակիցների համար:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով 2015 թվականին կազմակերպվել է 2 վերապատրաստման և 2 հավաստագրման գործընթաց, որի արդյունքում 70 անձ ստացել է ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

Մասնագիտական կրթության համակարգի աշխատողների և համակարգի աշխատանքներում ներգրավված այլ անձնակազմերի անձանց համար իրականացվել են վերապատրաստումներ, որոնց ընթացքում վերապատրաստվել են շուրջ 2500 անձ:

2013 թվականից մինչ այժմ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ և Եվրոպական կրթական հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է աշխատանքներ 22 ՄԿՈՒ ուսումնական հաստատու-

թյուններում կարիերայի կենտրոնների ներդրման և գործարկման ուղղությամբ: 2015 թվականին մեկնարկել են մշտադիտարկման աշխատանքներ՝ ուղղված ՄԿՈՒՀ ուսումնական հաստատություններում 2014 թվականի ընթացքում կարիերայի պատասխանատուների պատրաստման և կարիերայի ուղղորդման աշխատանքների իրականացման գնահատմանն ու ուսումնասիրմանը: Մշակվել և «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի Միջգերատեսչական մեթոդական խորհրդի կողմից հաստատվել է «Կարիերայի կառավարում» մոդուլային ծրագիրը:

Պատրաստվել են հեռուստահաղորդումներ, տեսանյութեր, տպագրվել են բուկլետներ, պաստառներ, հրատարակվել է «Մասնագիտական կրթություն և ուսուցում» հանդեսի 8 պարբերական: Իրականացվել են ՄԿՈՒՀ քաղաքականությանն ու ռազմավարությանը վերաբերող հետազոտական աշխատանքներ: Dasaran.am կայքէջում ստեղծվել և գործում է նախնական և միջին մասնագիտական կրթության տեղեկատվական հարթակը:

Միջազգային համագործակցության և սոցիալական գործընկերության զարգացման նպատակով 2015 թվականին տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները՝

- 2015 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Սկոլկովո» Մոսկվայի կառավարման դպրոց ոչ պետական ուսումնական հաստատության միջև նախաձեռնվել է կնքել մտադրությունների հուշագիր, որի շրջանակում նշված դպրոցի կողմից կմշակվեն վերապատրաստման գործիքներ՝ ուղղված ՄԿՈՒՀ հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը:
- 2015 թվականի օգոստոսի 11-16-ը Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում կայացել է «Աշխարհի հմտություններ» միջազգային մրցույթը: «Աշխարհի Հմտություններ» 43-րդ միջազգային մրցույթին Հայաստանի թիմը ներկայացել է հետևյալ մասնագիտություններով՝ «Մեխատրոնիկա», «SS ցանցային համակարգերի կառավարում» և «Ոսկերչություն»: Հայաստանի թիմի բոլոր անդամներն ստացել են վկայականներ՝ մրցույթին ակտիվ մասնակցության և արժեքավոր ներդրման համար:
- Գերմանիայի Ֆելդաֆինգ քաղաքում 2015 թվականի մայիսի 18-22-ը կայացած «Գարնանային ակադեմիա» ծրագրի շրջանակներում քննարկվել և հավանության է արժանացել «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» վերապատրաստման մոդուլի մշակման և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում պիլոտավորման ծրագիրը: Մշակվել են ծրագիրը, ծրագրի իրականացման ժամանակացույցը, ՄԿՈՒՀ կազմակերպությունների ցանկը, որտեղ նախատեսվում է ներդնել Ծրագիրը (ընդհանուր թվով ծրագրին պետք է մասնակցի 4 ՄԿՈՒՀ հաստատություն), ինչպես նաև ծրագրի թիրախային ոլորտները՝ զբոսաշրջություն, գինեգործություն և ճշգրիտ ճարտարագիտություն: Կազմակերպվել են վերապատրաստումներ ՄԿՈՒՀ համակարգի կառավարման ոլորտի ներկայացուցիչների, ինչպես նաև ընտրված ուսումնական հաստատությունների դասախոսների համար, որոնք ստացել են համապատասխան

հավաստագիր «Ձեռնարկատիրական և ձեռներեցության հմտությունների զարգացում» մոդուլը դասավանդելու համար:

- Գործընկերային կապեր հաստատելու, կրթական, մշակութային հարաբերությունների զարգացմանը նպաստելու նպատակով 12 տարածաշրջանային գերազանցության կենտրոնների առաջատարությամբ մարզերում գործող պետական արհեստագործական ուսումնարանների և քոլեջների միջև ստեղծվել են մարզային կրթական ցանցեր: 2015 թվականին կնքվել են երկկողմ և եռակողմ համագործակցության համաձայնագրեր 35 արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև: Համաձայնագրերում ներկայացված մարզային ցանցերի կառավարմանն ու գործունեությանն առնչվող միջոցառումները ներառվել են տարածաշրջանային ՄԿՈՒ կենտրոնների բիզնես պլաններում:
- ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի (www.ipsc.am) կողմից 2015 թվականի նոյեմբեր ամսին իրականացվել է «Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների կարիքների գնահատման հետազոտություն», որի նպատակն է նպաստել միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացմանը Հայաստանում:
- 2015 թվականին իրականացվել է «Մասնագիտական կրթություն և ուսուցում» պորտալի մեջ տվյալների մուտքագրման գործընթացը: (www.vetarmenia.am)՝ որպես կրթական ցանցերը սպասարկող էլեկտրոնային գործիք:

2015 թվականին թվով 5 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և այդ 5 ուսումնական հաստատություններին սարքավորումներ և գույք տրամադրելու նպատակով մշակվել են նյութատեխնիկական բազայի 17 չափաբաժնի համար տեխնիկական բնութագրեր: 10 չափաբաժնով գնման մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որից 8 չափաբաժինների մասով սարքավորումներն ամբողջությամբ տեղադրվել են:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 2,577.5 մլն դրամ՝ 7.0 հազար սովորողի ուսուցման գծով, միջին մասնագիտական կրթության գծով՝ 6,343.3 մլն դրամ՝ 13.4 հազար սովորողի ուսուցման գծով: 2015 թվականին, ընդհանուր առմամբ, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրերի գծով պետական բյուջեից հատկացվել է 9,521.3 մլն դրամ: 2016 թվականին կհատկացվի 10,715.1 մլն դրամ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

մասնագիտական կրթության մեջ ընդգրկվող, համապատասխանաբար, 6.7 և 14.7 հազար սովորողների ուսուցման գծով:

2015-2016 ուսումնական տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունվածների թիվը կազմում է 2958, միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում՝ 4628 սովորող: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության թվի նվազումը պայմանավորված է 2015 թվականին 9-րդ դասարանն ավարտողների թվաքանակի նվազմամբ:

Հայաստանի Հանրապետությունում ***բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության*** զարգացումները պայմանավորված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի սկզբունքներով: Վերջին երկու տարիների ընթացքում կատարված աշխատանքներն ուղղված են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ՀՀ բարձրագույն կրթության ինտեգրմանը նպաստելուն, մասնավորապես՝ բուհերի ինքնավարության մեծացմանը և հաշվետվողականության խթանմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, հավատարմագրման և լիցենզավորման գործընթացների հստակեցմանը:

Մշակվել և հաստատվել են նորմատիվային կարգեր, որոնք ենթադրում են սկզբունքային նորարարություններ բուհական կրթական համակարգում, միտված են կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և բարենպաստ օրենսդրական հիմքեր են ստեղծել բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի ընդհանուր բարեփոխումների, ինչպես նաև՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ինտեգրմանն ուղղորդվող կառուցվածքային բարեփոխումների համար:

«Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնց արդյունքում օրենքով սահմանվել է «նպատակային ուսուցում» հասկացությունը (այն մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցումն է), ինչպես նաև հստակեցվել են նպատակային ընդունելության հետ կապված հարցերը:

2015 թվականին Եվրոպայի Խորհրդի և ԵՄ հանձնաժողովի աջակցությամբ մեկնարկել է Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագիրը: Ծրագիրն օժանդակում է Հայաստանի Հանրապետության Հակա-

կոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացմանը: Ծրագրի խնդիրն է աջակցել գործող մասնագետների համար նախատեսվող կանխարգելիչ և բարեվարքության մեխանիզմների մշակմանը և ամրապնդել արդյունավետ կառավարումը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է.

- Բարձրագույն կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի և բարեվարքության ամրապնդման ռազմավարությունների վերաբերյալ իրազեկության բարձրացում գլխավոր շահառուների շրջանում:
- Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի համար ինստիտուցիոնալ հիմքերի մշակում և արդյունավետ կիրառում:

Վերոնշյալ ծրագրի շրջանակում մշակվել և ներկայացվել է «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության վրա ազդող գործոնների ռիսկի վերլուծությունը»:

ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի N1005-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» կարգը,որի համաձայն, սկսած 2014 թվականից, յուրաքանչյուր տարի 7 ոլորտներում (բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ), բժշկություն, հումանիտար գիտություններ, հասարակագիտություն, ճարտարագիտություն (այդ թվում՝ ճարտարապետական/գյուղատնտեսական), մշակույթ-սպորտ, հայագիտություն) մրցույթը հաղթահարած և 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված ուսանողների համար սահմանվել է անվանական կրթաթոշակ: Նշված 7 ոլորտներով՝ ըստ կրթական ծրագրերի (բակալավր, մագիստրոս) հաղթող է ճանաչվել, համապատասխանաբար, 38 և 39 ուսանող:

2015 թվականի նոյեմբերին սկսվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման գործընթացի իրականացումը, որը կազմակերպվել է 2013 թվականի ազգային վարկանիշավորման գործընթացի փորձնական ներդրման արդյունքների հիման վրա: Հիմք ընդունելով վարկանիշավորման համակարգի միջազգային փորձը՝ 2015 թվականին փոփոխություններ են կատարվել վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունում, արդյունքում՝ մշակվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների միասնական ցանկով վարկանիշավորման ազգային համակարգ:

ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխման ուղղությամբ կարևորվել է նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացումը: ՆՄՀ-ի նպատակն է մրցակցային հիմունքներով բուհերին դրամաշնորհներ հատկացնելու միջոցով աջակցել վերջիններիս՝ նորարարական և զարգացման ծրագրերի իրականացման, կառավարման կարողությունների զարգացման, բուհերում գիտական հետազոտությունների խթանման և այլ ուղղու-

թյուններով: 2013 թվականի սեպտեմբերին 10 բուհերի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր, որոնք ուղղված են բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը և բուհերի կարողությունների հզորացմանը: 2014 թվականին շարունակվել են դրամաշնորհային ծրագրերը, որոնք ամփոփվել են 2015 թվականի առաջին կիսամյակում: 2015 թվականին մեկնարկել է «Կրթության բարելավում» նոր դրամաշնորհային մրցակցային ծրագիրը, որի «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» ենթաբաղադրիչի շրջանակներում 2015 թվականին «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի կողմից իրականացվել է ՆՄՀ գործառնական ընթացակարգերի վերանայումը: Մշակվել են ՆՄՀ փորձնական փուլի արդյունքներով վերանայված ՆՄՀ ղեկավար ձեռնարկը և ՆՄՀ դրամաշնորհային ծրագրերի համար հայտ ներկայացնող բուհերի ֆինանսական կարողությունների ստուգման աշխատանքների նկարագիրը, կազմավորվել է ՆՄՀ համակարգող խորհուրդը:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1323-Ն որոշման համաձայն՝ 2013 թվականի սեպտեմբերի 1-ից պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում է տրամադրում յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50-ից 100 տոկոսի չափով: 2014-2015 ուսումնական տարում պետության կողմից փոխհատուցվել է բակալավրի կրթական աստիճանում (2-րդից 4-րդ կուրս) ընդգրկված 1030 ուսանողի ուսման վարձը՝ 223.8 մլն դրամի չափով, 2015-2016 ուսումնական տարում՝ նույն կրթական աստիճանում ընդգրկված 1379 ուսանողի ուսման վարձը՝ 306.9 մլն դրամի չափով: 2014-2015 ուսումնական տարում մագիստրոսի կրթական աստիճանում փոխհատուցվել է 40, իսկ 2015-2016 ուսումնական տարում՝ 52 ուսանողների ուսման վարձը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1094-Ն որոշմամբ ընդլայնվեց սոցիալապես անապահով ուսանողների շրջանակը՝ ընդգրկելով բարձրագույն ուսումնական հաստատություններ սահմանված կարգով 1-ին կուրս ընդունված և ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝ ընդունելության մրցութային քննությունների արդյունքում համապատասխան միավորի շեմը հաղթահարելու դեպքում: Արդյունքում՝ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանում սովորող 719 առաջին կուրսեցիների պետության կողմից հատկացվել է ուսման վճարի 50-ից 100 տոկոսի չափով փոխհատուցում՝ 496.7 մլն դրամի շրջանակներում:

2014 թվականին «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որի արդյունքում ընդլայնվել են նաև բուհերի միջոցների հաշվին ֆինանսական աջակցություն ստացող սոցիալական խոցելի խմբերը, միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար ներդրվել են աջակցության հավասար պայմաններ: Մասնավորապես. բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 29-ի N564-Ն որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի մեջ՝ դիմորդներին հնարավորություն տալով բուհերի ընդունելության մրցույթին մասնակցել նաև միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականներով:

2014 թվականին ներդրվել է մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը, որն ուղղված է ուսումնական հաստատությունների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: Նկատի ունենալով 2015 թվականի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները՝ բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման նոր ծրագրերի ներդրում, ուսանողների սոցիալական աջակցության նոր մեխանիզմների գործարկում, բուհերի կազմակերպաիրավական ձևերի փոփոխություններ, մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում վերակազմավորման են ենթարկվել հատկապես այս տեղեկությունները պարունակող բաժինները՝ դրանք համարժեք դարձնելով ընթացիկ իրավիճակին:

Աշխատանքներ են իրականացվել բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնման ուղղությամբ, որի արդյունքում 4 բարձրագույն ուսումնական հաստատություններ փոխել են իրենց կազմակերպա-իրավական ձևը, դրանք են՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը, «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը:

ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N163-Ն որոշմամբ սահմանվել է ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների՝ ուսման վարձի առավելագույն չափը՝ ուսման վարձի այն շեմը, որը բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրակա-

նացնող ուսումնական հաստատությունը կարող է սահմանել տվյալ մասնագիտության գծով կրթական ծառայություններ մատուցելու համար:

2014-2015 թվականներին շարունակվել են աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովի ու Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումի անցկացման ուղղությամբ:

Եվրոպական Միության աջակցությամբ 2014 թվականին կազմակերպվել է «Հայաստան-ԵՄ զբաղվածության և սոցիալական հարցերի, առողջապահության, վերապատրաստման, կրթության և երիտասարդության, մշակույթի, տեղեկատվական հասարակության և աուդիովիզուալ քաղաքականության, գիտության և տեխնոլոգիաների հարցերով ենթակոմիտեի» երրորդ նիստ:

2015 թվականին «Արմնյուզ» հեռուստաընկերության կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ թողարկվել է կրթության ու գիտության ոլորտում տիրող իրավիճակի և ընթացող բարեփոխումների թեմայով մասնագիտական հաղորդաշար՝ «Ալմա Մատեր»: Իրականացվել են «Բոլոնիայի գործընթացը ՀՀ բուհերում՝ վերջինիս վերաբերյալ փոփոխությունները, ինչպես նաև ՀՀ ուսանողների համալսարանական կյանքի և աշխարհայացքի պատկերի վերհանումը» և «ՀՀ ուսանողների կենսաոճի, սոցիալ-տնտեսական կարիքների և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն» թեմաներով ուսումնասիրություններ: Իրականացվել են նաև անգլալեզու studyinarmenia.org և amhe.am բարձրագույն կրթության վերաբերյալ պորտալի շահագործման աշխատանքները: Ստեղծվել է աշխատանքային փորձագիտական խումբ, որը ներկայացրել է բարձրագույն կրթության՝ Բոլոնիայի գործընթացին համահունչ, օրենսդրական փոփոխությունների փաթեթ: Ապահովվել է մասնակցությունը Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ առկա ֆորումներին, սեմինարներին, կոնֆերանսներին: 2015 թվականի մայիսի 14-15-ին Երևանում կայացել է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի 9-րդ նախարարական գագաթաժողովը և Բոլոնիայի քաղաքականության 4-րդ ֆորումը: Հայաստան են ժամանել 47 երկրների և 28 միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ, ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է 498 մարդ:

Գագաթաժողովի ընթացքում ընդունվել է Երևանյան կոմյունիկեն, որի հիմնական առանձնահատկություններն են բուհերի ուսանողների աշխատանքային իրավունքի խնդիրները և ուսանողական շարժունության ներառականությունը: Կոմյունիկեում նշվում է նաև հակամարտող տարածքներում ապրող ուսանողների և աշխատակազմի, անապահով ուսանողների և դասախոսների շարժունությունն ապահովելու մասին:

Հաստատվել է «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը», որն ուղղված է աշխատաշուկայի պահանջներին և միջազգային ստան-

դարտներին համապատասխանեցմանը, ինչպես նաև ապահովում է ազգային ցուցանիշների համադրելիությունը «EUROSTAT»-ի և «UNESCO»-ի չափանիշներին:

2014 թվականին մեկնարկել է «Հայաստանի բարձրագույն կրթության հզորացում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» Թվինինգ ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԵՄ կողմից: Միջազգային և ազգային փորձագետների համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում վերանայվել են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները և ներկայացվել է օրենսդրական բացերի վերլուծության վերաբերյալ փորձագիտական զեկույցը: Ծրագիրն իրականացվում է Ֆինլանդիայի կրթության գնահատման կենտրոնի (FINEEC), Գերմանիայի կրթության ու հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF) և ՀՀ կրթության և գիտության նախարարության համագործակցությամբ: Ծրագրում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամը (ՄԿՈՒԱԱԿ), ծրագրի շրջանակներում ընդլայնվել են վերջիններիս աշխատակիցների կարողությունները՝ Բոլոնիայի գործընթացի իրականացումն ու շարունակականությունն ապահովելու նպատակով, կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ ՄԿՈՒԱԱԿ-ի՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցության և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում գրանցվելու համար

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1397-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացում են կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշման մեջ, որոնցով հստակեցվել են հավատարմագրումների ժամկետները և նոր կարգով հավատարմագրման դիմելու վերջնաժամկետը (համապատասխան ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար ուսումնական հաստատությունները պետք է դիմեն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը):

ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի N 206-Ն որոշմամբ էլ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 27-ի N 1486-Ն որոշման մեջ, որոնցով հստակեցվել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈՒԱԱԿ) հոգաբարձուների խորհրդի անդամների թվաքանակը և կազմը, խորհրդի նախագահի ընտրության կարգը: Նշված փոփոխությունները նպաստել են հիմնադրամի գործունեության անկախությանը և այն միջազգային պահանջներին համահունչ դարձնելուն: 2015 թվականին ՈՒԱԱԿ-ի կողմից 14 բուհերի վերաբերյալ կայացվել է հավատարմագրում շնորհելու որոշում, մասնավորապես, հավատարմագրման համար դիմել են 16 բուհեր, որոնցից մեկին շնորհվել է հավատարմագրում՝ 6 տարի ժամկետով, 10 բուհերին՝ 4 տարի ժամկետով, 3 բուհի՝ պայմանական հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով, իսկ 2 բուհերի հավատար-

մագրումը մերժվել է: Հավատարմագրման համար դիմել են ևս 5 բուհեր, որոնց վերաբերյալ որոշումները կկայացվեն 2016 թվականին:

Իրականացված հավատարմագրման արդյունքները միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելու, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի նկատմամբ միջազգային կառույցների վստահությունը բարձրացնելու նպատակով ՈՒԱԱԿ-ը 2015 թվականին դիմել է Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցության և Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում գրանցվելու համար: Նախատեսվում է, որ 2016 թվականին ՈՒԱԱԿ-ը նշված ասոցիացիայի կողմից անցնելու է արտաքին գնահատում: Միջազգային ծրագրերի (TEMPUS) շրջանակներում ՈՒԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք վերապատրաստումների՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈՒԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը:

2015 թվականին գործարկվել է ՈՒԱԱԿ-ի ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը, մշակման փուլում է նոր կայքէջը, որը կավարտվի 2016 թվականին: Վերջինս միտված է՝ ապահովելու ՈՒԱԱԿ-ի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, լուսաբանելու իրականացվող հավատարմագրման գործընթացները: Գործարկվում է Հավատարմագրման պետական գրանցամատյանի վարման կարգը, որը հնարավորություն է տալիս խորհրդատվական տեղեկատվություն տրամադրել հանրությանը, տեղական, միջազգային և այլ շահագրգիռ կազմակերպություններին՝ հավատարմագրված ուսումնական հաստատությունների մասին:

2015 թվականին համակարգում գործել են 22 բուհեր՝ նախորդ տարվա 20-ի դիմաց (ցանկում ավելացել են Երևանում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղը և «Հայաստանում ֆրանսիական բարձրագույն ինժեներական ինստիտուտ» հիմնադրամը):

2015 թվականին պետական բյուջեից բարձրագույն կրթության և վերջինիս օժանդակության ծրագրերի գծով հատկացվել է 11,440.1 մլն դրամ: 2016 թվականին ՀՀ պետական բյուջեից կհատկացվի 12,664.1 մլն դրամ, որի շրջանակներում բուհերում պետության կողմից նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կսովորեն 13.2 հազար ուսանողներ:

ԱՐՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արտաուսումնական դաստիարակության ոլորտում իրականացված ծրագրերը միտված են եղել երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանը և խթանմանը, մատաղ սերնդի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ընտրած մարզաձևերում մարզական հերթափոխի պատրաստմանը, պարապողների մարզական ունակությունների կատարե-

լագործմանը, ՀՀ հավաքական թիմերի համալրմանը, միջազգային ասպարեզում վերջիններիս արդունավետ մրցունակության ապահովմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններին մեթոդական օգնության տրամադրմանը, ուսումնական նոր դասագրքերի և ձեռնարկների մշակմանը:

Ֆիզիկական դաստիարակության իրականացման համար մանուկների ու պատանիների շրջանում կազմակերպվել են ուսումնամարզական միջոցառումներ, ապահովվել է նրանց մասնակցությունը տեղական, հանրապետական և միջազգային մրցաշարերին:

2014 թվականին կազմակերպվել են հրաձգության, գնդակային հրաձգության, նետաձգության հանրապետական մրցումներ: 8 մարզիկներ մասնակցել են հրաձգության, գնդակային հրաձգության և նետաձգության միջազգային մրցումների՝ գրավելով պատվավոր տեղեր: Մարզադպրոցի մեկ մարզիկ, ատրճանակից գրավելով առաջին տեղը, ստացել է Չինաստանում կայանալիք պատանիների օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք: Իսպանիայում պատանիների աշխարհի առաջնության մրցումներին մարզիկները պարգևատրվել են 4 բրոնզե մեդալով: Բաթումի քաղաքում կայացած նետաձգության միջազգային մրցումներին մարզիկները զբաղեցրել են 2-րդ և 3-րդ պատվավոր տեղերը, իսկ Չինաստանի Նանջինգ քաղաքում կայացած պատանիների օլիմպիական խաղերին՝ 7-րդ տեղը:

2014 թվականին ՀՀ դպրոցականները առաջին անգամ մասնակցել են դպրոցականների աշխարհի առաջնություններին. Ֆրանիսայում՝ սեղանի թենիս, Պորտուգալիայում՝ վոլեյբոլ, Իտալիայում՝ ֆուտզալ և Թուրքիայում՝ հանդբոլ մարզաձևերից: 2014 թվականի ապրիլի 20-27-ը Ռուսաստանի Կազան քաղաքում անցկացվել է ԱՊՀ երկրների դպրոցականների 2-րդ սպորտային փառատոնը: Ստուգատեսին հաջող հանդես է եկել սեղանի թենիսի հավաքականը: Թիմային մրցապայքարում դպրոցական թիմը գրավել է 2-րդ պատվավոր տեղը, աղջիկների անհատական խաղերում Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի ներկայացուցիչը գրավել է 2-րդ տեղը, իսկ տղաների անհատական առաջնությունում՝ 3-րդ տեղը: Հայաստանի հավաքականը բադմինտոն մարզաձևում, թիմային հաշվարկում, գրավել է 3-րդ պատվավոր տեղը: Մրցաշարին շախմատիստները ևս թիմային հաշվարկում զբաղեցրել են 3-րդ պատվավոր տեղը:

2014 թվականին սեպտեմբերի 20-27-ը Թուրքմենիայի Թուրքմենբաշ քաղաքում անցկացվել է դպրոցականների միջազգային մրցաշարը: Հայաստանի Հանրապետության դպրոցականների սեղանի թենիսի հավաքական թիմը գրավել է 3-րդ մրցանակային տեղը, տղաների անհատական պայքարում Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիայի ներկայացուցիչը գրավել է 2-րդ տեղը, իսկ աղջիկների պայքարում՝ 3-րդ տեղը:

2014 թվականին Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոնի ներկայացուցիչները, մասնակցելով Բուլղարիայի Պազարջիկ քաղաքում կայացած նավամոդելային սպորտի

Եվրոպայի առաջնությանը, շահել են 2 ոսկե, 3 արծաթե, 1 բրոնզե մեդալներ և 2 գավաթ, սահմանելով Աշխարհի 3 ռեկորդ և, ոչ պաշտոնական թիմային հաշվարկով, գրավել առաջին տեղը: Առաջնության ամենաբարձր արդյունքը ցուցաբերել է կենտրոնի ներկայացուցիչը, միաժամանակ 2 ամենահեղինակավոր Բ-1, Ա-3 դասերում նվաճել է Եվրոպայի չեմպիոնի կոչումը, սահմանելով Աշխարհի ռեկորդ (279,070 կմ/ժամ), արժանանալով լավագույն արդյունք ցուցաբերած անվանական գավաթներին: Կենտրոնի մեկ ներկայացուցիչ նույնպես սահմանել է Աշխարհի ռեկորդ և շահել բրոնզե մեդալ: Երիտասարդների (մինչ 18 տարեկան) առաջնությունում կենտրոնի մեկ այլ սան շահել է 3 արծաթե մեդալ՝ սահմանելով երիտասարդների Աշխարհի ռեկորդ:

2015 թվականին Հայաստանի ընտրանին մասնակցել է մի շարք սպորտային միջոցառումների, գրավելով մրցանակային տեղեր, մասնավորապես. Ռուսաստանի Դաշնության Ուլյանովսկ քաղաքում կայացած ԱՊՀ երկրների դպրոցականների միջազգային 3-րդ փառատոնում բասկետբոլ մարզաձևից աղջիկների պայքարում՝ 4-րդ տեղը, Անդորայում կայացած Եվրոպայի մինչև 16 տարեկան աղջիկների բասկետբոլի առաջնությունում՝ 2-րդ պատվավոր տեղը, Բաթումի քաղաքում կայացած աղջիկների լողափնյա վոլեյբոլի միջազգային մրցաշարում՝ 2-րդ պատվավոր տեղը, Բուլղարիայի Պազարջիկ քաղաքում կայացած նավամոդելային սպորտի Եվրոպայի առաջնությունում՝ 1 ոսկե, 1 արծաթե մեդալներ, ինչպես նաև 1 գավաթ և ոչ պաշտոնական թիմային հաշվարկով՝ չորրորդ տեղը:

ՀՀ դպրոցականների շրջանում ֆիզիկական դաստիարակության ծրագրի խնդիրների իրականացման, թիմային խաղերի միջոցով սովորողների կամային հատկությունների զարգացման, Հայրենիքի պաշտպանությանը ֆիզիկապես առողջ սերունդ դաստիարակելու նպատակով՝ 1992 թվականից մեկնարկել են Հայաստանի Անկախության հռչակման օրվան նվիրված ՀՀ դպրոցականների մարզական խաղերը, որոնց մասնակցում են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 5-12-րդ դասարանների աշակերտները: Դպրոցականների մարզական խաղերում ընդգրկվել են 6 մարզաձևեր՝ բասկետբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, ֆուտբոլ, սեղանի թենիս և աթլետիկա, 2013 թվականից մարզական խաղերում ավելացել են ևս երկու նոր մարզաձև՝ ֆուտ-զալ և բանդմինթոն, իսկ 2014 թվականից՝ լողափնյա վոլեյբոլ:

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի արդյունավետ դասավանդմանը և մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակությանը նպաստել է նաև ՀՀ «Ազգային Ժողովի» գավաթի խաղարկությունը: Մրցումներին մասնակցում են ՀՀ և ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-6-րդ դասարանների աշակերտներ: Յուրաքանչյուր տարի առաջին տեղը գրաված թիմը պարգևատրվում է ԱԺ գավաթով և մարզական գույքով:

2015 թվականին ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի տարածքում կազմակերպվել և անց են կացվել տուրիստական հանրապետական խաղեր-մրցումներ, որոնց մասնակցել են թվով 220 դպրոցականներ:

2015 թվականին ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրապետական ուսանողական մարզական խաղերում ընդգրկվել են 10 մարզաձևեր, խաղերի հանրապետական փուլին մասնակցել են շուրջ 2000 ուսանողներ 15 բարձրագույն ուսումնական հաստատություններից:

2015 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի, իրավունք ստացավ Հայաստանի Հանրապետությունում անցկացնել Շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությունը: Առաջնությանը մասնակցել են եվրոպական 9 երկրների 18 համալսարանների 25 թիմեր, ընդհանուր թվով՝ 82 պատվիրակ: Տղաների թիմային պայքարում Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի թիմը գրավել է երկրորդ տեղը:

2015 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 46 արձանագրային որոշմամբ հաստատված «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների» պետական ծրագրից բխող միջոցառումները:

Մշակվել և իրականացվել են ՀՀ կառավարության հոբելյանական միջոցառումների ծրագրերից բխող նկարչական, գեղարվեստական, մարզական, տեխնիկական և այլ ծրագրեր:

2015 թվականին արդեն հինգերորդ անգամ նախաձեռնվել և իրականացվել է «Մեկ դար և ավելի...» համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը,որին մասնակցել է 6-18 տարեկան շուրջ 1000 երեխա Հայաստանի 97, Արցախի 5 և Սփյուռքի 13 երկրների (Ռուսաստան, Աբխազիա, Ուկրաինա, Ուզբեկստան, Ղազախստան, Վրաստան, Արգենտինա, Ուրուգվայ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Իրաք, Իրան, Լիբանան) 36 դպրոցներից: Ներկայացվել են նկարներ, գոբելեններ, քանդակներ, և այլ օբյեկտներ: Մրցույթի առաջին փուլի արդյունքում ցուցահանդեսին ներկայացվել են Հայաստանի 40, Արցախի 3 և Սփյուռքի 32 դպրոցների շուրջ 250 նկարներ (առանձին նկարներ, նկարներ-նախագծեր, նկարների շարքեր, նկար-օբյեկտներ), 9 գոբելեններ, 4 քանդակներ և 8 օբյեկտներ:

2015 թվականի ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում անց է կացվել Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակին նվիրված մանկապատանեկան փողային նվագախմբերի փառատոնը, որին մասնակցել են 520 դպրոցականներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների սաները Չեխիայի Հանրապետության Լիդիցե քաղաքում կայացած կերպարվեստի 43-րդ միջազգային ցուցահանդեսին ներկայացրել են շուրջ 60 աշխատանք, Բելառուսի Մինսկ քաղաքում «Մոլորակի երեխաները բարեկամներ են» միջազգային ցուցահանդեսին՝ շուրջ 110 աշխատանք:

Կազմակերպվել և անց են կացվել Մուսա լեռան հերոսամարտի 100-ամյակի և Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, հանրակրթական ուսումնական հաստատություններում 2014-2015 թվականներին անց են կացվել կրթադաստիարակչական աշխատանքներ ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ:

2014-2015 թվականներին մշակվել և վերամշակվել են մի շարք իրավական և նորմատիվ ակտեր, որոնք ուղղված են եղել կանոնակարգելու նախազորակոչային պատրաստության բնագավառը: Վերամշակման փուլում է գտնվում «Հայրենասիրական դաստիարակության 2015-2019 թվականների» պետական ծրագրի նախագիծը, որի շուրջ քննարկումներ են կազմակերպվել բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ: Մշակման փուլում է գտնվում ՀՀ պաշտպանության և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանի նախագիծը՝ ՆԶՊ ուսուցիչների մրցույթի կարգի և հարցաշարերի վերաբերյալ:

Ռազմահայրենասիրական և նախազորակոչային պատրաստության համակարգում բարելավվել են ուսումնական հաստատությունների զենքի պահասենյակները, ուսումնական հաստատությունների 85%-ը համալրվել են ուսումնական տարբեր զինատեսակներով և զինամթերքով, որոնք հիմնավոր պայմաններ են ստեղծում կրակային և մարտական պատրաստության դասընթացներն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Բարելավվել են ուսումնական հաստատությունների քաղաքացիական պաշտպանության շտաբները՝ որոնք համալրվել են անհրաժեշտ ուսումնական պարագաներով: Մշակման փուլում է «Պատանի փրկարար» դպրոցական խաղ վարժանքի ծրագիրը: Ուսումնական հաստատություններում քաղաքացիական պաշտպանության աշխատանքները համակարգված իրականացնելու համար մշակվել և հաստատվել է նորմատիվ ակտերի ժողովածու, որը գործածության համար ներդրվել է կրթական համակարգ: 2014-2015 թվականներին քաղաքացիական պաշտպանության թվով 73 շտաբի պետեր մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնց արդյունքում ստացել են համապատասխան որակավորում:

Որպես ուսումնաօժանդակ նյութ նկարահանվել և ուսումնական հաստատություններին են տրամադրվել ռազմահայրենասիրական, ուսուցողական ֆիլմեր, մասնավորապես. «Լեոնիդ Ազգալդյան», «Շուշիի ազատագրում», «Ազգային բանակ», «Հայ զինվոր», «Հակաօդային պաշտպանություն», ընդհանուր թվով 7525 տեսասկավառակ:

2015 թվականին կազմակերպվել և անց է կացվել «ՆԶՊ» առարկայական օլիմպիադան, որին մասնակցել են ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ թվով 84 աշակերտ:

Նախազորակոչային մարզառազմական խաղերի, նախազորակոչային պատրաստության իրականացման ժամանակակից մեթոդները և միջոցները, ռազմագիտացված մասնագիտացված

ուսումնական հաստատությունների միջև առողջ մրցակցությունը նպաստել է նմանատիպ ուսումնական հաստատություններ երեխաների ընդգրկվածության տեմպերի համեմատական աճին: 2014-2015 ուսումնական տարում ՀՀ և ԱՊՀ ռազմական բուհեր են ընդունվել 269 դիմորդ:

Գեղարվեստական կրթության մատչելիության որակը ապահովելու և բարելավելու նպատակով իր գործունեությունն է իրականացնում «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը: ՀՀ մարզերում ուսումնամեթոդական աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար իրենց գործունեությունն են շարունակել ՀՀ մարզերի և մայրաքաղաքի հենակետային դպրոցները՝ յուրաքանչյուր մարզում 3-ական, որտեղ կազմակերպվում են հանրապետական մի շարք մրցույթների, փառատոների մարզային փուլեր, համերգներ, համերգ-դասախոսություններ, ցուցահանդեսներ, անցկացվում են վերապատրաստման դասալսումներ, վարպետության դասեր և այլ նպատակային միջոցառումներ ու ծրագրեր: Հիմնադրամի մեթոդիստ-մանկավարժների և հանրապետության առաջատար մասնագետների միջոցով 2014 թվականի ընթացքում հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 8300 աշակերտների և 1440 ուսուցիչների, 2015 թվականին՝ 8500 աշակերտների և 1500 ուսուցիչների, ցուցաբերվել է ուսումնամեթոդական և գործնական աջակցություն, վերապատրաստման դասալսումներին մասնակցել է՝ 2014 թվականին՝ 900, 2015 թվականին՝ 930 մանկավարժ: 2015 թվականին պետական բյուջեից նշված նպատակով հատկացվել է 77.4 մլն դրամ, ևս 77.6 մլն դրամ կհատկացվի 2016 թվականին, որի շրջանակներում ուսումնամեթոդական և գործնական աջակցություն կցուցաբերվի 6400 աշակերտների և ուսուցիչների:

«Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրում ներկայում ընդգրկված են 144 դպրոցների 2361 սովորողներ: Նշված դպրոցներում արդեն դասավանդվում են այնպիսի հազվագյուտ նվագարաններ, ինչպիսիք են՝ տավիղը, կոնտրաբասը, ֆագոտը, հոբոյը (Երևան), պկուն, պարկապզուկը (Գեղարքունիք, Շիրակ, Կոտայք), ուդը, տուբան (Կոտայք, Արմավիր, Տավուշ), բամբիռը, քամանին (Արմավիր): Եթե 2007 թվականին ազգային թառ, քամանչա, ուդ, սանթուր, սազ, պկու նվագարաններ էր ուսանում 90 երեխա, ապա 2015 թվականին սովորողների թիվը հասել է 353-ի: Ընդհանուր առմամբ, «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի ցանկով հաստատված 26 նվագարաններից դասավանդվում է 25-ը (2010 թվականին ուսուցանվում էր 22-ը): Ծրագրի գծով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 629.8 մլն դրամ, նույնքան գումար էլ կհատկացվի 2016 թվականին՝ 148 դպրոցներում 2361 երեխաների ուսուցման համար:

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման ծրագրի շրջանակներում

2014 թվականին հրատարակվել է 27, 2015 թվականին՝ 21 անուն ուսումնամեթոդական և գիտաուսումնական գրականություն, 2016 թվականին նախատեսվում է հրատարակել 24 անուն գրականություն: 2015 թվականին պետական բյուջեից նշված նպատակով հատկացվել է 17.1 մլն դրամ, նույնքան գումար էլ կհատկացվի 2016 թվականին:

«Աջակցություն շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանը» ծրագրում ընդգրկված հայ կատարողական արվեստում ծանրակշիռ փորձ ունեցող խորհրդատուների և հրավիրյալ մասնագետների միջոցով 2015 թվականին (ուսուցչի հետ համատեղ) իրականացվել են մասնագիտական խորհրդատվություններ ծրագրի բոլոր մասնակիցների համար՝ անհատական դասերի և վարպետության դասընթացների ձևաչափով: 2014-2015 թվականներին 15 պատանի երաժիշտներ ներգրավվել են նաև շուրջ 100 տարբեր միջոցառումներում՝ մրցույթներ, փառատոներ, համերգներ: Նրանցից շատերն արժանացել են հանրապետական և միջազգային մրցույթների դափնեկրի կոչման: 2015 թվականին նշված նպատակով պետական բյուջեից հատկացվել է 15.9 մլն դրամ, նույնքան գումար էլ կհատկացվի 2016 թվականին:

2015 թվականին պետական բյուջեից 16.2 մլն դրամ էլ հատկացվել է երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման գծով, որի շրջանակներում ձեռք է բերվել 22 անուն 96 երաժշտական գործիք՝ 2014 թվականի 20 անուն 102 գործիքների դիմաց՝ շնորհալի երեխաներին տրամադրելու նպատակով: Նշված նպատակով ևս 20.0 մլն դրամ կհատկացվի 2016 թվականին՝ 17 անուն 43 գործիքների ձեռքբերման համար:

ՀՀ երկրապահ կամավորականների միությունում գործում է «Պատանի երկրապահ» ակումբը, որի նպատակն է՝ պատանիների շրջանում զարգացնել ռազմահայրենասիրական դաստիարակությունը և հայրենիքի նկատմամբ պարտքի զգացումը: Ակումբն ունի 72 ստորաբաժանում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և Երևան քաղաքում, որոնցում ընդգրկված են 8-18 տարեկան տղաներ և աղջիկներ: Ակումբն զբաղվում է պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակությամբ, կրակային, շարային, մարտավարական պատրաստությամբ: Պատանիներն ուսուցանվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կանոնագրքերի համաձայն, որն էլ նպաստում է նրանց՝ զինվորական ծառայությանը նախապատրաստմանը: Ծրագիրը 2015 թվականին իրականացվել է առաջին անգամ, այդ նպատակով պետական բյուջեից հատկացվել է 64.3 մլն դրամ:

Մարզական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման համար մարզակառույցները ժամանակակից մարզական գույքով ապահովելու, նրանց նյութատեխնիկական պայմանները բարելավելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին իրականացվում է մարզագույքի բաշխման

ծրագիր: Մասնավորապես. 2015 թվականին պետական բյուջեից հատկացված 168.2 մլն դրամի շրջանակներում ձեռք է բերվել 38 անուն մարզագույք և բաշխվել 46 մարզական կազմակերպությունների: Նշված նպատակով 100.0 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

Մարզադպրոցների պայմանների բարելավման նպատակով մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 765.4 մլն դրամ, 471.6 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին:

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Սփյուռքի հետ կապերի ոլորտում կարևորվում է սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստումը: 2015 թվականին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման նպատակով պետական բյուջեից հատկացվել է շուրջ 30.1 մլն դրամ, որի շրջանակներում վերապատրաստվել են 63 ուսուցիչներ՝ 2014 թվականի 48-ի դիմաց: Նշված նպատակով 36.3 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին, որի շրջանակներում կվերապատրաստվի 175 ուսուցիչ:

Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոնների համաձայն իրականացվում է սփյուռքահայ դիմորդների ընդունելություն ՀՀ բուհեր: Անվճար հիմունքներով ընդունելությունը կատարվում է ՀՀ կառավարության որոշմամբ տարեկան հաստատվող բուհական պետական պատվերի տեղերի՝ 70 տեղ, շրջանակներում, միաժամանակ, 13 տեղ է նախատեսվում միջպետական համաձայնագրերի շրջանակներում ընդունելության գծով: Վերջին երկու տարիներին նկատվել է ՀՀ բուհեր սփյուռքահայ դիմորդների փոփոխական դինամիկա: 2014-2015 ուսումնական տարում ՀՀ բուհեր են դիմել և ընդունվել շուրջ 560 սփյուռքահայեր (նախորդ տարվա համեմատ նրանց թվի նվազումը պայմանավորված է վիրահայ դիմորդների թվի նվազմամբ), իսկ 2015-2016 ուսումնական տարում դիմորդների թիվը նորից աճել է՝ սիրիահայերի հաշվին:

Սկսած 2014 թվականից՝ Սփյուռքում գործող հայկական դպրոցներին, կրթական ու նախադպրոցական հաստատություններին, մանկապարտեզներին, հայոց լեզվի ուսուցման խմբակներին, դասարաններին ուսումնական գրականության և այլ ուսումնաօժանդակ նյութերի տրամադրման պետական ծրագիրն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը: Դասագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերումը, որպես կանոն, իրականացվում է կրթական հաստատությունների կողմից ներկայացվող հայտերի հիման վրա: Սփյուռքի ավելի քան երեք տասնյակ երկրներում գործում են մոտ 400 ամենօրյա և ավելի քան 700 մեկօրյա դպրոցներ: Սփյուռքում հայեցի կրթության և դաստիարակության գործում մանկավարժներին օգնելու խնդրում կարևորվում է ուսումնաօժանդակ նյութերի պահանջարկը: Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման և տրամադրման

նպատակով 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 99.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են 25.7%-ով՝ պայմանավորված տրամադրվող գրքերի քանակի ավելացմամբ: Նշված նպատակով 100.0 մլն դրամ էլ կհատկացվի 2016 թվականին, որի շրջանակներում օժանդակություն կստանան արտերկրում գործող 300 հայկական դպրոցներ և կենտրոններ:

2015 թվականին պետական բյուջեից միջոցներ են նախատեսվել Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման և Ավստրիայի Զալցբուրգի համալսարանում հայագիտության ամբիոնին աջակցման գծով, յուրաքանչյուրի գծով 3.6 մլն դրամի չափով: Նշված համալսարաններին նույն չափով աջակցություն կցուցաբերվի նաև 2016 թվականին: 2015 թվականին պետական բյուջեից 4.9 մլն դրամ էլ հատկացվել է Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման գծով, նշված նպատակով ևս 5.7 մլն դրամ կհատկացվի 2016 թվականին: 2016 թվականի պետական բյուջեից 11.4 մլն դրամ էլ կհատկացվի Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում հայոց լեզվի դասավանդմանն աջակցության գծով:

2016 թվականի պետական բյուջեից 13.0 մլն դրամ կհատկացվի Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացման համար:

1.3 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կրթության ոլորտի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներն են՝

- փոքր է նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը, շատ համայնքներում չկան նախադպրոցական կրթական ծառայություններ,
- թերի է դպրոցից դուրս մնացած երեխաների հաշվառման և նրանց կրթության մեջ ընդգրկման համակարգը, ցածր է հանրակրթության երրորդ աստիճանում սովորողների ընդգրկվածության ցուցանիշը,
- հանրակրթական դպրոցները սահմանափակ կարողություններ ունեն ապահովելու բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը,
- դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, ցածր է մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման արդյունավետությունը,
- դեռևս ապահովված չէ կրթական ծրագրերի ամբողջական համադրելիությունը միջազգային չափանիշներին, կրթության համակարգը չի կարողանում արագ և արդյունավետ արձագանքել հասարակության և տնտեսության արագընթաց զարգացումներին,

- անբավարար է ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը ուսումնական գործընթացում, կա էլեկտրոնային ուսումնական նյութերի պակաս,
- շատ ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազան չի համապատասխանում ժամանակակից պահանջներին,
- բարելավման կարիք ունեն կրթության ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմները,
- կարգավորված չեն ՀՀ մարզերի հեռավոր գյուղական թերհամալրված (փոքրաթիվ աշակերտական համակազմով) հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման և ուսուցման արդյունավետ մեխանիզմները,
- հատուկ դպրոցներում սովորող երեխաների խնամքի համար հատկացված միջոցները չեն ապահովում չափորոշիչներով սահմանված պահանջները,
- համընդհանուր ներառման անցման համար «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներից բխող իրավական հիմքերի մշակում և հաստատում,
- մասնագիտական, հատկապես բարձրագույն կրթությունը, մատչելի չէ սոցիալապես խոցելի որոշ խմբերի համար,
- բարելավման կարիք ունեն մասնագիտական կրթության որակի ներքին և արտաքին գնահատման համակարգերն ու մեխանիզմները,
- թույլ է կրթության տարբեր մակարդակների, ինչպես նաև կրթության և տնտեսության միջև երկխոսությունը, բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները,
- բուհերի կազմակերպական, ֆինանսական, կադրային ինքնավարության և ակադեմիական ազատությունների սահմանափակվածությունը,
- բարձրագույն կրթության համակարգի գործունեության թափանցիկության և կատարողականի գնահատման ցածր մակարդակը, որն առաջացնում է հասարակության անվստահությունը բարձրագույն կրթության համակարգի նկատմամբ,
- պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների շարժունության ցածր մակարդակը և դրան նպաստող ենթակառուցվածքների (կրեդիտների փոխանցում, ծրագրերի համեմատելիություն, կրթական ծրագրերի համապատասխանություն միջազգային չափանիշներին, հանրակացարանային պայմաններ) թերի գործունեությունը,
- լրացուցիչ կարգավորման խնդիր ունի սփյուռքահայ ուսանողների ընդունելության և կրթության շարունակականության ապահովումը կրթության հաջորդ մակարդակում,
- շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի ապահովման կարիք ունեն արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունները:

7.1.2 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն և հանրապետության տնտեսությունն ապահովվի մրցունակ մասնագետներով: Պետությունը յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծելու է կրթության հնարավորություն՝ անկախ նրա սոցիալական վիճակից և տարիքից:

Կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը: Կրթության ոլորտի նպատակներն ու գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հավանություն ստացած՝ ՀՀ կառավարության ծրագրի և ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի նպատակադրումներից: Համաձայն նշված ծրագրերի՝ կրթության բնագավառում առաջիկա տարիներին ակնկալվող հիմնական արդյունքներն են.

- բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրն ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան,
- բարելավել կրթության որակը, այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին,
- ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ:

Հանրակրթության ոլորտի նպատակադրումները.

1. հանրակրթության բոլոր մակարդակներում, այդ թվում նախադպրոցական կրթության ոլորտում, բարձրացնել կրթության մատչելիությունը: Մասնավորապես,
   - նախադպրոցական ծրագրերում երեխաների (հատկապես աղքատ ընտանիքների) ընդգրկվածության մեծացում՝ ապահովելով դպրոցին նախորդող տարում երեխաների առավելագույն ընդգրկվածություն,

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր խոցելի խմբերի երեխաների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնում:

2. բարելավել հանրակրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին: Մասնավորապես.

- կրթակարգի և չափորոշիչների, բոլոր ուսումնական ծրագրերի վերանայում՝ կրթության բովանդակության արդիականացման և այն հասարակության ժամանակակից պահանջներին համապատասխանեցման նպատակով, միաժամանակ բարելավելով համապատասխան դասագրքերի բովանդակային որակը,
- աջակցության ցուցաբերում միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդնում,
- երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանն անցմանն ապահովում,
- կրթության որակի և արդյունավետությանը, ինչպես նաև կառավարման համակարգի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի մշակում, լրամշակում,
- հանրակրթության համակարգում կրեդիտային (չափանիշային) համակարգի ներդրման ապահովում, հանրակրթական ուսումնական հաստատություններում կրեդիտային համակարգի միջոցով ուսումնական գործընթացի իրականացման նոր ձևի անցման կազմակերպում,
- ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կադրերի մասնագիտական որակի բարձրացում (վերապատրաստում, ատեստավորում),
- միջազգային ստուգատեսներում, առարկայական օլիմպիադաներում, մրցույթներում, մրցաշարերում մասնակցության արդյունավետության բարձրացում,
- հանրակրթական ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ նախադպրոցական, կադրային, ուսումնամեթոդական և ուսումնանյութական ապահովվածության բարելավում,
- հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավում՝ վերանայելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների գնահատման մեխանիզմները:

Մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստումը, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովումը: Մասնավորապես. առաջիկա տարիներին նախատեսվում է՝

- Խթանել ՄԿՈՒ հաստատությունների անդամակցումը միջազգային ծրագրերին և ցանցերին,
- Հայաստանում գործող որակավորումների ազգային շրջանակը և դրանց ընդհանրական բնութագրերը համապատասխանեցնել Որակավորումների Եվրոպական Շրջանակին,
- Իրականացնել կարողություններին միտված ՄԿՈւ պետական կրթական չափորոշիչների, ինչպես նաև ուսումնական ծրագրերի կանոնավոր մշակում, վերանայում և կիրառում,
- Հնարավորինս բարելավել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանները, այդ թվում ապահովել ջեռուցման համակարգերով,
- Հարստացնել և արդիականացնել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնալաբորատոր, արհեստանոցային բազան,
- Ժամանակակից նոր մասնագիտությունների ներդրում՝ նպատակ ունենալով ուսումնական հաստատություններին հաղորդել հնարավորինս նեղ մասնագիտական ուղղվածություն,
- Իրականացնել աշխատանքի վրա հիմնված ուսուցման հնարավորությունների բացահայտում և ժամանակակից մոտեցումների ներդրում և կիրառում,
- Ընդլայնել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորություններն ու ձևերը՝ ստեղծելով համապատասխան մեխանիզմներ, հիմնավոր և բարենպաստ նախապայմաններ,
- Իրականացնել ՄԿՈւ համակարգում գործատուների ներգրավում ուսումնական գործընթացում, սոցիալական գործընկերության ամրապնդում և նոր որակի հաղորդում,
- Կատարել բուհական կրեդիտային համակարգերի կատարելագործման աշխատանքներին զուգահեռ ՄԿՈՒ կրեդիտների կուտակման և փոխանցման մեխանիզմների լրամշակում, գործարկում և տարածում ողջ համակարգում՝ նպատակ ունենալով ստեղծել ներդաշնակ և բոլոր կրթական ծրագրերը միմյանց շաղկապող համակարգ.
- Իրականացնել ՄԿՈՒ կառավարման համակարգի կատարելագործում, կարողությունների հզորացում,
- Ստեղծել ՄԿՈՒ հաստատությունների ներքին որակի ապահովման համակարգ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան,
- Ընդլայնել ՄԿՈՒ համակարգում ներառական կրթության հնարավորությունները այն մասնագիտությունների մասով, որոնք կարող են հասանելի լինել մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- Աշխատաշուկա-բուհ կապի ամրապնդում և «Կրթություն-գիտություն-նորարարություն» ավանդական եռանկյունու մոդելի արմատավորում բուհերում,

- ՀՀ պետական և ոչ պետական բուհերի գործունեության համար առողջ մրցակցային դաշտի և հավասար հնարավորությունների ստեղծում, լիցենզավորման պայմանների և պահանջների խստացում,
- ԲՈՒՀ-ի թափանցիկության և հաշվետվողականության՝ այդ թվում հանրային հաշվետվողականության մեխանիզմի մշակում և կիրարկում,
- Բուհերի կրթական, կառավարման, հետազոտական գործընթացներում շահառուների թիրախային ներգրավում և համագործակցության ընդլայնում,
- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի ծրագրային ընդլայնում և կատարելագործում,
- Նորարարական մրցակցային ծրագրերի խթանում և ընդլայնում,
- Նպաստում ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՄԿՈՒԱԱԿ) լիիրավ անդամակցությանը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA) և Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) գրանցմանը,
- ԲՈՒՀ-երի որակի արտաքին գնահատման և որակի ապահովման ներբուհական գործընթացների համակողմանի զարգացում ու կիրարկում,
- Սովորողների ու պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության և բուհերի միջազգայնացման ընդլայնում,
- Օտար լեզվով ուսուցման խթանում, որի արդյունքում կավելանա Հայաստանում օտարերկրացի սովորողների թիվը,
- Բուհերի կազմակերպական, ֆինանսական, կադրային ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնում,
- Բուհերի ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակում՝ հիմնվելով բուհի կատարողականի, ծրագրային ու ոչ ծրագրային ֆինանսավորման սկզբունքների վրա և ֆինանսական աղբյուրների բազմազանեցման վրա,
- Ուսանողների ֆինանսական աջակցության (նպաստներ, կրթաթոշակներ) նոր մեխանիզմների մշակում,
- Սոցիալական տարբեր խմբերի և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիության և հասանելիության խթանում,
- Շարունակել ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հստակեցման և կիրարկման աշխատանքները, բարձրագույն կրթության կրթական ծրագրերի մշակում՝ հիմնվելով ՀՀ որակավորումների ազգային շրջանակի վրա, շրջանավարտների զբաղվածունակության

բարձրացում և մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում աշխատաշուկայի արդի պահանջներին,

- Բարեվարքության սկզբունքների և վարքականոնի սահմանում, դրանց կիրառում, վերահսկման ու կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման մեխանիզմի մշակում ու կիրարկում,
- մանկավարժական կրթության բարեփոխում,
- կրթության որակի ապահովման ներքին և գնահատման արտաքին արդյունավետ մեխանիզմների ձևավորում:

Արտաուսումնական դաստիարակության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է՝

•արտաուսումնական կրթական ոլորտի զարգացմանը նպաստումը, արտադպրոցական կրթական նոր ծրագրերի մշակումը,

•օժտված և շնորհալի երեխաների բացահայտումը,

•գեղարվեստական խմբակներում ընդգրկված սաների գեղարվեստական ստեղծագործության ունակությունների, հակումների, հետաքրքրությունների ոլորտի զարգացումը:

Սփյուռքի հայապահպանության և սփյուռքագիտության զարգացման ծրագրերում պետական քաղաքականության հիմնական նպատակն է՝ աջակցել հայապահպանությանը, երիտասարդության շրջանում մայրենի լեզվի ուսուցմանը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստմանը, նպաստել սփյուռքում կրթական ծրագրերի ընդլանմանը:

2.2 ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման կայուն հիմքերի ապահովում: Կրթության բնագավառը շարունակում է մնալ, որպես տնտեսության առաջընթացի առաջնային գերակայություն և կրթության ոլորտի գերակա վիճակը կպահպանվի նաև 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում :

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտի գերակայություն է համարվում հանրակրթությունը, որին էլ առաջիկա տարիներին կուղղվի կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը:

Ստորև ներկայացված են հանրակրթության ոլորտի գերակայություններն ըստ առաջնահերթության աստիճանի.

• կրթության բովանդակային բարեփոխումը՝ հանրակրթական առարկայական ծրագրերի և դասագրքերի բովանդակային որակի բարելավում,

• կրթության որակի նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմների մշակումը,

• առանձին գործող ավագ դպրոցների կայացմանն աջակցելը՝ շենքային և ուսումնանյութական բազայի հարստացմամբ, մանկավարժական կադրերի մասնագիտական կատարելագործմամբ,

• տարրական դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացումը և հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծումը՝ նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության մեծացման միջոցով,

• կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր խոցելի խմբերի երեխաների համար որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորության ապահովում,

• ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորության ընդլայնում,

• Ընդունելության քննությունների համակարգի վերանայում՝ դյուրացնելով դիմորդների մուտքը բուհ,

•մանկավարժական կադրերի ատեստավորման համակարգի գործարկման միջոցով նրանց մասնագիտական առաջընթացի հնարավորությունների ստեղծումը,

• ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը հանրապետության դպրոցներում, ինտերնետի հասանելիության ապահովումը,

• կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը,

• հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգային բարեփոխման ծրագրի իրականացումը,

• հանրակրթության համակարգում կրեդիտային (չափանիշային) համակարգի ներդրումը,

• հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրումը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության բնագավառի գերակայություն են համակարգի բարեփոխումները՝ Լիսաբոնի կոնվենցիայի պահանջներին, Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին և եվրոպական ինտեգրման քաղաքականությանը համապատասխան:

Ստորև ներկայացված են մասնագիտական կրթության համակարգի գերակայություններն ըստ առաջնահերթության աստիճանի.

1. Նախնական և միջին մասնագիտական կրթություն

- Նախնական և միջին մասնագիտական կրթության միասնական պետական կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում,
- ուսումնական հաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում,
- երաշխավորված նվազագույն իննամյա կրթությունից անցում անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթությանը,
- մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների՝ կրթության գլոբալ համակարգերին ինտեգրման խթանում,
- ՄԿՈՒ որակավորումների համակարգի համապատասխանեցում որակավորումների եվրոպական շրջանակին,
- ՄԿՈՒ հաստատությունների արդյունավետ ցանցի ձևավորում,
- սոցիալական գործընկերության և երկխոսության խթանում,
- նախնական և մասնագիտական կրթության մասնագիտությունների առաջնահերթությունների սահմանում՝ ելնելով ՀՀ տնտեսության գերակայություններից, մասնագետների պահանջարկի ձևավորման արդյունավետ համակարգի ներդնում:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն

- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման և միջազգայնացման գործընթացներին ուղղված գործողությունների իրականացում,
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացում և միջազգայնացում,
- Ոլորտի զարգացման միտումներին համահունչ օրենսդրության վերանայում,
- Կոռուպցիայի դեմ պայքարի և բարեվարքության սկզբունքներին համապատասխան գործունեության ապահովում:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքները և իրականացվող աջակցության համապատասխան ծրագրերը կոչված են համակողմանիորեն սատարելու սփյուռքահայ կրթօջախների գործունեությանը, ապահովելու արդյունավետ համագործակցություն գիտակրթական ոլորտում՝ դրանով իսկ պայմաններ ձևավորելով համահայկական ներուժի համախմբման և նպատակային խնդիրների լուծման համար:

Միջնաժամկետ հատվածի գերակայություններն են՝ սփյուռքահայ կրթօջախների գործունեությանն ուղղված օժանդակության ծրագրերի ընդլայնումը, գիտակրթական կապերի ամրապնդումը և սփյուռքում հայագիտության զարգացման ապահովումը:

7.1.3 ՄԺՏԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Կրթության բնագավառի պետական ֆինանսավորման ծավալների աճը և վիճակի բարելավումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր նաև ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի ողջ ժամանակահատվածում:

2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտի գծով (ներառյալ հիմնանորոգման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրերի գծով ծախսերը, առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել են ծախսեր՝ 2017 թվականին 133,269.2 մլն, 2018 թվականին՝ 137,494.9 մլն և 2019 թվականին՝ 145,216.7 մլն դրամի չափով (ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2017 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 134,463.1 մլն, 2018 թվականին՝ 140,202.0 մլն դրամի չափով):

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով կրթության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը 2017 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 2.40 %-ը, 2018 թվականին՝ 2.32 %-ը և 2019 թվականին՝ 2.28 %-ը:

Գծանկար 7. 1. Պետական բյուջեի ծախսերի ծրագրային ցուցանիշները կրթության բնագավառում 2015-2019 թվականներին (%-ը ՀՆԱ-ում)



Գծանկար 7.2. Կրթության բնագավառում պետական ծախսերը 2015-2019 թվականներին՝ գործառական դասակարգմամբ (%՝ բնագավառի ընդհանուր ծախսերի նկատմամբ)



Հանրակրթական ծրագրեր Մասնագիտական կրթական ծրագրեր Այլ ծրագրեր

Ծանոթություն. Հանրակրթական ծրագրերը ներառում են տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը (հանրակրթական ուսուցում, նախադպրոցական կրթություն, ներառական կրթություն, հատուկ կրթություն և այլն), ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերը ներառում են նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերը, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր:

Աղյուսակ 7. 2. Կրթության ոլորտի պետական ծախսերը 2015-2019 թվականներին՝ ըստ ուղղությունների

(մլն դրամ)

Խմբերի անվանումը	ՀՀ 2015 թվականի պետական բյուջե (փաստ)	ՀՀ 2016 հաստատ-ված պետական բյուջե	ըստ ՀՀ 2017-2019 թվականների ՄԺԾԾ-ի		
			2017	2018	2019
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	121182.3	127614.5	133269.2	137494.9	1452216.7
01,02 Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, Միջնակարգ ընդհա-նուր կրթություն	81347.2	85652.6	86718.6	89065.1	91483.4
03. Նախնական մասնագիտական (արհես-տագործական) և միջին մասնագիտական կրթություն	8920.8	10418.6	11165.2	12122.6	13108.2
04. Բարձրագույն կրթություն	11023.9	12233.8	12208.5	12250.7	12274.7
05. Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	6022.1	6168.5	5988.5	5982.2	5983.1
06.Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	13868.3	13141.0	17188.4	18074.3	22367.3

Ծրագրային ժամանակահատվածի վերջում, կրթության ոլորտի ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերին բաժին կընկնի ընդհանուր մասհանումների 91.4%-ը, իսկ կապիտալ ծախսերին՝ 8,6%-ը՝ 2015 թվականի, համապատասխանաբար, 94.4 և 5.6%-ի դիմաց: Ընթացիկ ծախսերում գերակշռող մասը կազմում են աշխատավարձերին ուղղվող վճարները. 2019 թվականին՝ շուրջ 73.9%՝ 2016 թվականի 75.3%-ի դիմաց:

2017-2019 թվականներին աշխատավարձերի գծով ծախսերն աճել են, ըստ տարիների՝ 2,410.7; 3,866.2 և 4,859.4 մլն դրամով՝ պայմանավորված համընդհանուր ներառական կրթության անցման հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ, ինչպես նաև սովորողների թվաքանակների փոփոխություններով:

Աղյուսակ 7. 3 Կրթության ոլորտի պետական ծախսերը 2017-2019 թվականներին՝ ըստ գոյություն ունեցող և նոր ծրագրերի (մլն դրամով)

	2017թ.	2018թ.	2019թ.
Գոյություն ունեցող պարտավորությունների ընդհանուր ծախսերը	133269.2	137494.9	144677,4
Նոր նախաձեռնությունների ընդհանուր ծախսերը			539.3
ԸՆԴԱՄԵՆԸ	133269.2	137494.9	145216.7

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը</u>

Հանրակրթական ծրագրեր

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող կրթության ոլորտի ծախսերի աճի հիմնական մասը կուղղվի հանրակրթության ոլորտին, որը հնարավորություն կտա ապահովելու համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների շարունակումը:

2017 թվականին նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության, միջնակարգ ընդհանուր կրթության, ինչպես նաև հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում նախատեսված մի շարք ծրագրերի գծով ծախսերը 2016 թվականի նկատմամբ կաճեն 5.4%-ով և կկազմեն 102,901.3 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 77.2%-ը: 2018 թվականին նշված ծրագրերի գծով ծախսերը 2017 թվականի նկատմամբ կաճեն 3.1%-ով և կկազմեն 106,133.7 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 77.2%-ը, իսկ 2019 թվականին՝ 2018 թվականի նկատմամբ ծախսերը կաճեն 5.8%-ով՝ կազմելով 112,305.8 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 77.6%-ը:

2017-2019 թվականներին հանրակրթական ծրագրերի գծով աշխատավարձերի մասով լրացուցիչ ծախսեր են նախատեսվել, ըստ տարիների՝ 1,821.9; 3,035.5 և 4,020.4 մլն դրամի չափով՝ պայմանավորված ինչպես համընդհանուր ներառական կրթության անցման հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ, այնպես էլ սովորողների թվաքանակների փոփոխություններով:

Ծրագրային ժամանակահատվածի վերջում աշխատավարձին ուղղվող միջոցները կկազմեն հանրակրթության ոլորտում ընթացիկ ծախսերի շուրջ 82.2%-ը:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացման գծով ոչ աշխատավարձային ծախսերը 2017 թվականին՝ 2016 թվականի համեմատ, ավելացվել են 67.1 մլն դրամով: Կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը 2017-2019 թվականներին կաճեն, ըստ տարիների՝ 405.4; 729.1 և 34.8 մլն դրամի չափով, իսկ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի գծով ծախսերը՝ համապատասխանաբար, 1,222.6; 576.7 և 4,505.4 մլն դրամով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագրի գծով ծախսերը 2017 թվականին կավելանան 2,184.7 մլն դրամով, իսկ 2018-2019 թվականներին կնվազեն, ըստ տարիների՝ 1,013.7 և 1,277.7 մլն դրամով: Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման գծով ծախսերը 2017-2019 թվականներին կաճեն, ըստ տարիների՝ 100.3; 95.3 և 2.7 մլն դրամով, որից՝ համապատասխանաբար, 76.1; 87.1 և 1.6 մլն դրամը պայմանավորված է նշված ծրագրում ՀՀ Տավուշի մարզի ընդգրկմամբ (հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաների սննդով ապահովման համար անհրաժեշտ գումարները նախատեսվել են հանրակրթության ծախսերում, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման):

Ծրագրային ժամանակահատվածի վերջում մեկ աշակերտի հաշվով ծախսերը 2016 թվականի համապատասխան ցուցանիշի համեմատ կաճեն 1.6 տոկոսով (դպրոցահասակ երեխաների թիվը 2017-2019 թվականներին կկազմի, ըստ տարիների, համապատասխանաբար՝ 377.6; 396.2 և 416.4 հազար՝ 2016 թվականի 367.5 հազարի դիմաց):

Աղյուսակ 7.4. Մեկ աշակերտի հաշվով պետական ծախսերը հանրակրթության ոլորտում

	2016	2017	2018	2019
Ինդեքս (2016թ. = 100)	100.0	102.6	100.9	101.6
Հուշագրային հոդվածներ				
Աշակերտների թվաքանակը (2016թ. = 100)	100.0	102.7	107.8	113.3
Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում (2016թ. = 100)	100.0	105.4	108.7	115.1

Միջնաժամկետ հատվածում՝ հանրակրթության բնագավառում կշարունակվեն նաև բարեփոխումները, որոնց գլխավոր ուղղություններից է կրթության բովանդակության արդիականացումը: Մասնավորապես, 2017-2019 թվականներին մանկավարժական պարբերականների, ուսումնական ծրագրերի, ձեռնարկների տպագրության նպատակով պետական բյուջեից յուրաքանչյուր տարի կհատկացվի, շուրջ 280.0 մլն դրամ:

Պետությունը շարունակելու է տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը: Տարրական դասարանների աշակերտներին դասագրքերով ապահովելու (ներառյալ շախմատի դասագրքերն ու խնդրագրքերը, օտար լեզվի և երաժշտության դասագրքերը) նպատակով 2017 թվականին նախատեսվել է 815.8 մլն դրամ, իսկ 2018-2019 թվականներին տարրական դասարանների աշակերտներին դասագրքերով ապահովելու և ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման նպատակով նախատեսվել է՝ յուրաքանչյուր տարի 969.1 մլն դրամ (ավագ դպրոցների դասագրքերի՝ չորս տարին մեկ վերատպագրմամբ պայմանավորված, 2017 թվականին դրանց տպագրման գծով միջոցներ չեն նախատեսվել): Միջնաժամկետ հատվածում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու նպատակով, ընդհանուր առմամբ, նախատեսվել է, ըստ տարիների՝ 121.7; 132.7 և 137.7 մլն դրամ (նշված գումարներից համապատասխանաբար՝ 118.5; 130.5 և 135.9 մլն դրամը, վերաբաշխվել է հանրակրթության ծախսերին, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման):

Կշարունակվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացը, կրթության բովանդակային և մեթոդական սպասարկումը, որի նպատակով պետական բյուջեից 2017-2019 թվականներին նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 506.9 մլն դրամ (նշված գումարի շրջանակներում յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի շուրջ 10.0 հազար ուսուցիչ):

«Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում» ծրագրի գծով միջնաժամկետ հատվածում նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 480.2 մլն դրամ (նշված գումարի շրջանակներում յուրաքանչյուր տարի կկազմակերպվի 4800 երեխայի ամառային հանգիստը):

2017-2019 թվականներին «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» ծրագրի գծով նախատեսվել է՝ յուրաքանչյուր տարի՝ 132.7 մլն դրամ՝ 2016 թվականի 120.5 մլն դրամի դիմաց (յուրաքանչյուր տարի հավելավճար կտրամադրվի 727 ուսուցչի՝ 2016 թվականի 660-ի դիմաց):

Նախատեսվել են միջոցներ հանրապետության 1390 դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային

կայանի շահագործման նպատակով: Նշված աշխատանքների իրականացման համար նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 850.1 մլն դրամ:

Զգալի միջոցներ են նախատեսվել քննությունների թեստերի, ուղեցույցերի մշակման, ավարտական քննությունների անցկացման գծով (շրջանավարտների թիվը նախատեսվել է, ըստ տարիների՝ 19.6; 10.5 և 21.5 հազար՝ 2016 թվականի 23.3 հազարի դիմաց), TIMSS և PIRLS միջազգային ստուգատես-հետազոտություններին Հայաստանի Հանրապետության մասնակցության վճարի համար (TIMSS-ի գծով՝ յուրաքանչյուր տարի 37.5 հազար դոլարին և 37.5 հազար եվրոյին համարժեք դրամ, PIRLS-ի գծով՝ յուրաքանչյուր տարի 1.0 հազար դոլարին համարժեք դրամ), 2018 թվականին՝ TIMSS և PIRLS միջազգային ստուգատես-հետազոտությունների փորձնական, իսկ 2019 թվականին՝ հիմնական փուլերի անցկացման գծով: Գնահատման և թեստավորման ծառայությունների գծով նախատեսվել է՝ ըստ տարիների 393.4; 371.4 և 412.7 մլն դրամ:

Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացման գծով նախատեսվել է՝ յուրաքանչյուր տարի՝ 666.3 մլն դրամ՝ 2016 թվականի 587.8 մլն դրամի դիմաց:

«Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» ծրագրի գծով նախատեսվել է, յուրաքանչյուր տարի՝ 126.9 մլն դրամ՝ 2016 թվականի հաստատված բյուջեի 23.4 մլն դրամի դիմաց (ծախսերը նախատեսվել են ռոբոտաշինության 57 խմբակների և ինժեներական 103 լաբորատորիաների խմբակավարների վարձատրության գծով):

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով կշարունակվեն ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները, որի նպատակով յուրաքանչյուր տարի նախատեսվել է 41.0 մլն դրամ:

2017-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեից կհատկացվի, ըստ տարիների՝ 650.9; 746.1 և 748.8 մլն դրամ, որի շրջանակներում սննդով կապահովվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության Ջերմուկի կրթահամալիրի և Գորիսի Ա.Բակունցի անվան N1 ավագ դպրոցի, ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի մարզպետարանների, 2017 թվականի սեպտեմբերից՝ նաև Տավուշի մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, ըստ տարիների, շուրջ 31.2; 31.7 և 31.8 հազար երեխաները (ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նշված նպատակով նախատեսվել է 550.6 մլն դրամ՝ 23.4 հազար երեխայի հաշվով): Երեխաների սննդով ապահովման համար անհրաժեշտ գումարները նախատեսվել են հանրակրթության ծախսերում, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման: Միաժամանակ, «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրով

յուրաքանչյուր տարի 49.1 մլն դրամ է նախատեսվել ՀՀ կրթության և գիտության նախարարության գծով՝ սննդամթերքի ցամաքային տեղափոխման համար:

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեից միջոցներ կնախատեսվեն ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության գծով: 2017-2019 թվականներին նախադպրոցական կրթության գծով նախատեսվել է, ըստ տարիների՝ 731.0; 747.6 և 746.3 մլն դրամ՝ ավագ նախադպրոցական տարիքի, համապատասխանաբար, 6.4; 6.5 և 6.5 հազար երեխաների կրթության գծով (ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նշված նպատակով նախատեսվել է 657.4 մլն դրամ՝ 5.6 հազար երեխայի կրթության գծով): Նախադպրոցական կրթության գծով ծախսերում ներառված են նաև դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաներին սննդով ապահովման գծով գումարները, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման:

Ծրագրային ժամանակահատվածում կշարունակվի կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծրագրի իրականացումը: Այս ուղղությամբ պետական ներդրումները 2017-2019 թվականներին կկազմեն՝ ընդամենը 8,308.2 մլն դրամ, որից 2017 թվականին՝ 2,271.8 մլն դրամ, 2018 թվականին՝ 3,000.9 մլն դրամ, 2019 թվականին՝ 3,035.6 մլն դրամ:

Զգալի միջոցներ են նախատեսվել համընդհանուր ներառական կրթության իրականացման գծով, հիմք ընդունելով 2016 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը, որի համաձայն՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման գործընթացը կսկսվի 2016 թվականին, ՀՀ Սյունիքի մարզից:

Մասնագիտական կրթական ծրագրեր

Մասնագիտական կրթական ծրագրերի (նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրեր, ինչպես նաև նշված ծրագրերի իրականացմանն օժանդակող մի շարք ծրագրեր) գծով ծախսերը 2017 թվականին 2016 թվականի նկատմամբ կաճեն 2.3%-ով՝ կազմելով 23,909.3 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 17.9%-ը: 2018 թվականին ծախսերը 2017 թվականի նկատմամբ կաճեն 4.2%-ով՝ կազմելով 24,909.0 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 18.1%-ը, իսկ 2019 թվականին ծախսերը 2018 թվականի նկատմամբ կաճեն 4.1%-ով՝ կազմելով 25,918.5 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 17.9%-ը:

Միջնաժամկետ հատվածում միջոցների ավելացումը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի գծով լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ, ըստ տարիների՝ 586.3; 832.9 և 838.1 մլն դրամի չափով, որը պայմանավորված է սովորողների թվաքանակների փոփոխություններով:

Միջնաժամկետ հատվածում սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի փոխհատուցման գծով նախատեսվել է, համապատասխանաբար՝ 1,007.3; 994.4 և 996.2 մլն դրամ՝ 2016 թվականի 1,024.6 մլն դրամի դիմաց: Բուհական կրթության գծով հաշվարկներում մեկ ուսանողի ուսման ծախսերը (առանց արտոնություն ունեցող ուսանողների վարձավճարի փոխհատուցման գծով ծախսերի) 2017-2019 թվականներին կհասցվեն, ըստ տարիների՝ 625.7; 617.7 և 618.8 հազար դրամի՝ 2016 թվականի 637.7 հազար դրամի դիմաց:

Միաժամանակ, «Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ» ծրագրի գծով 2017-2019 թվականներին նախատեսվել է, յուրաքանչյուր տարի՝ 30,0 մլն դրամ՝ 2016 թվականի 90.0 մլն դրամի դիմաց:

Այլ ծրագրեր

2017 թվականին այլ ծրագրերի (Արտադպրոցական դաստիարակություն, Լրացուցիչ կրթություն, կրթական այլ ծրագրեր) գծով ծախսերը 2016 թվականի նկատմամբ կնվազեն 2.7%-ով և կկազմեն 6,458.5 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 4.8%-ը, 2018 թվականին ծախսերը 2017 թվականի նկատմամբ կնվազեն 0.1%-ով՝ կազմելով 6,452.2 մլն դրամ կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 4.7%-ը, 2019 թվականին ծախսերը 2018 թվականի նկատմամբ կաճեն 0.01%-ով՝ կազմելով 6,453.1 մլն դրամ, կամ կրթության ընդհանուր պետական ծախսերի 4.5%-ը:

Լրացուցիչ կրթական հաստատությունների գծով ծախսերի հաշվարկում դասախոսական 1 ժամի արժեքը 2017-2019 թվականներին կազմել է 3038 դրամ, պահպանվել է 2016 թվականի մակարդակը: Նշված հաստատությունների գծով ծախսերում հաշվի է առնվել նաև վերապատրաստման, վերաորակավորման ինստիտուտներում և մասնագիտական դասընթացներում վերապատրաստվողների թվաքանակների փոփոխությունը:

Միջնաժամկետ հատվածում մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով ծախսերը ծրագրավորվել են տարեկան 470.0 մլն դրամի չափով կամ՝ ընդամենը, 1,410.0 մլն դրամ:

Միաժամանակ, ծախսեր չեն նախատեսվել 2016 թվականին իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» և «Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին» ծրագրերի գծով, համապատասխանաբար՝ 100.0 և 49.5 մլն դրամի չափով:

Նոր նախաձեռնություններին առնչվող ծրագրեր

ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում մեկ երեխա/մեկ համակարգիչ ծրագրի իրականացման գծով 2019 թվականին նախատեսվել է 539.3 մլն դրամ:

Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր

Տարածքային զարգացման անհամաչափության հաղթահարումը կարևոր է երկրի ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու, ինչպես նաև երկրի կայուն ու անվտանգ առաջընթացի համար:

Միջնաժամկետ հատվածում կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը կնպաստեն տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը, համահունչ են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված՝ ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 25 արձանագրային որոշման, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հավանություն ստացած՝ ՀՀ կառավարության ծրագրի դրույթներին:

Մասնավորապես. ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով ներդրվել են նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ: Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մատչելիության ապահովման համար միջոցներ են նախատեսվել համընդհանուր ներառական կրթության իրականացման գծով, հիմք ընդունելով 2016 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը, որի համաձայն՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման գործընթացը կսկսվի 2016 թվականին, ՀՀ Սյունիքի մարզից:

ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու նպատակով փոխհատուցում է տրվում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցներ գործուղվող մանկավարժներին՝ ճանապարհածախսի, բնակարանի վարձի և կեցության ծախսերի համար: Միջնաժամկետ հատվածում, ՀՀ մարզերից ստացված հայտերի հիման վրա, կշարունակվի գործուղվող մանկավարժներին փոխհատուցումների տրամադրումը:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման գծով 2017-2019 թվականներին շարունակվելու են այդ նպատակով պետական բյուջեից տրվող հատկացումները՝ ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերին:

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեից զգալի միջոցներ կտրամադրվեն ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված բոլոր երեխաներին սննդով ապահովման գծով:

Հանրակրթության համակարգը համալրվում է տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներով, Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում ընդգրկված է 1390 դպրոց: 2017-2019 թվականներին շարունակվելու են համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների գծով պետական բյուջեից տրվող հատկացումները:

2019 թվականին միջոցներ կտրամադրվեն ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերում մեկ երեխա/մեկ համակարգիչ ծրագրի իրականացման գծով:

Շարունակվելու են նաև հանրապետության ողջ տարածքում համընդհանուր բնույթ կրող կրթական ծրագրերը, մասնավորապես՝ տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև արտադպրոցական դաստիարակության ծրագրերը:

Միաժամանակ կրթության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության բարելավման ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

1. Հանրակրթության ոլորտի հետագա բարելավում,
2. Մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանում:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

Առաջին բաղադրիչ - «Հանրակրթության որակի բարելավում», որը կազմված է չորս ենթաբաղադրիչներից.

1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում:

2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը:
3. Հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը:
4. Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

Երկրորդ բաղադրիչ - Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը:

Երրորդ բաղադրիչ - Ծրագրի կառավարում, մշտադիտարկում և գնահատում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 4,978.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,090.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինան-սավորում՝ 888.6 մլն. դրամ, 2018թ. 3,965.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,255.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 709.4 մլն. դրամ, 2019թ. 2,687.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,176.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 511.0 մլն. դրամ:

2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագիր

Ծրագիրը կօժանդակի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության իրականաց-մանը: Ծրագրի նպատակներն են.

1. Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում,
2. Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում,
3. Սեյսմիկ ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում,
4. Սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի գործադիր և իրականացնող մարմինների կարողությունների զարգացում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 3,262.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,718.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինան-սավորում՝ 543.7 մլն. դրամ, 2018թ. 3,838.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,198.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 639.8 մլն. դրամ, 2019թ. 8,344.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 6,953.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,390.7 մլն. դրամ:

7.2 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

7.2.1 Գիտության ոլորտի իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

1.1.Գիտության ոլորտի ընդհանուր նկարագիրը

Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը, տնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման խրախուսումը, հանրապետության առջև ծառացած անվտանգությունը, սոցիալական խնդիրների լուծմանը նպաստելը, ինչպես նաև գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, հայագիտության զարգացմանը նպաստելը, գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը:

Այդ նպատակների ձեռքբերման ուղղությամբ իրականացվել են միջոցառումներ, որոնք, մասնավորապես, ամրագրված են ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարությամբ (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի նիստի N 20 արձանագրային որոշմամբ) և ընդգրկված են ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրում (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ):

Օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով 2014-2015 թվականներին՝

- ՀՀ Ազգային ժողովի կողմից 2015 թվականի ապրիլի 7-ին ընդունվել է «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքը: Օրենքը և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերը հնարավորություն են տալիս ՀՀ-ում ներդնել միջազգային չափանիշներին համապատասխան գիտական և գիտատեխնիկական ծրագրերի/թեմաների ընտրության և հաշվետվությունների գնահատման անկախ փորձագիտական համակարգ:
- Հանրապետության տնտեսության պահանջներից բխող և (կամ) միջազգայնորեն արդիական համարվող գիտահետազոտական աշխատանքների պետական ֆինանսավորման առաջնահերթության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի N 54 արձանագրային որոշմամբ սահմանվել են ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունները: Այդ գերակայությունները հետևյալներն են՝ հայագիտություն, գիտություններ կյանքի մասին, արդյունավետ և անվտանգ էներգետիկա, հիմնական արդյունավետ տեխնոլոգիաներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, տիեզերքի ուսումնասիրություն, երկրի մասին գիտություններ, խնայողական բնօգտագործում, գիտատեխնիկական և

սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հիմնարար հետազոտություններ:

- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1101–Ն որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճար կարող է հատկացվել միայն մեկ ծրագրից՝ դրանից օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձից ոչ պակաս չափով վարձատրություն ստանալու դեպքում:
- Գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների գիտական աշխատողների աշխատանքային և հանգստի պայմանների բարելավման նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 1106–Ն որոշմամբ գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների գիտական աշխատողներն ընդգրկվել են ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկում:
- Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի Հանրապետության ասոցացված անդամ լինելու և Եվրոպական գիտական տարածք ինտեգրվելու նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1255-Ա որոշմամբ համաձայնություն տրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրին մասնակցության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը:
- ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովի լիազորությունների սահմանման և ռազմարդյունաբերության բնագավառում իրականացվող գործառույթների համակարգման նպատակով ՀՀ Նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N ՆՀ-893-Ն հրամանագրով հաստատվեց ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովի կանոնադրությունը և կազմը:
- Միջազգային գիտական համագործակցության խթանման և միջազգային գիտական տարածքի հետ ինտեգրման մակարդակի բարձրացման նպատակով 2015 թվականի փետրվարի 13-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռելատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանցի (ԻԿՐԱՆԵՏ) միջև Հայաստանի Հանրապետությունում ԻԿՐԱՆԵՏ-ի կենտրոն հիմնադրելու մասին» համաձայնագիրը, որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2015 թվականի նոյեմբերի 13-ին: Ա. Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի համատեղ (ICTP) փոխկապակցված կենտրոն ստեղծելու նպատակով 2015 թվականի հուլիսի 22-ին Երևանի պետական համալսարանի և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային

գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) միջև կնքվել է Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիա ձևավորելու մասին պայմանագիր: Արդյունքում՝ հիմնադրվել է ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը և Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնը:

- Հանրապետության գիտական կազմակերպությունների և բուհերի ինքնավարության աստիճանի բարձրացման, ժամանակակից մենեջմենթի ներդրման ու ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով շարունակվել է պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպաիրավական ձև ունեցող մի շարք գիտական կազմակերպությունների և բուհերի՝ հիմնադրամների վերակազմավորման գործընթացը: Արդյունքում՝ ներկայումս գործում են պետական բյուջեից ֆինանսավորվող 9 գիտահետազոտական և գիտակրթական հիմնադրամներ:
- Միջազգային գիտական համագործակցության ընդլայնման նպատակով՝

2014-2015 թվականներին շարունակվել են ստորագրված համաձայնագրերի շրջանակներում համաֆինանսավորման սկզբունքով իրականացվել՝ հայ-ֆրանսիական, հայ-բելառուսական, հայ-ռուսական և հայ-գերմանական համատեղ ծրագրեր: Միաժամանակ, ֆինանսավորվել են մի շարք միջազգային գիտական կառույցների կամ համագործակցությունների մասնակցությունը՝ Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ – JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգ (ԲԷՍՀ - H.E.S.S.) միջազգային համագործակցության անդամակցությունը և այլն:

- Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման նպատակով շարունակվել են իրականացվել՝

Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա ծրագիրը;

Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը;

Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման ամենամյա ծրագիրը:

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության մակարդակի բարձրացման նպատակով շարունակվել են իրականացվել կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրեր՝ արտաբյուջետային միջոցների պարտադիր ներգրավման պայմանով: 2015 թվականի մրցույթի ընթացքում արտաբյուջետային միջոցների մասնաբաժինը կազմել է նախագծի իրականացման համար անհրաժեշտ ընդհանուր ֆինանսական միջոցների առնվազն 35%-ը:

- Շարունակվում են իրականացվել՝ պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների անհատական խրախուսման և գիտության ոլորտի ենթակառուցվածքների ու նյութատեխնիկական բազայի արդիականացման ամենամյա ծրագրերը:

- **ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ**

Հ/հ	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ֆինանսավորում	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	Ամբողջությամբ
2.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի, գիտական կենտրոնների ստեղծման ֆինանսավորում	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	Ամբողջությամբ
3.	Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ֆինանսավորում	Գիտական պետական կազմակերպություններ, պետական բուհեր և հետբուհական կրթական հաստատություններ	Ամբողջությամբ
4.	Միջազգային գիտական համագործակցության ֆինանսավորում	Գիտական պետական կազմակերպությունների, պետական բուհերի և հետբուհական կրթական հաստատությունների մրցութային կարգով ընտրված հետազոտական խմբեր	Քառասունից պակաս տոկոսով
5.	Ասպիրանտական և դոկտորական կրթաթոշակների, գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում	Գիտական պետական կազմակերպությունների և պետական հետբուհական կրթական հաստատությունների ասպիրանտներ, ասպիրանտական թեզերի ղեկավարներ	Ամբողջությամբ
6.	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների ֆինանսավորում	Գիտական կազմակերպությունների և բուհերի մրցութային կարգով ընտրված հետազոտական խմբեր	Ամբողջությամբ
7.	Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին (այդ թվում՝ նաև մինչև 35 տ.) հավելավճարի տրամադրում	Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում և թեմաներում ընդգրկված ու մրցութային կարգով ընտրված գիտաշխատողներ	Ամբողջությամբ
8.	Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորում	Գիտական կազմակերպությունների և բուհերի մրցութային կարգով ընտրված հետազոտական խմբեր	Վաթսունհինգ տոկոսով
9.	Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տ.) հետազոտությունների աջակցության, ասպիրանտների և երիտասարդ հայցորդների (մինչև 35	Գիտական կազմակերպությունների և բուհերի մրցութային կարգով ընտրված երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տ.) հետազոտական խմբեր,	Ամբողջությամբ

	տ.) անհատական խրախուսման ծրագրերի ֆինանսավորում	ասպիրանտներ և երիտասարդ հայցորդներ (մինչև 35 տ.)	
10.	Գիտաժողովների, ամառային դպրոցների կազմակերպման աջակցության տրամադրում	Գիտական պետական կազմակերպությունների և պետական բուհերի ու հետբուհական կրթական հաստատությունների մրցութային կարգով ընտրված գիտաշխատողներ	Երեսունից-քառասուն տոկոս
11.	Օտարերկրյա պետություններում անցկացվող գիտաժողովների մասնակցության ֆինանսական աջակցության տրամադրում	Գիտական պետական կազմակերպությունների և պետական բուհերի ու հետբուհական կրթական հաստատությունների մրցութային կարգով ընտրված գիտաշխատողներ	Երեսունից-քառասուն տոկոս
12.	Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի հավելավճարի տրամադրում	Պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներ	Ամբողջությամբ

1.2. Գիտության ոլորտի վերջին երկու տարիների զարգացման միտումները

Գիտության ոլորտին պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2012-2015 թվականներին կազմել են, համապատասխանաբար՝ 10,088.1, 11,433.2, 12,662.8 և 13,922.1 մլն դրամ կամ՝ ՀՆԱ-ի 0.25, 0.27, 0.26 և 0.28 % -ը (տե՛ս, Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2012-2015 թվականների պետական հատկացումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:



Գիտության ոլորտի 2014-2015 թվականների պետական ֆինանսավորման ծավալների բաշխումն ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման ձևերի՝ բերված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ֆինանսավորման 2014-2015 թվականների ծավալների բաշխումն ըստ ֆինանսավորման ձևերի:

Հ/հ	**Ֆինանսավորման ձև**	**2014թ.**	**2015թ.**
1.	Բազային ֆինանսավորում, այդ թվում՝ գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ (մլն դրամ)	9,471.8	10,749.7
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	74.80	77.21
2.	Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորում (մլն դրամ)	1,675.3	1,839.4

	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	13.23	13.21
3.	Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում (մլն դրամ)	1,515.7	1,333.0
	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)	11.97	9.57
Ընդամենը (մլն դրամ)		12,662.8	13,922.1

Պետական բյուջեի 2014-2015 թվականների ֆինանսավորմամբ իրականացվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման 172 և 180, հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների՝ 27 (որից 16-ը՝ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրեր), և 25 (որից 14-ը՝ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրեր), ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման՝ 5-ական, նպատակային-ծրագրային հետազոտությունների՝ 12 և 16 ծրագրեր:

2014 թվականին շարունակվել են 2013 թվականին հայտարարված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 159 և 2013 թվականի դեկտեմբերից այդ թեմաներին ավելացած կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 16 թեմաների ֆինանսավորումը:

2015 թվականին շարունակվել են 2013 թվականին հայտարարված կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 14 թեմաների, ինչպես նաև 2015 թվականին իրականացված «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 5 թեմաների ֆինանսավորումը: Իսկ 2015 թվականի դեկտեմբերից սկսվել է նաև 2015 թվականի հուլիսին հայտարարված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հերթական մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 169 գիտական թեմաների ֆինանսավորումը:

Նշված ծրագրերի իրականացման մեջ ներգրավված են եղել համապատասխանաբար՝ 52 և 55 ՊՈԱԿ, 17 և 15 ՓԲԸ, 5 և 4 ՍՊԸ, 4 և 8 հիմնադրամ (որոնցից 1-ում՝ 3 մասնաճյուղ) ու 5 պետական ուսումնական հաստատություն: Գիտության ոլորտի 2014-2015 թվականների պետական հատկացումների գերակշիռ մասը՝ 74.80% և 77.21% ուղղվել են բազային ծրագրերի ֆինանսավորմանը (ներառյալ պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները), իսկ նպատակային-ծրագրային հետազոտությունների և պայմանագրային (թեմատիկ) թեմաների ֆինանսավորմանը, համապատասխանաբար՝ 13.23 և 13.21 % ու 11.97 և 9.57 %:

Գիտության ոլորտի 2014-2015 թվականների բյուջետային ֆինանսավորման ծավալների բաշխումն ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսային ծրագրերի բերված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2014-2015 թվականների պետական ֆինանսավորման ծավալների բաշխումն ըստ ծախսային ծրագրերի:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսային ծրագիր	2014թ. (մլն դրամ)	2015թ. (մլն դրամ)	Փոփ. (%)
Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ	14.4	14.4	0.0
Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում	8,119.2	8,839.1	8.9
Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում	822.7	865.7	5.2
Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ*	446.4	938.7	110.3
Գիտական կադրերի պատրաստում	69.1	91.8	32.9
Պետական նպատակային-ծրագրեր	1,675.3	1,839.4	9.8
Պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ	1,515.7	1,333.0	-12.1
Ընդամենը	12,662.8	13,922.1	9.9
*) Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարների ֆինանսավորման ծավալների այդպիսի աճը պայմանավորված է նրանով, որ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1382-Ն որոշմամբ սահմանվել է ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հատկացվող հավելավճարների նոր չափ՝ գիտությունների դոկտորներին՝ 50 000 ՀՀ դրամ, գիտությունների թեկնածուներին՝ 25 000 ՀՀ դրամ:			

Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման համար 2014-2015 թվականներին հատկացված ֆինանսական ծավալները կազմել են տարեկան 14.4 մլն դրամ: Այդ հետազոտությունները կատարվել են 11-ական գիտական կազմակերպություններում:

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացման համար 2014-2015 թվականներին հատկացված ֆինանսական ծավալները կազմել են համապատասխանաբար՝ 8,119.2 և 8,839.1 մլն դրամ: Այդ ծախսային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են 70 (2014 թվական) և 72 (2015 թվական) պետական գիտական կազմակերպությունների, ինչպես նաև գիտական կազմակերպությունների ու դրանց գիտահետազոտական լաբորատորիաների ու խմբերի համար նախատեսված մի շարք մրցութային ծրագրեր: Ծրագրերի ֆինանսավորման ժամանակ շարունակվել է 2010 թվականին ներդրված նոր մոտեցումը, երբ ծրագրերում ընդգրկվում է նաև գիտահետազոտական բաղադրիչը, ինչը հնարավորություն է տալիս այս կամ այն գիտական կազմակերպության ենթակառուցվածքի պահպանումը, արդիականացումն ու զարգացումը պայմանավորել բացառապես իրականացվող հետազոտություններով և մշակումներով: Ինչ վերաբերում է մրցութային ենթածրագրերին, ապա դրանց շրջանակներում, մասնավորապես, ֆինանսավորվել են.

- Արդիական գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման մրցութային ծրագիրը՝ արտաբյուջետային միջոցների համաֆինանսավորման սկզբունքով (համապատասխանաբար՝ 274.2 և 311.4 մլն դրամ): Յուրաքանչյուր գիտական սարքավորման ձեռքբերման համար հատկացվել է

առավելագույնը 65.0 մլն դրամ: 2014 թվականի մրցույթին ներկայացվել է 23 հայտ, ֆինանսավորվել է 5-ը, իսկ 2015 թվականի մրցույթի ժամանակ՝ ներկայացվել է 21 հայտ, ֆինանսավորվել է 6-ը:

- Միջազգային երկկողմ գիտական համագործակցության մրցութային ծրագրերը՝ համաֆինանսավորման սկզբունքով, համապատասխանաբար՝ 148.6 և 202.9 մլն դրամ: 2014-2015 թվականներին ֆինանսավորվել են հայ-բելառուսական 17-ական, հայ-ֆրանսիական 5-ական, հայ-ռուսական 25 և 32 համատեղ ծրագրեր:
- Ֆրանսիայի գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի հետ համատեղ գիտահետազոտական երկու լաբորատորիաներ և մեկ խումբ, որոնց ֆինանսավորման ծավալը 2015 թվականի համար կազմել է 25.0 մլն դրամ: Համատեղ լաբորատորիաները ստեղծվել են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտներում, իսկ համատեղ խումբը՝ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում:
- Միջազգային գիտական կառույցների անդամակցությունը, որի ֆինանսավորման ծավալը կազմել է, համապատասխանաբար՝ 94.1 և 165.3 մլն դրամ, մասնավորապես, Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի անդամակցություն, Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ - H.E.S.S.) և Ա. Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն:
- Միջազգային գիտական համագործակցությունների, մասնավորապես, Միջուկային Հետազոտությունների Եվրոպական Կենտրոնի (ՄՀԵԿ – CERN) երեք հիմնական գիտափորձերի (ALICE, ATLAS, CMS) աշխատանքների մասնակցությունը: ՄՀԵԿ-ում կատարվող գիտափորձերի մասնակցության ֆինանսավորումն իրականացվել է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամին ֆիզիկայի բնագավառում արդիական գիտական ներուժի ապահովում ենթածրագրով հատկացված տարեկան 90.0 մլն դրամի շրջանակներում:
- Միջազգային առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններից պետական գիտական կազմակերպությունների և բուհերի ազատ օգտվելու իրավունքի ապահովման ծրագիրը՝ 2014 թվականին «Springerlink» 89.7 մլն դրամ, 2015 թվականին «Springerlink» և «Thomson Reuters» 106.5 մլն դրամ: Ծրագրի շնորհիվ հասանելի են դարձել «Springerlink» և «Thomson Reuters» ընկերության տեղեկատվական համակարգերի ռեսուրսները:
- Գիտաժողովների կազմակերպման ֆինանսական աջակցության ծրագիրը, համապատասխանաբար՝ 19.6 և 27.0 մլն դրամ: 2014 թվականին ֆինանսական աջակցություն է ստացել 42 գիտաժողով, իսկ 2015 թվականին՝ 43:
- Երիտասարդ գիտնականների ամառային դպրոցների կազմակերպման աջակցության ծրագիրը, համապատասխանաբար՝ 3.0 և 10.0 մլն դրամ: 2014 թվականին ֆինանսական աջակցություն է ստացել 11 ամառային դպրոց, իսկ 2015 թվականին՝ 9:

- Արտերկրյա գիտաժողովների և գիտական այլ միջոցառումների մասնակցության ֆինանսական աջակցության ծրագիրը՝ տարեկան 32.5 մլն դրամ: Պետական բյուջեի ֆինանսական աջակցությամբ 2014 թվականին իրականացվել է 19 գիտական գործուղում, իսկ 2015 թվականին՝ 31:

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի շրջանակներում, բացի վերոշարադրյալից՝ ֆինանսավորվել են նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացման ապահովման կազմակերպություններ/կառույցներ, ինչպիսիք են, օրինակ՝ ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով գործակալությունը, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայաստանյան տարածաշրջանային մասնաճյուղը և այլն:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 822.7 և 865.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ ԿԳՆ «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի, ՀՀ ԿԳՆ Երևանի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի և ՀՀ ԳԱԱ հայկենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոնի Մանրէների ազգային հավաքածուի ծախսերը:

Պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտաշխատողներին գիտական աստիճանի հավելավճարների տրամադրման նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 446.4 և 938.7 մլն դրամ: Իսկ ասպիրանտական և դոկտորական կրթաթոշակների տրամադրման ու գիտական կադրերի պատրաստման ենթածրագրերի իրականացման նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է, համապատասխանաբար՝ 69.1 և 91.8 մլն դրամ:

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման շարունակական ծրագրերում աշխատողների միջին ամսական աշխատավարձի մեկ հաշվարկային միավորը 2014 թվականին կազմել է 73.0 հազ. դրամ, 2015 թվականին՝ 80.3 հազ. դրամ:

Նպատակային-ծրագրային հետազոտությունների ֆինանսավորման նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 1,675.3 և 1,839.4 մլն դրամ: Ֆինանսավորման այդ ծավալներից 1,494.3 և 1,615.6 մլն դրամը տրամադրվել է Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման համար: Մնացած ծրագրերն իրականացվում են տեղեկատվական տեխնոլոգիաների, տեխնիկական, կենսաբանական, բժշկական, երկրի մասին գիտությունների, հնագիտության և հայագիտության բնագավառներում՝ համապատասխանաբար 181,0 և 223.8 մլն դրամ ֆինանսական ծավալներով: Նպատակային-ծրագրային հետազոտությունների շարքում առանձնանում են ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի «Ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի կիրառում

բնագիտական խնդիրների լուծման համար» 2014-2015 թվականների ծրագիրը՝ տարեկան 25.0 մլն դրամ ֆինանսական ծավալներով: Դրա իրականացման արդյունքում միավորվել և ողջ գիտական ու գիտակրթական հանրության համար հասանելի են դարձել տարբեր գիտական կազմակերպություններում և բուհերում առկա բարձր արտադրողականությամբ հաշվողական, ծրագրային, ցանցային և մասնագիտական ռեսուրսները: Ընդ որում, ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքից արդյունավետորեն օգտվում են ոչ միայն գիտական կազմակերպությունները և բուհերը, այլ նաև՝ ազգային սեյսմիկ ու օդերևութաբանական ծառայությունների կազմակերպությունները:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման և նպատակային-ծրագրային հետազոտությունների 2014-2015 թվականների ծրագրերը (բացի Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներից) իրականացվել են ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 34, ՀՀ կրթության և գիտության նախարարության 21, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 4, ՀՀ մշակույթի նախարարության 4, ՀՀ կառավարության աշխատակազմի 1, ՀՀ առողջապահության նախարարության 6, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 1, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 1, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 1 ու Երևանի քաղաքապետարանի 2 գիտական կազմակերպություններում: Այդ ծրագրերի 2014-2015 թվականների բյուջետային ծախսերն ըստ գերատեսչությունների բերված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման և նպատակային-ծրագրային հետազոտությունների 2014-2015 թվականների բյուջետային ծախսերն ըստ գերատեսչությունների:

Հ/հ	Գերատեսչություն/ՀՀ ԳԱԱ/Երևանի քաղաքապետարան	Ֆինանսավորման ծավալները, մլն դրամ		2015թ. փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ,+/-	
		2014թ.	2015թ.	մլն դրամ	%
1.	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	4,920.3	5,368.1	447.8	9.10
2.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	3,577.1	3,858.0	280.9	7.85
3.	ՀՀ պաշտպանության նախարարություն	1,494.3	1,615.6	121.3	8.12
4.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	120.3	128.1	7.8	6.49
5.	ՀՀ մշակույթի նախարարություն*	135.6	162.4	26.8	19.78
6.	ՀՀ կառավարության աշխատակազմ	104.7	107.4	2.7	2.58
7.	ՀՀ առողջապահության նախարարություն	81.9	85.7	3.8	4.66
8.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	50.0	50.0	0.0	0.0
9.	Երևանի քաղաքապետարան	31.4	32.3	0.9	3.01
10.	ՀՀ Նախագահի աշխատակազմ**	25.0	38.0	13.0	52.00
11.	ՀՀ սփյուռքի նախարարություն	14.4	14.4	0.0	0.0

12.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	12.5	12.5	0.0	0.00
13.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	10.0	9.8	0.20	-2.0
Ընդամենը		10,577.6	11,482.3	904.7	8.55

*) ՀՀ մշակույթի նախարարության գիտական կազմակերպությունների ֆինանսավորման ծավալների այդպիսի աճը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների ծախսային ծրագրով սկսվել է այդ նախարարության ենթակայության տակ գտնվող «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում ծախսային ծրագրով՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի պետական ֆինանսավորումը:

**) ՀՀ Նախագահի աշխատակազմի գիտական կազմակերպության ֆինանսավորման ծավալների այդպիսի աճը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում ծախսային ծրագրով սկսվել է «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն»-ի պետական ֆինանսավորումը:

Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 1,515.7 և 1,333.0 մլն դրամ: Այդ ծրագրի շրջանակներում 2014 թվականին շարունակվել են ֆինանսավորվել 2013 թվականին անցկացրած մրցույթների արդյունքներում ֆինանսավորման երաշխավորված պայմանագրային (թեմատիկ) 159, երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության 30, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ երկկողմ համագործակցության 6 և կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 16 թեմաներ: 2014 թվականին կազմակերպվել են նաև ասպիրանտների և երիտասարդ հայցորդների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման, ինչպես նաև պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթները: Մրցույթների արդյունքում՝ 2014 թվականի ապրիլից իրականացվել է 28 ասպիրանտների և երիտասարդ հայցորդների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման հերթական, ինչպես նաև 2015 թվականի փետրվարից ֆինանսավորվում է 98 առավել արդյունավետ գիտաշխատողների խրախուսման մեկամյա ծրագրերը:

2015 թվականին շարունակվել են ֆինանսավորվել 2013 թվականին անցկացրած պայմանագրային (թեմատիկ) մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 159 (136-ը՝ մինչև հուլիս, իսկ 23-ը՝ մինչև օգոստոս ամիսներ), երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության 30 (24-ը՝ մինչև հոկտեմբեր, 6-ը՝ մինչև նոյեմբեր ամիս), ասպիրանտների և երիտասարդ հայցորդների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման հերթական մեկամյա 23 (մինչև ապրիլ ամիս), «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվելիք 5 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ երկկողմ համագործակցության 6 (մինչև սեպտեմբեր ամիս) երկամյա թեմաները: 2015 թվականից ֆինանսավորվում են նաև

«CYCLONE 18/18»-ի վրա իրականացվելիք 4 և պայմանագրային (թեմատիկ) հերթական մրցույթի (2015-2017 թվականների) արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 169 (153-ը՝ դեկտեմբերից, իսկ 16-ը՝ 2016 թվականի ապրիլից) թեմաները: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 2015 թվականի մրցույթի ժամանակ սահմանվել են հետևյալ պայմանները՝ կատարողների կազմը՝ 2-4 հոգի, կատարողների միջին ամսական աշխատավարձը՝ 100.0 հազ. դրամ: Միևնույն ժամանակ 2015 թվականի փետրվարից ֆինանսավորվում են 98 առավել արդյունավետ գիտաշխատողների խրախուսման ծրագիրը, իսկ սեպտեմբերից՝ «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 5 թեմա:

Անհրաժեշտ է նշել, որ գիտական և գիտատեխնիկական գործունեության մրցութային ծրագրերի և թեմաների ընտրության գործընթացում, սկսած 2013 թվականից, ներդրվել է հայտերի գնահատման նոր մեխանիզմ: Յուրաքանչյուր հայտ գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն 2 անկախ փորձագետների կողմից, որոնց գնահատականների հիման վրա ձևավորված միջին գնահատականը կարող է կազմել հայտի վերջնական գնահատականի առավելագույն արժեքի 85% (հայտը գնահատվում է 2 փորձագետի կողմից, սակայն, եթե այդ գնահատականները տարբերվում են փորձագիտական գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50% և ավելի չափով, ապա հայտը տրվում է 3-րդ փորձագետի գնահատմանը): Մնացած 15%-ը հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորման գնահատականն է, որը տրվում է մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից՝ հիմք ընդունելով խմբի գիտական գործունեության արդյունքների գիտաչափական տվյալները:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության մրցութային ծրագրերը դրամաշնորհայինի վերածելու և իրական մրցութային պայմանների ապահովման հիմնական նախապայմանը՝ գիտական անկախ փորձագիտական համակարգի գոյությունն է: Այդ նպատակի համար ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ձևավորվել է գիտական փորձաքննություն իրականացնող գիտնականների տվյալների մշտապես թարմացվող շտեմարան: 2015 թվականի դեկտեմբերի դրությամբ գիտական անկախ փորձագիտական համակարգում ընդգրկված են շուրջ 1700 գիտնական, այդ թվում՝ 750-ն արտասահմանից: Դրան զուգահեռ, 2011 թվականին ստեղծվել և եռամսյա պարբերականությամբ թարմացվում է հանրապետության գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հրապարակված գիտական աշխատությունների շտեմարանը:

2015 թվականին իրականացվել է պետական գիտական կազմակերպությունների չորրորդ անձնագրավորումը, որն ընդգրկել է 2013-2014 թվականների ժամանակահատվածը: Անձնագրավորման նպատակը գիտական և գիտատեխնիկական բնագավառի ընթացիկ հետազոտությունների, կադրային ներուժի, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի ու գիտական

«արտադրանքի» տվյալների շտեմարանի ստեղծումն ու պարբերական թարմացումն է: Շտեմարանը հնարավորություն է տալիս ունենալու ամբողջական տեղեկատվություն գիտության ոլորտի օբյեկտիվ իրավիճակի մասին, իրականացնելու գիտական կազմակերպությունների գործունեության մոնիթորինգ և այլն:

1.3. Հիմնական խնդիրները

Գիտության ոլորտում առկա են հետևյալ հիմնական խնդիրները.

- Միջազգային չափանիշներին համապատասխան կառավարման համակարգի և պետական կառավարման մարմնի համապատասխան լիազորությունների բացակայությունը:
- Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության և պետական ֆինանսավորման ծավալների համապատասխանեցման բացակայությունը:
- Ենթակառուցվածքների անհամապատասխանությունը գիտության և տեխնիկայի զարգացման արդի չափանիշներին:
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում երիտասարդ կադրերի ներգրավման և ամրապնդման ծրագրի ու համապատասխան մեխանիզմների բացակայությունը:
- Գիտության և կրթության ինտեգրման ոչ բավարար մակարդակը:
- Գիտական արդյունքի առևտրայնացման ցածր մակարդակը:
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից գիտական հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման մեջ արտաբյուջետային միջոցների ներգրավման ցածր մակարդակը:
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության ցածր մակարդակը և այդ մասնակցության տնտեսական խրախուսման մեխանիզմների բացակայությունը:
-

7.2.2 Գիտության ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

2.1.Նպատակները

Գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը հանրապետությունում գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծմանը նպաստելն է: Բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, գիտության ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպման, գիտական կադրերի նպատակային

պատրաստման և տեղաբաշխման, նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղություններով:

2.2.Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1.	Գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միասնական քաղաքականության մշակում և իրականացում			Անհրաժեշտ է գիտության ոլորտի պետական կառավարման մարմնին վերապահել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միասնական քաղաքականության մշակման և իրականացման լիազորությունները՝ ի կատարումն ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 20 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 1-ին և 4-րդ թիրախների նպատակների:
2.	Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում			Գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացման հիմնական մեխանիզմը գիտական ծրագրերի և թեմաների ընտրության իրական մրցութային պայմանների ապահովումն է: Պահպանելով գիտության ֆինանսավորման բազմաձևությունը՝ այն պետք է իրականացվի բացառապես ծրագրային սկզբունքով և հասցեագրված: Գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերը պետք է պարունակեն գիտահետազոտական բաղադրիչ, ինչը հնարավորություն է տալիս տվյալ գիտական կազմակերպության ենթակառուցվածքի արդիականացումն ու հետագա զարգացումը պայմանավորել բացառապես իրականացվող հետազոտությունների անհրաժեշտությամբ: Առաջնահերթությունը պետք է տրվի ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 54 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունների շրջանակներում իրականացվող հետազոտություններին: Այդ ծրագրերի ֆինանսավորման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի՝ - հայագիտության ոլորտի առաջընթաց զարգացումն ապահովող ծրագրերի իրականացմանը՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 5-րդ թիրախի և Հայագիտության զարգացման հայեցակարգի նպատակների. - մեգանախագծերի իրականացմանը, մասնավորապես, համակարգաստեղծ և միջավայր ձևավորող նախաձեռնություններին՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) և Քենդլ սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի ֆինանսավորմանը՝ ի կատարումն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 6 արձանագրային որոշմամբ հաստատված Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգի 1-ին, 2-րդ և 4-րդ միջոցառումների: Պետք է շարունակել համատեղ օգտագործման գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ամենամյա մրցութային ծրագիրը՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 2-րդ թիրախի նպատակների: Անհրաժեշտ է շարունակել կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցութային ծրագրերը՝ արտաբյուջետային միջոցների ներգրավումով՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 3-րդ և 4-րդ թիրախների նպատակների: Մրցույթը պետք է իրականացնել պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման

		շրջանակներում, ինչը հնարավորություն է տալիս մրցույթի շահառուների շարքում ընդգրկել նաև ոչ պետական գիտական կազմակերպությունները, դրանց գիտահետազոտական լաբորատորիաներն ու խմբերը: Պետք է շարունակել միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացմանը, համաշխարհային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում սեփական դիրքի ձեռքբերմանն ուղղված ծրագրերը՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 6-րդ թիրախի նպատակների: Ներկայումս համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվում են միջազգային համագործակցության 50 ծրագիր, հայ-ֆրանսիական երկու լաբորատորիա և մեկ խումբ: Գործում են ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը, ինչպես նաև Ա. Սալամի անվան տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոնի (ICTP) փոխկապակցված կենտրոնը՝ Երևանի պետական համալսարանի և Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) Տեսական ֆիզիկայի համատեղ լաբորատորիայի հենքի վրա: Նպատակային-ծրագրային հետազոտությունները պետք է առավելապես ուղղված լինեն համապետական նշանակության կիրառական բնույթի խնդիրների լուծմանը՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 3-րդ թիրախի նպատակների: Այդ ծախսային ծրագրի շրջանակներում 2015 թվականին ֆինանսավորվել են 16 ծրագրեր: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը շարունակվելու է հատկացվել որպես դրամաշնորհ՝ ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններից բխող խնդիրների (այդ թվում՝ նաև կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված) լուծման, ինչպես նաև այդ գերակայություններում չընդգրկված, բայց առանձնակի կարևորություն ունեցող նախաձեռնությունների ֆինանսավորման համար, իսկ թեմաների ընտրությունն իրականացվելու է մրցութային եղանակով՝ գիտական անկախ փորձաքննության հիման վրա: Սկսած 2015 թվականից այդ թեմաները հիմնականում ընտրվում են ըստ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 54 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունների: Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված երկամյա ծրագրեր իրականացվում են, սկսած 2013 թվականից (առաջին մրցույթի ժամանակ արտաբյուջետային միջոցների մասնաբաժինը կազմել է առնվազն 25%, իսկ երկրորդ մրցույթի ժամանակ՝ 35%): Վերոնշյալ գերակայությունների շրջանակներում, սկսած 2016 թվականից նախատեսվում է իրականացնել երկամյա ծրագրեր Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ համաֆինանսավորման սկզբունքով: Պետական բյուջեից ֆինանսավորման ծավալը կկազմի մինչև 15%: Գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման ուղղությամբ պետք է ներդնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ժամանակակից մեխանիզմներ՝ ապահովելով պետական ֆինանսավորման ծավալների և արդյունավետության համապատասխանությունը: Գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման ժամանակ հիմք պետք է հանդիսանան գիտական արդյունքի, կադրային ներուժի, նյութատեխնիկական ապահովվածության, հանրապետական և միջազգային գիտակրթական տարածքի հետ ինտեգրման մակարդակի, գիտական արդյունքի առևտրայնացման աստիճանի և ֆինանսական արդյունավետության գնահատականներն ու կազմակերպության զարգացման 3 և 5 ամյա ծրագրերը:

		Անհրաժեշտ է շարունակել վերոնշյալ մոտեցումները՝ նպատակ ունենալով այնպես փոփոխել պետական բյուջեից գիտության ոլորտի ֆինանսական հատկացումների ներքին կառուցվածքը, որ բազային ֆինանսավորման համար հատկացվի միջինը՝ ընդհանուրի 50%, նպատակային ֆինանսավորմանը՝ 35% և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը՝ 15%: Բազային ֆինանսավորման ծրագրերի մեջ անհրաժեշտ է ապահովել միջինը 55% աշխատավարձի և 45% տնտեսական և այլ ծախսերի մասնաբաժին:
3.	Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում	Գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման նպատակով պետք է անկախ գերատեսչական պատկանելությունից միավորել միևնույն գիտական ուղղության գիտական պետական կազմակերպությունները՝ ներդնելով գիտության կառավարման ժամանակակից մեթոդներ՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 1-ին թիրախի նպատակների: Անհրաժեշտ է գիտական կազմակերպություններում հստակեցնել տնօրենի և գիտական խորհրդի իրավասություններն ու պարտականությունները՝ դրանցում մի կողմից արմատավորելով ժամանակակից մենեջմենթ, մյուս կողմից՝ վարչական ազդեցությունից հանելով գիտական քննարկումների ու որոշումների ընդունման գործառույթները: Կրթության և գիտության ինտեգրման, բարձրագույն մասնագիտական կրթության ժամանակակից եղանակների ներդրման նպատակով անհրաժեշտ է ստեղծել հետազոտական համալսարաններ, որոնցից առաջինը, մասնավորապես, կարող է լինել Հայկական տեխնոլոգիական հետազոտական համալսարանը, այդ թվում՝ նաև ռազմարդյունաբերական համալիրի համար կադրեր պատրաստող ֆակուլտետներով/ամբիոններով՝ բնական գիտությունների բնագավառում աշխատող գիտական պետական կազմակերպությունների հենքի վրա (2018 թվական)՝ ի կատարումն ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 4-րդ թիրախի նպատակների: Պետք է նաև ստեղծել հատուկ նշանակության տեխնիկական հետազոտությունների կարիքները ուսումնասիրող և համապատասխան պատվերները ձևավորող Ռազմական գիտատեխնիկական ինստիտուտ: Այդ պատվերների շրջանակներում իրականացվող գիտատեխնիկական և փորձակոնստրուկտորական աշխատանքները կատարելու/համակարգելու համար պետք է ստեղծել Հատուկ կոնստրուկտորական բյուրո: Անհրաժեշտ է նաև ձևավորել հատուկ գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաներ՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և ՀՀ ՊՆ ռազմարդյունաբերական պետական կոմիտեի համատեղ ենթակայության տակ: Անհրաժեշտ է շարունակել գիտության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումները՝ միևնույն գիտական ուղղության գիտական պետական կազմակերպություններն ազգային գիտական կենտրոններում միավորման, կամ, անհրաժեշտության դեպքում, գիտական կազմակերպության կազմակերպաիրավական ձևի փոփոխության ուղղությամբ:
4.	Գիտական ներուժի վերարտադրության արդյունավետության բարձրացում, գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման ապահովում	ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը: Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է շարունակել իրականացնել միջոցառումներ, որոնք նախատեսված են ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարության 2-րդ թիրախում ձևակերպված մարտավարությունով, մասնավորապես. - Գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների իրականացում՝ ժամանակակից գիտության պահանջներին համապատասխան

		և օտարերկրյա պետություններում գործող համակարգերի հետ համադրելի մեկ աստիճան ունեցող գիտական աստիճանաշնորհման համակարգի ներդրման նպատակով: - Ասպիրանտական կրթաթոշակի և ատենախոսական թեզի ղեկավարման համար հատկացվող գումարի ավելացում՝ մինչև հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձը և դրա կեսը (2018 թվական): - Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության երկամյա և ասպիրանտների ու երիտասարդ հայցորդների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման միամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում: - Հետդոկտորանտուրայի ինստիտուտի ներդրում՝ թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո առավելագույնը երկու տարի ժամկետով օտարերկրյա պետություններում գործող հայտնի գիտական կամ գիտակրթական կենտրոններում վերապատրաստվելու հնարավորություն ապահովելու նպատակով (սկսած 2017 թվականից): Իհարկե, այս մեխանիզմի ներդրման պարտադիր պայման պետք է լինի հետդոկտորանտուրայից հետո ՀՀ վերադառնալու և որոշակի ժամանակահատված հանրապետության գիտական պետական կազմակերպություններում աշխատելու պայմանը: - Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների խրախուսման ամենամյա ծրագրի իրականացում՝ մրցութային կարգով ընտրված մինչև 100 գիտաշխատողի տրամադրելով ամսական 135.0 հազ. դրամ հավելավճար: - Պետական գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) խրախուսման ամենամյա ծրագրի իրականացում՝ (սկսած 2016 թվականից) մրցութային կարգով ընտրված շուրջ 25 երիտասարդ գիտաշխատողի տրամադրելով ամսական 75.0 հազ. դրամ հավելավճար: - Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտահետազոտական լաբորատորիաների, այդ թվում՝ հատուկ նշանակության հետազոտություններ իրականացնող, երկամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում (սկսած 2016 թվականից): Գիտահետազոտական լաբորատորիաներին տարեկան տրամադրելով պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների ֆինանսավորման տարեկան առավելագույն ծավալների 2-պատիկ աջակցություն: - Միջազգային ճանաչում ունեցող գիտաշխատողների, այդ թվում՝ նաև օտարերկրյա պետությունում բնակվող, գիտական նախաձեռնությունների իրականացման համար համապատասխան գիտահետազոտական լաբորատորիաների կամ խմբերի ստեղծման, այդ թվում՝ հատուկ նշանակության հետազոտություններ իրականացնող, եռամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում՝ գիտական գերազանցության կենտրոնների ձևավորման հիմքերի ստեղծման նպատակով (սկսած 2018 թվականից)՝ ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թվականների գերակայությունների շրջանակներում մինչև 7 դրամաշնորհի տրամադրում՝ սահմանելով յուրաքանչյուրի տարեկան ֆինանսավորման ծավալները մինչև պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաների ֆինանսավորման տարեկան առավելագույն ծավալների կրկնապատիկը:

7.2.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ նախատեսվում է գիտությանն ուղղված միջոցների ծավալներն ավելացնել պետական բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարի չափով, այն է. ՀՀ պետական բյուջեից գիտության ոլորտին 2017-2019 թվականների նախատեսվում է հատկացնել, համապատասխանաբար՝ 14,264.8 , 15,342.2 , 16,575.9 մլն դրամ :

ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 20 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011-2020 թվականների ռազմավարությունը ենթադրում է պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման հրամայականով: Գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը զգալիորեն կմեծացնի նաև գիտական արդյունքի առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի դրանց ներդրմանը տնտեսության մեջ, հնարավորություն կտա զարգացնելու ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացումը պետք է նպատակաուղղված լինի 2020 թվականին եվրոպական միջին չափանիշներին մոտենալուն, այն է՝ ՀՆԱ-ի մոտ 1%-ը, որի կեսը պետական բյուջեից, իսկ մյուս մասը՝ տնտեսության մասնավոր հատվածից: Հետևաբար, պետական ֆինանսավորման ծավալների աճին զուգընթաց պետք է ներդնել տնտեսության մասնավոր հատվածի կողմից գիտական հետազոտությունների ֆինանսավորման խրախուսման մեխանիզմներ և ստեղծել բարենպաստ պայմաններ օտարերկրյա պետություններից կամ միջազգային կազմակերպություններից դրամաշնորհներ ստանալու համար:

Այս իմաստով սկզբունքային նշանակություն ունի Եվրոպական Միության «Գիտության և նորարարության 2014-2020 թվականների շրջանակային ծրագիր. Հորիզոն 2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության հարցը, որի արդյունքում հանրապետության գիտական կազմակերպություններն ու բուհերն իրավունք կունենան Հորիզոն 2020 ծրագրի շրջանակներում

իրականացվող մրցույթներին մասնակցել որպես համակարգող կազմակերպություններ, ձևավորել միջազգային գիտական կամ գիտակրթական համագործակցություններ: Հայաստանի ասոցացված անդամակցությունը Հորիզոն 2020 ծրագրին սկսված է 2016 թվականից:

2017-2019 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պետական նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումները: Գիտական ծրագրերի և թեմաների ֆինանսավորումն իրականացվելու է բացառապես ծրագրային սկզբունքով՝ գիտական ծրագրերով և թեմաներով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը հատկացվելու է մրցութային կարգով ընտրված հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ընտրված գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ապահովման, ինչպես նաև մրցութային կարգով ընտրված համատեղ օգտագործման գիտական սարքավորումների ձեռքբերման և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման նպատակով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորումը հատկացվելու է գերատեսչությունների կողմից մշակված, այդ թվում՝ երկակի նշանակության հիմնախնդիրների լուծման նպատակով: Կատարման ենթակա հիմնախնդիրների ցանկն ընտրվելու է միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, հաստատվելու է ՀՀ կառավարության կողմից, իսկ դրանց լուծմանն ուղղված ծրագրերի ընտրությունն իրականացվելու է մրցութային կարգով՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը հատկացվելու է որպես դրամաշնորհ՝ գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա, մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացման և գիտահետազոտական լաբորատորիաների աջակցության, միջազգային ճանաչում ունեցող գիտնականների նախաձեռնությունների խրախուսման նպատակով: Մասնավորապես, շարունակվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ համագործակցային ծրագիրը, Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիրը, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմաների, երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության նախագծերը, ասպիրանտների և երիտասարդ հայցորդների (մինչև 35 տարեկան), պետական գիտական ծրագրերում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների, այդ թվում՝ նաև երիտասարդ գիտաշ-

խատողների (մինչև 35 տարեկան) անհատական խրախուսման ծրագրերը, ինչպես նաև «AREAL» և «CYCLONE 18/18» գիտական սարքավորումների վրա իրականացվելիք ծրագրերը:

Բազային ֆինանսավորմամբ իրականացվող շարունակական ծրագրերում աշխատողների միջին ամսական աշխատավարձի մեկ հաշվարկային միավորը 2015-2016 թվականներին կազմել է 80.3 հազ. դրամ, իսկ 2017-2019 թվականների համար կկազմի, համապատասխանաբար՝ 85.0, 95.0 և 105.0 հազ. դրամ:

7.2.4 Ոլորտի գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2016-2019թթ. ժամանակահատվածի համար

Աղյուսակ . Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2016-2019թթ. ծախսերի կանխատեսում ամփոփ) (մլն դրամ)

		2016թ.	**փոփոխությունը %-ով**	**2017թ.**	**փոփոխությունը %-ով**	**2018թ.**	**Փոփոխությունը %ով**	**2019թ.**
	Գիտություն /առանց կապիտալ ծախսերի/, ընդամենը	14153,5	0,79	14264,8	7,55	15342,2	8,04	16575,9
	այդ թվում՝							
1	Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում	1359,2	1,85	1384,3	17,26	1623,2	17,14	1901,4
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	9,60		9,70		10,57		11,46
2	Բազային ֆինանսավորում	10946,3	0,79	11032,5	7,60	11870,9	6,94	12694,3
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	77,34		77,34		77,37		76,58
3	Նպատակային-ծրագրային ֆինանսավորում	1848,1	0,00	1848,1	0,00	1848,1	7,14	1980,1
	տեսակարար կշիռը գիտության ընդհանուր ծախսերի մեջ (%)	13,06		12,96		12,05		11,95

ԳԼՈՒԽ 8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

8.1 ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8.1.1 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Բնակչության առողջության պահպանումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կարևորագույն բաղադրամասը և հիմնական սոցիալական հիմնախնդիրներից մեկը: Միջնաժամկետ հատվածում առողջապահության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակելու է առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ նպատակ հետապնդելով առողջապահության ծառայությունների մատչելիության, հասանելիության և որակի բարձրացման ճանապարհով բարելավել բնակչության առողջական վիճակի բնութագրիչները:

Առողջապահության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, ախտորոշումը և բուժումը, բուժօգնության մատչելիության բարձրացումը և որակի ապահովումը, Հայաստանի Հանրապետության բնակչության առանձին խմբերի և առանձին հիվանդությունների համար երաշխավորված բուժօգնության մատուցումը, բուժօգնության ծախսերի անհրաժեշտությամբ պայմանավորված՝ անկանխատեսելի ֆինանսական ռիսկերից ապահովումը: Նշված նպատակներին հասնելու համար առողջապահության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

Հանրային առողջապահությունը հռչակելով որպես գերակայություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացնում բնակչության առողջության պահպանման ուղղությամբ: Այդ ծրագրերը համահունչ են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հովանու ներքո գործող Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) «Առողջություն 2020» համապարփակ քաղաքականության մոտեցումներին: Բնակչության առողջության պահպանման և բարելավման նպատակով առողջապահության ոլորտում իրականացվում են՝ բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման, բնակչության առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, ինչպես նաև սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բժշկական օգնության (այդ թվում

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման), դեղորայքային ապահովման նպատակային առողջապահական ծրագրեր:

8.1.1.1 Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս համակարգի անխափան գործունեության ապահովումը կենսական նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության առողջության պահպանման բնագավառում:

Հայաստանի Հանրապետությունում հանրային առողջության պահպանման գործում առկա են կարգավորման մեխանիզմներ, ձեռնարկված են արդյունավետ քայլեր վարակիչ և քրոնիկ ոչ վարակիչ հիվանդությունների, թունավորումների, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի, սոցիալ-տնտեսական, վարքագծային և հնարավոր այլ վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելման ուղղությամբ:

Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով շարունակական աշխատանքներ են տարվում հանրային առողջության, հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության ձևավորման, դրա իրականացման, կազմակերպչական ու մեթոդաբանական ղեկավարման, մոնիտորինգի, տեսչական հսկողության, փորձագիտական լաբորատոր ծառայությունների իրականացման, համընդհանուր լաբորատոր ցանցի գործունեության համակարգման ապահովման ուղղությամբ և այլն:

Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության է արժանացել «Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի նիստի N 50 արձանագրային որոշումը:

Հայաստանի Հանրապետությունում իմունականխարգելման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած «2016-2020 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրին, ազգային ծրագրի առաջնահերթ միջոցառումների ցանկին, պատվաստումների ազգային օրացույցին, իմունականխարգելման ազգային ծրագրի ակնկալվող արդյունքներին և պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի նիստի N 10 արձանագրային որոշման համաձայն, որի նպատակն է կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխումը և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովումը:

8.1.1.2 Բնակչության առողջության առաջնային պահպանումը

Առողջության առաջնային պահպանման ոլորտի շահառուներն են հանդիսանում Հայաստանի Հանրապետության ամբողջ բնակչությունը՝ անկախ տարիքից և սեռից:

Առողջության առաջնային պահպանման բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվում է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում գրանցված բնակչության համար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը, որը ներառում է ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը, ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը, տնային կանչերի իրականացումը, ընտանեկան բժշկի, տեղամասային թերապևտի (մանկաբույժի), իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի նշանակմամբ, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովումը:

«Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 6-ի թիվ 420-Ն որոշման համաձայն սահմանվում են առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության, նրա մոտ բնակչության գրանցման, ինչպես նաև առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկին փոխելու հետ կապված հարաբերությունները:

Հանրապետությունում առաջնային օղակի բարեփոխումները ուղղվել են ընտանեկան բժշկության ներդրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, որպես կառուցվածքային առավել արդյունավետ ու նպատակահարմար մոդելի, որի հիմնական ուղղվածությունն է հիվանդությունների կանխարգելումն ու վաղ հայտնաբերումը, բուժման և վերականգնողական միջոցառումների կազմակերպումը:

«Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բժիշկների անհատական և խմբային անկախ պրակտիկաների իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի թիվ 497-Ն որոշման համաձայն սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բժիշկների անհատական և խմբային անկախ պրակտիկաների իրականացման կարգը, պարտադիր պահանջներն ու պայմանները:

2014 թվականին ընդունվել է «Պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները և նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1529-Ն որոշումը:

Որոշակի աշխատանքներ են տարվել առաջնային բուժօգնության մակարդակում բուժօգնության որակի բարելավման, առավել տարածված ոչ վարակիչ և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, հանրային առողջապահության մոտեցումների ամրագրման, սոցիալական և առողջապահական ծառայությունների ինտեգրման ու այդ խնդրում համայնքների մասնակցության ապահովման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության են արժանացել «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի 2016-2020 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի նիստի N 4 և «Հայաստանի Հանրապետության բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 15-ի նիստի N 14 արձանագրային որոշումները:

Բուժօգնության առաջնային օղակի հետագա զարգացումը շարունակելու է մնալ առողջապահական ոլորտի գործունեության հիմնական թիրախը, քանի որ աղքատության հաղթահարման և անհավասարության մեղմման ու կայուն զարգացման տեսանկյունից կարևոր դերակատարություն ունի: Այն հնարավորություն է ընձեռում ապահովելու որակյալ և մատչելի բուժօգնություն ու դրանով պայմանավորված սոցիալական արդարության ու հավասարության սկզբունքներ բնակչության բոլոր խմբերի համար:

8.1.1.3 Մոր և մանկան առողջության պահպանման ապահովումը

Հայաստանի Հանրապետությունում երեխաների և կանանց կեցության բարելավման և առողջության պահպանության խնդիրները գտնվում են պետության հովանավորության ներքո: Դրանք ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով), ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերով:

2014 թվականի ընթացքում ընդունվել են երեխաների սնուցման բարելավմանն ուղղված քաղաքականությունը սահմանող երկու կարևորագույն փաստաթուղթ՝ «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի

սեպտեմբերի 25-ի N 40 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգը և հայեցակարգի իրականացման 2015-2020 թվականների գործողությունների ծրագիրը»:

2012 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության կառավարության N 1694-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը», որում արտացոլված են նաև երեխաների առողջապահական հիմնախնդիրները և գերակայությունները:

Հայաստանում երեխաների առողջապահական ծառայությունների մատուցումն իրականացվում է ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային և առողջարանային-վերականգնողական հաստատությունների միջոցով, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ոլորտային իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով:

2013 թվականի մարտի 7-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» N 214-Ն որոշումը, իսկ 2015 թվականի մայիսի 27-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշումը:

2015 թվականի նոյեմբերի 19-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման 2016-2020 թվականների գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» N 1353-Ն որոշումը, որով սահմանվել են հստակ միջոցառումներ՝ ուղղված կրծքով կերակրման քարոզչությանը, տեղեկատվության հավաքմանն ու վերլուծությանը, կրծքով կերակրման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթմանը, առողջապահական կազմակերպություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրմանը, կերակրող մայրերի և նրանց երեխաների համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանը և միջգերատեսչական համագործակցության ապահովմանը: 2015 թվականի սեպտեմբերի 25-ին հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Մանկական սնունդը և հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գներով տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 1105-Ն որոշումը:

Վերոհիշյալ փաստաթղթերում ամրագրված գերակայությունները և ռազմավարական դրույթները յուրաքանչյուր տարի իրենց արտացոլումն են գտնում առողջապահական պետական նպատակային ծրագրերում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով առողջապահությանն ուղղվող ծախսերում: Մասնավորապես այն ներկայացվում է մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի ձևով, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝

- երեխաների բժշկական օգնության կազմակերպում,
- մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովում:

Ֆինանսավորումը բյուջեից երկու ուղղություններով էլ իրականացվում է առողջապահական համակարգի ծառայությունների մատուցման առանձին ծրագրերի միջոցով (հիվանդանոցային, արտահիվանդանոցային և բյուջետային հարակից այլ ծրագրերի միջոցով):

8.1.1.4 Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության, ինչպես նաև սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության և դեղորայքով ապահովումը

Հիվանդանոցային բժշկական օգնության կազմակերպումը ներառում է սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարն ու սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման կազմակերպումը, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովումը և շարունակական բարելավումը առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների առաջնահերթ ուղղություններից մեկն է: Վերջինիս հետ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության են արժանացել «Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովման ռազմավարությանը հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի նիստի N 8 և «Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովման ռազմավարությունն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի նիստի N 52 արձանագրային որոշումները:

Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության են արժանացել «Տրավմատիզմի կանխարգելման 2015-2020 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբեի 17-ի նիստի N 55 և «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման 2016-2020 թվականների ազգային ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի

կառավարման 2016-2020 թվականների ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» 2016 թվականի մարտի 24-ի նիստի N 11 արձանագրային որոշումները: Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման 2016-2020 թվականների ազգային ռազմավարության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կանխել տուբերկուլյոզ հիվանդության տարածումը, ինչպես նաև նվազեցնել դեղակայուն տուբերկուլյոզով վարակված հիվանդների թիվը՝ ողջ բնակչությանը տուբերկուլյոզի կանխարգելման, ախտորոշման և բուժման համընդհանուր հասանելիության ապահովման ճանապարհով՝ դրանով իսկ նպաստելով նաև տուբերկուլյոզով հիվանդացության նվազեցմանը և տարածման կասեցմանը:

2014 թվականին ընդունվել է «Սոցիալական փաթեթի շահառուների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգը, սոցիալական փաթեթի շահառուի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության փաթեթը, ինչպես նաև առողջապահական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ձևավորման ու վարման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշումը, որում արտացոլված են պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման կարգը, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների փաթեթը, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման հավաստագրի տրամադրման կարգը, առողջապահական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ձևավորման ու վարման կարգը և պետական հիմնարկների ու կազմակերպությունների աշխատողների պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության փաթեթը:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, վաղ հայտնաբերման նպատակով 2015 թվականից սկսած սոցիալական փաթեթի շահառուները իրենց սպասարկող պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անցնում են տարեկան պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն:

«Սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև փրկարար ծառայության ծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների համար պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000

թվականի օգոստոսի 28-ի N 517 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշմամբ հաստատվել է նշյալ որոշման մեջ ներառված շահառուների պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման կարգը, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման ծառայությունների փաթեթը և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման ուղեգրի ձևը:

Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախատեսվում է սրտի անհետաձգելի վիրահատություն (ոչ դեղահատ ստենտի տեղադրում), որն իրականացվում է հանրապետության 11 բժշկական կազմակերպություններում:

Հիվանդանոցային բուժօգնության համակարգի զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման, ավելորդ հզորությունների կրճատման և բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներով:

Առողջապահության ոլորտի ռեսուրսների ռացիոնալ տեղաբաշխման և արդյունավետության բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվեց առողջապահության համակարգում բարեփոխումներ իրականացնելու որոշման անհրաժեշտությունը: Այդ նպատակով սկսվեց առողջապահական ծառայությունների օպտիմալացման գործընթացը՝ համապատասխանեցնելով այն բնակչության առողջապահական կարիքներին և բարելավելով բժշկական ծառայությունների որակն ու մատչելիությունը:

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը բնակչության համար: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է, որ որոշ հիվանդությունների և սոցիալական խմբերին պատկանելու դեպքում բնակիչներին իրավունք է տրվում դեղեր ձեռքբերել անվճար կամ արտոնյալ պայմաններով: Դեղերի որակի ապահովման պետական վերահսկողությունը դեղերի շրջանառության բոլոր փուլերում (արտադրություն, պատրաստում, պահպանում, իրացում, կիրառում) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից:

Առողջապահության ոլորտում մատուցվող հիմնական ծառայությունների շրջանակը ամփոփվում է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 8.1 Առողջապահության ոլորտում մատուցվող հիմնական ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ

N	**Ծառայությունների շրջանակի նկարագրություն**	**Շահառուների շրջանակի նկարագրություն**	**Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը**
1	Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում	ՀՀ ամբողջ բնակչություն	Պետական հատվածի կողմից ծառայությունը փոխհատուցվում է ամբողջությամբ
2	Բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովում	ՀՀ ամբողջ բնակչություն	Պետության կողմից անվճար արտահիվանդանոցային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության և ծառայությունների մասով
3	Մոր և մանկան առողջության պահպանման ապահովում	ՀՀ տարածքում բնակվող կանայք և երեխաներ	Վերարտադրողական տարիքի կանանց հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում (ծառայությունների ամբողջ ծավալի տրամադրման մասով), ինչպես նաև մինչև 18 տարեկան երեխաներին ամբուլատոր-պոլիկլինիկական ու անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնության և մինչև 7 տարեկան երեխաներին հիվանդանոցային բուժօգնության տրամադրում՝ ծառայությունների ողջ ծավալով, իսկ մնացած ծառայությունների մասով՝ մասնակի
4	Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության ապահովում	ՀՀ տարածքում բնակվող բոլոր քաղաքացիները	Ըստ սահմանված ծառայությունների մասով ամբողջությամբ
5	Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բժշկական օգնության ապահովում	Պետական պատվերի շրջանակներում անվճար հիվանդանոցային բուժօգնությունից օգտվում են միայն ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշմամբ և հետագա փոփոխություններով հաստատված բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձինք	Ըստ սահմանված ծառայությունների մասով ամբողջությամբ
6	Սոցիալական փաթեթի շահառուներին առողջապահական փաթեթի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և	ՀՀ պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողները, զինծառայողները և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքի անդամ-	Սոցիալական (առողջապահական) փաթեթում սահմանված ծառայությունների մասով՝ ամբողջությամբ

	սպասարկման ապահովում	ները, փրկարար ծառայության ծառայողները և նրանց ընտանիքի անդամները, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողները	
7	Բնակչությանը արտոնյալ և անվճար պայմաններով դեղերի ապահովում (Հիմք՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի հոդված 18)	ՀՀ բնակչության խմբեր (Հիմք՝ ՀՀ կառավարության 23.11.2006թ. N 1717-Ն որոշմամբ հաստատված ցանկեր)	Անվճար հատկացվող դեղերի մասով՝ ամբողջությամբ, արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի մասով՝ մասնակի

8.1.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

8.1.2.1 Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

2013-2015 թվականներին շարունակվել է հանրային առողջության և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության հետագա ձևավորումը և մշակումը:

«Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ և փակ բաժնետիրական ընկերություններ վերակազմակերպելու ու «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի N 1134-Ն որոշման համաձայն 18 հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական կենտրոններ, հատուկ վտանգավոր կանխարգելման կենտրոնը և «Ակուստիկա» ՓԲԸ-ն միաձուլման ձևով վերակազմակերպվել են, ստեղծելով «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Նշյալ կազմակերպության բազայի վրա ստեղծվել է ռեֆերենս լաբորատորիա: Համընդհանուր լաբորատորիայի ցանցի ստեղծման ծրագրի շրջանակներում իրականացվել են մի քանի տասնյակ միջոցառումներ: Մասնավորապես՝ մշակվել և ընդունվել է շուրջ 70 իրավական ակտ, արդյունքում կանոնակարգվել է լաբորատոր որակի կառավարման, կենսաանվտանգության, կադրերի պատրաստման, լաբորատոր հետազոտությունների կազմակերպման և այլ հարցեր:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 23-ին հաստատվել է «Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքային Հայաստանի Հանրապետության անդամակցության նպատակով միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզ) իրականացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» N 61-Ն որոշումը, որում ամրագրվել են նաև սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական ոլորտներում միջոցառումների իրականացման համար նախատեսվող քայլեր:

Կատարելագործվել է տարածաշրջանի և այլ երկրների հետ հանրային առողջապահության ոլորտում վարակիչ հիվանդությունների մասին փոխտեղեկատվության համակարգը:

Արտերկրից հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներբերման կանխարգելման հարցում խիստ կարևորվում է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում բժշկասանիտարական հսկիչ կետերի դերը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում բժշկասանիտարական հսկիչ կետերը գործում են որպես Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կառուցվածքային մաս: Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերն իրականացնում են պետական սահմանում վարակիչ հիվանդությունների բացահայտում, կասկած հարուցողների և հիվանդների մեկուսացում, հոսպիտալացման կազմակերպում, անհրաժեշտության դեպքում՝ նմուշառման, ախտահանման, կրծողազերծման, միջատազերծման աշխատանքների կազմակերպում:

Որպես ԱՀԿ անդամ և Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների մասնակից երկիր, ոլորտը կանոնակարգող մի շարք գործընթացներ են իրականացվել Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների երկրում ներդրման շրջանակներում: Ընդունվել են բազմաթիվ իրավական ակտեր, մեթոդական ուղեցույցներ և այլ փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են վարակիչ հիվանդությունների, քիմիական և ճառագայթային ախտահարումների, անսովոր և անսպասելի դեպքերի հայտնաբերման, հաշվառման Ազգային համակարգող մարմնին հաղորդման, արագ արձագանքման և այլ հարցերը:

Գործադրվել է առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագիրը, որի նպատակն է օրենսդրական, կառուցվածքային մեխանիզմների, ինչպես նաև միչգերատեսչական համակարգված միջոցառումների մշակման և ներդրման միջոցով նվազեցնել ոչ վարակիչ հիվանդություններից վաղաժամ մահացության ու հիվանդացության ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետությունում ներհիվանդանոցային վարակների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ծրագրի շրջանակներում մշակվել և ներդրվել են վարակի հսկողության նորմատիվ-մեթոդական փաստաթղթեր, մշակվել է ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանական հսկողության համակարգը, ԱՀԿ-ի մոտեցումներին համապատասխան աշխատանքներ են տարվել հակամանրէային կայունության հսկողության համակարգի ձևավորման ուղղությամբ: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացվել է ներհիվանդանոցային վարակների կանխարգելման միջոցառումների իրականացման գնահատում, կանոնակարգվել է բուժաշխատողների առողջության անվտանգության ապահովման ոլորտը:

Տարբեր ոլորտներում մշտապես իրականացվել են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավիճակի վերլուծություններ, հատկապես բնակչությանը խմելու ջրով ապահովման, հանրակրթական դպրոցների աշակերտների առողջական վիճակի և հիվանդացության, կրթական և նախակրթական հաստատություններում հիգիենիկ և հակահամաճարակային ռեժիմի պահպանման, իմունականխարգելման, տարբեր վարակիչ հիվանդություններով հիվանդացության նկատմամբ և այլն:

Իրականացվել է վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության համակարգում ներգրավված մասնագետների շարունակական կրթում և վերապատրաստում՝ այդ թվում միջազգային ծրագրերի շրջանակներում:

2015 թվականին պետական բյուջեից ավելի քան 3.1 մլրդ դրամ է օգտագործվել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով:

ԱՄՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի աջակցությամբ իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կնքվել և ավարտվել են ծրագրով նախատեսված մի շարք պայմանագրեր, մասնավորապես՝ ձեռք են բերվել բժշկական սարքավորումներ և գործիքներ, համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր, քիմիական նյութեր, թարգմանչական ծառայություններ, գրիպի համաճարակաբանական հսկողության համակարգի պահպանման նպատակով ամենամյա լաբորատոր նմուշների որակի, հիմնական կարողությունների գնահատման ծառայություններ, Երևան, Կապան և Վանաձոր քաղաքներում սեզոնային գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության համակարգի և լաբորատոր գործունեության պարբերաբար մշտադիտարկման և վերահսկման ծառայություններ, իրականացվել է համաճարակաբանների, առաջնային բժշկական օգնության կազմակերպությունների անձնակազմի և մասնագետների ուսուցում, գրիպի կանխարգելման և բուժման վերաբերյալ նորմատիվային փաստաթղթերի մշակում և ներդրում, սարքերի և սարքավորումների սպասարկում, տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում և այլն:

Իմունականխարգելման ազգային ծրագրի գծով արդյունավետ միջոցառումների իրականացումը մշտապես բարձր գնահատականի է արժանացել միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ԱՀԿ-ի կողմից: Հաջողված ծրագրերից է նաև աղի պարտադիր յոդացումը, որի շնորհիվ բնակչության շրջանում զգալիորեն նվազել են յոդի անբավարարությամբ պայմանավորված առողջական խնդիրները:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում իմունականխարգելման աշխատանքներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «2010-2015 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը,

իմունականխարգելման առաջնահերթ միջոցառումների ցանկը, իմունականխարգելման աշխատանքները համակարգող հանրապետական հանձնաժողովի կազմը, պատվաստումների ազգային օրացույցը, պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևը և իմունականխարգելման ազգային ծրագրի խնդիրները և ակնկալվող արդյունքները հաստատելու մասին» N 46-Ն որոշման համաձայն:

Իմունականխարգելումը հանրային առողջապահության տնտեսապես բարձր արդյունավետ ռազմավարություններից է: Հայաստանի Հանրապետությունում Իմունականխարգելման ազգային ծրագրի գործարկման արդյունավետությունը գնահատվում է երկու հիմնական բնութագրիչների միտումներով՝ պատվաստումներում նպատակային բնակչության ընդգրկման ցուցանիշների և կառավարելի վարակիչ հիվանդությունների հիվանդացության:

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում պլանային պատվաստումների միջոցով կանխարգելվող վարակիչ հիվանդություններն են՝ դիֆթերիան, կապույտ հազը, փայտացումը, կարմրուկը, կարմրախտը, համաճարակային պարոտիտը (խոզուկ), պոլիոմիելիտը, հեպատիտներ «Ա»-ն և «Բ»-ն, տուբերկուլյոզը, հեմոֆիլուսային Բ տեսակի վարակը (ՀԻԲ), տուլարեմիան, սեզոնային գրիպը, ռոտավիրուսային, պնևմակոկային և մենինգակոկային վարակը, որոնք ներառված են Պատվաստումների ազգային օրացույցում: Հայաստանի Հանրապետությունում պլանային կանխարգելիչ պատվաստումներում ընդգրկվածության բարձր մակարդակի ապահովումը և մանկական մահացության նվազեցման նպատակով նոր պատվաստանյութերի ներդրումը «Հազարամյակի մարտահրավերների» գերակա խնդիրների հաղթահարմանն ուղղված ռազմավարություններից են: Մանկական հասակում պատվաստելով՝ միլիոնավոր մեծահասակներ կարող են փրկվել այնպիսի վարակիչ հիվանդություններից, որոնք թաքնված ընթացք ունեն մանկական հասակում և արտահայտվում են մեծ տարիքում:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո երկրի Պատվաստումների ազգային օրացույցով նախատեսված պատվաստանյութերի պահանջը և մշտական պահուստային քանակությունների առկայությունն ապահովվել է դոնոր կազմակերպությունների (հիմնականում՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու ԳԱՎԻ՝ Պատվաստումների և պատվաստանյութերի գլոբալ դաշինքի) կողմից: 2005 թվականից անհրաժեշտ պատվաստանյութերի գնման գործընթացում մասնակցել է նաև պետությունը՝ տարեցտարի ավելացնելով ներդրումների չափը: Համապատասխանաբար՝ դոնոր կազմակերպությունների աջակցությունն աստիճանաբար նվազել է:

Գծանկար 8.1 Պետական մասնակցությունը պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում (%-ով)



Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով պատվաստանյութերի գնման համար նախատեսվել է 1,890.4 մլն դրամ՝ 2005թ 16.0 մլն դրամի փոխարեն (աճ՝ 118 անգամ):

Իմունականխարգելման ոլորտում վերջին տարիներին հանրապետությունում իրականացվող քաղաքականությունը համապատասխանեցվում է ԱՀԿ-ի մոտեցումներին և չափանիշներին: 2008 թվականից դիտվում է կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ կատարվող պատվաստումներում բնակչության նպատակային խմբերի ընդգրկման ցուցանիշների կայուն աճ:

Գծանկար 8.2 Պատվաստումներում բնակչությանն նպատակային խմբերի ընդգրկումը ըստ առանձին տարիների (%-ով)

Այսպես, 2015 թվականին մինչև մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկումը տուբերկուլյոզի, հեպատիտ Բ-ի, դիֆթերիայի, ռոտավիրուսային վարակի, կապույտ հազի, պնևմակոկային վարակի, փայտացման, հեմոֆիլուսային Բ վարակի, պոլիոմիելիտի դեմ պատվաստումներում կազմել է 92.0%՝ 2008 թվականի 86.0%-ի փոխարեն, մինչև երկու տարեկան երեխաների ամբողջական ընդգրկումը անհրաժեշտ պատվաստումներում կազմել է 94.0%՝ 2008 թվականի 82.0%-ի փոխարեն, իսկ մինչև 7 տարեկան երեխաների ամբողջական ընդգրկումը անհրաժեշտ պատվաստումներում կազմել է 97.0%՝ 2008 թվականի 93.0%-ի փոխարեն: 2015

թվականին մեկ տարեկան երեխաների շրջանում դիտվում է ցուցանիշի նվազում 1%-ով՝ հանրապետությունում նոր պնևմակոկային պատվաստումների ներդրման հետևանքով:

Այսպիսով՝ համաձայն վարչական վիճակագրական հաշվետվությունների՝ նպատակային տարիքի երեխաների 90 տոկոսից ավելին ստանում են իրենց անհրաժեշտ պատվաստումները, որը միջազգային ստանդարտներով բավարար ցուցանիշ է:

Զգալի նվաճումներ են արձանագրվել նաև ՄԱԿ-ի կողմից հռչակած Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) հասանելիության ուղղությամբ: Համաձայն ՀԶՆ-ի նպատակային ցուցանիշ է ընդունվել նաև կարմրուկի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը: Հանրապետությունում ակնառու է կարմրուկի և կարմրախտի դեմ պատվաստումներում նպատակային խմբի ընդգրկվածության ցուցանիշների բարելավումը՝ 2008 թվականից դիտվում է ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ) պատվաստումներում բնակչության ենթակա խմբերի (1 և 6 տարեկաններ) ընդգրկման ցուցանիշների կայուն բարելավում:

Գծանկար 8.3 ԿԿԽ պատվաստումներում մեկ և վեց տարեկան երեխաների ընդգրկումը ըստ առանձին տարիների (%-ով)

2007 թվականին կարմրուկի և կամրախտի դեմ իրականացված զանգվածային պատվաստումների շնորհիվ, իսկ հաջորդիվ՝ պլանային պատվաստումներում 97.0% ընդգրկման ապահովման արդյունքում (որը գերազանցում է ՀԶՆ-ի 2015 թվականի համար սահմանված 96.0% ցուցանիշին) հաջողվել է վերահսկել այս հիվանդությունները: Մինչդեռ այս օրերին աշխարհի շատ երկրներում՝ ԱՄՆ-ում, Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Ղազախստանում, Ղրղըստանում և այլուր, լուրջ խնդիր են կարմրուկը և կարմրախտը: Հայաստանի հարևան երկրներում՝ Վրաստանում և Թուրքիայում, դեռևս 2013 թվականից սկսված կարմրուկի բռնկումը շարունակվում է մինչև օրս: 2013-2015 թվականներին հանրապետությունում գրանցվել են կարմրուկի առումով անբարենպաստ երկրներից բերովի 30 դեպք: Ժամանակին ձեռնարկված հակահամաճարակային միջոցառումների շնորհիվ հաջողվել է կանխարգելել հիվանդության տարածումը:

Իմունականխարգելման ազգային ծրագրի հաջող գործադրման արդյունքում Հայաստանում զգալիորեն նվազել են փայտացման դեպքերը, իսկ կապույտ հազը և պարոտիտը (խոզուկը) արձանագրվել են միայն եզակի դեպքերի ձևով:

Պատվաստումների շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում 1995 թվականից այլևս չի արձանագրվում պոլիոմիելիտ հիվանդությունը, որը նախկինում տարեկան առնվազն 2-3 երեխայի

հաշմանդամության պատճառ եր դառնում: Հայաստանը՝ ի թիվս եվրոպական այլ երկրների, ՄԱԿ-ի, ԱՀԿ-ի կողմից դեռևս 2002 թվականից հավաստագրվել է և շարունակում է մնալ որպես պոլիոմիելիտից ազատ գոտի: Վերջին 15 տարվա ընթացքում չեն արձանագրվել նաև դիֆթերիայի դեպքեր, այն դեպքում, երբ հանրապետության հետ սոցիալ-տնտեսական կապ ունեցող, ինչպես նաև հարևան երկրներում, դեռևս արձանագրվում են դիֆթերիայի հիվանդացման բազմաթիվ դեպքեր՝ նույնիսկ բռնկումների ձևով:

2011 թվականին ԱՀԿ-ի կողմից Հայաստանը հավաստագրվել է նաև որպես մալարիայից ազատ տարածք: Հայաստանի Հանրապետության տարածքում մալարիայի կրկին արմատավորումը կանխարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագրին և Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշումը, որի համաձայն իրականացված համալիր կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների արդյունքում հանրապետությունում տեղական ծագման մալարիայի դեպքեր չեն արձանագրվել:

Հեմոֆիլուսային Բ բաղադրիչով հնգավալենտ պատվաստումների իրականացման շնորհիվ 5 տարվա կտրվածքով հանրապետությունում մինչև 5 տարեկան երեխաների շրջանում մոտ 4.4 անգամ նվազել է մենինգիտով հիվանդացությունը: Ռոտավիրուսային պատվաստումների ներդրման արդյունքում 2015 թվականին մինչև 5 տարեկան երեխաների շրջանում դիտվեց ռոտավիրուսային վարակներով պայմանավորված հոսպիտալացման մակարդակի մոտ չորս անգամ նվազում:

Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների դեմ տարվող իմունականխարգելման բազմակողմանի աշխատանքի, կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ կատարվող պատվաստումների ցուցանիշների կայուն աճի շնորհիվ վերջին տարիներին չեն արձանագրվել այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են խոլերան, կատաղությունը, որովայնային տիֆը, պարատիֆերը, ռիկետցիոզները (այդ թվում բծավոր տիֆ, Բրիլլի հիվանդություն) և այլն:

Սակայն 2015 թվականին հանրապետությունում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների աճ 1.3 անգամ, որին զգալիորեն նպաստել է աննախադեպ շոգ եղանակը: Հատկապես աճել է մանրէային դիզենտերիայով հիվանդացությունը՝ շուրջ 2.7 անգամ: Հայաստանում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների մի շարք բռնկումներ՝ ինչպես սննդային, այնպես էլ ջրային գործոնով պայմանավորված:

2014 թվականի ձմեռային զորակոչից սկսած Հայաստանի Հանրապետության զինված ուժեր զորակոչի ենթակա անձանց կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են հանրապետության զինկոմիսարատներին կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ նախկինում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական հավաքակայանում կատարվող պատվաստումային գործընթացի փոխարեն: 2015 թվականից հանրապետության բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացվում են նաև նախազորակոչային տարիքի անձանց կանխարգելիչ պատվաստումները: Զորակոչիկների և նախազորակոչիկների կանխարգելիչ պատվաստումների կազմակերպման նման մոտեցման արդյունքում հետպատվաստումային շրջանում սահմանվում է առողջական վիճակի նկատմամբ լիարժեք հսկողություն, բացի դրանից զորակոչիկը և նախազորակոչիկը հետպատվաստումային շրջանում գտնվում են ընտանիքում և չեն ենթարկվում փոփոխվող միջավայրի տարբեր գործոնների ազդեցությանը՝ ի տարբերություն կանխարգելիչ պատվաստումների իրականացման նախկին մոտեցմանը:

Կարևորելով օգտագործվող պատվաստանյութերի որակը և անվտանգությունը՝ հանրապետությունում զգալիորեն բարելավվել է պատվաստանյութերի պահպանման և տեղափոխման համար անհրաժեշտ սառցային շղթան: Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները ՄԱԿ ՄՀ-ի, ԱՀԿ-ի և ԳԱՎԻ օժանդակությամբ 2014-2015 թվականներին համալրվել են ժամանակակից, ԱՀԿ որակի չափանիշներին համապատասխանող սառնարաններով և սառնարան-սենյակներով, ինչպես նաև ջերմային ռեժիմը գրանցող էլեկտրոնային սարքավորումներով, որը հնարավորություն է տալիս, բացառելով մարդկային գործոնը, լիարժեք հսկողություն սահմանել սառնարանների ջերմային ռեժիմի նկատմամբ:

8.1.2.2 Բնակչության առողջության առաջնային պահպանում

Բնակչության առողջության առաջնային պահպանման ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը վերջին տարիներին դրսևորվել է միանշանակ վարքագծով, որը արտահայտվել է առողջապահության համակարգի ֆինանսավորման ներկա մակարդակի պայմաններում անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության կազմակերպմամբ առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակի բոլոր մակարդակներում, առանց տեսակների և ծավալների սահմանափակման: Արդյունքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների միջին տարեկան թիվը մեկ բնակչի հաշվով 2000 թվականի 2,1-ի համեմատ 2015 թվականին կազմել է 4.0:

Առողջության առաջնային պահպանման հաստատություններ բնակչության հաճախումների ավելացման տենդենցը ենթադրում է, որ թիրախ է ընտրված հիվանդությունների վաղ հայտնաբերումը և կանխարգելումը: Վերջին տարիների ընթացքում առողջության առաջնային պահպանման մակարդակում տեղի են ունեցել զարգացման նկատելի դրական տեղաշարժեր

ինչպես բնագավառի գործունեության հիմնական ցուցանիշների բարելավման առումով, այնպես էլ ֆինանսական ցուցանիշների առումով:

2014 թվականի հուլիսի 1-ից 60-70 տոկոսով բարձրացվել է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների աշխատավարձը:

2010 թվականից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բուժանձնակազմի վարձատրության մեխանիզմների մեջ, համապատասխան ցուցանիշների ապահովման դեպքում, ներդրվեց ըստ կատարողականի որակի խրախուսող վարձատրման համակարգ: Խրախուսող վարձատրման համակարգն ամբողջությամբ վերաբերում է առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բժիշկների կողմից (ընտանեկան բժիշկ, տեղամասային թերապևտ, տեղամասային մանկաբույժ) հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման կատարողականին: 2012 թվականին առողջության առաջնային պահպանման ծառայություններ իրականացնողների պայմանագրային գումարներում ներառվեցին յուրաքանչյուր բնակչի հաշվով հատկացվելիք խրախուսական ֆինանսավորման չափերը: 2012 թվականի արդյունքներով արտահիվանդանոցային բուժօգնության ծառայություններ մատուցող 332 բուժհաստատություններից խրախուսական ֆինանսավորում ստացան 204-ը, 2013 թվականին՝ 346 բուժհաստատություններից խրախուսական ֆինանանսավորում ստացան 344-ը, 2014 թվականին՝ 348 բուժհաստատություններից խրախուսական ֆինանսավորում ստացան 198-ը, իսկ 2015 թվականին՝ 350 բուժհաստատություններից խրախուսական ֆինանսավորում ստացան 246-ը: Բուժանձնակազմի խրախուսական վարձատրությունը 2012 թվականին կազմել է շուրջ 45,0 մլն դրամ, 2013 թվականին՝ 124.7 մլն դրամ, 2014 թվականին՝ 91.0 մլն դրամ, իսկ 2015 թվականին՝ 125.5 մլն դրամ:

Առողջության առաջնային պահպանման օղակում խրախուսական վարձատրության համակարգի ներդրումը հնարավորություն է ընձեռել առավել վերահսկելի դարձնել բուժհաստատությունների կատարած աշխատանքը, իսկ բուժհաստատությունների ներսում՝ առավել վերահսկելի և չափելի դարձնել բժիշկների գործունեությունը՝ բժիշկների կողմից բնակչությանը մատուցվող առողջության առաջնային պահպանման ծառայությունների որակը, բժիշկների իրական ծանրաբեռնվածությունը:

Հետևաբար ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության որակի բարելավման հիմնական ուղղվածությունը առողջության առաջնային պահպանման ծառայությունների հզորացումն է և այդ ենթատեքստում՝ ընտանեկան բժշկության ինստիտուտի կայացումը: Թեև առողջության առաջնային պահպանումը դիտարկվում է առողջապահության համակարգի գերակա ուղղություններից մեկը և որպես բարեփոխման իրականացման ճանապարհ է ընտրվել այլ երկրներում գործարկված ու առավել արդյունավետ ճանաչված ընտանեկան բժշկության ներդրումը, ներկայում արձանագրվում է, որ այն բերել է զգալի առաջընթացի հանրապետության մարզերում

(հատկապես գյուղական վայրերում), մինչդեռ, մեծ քաղաքներում և հատկապես մայրաքաղաքում՝ դեռևս լիարժեք չէ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում, որպես հիմնական խոչընդոտ ներկայացվել է անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և շենքային պայմանների բացակայությունը և քաղաքային պոլիկլինիկաներում մեծ թվով նեղ մասնագետների առկայությունը, որն առավել ակնառու է Երևանի փոքրաթիվ բնակչություն սպասարկող պոլիկլինիկաներում: Ընտանեկան բժշկության ծառայությունը հասանելի է քաղաքային բնակչության 85%-ի, իսկ գյուղական բնակչության 100%-ի համար:

Քաղաքային պոլիկլինիկաներում ընտանեկան բժշկության համակարգի կայացման տեսանկյունից կարևորվում են ընտանեկան բժշկության խմբային պրակտիկաները, որոնք աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված ըստ սպասարկվող (գրանցված) բնակչության թվի ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա: 2015 թվականին հանրապետությունում գործել են 5 ընտանեկան բժշկության անհատական և խմբային անկախ պրակտիկաներ, որոնք մատուցել են առողջության առաջնային պահպանման ծառայություններ պետական պատվերի շրջանակներում:

Հանրապետության 255 գյուղական առողջության առաջնային պահպանման հաստատություններում ամբողջությամբ ներդրվել է ընտանեկան բժշկության համակարգը: Գյուղական բոլոր հաստատություններն ապահովված են բուժսարքավորումների հավաքածուով, համակարգչով և համակարգչային ծրագրերի փաթեթով: Համաշխարհային Բանկի վարկային ծրագրի շրջանակներում 2014 թվականին ավարտվել են Հայաստանի Հանրապետության մարզերի 5 գյուղական համայնքների ամբուլատորիաների կառուցման և 1 ամբուլատորիայի հիմնանորոգման աշխատանքները, 21 համայնքային ամբուլատորիաների համար կահույքի մատակարարման գործընթացը, շտապ օգնության թվով 10 ավտոմեքենաների հիմնանորոգման և բաշխման գործընթացը: 2015 թվականին շահագործման են հանձնվել ՀՀ Արմավիրի մարզում՝ Մեծամորի բժշկական կենտրոնի հիմնանորոգված պոլիկլինիկական հատվածը, Ակնալճի բժշկական ամբուլատորիայի նորակառույց շենքը, ՀՀ Տավուշի մարզում՝ Ոսկեվանի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը, Բագրատաշենի բժշկական ամբուլատորիայի նորակառույց շենքը, Նավուրի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը, Բերդավանի առողջության կենտրոնի հիմնանորոգված շենքը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Ճամբարակի առողջության կենտրոնը, ՀՀ Արարատի մարզում՝ Քաղցրաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոնի նորակառույց շենքը, ՀՀ Լոռու մարզում՝ Լեռնապատի առողջության կենտրոնի նորակառույց շենքը, որոնք հագեցած են բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով: Ավարտվել են նաև ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի բժշկական ամբուլատորիայի և ՀՀ Վայոց ձորի մարզի

Հռիփսիմեի առողջության կենտրոնի շենքերի կառուցման աշխատանքները: Ընթացքում են՝ Արարատի մարզում՝ Մխչյանի և Լանջազատի, իսկ Լոռու մարզում՝ Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոնների շենքերի կառուցման աշխատանքները:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով 2015 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում իրականացվող ՈՎՀ (Ոչ վարակիչ հիվանդությունների) սկրինինգային ծրագիրը, որի շրջանակում 35-ից 68 տարեկան Հայաստանի բոլոր քաղաքացիները հնարավորություն ունեն անվճար հետազոտվելու սպասարկող առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատություններում՝ զարկերակային գերճնշման և շաքարային դիաբետի վաղ հայտնաբերման ու ախտորոշման, իսկ 30-ից 60 տարեկան բոլոր կանայք՝ արգանդի պարանոցի նախաքաղցկեղի վաղ ախտորոշման և քաղցկեղի կանխարգելման նպատակով:

Հանրապետության տարածքում շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով իրակա-նացվում է արտահիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը ամբողջ բնակչության համար: «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2015 թվականին սպասարկվել է 477.3 հազար կանչ, փաստացի ծախսերը կազմել են ավելի քան 3.3 մլրդ դրամ (2010 թվականին նշյալ ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ):

Շտապ օգնության ծառայությունում տարիների ընթացքում կուտակվել էին մի շարք խնդիրներ կապված մեքենաների տեխնիկական վիճակի, կապի ժամանակակից ծառայության բացակայության, կանչերի սպասարկման որակի, դեղորայքային ապահովության, շտապ օգնության կանչերի արժեքի փոխհատուցման և անձնակազմի վարձատրման սկզբունքների հետ:

Շտապ օգնության բարեփոխումների համալիր ծրագրի իրականացման արդյունքում Երևանում ստեղծվեց կապի ժամանակակից միջոցներով, այդ թվում GPS համակարգով հագեցած միասնական կենտրոն՝ Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ կենտրոնի ծառայության բազայի վրա: Վերջինս թույլ տվեց կանչերին արձագանքել կրկնակի անգամ արագ՝ 7-12 րոպեում, նախկինում 15-20 րոպեի փոխարեն: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից նվիրաբերված 88 շտապօգնության մեքենաներ բաշխվեցին Երևանի և հանրապետության մարզային բժշկական հաստատությունների միջև: «Աջակցություն շտաբ բուժօգնության ծառայություններին» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրով 2012-2014 թվականների ընթացքում շտապ օգնության ծառայությանը հատկացվեց 439.7 մլն դրամ:

Շտապօգնության բժիշկների, բուժքույր/բուժակների և վարորդ-սանիտարների կրթական նոր ծրագրերի հիման վրա վերապատրաստվեցին 298 բժիշկներ, 464 միջին բուժաշխատողներ և 306 վարորդներ:

Ծառայության փոխհատուցման սկզբունքների, գների և բուժանձնակազմի վարձատրման մեխանիզմներում կիրառվեց նոր մոտեցում՝ կապված կանչերի հեռավորությունից, կանչերը սպասարկող բուժհաստատության տեսակից: Պայմանագրային գումարների հաշվարկման համար հաստատվեցին 1000 բնակչի հաշվով սպասարկման դիֆերենցված նորմատիվներ՝ ելնելով բուժհաստատության հզորությունից և սպասարկվող բնակչության թվաքանակից: Հաշվարկված պայմանագրային գումարները համապատասխանեցվեցին ծառայության իրականացման համար անհրաժեշտ ծախսերին:

8.1.2.3 Մոր և մանկան առողջության ապահովումը

Վերջին տարիներին հաջողությամբ իրականացվել է 2008 թվականից ներդրված «Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման ծրագիրը»: Նախածննդյան առնվազն մեկ այց կատարած հղիների ցուցանիշը կազմել է 99%, իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը հասել է 99.4%-ի: Ծրագրի հաջող իրականացմանը նպաստել են տարեցտարի աճող բյուջետային հատկացումները: Այսպես, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» հիվանդանոցային ծառայության ծրագրի գծով նախատեսվել է 6,945.3 մլն դրամ՝ 2006 թվականի 1,993.9 մլն դրամի փոխարեն (աճ՝ 3.5 անգամ): Հանրապետությունում ծննդօգնության ծառայությունների հետ կապված ոչ պաշտոնական վճարումները կրճատվել են ավելի քան 10 անգամ (գյուղ՝ 16 անգամ, քաղաք՝ 7.7 անգամ): Ծրագրի ներդրումը զգալիորեն նպաստել է բնակչության համար ծննդօգնության իրապես անվճար ու մատչելի ծառայությունների մատուցմանը: 2015 թվականի ընթացքում ապահովվել է շուրջ 75000 հղիների նախածննդյան հսկողություն:

Ծննդօգնության պետական հավաստագրի տրամաբանական շարունակականությունը դարձավ 2011 թվականի հունվարի 1-ից մինչև 7 տարեկան երեխաների պետական հավաստագրի համակարգի ներդրումը, որը զգալիորեն բարելավեց նորածնային և վաղ հասակի երեխաների բժշկական օգնության և սպասարկման որակն ու մատչելիությունը: Հավաստագրի համակարգի ներդրմամբ ոչ պաշտոնական վճարումները կրճատվել են ավելի քան 4 անգամ: Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» հիվանդանոցային ծառայության ծրագրի գծով նախատեսվել է 8,043.2 մլն դրամ՝ 2006 թվականի 1,772.9 մլն դրամի փոխարեն (աճ՝ 4.5 անգամ): 2015 թվականին հիվանդանոցային բուժում է ստացել շուրջ 62000 երեխա:

Ծննդօգնության և երեխայի առողջության պետական հավաստագրերի ծրագրերի շարունակական իրականացումը նպաստեց մանկաբարձական և մանկական ծառայությունների բնութագրական ցուցանիշների բարելավմանը:

ՄԱԿ-ի Հազարամյակի նպատակների հասանելիության համատեքստում կատարված վերլուծությունը փաստում է, որ 1990-2014 թվականների ժամանակահատվածում մանկական մահացության ցուցանիշը կրճատվել է 53%-ով, իսկ մայրական մահացության ցուցանիշը՝ ավելի քան կիսով չափ: 2015 թվականի ընթացքում հանրապետության ծննդօգնության կազմակերպություններում արձանագրվել է մայրական մահացության 5 դեպք, այն էլ ոչ մանկաբարձական բարդություններից:

Միևնույն ժամանակ 2011-2013 թվականներին ծնունդների տարեկան թվաքանակի նվազմանը և 2014 թվականին գրանցված նշանակալի աճին 2015 թվականին կրկին հաջորդեց ծնունդների թվաքանակի նվազում:

Ստորև ներկայացվում է փաստացի ծնունդների պատկերը Հայաստանում ըստ տարիների.

Գծանկար 8.4 Փաստացի ծնունդները Հայաստանում



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

1990 թվականի համեմատությամբ հանրապետությունում ծնելիությունը նվազել է 1.9 անգամ: Ծնելիության ցուցանիշը 1000 բնակչի հաշվով 2015 թվականին՝ 1990 թվականի համեմատ նվազել է 22.5–ից մինչև 13.9-ի: Նույն ժամանակաշրջանում ընդհանուր մահացությունը աճել է՝ 1990 թվականի 1000 բնակչի հաշվով 6.2-ից 2015 թվականին հասնելով մինչև 9,3-ի, իսկ բնակչության բնական աճի ցուցանիշը նվազել է 3.5 անգամ՝ համապատասխանաբար 16.3–ից նվազելով մինչև 4.6-ի:

Գծանկար 8.5 Ծնվածներ և մահացածներ 1000 բնակչի հաշվով, բնակչության բնական աճը



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Հայաստանը ներկայում դասվում է ցածր ծնելիությամբ երկրների շարքին: Այն դեպքում, երբ բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ է, որ մեկ կինն ունենա առնվազն 2.1 երեխա, Հայաստանում, ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության տվյալների այդ ցուցանիշը 2015 թվականին կազմել է 1.4:

Ծնելիության նվազման անխուսափելի հետևանքն է բնակչության ծերացումը: Հայաստանի Հանրապետությունում 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմում է 10.6%: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե այս ցուցանիշը 7.0%-ից բարձր է, ապա այդպիսի բնակչությունը համարվում է ծերացած: Հայաստանում բնակչության ծերացման հիմնական պատճառներն են երիտասարդների միգրացիան, ծնելիության ցածր ցուցանիշը և կյանքի տևողության երկարումը:

Կյանքի սպասվելիք տևողության փոփոխությունը ներկայացված է ստորև.

Գծանկար 8.6 Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, տարի



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Ըստ ազգային վիճակագրության ծառայության կանխատեսումների, Հայաստանի բնակչությունը 2035 թվականին կկազմի 2.9 միլիոն:

Այնուհանդերձ, «Երեխայի առողջության պետական հավաստագրի» ներդրման շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում վերջին տարիների ընթացքում արձանագրվել է երեխաների հիվանդացության և մահացության հետ կապված մի շարք ցուցանիշների կտրուկ բարելավում:

2013 թվականին առաջին անգամ արձանագրվեց մանկական (մինչև մեկ տարեկան երեխաների) մահացության ցուցանիշի աննախադեպ՝ 10.0‰ նիշից ցածր մակարդակ (9.7‰): Ըստ ԱՀԿ դասակարգման Հայաստանը մանկական մահացության միջին մակարդակ (10-20‰) ունեցող երկրների դասից տեղափոխվեց մանկական մահացության ցածր (10‰-ից ներքև) մակարդակ ունեցող երկրների շարք:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրության ծառայության տվյալների 2015 թվականին 2013 թվականի համեմատ արձանագրվել է 0-1 տարեկան երեխաների մահվան դեպքերի նվազում 9.9 %-ով, իսկ մանկական մահացության գործակիցը 1000 կենդանի ծնվածի հաշվով կազմել է 8.8‰ (ՀԶՆ-ով սահմանված 8.2‰)՝ 2013 թվականի 9.7‰-ի համեմատ: Մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը 1000 կենդանի ծնվածի հաշվով 2015 թվականին կազմել է 10.4‰ (ՀԶՆ-ով սահմանված 9.6‰) 2013 թվականի համանման ցուցանիշի՝ 11.0‰-ի համեմատ:

Աղյուսակ 8.2 Մանկական մահացությունը

Ցուցանիշ	Հայաստան		ԵՄ	ԱՊՀ
	1990	2015	2015	2015
Մանկական մահացություն (մինչև 1 տարեկան), 1000 կենդանի ծնվածի հաշվով	18.5	8.8	5.1	13.1

Հայաստանում մանկական մահացության ցուցանիշը բարենպաստ է ԱՊՀ շատ երկրների համեմատությամբ, սակայն գերազանցում է Եվրոպական երկրների միջին մակարդակը:

«Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարությանը և դրա ներդրման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի N 37 և «Երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության բարելավման 2013-2015 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի նիստի N 27 արձանագրային որոշումների շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված երեխաների և դեռահասների առողջության բարելավմանը:

2013 թվականին առողջապահության համակարգի ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում ներդրվել է բոլոր նորածինների մոտ Վիտամին

Կ-ի պարտադիր կիրառման գործելակարգը՝ ուղղված նորածնային հեմոռագիկ հիվանդության կանխարգելմանը, հնարավորություն ստեղծելով տարեկան շուրջ 30 մանկիկի մոտ կանխել ծանրագույն հետևանքներով այդ հիվանդությունը:

2015 թվականին ընդլայնվել են բնածին ախտաբանությունների վաղ հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերը, ընդ որում սկրինինգների արդյունքում երեխաներին տրամադրվել է բուժօգնություն՝ պետական պատվերի շրջանակներում, իսկ ֆենիլկետոնուրիայով երեխաներին՝ նաև հատուկ սնունդ: 2015 թվականի դեկտեմբեր ամսից ներդրվել է նորածինների սրտի կրիտիկական արատների վաղ հայտնաբերման նոր սկրինինգը (իրականացվել է 111722 սկրինինգ հետազոտություն), որի արդյունքում հայտնաբերվել է 99 հիվանդ երեխա, բոլորին տրամադրվել է բուժօգնություն պետական պատվերի շրջանակներում:

Մանկական մահացության նվազեցման հարցում կարևոր դեր են ունեցել նաև Պատվաստումների ազգային օրացույցում ներդրված հնգավալենտ և ռոտավիրուսային պատվաստանյութերը:

Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայությունների ձեքբերման համար 2015 թվականին հատկացվել է շուրջ 250.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 2150 հաշմանդամ երեխաներին:

Վերջին տարիներին իրականացվել են միջոցառումներ՝ մանկական վերակենդանացման մարզային ծառայությունների հզորացման, կադրային ներուժի զարգացման, օրենսդրական և ծրագրային փաստաթղթերի մշակման ուղղություններով: Ստեղծվել են մարզային մանկական վերակենդանացման բաժանմունքներ նորածնային մահճակալներով՝ Կապանում և Վանաձորում, հզորացվել է ծառայությունը Գյումրիում:

Իրականացվել են մասնագետների վերապատրաստումներ տեղում և Երևանի առաջատար կլինիկաներում: 2014-2015 թվականների ընթացքում մասնագիտական գիտելիքների և հմտությունների բարձրացման նպատակով շուրջ 100 մասնագետներ (մանկաբույժներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, անեսթեզիոլոգներ, նեոնատոլոգներ) վերապատրաստվել են Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի առաջատար կլինիկաներում:

Վերջին տարիներին Հայաստանում բարելավվել է նաև մայրական մահացության ցուցանիշը (դեպքերի թիվը՝ 100000 կենդանի ծնունդի նկատմամբ), որը համարվում է մայրության առողջության վիճակն արտացոլող ինտեգրալ ցուցանիշ: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրության ծառայության տվյալների մայրական մահացության 2013-2015 թվականների ինդեքսը կազմել է 18.2՝ 100000 կենդանի ծնվածի հաշվով, 1999-2001 թվականների՝ 40.3-ի համեմատ: Մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշը շուրջ 1.6 անգամ ցածր է ԱՊՀ երկրների միջին

ցուցանիշի (29.3) համեմատ, սակայն զգալի գերազանցում է Եվրամիության երկրների ցուցանիշի միջին մակարդակը (5):

«Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրն ու 2007–2015 թվականների գործողությունների ժամանակացույցը» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի նիստի N 29 արձանագրային որոշման շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված վերարտադրողական և մայրության առողջության բարելավմանը:

Հղիների բուժսպասարկման ոլորտում շուրջ 40%-ով ավելացել է հղիների նախածննդյան հսկողության վաղ հաշվառման ցուցանիշը, հղիների ՄԻԱՎ թեստավորման ցուցանիշը գերազանցել է 95%-ը, բարելավվել են հղիների նախածննդյան սկրինինգի ցուցիչները (հաշվառված հղիների շուրջ 80%-ը կատարել են 4-6 նախածննդյան այց բժշկին և 3 անգամ ենթարկվել են սոնոգրաֆիկ հետազոտության), ինչը զգալի նպաստել է հղիությունների ախտաբանությունների և պտղի զարգացման շեղումների վաղ հայտնաբերմանը, հետևաբար, ծանր ընթացքով դեպքերի կանխարգելմանը: Կրկնակի նվազել է անպտղության ցուցանիշը: Եթե անպտղությունը 2000 թվականին կազմել է 30.0%, ապա 2014-2015 թվականներին նվազել է՝ հասնելով 14.6%-ի: 2015 թվականին պետական բյուջեից հատկացվել է 78.6 մլն դրամ ընտանեկան անապահովության համակարգում հաշվառված զույգերի անվճար հետազոտման և արհեստական սերմնավորման համար: Շուրջ 80 անպտուղ զույգ հետազոտվել և բուժվել է պետական պատվերի շրջանակներում:

Արագ արձագանքման արտագնա ծառայության միջոցով 2015 թվականի ընթացքում անհետաձգելի մանկաբուժական և մանկաբարձագինեկոլոգիական օգնություն է տրամադրվել մարզերի բժշկական հաստատություններին՝ կատարվել է շուրջ 500 կանչի սպասարկում, որն էլ որոշակիորեն նպաստել է մանկական և մայրական մահացության դեպքերի կրճատմանը:

Իրականացվել են միջոցառումներ ծննդօգնության հավաստագրերի մարզային կտրվածքով տեղայնացման ուղղությամբ: Մշակվել և ներդրվել է ծննդօգնության հիվանդանոցային ծառայություններ կանանց ուղեգրման կարգը և ըստ բժշկական կազմակերպությունների մակարդակների հղիների/ծննդականների ընդունելության ընթացակարգը: Արդյունքում, արձանագրվել է մարզերից Երևանում ծնունդների թվի կրճատում շուրջ 25%-ով: Նման մոտեցումը նպաստում է մարզերի ծննդօգնության ծառայությունների զարգացմանն ուղղված ռազմավարության իրականացմանը:

Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, մասնավորապես արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համատեղ 2015 թվականի ընթացքում իրականացվել է շուրջ 55000 արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման (ՊԱՊ թեստի) հետազոտություն:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է «Կարևոր կյանքի 1000 օրը» նախաձեռնությունը՝ ուղղված հղիների, կերակրող մայրերի և վաղ հասակի երեխաների սնուցման և առողջության բարելավմանը: Իրականացվել են հանրային իրազեկման լայնածավալ աշխատանքներ, երեխաների սնուցման վերաբերյալ հրատարակվել են տեղեկատվական նյութեր: Բուժօգնության որակի բարելավմանն է ուղղվել ապացուցողական բժշկության սկզբունքներով մշակված ուղեցույցների և գործելակարգերի ներդրումը:

Մայրության և մանկության առողջապահության ոլորտում վերջին տարիներին աշխատանքները, միջազգային համագործակցությամբ, կազմակերպվել են շուրջ 10 թիրախային ծրագրերի շրջանակներում:

2015 թվականին շարունակվել է ծննդօգնության հաստատությունների նորածնային ծառայությունները բժշկական սարքավորումներով հզորացնելու ծրագիրը: Մարզային շուրջ 10 ծննդօգնության բժշկական հաստատություն հագեցվել են նորագույն սարքավորումներով:

8.1.2.4 Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության, ինչպես նաև սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության (այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման) և դեղորայքով ապահովումը

Բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների դինամիկայի վերաբերյալ առավել ճշգրիտ պատկերացում կազմելու նպատակով վերլուծությունը կատարվել է հիմնվելով գրանցված հիվանդությունների բացարձակ թվերի վրա:

Գծանկար 8.7 Բնակչության ընդհանուր հիվանդացության վերլուծությունը Հայաստանում, հազար դեպք



Աղբյուր՝ ՀՀ ԱՆ առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոն

Հիվանդությունների բացարձակ թվերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին քսան չորս տարվա ընթացքում 33.5%-ով պակասել են հիվանդացության դեպքերը, սակայն վերջին տաս տարիների ընթացքում այն դրսևորել է աճի միտում և 2014 թվականին 2004 թվականի նկատմամբ հիվանդացության դեպքերը աճել են շուրջ 57%-ով, դրսևորելով տարբեր հիվանդությունների խմբերի համար տարբեր վարքագծեր:

Ստորև ներկայացվում է բնակչության հիվանդացությունը ըստ հիվանդությունների առանձին խմբերի:

Աղյուսակ 8.3 Բնակչության հիվանդացությունը ըստ հիվանդությունների առանձին խմբերի (բացարձակ թվերով)

	2008թ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Գրանցված հիվանդությունների թիվը							
Ընդամենը	1 322 230	1 444 770	1 481 599	1 511 043	1 544 999	1 576 228	1 590 959
կյանքում առաջին անգամ գրանցված	799 724	897 928	911 124	904 042	904 382	917 646	914 194
որից՝							
Ինֆեկցիոն և մակաբուծական հիվանդություններ							
Ընդամենը	83 104	86 026	94 321	98 370	96 896	87 327	87 055
կյանքում առաջին անգամ գրանցված	69 343	72 707	81 407	85 926	84 247	74 917	73 371
այդ թվում տուբերկուլյոզ							
Ընդամենը	3 489	3 446	3 707	3 694	3 437	3 760	3 930
կյանքում առաջին անգամ գրանցված	1 486	1 431	1 322	1 185	1 131	1 047	1 046
Չարորակ նորագոյացություններ							
Ընդամենը	35 920	30 117	31 550	32 580	34 400	36 660	38 918
կյանքում առաջին անգամ գրանցված	8 309	7 657	7 593	7 858	7 877	7 911	8 365
Շաքարային դիաբետ							
Ընդամենը	49 170	50 661	54 972	57 850	62 000	68 131	72 203
կյանքում առաջին անգամ գրանցված	5 783	6 331	7 099	7 187	7 183	8 376	8 052
Հոգեկան խանգարումներ							
Ընդամենը	55 700	61 104	63 760	64 151	63 818	63 446	64 813
կյանքում առաջին անգամ գրանցված	7 503	7 903	9 984	9 098	9 019	9 231	8 417
Հիպերտոնիկ հիվանդություն							
Ընդամենը	68 177	73 827	84 639	98 668	106 875	110 828	116 093
կյանքում առաջին անգամ գրանցված	20 871	21 048	22 499	26 094	25 095	24 508	24 936

Սրտի իշեմիկ հիվանդություն							
Ընդամենը	48 620	52 042	55 678	62 873	67 141	68 898	68 595
կյանքում առաջին անգամ գրանցված	14 017	14 591	14 891	16 111	16 786	17 097	16 333
Վնասվածքներ և թունավորումներ							
Ընդամենը	56 809	58 382	57 881	59 249	59 266	59 888	61 053
կյանքում առաջին անգամ գրանցված	55 031	56 721	56 296	57 479	57 256	57 815	59 290

Ինչպես երևում է աղյուսակից 2014 թվականին ավելացել է ընդհանուր գրանցված հիվանդությունների դեպքերի թիվը: Կյանքում առաջին անգամ հայտնաբերված հիվանդությունների ընդհանուր դեպքերը 2013 թվականի նկատմամբ նվազել են, սակայն առանձին հիվանդությունների գծով դրսևորել են աճի միտում (չարորակ նորագոյացությունների, հիպերտոնիկ հիվանդությունների, վնասվածքների և թունավորումների գծով):

Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում իրականացված մի շարք համալիր միջոցառումների արդյունքում տարեցտարի նվազել է տուբերկուլյոզով հիվանդության կյանքում առաջին անգամ հայտնաբերված դեպքերի թիվը, սակայն աճել է այդ հիվանդության ընդհանուր գրանցված դեպքերի թիվը: Տուբերկուլյոզի հիվանդացության հիմնական պատճառներն են սոցիալ-տնտեսական իրավիճակը, բնակչության տեղաշարժի ակտիվացումը, հակատուբերկուլյոզային հիմնական դեղամիջոցների նկատմամբ հիվանդության հարուցիչի դեղորայքակայուն ձևերի ավելացումը: Բացի դրանից, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակի տարածումը բերում է իմունիտետի անկման, որն էլ իր հերթին՝ վարակված անձանց մոտ ակտիվ տուբերկուլյոզի զարգացման:

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով (ՄԻԱՎ) վարակվածության և ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) դեպքերի արձանագրումն սկսվել է 1988 թվականից: Մինչև 2015 թվականի վերջը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2214 դեպք, որոնցից 334-ը՝ 2014 թվականի ընթացքում, ինչն առավելագույն է բոլոր նախորդ տարիների համեմատ: 2015 թվականին մեր երկրում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 294 դեպք: ՄԻԱՎ վարակով հիվանդներից 1140-ի մոտ (որից 24-ը երեխա են) ախտորոշվել է ՁԻԱՀ: Եթե 2014 թվականին հանրապետությունում գրանցվել է ՁԻԱՀ-ի 180 դեպք, ապա 2015 թվականին՝ 161 դեպք:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների 90%-ից ավելին գտնվում է դիսպանսերային հսկողության տակ: Վերջին տարիներին աճել է հետազոտությունների թիվը, բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը և բարձրացել է համաճարակաբանական հսկման համակարգի արդյունավետությունը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և տուբերկուլյոզի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումները մշտապես բարձր գնահատականի են արժանացել ԱՀԿ-ի կողմից:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով և տուբերկուլյոզով հիվանդների դիսպանսերային հսկողության և բուժման գործում կարևորվում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին և տուբերկուլյոզին հակազդման ծրագրերի շրջանակներում «ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի» Գլոբալ հիմնադրամի աջակցությունը: Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցությունը 2012-2015 թվականներին կազմել է 2,504.8 մլն դրամ, իսկ Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի ազգային ծրագրի ուժեղացման և դեղորայքակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին՝ 4,509.9 մլն դրամ:

Հայաստանում էականորոն աճել է ոչ վարակիչ հիվանդությունների բացասական ազդեցությունը հանրային առողջության վրա՝ հայ հասարակությանն ու պետությանը կանգնեցնելով տնտեսական նոր մարտահրավերների առջև: Ազգային տվյալների համաձայն սրտանոթային հիվանդությունները, քաղցկեղը և շաքարային դիաբետը կազմում են մահվան բոլոր դեպքերի շուրջ երկու երրորդը: Միայն արյան շրջանառության հիվանդություններից մահվան պատճառները կազմում են ընդհանուր մահվան պատճառների գրեթե մեկ երկրորդը, իսկ չարորակ նորագոյացություններով պայմանավորված՝ ընդհանուր մահվան դեպքերի 20 տոկոսը: Մահացության ընդհանուր գործակիցը վերջին 10 տարիների ընթացքում աճել է շուրջ 5.9%-ով: 2015 թվականին արձանագրվել է մահացության 27835 դեպք: 2014 թվականի համեմատ մահվան դեպքերը աճել են 0.4%-ով, իսկ մահացության ընդհանուր գործակիցը՝ 0.1 պրոմիլային կետով:

Ստորև ներկայացվում է սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիմնական հիվանդությունների հիվանդացության և մահացության մակարդակների համեմատությունը:

Աղյուսակ 8.4 Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիմնական հիվանդությունների հիվանդացության և մահացության մակարդակների համեմատականը

Հիվանդության անվանումը	Հիվանդության դեպքերը (բացարձակ թվեր)			2014 թվականի համեմատականը 1990 թվականի նկատմամբ	Մահացության դեպքերը (բացարձակ թվեր)			2014 թվականի համեմատականը 1990 թվականի նկատմամբ
	1990թ.	2013թ.	2014թ.		1990թ.	2013թ.	2014թ.	
Չարորակ նորագոյացություններ	20 929	36 660	38 918	1.9	3 484	5 589	5 685	1.6
Շաքարային դիաբետ	35 697	68 131	72 203	2,0	495	1 305	1 191	2.4
Տուբերկուլյոզ	3 069	3 760	3 930	1.3	92	102	78	նվազել է շուրջ 1,2 անգամ
Սրտի իշեմիկ հիվանդություն	74 406	68 898	68 595	նվազել է շուրջ 1,1 անգամ	5 212	8 483	8 570	1.6
Սրտմկանի սուր Ինֆարկտ	1 757	2 210	2 127	1,2	1 916	2 386	2 393	1.2

Ինչպես երևում է աղյուսակից մահվան դեպքերի աճը հատկապես շաքարային դիաբետի և սրտի իշեմիկ հիվանդությունների դեպքում գերազանցում է գրանցված հիվանդությունների աճի տեմպերը:

Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2013 թվականին բուժօգնություն են ստացել սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված շուրջ 46.0 հազար հիվանդ, 2014 թվականին՝ 61.4 հազար հիվանդ, իսկ 2015 թվականին՝ 62.4 հազար հիվանդ: Վերոնշյալ հիվանդների բժշկական օգնության համար 2013 թվականին տրամադրվել է 4,312.8 մլն դրամ, 2014 թվականին՝ 6,575.7 մլն դրամ, իսկ 2015 թվականին՝ 7,462.3 մլն դրամ: Ծախսերի կտրուկ աճը պայմանավորված է 2014 թվականից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված՝ աղքատության ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված նպաստառուների անապահովության միավորը 36-00-ից 30-00 միավորի իջեցնելու հետ, իսկ 2015 թվականին՝ աշխատողների ամսական աշխատավարձի նվազագույն չափի և դեպքերի թվի ավելացմամբ:

Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց համարժեք փոխհատուցում ապահովելու, ինչպես նաև առողջապահության հաստատություններում առկա ստվերային դրսևորումները բացառելու նպատակով, 2010 թվականի հուլիսի 1-ից ներդրվեց պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության եւ սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման համավճարային նոր եղանակի փորձարարական կիրառումը երեք բուժհաստատություններում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1762–Ն որոշման համաձայն 2011 թվականի փետրվարի 1-ից հանրապետության բուժհաստատություններում ներդրվեց համավճարային մեխանիզմը «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» և «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում մատուցվող ծառայությունների համար:

Համավճարից մուտքագրված միջոցները 2011 թվականին կազմել են շուրջ 850.0 մլն դրամ, 2012 թվականին՝ 1,175.7 մլն դրամ, 2013 թվականին՝ 1,567.1 մլն դրամ, 2014 թվականին՝ 1,054.0 մլն դրամ, իսկ 2015 թվականին՝ 907.3 մլն դրամ: Միաժամանակ, համավճարի ներդրմանը զուգընթաց կանոնակարգվեցին վճարովի ծառայությունների գները և գնագոյացման սկզբունքները, հստակվեցին պետական պատվերով և վճարովի մատուցվող բուժօգնության տեսակները:

2014 թվականին շահագործման են հանձնվել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի բժշկական կենտրոնը, ՀՀ Լոռու մարզի «Ալավերդու ԲԿ» ՓԲԸ հիվանդանոցային մասնաշենքը, ավարտվել են ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ի նոր շենքի կառուցման աշխատանքները: 2015 թվականին շահագործման են հանձնվել ՀՀ Սյունիքի մարզում՝ Կապանի բժշկական կենտրոնը, ՀՀ Տավուշի մարզում՝ Բերդի բժշկական կենտրոնը:

Ավարտվել են Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի նորակառույց շենքի շինարարական աշխատանքները: Բժշկական կենտրոնը հագեցվել է բժշկական սարքավորումներով, կահույքով ու պարագաներով և շահագործման է հանձնվել 2016 թվականի փետրվարին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2015 թվականին ծախսվել է շուրջ 2.0 մլրդ դրամ: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ ԱՆ պրոֆ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնի վերակառուցման և եռահարկ մասնաշենքի կառուցման շինարարություն,
- ժամանակակից ճառագայթային բուժման կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,
- Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային նոր մասնաշենքի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում,
- Արտաշատի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,
- հանրապետության ողջ տարածքում չարորակ նորագոյացությունների ռեգիստրի ստեղծում,
- ավարտվել են Ոսկրածուծի փոխպատվաստման և ցողունային բջիջների լաբորատորիայի ստեղծման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները և այլն:

2013 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում դեղերի և դեղանյութերի արտադրության՝ պատշաճ արտադրական գործունեության կանոններին համապատասխանության դիտարկման և պատշաճ արտադրական գործունեության հավաստագրի տրամադրման կարգերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N 1089-Ն որոշումը, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում դեղերի և դեղանյութերի արտադրությունների պատշաճ արտադրական գործունեության կանոններին համապատասխանության դիտարկման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

Կեղծ և ոչ պիտանի դեղերի մուտքը հանրապետություն կանխելու նպատակով մշակվել և ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 308-Ն որոշումը, որով կարգավորվում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ներմուծվող դեղերի հավաստագրման գործընթացը:

Դեղերի ներմուծման փորձաքննության բարեփոխումների և լաբորատոր կարողությունների հզորացման արդյունքում ավելացել են ներմուծվող խմբաքանակներում անորակ դեղերի և դեղանյութերի հայտնաբերման դեպքերը. 2014 թվականին հայտնաբերվել է 13, իսկ 2015 թվականին՝ 32 դեպք:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը լուրջ ձեռքբերումներ է գրանցել շաքարային դիաբետով հիվանդների դեղապահովման խնդիրների բարելավման հարցում՝ անմիջապես դեղ արտադրող կազմակերպությունների հետ կնքելով հնգամյա պայմանագրեր, որի արդյունքում բարձրացել է վերոնշյալ դեղերով ապահովվածության մակարդակը: Մասնավորապես՝ պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք են բերվել անհրաժեշտ քանակությամբ ինսուլիններ շաքարային դիաբետով տառապող հիվանդներին դեղերով ապահովելու խնդիրներն առանց ընդհատումների կազմակերպելու նպատակով: 2015 թվականին 0-18 տարիքային խմբում հաշվառված 450 շաքարային դիաբետով հիվանդ երեխաներին անվճար տրամադրվել է շվեյցարական արտադրության, արյան մեջ գլյուկոզայի որոշման համար նախատեսված սարքերի թեստ-երիզներ:

2015 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կենտրոնացված կարգով ձեռք է բերվել թվով 33 անվանում դեղ, դեղագործական ապրանքների ձեռքբերման ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ: 2015 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով դեղ ստացող հիվանդների թիվը կազմել է 163000:

8.1.3 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացում խնդիր է դրվում առկա միջոցների և ներուժի պայմաններում ապահովել քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, բարձրացնել բնակչության համար երաշխավորված անվճար բժշկական օգնության որակը և հասանելիությունը: Նպաստել ծնելիության և կյանքի միջին տևողության ավելացմանը:
- Կարևորագույն խնդիրներից է բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ ծնելիության գումարային գործակիցը 2.2 միավոր մեծության հասցնելը, դրա հետ կապված անհրաժեշտ նախադրյալների բացակայությունը:
- Չնայած իրականացված ծրագրերին և դրական միտումներին, մոր և մանկան առողջության ապահովման տեսանկյունից առաջնային խնդիր է հանդիսանում մայրական, մանկական և մինչև 5 տարեկան երեխաների հիվանդացության և մահացության դեռևս ոչ բավարար ցածր մակարդակը, պերինատալ պատճառներով պայմանավորված և վաղ նորածնային մահացածության մեծ տեսակարար կշիռը, կանանց վերարտադրողական օրգանների քաղցկեղային

հիվանդությունների և մահացության բարձրացման միտումը, հղիության արհեստական ընդհատումների դեռևս բարձր մակարդակը, անպտղության, հատկապես երկրորդային, դեռևս բարձր ցուցանիշները: Որպես խնդիր է դիտարկվում նաև երեխայի աճի ու զարգացման շեղումների, մանկական անկարողության վաղ հայտնաբերման և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման հնարավորությունների անբավարար մակարդակը:

- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության կայուն իրավիճակի շարունակական ապահովումը, ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, քանի որ ժամանակին անհրաժեշտ միջոցառումների չիրականացումը կարող է բերել համաճարակների ռիսկերի բարձրացմանը:

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման խնդիրներից է նաև բնակչության իրազեկումը և բժշկահիգիենիկ գիտելիքների մակարդակի բարձրացումը: Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման շարունակականության ծրագրի մշակումը և ներդնումը: Եվրասիական տնտեսական միության քաղաքականությանը համահունչ միջոցառումների իրականացումը: Պետական սահմանում կանխարգելիչ, բժշկական, սահմանափակող միջոցառումների ապահովումը: Վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման համակարգերի զարգացումը: Առողջ ապրելակերպի մասին քարոզչության գործընթացում բնակչության համապատասխան խմբերի ընդգրկվածության բարձրացումը: Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում լաբորատորիաների ստանդարտացված աշխատանքի միասնական կարգ սահմանելու նպատակով համընդհանուր լաբորատոր ցանցի ձևավորումը: Լաբորատոր գործունեության զարգացումը, նյութատեխնիկական բազայի արդիականացումը և ժամանակակից սարքավորումներով համալրումը:

- Չնայած բնակչության առողջության առաջնային պահպանման ոլորտի բարելավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, քաղաքներում (հատկապես Երևանում) ընտանեկան բժշկության համակարգի կայացման տեսանկյունից՝ առկա խնդիր է դիտարկվում տեխնիկական հագեցվածության և շենքային պայմանների բացակայությունը: ՀՀ մարզերում առկա խնդիր է նաև մասնագիտական կադրերի պակասը:

- Առկա խնդիր է առողջապահության համակարգում սպառողների շահերի պաշտպանության մեխանիզմների բացակայությունը՝ բժշկական ծառայությունների որակի վերահսկման, գնագոյացման և իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

- Առկա օրենսդրական դաշտը պաշտոնապես չի կարգավորում մասնավոր բուժհաստատությունների կարգավիճակը, կառուցվածքը և դրանց կողմից մատուցվող բժշկական ծառայու-

թյունները: Նշված խնդիրը հանգեցնում է բուժհաստատությունների նկատմամբ վերահսկողության բացակայությանը:

- Առկա խնդիր է սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների, հատկապես ոչ վարակիչ հիվանդությունների մահվան դեպքերի աճը՝ կապված Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի բուժկազմակերպություններում առաջնային և երկրորդային պրոֆիլակտիկայի աշխատանքների դեռ ոչ պատշաճ մակարդակով կազմակերպմամբ, հիվանդությունների ոչ ժամանակին հայտնաբերմամբ և բուժականխարգելիչ օգնության իրականացմամբ:

- Հիվանդանոցային բուժօգնության գծով առկա խնդիր է հանդիսանում նաև պետական պատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության տեսակների գների և այդ նույն ծառայությունների իրական գների միջև եղած զգալի տարբերությունները, մատուցվող բժշկական ծառայությունների ցածր որակը, իրականացվող ծախսերի անբավարար թափանցիկությունը, ըստ Հայաստանի Հանրապետության տարածքների բժշկական մասնագետների անհամաչափ բաշխվածությունը և մեծ թվով նրանց առկայությունը քաղաքներում (հատկապես Երևանում), բուժհաստատություններում ֆինանսական հոսքերի կառավարումը և տեխնոլոգիաների արդիականացման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ստեղծումն ու ներգրավումը:

- Առկա խնդիր է դիտարկվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրականացվող ծախսերի և այլ ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացումը: Գյուղական համայնքներում և քաղաքային որոշ բուժհաստատություններում բժշկական սարքավորումները բարոյապես և ֆիզիկապես մաշված են, միջոցներն անհամաչափ են բաշխված ըստ Հայաստանի Հանրապետության տարածքների, որը պատճառ է հանդիսանում տվյալ տարածքում առողջապահական նեղ մասնագիտացված ծառայությունների ցածր մակարդակի կամ բացակայության, ինչպես նաև մատուցվող ծառայությունների անբավարար լինելու դեպքում հիվանդների տեղաշարժի դեպի մայրաքաղաք կամ մարզկենտրոններ, ինչն էլ իր հերթին բերում է ֆինանսական միջոցների վերաբաշխման:

- Առկա խնդիր է օպտիմալացման գործընթացի շարունակականության ապահովումը և մահճակալների զբաղվածության մակարդակի բարձրացումը:

- Վերջին տարիներին գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի աճի միտում և ժամանակին անհրաժեշտ միջոցառումների չիրականացումը կարող է բերել իրավիճակի վատթարացմանը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ վերջին տարիներին գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կտրուկ աճ:

- Վարակիչ հիվանդությունների, այդ թվում՝ տուբերկուլյոզի, սեռավարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը, վարակի տարածման

կանխարգելումը և առկա դեպքերի բուժման արդյունավետության բարձրացումը պետական կարևորագույն խնդիրներից է:

• Որպես խնդիր է դիտարկվում հիմնական դեղերի ցանկում առկա ցածր պահանջարկ ունեցող դեղերը և դեղերի որակի ապահովման պետական վերահսկողության դեռևս ցածր մակարդակը դեղերի շրջանառության բոլոր փուլերում:

8.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

8.2.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող ծրագրերի նպատակներն են.

8.2.1.1 Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը: Հանրային առողջության և հիգիենիկ ու համաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության հետագա ձևավորումը և մշակումը: Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցումն է, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելումը և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովումը: Պետական սահմանում արտերկրից հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներբերման կանխարգելումը: Վարակիչ հիվանդությունների առաջացման ու դրանց տարածման պատճառների և պայմանների բացահայտման, քննման և հետազոտության ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը: Համաճարակների, բռնկումների, թունավորումների և հանրային առողջության անվտանգության սպառնացող այլ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման ապահովումը: Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը: Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը:

8.2.1.2 Բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը

Առողջության առաջնային պահպանման ոլորտի հետագա զարգացման ապահովումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, բժշկական օգնության և ծառայությունների ստանալու մատչելիության ու որակի ապահովումը բնակչության բոլոր խմբերի (հատկապես՝ սոցիալապես խոցելի խմբերի) համար, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը:

Առաջնային օղակի կողմից հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով հիվանդանոցային բուժօգնության բեռի թեթևացումը, շտապօգնության անիարկի՝ քրոնիկ հիվանդների համար տրվող կանչերի թվի նվազումը:

Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով հանրապետության բնակչության շրջանում այդ հիվանդությունների հետևանքով առաջացած հաշմանդամության և մահացության ցուցանիշների իջեցումը:

Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում աշխատող բուժանձնակազմի հմտության ու գործունեության որակի բարձրացումը՝ առավել ուշադրություն դարձնելով գյուղական բնակավայրերի աշխատողներին, ինչպես նաև առողջության առաջնային պահպանման մակարդակում բուժօգնության որակի բարելավումը, բուժանձնակազմի պատասխանատվության աստիճանի բարձրացումը:

Կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման և աշխատանքի խրախուսական վարձատրության կիրառումը և հետագա կատարելագործումը:

Բնակչի կողմից առողջության առաջնային ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացի շարունակականության ապահովումը:

Ընտանեկան բժշկության անկախ պրակտիկաների ձևավորման միջոցով պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործումը, այդ միջոցների հասցեականության ապահովումը:

8.2.1.3 Մոր և մանկան առողջության ապահովումը

Կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավումը:

Երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումն՝ ուղղված մանկական մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը:

Մայրության հովանավորումը, ծննդօգնության որակյալ ծառայությունների մատչելիության ապահովումն՝ ուղղված մայրական և շուրջծննդյան (պերինատալ) հիվանդացության ու մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև վերարտադրողական առողջության բարելավմանը:

Ծրագրի նպատակն է երեխաների առողջության պահպանման ոլորտում նվազեցնել մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակը նվազագույնը 1/4-ով, ցածր քաշով և անհաս նորածինների թիվը կրճատել նվազագույնը 20%-ով, նվազեցնել մայրական մահացության մակարդակը նվազագույնը 1/4-ով, բարելավել նախածննդյան հսկողության ցուցանիշները 15%-ով, վերարտադրողական օրգանների (կրծքագեղձ, արգանդի վզիկ) քաղցկեղային հիվանդությունները նվազեցնել առնվազը 20%-ով, սկրինինգային հետազոտություններում կանանց ընդգրկվա-

ծությունը ապահովել շուրջ 60%-ով, ժամանակակից հակաբեղմնավորիչների շարունակական տրամադրում և օգտագործման ցուցանիշների բարելավում 20%-ով, կանանց շրջանում սեռավարակների հաճախականությունը կրճատել նվազագույնը 1/4-ով, հղիության արհեստական ընդհատման ցուցանիշը նվազեցնել առնվազը 20%-ով, երկրորդային անպտղության ցուցանիշը կրճատել 20%-ով, երեխաների և հղիների մոտ սակավարյունության տարածվածությունը կրճատել 10%-ով, պտղի զարգացման արատների հաճախականությունը նվազեցնել 1/4-ով: Ապահովել հղիների և ռիսկի խմբի կանանց նվազագույնը 95%-ի ընդգրկվածությունը մարդու իմունաան-բավարարության վիրուսի նկատմամբ սկրինինգի իրականացման գործընթացում:

8.2.1.4 Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության, ինչպես նաև սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների բուժօգնության (այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման) և դեղորայքով ապահովումը

Ծրագրի նպատակն է մեծացնել սոցիալապես անապահով և (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության առավել հասանելիությունը: Ապահովել բնակչության նշյալ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային որակյալ բժշկական օգնության իրականացումն ընդհանուր և մասնագիտացված պրոֆիլի հիվանդանոցներում ու բաժանմունքներում՝ անկախ ախտորոշումից:

Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց համարժեք փոխհատուցում ապահովելու, ինչպես նաև առողջապահության հաստատություններում առկա ստվերային դրսևորումները բացառելու և բժշկական ծառայությունների ֆինանսական հատուցումները բնակչության համար կանխատեսելի դարձնելու նպատակով համավճարային համակարգի ներդրման գործընթացի հետագա կանոնակարգումը, արդյունավետության, նպատակահարմարության և արդյունքների գնահատումը: Կառավարության մտադրությունն է ժամանակի ընթացքում ծառայությունների դիմաց փախհատուցման չափը մոտեցնել իրական ինքնարժեքին: Նման մոտեցումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, ինչպես նաև սոցիալապես անապահով անձանց համար ֆինանսական բեռի նվազմանը (որը ձևավորվում է ծառայությունների դիմաց ոչ ֆորմալ վճարումների արդյունքում), դրանով իսկ մեծացնելով ծառայության մատչելիության աստիճանը:

Հայստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում համապատասխան մասնագետներով, ինչպես նաև ժամանակակից ախտորոշիչ և բժշկական սարքավորումներով հագեցված առնվազն մեկ բժշկական խոշոր կենտրոնի ստեղծումը կկանխի բնակչության մեծ հոսքը դեպի մայրաքաղաքի բժշկական կենտրոններ և կբարձրացնի բուժօգնության մատչելիությունը Հայաստանի Հանրապետության մարզերում:

Ծրագրի նպատակն է նաև սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցումը, նշված հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կանխարգելումը, բուժումը և վերականգնողական միջոցառումների իրականացումը հատկապես առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) օղակի կողմից՝ հիվանդությունների զարգացման սկզբնական փուլում:

Բնակչությանը որակյալ դեղերով ապահովման նպատակով կարևորվում է դեղերի որակի պետական վերահսկողության կազմակերպումը դեղերի շրջանառության բոլոր փուլերում (արտադրություն, պատրաստում, պահպանում, իրացում, կիրառում), Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում առկա, բայց Հայաստանի Հանրապետությունում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի Հայաստանի Հանրապետությունում առկայության ապահովման նպատակով դրանց պետական գրանցումը:

Դեղորայքային ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև բնակչության առանձին խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով հատկացվող դեղերի անվանական և քանակական լիարժեք ապահովումը:

8.2.2 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Առողջապահության ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը:

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության գերակայություն են շարունակելու մնալ առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումը, որակի շարունակական բարելավումը և առավել տարածված ու բարձր մահացություն ունեցող ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումն ու կանխարգելումը՝ հատուկ շեշտադրելով տարածքային կտրվածքով առանցքային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումն (առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը գյուղական ու հեռավոր շրջանների բնակչության համար երաշխավորելու նպատակով) ու բնակչության՝ ըստ կենսամակարդակի տարբեր խմբերի կողմից, առողջապահական ծառայությունների օգտագործման հաճախականությունների միջև առկա տարբերությունների աստիճանական վերացումը:

Ինչպես հիվանդանոցային, այնպես էլ առաջնային բուժօգնության կառուցվածքում (այդ թվում ընտանեկան բժշկության) գերեկա են շարունակվելու համարվել մոր և մանկան առողջու-

թյան պահպանումը և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարը:

Միջնաժամկետ հատվածում առողջապահության ոլորտում պետական միջամտության գերակա ուղղությունները (ըստ առաջնահերթության) հետևյալն են.

Աղյուսակ 8.5 ՀՀ առողջապահության ոլորտի գերակայությունները 2017-2019թթ ժամանակահատվածում

	Գերակա ուղղությունները 2017-2019 թվականների ժամանակահատվածում	**Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին**
1	Մոր և մանկան առողջության պահպանումը և վերարտադրողական առողջության բարելավումը	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին (կետ 417) շարունակվելու և խորացվելու են մոր եւ մանկան առողջության պահպանման բարելավման ուղղությամբ վերջին տարիներին իրականացված բարեփոխումները: Միջնաժամկետ հատվածում «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքների համաձայն իրականացվելիք գործողությունները ուղղված են լինելու հղիներին նախածննդյան և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրմանն, երեխաների՝ բացառապես կրծքով կերակրման խրախուսմանը և միկրոէլեմենտների անբավարարության կանխմանը, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերմանն ու տարածման կանխարգելմանն, երեխաների՝ պատվաստումներով ընդգրկվածության մեծացմանն ու տարածքային կտրվածքով առկա տարբերությունների վերացմանը, վաղ հասակի երեխաների բժշկական ծառայությունների հասանելիության և մատչելիության բարձրացմանն, երեխաների մտավոր և ֆիզիկական թերզարգացման կանխարգելմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերի հաջորդական ներդրմանն, երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման խանգարումների և հաշմանդամության կանխարգելմանը: Ակնկալվում է նշանակալիորեն կրճատել մանկական և մայրական մահացության աստիճանն, ինչը համահունչ է ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկական մահացության կառուցվածքում նեոնատալ մահացությունն ունի գերակշիռ մասնաբաժին, հատուկ շեշտադրվելու են ինտենսիվ նեոնատալ խնամքի խնդիրները:
2	Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը	«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրության առողջության ապահովմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների և ծառայությունների համախումբը ներառում է վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը, կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը, հանրության առողջության պաշտպանությունը տարբեր ռիսկերից և վտանգավոր գործոնների բացասական ազդեցությունից, ինչպես նաև դրանց վերաբերյալ հանրության իրազեկումը, բնակչության շրջանում առողջ վարքագծի և ապրելակերպի քարոզչությունը: ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 29-ի թիվ 22 արձանագրային որոշման համաձայն հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդություններ փոխանցողների դեմ պայքարի ծրագիրը և ծրագրի 2014-2018 թվականների միջոցառումների իրականացման ժամանակացույցը:
	Կանխարգելիչ պատվաստում-	ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի նիստի N 10

3	ների միջոցով վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և տարածման սահմանափակումը	արձանագրային որոշման համաձայն ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումները իրականացվելու են ժամանակին և որակով: Իմունականխարգելումը հանրային առողջապահության տնտեսապես բարձր արդյունավետ ռազմավարություններից է: Հայաստանի Հանրապետությունում պլանային կանխարգելիչ պատվաստումներում ընդգրկվածության բարձր մակարդակի ապահովումը և մանկական մահացության նվազեցման նպատակով նոր պատվաստանյութերի ներդրումը «Հազարամյակի մարտահրավերների» գերակա խնդիրների հաղթահարմանն ուղղված ռազմավարություններից են:
4	Պետական սահմանում արտերկրից վարակիչ հիվանդությունների ներբերման կանխարգելում, բժշկական, սահմանափակող միջոցառումների իրականացման արդյունավետ կարողությունների ապահովում	ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում բժշկասանիտարական հսկիչ կետերը գործում են որպես ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կառուցվածքային մաս: Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերն իրականացնում են պետական սահմանում վարակիչ հիվանդությունների բացահայտում, կասկած հարուցողների և հիվանդների մեկուսացում, հոսպիտալացման կազմակերպում, անհրաժեշտության դեպքում՝ նմուշառման, ախտահանման, կրծողազերծման, միջատազերծման աշխատանքների կազմակերպում:
5	Բուժօգնության առաջնային օղակի հետագա զարգացումը և բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության սկզբունքով ծառայությունների մատուցումը	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին (կետ 413) բուժօգնության առաջնային օղակի հետագա բարելավումն ու զարգացումը շարունակելու է մնալ ոլորտում ՀՀ կառավարության միջամտության հիմնական առաջնահերթություններից մեկը: ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 6-ի թիվ 420-Ն որոշման համաձայն սահմանվում են առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) ծառայություններ մատուցող բժշկի ընտրության, նրա մոտ բնակչության գրանցման, ինչպես նաև ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկին փոխելու հետ կապված հարաբերությունները: ԱԱՊ բժշկի ընտրության և նրա մոտ բնակչի գրանցման նպատակը բնակչի կողմից ԱԱՊ բժշկի կամավոր ընտրությունը, առաջնային բուժօգնության օղակին հատկացվող ռեսուրսների արդյունավետ բաշխումը, իրականացվող ծառայությունների ծավալի ընդլայնումը և որակի բարելավումը՝ բնակչության կողմից ԱԱՊ բժշկի կամավոր ընտրության մրցակցային միջավայրում ապահովելն է:
6	Հիվանդությունների վաղ հայտնաբերման ու կանխարգելման ճանապարհով առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի շեշտադրումը	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին (կետ 411) ՀՀ կառավարությունը հատուկ շեշտադրելու է հիվանդությունների կանխարգելմանը, վաղ ախտորոշմանն ու բուժմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես նպատակ հետապնդելով շրջադարձել ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և այդ պատճառներով մահացության ձևավորված բացասական միտումները: Այս առումով, բուժօգնության արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայությունների փոխկապակցված զարգացումը դիտվելու է որպես բուժօգնության շարունակականության պատշաճ ապահովման գրավական: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի թիվ 3 արձանագրային որոշման համաձայն հաստատվել է «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգը» և հայեցակարգի իրականացման ժամանակացույցը: Հայեցակարգի նպատակն է նվազեցնել Հայաստանում ոչ վարակիչ հիվանդություններից հիվանդացությունը և դրանցից առաջացած հաշմանդամությունն և վաղաժամ մահացությունը: ՀՀ կառավարության հավանության է արժանացել նաև «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ

		պայքարի 2016-2020 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի նիստի N 4 արձանագրային որոշումը:
7	Ընտանեկան բժշկության անկախ խմբային և անհատական պրակտիկաների ներդրումը	Առաջնային բուժօգնության օղակում պետական քաղաքականությունը ուղղված է լինելու ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման ուղղությամբ ներկայումս իրականացվող վերափոխումների ավարտմանն ու ձևավորվող կառուցվածքների հետագա ամրապնդմանը: ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի թիվ 497-Ն որոշման համաձայն սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բժիշկների անհատական և խմբային անկախ պրակտիկաների իրականացման կարգը, պարտադիր պահանջներն ու պայմանները:
8	Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնության ապահովումը	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում են լինելու սոցիալական հատուկ նշանակություն ունեցող ինչպես վարակիչ, այնպես էլ ոչ վարակիչ առանձին հիվանդությունների տարածմանն ու բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցեր: Հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովմամբ և շարունակական բարելավմամբ պայմանավորված 2015 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 26-ի նիստի N 8 և «Հայաստանի Հանրապետության հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովման ռազմավարությունն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի նիստի N 52 արձանագրային որոշումները: Բուժծառայությունների որակի ապահովման և բարելավման նպատակակետը պետք է լինի հիվանդը, նա պետք է ներգրավվի բուժծառայության որակի գնահատման և բարելավման գործընթացներում: Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին (կետ 414) բժշկական ծառայությունների որակի կառավարման նպատակով փուլ առ փուլ ներդրվելու են ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման չափորոշիչները և հիվանդների տվյալների բազայի վարման արձանագրությունները:
9	Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բժշկական օգնության ապահովումը	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին (կետ 415) կրկին հատուկ ուշադրության կենտրոնում են լինելու բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բուժօգնության ապահովման հարցերը: Ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացություններ հիվանդությունների տարածվածությունը դրսևորում է աճի միտում, և, այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբեր:
10	Վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը	Վարակիչ հիվանդությունների դեմ (մասնավորապես՝ տուբերկուլյոզ հիվանդացության դեմ) շարունակական աշխատանքներ իրականացնելու նպատակով 2016 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման 2016-2020 թվականների ազգային ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման 2016-2020 թվականների ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 24-ի նիստի N 11 արձանագրային որոշումը: Շարունակվելու է բնակ-

		չության համար մեծ ռիսկ ներկայացվող այնպիսի հիվանդություն-ների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը, ինչպիսիք են տուբերկուլյոզը, մալարիան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը՝ կանխարգելով մալարիայի կրկին արմատավորումը, տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետագա տարածումը և կտրուկ կրճատելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից և տուբերկուլյոզից մահացությունը: Հիմնական ուշադրությունը բևեռվելու է նաև բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկության աստիճանի բարձրաց-մանը, վարակի տարածման կանխարգելմանն ու առկա դեպքերի բուժման արդյունավետության բարձրացմանը:
11	Սրտի անհետաձգելի վիրահատություններ	Ինչպես ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավա-րական ծրագրով (կետ 416), այնպես էլ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ ՀՀ բոլոր քաղաքացիների համար երաշխավորվելու է սրտի անհետաձգելի վիրահատությունը:
12	Շտապ բժշկական օգնության ծառայության ապահովումը	ՀՀ կառավարության հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության բնակչության շտապ բժշկական օգնության և սպասարկման 2016-2020 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 15-ի նիստի N 14 արձանագրային որոշումը, որի համաձայն նախատեսվում է շտապ բժշկական օգնության համապատասխանե-ցումը ժամանակակից պահանջներին, բնակչության համար շտապ բժշկական օգնության ծառայության մատչելիության և որակի բարելավում:
13	Դեղագործական գործունեության կանոնակարգումը և վերահսկողությունը	Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմա-վարական ծրագրի (կետ 419) մեծ կարևորություն է տրվելու դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիության բարձրացման ուղղու-թյամբ իրականացվելիք ծրագրերին և միջոցառումներին: Ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթությունների շարքում շարունակվելու են մնալ նաև դեղերի որակի և անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունները: Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի (հոդված 16) դեղերի որակի պետական վերահսկողությունը իրականացվելու է դեղերի շրջանա-ռության բոլոր փուլերում:
14	Բնակչությանը անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի ապահովումը:	Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի (հոդված 18) և ՀՀ կառա-վարության 2006 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշման բնակչության առանձին սոցիալական խմբերին իրավունք է տրվում դեղեր ձեռք բերել անվճար կամ արտոնյալ պայմաններով:

8.3 2017-2019թթ. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտի գծով (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախա-տեսվել են՝ 2017 թվականին 86,392.5 մլն դրամ, 2018 թվականին՝ 83,575.8 մլն դրամ և 2019 թվականին՝ 82,287.6 մլն դրամ (ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2017 թվականին նախատեսվել էին՝ 83,321.2 մլն դրամ, իսկ 2018 թվականին՝ 83,886.9 մլն դրամ):

Առանց հաշվի առնելու վարկային, դրամաշնորհային և կապիտալ շինարարության ծրագրերը, առողջապահության ոլորտի ծախսերը 2016 թվականի նկատմամբ 2017 թվականին նվազել են 167.8 մլն դրամով, այդ թվում գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված ծախսերը նվազել են 39.3 մլն դրամով, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ պայմանավորված՝ 137.8 մլն դրամով: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1395-Ն որոշման համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բժշկական ապահովման վարչության լուծարման արդյունքում կրճատված չորս հաստիքներ (9.3 մլն դրամով) տրամադրվել են «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ին:

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով առողջապահության ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի) 2017 թվականին կկազմեն ՀՆԱ-ի 1.56 %-ը, 2018 թվականին՝ 1.41 %-ը և 2019 թվականին՝ 1.29 %-ը:

Գծանկար 8.8 Առողջապահության ոլորտի պետական ծախսերի մակարդակը (%՝ ՀՆԱ-ի նկատմամբ)



Միջնաժամկետ ժամանակահատվածում ՀՆԱ-ի նկատմամբ բյուջետային ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտման հետ կապված ծախսերի նվազմամբ:

Ստորև ներկայացված են առողջապահական ծախսերը ըստ գործառական դասակարգման:

Աղյուսակ 8.6 Առողջապահության բնագավառի պետական ծախսերը (մլն դրամ)

	ՀՀ 2015 թվականի փաստացի	ՀՀ 2016 թվականի հաստատված բյուջե	ՄԺԾԾ		
			2017թ.	2018թ.	2019թ.
Առողջապահություն ընդամենը (առանց կառավարման ապարատի պահպանման ծախսերի)	**82,844.2**	**86,492.8**	**86,392.5**	**83,575.8**	**82,287.6**
1. Արտահիվանդանոցային ծառայություններ (առողջության առաջնային պահպանում) - ընդամենը, այդ թվում	28,004.6	27,705.2	27,640.7	27,640.7	27,640.7
կապիտալ ծախսերի գծով	80,2				
Տեսակարար կշիռը ընդամենը առողջապահության ծախսերում	*33.8*	*32.0*	*32.0*	*33.1*	*33.6*
2. Հիվանդանոցային ծառայություններ	40,004.9	39,818.9	39,656.0	39,515.0	39,515.0
Տեսակարար կշիռը ընդամենը առողջապահության ծախսերում	*48.3*	*46.0*	*45.9*	*47.3*	*48.0*
3. Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում	2,292.3	4,262.9	4,319.3	4,460.3	4,460.3
4. Հանրային առողջապահական ծառայություններ	5,316.0	5,605.5	5,601.2	5,601.2	5,601.2
5. Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում		12.4	12.4	12.4	12.4
6. Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	1,742.7	1,686.3	1,693.7	1,693.7	1,693.7
7. ՀԲ վարկային և դրամաշնորհային ծրագրեր – ընդամենը, այդ թվում	4,533.8	6,301.6	6,448.2	4,652.5	3,364.3
կապիտալ ծախսերի գծով	3,946.4	3,529.5	3,321.0	2,359.8	3,298.4
8. Առողջապահական օբյեկտների շինարարություն	950.0	1,100.0	1,021.0		

Գծանկար 8.9 Առողջապահության ոլորտի պետական ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման (%)

Եթե 2016 թվականին ընթացիկ ծախսերը կազմելու են ընդամենը առողջապահական ծախսերի 94.6 տոկոսը, իսկ կապիտալ ծախսերը՝ 5.4 տոկոսը, ապա 2017 թվականին՝ համապատասխանաբար 95.0 տոկոս և 5.0 տոկոս, 2018 թվականին՝ 97.2 տոկոս և 2.8 տոկոս, իսկ 2018 թվականին՝ 96 տոկոս և 4.0 տոկոս:

Գծանկար 8.10 2017 թվականի առողջապահության ոլորտի ծախսերի կառուցվածքը (%)



<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը</u>

8.3.1 Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանրային առողջապահական ծառայություններին պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 5,601.2 մլն-ական դրամ (2016 թվականի 5,605.5 մլն դրամի փոխարեն): Գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված ծախսերը նվազել են 0.4 մլն դրամով, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ պայմանավորված՝ 3.9 մլն դրամով:

Հանրային առողջապահական ծառայությունների շրջանակներում նախատեսվում է իրականացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, օրենսդրական դաշտի բարելավում, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների ուսումնասիրություն և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ, արյան հավաքագրման ու պաշարման հետազոտություններ, և այլն:

Նախատեսվում է համաճարակաբանական հետազոտություններ անցկացնել վարակային հիվանդությունների օջախներում, իրականացնել ազգաբնակչության իմունիզացիայի կատարման

նկատմամբ հսկողություն, մանրէաբանական, սանիտարաքիմիական հետազոտություններ, նախազգուշական սանիտարական հսկողություն, նախագծերի հիգիենիկ փորձաքննություն, կառուցվող և վերակառուցվող օբյեկտների շահագործման ընդունում, հատուկ վտանգավոր վարակների՝ աղիքային, կաթիլային վարակիչ հիվանդությունների, խոլերայի, բրուցելյոզի, կատաղության, սիբիրախտի և այլ հատուկ վտանգավոր ինֆեկցիաների օջախներում հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում և այլն:

Իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում է ինչպես ազգային օրացույցում ընդգրկված պլանային պատվաստումների, այնպես էլ նախազորակոչիկների և զորակոչիկների պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը: Իմունականխարգելման ազգային ծրագրի գծով նախատեսվող տարեկան գումարը կազմում է 1,890.4 մլն դրամ:

Վերոնշյալ ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա ապահովել Հայաստանի Հանրապետության բնակչության համաճարակային անվտանգությունը, նվազեցնել բնակչության հիվանդացությունը վարակիչ հիվանդություններից:

8.3.2 Բնակչության առողջության առաջնային պահպանումը

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գծով (Արտահիվանդանոցային ծառայություններ խումբ) պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 27,640.7 մլն-ական դրամ (2016 թվականի 27,705.2 մլն դրամի փոխարեն): Գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված ծախսերը նվազել են 9.4 մլն դրամով, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ պայմանավորված՝ 55.1 մլն դրամով:

Միջնաժամկետ հատվածում բուժօգնության առաջնային օղակի հետագա բարելավումն ու զարգացումը շարունակելու են մնալ ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության միջամտության հիմնական առաջնահերթություններից: Դա բացատրվում է, մի կողմից, այդ ծառայությունների ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական առումով համեմատաբար բարձր հասանելիությամբ, մյուս կողմից՝ բուժօգնության այս օղակում միջամտությունների՝ հիվանդությունների բացահայտման ու կանխարգելման հարցում կարևորությամբ:

2017-2019 թվականներին կշարունակվի և կընդլայնվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրումն ու զարգացումը հանրապետության ամբողջ տարածքում, հատուկ ուշադրություն դարձնելով այդ գործընթացում քաղաքային պոլիկլինիկաների ներգրավվածությանը և խրախուսելով ընտանեկան բժշկության «թիմային (խմբային) պրակտիկաների» ստեղծումը: Կշարունակվի բնակչի կողմից առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բժշկի ազատ ընտրության գործընթացը:

Միջնաժամկետ հեռանկարում գյուղական բնակավայրերում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացմանը վերաբերող հարցերը դեռևս շարունակելու են մնալ

պետական քաղաքականության օրակարգում: Միևնույն ժամանակ, շեշտադրվելու են քաղաքային բնակավայրերում (ներառյալ՝ Երևանը) առաջնային բուժօգնության ծառայությունների (պոլիկլինիկաների) արդիականացման հարցերը:

8.3.3 Մոր և մանկան առողջության ապահովումը

2017-2019 թվականներին, ոլորտում վարվող պետական քաղաքականության շրջանակներում, շարունակվելու են հատուկ շեշտադրվել մոր և մանկան առողջության պահպանումն ու վերարտադրողական առողջության բարելավումը: Իրականացվելիք գործողությունների արդյունքում (որոնք մասնավորապես, ուղղված են լինելու հղիներին նախածննդյան և շուրջծննդյան որակյալ բուժօգնության տրամադրմանն, երեխաների՝ բացառապես կրծքով կերակրման խրախուսմանը և միկրոէլեմենտների անբավարարության կանխմանը, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերմանն ու տարածման կանխարգելմանն, երեխաների՝ պատվաստումներով ընդգրկվածության մեծացմանն ու տարածքային կտրվածքով առկա տարբերությունների վերացմանը, վաղ հասակի երեխաների բժշկական ծառայությունների հասանելիության և մատչելիության բարձրացմանը և այլն) ակնկալվում է նշանակալիորեն կրճատել մանկական և մայրական մահացության աստիճանը, ինչը համահունչ է ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակներին:

8.3.4 Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովման, ինչպես նաև սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների, այդ թվում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն և դեղորայքով ապահովմանն ուղղված ծրագրերը

2017-2019 թվականներին հատուկ ուշադրության կենտրոնում են լինելու սոցիալապես անապահով և առանձին խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային մասնագիտացված բուժօգնության ապահովման հարցերը: Հատուկ կարևորվելու է հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը ուղղված միջոցառումների իրականացումը:

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հիվանդանոցային բուժօգնության գծով պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 2017 թվականին՝ 39,656.0 մլն դրամ (2016 թվականի 39,818.9 մլն դրամի փոխարեն), 2018-2019 թվականներին՝ 39,515.0 մլն-ական դրամ:

2017 թվականին գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված ծախսերը նվազել են 29.0 մլն դրամով, իսկ էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ պայմանավորված՝ 77.5 մլն դրամով:

Միևնույն ժամանակ, «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրից 2017 թվականին «Դեղագործական ապրանքներ» դաս է տեղափոխվել 56.4 մլն դրամ, իսկ 2018 թվականին՝ 141.0 մլն դրամ: Նշյալ ծախսերի ավելացումը պայմանավորված է «ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի» Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նոր դրամաշնորհային ծրագրերում պետության մասնակցության մասնաբաժնի աճով:

2017-2019 թվականներին պետական պատվերի շրջանակներում նախատեսվում է տարեկան ընդգրկել 311.4 հազար դեպք:

Միջնաժամկետ հատվածում հիվանդանոցային բուժման մեկ դեպքի միջին արժեքը նախատեսվում է շուրջ 125 հազ. դրամ:

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության ծրագրային առաջնահերթությունների շարքում են լինելու սոցիալական կախվածություն ու հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների տարածման կանխարգելմանը, դրանց վաղ հայտնաբերմանն ու բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված հարցերը:

Ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտանոթային, շաքարային դիաբետի և չարորակ նորագոյացությունների հիվանդությունների տարածվածությունը դրսևորում է աճի միտում, այս առումով, առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը: Ոչ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջին ժամկետ և երկարաժամկետ հատվածներում մտադիր է հատուկ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ, մասնավորապես՝

- շարունակաբար բարելավել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հսկողության ազգային քաղաքականությունը,
- ինտեգրել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հարակից այլ ոլորտային քաղաքականություններում,
- աջակցել ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնները նվազեցնող միջոցառումների իրականացմանը (ծխախոտի և ալկոհոլի օգտագործման դեմ պայքար, առողջ սնուցման քարոզում, ֆիզիկական ակտիվության խթանում),
- օժանդակել ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հսկողության նպատակով հետազոտությունների պարբերաբար անցկացմանն ու առաջընթացի մոնիտորինգի և գնահատման գործուն համակարգի ներդրմանը:

Շարունակվելու է կարևորվել նաև սոցիալական առումով հատուկ նշանակություն ունեցող, անապահով բնակչության համար մեծ ռիսկ ներկայացնող այնպիսի հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, ինչպիսիք են մալարիան, տուբերկուլյոզը և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, կանխարգելով մալարիայի կրկին արմատավորումը, տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետագա

տարածումն ու կտրուկ կրճատելով դրանցից մահացությունը՝ դրանով իսկ վերահաստատելով ՀԶՆ-ին համապատասխան թիրախի ապահովմանն ուղղված գործողությունների իրականացման պատրաստակամությունն ու նպատակաուղղվածությունը:

Մասնագիտացված/հիվանդանոցային բուժօգնության բնագավառի հետագա զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ճանապարհով: Շարունակվելու է համավճարային համակարգի ներդրման գործընթացի հետագա կանոնակարգումը:

Շարունակվելու է նաև ավելորդ հզորությունների կրճատման գործընթացը, իրականացվելու են բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի համաձայն, դեղերի շրջանառության կարգավորման նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը միջին ժամկետ և երկարաժամկետ հատվածում ապահովելու է անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղերի առկայությունը Հայաստանի Հանրապետությունում՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով: Բարձրացնելու է պետական կարիքների համար դեղորայքի գնումների գործընթացի արդյունավետությունը: Ներդնելու է առողջապահական ծառայությունների, դեղերի և դեղամիջոցների ծավալների, գների և ֆինանսական հոսքերի հաշվառման համակարգ: Բարելավելու է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց դեղապահովումը, ներդնելու է մեխանիզմներ սոցիալական առանձին խմբերի համար դեղորայքի մատչելիության ապահովման նպատակով:

2017 թվականին Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ավարտման հետ կապված նախատեսվել է 1,021.0 մլն դրամ:

Միաժամանակ առողջապահության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր

Ծրագրի նպատակն է հեմատոլոգիական և օնկոլոգիական ծառայությունների արդյունավետության բարձրացումը, որի ապահովման համար ծրագրով նախատեսվում է.

ա) ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և արդյունավետ բուժմանն ուղղված սքրինինգային, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ բնակչության իրազեկման ծրագրերի իրականացում,

բ) Շարունակվում են ժամանակակից ճառագայթային բուժման կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Կենտրոնի կառուցման աշխատանքները կավարտվեն 2018 թվականին: Նշված ժամանակահատվածում կենտրոնը կհագեցվի նաև անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և կահույքով, կիրականացվի նաև անհրաժեշտ կադրերի վերապատրաստում:

գ) Երևան քաղաքի Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանության կենտրոնի արդիականացում՝ կենտրոնի հիմնական բուժական և պոլիկլինիկական մասնաշենքերի հիմնանորոգում, ժամանակակից բժշկական սարքավորումներով հագեցում, ոսկրածուծի փոխպատվաստման և բարձր դոզաներով քիմիոթերապիայի բաժանմունքի հիմնում,

դ) մարզային բժշկական կենտրոնների արդիականացում՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ԲԿ հիմնանորոգման և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի ԲԿ նոր շենքի կառուցման աշխատանքները կավարտվեն 2018 թվականին: Նշված ժամանակահատվածում կենտրոնները կհագեցվեն նաև անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և կահույքով:

ե) 2016-2017թթ ընթացքում անհրաժեշտ բժշկական և ախտորոշիչ սարքավորումներով և կահույքով կհագեցվի ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ԲԿ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 3,844.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,691.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,153.5 մլն. դրամ, 2018թ. 2,883.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝2,210.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 672.9 մլն. դրամ, 2019թ. 3,364.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,883.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 480.6 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման դրամաշնորհային ծրագիր

Դրամաշնորհային ծրագիրն ուղղված է հիմնական վարկային ծրագրի աջակցմանը, որով նախատեսվում է.

ա) ոչ վարակիչ հիվանդությունների առկա միտումների վրա հիմնված ծրագրի հզորությունների գնահատում և մշակում,

բ) արդյունքների վրա հիմնված ֆինանսավորման առկա սխեմայի վերանայում,

գ) աշխատաժողովների կազմակերպում և ուսումնական նյութերի պատրաստում:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2017թ. 350.8 մլն. դրամ դրամաշնորհային միջոցներ, 2018թ.՝ 52.9 մլն. դրամ դրամաշնորհային միջոցներ:

3. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացումը՝ առավել լավ ախտորոշում և բուժում տրամադրելու համար, դեղակայուն տուբերկուլոզի (ԴԿ ՏԲ) կառավարման ընդլայնումը, ինչպես քաղաքացիական բնակչության, այնպես էլ դատապարտյալների շրջանում, և տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրումը՝ ՏԲ արդյունավետ վերահսկման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվում են գործառույթներ գնումների և մատակարարման ներուժի, մարդկային ռեսուրսների զարգացման, տուբերկուլոզի ախտորոշման և բուժման, հիվանդներին սոցիալական աջակցության, ՏԲ/ՄԻԱՎ համավարակի դեմ պայքարի, վարակի վերահսկման, մոնիտորինգի և գնահատման համակարգի բարելավման, հանրության իրազեկման ոլորտներում՝ տուբերկուլոզի տարածվածության և մահացության մակարդակները իջեցնելու և դեղակայուն տուբերկուլոզի հետագա զարգացումը կանխելու նպատակով:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2017թ. 1,652.0 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,504.9.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 147.2 մլն. դրամ, 2018թ. 1,141.9 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,043.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 98.1 մլն. դրամ:

4. Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի նպատակ է նպաստել հանրապետությունում ՄԻԱՎ համաճարակի նվազեցմանը՝ հակառետրովիրուսային բուժում տրամադրելով բոլոր նրանց, ովքեր ունեն վերջինիս կարիքը, հղի կանանց և ընդհանուր բնակչության համար ապահովելով խորհրդատվության և թեստավորման հասանելիությունը, իրականացնելով ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումներ դատապարտյալների և տեղաշարժվող բնակչության շրջանում: Իրականացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության կետերին և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություններ կատարող լաբորատորիաներին տեխնիկական աջակցության և մեթոդական օգնության տրամադրումը, սեմինար-վարժանքների կազմակերպումը, տեղեկատվական համակարգի հզորացումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի ստեղծումը և համաճարակաբանական հետազոտությունների իրականացումը:

Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2017թ. 600.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 545.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 54.6 մլն. դրամ, 2018թ. 574.0 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 521.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 52.2 մլն. դրամ:

ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը[36:]

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն: Ստորև ներկայացված է ոլորտում առկա իրավիճակը և պետական միջամտության հիմնական ուղղություններն ըստ սոցիալական պաշտպանության առանձին բնագավառների:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տարեցներին շուրջօրյա խնամքի, սոցիալական սպասարկման ծառայությունների, ցերեկային խնամքի, տնային պայմաններում կենսաթոշակառուներին, հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց կենցաղային սպասարկման, սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության և իրավաբանական խորհրդատվության ծառայությունների տրամադրման եղանակով:

Այս բնագավառի շահառուներ են համարվում խնամքի կարիք ունեցող տարեց ու հաշմանդամ անձինք, ինչպես նաև սոցիալական պատճառներով անօթևան դարձած անձինք:

Տարեցներին և խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունները տրամադրվում են 9 (5 պետական շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների և 4 ոչ պետական) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների միջոցով: 2015 թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 5 տարեցների

[36] Տես 2014-2017 թվականների ՀՀ կառավարության ծրագիրը (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում), ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը, ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (ՀՀ կառավարության 27.05.2014 թ. N 442-Ն որոշումը):

շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվել են 1154 շահառու: Վերջիններս գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո և ապահովվում են կենսապահովման համար անհրաժեշտ բոլոր միջոցներով ու պայմաններով: Տնային պայմաններում տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրումն իրականացնում է «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով (2015 թ. Երևան քաղաքում՝ տնային պայմաններում սպասարկվել է 1490 կենսաթոշակառու):

2015 թ. Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատին կից գործող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի ցերեկային կենտրոնում սպասարկվել է 15 անձ: Հաճախորդները ցերեկային կենտրոնի համապատասխան մասնագետների կողմից ստանում են սոցիալ-հոգեբանական վերականգնողական օգնություն, արհեստագործության և արվեստի միջոցով վերականգնում են իրենց առողջությունը: Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվական ծառայություններ մատուցվում են նաև նրանց ընտանիքների անդամներին:

2015 թ. «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ի միջոցով անօթևանների ժամանակավոր կացարանում ժամանակավոր (մինչև 90 օր) կացարանով են ապահովվել 95 անօթևան մարդ, այդ ընթացքում հնարավորինս լուծվել են նրանց սոցիալական խնդիրները:

Հանրապետությունում 2015 թ. սոցիալական բնակարանային ֆոնդը ընդգրկել է ընդամենը Մարալիկ քաղաքում և Երևանում Թբիլիսյան խճուղի 3/14 հասցեում 135 բնակարան և Սպիտակում 9 առանձնատուն:

Սոցիալական բնակարանները տրամադրվում են բնակարանային տարածություն չունեցող առանց ծնողական խնամքի մնացած անձանց, երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների նախկին շրջանավարտներին, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող՝ միայնակ չաշխատող կենսաթոշակառու (ծերության նպաստի տարիքի հասած) անձանց (ընտանիքներ) և միայնակ չաշխատող կենսաթոշակառու անձանց (ընտանիքներ) և միածնող ընտանիքներին (եթե ամուսիններից մեկը մահացել է, կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա): Սոցիալական բազմաբնակարան շենքում, բնակարաններ են տրամադրվում նաև սատարող ընտանիքներին, որոնք բացի այն հանգամանքից, որ ստանում են օթևան, միաժամանակ՝ աջակցում են տվյալ բազմաբնակարան շենքում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին, հաշմանդամներին՝ իրենց սոցիալական խնդիրների լուծման հարցում:

Սոցիալական խմբերին օթևանի տրամադրման ծառայությունն իր մեջ ներառում է բնակարանի և համալիր սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում, ըստ յուրաքանչյուր ընտանիքի սոցիալական կարիքի:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում) և ընտանիքներում խնամվող առանց ծնողական խնամքի մնացած, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, խնամքի և դաստիարակության անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներին, երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին սոցիալ-հոգեբանական, բժշկական, իրավական, խնամքի և դաստիարակության ծառայությունների մատուցման եղանակով:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են 6 պետական և 3 բարեգործական շուրջօրյա խնամքի հաստատություններ: Դրանցից 3 պետական և 1 բարեգործական հաստատությունները նախատեսված են մտավոր և ֆիզիկական արատներ ունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու համար:

2015 թ. 6 պետական շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվել է 684 երեխա, այդ թվում շուրջ 500-ը՝ հատուկ (մասնագիտացված) հաստատություններում, իսկ 3 բարեգործական շուրջօրյա խնամքի հաստատություններում՝ շուրջ 150 երեխա:

Նշված հաստատություններում երեխաների թվի կրճատման և մուտքի կանխարգելման նպատակով պետության միջամտությամբ իրականացվում են բեռնաթափման՝ երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու ծրագրեր, ինչպես նաև երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների ու անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի միջոցով, որոնք այլընտրանք են հանդիսանում շուրջօրյա խնամքի հաստատություններում և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում խնամվող երեխաների համար:

2015 թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների խնամքի 7 գիշերօթիկ հաստատություն (2015 թ. հուլիսից «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի), 3 սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն և 1 ժամանակավոր օթևան: 2015 թ. գիշերօթիկ հաստատություններում խնամվել է 614 երեխա, երեխաների խնամքի սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում՝ միջին թվով 268 երեխա, իսկ ժամանակավոր օթևանում՝ 17 երեխա:

Զբաղվածության բնագավառ

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին զբաղվածության բնագավառում մատուցվող հիմնական ծառայություններն են գործազուրկների, աշխատանք փնտրող անձանց, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության և ժամանակավոր զբաղվածության ապահովումը, աշխատանքի ընտրության հարցում աշխատանք փնտրող անձանց օժանդակության տրամադրումը, իսկ գործատուին անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող աշխատուժով ապահովումը:

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին զբաղվածության բնագավառում բնակչությանը տրամադրվող հիմնական տրանսֆերտներն են աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրումը, ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրումը, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրումը, աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցումը և այլն:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում զբաղվածության գործակալությունում հաշվառված գործազուրկները, աշխատանք փնտրող և աշխատաշուկայում անմրցունակ անձինք:

«Զբաղվածության պետական գործակալության» տվյալներով 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում աշխատանք փնտրողների թիվը կազմել է 88928 մարդ, գործազուրկների թվաքանակը կազմել է 77004 մարդ կամ աշխատանք փնտրողների 86.6%: Գործազուրկներից 24.7% (19007 մարդ) երիտասարդներ են:

2015 թ. ընթացքում զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվել է 11107 անձ (աշխատանք փնտրողների 12.5%): Զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկվածների 750 կամ 6.8% հաշմանդամություն ունեցող անձինք են: Տարեսկզբից աշխատանքի է տեղավորվել 16598 անձ (աշխատանք փնտրողների 18.7%): Աշխատանքի տեղավորվածներից 696 հաշմանդամություն ունեցող անձինք են, 3695՝ երիտասարդներ: Աշխատաշուկայում անմրցունակ անձանցից աշխատանքի է տեղավորվել 84.7%:

Զբաղվածության բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական գործակալության» և նրա տարածքային մարմինների, ինչպես նաև Երևանում գործող «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Գյումրի քաղաքում գործող «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

2015 թ. «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի» ծառայություններն ուղղված են եղել մասնագիտական կողմնորոշման համակարգի ծառայությունների իրականացման մոդելների և մեթոդաբանության մշակմանը, կադրերի վերապատրաստմանը և իրազեկման աշխատանքների անցկացմանը: Այսպես, 2014 թվականին կենտրոնի կողմից իրականացվել է 300 մասնագետի վերապատրաստում, իրազեկման սեմինար-հանդիպումներին մասնակցել է 300 անձ և մշակվել է 3 ձեռնարկ:

2015 թ. Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոնի կողմից աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ են մատուցվել 540 շահառուի սպասարկման համար:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հաշմանդամ համարվող անձանց առանձին խմբերին տարբեր ծառայությունների մատուցման եղանակով:

Հաշմանդամներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող հիմնական ծառայություններն են հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց պրոթեզավորումը, վերականգնողական պարագաներով ապահովումը և դրանց վերանորոգումը, այդ թվում նաև աչքի պրոթեզավորում և ձայնաստեղծ սարքերի ձեռքբերում, հաշմանդամներին սայլակներով ապահովում, հաշմանդամներին, մինչև 18 տարեկան երեխաներին հավաստագրերով (եվրոպական արտադրության լսողական սարքի ձեռքբերման նպատակով) ու տարիքային կենսաթոշակառուներին լսողական սարքերով ապահովում, մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքերի ներդիրներով ապահովում, տեսողությունից հաշմանդամ անձանց համար հատուկ տեղեկատվական միջոցների ստեղծումը (հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, «Խոսող գրքերի» ձայնագրություն և այլն), հաշմանդամների հոգեկան առողջության վերականգնումը, հաշմանդամների բուժումը և բժշկասոցիալական վերականգնումը, պետական աջակցություն «Փրկություն» հասարակական կազմակերպության մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ երիտասարդների սոցիալ-վերականգնողական ցերեկային խնամքի կենտրոնին:

2015 թ. փաստացի պատրաստվել, վերանորոգվել, ձեռք է բերվել և բաշխվել է.

13303 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, այդ թվում՝ 4673 պրոթեզաօրթոպեդիկ, 7723 վերականգնողական պարագա, 657 վերանորոգվել է, 80 ձայնաստեղծ սարք, 170 աչքի պրոթեզ: 198 հավաստագիր՝ եվրոպական արտադրության լսողական սարքի ձեռքբերման համար: ԱՊՀ երկրների արտադրության 1000 լսողական սարք, մինչև 12 տարեկան երեխաների լսողական սարքերի ներդիրներ 400 հատ և 415 հաշմանդամի սայլակ:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում ՀՀ քաղաքացի հաշմանդամները:

Հաշմանդամների հիմնահարցերի բնագավառում պետական միջամտությունն իրականացվում է «Արթմեդ» բժշկավերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով (2015 թ. փաստացի անվճար բուժօգնություն ստացողների թիվը կազմել է 500 մարդ)՝ հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց ստացիոնար հիվանդանոցային պայմաններում բուժում և բժշկասոցիալական վերականգնում իրականացնելու նպատակով:

«Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում 2015 թ. իրականացվել են նաև հաշմանդամների և սոցիալապես անապահով անձանց հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ՝ փաստացի անվճար բուժօգնություն ստացողների թիվը կազմել է 318 մարդ:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երեխայի ծննդյան միանվագ նպաստի և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման եղանակով:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են համարվում նորածին երեխայի ծնողները (2015 թ. ծնունդների թիվը հանրապետությունում կազմել է 41 815 երեխա) և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձը (նպաստը տրվում է մինչև երեխայի 2 տարեկան դառնալը):

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում պետական միջամտությունը իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման եղանակներով:

Այս բնագավառում շահառուներ են համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքները, ինչպես նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացող առանձին խմբերին դասված քաղաքացիները:

2015 թ. ընթացքում ընտանեկան և սոցիալական նպաստ ստացել են միջինում 103 745 ընտանիք, նպաստի միջին ամսական չափը կազմել է 29 379.3 դրամ, իսկ ընտանեկան նպաստի իրավունք տվող սահմանային միավոր է սահմանվել 30.00:

2015 թ. շարունակվել է նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թ. հունիսի 10-ը դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարումները և 2015 թ. փաստացի բյուջետային հատկացումները կազմել են 1 481.0 մլն դրամ, որից.

- մինչև 1931 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձանց մասով՝ 725.5 մլն դրամ,

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից անձանց մասով՝ 48.5 մլն դրամ,

-սահմանամերձ բնակավայրերում բնակվող անձանց մասով՝ 693.8 մլն դրամ,

նախորդ տարիների շահառուների մասով՝ 13.2 մլն դրամ:

Հանրապետությունում մինչև 2015 թ. ներառյալ գործարկվել են 19 ինտեգրված (համալիր) սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ, մշակվել և փորձարկվել են միասնական ընդունարաններում դիմումների հաշվառման էլեկտրոնային և սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգերը:

Ինտեգրված (համալիր) սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում մեկ տանիքի տակ հավաքվում են տվյալ տարածաշրջանը սպասարկող սոցիալական ծառայությունների տարածքային մարմինը, զբաղվածության տարածքային կենտրոնը, սոցիալական ապահովության տարածքային բաժինը և բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովը՝ կիրառելով «մեկ պատուհանի» սկզբունքը:

Կենսաթոշակային ապահովության բնագավառ

Կենսաթոշակային ապահովության բնագավառը ներառում է կենսաթոշակային ապահովության համակարգը:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կենսաթոշակային տարիքի անձանց աշխատանքային կենսաթոշակի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների, սպայական անձնակազմին և շարքային զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակների տրամադրման եղանակով:

2015 թ. փաստացի աշխատանքային կենսաթոշակ ստացողների թիվը կազմել է 447 859 մարդ, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստ ստացողների թիվը՝ 60 506 մարդ, ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակ ստացողների թիվը՝ 538 մարդ, սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամներին տրվող կենսաթոշակ ստացողների թիվը՝ 29 982 մարդ և շարքային զինծառայողների՝ 2 228 մարդ:

Սոցիալական ապահովության բնագավառ

Սոցիալական ապահովության բնագավառը ներառում է սոցիալական ապահովության համակարգը:

Սոցիալական ապահովության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ժամանակավոր անաշխատունակության և հղիության ու ծննդաբերության նպաստների (2016 թվականի հունվարի 1-ից՝ մայրության նպաստ) տրամադրման եղանակով:

2015 թ. փաստացի ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվը կազմել է 1 231 731 օր, իսկ միջին օրական նպաստի փաստացի չափը՝ 2 204 դրամ:

2015 թ. հղիության ու ծննդաբերության օրերի թիվը կազմել է 1 515 208 օր, իսկ միջին օրական նպաստի փաստացի չափը՝ 4 047 դրամ:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման և աշխատանքային օրենսդրության կիրարկման նկատմամբ վերահսկողության եղանակով:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառ

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառի պետական միջամտությունը իրականացվում է աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման եղանակով: Հայաստանի Հանրապետությունում 2015 թ. 480 անձինք աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցում են ստացել պետական բյուջեի միջոցներից:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառ

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՄ պատերազմի վետերանների, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին պարգևավճարի և հատուկ վճարների տրամադրման եղանակով:

2015 թ. «Վետերանների պատվովճարներ» ծրագրի գծով փաստացի շահառուների թիվը կազմել է 905 մարդ, իսկ «ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրում» ծրագրի գծով փաստացի պարգևավճար ստացողների թիվը՝ 37 571 անձ:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարաններում սպասարկման ծառայությունների մատուցման եղանակով:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ հայցող օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք ու նրանց ընտանիքի անդամները:

Նշված ծառայությունները հիմնականում մատուցվում են «Հանրակացարաններ» ՊՈԱԿ, «Յունոնա» ՓԲԸ և Հայաստանի տուրիզմի զարգացման հիմնադրամի «Նաիրի» մասնաճյուղի միջոցով, որը սպասարկում է տարբեր վայրերում գտնվող փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարանները: 2015 թվականին նշված կացարաններում բնակվող փախստականների թիվը կազմել է 850 մարդ:

2015 թվականին «Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրով ժամանակավոր ապաստան ստացողների թիվը կազմել է 29 մարդ: Նշված ծրագիրը իրականացվում է «Հատուկ կացարան» ՊՈԱԿ միջոցով:

«Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում» ծրագրով («Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ) նախատեսվում է փախստականների մասին տեղեկություններ պարունակող քարտադարանների և նրանցում գտնվող փաստաթղթերի պահպանում, տեղեկատվական շտեմարանների մշակում, տեղեկատվական ծառայությունների տրամադրում, միգրանտների ետ վերադարձմանը նպաստելու նպատակով և արտերկրում անելանելի վիճակում հայտնված ՀՀ քաղաքացիների համար խորհրդատվության և աջակցության ցուցաբերում և այլն:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության բնագավառ

Զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին ֆինանսական աջակցության բնագավառում պետական միջամտությունը հիմնականում իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք

ունեցող ընտանիքներին բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման եղանակով:

Ծրագիրն իրականացվում է 2003 թվականից, որի շրջանակներում 2003-2015 թվականներին անհատույց պետական ֆինանսական աջակցություն է ստացել 2347 ընտանիք:

9.1.2 Վերջին տարիների զարգացման միտումները ոլորտում

Վերջին տարիներին արձանագրվել է ՀՀ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի (առանց գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի) մակարդակի կայուն աճի միտում (միայն 2014-2015 թվականներին այդ ոլորտին ուղղված ընդհանուր ծախսերի մակարդակը 338.5 մլրդ դրամից աճել է 378.9 մլրդ դրամի): Ոլորտում ծախսերի մակարդակի նման աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի ներդրմամբ, կենսաթոշակների միջին ամսական չափերի աճով, հաշվարկային միջին ամսական աշխատավարձի, այդ թվում նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով ու ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի միջին ամսական չափի ավելացմամբ՝ շահառուների թվաքանակի փոփոխության պայմաններում:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Բարելավվել է տարեցների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում կոմունալ-կենցաղային պայմանները: Մասնավորապես, իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ Երևանի N1, Նորքի, Գյումրու և Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատներում, «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում: Երևանի N1 տուն-ինտերնատին կից կառուցվել է անկողնային խնամքի բաժանմունքի նոր մասնաշենքը, Նորքի տուն-ինտերնատում բացվել է տեսազանգի սենյակ, կազմակերպվել է նոր դեղատուն, վերանորոգվել են Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի մի մասնաշենքի հանգստի սենյակները և պահեստը:

2015 թ. հուլիսի 1-ից «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառումը ընդլայնվել է նոր բաղադրիչով՝ «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում խնամք է կազմակերպվել շուրջ 120 տարեց և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց համար, որի արդյունքում 2015 թ. տարեցների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում փաստացի խնամք է կազմակերպվել 1154 շահառուի համար 2014 թ. 1045 շահառուի դիմաց, իսկ բյուջետային հատկացումները աճել են 19.8% (2014 թ. փաստացի հատկացվել է 1639.6 մլն դրամ):

2014-2015 թվականներին տնային պայմաններում տարեցների սոցիալական սպասարկման կենտրոնի կողմից փաստացի խնամք է կազմակերպվել շուրջ 1500-ական շահառուների համար՝ բյուջետային հատկացումների 13.7% աճի պայմաններում (2014 թ. փաստացի հատկացվել է 122.9 մլն դրամ):

2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Երևան քաղաքում և հանրապետության մարզերում միայնակ ծեր, հաշմանդամ և անօթևան քաղաքացիների սպասարկման նպատակով, առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին (աշխատակիցների աշխատավարձի մասով, ներառյալ եկամտային հարկը) և առանձին դեպքում նաև սննդի և էլեկտրաէներգիայի գումարի փոխհատուցման մասով)՝ 2014 թ. 3764 շահառուի և 2015 թ. 3701 շահառուի համար: 2015 թ. փաստացի բյուջետային հատկացումները 7.2% աճել են (2014 թ. փաստացի հատկացվել է 247.2 մլն դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տարեցների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում (1210 շահառու), տնային պայմաններում սպասարկման կենտրոնում (1500 շահառու), Վարդենիսի ցերեկային կենտրոնում (30 շահառու) սպասարկվող անձանց թվաքանակը կպահպանվի 2016 թ. մակարդակով: Կպահպանվի ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակը և ՀՀ պետական բյուջեից առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին պետական աջակցությունը:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

2014-2015 թվականներին երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող 6 հաստատություններում նախատեսված 745 և 735 երեխայի փոխարեն փաստացի խնամք են ստացել 720 և 684 երեխա: Նշված հաստատություններում խնամվող շահառուների թվաքանակի նվազումը հիմնականում պայմանավորված է բնագավառում այլընտրանքային ծառայությունների առկայության հանգամանքով, այդ թվում բեռնաթափման գործընթացի իրականացմամբ: Չնայած դրան, նույն ժամանակահատվածում հատուկ (մասնագիտացված) շուրջօրյա խնամքի հաստատություններում սպասարկվող երեխաների թիվը մնացել է անփոփոխ՝ 2014-2015 թվականներին կազմելով շուրջ 500 երեխա, բյուջետային հատկացումները 2015 թ. աճել են 2.8% (2014 թ. Փաստացի հատկացվել է 2077.8 մլն դրամ):

2014-2015 թվականներին երեխաների խնամք իրականացնող գիշերօթիկ հաստատություններում («Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի վերանվանման հետ կապված 2015 թ. հուլիսից հանրապետությունում գործում են 7 հաստատություններ 2014 թ. 8 դիմաց) փաստացի խնամք են ստացել 683 և 614 երեխա, իսկ բյուջետային հատկացումները մնացել են գրեթե անփոփոխ (2014 թ. փաստացի հատկացվել է 954.6 մլն դրամ):

2014-2015 թվականներին երեխաների խնամքի սոցիալական հոգածության 3 ցերեկային կենտրոններում փաստացի խնամք են ստացել 267 և 268 երեխա, իսկ բյուջետային հատկացումները 2015 թ. աճել են 6.2% (2014 թ. փաստացի հատկացվել է շուրջ 214.0 մլն դրամ):

2014-2015 թվականներին «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի» կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներից ժամանակավոր փաստացի խնամք են ստացել 11 և 17 երեխա, իսկ բյուջետային հատկացումները 2015 թ. աճել են 16.6% (2014 թ. փաստացի հատկացվել է 31.9 մլն դրամ):

2014-2015 թվականներին խնամատար ընտանիքներ են տեղափոխվել շուրջ 17 երեխա, իսկ բյուջետային հատկացումները 2015 թ. նվազել են 1.4% (2014 թ. փաստացի հատկացվել է 23.4 մլն դրամ)՝ խնամատար ընտանիքներին տրվող օժանդակության փաթեթի գումարի աճի պայմաններում:

2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Երևան քաղաքում և հանրապետության մարզերում երեխաների և հաշմանդամների սպասարկման նպատակով «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությանը (աշխատակիցների աշխատավարձի մասով, ներառյալ եկամտային հարկը) 257 և 254 շահառուի համար, իսկ 2015 թ. փաստացի բյուջետային հատկացումները աճել են 10.5% (2014 թ. փաստացի հատկացվել է 63.3 մլն դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններում (660 շահառու), գիշերօթիկ խնամքի հաստատություններում (730 շահառու), ցերեկային կենտրոններում (300 շահառու) և անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանում (20 շահառու) սպասարկվող անձանց թվաքանակը կմնա անփոփոխ՝ պահպանելով 2016 թ. մակարդակը: Կպահպանվի ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակը և ՀՀ պետական բյուջեից առանձին հասարակական կազմակերպություններին պետական աջակցության մակարդակը:

Զբաղվածության բնագավառ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական գործակալության» տվյալներով 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում աշխատանք փնտրողների թիվը կազմել է 88928 մարդ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 22.5% (2015 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 72606 մարդ):

2015 թ. զբաղվածության բնագավառին ուղղված բյուջետային հատկացումները նվազել են 1.8% (2014 թ. փաստացի հատկացվել է 1 553.0 մլն դրամ):

2015-2014 թվականներին «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի գծով փաստացի բյուջետային հատկացումները աճել են 8.7% (2014 թ. 25.6 մլն դրամ):

2015-2014 թվականներին «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ի գծով փաստացի բյուջետային հատկացումների աճել են 1.7% (2014 թ. փաստացի հատկացվել է 16.7 մլն դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես կընդլայնվի բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակը (նոր միջոցառման ընդգրկմամբ պայմանավորված)՝ զբաղվածության բնագավառի շահառուների թվի փոփոխության պայմաններում:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

2014-2015 թվականներին շեշտադրում է կատարվել պրոթեզների և վերականգնողական պարագաների տեսականու ընդլայնման և որակի բարձրացման վրա:

2015 թ. փաստացի հատկացվել և վերանորոգվել է 13303 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա (2014 թ. 12702 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագայի դիմաց), իսկ փաստացի բյուջետային հատկացումները նվազել են 3.5% (2014 թ. 854.0 մլն դրամ):

2015 թ. հաշմանդամներին սայլակներով, լսողական սարքերով և լսողական սարքերի ներդիրներով ապահովման նպատակով փաստացի բաշխվել է 1815 պարագա 2014 թ. 2158 պարագայի դիմաց՝ բյուջետային հատկացումների նվազման 7.7% պայմաններում (2014 թ. 85.9 մլն դրամ):

«Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում 2015-2014 թվականներին փաստացի բուժում են ստացել 818 և 1030 հիվանդ՝ բյուջետային հատկացումների աճի 7.2% պայմաններում (2014 թ. 169.4 մլն դրամ):

2015-2014 թվականներին ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել Երևան քաղաքում և հանրապետության մարզերում հաշմանդամ քաղաքացիների սպասարկման նպատակով, առանձին հասարակական կազմակերպություններին (աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ եկամտային հարկը) և առանձին տեսակների հանրային ծառայությունների մասով) 50 շահառուի համար՝ բյուջետային հատկացումների աճի 9.2% պայմաններում (2014 թ. 21.3 մլն դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

2015 թ. մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թիվը կազմել է 13063 մարդ 2014 թ. 13312 մարդու դիմաց: Բյուջետային հատկացումները նվազել են 0.06% (2014 թ. փաստացի հատկացումները կազմել են 3 066.5 մլն դրամ):

2015 թ. 2014 թ. համեմատ արձանագրվել է ծնունդների թվի 2.8% նվազում 2014 թ. 43031 երեխայի դիմաց: Բյուջետային հատկացումները աճել են 18.4% (2014 թ. փաստացի հատկացումները կազմել են 7 002.9 մլն դրամ):

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվի և բյուջետային հատկացումների նվազում, իսկ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թիվն և բյուջետային հատկացումները կմնան անփոփոխ:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված (ԸԿԲՈւ) նպաստի (ներառում է. *ընտանեկան նպաստը*՝ նշանակվում է սոցիալապես անապահով երեխա ունեցող ընտանիքներին, *սոցիալական նպաստը*՝ սոցիալապես անապահով երեխա չունեցող ընտանիքներին և *հրատապ օգնությունը*՝ սոցիալապես անապահով այն ընտանիքներին, որոնք չունեն ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք, սակայն գտնվում են կյանքի դժվարին իրավիճակում և ունեն կարճաժամկետ ֆինանսական խնդիրներ) ծրագրի հասցեականության մեծացման հարցը մնում է որպես սոցիալական աջակցության ենթաոլորտի քաղաքականության հիմնական մարտահրավեր: Դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները շարունակվել են հետևյալ հիմնական ուղղություններով՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, վարչարարության բարելավում:

2008 թ. հունվարի 1-ից մինչև 2013 թ. ներառյալ ընտանեկան նպաստի, իսկ 2014 թ. հունվարի 1-ից՝ ընտանեկան և սոցիալական նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվել է «30.00»:

Ընտանիքների անապահովության գնահատման կարգով միայնակ (անժառանգ) կենսաթոշակառուների համար սահմանվեց ընտանիքների անապահովության միավորի հաշվարկման արտոնյալ պայման՝ եթե միայնակ չաշխատող կենսաթոշակառուի ընտանիքի անապահովության միավորն անապահովության 0 միավորից բարձր և ցածր է ՀՀ կառավարության տվյալ տարվա համար սահմանած ընտանիքի անապահովության սահմանային միավորից կամ հավասար դրան, ապա նրա ընտանիքի անապահովության միավորը հավասարվում է սահմանային միավորից մեկ հարյուրերորդական բարձր միավորի, որը հնարավորություն է տալիս միայնակ անժառանգ կենսաթոշակառուին ձեռք բերել նպաստի իրավունք:

2014-2015 թթ բարձրացվեցին կենսաթոշակի չափերը և ներդրվեց զբաղվածության ոլորտի նոր ռազմավարությունը, որով որպես հիմնական ուղղություն սահմանվել է զբաղվածության ակտիվ ծրագրերի իրականացումը: 2015 թ. ընտանիքների անապահովության գնահատման կարգում կատարվել են փոփոխություններ, ըստ որոնց չզոքացվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի իրավունքի որոշման վրա կենսաթոշակի չափի բարձրացման ազդեցությունը և խստացվել են ընտանիքի տնտեսապես ակտիվ անդամ ունենալու

պարագայում ԸԿԲՈւ նպաստի իրավունքի որոշման պայմանները, դրանով խթանելով նրանց զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկելու գործընթացը:

Միաժամանակ, նման փոփոխությունը սոցիալապես անապահով ընտանիքներին ուղղորդում է առավելապես զբաղվածության ակտիվ ծրագրեր, դրանով նրանց ընձեռելով սեփական խնդիրներն ինքնուրույնաբար լուծելու հնարավորություն:

Այս տարիների ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում իրականացված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել համակարգում հաշվառված և ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան:

Աղյուսակ 9.1 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագիրը ՀՀ-ում 2011-2015 թվականներին

	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014թ.	2015թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	14.91	15.9	16.5	17.2	17.4
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	78.94	77.69	79.77	77.71	77.57
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	11.77	12.36	13.16	13.37	13.53
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	78.07	80.69	76.97	76.47	76.91
ՀՀ պետական բյուջեով հաստատված միջոցներ (մլրդ դրամ)	35.497	37.105	37.105	37.105	38.362
Նպաստառու ընտանիքների միջին ամսական փաստացի թիվ	91575	96309	101187	102459	103745
Նպաստի միջին ամսական (հաստատված) չափ (դրամ)	26853.0	29537.6	29537.8	29537.8	30357.6

Ինչպես երևում է աղյուսակից, 2011-2015 թթ համակարգում հաշվառված նպաստառու ընտանիքների թիվը և նպաստի միջին ամսական չափը բարձրանում է: Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2014 թվականի աղքատության մակարդակը կազմել է 30% 2010 թ. 35.8% դիմաց կամ աղքատության մակարդակը նվազել է 19.3%: Սակայն, բնակչության սպառման կամ եկամուտների բաշխվածության Ջինիի գործակցի մեծությունները աճել են 2014 թ. համապատասխանաբար կազմելով 0.277 և 0.373 2010 թ. 0.265 և 0.362 դիմաց, ինչը նշանակում է, որ աղքատության մակարդակի նվազումը չի զուգորդվել բնակչության աղքատ խավերի կենսամակարդակի բարձրացմամբ (աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2011-2015 թթ հրապարակումներ (Աղյուսակ 3.2 և 5.2)):

Պահպանվում է նպաստառու ընտանիքների կազմում երեխա ունեցող ընտանիքների բարձր տեսակարար կշիռը, ինչը համահունչ է պետության որդեգրած քաղաքականությանը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաների առաջնահերթության սկզբունքին:

2011-2014 թթ ընտանեկան նպաստի (սոցիալական աջակցության ծրագրերի) ազդեցությունն աղքատության վրա փոփոխվել է, ընդ որում 2012 թ. այն նվազել է: Նույն տետդենցը պահպանվել է նաև 2013-2014 թվականներին: Համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության, տվյալները բերվում են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 9.2 «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի և (սոցիալական աջակցության ծրագրերի) ազդեցությունն աղքատության վրա ՀՀ-ում 2011-2014 թվականներին

	2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.	
	Աղքատության մակարդակ	Աղքատության խորության ցուցանիշ	Աղքատության մակարդակ	Աղքատության խորության ցուցանիշ	Աղքատության մակարդակ	Աղքատության խորության ցուցանիշ	Աղքատության մակարդակ	Աղքատության խորության ցուցանիշ
Հետտրանսֆերտային մակարդակ (հետ կ/թոշակային և հետ սոցիալական աջակցություն)	35.0	3.7	32.4	2.8	32.0	2.7	30.0	2.3
Նախատրանսֆերտային մակարդակ (նախակ/թոշակային և նախասոցիալական աջակցություն)	53.2	22.2	45.4	18.2	45.9	18.1	42.7	17.5

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2012-2015 թթ հրապարակումներ (Աղյուսակ 10.2)

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է, որ նպաստառուների թիվը (104685 ընտանիք) և նպաստի միջին ամսական չափը կմնան անփոփոխ (պահպանելով 2016 թ. մակարդակը):

2015 թ. ընթացքում հանրապետությունում գործարկվել են 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ 2014 թ. 18-ի դիմաց:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները:

Կենսաթոշակային ապահովության բնագավառ

2015-2014 թվականներին աշխատանքային կենսաթոշակների վճարմանն ուղղված փաստացի միջոցները աճել են 13.9% (2014 թ. 194702.5 մլն դրամի դիմաց), արդյունքում 2015-2014 թվականներին միջին ամսական աշխատանքային կենսաթոշակի չափը կազմել է համապատասխանաբար 41254.1 դրամ և 36677 դրամ կամ աճը կազմում է 12.5%:

2015-2014 թվականներին աշխատանքային կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցների փաստացի աճը ուղեկցվել է կենսաթոշակառուների փաստացի թվաքանակի աճով՝ 2015 թ. կազմելով 447859 անձ կամ 1.2% ավելի (2014 թ. 442375 մարդու դիմաց):

2015-2014 թվականներին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների վճարմանն ուղղված միջոցներն աճել են 15.9% (2014 թ. 11455.2 մլն դրամի դիմաց), արդյունքում 2015 թ. միջին ամսական կենսաթոշակի չափը կազմել է 18280.3 դրամ կամ աճը կազմել է 11.9% (2014 թ. 16342 դրամի դիմաց):

2015-2014 թվականներին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների վճարմանն ուղղված միջոցների աճը ուղեկցվել է կենսաթոշակառուների փաստացի թվաքանակի աճով՝ 2015 թ. կազմելով 60506 անձ կամ 3.6% ավելի (2014 թ. 58413 մարդու դիմաց):

2015 թ. 2014 թ. համեմատ աճել են սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները 2.7% 2014 թ. 21514.4 մլն դրամի դիմաց:

2015-2014 թվականներին սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների վճարմանն ուղղված միջոցների աճը ուղեկցվել է կենսաթոշակառուների փաստացի թվաքանակի նվազմամբ՝ 2015 թ. կազմելով 29982 անձ կամ 3.6% ավելի (2014 թ. 34469 մարդու դիմաց), իսկ կենսաթոշակի միջին ամսական չափը 2015 թ. աճել է 17.6% կամ 61156.4 դրամ 2014 թ. 52013.8 դրամի դիմաց:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վճարվող կենսաթոշակներին ուղղված միջոցների նվազումը նախորդ տարվա նկատմամբ 2015 թ. կազմել է 30.8% (2014 թ. 990.6 մլն դրամի դիմաց):

Կենսաթոշակառների թիվը 2015 թ. կազմել է 2228 մարդ կամ 2014 թ. նկատմամբ 49.5% պակաս, իսկ կենսաթոշակի միջին ամսական չափը 2015 թ. կազմել է 25642.2 դրամ կամ 37% ավելի 2014 թ. 18718.5 դրամի դիմաց:

2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտավ պետական պաշտոն զբաղեցրած անձանց վարձատրության նոր համակարգը, որի ներդրման համատեքստում նույնականացվեցին առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց տրվող սոցիալական երաշխիքների պայմանները՝ կենսաթոշակի չափը փոխկապակցվելով զբաղեցրած պետական պաշտոնի վարձատրությանը (գործակցին):

Վերոգրյալ օրենսդրական փոփոխության արդյունքում ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների փաստացի ծախսը 2015 թ. կազմել է 2384.5 մլն դրամ 2014 թ. 391.4 մլն դրամի դիմաց, իսկ կենսաթոշակառուների թիվը 2015 թ. կազմել է 538 մարդ 2014 թ. 141 մարդու դրմաց:

Միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխություն՝ կենսաթոշակի միջին ամսական չափի պահպանման պայմաններում:

Սոցիալական ապահովության բնագավառ

2015 թ. փաստացի ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվը կազմել է 1 231 731 օր կամ նվազումը 2014 թ. նկատմամբ կազմում է 24.1%:

2015 թ. միջին օրական նպաստի փաստացի չափը կազմել է 2204 դրամ կամ նվազումը 2014 թ. նկատմամբ կազմում է 26.1%:

2015 թ. հղիության ու ծննդաբերության օրերի թիվը կազմել է 1 515 208 օր կամ 2014 թ. նկատմամբ նվազել է 22.8%, իսկ միջին օրական նպաստի չափը կազմել է 4047 դրամ կամ 2014 թ. նկատմամբ 13.4% ավելի:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նախորդ տարիների միտումները, մասնավորապես՝ կանխատեսվում է մայրության նպաստի, ժամանակավոր անաշխատունակության նպաստների մեկ օրվա չափի աճ:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի մակարդակը դրսևորել է կայուն աճի միտում, մասնավորապես, 2015 թ. հուլիսի 1-ից աճել է 10% (2014 թ. հուլիսի 1-ից սահմանված 50000 դրամի դիմաց), իսկ միջին աշխատավարձը՝ 2014 թ. համանուն ցուցանիշի նկատմամբ աճել է 7.7% (2014 թ. միջին աշխատավարձը կազմել է 171240.4 դրամ, աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայք armstat.am):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում նվազագույն ամսական աշխատավարձի, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող հաստատություններում հաշվարկային միջին ամսական աշխատավարձի չափերը:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառ

Աշխատանքային պարտավորությունների հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում ստացող անձանց թիվը 2015 թ. նվազել է 8.4% 2014 թ. 524 անձի դիմաց: Արդյունքում 2015 թ. բյուջետային հատկացումները կազմել են 98.0 մլն դրամ 2014 թ. 92.8 մլն դրամի դիմաց՝ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճի պայմաններում:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվի բնագավառում նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ շահառուների թվաքանակի նվազման պայմաններում:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառ

2015 թ. «ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրում» ծրագրի գծով փաստացի ծախսը կազմել է շուրջ 10 911.0 մլն դրամ 2014 թ. 8 537.6 մլն դրամի դիմաց, իսկ փաստացի պարգևավճար ստացողների թիվը՝ 37 529 անձ (2014 թ. 31 529 անձ):

«Վետերանների պատվովճարներ» ծրագրի փաստացի ծախսը 2015 թ. կազմել է 25.7% ավելի 2014 թ. 400.5 մլն դրամի դիմաց: Ծախսի աճը կապված է շահառուների թվաքանակի 429 մարդով նվազման պայմաններում (2014 թ. 1334 շահառու) պատվովճարի ամսական չափի աճով (ՀՀ կառավարության 26.03.2015 թ. N 357-Ն որոշման համաձայն՝ 2015 թ. մայիսի 1-ից պատվովճարի ամսական չափը սահմանվել է 50.0 հազ. դրամ տարեսկզբի 25.0 հազ. դրամի դիմաց):

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն ՀՀ պետական բյուջեից բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները՝ շահառուների թվաքանակի փոփոխության և պատվովճարի ու պարգևավճարների ամսական չափերի պահպանման պայմաններում:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

2014-2015 թվականներին փախստականներին մատուցվող ծառայությունների գծով փաստացի բյուջետային հատկացումները կազմել են համապատասխանաբար 93.5 մլն դրամ և 94.4 մլն դրամ կամ 2015 թ. աճը կազմել է 0.9%:

Միջնաժամկետ ժամանակահատվածում ակնկալվում է, որ կպահպանվեն բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակները:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության բնագավառ

2014 թվականին ծրագրի գծով 499.8 մլն դրամ փաստացի ֆինանսավորման շրջանակներում լուծվել են զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների 60 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման խնդիրները, իսկ 2015 թվականին 499.9 մլն դրամ փաստացի ֆինանսավորման շրջանակներում՝ 63 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման խնդիրները:

9.1.3 Ոլորտի հիմնական խնդիրները

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությու-

ների բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

տարեցների շուրջօրյա խնամքի հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ պահանջարկի մեծացմամբ պայմանավորված, առանձին հաստատությունների (Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ) առկա կարողությունները չեն բավարարում անհրաժեշտ ծավալներով ծառայություններ մատուցելու համար,

տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայությունների նոր տեսակների (մոդելների) ընդլայնումը, (համայնքային ցերեկային կենտրոններ, խնամքի տներ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար տնային սպասարկման ծառայություն և այլն),

հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար խնամքի այլընտրանքային ծառայությունների բացակայությունը (շուրջօրյա խնամքի տներ, ցերեկային կենտրոններ, սատարող բնակարաններ և այլն):

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

այլընտրանքային ծառայությունների ոչ բավարար մակարդակը,

չնայած, որ երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների ընդհանուր թիվը նախորդ տարիների համեմատ պակասել է, այնուամենայնիվ, (հատուկ) մասնագիտացված հաստատություններում խնամվող երեխաների թիվը չի նվազում պայմանավորված հանրապետությունում համապատասխան մասնագիտացված այլընտրանքային ծառայությունների (ցերեկային կենտրոններ, վերականգնողական կենտրոններ և այլն) պակասով, ինչպես նաև պետական հոգածության կարիք ունեցող հիվանդ երեխաների թվի աճով:

Զբաղվածության բնագավառ

Զբաղվածության բնագավառում առկա հիմնական խնդիրներն են՝

աշխատաշուկայում առկա է առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին աշխատուժի մասնագիտական որակավորման զգալի անհամապատասխանություն,

բարձր է գործազրկությունը երիտասարդների և աշխատաշուկայում անմրցունակ անձանց շրջանում, հանրապետության առանձին տարածաշրջանների միջև առկա է գործազրկության մակարդակի էական տարբերություն,

գյուղական շրջաններում բնակչությունը թերզբաղված է, իսկ ոչ գյուղատնտեսական զբաղվածությունն ունի անբավարար մակարդակ,

պետական-մասնավոր հատվածների միջև, այդ թվում՝ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հետ զբաղվածության

պետական գործակալության գործընկերային և փոխշահավետ համագործակցության բացակայությունը,

մասնագիտական կողմնորոշման համակարգի առաջնային խնդիրը հանրապետությունում ողջ կյանքի ընթացքում, անկախ սոցիալական կարգավիճակից, անձի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի խորհրդատվության հնարավորությունների բացակայությունն է:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

Հաշմանդամներին աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

հաշմանդամների համար դեռևս մատչելի չեն շատ ծառայություններ, ինչպես նաև ապահովված չեն վերջիններիս հավասար հնարավորությունները,

վերականգնողական պարագաների որակի բարելավման և տեսականու ընդլայնման սահմանափակությունը,

հաշմանդամություն առաջացնող պատճառների ուսումնասիրման և վերլուծության ոչ բավարար մակարդակը,

հաշմանդամների զբաղվածության ցածր մակարդակը,

հաշմանդամների վերականգնողական համայնքային ցերեկային կենտրոնների բացակայությունը:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում շարունակվում է հրատապ մնալ բնակչության ծնելիության բարձրացման և ժողովրդագրական վիճակի բարելավման հարցը:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների, մասնավորապես կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի հասցեականության բարձրացման հարցը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գործընթացին առավել ակտիվ մասնակցություն ունենալը,

շարունակվում է փոքր մնալ շատ աղքատ բնակչության ներկայացվածությունը համակարգում, որը կարելի է բացատրել ինչպես ընտանիքների անապահովության գնահատման կարգում կիրառվող խիստ ցուցանիշներով և շատ աղքատ բնակչության պասիվության դրսևորման արդյունք, այնպես էլ պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի կամ հանրային իրազեկման աշխատանքների բացթողումների արդյունք:

Կենսաթոշակային ապահովության բնագավառ

Կենսաթոշակային ապահովության բնագավառի հիմնական խնդիրներն են՝

չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ կառավարության քաղաքականության շրջանակներում անընդհատ բարձրացել են կենսաթոշակները, դրանց չափերը ոչ միայն

հիմնականում չեն ապահովում բավարար կենսամակարդակ, այլև կենսաթոշակառուների մի ստվար զանգված շարունակում է ստանալ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր կենսաթոշակ: Ըստ այդմ, կենսաթոշակառուների մոտ շարունակում է մեծ մնալ աղքատության ռիսկը,

միջին աշխատավարձի և միջին կենսաթոշակի հարաբերակցությունը, որի արդյունքում էապես տարբերվում է կենսաթոշակառուների և աշխատող բնակչության կենսամակարդակները, ինչը հանգեցնում է անցանկալի սոցիալական հետևանքների,

կենսաթոշակային համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը ապահովելը և անձի եկամուտների և կենսաթոշակի չափի միջև կապի բացակայությունը:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճար տրամադրման բնագավառ

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառում շարունակվում է հրատապ մնալ պատերազմի մասնակիցների, զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցության բարելավման հարցը:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառում շարունակվում է հրատապ մնալ փախստականների և նրանց ընտանիքների բարեկեցության բարելավման հարցը:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության բնագավառ

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության բնագավառում շարունակվում է հրատապ մնալ զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցը:

9.2.ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

9.2.1 Նպատակները

Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ՀՀ ժողովրդագրական վիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը:

2017-2019 թվականների ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում որպես հիմնական խնդիր է դիտարկվում ոլորտում պետական միջամտությամբ

իրականացվող հիմնական ծառայությունների և տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Ստորև ներկայացված է ՄԺԾԾ ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի նպատակներն ու խնդիրներն ըստ առանձին բնագավառների:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է խնամքի կարիք ունեցող տարեց, հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

պետական միջամտությամբ խնամքի կարիք ունեցող տարեցներին, հաշմանդամներին և անօթևաններին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

խնամքի կարիք ունեցող տարեցների, հաշմանդամների շուրջօրյա խնամքի, տնային պայմաններում տարեցների, ցերեկային և խնամքի կենտրոններում շահառուների, անօթևանների սոցիալական սպասարկման ծառայությունների որակի բարելավումը,

տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության և գործողությունների ծրագրից բխող միջոցառումների իրականացումը,

տարեցների ու հաշմանդամների խնամքի և սպասարկման ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խթանումը:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը և սոցիալական պաշտպանվածության ապահովումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

պետական միջամտությամբ ընտանիքի, կանանց և երեխաների գծով մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

երեխաների շուրջօրյա խնամքի, երեխաների սոցիալական հոգածության ցերեկային, երեխաների գիշերօթիկ խնամքի, ինչպես նաև անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանում ծառայությունների որակի բարելավումը,

այլընտրանքային ծառայությունների ցանցի ընդլայնումը:

Զբաղվածության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է բնակչության կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը: Այն ուղղված է աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ ըստ առաջնահերթությունների կայուն զբաղվածության և ինքնազբաղվածության խթանմանը, աշխատանք փնտրողների, հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացնելուն, գործող աշխատատեղերը պահպանելուն, գործատուների կողմից նոր աշխատատեղերի ստեղծմանը խթանելուն և դրանք որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ զբաղվածության ապահովմանը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում զբաղվածության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

զբաղվածության բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը,

ինտեգրված սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում, հանրակրթության ոլորտում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրում և կադրերի վերապատրաստում,

մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կառավարման համակարգի զարգացում և կադրերի վերապատրաստում,

հաշմանդամների շրջանում զբաղվածության մակարդակի բարձրացումը:

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հաշմանդամների առավել ինտեգրումը հասարակությանը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում հաշմանդամներին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

հաշմանդամների բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը, դրանց որակի բարձրացումը ու տեսականու ընդլայնումը,

հաշմանդամության սահմանման նոր մոդելի անցումը, որը հնարավորություն կընձեռի խթանելու հաշմանդամների աշխատանքային ինտեգրման գործընթացն ու կընդլայնի սոցիալական ներառման հնարավորությունները:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության ծնելիության բարձրացումը, ժողովրդագրական վիճակի բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների, տրամադրվող նպաստների շարունակականության ապահովումը:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումն և աղքատության նվազեցումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Կենսաթոշակային ապահովության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է կենսաթոշակի տարիքի անձանց կենսամակարդակի բարձրացումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում կենսաթոշակային ապահովության բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Սոցիալական ապահովության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է հղիության և ծննդաբերության հետ կապված, հիվանդության և օրենքով սահմանված այլ դեպքերում առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ, փոխհատուցումը, ինչպես նաև հղիության և ծննդաբերության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում պետական աջակցության տրամադրումը չաշխատող մայրերին:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում սոցիալական ապահովության բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովումը, աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդումն և աշխատանքային պայմանների բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորման բնագավառում որպես հիմնական խնդիր սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառ

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառի նպատակն է բարձրացնել առանձին կատեգորիաների անձանց սոցիալական պաշտպանվածության մակարդակը: Ըստ այդմ, նախատեսվում է մեկ միասնական համակարգի ձևավորման միջոցով առավել հասցեական և արդյունավետ դարձնել համապատասխան կատեգորիաների անձանց պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցությունը:

Բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է Հայրենական մեծ պատերազմի վետերանների և հաշմանդամ դարձած զինծառայողների, զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել է.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է փախստականների սոցիալական վիճակի և կենսապայմանների բարելավումը:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառում որպես հիմնական խնդիրներ սահմանվել են.

բնագավառում պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության բնագավառ

Բնագավառում պետական քաղաքականության նպատակն է բարելավել զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների բնակարանային պայմանները:

Այդ նպատակին հասնելու համար, 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում նախատեսվում է բավարարել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակարանային հաշվառման մեջ գտնվող, ծրագրի շահառու հանդիսացող 186 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման պահանջարկը:

9.2.2 Գերակայությունները

Միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության գերակա ուղղությունները հետևյալն են՝ ըստ գերակայությունների նվազման հաջորդականության.

Միջնաժամկետ հատվածում պետական միջամտության գերակա ուղղությունները	Հիմնավորում
Պետական կենսաթոշակների շարունակականության ապահովումը	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք
Կուտակային կենսաթոշակային համակարգի շարունակականության ապահովումը	2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում), «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք
Պետական նպաստների շարունակականության ապահովումը	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում), «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք
Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման հետ կապված մատչելիության ապահովումը և վերջիններիս՝ հասարակությանը ինտեգրումը	ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիր, 2014-2017 թթ ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում)

Վերոհիշյալ գերակայությունները սահմանվել են ելնելով միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական միջամտության ուղղություններում կատարված փոփոխություններից:

9.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈՒՂՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

9.3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները (ստորև ներկայացված են այն ծրագրերը (առանց գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրերի), որոնց գծով միջնաժամկետ կտրվածքով տեղի կունենան ծախսային սահմանաչափերի փոփոխություններ, ընդորում 2017-2019 թվականների ՄԺԾԾ-ի համեմատությունը 2017 թ. կտրվածքով կատարվել է 2016 թ. պետական բյուջեով, իսկ 2018-2019 թվականների կտրվածքով՝ 2017-2019 թվականների ՄԺԾԾ-ով 2017 թ. և 2018 թ. համար ընդունված քաղաքականության և հաստատված ցուցանիշների գծով):

2017-2019 թվականների ՄԺԾԾ-ով ընդունված քաղաքականությամբ կանխատեսվում է.

ա/ պահպանել 2016 թվականի համար նախատեսված նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ 55.0 հազ. դրամ, ներառյալ եկամտային հարկը 72.8 հազ. դրամ, (հաշվարկներում հաշվի է առնվել կենսաթոշակի կուտակային բաղադրիչի հետ կապված սոցիալական վճարների կատարման հետ կապված անհրաժեշտ գումարը),

բ/ առանձին հանրային ծառայությունների սակագների նվազում՝ գազի գծով 9.3 դրամի չափով 2016 թ. 156 դրամի դիմաց և էլեկտրաէներգիայի գծով 2.58 դրամի չափով 2016 թ. 48.78 դրամի դիմաց:

Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայությունների բնագավառ

1. «Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 8.7 մլն դրամի չափով (2016 թ. 2 186.2 մլն դրամի դիմաց), 2017 թ. 2016 թ. նկատմամբ և 2018 թ. 2017 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի հինգ տարեցների և հաշմանդամների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում կխնամվեն տարեկան 1210 ծեր և հաշմանդամ կենսաթոշակառու, սննդի մեկ օրվա միջին գումարը կկազմի 1300 դրամ՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

2. «Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2016 թ. նվազում է 0.2 մլն դրամի չափով (2016 թ. 142.9 մլն դրամի դիմաց), 2017 թ. 2016 թ. նկատմամբ և 2018 թ. 2017 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում կսպասարկվի տարեկան 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառու՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

3. «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2016 թ. նվազում է 0.08 մլն դրամի չափով (2016 թ. 17.9 մլն դրամի դիմաց), 2017 թ. 2016 թ. նկատմամբ և 2018 թ. 2017 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կսպասարկվի տարեկան 30 մարդ, սննդի մեկ օրվա միջին գումարը կկազմի 382 դրամ՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

4. «ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 25.2 մլն դրամի չափով (2016 թ. 215.3 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է հաշվարկների ճշտմամբ: Միաժամանակ նախատեսվում է մեկ օրվա մեկ շահառուի հաշվով սննդամթերքի ծախսը սահմանել 2016 թ. սեպտեմբերի 1-ից նախատեսված 144 դրամի չափով:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

Միջնաժամկետ կտրվածքով «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել պետական աջակցությունը՝ փոխհատուցելով աշխատավարձի (ներառյալ եկամտային հարկը) և սննդի գումարի գծով ծախսերը:

5. «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2016 թ. նվազում է 0.4 մլն դրամի չափով (2016 թ. 49.8 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով «Հանգրվան» ՊՈԱԿ-ի միջոցով կիրականացվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշվեկշռին փոխանցված սոցիալական բնակարանային ֆոնդում ընդգրկված բնակարանների պահպանման, տեխնիկական սպասարկման աշխատանքները, բնակիչների խնդիրների լուծման կազմակերպումն և այլ աշխատանքներ՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

6. «Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2016 թ. նվազում է 0.5 մլն դրամի չափով (2016 թ. 61.4 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ՀԿ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում շահառուների միջին տարեկան թիվը կկազմի 100 մարդ, իսկ մեկ շահառուի գծով մեկ օրվա սննդի գծով ծախսը՝ 760.0 դրամ (սնունդը կտրվի օրական երկու անգամ)՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցության բնագավառ

1. «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 6.4 մլն դրամի չափով (2016 թ. 2 075.5 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է 6 երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում խնամել 660 երեխա, իսկ սննդի մեկ օրվա միջին գումարը կկազմի 1300 դրամ՝ պահպանելով 2016 թվականի մակարդակը:

2. «Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.6 մլն դրամի չափով (2016 թ. 238.8 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով 3 սոցիալական հոգածության կենտրոնների ծառայություններից օգտվողների թիվը կանխատեսվում է 300 երեխա և սննդի մեկ օրվա միջին գումարի չափը՝ 580 դրամ՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

3. «Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 4.6 մլն դրամի չափով (2016 թ. 996.3 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է 7 գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամել 730 երեխա, իսկ սննդի մեկ օրվա միջին գումարը կկազմի 1300 դրամ՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

4. «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.3 մլն դրամի չափով (2016 թ. 39.6 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է «Երևանի «Զատիկ» երեխաներին աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով խնամել 20 երեխա, սննդի մեկ օրվա միջին գումարը կկազմի 1300 դրամ՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

5. «Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.2 մլն դրամի չափով (2016 թ. 39.4 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են մեկ երեխայի հաշվով տրվող օժանդակության փաթեթի գումարի չափի նվազմամբ կամ 761.8 հազ. դրամ 2016 թ. 771.5 հազ. դրամի դիմաց (վերջինս կապված է առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ պայմանավորված երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում մեկ երեխայի հաշվով ծախսերի պակասեցմամբ):

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է խնամատար ընտանիքների և ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը (23 ընտանիք և 25 երեխա) պահպանել 2016 թ. նախատեսված մակարդակով:

Զբաղվածության բնագավառ

1. «Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.08 մլն դրամի չափով (2016 թ. շուրջ 30.0 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ծառայություն մատուցել 300-ական շահառուի պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

2. «Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.08 մլն դրամի չափով (2016 թ. 18.6 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ

ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ կտրվածքով նախատեսվում է «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրու կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սպասարկել 540 շահառու 11 հաստիքային միավորով՝ պահպանելով 2016 թ. նախատեսված մակարդակը:

3. «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. աճում է 19.0 մլն դրամի չափով (2016 թ. 81.0 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են շահառուների թվի աճով կամ 100 2016 թ. 80 դիմաց՝ պահպանելով ծրագրի առավելագույն արժեքը, որը կազմում է 1.0 մլն դրամ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

4. «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, ինչը 2017 թ. համար 2016 թ. նկատմամբ կազմում է 72.1 մլն դրամ (2016 թ. շուրջ 269.0 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են կանխատեսվող շահառուների թվի աճի պայմաններում կամ 580 մարդ նախատեսված 400 դիմաց և տեղաշարժման (հաշմանդամի սայլակով տեղաշարժվող) խնդիրներով առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց 33 ուղեկցողին (նախատեսված 30 դիմաց) տրվող աջակցության տևողության կրճատմամբ 6 ամսով 2016 թվականի համար նախատեսված 12 ամսվա դիմաց:

5. «Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2017 թ. կազմում է 3.8 մլն դրամ (2016 թ. 58.7 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են կանխատեսվող շահառուների թվաքանակի աճով կամ 45 2016 թ. համար նախատեսված 42 դիմաց:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

6. «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2017 թ. կազմում է 7.7 մլն դրամ (2016 թ. 160.3 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են կանխատեսվող շահառուների թվի աճով կամ 500 անձ 2016 թվականի համար նախատեսված 477 դիմաց:

7. «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2017 թ.

կազմում է 286.6 մլն դրամ (2016 թ. շուրջ 1 126.0 մլն դրամի դիմաց): Ծրագրով նախատեսվում է իրականացնել 2398 ծրագիր 2016 թվականի համար նախատեսված 3217 ծրագրի դիմաց՝ պահպանելով 2016 թ. համար նախատեսված յուրաքանչյուր ծրագրի արժեքը՝ 350.0 հազ. դրամ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

8. «Գործազուրկների և աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2017 թ. կազմում է 5.0 մլն դրամ (2016 թ. 146.0 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են շահառուների թվի աճով կամ 1655 մարդ (2016 թ. 1600 մարդու դիմաց)՝ պահպանելով 2016 թ. մեկ շահառուի համար նախատեսված ուսուցման գինը՝ 91.25 հազ. դրամ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

9. «Գործազուրկների և աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2017 թ. կազմում է 4.5 մլն դրամ (2016 թ. 132.0 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են շահառուների թվի աճով կամ 1655 մարդ (2016 թ. 1600 մարդու դիմաց):

10. «Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2017 թ. կազմում է 1.0 մլն դրամ (2016 թ. 2.0 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են շահառուների թվի նվազմամբ կամ 10 անձ 2016 թ. համար նախատեսված 20 անձի դիմաց՝ պահպանելով մեկ անձի հաշվով տրվող աջակցության գումարի չափը՝ 100 .0 հազ. դրամ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

11. «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2017 թ. կազմում է 42.4 մլն դրամ (2016 թ. 65.1 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են շահառուների թվի նվազմամբ կամ 420 անձ 2016 թ. համար նախատեսված 1206 անձի դիմաց՝ պահպանելով մեկ անձին տրվող փոխհատուցման գումարի չափը՝ 18.0 հազ. դրամ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

12. «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2017 թ. կազմում է 236.6 մլն դրամ (2016 թ. 45.0 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են կանխատեսվող ծրագրերի թվի աճով կամ 188 ծրագիր 2016 թվականի համար նախատեսված 30 ծրագրի դիմաց:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

13. «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության իրականացման ապահովում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ, որը 2017 թ. կազմում է 2.4 մլն դրամ (2016 թ. 0.5 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի գծով ծախսերի փոփոխությամբ (սյուն ծրագրով նախատեսվում է կատարել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի ուղեկցման ծախսեր (գործուղման, գրասենյակային նյութերի գծով և այլն), որը կազմում է վերջինիս 1%):

14. «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրականացման ապահովում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում, որը 2017 թ. կազմում է 5.7 մլն դրամ (2016 թ. 22.5 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցություն» ծրագրի գծով ծախսերի փոփոխությամբ (սյուն ծրագրով նախատեսվում է կատարել «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցություն» ծրագրի ուղեկցման ծախսեր (գործուղման, գրասենյակային նյութերի գծով և այլն), որը կազմում է վերջինիս 2%):

Հաշմանդամներին աջակցության բնագավառ

1. «Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. աճում է շուրջ 14.0 մլն դրամի չափով (2016 թ. 89.6 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ ծախսերը նվազում են 17.9 մլն դրամ, իսկ 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը աճում են 3.9 մլն դրամով, որոնք պայմանավորված են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ սահմանված ժամկետները լրացած, ինչպես նաև առաջին անգամ սայլակների և լսողական սարքերի կարիք ունեցող հաշմանդամների թվաքանակի փոփոխությամբ: Այսպիսով.

ա/ 2017-2019 թվականներին ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքերի պահանջը կանխատեսվում է ըստ տարիների համապատասխանաբար 1100 հատ՝ 42.9 մլն դրամի չափով, 1000 հատ՝ 39.0 մլն դրամի չափով և 1100 հատ՝ 42.9 մլն դրամի չափով (2016 թ.՝ 1100 հատ 42.9 մլն դրամի չափով), նկատի ունենալով, որ վերը նշված որոշմամբ լսողական սարքերը տրվում են 3 տարին մեկ անգամ՝ 2014 թ. փաստացի բաշխված քանակը կազմել է 1059 հատ,

բ/ 2017-2019 թվականներին հաշմանդամների սայլակների գծով պահանջը կանխատեսվում է ըստ տարիների համապատասխանաբար 600 հատ՝ 55.8 մլն դրամի չափով և 450-ական հատ՝ 41.9 մլն դրամի չափով (2016 թ.՝ 450 հատ 41.9 մլն դրամի չափով), նկատի ունենալով, որ վերը նշված որոշմամբ սայլակները տրվում են 3 տարին մեկ անգամ՝ 2014 թ. փաստացի ստացողների թիվը կազմել է 625,

գ/ 2017-2019 թվականների համար լսողական սարքերի ներդիրների քանակը երեխաների համար կպահպանվի 2016 թ. համար նախատեսված մակարդակով և կկազմի 400-ական հատ՝ 4.8 մլն դրամի չափով:

Ժողովրդագրական վիճակի բարելավման բնագավառ

1. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 34.7 մլն դրամի չափով (2016 թ. շուրջ 9 280.0 մլն դրամի դիմաց), 2018-2019 թվականներին կպահպանվի 2017 թ. մակարդակը, որը պայմանավորված է.

ա/ 2017-2019 թվականների համար հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ ԱՎԾ 2014-2015 թվականների փաստացի ծնված երեխաների միջին թվաքանակը և 2012-2013 թվականներին փաստացի ընդհանուր ծնված երեխաների նկատմամբ 3-րդ և ավելի երեխաների տեսակարար կշիռը: Այսպես, 2017-2019 թվականներին կանխատեսվող ծննունդների թիվը կկազմի 42 423 երեխա, որից 3-րդ և ավելի երեխաների թիվը՝ 7 327 մարդ կամ 17.3%, այդ թվում 3-րդ և 4-րդ երեխաների թիվը՝ 6 998 մարդ կամ (16.5%) ու 5 և ավելի երեխաների թիվը՝ 327 մարդ կամ (0.8%) (2016 թ. 43 779 մարդու դիմաց, որից 3-րդ և ավելի երեխաների թիվը՝ 7 280 մարդ),

բ/ 2017-2019 թվականներին նախատեսվում է պահպանել 2016 թ. համար նախատեսված երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերը ու 3-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում նաև ընտանեկան դրամագլխի (կապիտալ) համակարգը.

- առաջին և երկրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 50.0 հազ. դրամ,
- երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.0 մլն դրամ,
- հինգ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառ

1. «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. աճում է 1136.4 մլն դրամի չափով (2016 թ. 38 362.0 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ: Արդյունքում ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կանխատեսվում է 31. 4 հազ. դրամի չափով 2016 թվականի 30.5 հազ. դրամի դիմաց՝ պահպանելով 2016թ. համար նախատեսված նպաստառուների թվաքանակը՝ 104 685 ընտանիք:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

2. «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրի գծով 2017-2019 թվականներին ծախսերը պահպանվել են 2016 թ. մակարդակով՝ 1 485.1-ական մլն դրամ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման բնագավառ

1. «Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.3 մլն դրամի չափով (2016 թ. 90.1 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որը պայմանավորված է առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Միջնաժամկետ ժամանակաշրջանում նախատեսվում է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով վերապատրաստել համակարգի 700 աշխատողների և իրականացնել 6 թեմատիկ աշխատանքներ:

Կենսաթոշակային ապահովության բնագավառ

2017-2019 թվականների կտրվածքով բոլոր տեսակի կենսաթոշակների գծով նախատեսվում է պահպանել 2016 թ. համար նախատեսված կենսաթոշակի հիմնական չափը (աշխատանքային և զինվորական կենսաթոշակների հիմնական չափը՝ 16000-ական դրամ, «Պետական պաշտոն զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը՝ 1400 դրամ) և ստաժի մեկ տարվա արժեքը (աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար 500 դրամ, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1500 դրամ, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 5000 դրամ):

1. «Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրի գծով 2017 թ. նախատեսվում է ծախսերի աճ 1 234.5 մլն դրամի չափով (2016 թ. 23 089.1 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի աճով կամ կանխատեսվում է 30 122 մարդ 2016 թ. 28 363 մարդու դիմաց,

բ/ կենսաթոշակի միջին ամսական չափի ճշտմամբ, որը կազմում է 67 292 դրամ 2016 թ. 67 838.2 դրամի դիմաց:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի գծով 2017-2019 թվականներին ծախսերը պահպանվել են 2016 թ. մակարդակով՝ 223 769.5 մլն դրամի չափով կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխության պայմաններում կամ միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է 459.8-ական հազ. մարդ 2016 թ. շուրջ 457.0 հազ. մարդու դիմաց, իսկ կենսաթոշակի միջին ամսական չափը՝ 40 556.2 դրամ 2016 թվականի 40 807.6 դրամի դիմաց:

3. «Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովում» ծրագրի գծով 2017 թ. նախատեսվում է ծախսերի նվազում 2016 թ. նկատմամբ 18.2 մլն դրամի չափով (2015 թ. 655.1 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ 56.1 մլն դրամի չափով, իսկ 2019 թ. 2018 թ.՝ շուրջ 44.0 մլն դրամի չափով: Ծախսերի նվազումը պայմանավորված է.

ա/ կենսաթոշակառուների թվաքանակի նվազմամբ կամ 2017 թ. կանխատեսվում է 2 144 մարդ 2016թ .2197 մարդու դիմաց, 2018 թ.՝ 1 955 մարդ, իսկ 2019 թ.՝ 1 807 մարդ,

բ/ կենսաթոշակի միջին ամսական չափի ճշտմամբ, որը կազմում է 24 753 դրամ 2016 թ. 24 846.9 դրամի դիմաց:

4. «ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակներ» ծրագրի գծով 2017-2019 թվականներին ծախսերը պահպանվել են 2016 թ. մակարդակով՝ շուրջ 2 724.0 մլն դրամի չափով 625 կենսաթոշակառուի համար:

5. «Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդնում» ծրագրի գծով 2017 թ. նախատեսվում է աճ 2016 թ. նկատմամբ 1 927.8 մլն դրամի չափով (2016 թ. 26 760.4 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ 11 968.5 մլն դրամի չափով, իսկ 2019 թ. 2018 թ. նկատմամբ 14 871.8 մլն դրամի չափով, որը պայմանավորված է.

ա/ 18-40 տարեկանների աշխատաշուկա համալրողների թվի ավելացմամբ կամ ընդամենը ըստ տարիների համապատասխանաբր շուրջ 176.2 հազ. մարդ 2016 թ. 137.5 հազ. մարդու դիմաց, շուրջ 244.3 հազ. մարդ և շուրջ 323.4 հազ. մարդ,

բ/ միջին աշխատավարձի աճով շուրջ 2.4% չափով:

6. «Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստներ» ծրագրի գծով 2017-2019 թվականներին ծախսերը պահպանվել են 2016 թ. մակարդակով՝ 14 108.5 մլն դրամի չափով նպաստ ստացողների թվաքանակի փոփոխության պայմաններում կամ միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է 65 896 մարդ 2016 թվականի 65 799 մարդու դիմաց, իսկ նպաստի միջին ամսական չափը՝ 17 482 դրամ 2016 թվականի 17 868.2 դրամի դիմաց:

7. «Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ» ծրագրի գծով 2017-2019 թվականներին ծախսերը պահպանվել են 2016 թ. մակարդակով՝ 4 969.2 մլն դրամի չափով: Ծրագրով նախատեսվում է թաղման նպաստ վճարել կենսաթոշակառուների մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած 24 846 անձանց, իսկ միանվագ նպաստի չափը կազմում է 200.0 հազ. դրամ:

Սոցիալական ապահովության բնագավառ

1. «Մայրության նպաստի վճարում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ՝ 2017 թ. համար 660.0 մլն դրամի չափով (2016 թ. 9 794.8 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է հետևյալ հաշվարկով.

ա/ 2015 թ. 2-րդ կիսամյակի փաստացի 3.2 մլրդ դրամի ծախսի նկատմամբ կիրառվել է միջին աշխատավարձի աճը՝ միջին տարեկան 4.8% չափով (ըստ ԱՎԾ 2015 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների հանրապետության միջին աշխատավարձի աճի տոկոսը կազմել է 2.4%, որը տարածվել է տարվա կտրվածքով՝ ճշտելով 2016 թվականը և նշված տոկոսը հաշվարկվել է նաև 2017 թվականի համար), արդյունքում ծախսերն աճում են 777.7 մլն դրամ,

բ/ ավելացվել է 2016 թ. հունվարի 1-ից օրենսդրության փոփոխությամբ պայմանավորված չաշխատող մայրերին (29 074 անձ) տրվելիք մայրության նպաստի համար ընդամենը 3.7 մլրդ դրամ գումարը (2016 թ. 30 004 անձի դիմաց) կամ 2016 թվականի համեմատ ծախսերը նվազում են 117.7 մլն դրամով:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

2. «Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ՝ 2017 թ. համար 43.2 մլն դրամի չափով (2016 թ. շուրջ 2 616.0 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է հետևյալ հաշվարկով.

2015 թ. 2-րդ կիսամյակի փաստացի 1.3 մլրդ դրամի ծախսի նկատմամբ կիրառվել է միջին աշխատավարձի աճը՝ միջին տարեկան 4.8% չափով (ըստ ԱՎԾ 2015 թ. հունվար-դեկտեմբեր ամիսների հանրապետության միջին աշխատավարձի աճի տոկոսը կազմել է 2.4%, որը տարածվել է տարվա կտրվածքով՝ ճշտելով 2016 թվականը և նշված տոկոսը հաշվարկվել է նաև 2017 թվականի համար):

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

Աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջության վնասման հետևանքով պատճառված վնասի հատուցման բնագավառ

1. «Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում՝ 2017 թ. համար 7.9 մլն դրամի չափով (2016 թ. 97.9 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ՝ 4.0-ական մլն դրամի չափով: Դրանք պայմանավորված են շահառուների թվաքանակի նվազմամբ կամ ըստ տարիների համապատասխանաբար 450 մարդ (2016 թ. 489 մարդու դիմաց), 430 մարդ և 410 մարդ:

Առանձին կատեգորիայի քաղաքացիներին պարգևավճարի և պատվովճարի տրամադրման բնագավառ

1. «Վետերանների պատվովճարներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում՝ 2017 թ. համար 130.2 մլն դրամի չափով (2016 թ. 570.6 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ՝ 31.2 մլն դրամի չափով, 2019 թ. 2018 թ. նկատմամբ՝ 29.4 մլն դրամի չափով, ինչը պայմանավորված է պատվովճար ստացողների թվաքանակի նվազմամբ կամ միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է համապատասխանաբար 734 մարդ (2016 թ. 951 մարդու դիմաց), 682 մարդ և 633 մարդ՝ 2016 թվականի համար նախատեսված պատվովճարի ամսական չափի (50.0 հազ. դրամ) պահպանման պայմաններում:

2. «ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998 թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածի 1-ին մասով սահմանված պարգևավճարների տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ՝ 2017 թ. համար 9.3 մլն դրամի չափով (2016 թ. 11 645.9 մլն դրամի դիմաց), որը պայմանավորված է.

ա/ 2016 թվականի ապրիլի 1-ից, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի N 262-Ն որոշման համաձայն՝ պարգևավճար ստացող առանձին կատեգորիաների պարգևավճարների չափերը 12.0 հազ. դրամի հավասարեցմամբ, արդյունքում ծախսերն աճում են 68.0 մլն դրամի չափով,

բ/ հաշվարկների ճշտմամբ՝ արդյունքում ծախսերը նվազում են 58.7 մլն դրամի չափով՝ պարգևավճար ստացողների թվի փոփոխության պայմաններում:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

Փախստականներին մատուցվող ծառայությունների և օժանդակության բնագավառ

1. «Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում՝ 2017 թ. համար 0.2 մլն դրամի չափով (2016 թ. 22.9 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

2. «Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում՝ 2017 թ. համար 0.08 մլն դրամի չափով (2016 թ. 38.9 մլն դրամի դիմաց), որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ:

Պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր

1. «Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման

ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 0.6 մլն դրամի չափով (2016 թ. շուրջ 319.0 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին հանրային ծառայությունների (գազ և էլեկտրաէներգիա) սակագների նվազմամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում ընգրկված այլ ծրագրեր

1. «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 528.7 մլն դրամի չափով (2016 թ. 2 816.3 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. նկատմամբ՝ 0.9 մլն դրամի չափով և 2019 թ. 2018 թ. նկատմամբ՝ 0.1 մլն դրամի չափով, որոնք պայմանավորված են կենսաթոշակների, պարգևավճարների, վետերանների պատվովճարի և այլ ծրագրերով վճարմանն ուղղված ծախսերի փոփոխությամբ, ինչպես նաև՝ համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 76-Ն որոշման՝ առանձին տեսակի սոցիալական վճարները (կենսաթոշակառուի թաղման նպաստի և վերջինիս հետ կապված չստացած կենսաթոշակների, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստների, պարգևավճարների, պատվովճարների) բանկերի միջոցով անվճար կատարմամբ:

2. «Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի փոփոխություն, որը 2017 թ. նվազում է 41.0 մլն դրամի չափով (2016 թ. 562.4 մլն դրամի դիմաց), 2018 թ. 2017 թ. և 2019 թ. 2018 թ. նկատմամբ ծախսերը կմնան անփոփոխ, որոնք պայմանավորված են առանձին նպաստների վճարմանն ուղղված ծախսերի փոփոխությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 81-Ն որոշմամբ երեխայի ծննդյան միանվագ նպաստը և ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշմամբ չաշխատող անձին մայրության նպաստը միայն անկանխիկ եղանակով վճարմամբ, որի բանկային հաշիվները սպասարկվում են անվճար:

Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցության բնագավառ

«Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովում և բնակարանային պայմանների բարելավում» ծրագրի գծով 2017-2019 թվականներին 500.0-ական մլն դրամի շրջանակներում նախատեսվում է յուրաքանչյուր տարի բավարարել բնակարանային պայմանների բարելավման հաշվառման մեջ գտնվող 62 շահառու ընտանիքի պահանջարկը, կամ եռամյա ժամանակահատվածում լուծել 2016 թվականի մարտի 1-ի դրությամբ հաշվառման մեջ գտնվող

2081 ընտանիքներից (այդ թվում 675-ը՝ զոհվածի (մահացածի) ընտանիք) շուրջ 186 ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման խնդիրը, որից Երևան քաղաքում՝ 60 ընտանիք, ՀՀ մարզերում՝ 126 ընտանիք:

Միաժամանակ սոցիալական ապահովության ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

1. Բարելավել սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրումը,
2. Հզորացնել սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթները:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Համալիր սոցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման ընդլայնում:
2. Աջակցությունզբաղվածությաննորոգմավարությանիրականացմանը:
3. Կենսաթոշակային համակարգի արդիականացում:
4. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վերլուծական կարողությունների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում:
5. Ծրագրի կառավարում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 2,205.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,778.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 426.7 մլն. դրամ, 2018թ.՝ 3,652.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,787.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 865.1 մլն. դրամ, 2019թ. 4,032.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,148.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 884.3 մլն. դրամ:

Նոր նախաձեռնություններ

1. ««Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ» ծրագրի գծով 2017-2019 թվականներին նախատեսվում է ծախս 20.0-ական մլն դրամի չափով: Ծրագրով նախատեսվում է.

ա/ աշխատաշուկայում անմրցունակ անձանց ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար տրամադրել աջակցություն (մասնավորապես, խորհրդատվության, ուսուցման, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի մշակման և իրականացման գծով),

բ/ տնտեսական գործունեությունն սկսելուց հետո մեկ տարվա ընթացքում կատարել ուղեկցման աշխատանքներ (մասնավորապես, հարկային պարտավորությունների և այլ պետական վճարների կատարման վերաբերյալ խորհրդատվության, բիզնեսի կառավարման և մարքեթինգի գծով):

2017-2019 թվականներին ծրագրի յուրաքանչյուր փուլի համար արժեքը կազմում է 80.0 հազ. դրամ, իսկ շահառուների միջին տարեկան թվաքանակը՝ 125:

2. «Աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնում» ծրագրի գծով 2017-2019 թվականներին նախատեսվում է ծախս 26.2-ական մլն դրամի չափով: Ծրագրով նախատեսվում է 18 տարին լրացած աուտիզմ ունեցող 80 դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման համար պետական աջակցություն տալ «Աուտիզմ Ազգային Հիմնադրամ» բարեգործական հասարակական կազմակերպությանը 30 աշխատողի համար աշխատավարձի գծով, ներառյալ եկամտային հարկը:

3. «Հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժի մատչելիության ապահովման նպատակով վարչական շենքերի վերահատակագծում» ծրագրի գծով 2017-2019 թվականներին նախատեսվում է ծախս 25.0-ական մլն դրամի չափով: Ծրագրով նախատեսվում է վարչական շենքի վերահատակագծում՝ հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժի մատչելիության ապահովման և համապատասխան միջավայրի ստեղծման նպատակով:

Աղյուսակ 9.3 Նոր նախաձեռնությունների ֆինանսավորումը 2017-2019 թթ

(մլն դրամ)

	2017 թ.	2018 թ.	2019 թ.
Սոցիալական պաշտպանություն	394.839.1	408.145.1	423.323.0
նոր ծրագրեր, այդ թվում	71.2	71.2	71.2
1. «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ	20.0	20.0	20.0
2. Աուտիզմ ունեցող դեռահասներին և երիտասարդներին զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնում	26.2	26.2	26.2
3. Հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժի մատչելիության ապահովման նպատակով վարչական շենքերի վերահատակագծում	25.0	25.0	25.0
% ոլորտի նկատմամբ	0.02	0.02	0.02

գոյություն ունեցող ծրագրեր	394.767.9	408.073.9	423.251.8
% ոլորտի նկատմամբ	99.98	99.98	99.98

Աղյուսակ 9.4 Պետական բյուջեից սոցիալական պաշտպանության գծով ծախսերը 2015-2019 թվականներին (առանց գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի)

(մլն դրամ)

Բաժնի/խմբի անվանումը	**2015 թ. փաստացի պետական բյուջե**	**2016 թ. հաստատված պետական բյուջե**	**% փոփ.**	**2017 թ.**	**% փոփ.**	**2018 թ.**	**% փոփ.**	**2019 թ.**	**% փոփ.**
Ոլորտի %-ը ՀՆԱ-ի նկատմամբ	7.5	7.3	x	7.1	x	6.9	x	6.6	x
Սոցիալական պաշտպանություն, այդ թվում	**378,940.6**	**399,955.4**	5.5	**394,839.1**	(1.3)	**408,145.1**	3.4	**423,323.0**	3.7
Վատառողջություն և անաշխատունակություն	1,233.0	1,291.3	4.7	1,323.5	2.5	1,301.6	(1.7)	1,301.5	(0.0)
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.3	0.3	(0.8)	0.3	3.8	0.3	(4.9)	0.3	(3.6)
Ծերություն	283,195.6	293,692.5	3.7	296,802.4	1.1	308,714.8	4.0	323,542.7	4.8
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	74.7	73.4	(1.7)	75.2	2.4	75.6	0.6	76.4	1.0
Հարազատին կորցրած անձինք	4,972.2	5,183.1	4.2	5,183.1	-	5,183.1	-	5,183.1	-
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	1.3	1.3	(1.2)	1.3	1.3	1.3	(3.3)	1.2	(3.6)
Ընտանիքի անդամներ և զավակներ	59,202.8	64,781.1	9.4	66,530.6	2.7	66,530.6	-	66,530.6	-
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	15.6	16.2	3.7	16.9	4.0	16.3	(3.3)	15.7	(3.6)
Գործազրկություն	1,507.7	2,374.9	57.5	2,359.5	(0.6)	2,359.5	-	2,359.5	-
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.4	0.6	49.2	0.6	0.6	0.6	(3.3)	0.6	(3.6)
Բնակարանային ապահովում	499.9	500.0	0.0	500.0	-	500.0	-	500.0	-
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.1	0.1	(5.2)	0.1	1.3	0.1	(3.3)	0.1	(3.6)
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	13,052.0	13,870.9	6.3	13,748.8	(0.9)	13,717.6	(0.2)	13,688.1	(0.2)
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	3.4	3.5	0.7	3.5	0.4	3.4	(3.5)	3.2	(3.8)
Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	15,277.4	18,261.7	19.5	8,391.2	(54.1)	9,837.9	17.2	10,217.4	3.9
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	4.0	4.6	13.3	2.1	(53.5)	2.4	13.4	2.4	0.1

վարկային ծրագիր, այդ թվում	125.5	607.8	384.5	2,205.0	262.8	3,652.6	65.7	4,032.3	10.4
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	0.0	0.2	359.0	0.6	267.5	0.9	60.3	1.0	6.4
ընթացիկ ծախսեր, այդ թվում	378,940.6	399,453.8	5.4	393,083.9	(1.6)	405,717.0	3.2	420,702.7	3.7
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	100.0	99.9	(0.1)	99.6	(0.3)	99.4	(0.2)	99.4	(0.0)
կապիտալ ծախսեր, այդ թվում		501.5		1,755.2	250.0	2,428.1	38.3	2,620.3	7.9
տեսակարար կշիռն ամբողջ ծախսերի մեջ, %	-	0.1		0.4	254.5	0.6	33.8	0.6	4.0

ԳԼՈՒԽ 10. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

10.1. ՄՇԱԿՈՒՅԹ

10.1.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.1.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Մշակույթի ոլորտում ընդգրկված պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները, ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան, իրականացնում են մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, ազգային արվեստների հենքի և ավանդույթների հիմքի վրա ժամանակակից մարդու ընկալումներին ու ձգտումներին համահունչ ժամանակակից արվեստի ստեղծման և տարածման, ազգաբնակչության ստեղծագործական ներուժի խթանման, նոր մտահղացումների ու գաղափարների ներդրման անհրաժեշտ պայմանների ապահովման, ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծման, մշակութային միջոցառումների իրականացման և այլ ծառայություններ:

ՀՀ կառավարության մշակութային քաղաքականությունը մշակում է ոլորտի պետական լիազոր (գլխադասային) մարմինը՝ ՀՀ մշակույթի նախարարությունը և իրականացվում է 75 պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 12 գերատեսչությունների, 10 մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի կողմից ու շուրջ 100 հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտում կիրականացվի 33 ծախսային ծրագիր:

Պետական մշակութային քաղաքականության ուղղություններն են՝

- ***Մշակութային ժառանգության պահպանությունը և ազգային ավանդույթների վերարտադրումը, այն է.***

- *մշակութային շարժական ժառանգության* հաշվառման, գիտական ուսումնասիրության, համալրման, հանրահռչակման, թանգարանների ցուցադրությունների և մշակութային արժեքների պահպանության պայմանների ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանեցման գործառույթներն իրականացվում են 39 թանգարանների (որից 24-ը՝ ՀՀ մշակույթի նախարարության, 3-ը՝ այլ գերատեսչությունների, 8-ը՝ ՀՀ մարզերի, 4-ը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության), 16 գրադարանների (որից 13-ը՝ ՀՀ մշակույթի նախարարության, 3-ը՝ այլ գերատեսչությունների ենթակայության), Հայաստանի ազգային գրապալատի, Հայաստանի ազգային արխիվի միջոցով:

- *մշակութային անշարժ ժառանգության* պահպանության, ուսումնասիրության, հաշվառման, վերականգնման, հանրահռչակման գործառույթներն իրականացվում են ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության, նախարարության ենթակայությամբ գործող 2 ՊՈԱԿ-ի, 1 ՓԲԸ-ի, 1 ՀԿ-ի միջոցով:

- ***Ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի զարգացումը, մշակութային արտադրանքի տարածումը, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտումը և ստեղծագործական գործընթացների խթանումը, այն է.***

մշակութային արտադրանքի ստեղծման և ոլորտի ծառայությունների մատուցման մրցակցային դաշտի ձևավորման, դեբյուտային ստեղծագործական ծրագրերի, արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսման, անհատ ստեղծագործողների ու երևույթների արժևորման և միջազգային ասպարեզում ժամանակակից մշակույթի ներկայացման գործառույթներն իրականացվում են 36 թատերահամերգային կազմակերպությունների (որից 29-ը՝ ՀՀ մշակույթի նախարարության, 4-ը՝ ՀՀ մարզերի, 3-ը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության), ինչպես նաև ՀԿ-ների միջոցով:

- ***Մշակութային ծառայությունների ապակենտրոնացումը և համաչափության ապահովումը, այն է.***

մշակույթի ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովման, մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, միջմարզային կապերի զարգացման, մշակութային գործունեության իրականացման ապահովման գործառույթներն իրականացվում են նախարարության համակարգի ՊՈԱԿ-ների, ինչպես նաև մշակութային ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջոցով:

- ***Միջազգային համագործակցության ընդլայնումը, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշումը և հանրահռչակումը, այն է.***

մշակութային երկխոսության, երկկողմ և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնման ու խորացման միջոցով մշակութային ժառանգության պահպանության և ժամանակակից արվեստի հասանելիության ապահովման, աշխարհում հայ մշակույթի հանրահռչակման գործառույթներն իրականացվում են Հայաստանում հավատարմագրված 42 դեսպանությունների, արտերկրում գործող ՀՀ 35 դեսպանությունների և 5 գլխավոր հյուպատոսությունների, 9 միջազգային կառույցների և 12 միջազգային կազմակերպությունների միջոցով:

- ***Ազգային փոքրամասնությունների մշակույթի և էթնիկ ինքնության պահպանումը, այն է.***

ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացների ներգրավվածության ապահովման գործառույթներն իրականացվում են 11 ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև ՀՀ մշակույթի նախարարության ՊՈԱԿ-ների միջոցով:

Մշակույթի ոլորտը կարգավորվում է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին», «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին», «Արխիվային գործի մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքներով:

10.1.1.2. Ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները

Մշակութային ժառանգության պահպանություն և ազգային ավանդույթների վերարտադրում

Մշակութային շարժական ժառանգություն

<u>Թանգարաններ</u>

Թանգարանները հանդիսանում են մշակութային շարժական ժառանգության հավաքման, պահպանման, ուսումնասիրման, հանրահռչակման, սերունդներին անխաթար փոխանցման, բնության և մարդկության զարգացման մասին գիտելիքների սկզբնաղբյուրը:

Թանգարանների ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ *պատմամշակութային ժառանգության մաս կազմող մշակութային արժեքների պահպանությանը վերաբերող իրավական դաշտի կարգավորումը, թանգարանների գործունեության պայմանների բարելավումը և թանգարանային ցուցադրությունների արդիականացումը, պետություն-մասնավոր համագործակցության շարունակականությունը, թանգարանային հավաքածուների պահպանությունը և համալրման անընդհատության ապահովումը, մշտադիտարկումների իրականացումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվանշայնացումը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացումը, գիտական ուսումնասիրությունը և հանրահռչակումը, թանգարանային մասնագետների վերապատրաստումը և միջազգային համագործակցության ընդլայնումը:*

2014-2015 թվականներին ոլորտի հիմնական հատկացումներն ուղղվել են պետական քաղաքականության ուղղություններով աշխատանքների իրականացմանը:

Իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ.

ՀՀ կառավարություն է ներկայացվել «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի նիստում: Օրենքի նախագիծը ներկայացված է ՀՀ Ազգային ժողով:

Թանգարանների գործունեության պայմանների բարելավման և թանգարանային ցուցադրությունների արդիականացման ուղղությամբ.

- նոր կառուցված շենքում նոր մշտական ցուցադրությամբ սկսել է գործել «Կոմիտասի թանգարան-ինստիտուտը» ՊՈԱԿ-ը,

- իրականացվել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նոր մասնաշենքի կառուցման և նոր ցուցադրության կազմակերպման աշխատանքները,

- ավարտվել է «Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» ՊՈԱԿ-ի «Միջին Արևելքի թանգարան» ցուցասրահի կահավորման և նոր ցուցադրության աշխատանքները, հիմնանորոգվել է ՊՈԱԿ-ի մասնաճյուղ ՀՀ Լոռու մարզի Դսեղի Հ. Թումանյանի տուն-թանգարանը,

- կառուցվել է Պ. Սևակի տուն-թանգարանի նոր մասնաշենքը,

- վերակառուցվել է Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանը,

- ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով իրականացվել են Համո Սահյանի տուն-թանգարանի կառուցման, ցուցադրության հայեցակարգի կազմման և ցուցանմուշների հավաքագրման աշխատանքները:

Պետություն-մասնավոր համագործակցության շարունակականության ապահովման ուղղությամբ.

- շարունակվել է պետական աջակցության տրամադրումը «Ս. Կապուտիկյանի տուն-թանգարան», «Կալենց» թանգարան», «Բենիկ Պետրոսյան» և «Լ. Ագուլեցի» հիմնադրամներին, ազատամարտիկ Ա. Ղարիբյանի հուշատուն-թանգարանին, «Վան Խաչատուր» արվեստի և ճարտարապետության սինթեզ» մշակութային հիմնադրամին, «Աղասի Այվազյան» հիմնադրամին:

Թանգարանային հավաքածուների պահպանության և համալրման անընդհատության ապահովման ուղղությամբ.

- ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարաններում *պահպանվող առարկաների* թիվը 2014-2015 թվականներին համապատասխանաբար կազմել է 1832905 և 1849300, 2012-2013 թվականների 1796261 և 1822907-ի համեմատ: 2014-2015 թվականներին համապատասխանաբար թանգարանների ֆոնդերը համալրվել են 9998 և 16395 թանգարանային առարկաներով:

- Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարաններում պահպանվող առարկաների թիվը 2014-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 115070 և 116294՝ նախորդ 2012-2013 թվականների 113667 և 114555-ի համեմատ: 2014-2015 թվականներին թանգարանները համապատասխանաբար համալրվել են 515 և 1224 թանգարանային առարկաներով:

- ՀՀ բնապահպանության նախարարության համակարգի Հայաստանի բնության պետական թանգարանում պահպանվող առարկաների թիվը 2014-2015 թվականներին կազմել է համապա-

տասխանաբար 6477 և 6497՝ նախորդ 2012-2013 թվականների 6457 և 6477-ի համեմատ: 2014-2015 թվականներին թանգարանը համապատասխանաբար համալրվել է 20-ական թանգարանային առարկաներով:

- ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում պահպանվող առարկաների թիվը 2014-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 73934 և 73973՝ նախորդ 2012-2013 թվականների 73582 և 73934-ի համեմատ: 2015 թվականին համալրվել է 39 թանգարանային առարկաներով:

- ՀՀ քաղաքաշինության նախարարության համակարգի թանգարան-ինստիտուտներում պահպանվող առարկաների թիվը 2014-2015 թվականներին կազմել է 86142 և 88014 նախորդ 2012-2013 թվականների 77489 և 79856-ի համեմատ: 2014-2015 թվականներին թանգարանները համապատասխանաբար համալրվել են 6286 և 1872 թանգարանային առարկաներով:

- ՀՀ Գեղարքունիքի, Արարատի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերի թանգարաններում պահպանվող առարկաների թիվը 2014-2015 թվականներին կազմել է 89360 և 90557՝ նախորդ 2012-2013 թվականների 89028 և 89932-ի համեմատ: 2014-2015 թվականներին թանգարանները համապատասխանաբար համալրվել են 572 և 1197 թանգարանային առարկաներով:

Թանգարանային ֆոնդերի համալրումն իրականացվում է տարբեր եղանակներով՝ գնման, նվիրատվության, ինչպես նաև հնագիտական պեղումներից ձեռք բերված գտածոների թանգարաններին հանձնման միջոցով: Նվիրատվությունների շարքում հարկ է նշել «Դերասանուհի Մ.Պաստուխովայի դիմանկարը» (Մ. Սարյանի հեղինակությամբ), Ս. Դալիի և Վ. Կանդինսկու 15 փորագիր աշխատանքները, պետերբուրգահայ քանդակագործ Լ.Բայբությանի «Աստվածուհի» քանդակը, լեհ հայտնի նկարչուհիների 11 աշխատանքները, ամերիկահայ նկարիչ Դ. Վարուժան-Հեճինյանի գեղանկարը, Մ. Ավետիսյանի «Մոր դիմանկարը», Վ. Մախոխյանի բնանկարը և այլն: Հայաստանի պատմության թանգարանը համալրվել է խեցեղենի նմուշներով (Ք.ա 13-12-րդ դար, Լոռի բերդ), բրոնզե ճարմանդներով (Ք.ա 6-5-րդ դար, Լոռի բերդ), իսկ Հայաստանի ազգային պատկերասրահը՝ Ք. Քեչեջյանի, Յա.Էկիզլեռի, Տ. Ցիտողջյանի, Ակիմ Օվանեսովի, Հ. Զարդարյանի, Է. Այվազյանի ստեղծագործություններով: Ձեռք բերված մշակութային արժեքները ենթարկվում են փորձաքննության, գիտական նկարագրության և մեկնաբանման, կազմվում են գիտական վկայագրեր:

ՀՀ մշակույթի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի «ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թանգարաններում թանգարանային առարկաների պահպանվածության վիճակի դիտանցում իրականացնելու մասին» N 468-Ա հրամանի համաձայն *դիտանցումներ* են իրականացվել.

- 2014 թվականին՝ Ա.Խաչատրյանի տուն-թանգարանում, Փայտարվեստի, Ն.Ադոնցի անվան Սիսիանի պատմության և Ս. Փարաջանովի թանգարաններում,
- 2015 թվականին՝ պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայությունում, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանում և Օրբելի եղբայրների տուն-թանգարանում:

Ընդհանուր առմամբ դիտանցումների արդյունքում անցկացվել է առավել արժեքավոր և ռիսկային գործոններ ենթադրող՝ շուրջ 207 և 301 *թանգարանային առարկաների փորձաքննություն*՝ պահպանվածության վիճակի մանրամասն նկարագրությամբ:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության թվանշայնացման և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացման ուղղությամբ.

Էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի, տեղեկատվական շտեմարանների, կայքերի և վիրտուալ ցուցադրությունների ներդրման և գործարկման արդյունքում 2014 թվականին մեկնարկել են *Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի* ստեղծման աշխատանքները: Շտեմարանում ներառվում է Հայաստանի և արտերկրի տարբեր մշակութային հաստատություններում գտնվող պետական և ոչ պետական հավաքածուներում պահպանվող մշակութային արժեքների վերաբերյալ ամփոփ տեղեկույթը: Մեկնարկել են հայ լուսանկարչության շտեմարանի ստեղծման աշխատանքները: Շարունակվել են Հայաստանի ազգային պատկերասրահի վեբ կայքի *(www.nga.am,* www.gallery.am) ներբեռնման աշխատանքները, որի միջոցով հասարակությանը հասանելի է 27780 թանգարանային արժեքի մասին տեղեկույթ: Համալրվել է «Գորգերի վիրտուալ թանգարան» կայքէջը (www.armeniancarpets.am), շարունակվել է համագործակցությունը www.360yerevan.com կայքի հետ՝ ստեղծելով ևս 5 թանգարանի վիրտուալ տուր:

Գիտական ուսումնասիրման և հանրահռչակման ուղղությամբ.

Թանգարանում իրականացվում է նոր ցուցադրությունների կազմակերպում և եղած ցուցահանդեսների ընդլայնում, համալրում նոր նյութերով: ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարաններում 2014-2015 թվականներին կազմակերպվել է համապատասխանաբար 207 և 273 ժամանակավոր ցուցահանդես: 2014-2015 թվականներին մշտական և ժամանակավոր ցուցադրություններում ներկայացվել է 60873 և 57856 ցուցանմուշ:

Հայաստանում ժամանակակից հայ ստեղծագործողների աշխատանքները հանրահռչակելու նպատակով 2014 թվականին Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպվել են՝ Հակոբ Հակոբյանի 90-ամյակին նվիրված «Ներհայեցում» խորագիրը կրող հետմահու առաջին, Էդուարդ Իսաբեկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված, Փարավոն Միրզոյանի հոբելյանական ցուցահանդեսները: Միաժամանակ, արտերկրից Հայաստան են բերվել մի շարք ցուցահանդես-

ներ, այդ թվում՝ ծագումով հայ, լեհ նկարիչ Թեոդոր Աքսենտովիչի, իտալացի արվեստագետ Բրունո Բրունիի աշխատանքների հետահայաց, ֆրանսահայ նկարիչ Ժան Կազանջյանի ստեղծագործությունների, ինչպես նաև «Երկու հսկա՝ Ս. Ռախմանինով և Ֆ. Շալյապին. հայացք 21-րդ դարից» ցուցահանդեսները:

- Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարաններում 2014-2015 թվականներին կազմակերպվել է համապատասխանաբար 44 և 40 ցուցահանդես:
- ՀՀ բնապահպանության նախարարության համակարգի Հայաստանի բնության պետական թանգարանում 2014-2015 թվականներին կազմակերպվել է համապատասխանաբար 9 և 6 միջոցառում, 10-ական ժամանակավոր ցուցադրություն, 600 և 673 էքսկուրսիա:
- ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանում 2014-2015 թվականներին կազմակերպվել է համապատասխանաբար 8 և 4 ժամանակավոր, 2 և 1 հիմնական ցուցադրություն:
- ՀՀ քաղաքաշինության նախարարության համակարգի թանգարան-ինստիտուտներում 2014-2015 թվականներին կազմակերպվել է, համապատասխանաբար 23 և 30 ցուցադրություն:
- ՀՀ Գեղարքունիքի, Արարատի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերի թանգարաններում 2014-2015 թվականներին կազմակերպվել է համապատասխանաբար 62 և 64 ցուցահանդես:
- Նախարարության համակարգի բոլոր թանգարաններում կազմակերպվել են ցեղասպանության 100-ամյակին նվիրված ցուցահանդեսներ և բազմաթիվ միջոցառումներ: Այսպես, Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպվել են «Վկայություն», «Լևոն Թութունջյան», Հովհաննես Զարդարյանի «Գաղթ» ցուցահանդեսները, Երվանդ Քոչարի թանգարանի հետ համատեղ՝ «Երվանդ Քոչար. սերունդների երկխոսություն», Կոմիտաս թանգարան-ինստիտուտում՝ «Ծաղկած ծիրանի», Ռուբեն Գալչյանի «Հայացք Հայաստանի պատմությանը քարտեզագրական փաստաթղթերի միջոցով», «Մոդեռնից պոստմոդեռն», Երվանդ Քոչարի թանգարանում «Փարիզի Պոմպիդու կենտրոնում բացված «Modernites Plurielles» ցուցահանդեսի արձագանքը ԵՔԹ-ում» ցուցահանդեսները:
- Հրատարակվում են բուկլետներ, կատալոգներ, ալբոմներ, մենագրություններ, հոդվածներ: 2014-2015 թվականներին համապատասխանաբար հրատարակվել է 12 և 33 բուկլետ, 18 և 15 ալբոմ-կատալոգ, 26 և 27 մենագրություն, 60 և 68 հոդված:

Արտերկրում հայ մշակույթի ներկայացման և հանրահռչակման տեսանկյունից նշանակալից էին.

2014 թվականին Ֆրանսիայի Սենտ Տրոպե քաղաքում բացված «Արևելքը Դելակրուայից մինչև Կլեե», Լեհաստանի Սոպոտ քաղաքում տեղի ունեցած «Հովհաննես Այվազովսկի. ժամանակ և

հավերժություն», Գերմանիայի Հալլե քաղաքում բացված «Մինաս և Նարեկ Ավետիսյաններն. մոդեռնը և ավանգարդը Հայաստանում», Ս. Փարաջանովի աշխատանքների «Նռան Գույնը» (Մոսկվայի Սոլյանկայի պետական պատկերասրահի հետ համատեղ) ցուցահանդեսները: Մոսկվայում տեղի է ունեցել «Ինտերմուզեյ» 2014 թանգարանային միջազգային փառատոնը, որին մասնակցել են հայաստանյան ներկայացուցիչները: Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանում կայացել է «Ասորեստանից Իբերիա. մայրցամաքների քառուղիներով դասական դարաշրջանի արշալույսին» ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին ցուցանմուշներ Հայաստանի պատմության թանգարանից: 2015 թվականին իրականացվել են մի շարք ցուցահանդեսներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Մասնավորապես, Հռոմում կայացել է «Հայաստան. Տապանի ժողովուրդ», Մոսկվայի պետական Տրետյակովյան պատկերասրահում՝ «Գեորգի Յակուլով. Բազմագույն արևների վարպետը», Լեհաստանի Սոպոտ քաղաքի Գեղարվեստի պատկերասրահում՝ Փարավոն Միրզոյանի ստեղծագործությունների ցուցահանդեսները, Գերմանիայի Նյուրենբերգ քաղաքում՝ Լուսիկ Ագուլեցու «Հայկական տարազներ» ցուցադրությունը: Ապահովվել է հայաստանյան ներկայացուցիչների մասնակցությունը Մոսկվայում կայացած «Ինտերմուզեյ»-2015» թանգարանային միջազգային փառատոնին: Հռոմում կազմակերպվել է «Ռուսաստան՝ ինքնաթիռով, գնացքով, ավտոմեքենայով» (հետագայում ցուցադրվել է նաև Մոսկվայում), Փարիզի Պոմպիդու կենտրոնի կինոթատրոնի ճեմասրահում՝ «Ս. Փարաջանովի աշխարհը. արվեստն առանց սահմանների» լուսանկարչական, Բրյուսելում՝ «Փարաջանովը Սարգիսի հետ» ցուցահանդեսները:

Թանգարանների գործունեության զարգացման կարևոր ցուցանիշներից է այցելուների թիվը: Այսպես, օրինակ, ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարանների այցելուների թիվը 2014-2015 թվականներին համապատասխանաբար կազմել է 592366 և 664157, նախորդ՝ 2012-2013 թվականների 472779 և 537992 համեմատ:

Թանգարանային գործունեության հանրահռչակման բնագավառում կարևոր միջոցառումներ են «*Թանգարանների միջազգային օր*» և «*Թանգարանների գիշեր*» համաեվրոպական միջոցառումները, որոնք գնալով ավելի մեծ ճանաչում են ձեռքբերում՝ ընդլանելով դրանց միացած կազմակերպությունների և այցելուների թիվը: 2014-2015 թվականներին միջոցառումներին համապատասխանաբար միացել են 101 թանգարան, 179031 այցելու (այդ թվում՝ ԼՂՀ 5 թանգարան) և 111 թանգարան, 211951 այցելու (այդ թվում՝ ԼՂՀ 10 թանգարան): Նախորդ՝ 2012-2013 թվականներին այդ ցուցանիշները կազմել են՝ 2012 թվականին 68 թանգարան և 20780 այցելու, իսկ 2013 թվականին՝ 89 թանգարան, 169614 այցելու:

- Հայաստանի թանգարաններն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև «*Եվրոպական ժառանգության օրեր*» համաեվրոպական միջոցառմանը, որին միացել են 2013 թվականից: 2014 թվականին համապատասխանաբար մասնակցել է 80 մշակութային կազմակերպություն և 18500

այցելու, 2015 թվականին՝ 86 մշակութային կազմակերպություն և 27150 այցելու: Այս ցուցանիշը ևս աճել է 2013 թվականի 74 կազմակերպության (այդ թվում՝ 26 թանգարան) և 15357 այցելուի համեմատ:

Թանգարանային մասնագետների վերապատրաստման ուղղությամբ.

Թանգարանների մասնագետներն ակտիվորեն մասնակցում են տեղական և միջազգային դասընթաց-վերապատրաստումներին:

2014-2015 թվականներին Թանգարանների ֆոնդային աշխատողների վերապատրաստման ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի վերապատրաստվել են 25-ական ֆոնդապահներ (այդ թվում՝ ԼՂՀ 2 մասնակից), իսկ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» ծրագրի շրջանակներում կայացել է տեղեկույթ տրամադրող կազմակերպությունների մասնագետների վերապատրաստման 5-օրյա դասընթաց, որի ընթացքում վերապատրաստվել է 43 մասնագետ:

2014 թվականին տեղի է ունեցել Հնագիտական մետաղյա առարկաների պահպանությանն ու ուսումնասիրմանը նվիրված 6-րդ տեղական սեմինարը, որին մասնակցել է 12 մասնագետ:

Թանգարանային ոլորտին 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 2,046.8 և 2,283.7 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվել է հատկացնել 2,320.4 մլն դրամ:

<u>Գրադարաններ</u>

Գրադարանները հանդիսանում են համաշխարհային և հայ ժողովրդի գրավոր ժառանգության հավաքման, ուսումնասիրման, դասակարգման, դրանց մասին տեղեկատվության տարածման և սերունդներին անխաթար փոխանցման գիտա-հանրային հաստատություններ:

Կարևորելով գրադարանների, որպես սոցիալ-հաղորդակցական, կրթադաստիարակչական, մշակութային և տեղեկատվական կազմակերպությունների, դերը ՀՀ մշակույթի նախարարությունը մշակում և համակարգում է գրադարանների զարգացման ուղղությունները, ապահովում դրանց կայուն գործունեությունը և նպաստում գրադարանային հավաքածուների թվանշանացման, էլեկտրոնային գրադարանների ստեղծման և օգտվողների համար դրանց հասանելիությունն ապահովելու գործին:

Գրադարանների ոլորտում իրականացվող պետական քաղաքականության ուղղություններն են՝ *իրավական դաշտի կարգավորումը, գրադարանային հավաքածուների պահպանությունը և համալրման անընդհատության ապահովումը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության թվանշայնացումը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացումը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը, համայնքային գրադարանների զարգացումը, ոլորտի մասնագետների վերապատրաստումը, հայկական տառատեսակների զարգացումը և միջազգային համագործակցու-*

թյան ընդլայնումը, մատենագիտական, վիճակագրական տվյալների, տեղեկատվական այլ ցանկերի կազմումն ու հրապարակումը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը:

Իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ.

«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել է 21 իրավական ակտ, որից 10-ը՝ ՀՀ կառավարության որոշում, 11-ը՝ ՀՀ մշակույթի նախարարի հրաման:

Զգալի աշխատանքներ են իրականացվել *գրադարանային հավաքածուների պահպանության և համալրման անընդհատության ապահովման ուղղությամբ.*

- ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության գրադարանների գրադարանային հավաքածուների թիվը 2015 թվականին կազմել է 8419830 միավոր, 2014 թվականի 8372552-ի համեմատ ավելացել է 47278 միավորով, 2014-2015թվականներին համալրվել են համապատասխանաբար 62207 և 57713 միավոր գրականությամբ, նախորդ՝ 2012-2013 թվականների 10716 և 11301 միավորի համեմատ:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի» կողմից 2014-2015 թվականներին ձեռք է բերվել 1386 և 1339 միավոր, 2012-2013 թվականների 1719 և 1360 միավորի համեմատ:

- ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանի կողմից 2014-2015 թվականներին ձեռք է բերվել 4345 և 4315 միավոր, նախորդ՝ 2012-2013 թվականների 6913 և 5521 միավորի համեմատ:

- Հայաստանի ազգային գրապալատում 2014 թվականին տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի ֆոնդերը համալրվել են 21377 միավորով, 2015 թվականին՝ 5000-ով, նախորդ՝ 2012-2013 թվականների 21730 և 21832 միավորի համեմատ:

Հայաստանի ազգային գրադարանում վերականգնվել է համապատասխանաբար՝ 45230 և 45238 թերթ, ընդամենը 90468, ինչը նախորդ 2012-2013 թվականների 66150-ի համեմատ աճել է 24318 թերթով: Յուրաքանչյուր տարի փափկեցվել է 370-ական միավոր գրքի կաշվե կազմ, բորբոսային շերտից մաքրվել է 95-ական միավոր գիրք: Հնատիպ և հազվագյուտ գրքերի պահպանվածության ապահովման ուղղությամբ իրականացվել է Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուում ընդգրկված, համապատասխանաբար 7 և 8 հնատիպ գրքերի ախտահանումն ու մանրէազերծումը, որն ընդհանուր կազմում է 15, ինչը նախորդ 2012-2013 թվականների 11-ի համեմատ աճել է 4-ով, վերականգնվել է համապատասխանաբար 84-ական գրքի կազմ և էջ:

Տեղեկատվական շփեմարանների շարունակական զարգացման ուղղությամբ պարբերական մամուլի ու գրքի երկարաժամկետ պահպանությունն ու սպասարկումը թվային ձևաչափերով ապահովելու նպատակով.

- «Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանում (http://tert.nla.am) 2014-2015 թվականներին մուտքագրվել է 4597 մատենագիտական գրառում և 1486456 թվանշանացված էջ: Շտեմարանը հասանելի է հասցեով:

- «Հայ գիրք» համահավաք շտեմարանում (http://haygirk.nla.am) 2014-2015 թվականներին մուտքագրվել է 1484789 թվայնացված գրքային էջ և 17288 գրքի մատենագիտական գրառում: Գործընթացում առաջնահերթություն է տրվել հնատիպ, հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող մասնագիտական և գեղարվեստական գրքերին, մասնավորապես, 2014 թվականին թվանշայնացվել և շտեմարանում է տեղադրվել հայ հնատիպ և վաղ շրջանի 726 գիրք, իսկ 2015 թվականին՝ 675 միավոր գիրք և 20 քարտեզ, որոնք միասին կազմում են 1401 միավոր, ինչը նախորդ 2012-2013 թվականների 956-ի համեմատ աճել է 445-ով:

- ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանում 2014-2015 թվականներին էլեկտրոնային քարտարանում մուտքագրվել է համապատասխանաբար 42770 և 51292 գրադարանային միավոր: «ՀՀ ԳԱԱ-ի ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» էլեկտրոնային շտեմարանի ձևավորման շրջանակներում մուտքագրվել է 144 կենսամատենագիտություն (2012թ.՝ 22, 2013թ.՝ 16, 2014թ.՝ 86, 2015թ.՝ 20): ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանում 2015 թվականին ստեղծվել է «Մատենագիտական ցանկեր» խորագրով նոր շտեմարան, որը ներառում է Հայ գրքի, մամուլի և ձեռագրացուցակների մատենագիտությունը: Շտեմարանում առկա է 99 գիրք: Ստեղծվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերական հրատարակություններ՝ «Էջմիածին» և «Արարատ» ամսագրերի շտեմարանները, որոնցից օգտվողներին տրամադրված է 3968 հոդված:

- ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական գիտաբժշկական գրադարանի «Հայկական բժշկագիտություն» տվյալների շտեմարանում 2015 թվականին մուտքագրվել է 37550 գրառում, որը 2014 թվականի համեմատ ավելի է 7450-ով:

«Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» (ALEPH) ծրագրի շրջանակներում մուտքագրված միավորների թիվը 2014 թվականին կազմել է 307194 միավոր, իսկ 2015 թվականին՝ 257870 միավոր: Հայաստանի ազգային գրադարանում ավարտվել է հայատառ գրականության մուտքագրումը: Արդյունքում մուտքագրված է 1485 871 միավոր:

Գրադարանային հավաքածուների սպասարկման ուղղությամբ՝

- ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության գրադարաններում սպասարկված միավորների թիվը 2014-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 3610900 և 3593822 միավոր, նախորդ՝ 2012-2013 թվականների 3541792 և 3578706 միավորի համեմատ: Ընթերցողների թիվը 2014-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 113631 և 116164, նախորդ՝ 2012-2013 թվականների 110231-ի և 113442-ի համեմատ:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի» կողմից 2015 թվականին տեղեկույթի սպասարկված միավորների թիվը կազմել է 288510,

ինչը 2014 թվականի համեմատ աճել է 105045-ով: Դա պայմանավորված է ընթերցողների առցանց սպասարկման ակտիվացմամբ: Ընթերցողների թիվը 2015 թվականին կազմել է 6077, ինչը 2014 թվականի համեմատ աճել է 12-ով:

- ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանի կողմից սպասարկված միավորների թիվը 2015 թվականին կազմել է 701697, ինչը 2014 թվականի համեմատ նվազել է 69690-ով: Դա պայմանավորված է օրեցօր ավելացող էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների բազմազանությամբ, ինչը հնարավորություն է ընձեռում ընթերցողներին առանց գրադարան այցելելով ստանալ բազմաբովանդակ տեղեկույթ:

- ՀՀ ԱՆ-ի հանրապետական գիտաբժշկական գրադարանի կողմից սպասարկված միավորների թիվը 2015 թվականին կազմել է 88557, ինչը 2014 թվականի համեմատ աճել է 197-ով, ընթերցողների թիվը 2015 թվականին կազմել է 6350, ինչը 2014 թվականի համեմատ աճել է 140-ով:

Համալրվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները՝ «EBSCO» և ՌԴ-ի խոշորագույն էլեկտրոնային ռուսալեզու հավաքածուների՝ «Integrum World» տեղեկատվության տվյալների փաթեթները:

- ՀՀ մշակույթի նախարարության համակարգի գրադարանների էլեկտրոնային սպասարկումների ցուցանիշը 2014-2015 թվականներին համապատասխանաբար կազմել է 176846 և 173869 միավոր:

- ՀՀ առողջապահության նախարարության հանրապետական գիտաբժշկական գրադարանի կողմից մատուցած էլեկտրոնային սպասարկումների թիվը 2015 թվականին կազմել է 80500 միավոր, ինչը 2014 թվականի համեմատությամբ աճել է 140-ով:

Հայաստանի ազգային գրապալատում գրքի միջազգային ստանդարտ համարակալման (ISBN) համակարգում գրանցված կազմակերպությունների քանակը 2014-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 359 և 373: Եթե 2014 թվականին նախնական գրանցման է ենթարկվել և ինդեքսավորվել 2540 անուն գիրք (ներառյալ նոտագրականը), ապա 2015 թվականին այդ թիվը հասել է 3145-ի: Պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) ազգային կենտրոնի կողմից 2014 թվականին գրանցվել և համարանիշեր է ստացել 638 նոր պարբերական, 2015 թվականին՝ 667:

Հայաստանի ազգային գրապալատն իրականացնում է համակարգչային *հայկական տառատեսակների և հանրահռչակման ծրագիր*, որի շրջանակներում 2015 թվականին նախատեսված համակարգչային 3 տառատեսակի փոխարեն ստեղծվել է 5 տառատեսակ:

Հայաստանի ազգային գրապալատի նախաձեռնած *«Գրանշան» ոչ լատինական տառատեսակների միջազգային ամենամյա մրցույթն* անցկացվում է դեռևս 2008 թվականից: Մրցույթից բացի կազմակերպվում է նաև ոչ լատինական տառատեսակներին նվիրված համաժողով, ուր քննարկվում են նաև հայկական տառարվեստի խնդիրները: Ապահովվել է Հայաստանի

մասնակցությունը Բարսելոնում կայացած «Գրանշան 2014» (Հայաստանի մասնակիցներն արժանացել են 2 մրցանակի), Ստ.Գալլենում (Շվեյցարիա)՝ «Գրանշան 2015» (Հայաստանի մասնակիցներն արժանացել են 3 մրցանակի) մրցույթներին, 2014 թվականին Մյունխենում և 2015 թվականին Ռեդինգում (Մեծ Բրիտանիա) կայացած «Գրանշան» միջազգային համաժողովներին:

Համայնքային գրադարանների պահպանումը և զարգացումը գրադարանային ոլորտի կարևորագույն ուղղություններից է: «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը (28.02.2013թ. N 187-Ն) ընդունելուց հետո հավատարմագրվել է մարզային և համայնքային 34 գրադարան: Հանրային գրադարանների նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրով իրականացվել են հավատարմագրման վկայական ստացած 20 համայնքային գրադարանների վերազինման աշխատանքները (2013թ.՝ 10, 2014թ.՝ 5, 2015թ.՝ 5 գրադարան):

ՀՀ մարզերում ընթերցող-գիրք-գրող կապի ամրապնդմանը նպաստող մի շարք մասնավոր և պետական նախաձեռնություններ («Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ», «Հանդիպման վայրը՝ գրադարան», «Ազգային գրադարանային շաբաթ» և այլ ծրագրեր) դարձել են ավանդական և նպաստում են համայնքային գրադարանների ապակենտրոնացման խնդիրների լուծմանը:

2015 թվականին Գրադարանավարի օրը «Դարձիր գրադարանի բարեկամ» կարգախոսով իրականացվել է արդեն ավանդական դարձած «Հանդիպման վայրը գրադարան» ծրագիրը, որին մասնակցել է 100 գրադարան և կազմակերպվել է 300 միջոցառում: Ծրագրի նպատակն է նպաստել սահմանամերձ համայնքային գրադարանները նոր հրատարակված հայ և համաշխարհային դասական, տեղեկատու, հանրագիտարանային, ուսումնամեթոդական գրականությամբ համալրման գործին: Ծրագրի շրջանակում հավաքված 3000-ից ավելի գրքերը շրջիկ գրադարանով բաշխվել են Տավուշի մարզի Կողբ, Կոթի, Ոսկեպար և Մովսես համայնքների գրադարաններին:

Գրադարանային ոլորտի մասնագետների կարողությունները, հմտությունները զարգացնելու ուղղությամբ շարունակվել են *վերապատրաստման դասընթացները*: 2014-2015 թվականներին մարզային և համայնքային գրադարանավարների համար Հայաստանի ազգային գրադարանում անցկացված դասընթացներին յուրաքանչյուր տարի մասնակցել է համապատասխանաբա՝ 90 և 106 գրադարանավար, որն ընդհանուր կազմում է 196: Դա նախորդ 2012-2013 թվականների 174-ի համեմատ աճել է 22-ով:

Միջազգային գրադարանային կազմակերպություններին անդամակցումը կարևոր հարթակ է ոլորտում փոխհամագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման համար: Արտերկրի գրադարանների հետ համագործակցությունն իրականացվում է երեք հիմնական ուղղություններով՝ գրադարանների հայերեն գրքերի և պարբերականների թվայնացում, հրավիրյալ մասնագետների կողմից Հայաստանում վերապատրաստման դասընթացների և տեխնիկական

օժանդակություն, թվայնացման ու սպասարկման աշխատանքների իրականացում: Նշված ուղղությունների իրականացման համար կարևոր է նաև միջազգային կազմակերպություններին անդամակցումը, մասնավորապես՝

- IFLA (International Federation of Library Assotiations and Institutions - Գրադարանային ասոցիացիաների և ինստիտուտների միջազգային ֆեդերացիա),
- БАЕ (Библиотечная Ассамблея Евразии - Եվրասիայի գրադարանային ասամբլեա),
- CENL (Foundation Conference of European National Librarians - Եվրոպական ազգային գրադարանների հիմնադրամ)

Գրադարանային ոլորտին 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար 1,513.0 և 1,761.2 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվել է հատկացնել 1,772.5 մլն դրամ:

<u>Արխիվային գործի</u> բնագավառում բոլոր ծառայությունների մատուցումն իրականացվում է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է արխիվային փաստաթղթերի *պահպանության ապահովմանը, համալրմանը, օգտագործմանը և տեղեկատու-որոնողական ինքնաշխատ համակարգի ստեղծմանը*:

2014-2015 թվականներին աճել են ՀՀ ազգային արխիվային հավաքածուի թվայնացման ցուցանիշները՝ ապահովելով մինչև վերջին տարիները հանրության օգտագործման համար խիստ սահմանափակ համարվող արխիվային փաստաթղթերի մատչելիությունը:

2014-2015 թվականներին համապատասխանաբար վերականգնվել, վերանորոգվել է 323.9 և 326.6 հազար թերթ փաստաթուղթ, կարվել,կազմապատվել 26.5 և 22.7 հազար գործ, արկղավորվել է 25.0 և 35.2 հազար գործ, արխիվը համալրվել է 20.4 և 13.2 հազար գործավարական ու 19.8 և 12.7 հազար անձնակազմի վերաբերյալ գործերով, արխիվ է դիմել 31874 ու 33181 ֆիզիկական և իրավաբանական անձ, արխիվի ընթերցասրահներում աշխատել է 536 և 664 հետազոտող, պատրաստվել է 32 և 32 ռադիոհեռուստատեսային հաղորդում, կազմակերպվել է փաստաթղթերի 6 և 9 ցուցադրություն, տեղեկատու որոնողական համակարգի ստեղծման նպատակով տեղեկությունների էլեկտրոնային շտեմարան է մուտքագրվել 101.6 և 114.2 հազար արխիվային տեղեկություն:

Արխիվային հավաքածուների պահպանության համար պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 459.6 և 524.3 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվել է հատկացնել 531.7 մլն դրամ:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

<u>Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման</u> բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղվում են հուշարձանների *պետական հաշվառմանը, պահպանությանը (այդ թվում՝ պատմական միջավայրի), ուսումնասիրմանը (այդ*

թվում՝ դիտանցում, պեղում), վերականգնմանը, օգտագործմանը և հանրահռչակմանը, ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը:

Ոլորտի իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ.

2014 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (փոփոխվել և լրացվել են գործող օրենքի 21-րդ և 36-րդ հոդվածները), որով ամրագրվել են հուշարձանի տեղափոխման և փոփոխման դեպքերը, պայմանները և պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ համապատասխանեցնելով ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիայի պահանջներին:

Պեւրական հաշվառման ուղղությամբ.

Հանրապետության տարածքում ՀՀ կառավարության կողմից հաստատված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում հաշվառված են ավելի քան 24250 հուշարձան՝ խմբավորված շուրջ 7304 պահպանական միավորներում: Պահպանական միավորներից 1809-ը հնագույն, հին և միջնադարյան բնակատեղիներ, ամրոցներ ու ամրապաշտպանական կառույցներ են, 2339-ը՝ վանական համալիրներ, եկեղեցիներ և մատուռներ: Դրանցում ներառված են հարյուրավոր դամբարանադաշտեր, պատմական գերեզմանոցներ, տարաբնույթ աշխարհիկ կառույցներ, մեմորիալ և մոնումենտալ արվեստի նմուշներ:

ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ սահմանված կարգի համաձայն ՀՀ մարզերի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկելու համար հաստատման են ներկայացված փորձագիտական հանձնաժողովի կողմից նորահայտ հուշարձանի կարգավիճակ ստացած 611 պատմամշակութային օբյեկտների ցուցակները:

2014-2015 թվականներին կազմվել և շահագրգիռ կազմակերպությունների եզրակացության հիման վրա նախարարության փորձագիտական հանձնաժողովի նիստում քննարկվել է նորահայտ 295 օբյեկտի ցուցակ, որից 166-ին տրվել է նորահայտ հուշարձանի կարգավիճակ, 2012-2013 թվականների 112-ի համեմատ:

2014-2015 թվականներին պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 10 հուշարձանի կադաստրային փաստաթղթերի կազմման աշխատանքներ՝ 2012-2013 թվականների նույն քանակի համեմատ:

«Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» ծրագրի

շրջանակներում իրականացվել են արտերկրում գտնվող հայկական ծագում ունեցող հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, վավերագրման, վկայագրման աշխատանքները, ինչի արդյունքում 2014-2015 թվականներին հաշվառվել, ուսումնասիրվել, վավերագրվել ու վկայագրվել է 940 հուշարձան, 2012-2013 թվականների 950-ի համեմատ:

Պահպանության ուղղությամբ.

Մշտական ուշադրության կենտրոնում է հանրապետության պատմական բնակավայրերի և պատմական միջավայրերի պահպանությունը:

Լիազորված մարմնի համաձայնեցմանն են ներկայացվում բնակավայրերի քաղաքաշինական, ծրագրային և տարածական պլանավորման ու պահպանական գոտիների տարածքներում կառուցապատման նախագծային փաստաթղթերը, որոնցից 2014-2015 թվականներին ուսումնասիրվել և եզրակացություն է տրվել՝

- 56 համայնքների գլխավոր հատակագծերի և դրանցում փոփոխություններ կատարելու առաջադրանքներին՝ 2012-2013 թվականների 24-ի համեմատ,
- 7 համայնքների գլխավոր հատակագծերի և 75 համայնքների գլխավոր հատակագծերում փոփոխություններ կատարելու նախագծային փաստաթղթերին՝ 2012-2013 թվականների 44-ի համեմատ,
- ՀՀ համայնքների հողերի օգտագործման 470 ժամանակավոր սխեմաներում հողերի կատեգորիաների փոփոխություններին՝ 2012-2013 թվականների 249-ի համեմատ:

Շարունակվում են հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի կազմման աշխատանքները: Նոր ձևաչափով կազմվել և թողարկվել են ավելի քան 3346 պահպանական գոտիներ, որոնցից հաստատվել է 2232-ը:

Մինչ օրս հուշարձանների սեփականատերերի, ինչպես նաև հողօգտագործողների կողմից օրենքով պահանջվող պարտավորագրեր են տվել մոտավորապես 190 իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Ուսումնասիրման ուղղությամբ.

Ելնելով վերականգնման կարիք ունեցող հուշարձանների մեծ քանակից՝ առաջնահերթ վերականգնվող հուշարձանների ճիշտ ընտրության համար 2009 թվականից մեկնարկել է *առավել վտանգված հուշարձանների տեխնիկական վիճակի դիտանցման ծրագիրը*, որի արդյունքում 2009-2010 թվականներին կազմվել է 26-ական, 2011 թվականին՝ 13, 2012-2015 թվականներին՝ 25-ական հուշարձանի փաթեթ:

2014-2015 թվականներին միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կողմից քննարկվել և հետախուզման ու պեղման աշխատանքների իրականացման դրական եզրակացություն է ստացել 103 հայտ՝ 2012-2013 թվականների 119-ի համեմատ: Դրանցից պեղումներ են իրականացվել հրատապ ուսումնասիրման կարիք ունեցող համապատասխանաբար, 5 և 4 հու-

շարձաններում, ընդ որում, 2014 թվականին պեղված հուշարձաններից 5-ում, իսկ 2015 թվականին՝ 3-ում կատարված աշխատանքներն արդեն իրականացվել են որպես վերականգնման համար պարտադիր նախնական փուլ:

Հաշվի առնելով վթարային վիճակում գտնվող և հրատապ միջամտության կարիք ունեցող հուշարձանների մեծ քանակը՝ միաժամանակ առաջնահերթության կարգով որոշների միջամտման անհրաժեշտությունը /համաձայն դիտանցման տվյալների/, նախատեսվել է ընտրվածները ենթարկել գիտական ուսումնասիրության, որը պետք է նախորդի նախագծմանը և հիմք ծառայի դրա համար:

Վերականգնման ուղղությամբ.

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային փաստաթղթերի կազմումը նախատեսում է կատարել հուշարձանի ու դրա տարածքի վավերագրման (տեղագրական հանույթ, չափագրություն, լուսանկարահանում) և ուսումնասիրման (մատենագրական, արխիվային, գիտահետազոտական աղբյուրներից նյութերի հավաքում, հնագիտական, երկրաբանական, նյութագիտական հետազոտություններ) աշխատանքներ:

2014-2015 թվականներին նախարարության գիտամեթոդական խորհրդի 19 նիստում քննարկվել է հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման (այդ թվում՝ փոփոխման) 81 նախագիծ, որոնցից 37-ը համաձայնեցվել, իսկ 24-ը՝ վերադարձվել, 2012-2013 թվականների համապատասխանաբար՝ 69-ի, 40-ի և 16-ի համեմատ:

Միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառված *հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման ընտրությունը* պայմանավորված է հետևյալ մոտեցումներով՝

- դիտանցման արդյունքում հրատապ վերականգնման անհրաժեշտությամբ՝ հուշարձանների վերականգնում,
- մարզերում համաչափության սկզբունքի պահպանություն,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկվածություն,
- պետություն-մասնավոր հատվածի համագործակցություն,
- զբոսաշրջությանը խթանող ծրագրի իրականացման անհրաժեշտություն:

2005-2015 թվականներին վերականգնման աշխատանքներ են իրականացվել շուրջ 67 հուշարձաններում, այդ թվում՝ վերականգնվել և ավարտին է հասցվել 26 հուշարձան: 2014-2015 թվականին «*Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում» ծրագրով* շարունակվել են նախորդ տարիներին սկսած և մեկնարկել է նոր հուշարձանների վերականգնման՝ 43, գիտանախագծային փաստաթղթերի կազմման՝ 19, վավերագրման և ուսումնասիրման (պեղման)՝ 17 աշխատանքներ, 2012-2013 թվականների համապատասխանաբար՝ 30-ի, 10-ի և 8-ի համեմատ: Հուշարձանների վերականգնման աշխատանքներում ընդգրկվել են նաև աշխարհիկ կառույցներ՝ բերդեր, ամրոցներ, կամուրջներ, կառուցվում են հուշարձաններին մոտեցման

ճանապարհներ:

Միջոցներ են ձեռնարկվել հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմամշակութային հուշարձանների վերականգնման և պահպանման ուղղությամբ: 2013 թվականին ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա հանրապետությունում ազգային փոքրամասնություններին պատկանող 14 եկեղեցիներից 3-ին տրվել է համաձայնություն՝ 2014-2015 թվականներին եկեղեցական համայնքի միջոցներով վերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար:

Պետություն-մասնավոր համագործակցությամբ իրականացվել են 8 պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրման, ամրակայման, նորոգման և վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման դրանց իրականացման աշխատանքներ: 2009-2015 թվականներին նույն համագործակցությամբ իրականացվել են 19 (մոնումենտալ արվեստի հուշարձաններ) որմնանկարների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներ:

Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մշակվել է նախագծային և վերականգնողական աշխատանքների հուշագրի օրինակելի ձևը, ինչպես նաև կազմվել են 5 հուշարձանների նախագծման և վերականգնման համատեղ կատարվելիք աշխատանքների հուշագրերը:

Վերոհիշյալ գործընթացն անկասկած հնարավորություն կընձեռի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ուսումնասիրությունների և նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությամբ նորովի վերաիմաստավորել հայոց պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանմանը նպատակաուղղված վերականգնողական գործընթացները, ընդլայնել այդ նպատակով իրականացվող ծրագրերի շահառուների շրջանակը, բարձրացնել հասարակական, միջազգային կազմակերպությունների, անհատ բարերարների, համայնքի բնակչության ներգրավվածության մասնակցության աստիճանը: Այն կարևոր խթան կարող է լինել նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության, վերականգնման, նպատակային օգտագործման, հանրահռչակման, զբոսաշրջությանը նվիրված հեռանկարային ծրագրերի մշակման ու դրանց իրականացման աշխատանքներին:

Օգտագործման և հանրահռչակման ուղղությամբ.

ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության արդյունքում այսօր արդեն 192 միջնադարյան եկեղեցիներ օգտագործման են վերադարձվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, իսկ ՀՀ տարածքում գտնվող օտարման ենթակա հանրապետական և տեղական նշանակության տարբեր բնույթի բազմաթիվ հուշարձաններ տրված են համայնքներին, ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սեփականության կամ օգտագործման իրավունքով:

Հայկական հուշարձանների համահավաք տեղեկատվական շտեմարանի հիմնական աշխատանքներն ավարտված են, մուտքագրվել են 24250 գիտական քարտերի տվյալներ: Շտեմարանը գործում է www.armmonuments.am էլեկտրոնային հասցեով, որտեղ տեղադրված է պատմամշակութային հուշարձանների վերաբերյալ ամբողջական տեղեկույթը, ինչն արագ իրազեկման հնարավորություն է ապահովում և պարբերաբար թարմացվում է:

Յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հրատարակվում է «Հուշարձան» տարեգիրքը:

Հուշարձանների պահպանության և օգտագործման ոլորտին 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 381.4 և 449.0 մլն դրամ, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման համար՝ 232.0 և 275.9 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվել է հատկացնել 473.5 մլն դրամ, այդ թվում՝ հուշարձանների վերականգնման համար՝ 300 մլն դրամ:

<u>Ոչ նյութական մշակութային ժառանգություն</u>

Ոչ նյութական մշակութային ժառանգությունը ազգի պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված ավանդույթների, գիտելիքների և հմտությունների ամբողջությունն է, որի պահպանությունն ազգային դիմագծի, ինքնության, պետական մշակութային քաղաքականության հիմնական ուղղություններից է:

Ոլորտի համար նախատեսված հատկացումներն ուղղվում են ոչ նյութական (հոգևոր) մշակութային ժառանգության *պահպանությանը* (ուսումնասիրում, ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների, մշակութային տարածքների ցանկերի համալրում, անտիպ նյութերի տպագրում), *պաշտպանությանը* (ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացում, կրողներից սերունդներին փոխանցման համար նպաստավոր պայմանների ստեղծում), *հանրահռչակմանը* (ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկերի համալրում, ցանկերում ընդգրկված հայկական տարրերի հանրահռչակում, գիտաճանաչողական ֆիլմերի, հեռուստառադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում, կայքերի ստեղծում, փառատոների, համերգների կազմակերպում, միջազգային ասպարեզում ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի համագործակցության ընդլայնում):

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտի իրավական դաշտը կարգավորվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայով և «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքով:

2014-2015 թվականներին, ըստ ուղղությունների, իրականացվել են՝

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ.

- ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության և մշակութային տարածքների պետական ցանկերի համալրման նպատակով իրականացվել են ուսումնասիրություններ ոչ նյութական

մշակութային ժառանգության կրողների շրջանում, ինչի արդյունքում պատրաստվել է շուրջ 30 տարրերից բաղկացած նախնական ցուցակ:

- Ուսումնասիրությունների արդյունքում հրատարակվել են Վ. Պետոյանի «Սասնա ազգագրություն» աշխատությունը (անձնական արխիվի ուսումնասիրման արդյունքում վերախմբագրվել և անտպ նյութերով լրամաշակվել է նախկին հրատարակությունը), Արմեն Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը», Ռ. Դավոյանի «Մարդկության գոյաբանության համակարգը» (ժողովրդական բանահյուսության հենքի վրա իրականացված մարդկության և ազգային գոյաբանության հիմնախնդիրների ուսումնասիրություն) գրքերը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության ուղղությամբ.

- Ազգային կատարողական արվեստի կենսունակության ակտիվացման նպատակով ՀՀ Գեղարքունիքի մարզում «Մարաթուկ» մշակութային կենտրոնի կողմից իրականացվել է «Վերադարձ դեպի արմատներ» ավանդական պարերի անվճար ուսուցման ծրագիրը, որի արդյունքում 3 ամսվա ընթացքում մոտ 100 աշակերտ սովորել է ազգային ավանդական պարեր:

Ոչ նյութական մշակութային ժառանգության հանրահռչակման ուղղությամբ.

- Ազգագրական համույթների գործունեության խրախուսման, ազգային կատարողական արվեստի տարածման նպատակով իրականացվել է ՀՀ մարզերում Հայկական ավանդական նվագարանների համույթի հյուրախաղային ծրագիրը:

- Հայ երգի տարածման միջոցով ազգային երգարվեստը պահպանելու և սերունդներին փոխանցելու նպատակով իրականացվել է երգահան Մուրադ Մշեցու հեղինակային ստեղծագործություններին նվիրված համերգը:

- Ազգագրական համույթների խրախուսման, ազգային կատարողական արվեստը հավուր պատշաճի ներկայացման նպատակով նորացվել են «Վան» ազգագրական, «Կարին» ավանդական երգի-պարի («Հայոց երգի Հայրիկը») համույթների բեմական տարազները, նկարահանվել են «Օղու թորման գաղտնիքը» և «Թառ» հեռուստաֆիլմերը:

Արդեն ավանդական են դարձել ժողովրդական բանահյուսության և հայոց լեզվի բարբառների, խոսվածքների, ազգային կենսապահովման մշակույթի, ավանդական տոների ու ծեսերի, ազգային կատարողական արվեստի կիրառման խրախուսմանը նվիրված՝

- «Երկնքից երեք խնձոր ընկավ...» հեքիաթասացության և բարբառի մրցույթ-փառատոնը, որն ընդգրկում է նաև հանրապետության ազգային փոքրամասնություններին և սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչներին,

- «Հայաստանը խաղաղության խաչմերուկում» ֆոլկլորային փառատոնը,

- «Էրգրի համի հիշողությունը» հայկական ուտեստի փառատոները,

- «Վարդավառ» միջազգային երիտասարդական փառատոնը Գառնի պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում, որի նպատակը Վարդավառի տոնի վերականգնումն է,

երիտասարդության շրջանում ազգային սովորույթների պահպանումը և դրանց ներկայացումն օտարերկրյա զբոսաշրջիկներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկված տարրերի պահպանության և հանրահռչակման ուղղությամբ.

- «Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները» տարրի առնչությամբ իրականացվել են «Էպոսյան օրեր» փառատոնը, «Կաթնաղբյուր» մանկապատանեկան ստեղծագործական հավաք-ճամբարը, որի շրջանակում կազմակերպված «Ես եմ Սասնա ծուռը» թեմայով տարբեր ստեղծագործական ժանրեր ընդգրկող հանրապետական մրցույթին մասնակցել է 12-14 տարեկան մոտավորապես 200 երեխա:
- «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսևորումները» տարրի ուղղությամբ՝ իրականացվել են «Լավաշի և ազգային ուտեստի փառատոնը», որի մասնակցել է Արագածոտնի մարզի շուրջ 25 համայնք, ինչպես նաև «Հացի փառատոնը» Գյումրիում,
- «Խաչքարի արվեստ. խորհուրդն ու խաչքարագործությունը» տարրի ուղղությամբ ստեղծվել է «Խաչքարագործության դպրոցը», որով ոչ ֆորմալ կրթական ծրագրի միջոցով կազմակերպվում է երիտասարդների համար խաչքարագործության գիտելիքների և հմտությունների ուսուցում:

ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակման ուղղությամբ.

- Վիեննայում «Գորգի և տեքստիլի միջազգային գիտաժողովի» շրջանակներում կազմակերպվել է հայկական արձանագրությամբ գորգերի ցուցահանդեսը:
- Ապահովվել է «Ակունք» ազգագրական համույթի մասնակցությունը Սանկտ Պետերբուրգի «Կոնսերվատորիայի միջազգային շաբաթ» փառատոնին:
- Հայ ազգագրական և ինագույն երաժշտական արվեստի ներկայացման, տարածման և հանրահռչակման նպատակով պատրաստվել և ձեռք են բերվել ազգային նվագարաններ (2 քամանչա, 2 քանոն, 3 դուդուկ, 3 բլուլ), որոնք ընդգրկվել են արտերկրի հեղինակավոր թանգարանների (Տոկիոյի Մին-Օն երաժշտական և Մոսկվայի Մ. Գլինկայի անվան թանգարանների հավաքածուներ) մշտական ցուցադրություններում:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտին 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 43.6 մլն դրամ և 39.9 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 56.1 մլն դրամ:

- **Ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ) զարգացում, մշակութային արտադրանքի տարածում, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտում և ստեղծագործական գործընթացների խթանում**

Ժամանակակից արվեստի ոլորտի զարգացման քաղաքականության առաջնահերթություններին համապատասխան պետական հատկացումներն ուղղվում են մշակութային արտադրանքի ստեղծմանը, ձեռքբերմանը և պատշաճ մատուցմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը, միջմարզային համագործակցության զարգացմանը, մշակութային ազգային նկարագրով անհատների և երևույթների արժեքավորմանը և հանրայնացմանը, միջազգային ասպարեզում արվեստի ներկայացմանը:

Վերոնշյալ ուղղություններով 2014-2015 թվականներին ժամանակակից արվեստի տարբեր ոլորտներով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

<u>թատերարվեստի</u> ոլորտում *ստեղծագործական պատվերների* միջոցով ապահովվել է հայ և համաշխարհային դասական ու ժամանակակից դրամատուրգների պիեսների բեմադրությունների, ինչպես նաև երիտասարդ ռեժիսորների մասնագիտական կայացման, ստեղծագործական նոր ծրագրերի իրականացման գործընթացը:

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության թատրոններում 2014-2015 թվականներին բեմադրվել է համապատասխանաբար 53 և 48 նոր ներկայացում՝ 2012-2013 թվականների 47-ի և 42-ի համեմատ: Ստեղծագործական պատվերի շրջանակներում 2014 թվականին իրականացվել է 17 նոր ներկայացում և նախագիծ՝ 2015 թվականի 19-ի համեմատ, ինչը համարժեք է 2012-2013 թվականների ցուցանիշներին: Թատերական նախագծերի աջակցությունն իրականացվել է՝ նկատի ունենալով ոլորտի ստեղծագործական զարգացման համամասնությունը և ընդգրկվածությունը *(երիտասարդական, հոբելյանական, հայ դասական և ժամանակակից դրամատուրգիա, մարզային թատրոններ):*

Վերջին երկու տարիներին առավել նշանակալից են եղել ծավալուն ներկայացումների բեմադրությունները, մասնավորապես, Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերետը, Լ. Շանթի «Շղթայվածը», Վ. Շեքսպիրի «Համլետ» դրամաները և «Այծծես» մնջախաղային ներկայացումը, ինչպես նաև Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված նոր բեմադրությունները՝ Պ. Զեյթունցյանի «Փարիզյան դատավճիռ», Կ.Խոդիկյանի «Մեկ ժամ հիշողություն», Մ.Արենի «Այնտեղ, ուր ծաղկում են վայրի վարդեր» ներկայացումները: Հայ ժամանակակից դրամատուրգների պիեսների հիման վրա իրականացվել են նաև Ա. Այվազյանի և Գ. Երիցյանի «Ուշ լինի, նուշ լինի» դասական-օպերետի, Ռ.Սևակի, Դ.Վարուժանի, Սիամանթոյի բանաստեղծությունների հիման վրա ստեղծված «Ինչու», «Դարի արշալույսն ու դարի մայրամուտը» գրական երաժշտական կոմպոզիցիայի, Հ. Քելեմյանի «Հետաքննություն» ներկայացման բեմադրությունները:

Ժամանակակից արվեստի ոլորտում *առանցքային դերակատարություն* ունի *Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը*: 2014 թվականին թատրոնում մեկնարկել է բարեփոխումների գործընթացը, որն իր մեջ ներառում էր թատրոնի կառավարման, ստեղծագործական, իրավական, ֆինանսական, ինժէներատեխ-

նիկական և սոցիալական համալիր գործողություններ: Բարեփոխումների շրջանակներում ՀՀ մշակույթի նախարարի հրամանով հաստատվել է մշակույթի նախարարության ենթակայության կազմակերպությունների ստեղծագործական անձնակազմի ատեստավորման կազմակերպման օրինակելի կարգը: Իրականացվել են թատրոնի ստեղծագործական անձնակազմի մասնագիտական որակավորման քննությունները: 2015 թվականին ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից ավարտվել է թատրոնի տեխնիկական վերազինման և արդիականացման գործընթացը:

2015 թվականին շարունակվել է 2014 թվականին մեկնարկած նոտաների թվայնացման ծրագիրը:

Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում 2014-2015 թվականներին հանդիսատեսի թիվը կազմել է 19687 և 42766՝ 2012-2013 թվականների 9979-ի և 19687-ի համեմատ, կամ 2012 թվականի նկատմամբ հանդիսատեսի թիվը աճել է 32787-ով:

2014-2015 թվականներին իրականացվել է համապատասխանաբար 107 և 100 ներկայացում՝ 2012-2013 թվականների 35 և 57-ի համեմատ, բեմադրվել է նոր 1 և 5 ներկայացում՝ 2012-2013 թվականների 3-ի և 2-ի համեմատ:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում 2014-2015 թվականներին հանդիսատեսի թիվը կազմել է 37259 և 24517՝ 2012-2013 թվականների 22888-ի և 31959-ի համեմատ, կամ 2012 թվականի նկատմամբ հանդիսատեսի թիվը աճել է 1629-ով :

2014-2015 թվականներին իրականացվել է համապատասխանաբար 92 և 59 ներկայացում՝ 2012-2013 թվականների 70-ի և 81-ի համեմատ: 2014 թվականի ցուցանիշների նվազումը պայմանավորված է 2015 թվականին մեկնարկած ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից իրականացված թատրոնի բեմի տեխնիկական վերազինման աշխատանքներով:

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող 14 թատրոններում 2014-2015 թվականներին խաղացած ներկայացումների քանակը կազմել է 1890 և 2088՝ 2012-2013 թվականների, յուրաքանչյուր տարի 1906-ի համեմատ, իսկ հանդիսատեսի թիվը՝ 313171 և 336797՝ 2012-2013 թվականների 308153-ի և 310482-ի համեմատ, կամ 2012 թվականի նկատմամբ հանդիսատեսի թիվը աճել է 28644-ով:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թատրոններում 2014-2015 թվականներին հանդիսատեսի թիվը կազմել է 82596 և 78636՝ 2012-2013 թվականների 79133 և 82693-ի համեմատ, իսկ ներկայացումների քանակը 421 և 406, 2014-2015 թվականներին բեմադրվել է համապատասխանաբար 11 և 13 նոր ներկայացում՝ 2012-2013 թվականների 423 և 460-ի համեմատ:

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնում 2015 թվականին հանդիսատեսի թիվը կազմել է 4124 և 5780՝ 2012-2013 թվականների 4176-ի և 6600-ի համեմատ, իսկ ներկայացումների քանակը 34 և 55՝ 2012-2013 թվականների 40-ի և 38-ի համեմատ, բեմադրվել է 2014-2015 թվականներին՝ 4-ական նոր ներկայացում՝ 2012-2013 թվականների 2-ականի համեմատ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոնում 2014-2015 թվականին հանդիսատեսի թիվը կազմել է 3465 և 2400՝ 2012-2013 թվականների 3080--ի և 2473-ի համեմատ, իսկ ներկայացումների քանակը 18 և 23՝ 2012-2013 թվականների 28-ի և 29-ի համեմատ: 2014-2015 թվականներին բեմադրվել է համապատասխանաբար 3 և 5 նոր ներկայացում՝ 2012-2013 թվականների 2-ականի համեմատ:

Ընդհանուր առմամբ, ցուցանիշների փոփոխությունը պայմանավորված է արտերկրում և ՀՀ մարզերում հյուրախաղային գործունեությամբ, ինչպես նաև տեխնիկական վերազինմամբ, վերանորոգումների և ծավալուն ներկայացումների բեմադրմամբ:

Վերջին երկու տարիներին շարունակվել է նախորդ տարիներից սկսված և արդեն ավանդական դարձած փառատոների իրականացումը, մասնավորապես՝

2014 թվականին իրականացվել են 5 հանրապետական («Թատրոն-Х» թատերական 7-րդ, «Արտ-ֆեստ» երիտասարդական բաց, «Թատերական Լոռի», Երիտասարդ ռեժիսուրայի 9-րդ և «Ներկայի վերականգնումը» դրամատուրգիական հանրապետական ընթերցումները) և 5 միջազգային («Արմմոնո» 12-րդ, «Հայֆեստ» 12-րդ, «Թումանյանական հեքիաթի օր» 9-րդ, Վ. Փափազյանի անվան շեքսպիրյան 11-րդ, «Լեոնիդ Ենգիբարյանի անվան մնջախաղի միջազգային» 4-րդ «Աշունը սրտում» խորագրով) միջազգային թատերական փառատոն և նախագիծ:

2015 թվականին իրականացվել է 4 հանրապետական («Արտավազդ» մրցանակաբաշխություն, «Թատրոն-Х», «Արտ-Ֆեստ» երիտասարդական, «Նռան հատիկ» մանկապատանեկան) և 3 միջազգային («Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային, «Հայ Ֆեստ», «Արմմոնո» մոնոներկայացումներ) փառատոն և նախագիծ:

Միջազգային ասպարեզում հայ թատերարվեստի ձեռքբերումների հանրահռչակման, միջազգային կապերի ամրապնդման ու զարգացման նպատակով 2014 թվականին 17 թատերախումբ, 139 թատերական գործիչ մասնակցել է 12 միջազգային տարբեր փառատոների, սեմինարների, հյուրախաղերի և այլ ծրագրերի՝ շուրջ 12 երկրում: Առավել նշանակալից է եղել Ռումինիայում կայացած շեքսպիրյան միջազգային 9-րդ փառատոնին Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի մասնակցությունը:

2015 թվականին 15 թատերախումբ, 101 թատերական գործիչ մասնակցել է 13 միջազգային փառատոների, հյուրախաղերի և նախագծերի՝ շուրջ 12 երկրներում, որից Ֆրանսիայի Թուլուզ քաղաքում «Բեմական կայծակ» 19-րդ երիտասարդական թատերական միջազգային

փառատոնին «Թմկաբերդի առումը» ներկայացումն արժանացել է գլխավոր մրցանակի՝ «Ամենից ստեղծարար և ինքնատիպ ներկայացում» անվանակարգում: Կազմակերպվել են 4 թատերախմբերի հյուրախաղեր Հայաստանում (Մոսկվայի Ս. Փարաջանովի անվան և Ա. Ջիգարխանյանի անվան դրամատիկ, Լիտվայի Օսկարաս Կորշունովասի և Բրիտանական «Գլոբ» թատրոններ):

Թատերարվեստի ոլորտին պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 3,271.1 և 3,837.7 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 3,877.1 մլն դրամ:

<u>Երաժշտարվեստի</u> ոլորտում ժանրային բոլոր ուղղությունների (սիմֆոնիկ, կամերային, ժողովրդական, երգչախմբային արվեստ) զարգացման, ստեղծագործական խմբերի բնականոն գործունեության ապահովման նպատակով վերջին տարիներին ստեղծվել են նպաստավոր պայմաններ, ինչի շնորհիվ արձանագրվել են շոշափելի հաջողություններ:

Վերջին երկու տարիներին գերակա ուղղություն է համարվել երգչախմբային արվեստի զարգացումը, մասնավորապես.

- առաջին անգամ անցկացվել է փառատոն՝ նվիրված երգչախմբային արվեստի միջազգային օրվան,

- իրականացվել է 30-ից ավելի համերգային ծրագիր՝ Երևանում, ՀՀ մարզերում և Արցախում՝ 1 մրցույթ, 1 փառատոն, որոնց մասնակցել են շուրջ 90 մանկապատանեկան, սիրողական և պրոֆեսիոնալ երգչախմբեր, ինչպես նաև առանձին համերգներ են իրականացվել միջազգային և հանրապետական փառատոների շրջանակներում,

- հայ խմբերգային արվեստը հայաստանյան երգչախմբերի կողմից ներկայացվել է 9 միջազգային հեղինակավոր փառատոներում,

- ստեղծագործական ծրագրերի շրջանակներում կյանքի են կոչվել 5 համերգային նախագծեր, ձայնագրվել 20, գնվել 6 կոմպոզիտորի խմբերգեր, տպագրվել և հանրապետության ու Արցախի մանկապատանեկան երգչախմբերին է նվիրվել Կոմիտասի մանկական խմբերգերի ընտրանին,

- առաջին անգամ անցկացվել է կոմպոզիտորին նվիրված միջազգային փառատոն («Կոմիտասյան օրեր»), ինչպես նաև Կոմիտասի թանգարան-ինստիտուտի նախաձեռնությամբ «Կոմիտաս» փառատոնը, որը նշանակալի իրադարձություն էր հայաստանյան մշակութային կյանքում:

Ստեղծագործական պատվերների շրջանակներում իրականացվել են 30 համերգային նախագիծ և 39 նոր համերգային ծրագրեր, այդ թվում.

-2014 թվականին՝ Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» օպերան, «Սայաթ-Նովա» երաժշտական բեմադրությունը, Ջ.Վերդիի «Տրավիատա», Վ.Մոցարտի «Կախարդական սրինգ» և Ջ.Պուչինիի «Տոսկա» օպերաների համերգային կատարումները և բեմադրությունները:

-2015 թվականին՝ Վ. Բելլինիի «Նորմա» օպերայի վերականգնման նախապատրաստական աշխատանքները, Ժ. Բիզեի «Կարմեն» օպերայի պրեմիերան, Հայոց ցեղասպանության և Մուսա-

լեռան 100-րդ տարելիցներին, Հայրենական մեծ պատերազմի 70-ամյակին նվիրված տարբեր ժանրային ուղղություններով համերգային ծրագրեր:

2014-2015 թվականներին կայացել են նաև համաշխարհային պրեմիերաներ, մասնավորապես, Ռ.Ամիրխանյանի «Կարմիր աֆիշ» բալլադի «Դեռ չասված մի բառ սիրո» օրատորիայի կատարումները:

Վերջին երկու տարիներին պետական աջակցությամբ միջազգային նախագծերին մասնակցություն են ունեցել 66 երաժիշտ-կատարողներ (2014 թվականին՝ 35, 2015 թվականին՝ 31), ինչպես նաև 37 կոլեկտիվ (2014 թվականին՝ 21, 2015 թվականին՝ 16) մասնակցել է 101 միջազգային նախագծերի (2014 թվականին՝ 58, 2015 թվականին՝ 43) շուրջ 33 երկրում:

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող համերգային կազմակերպություններում 2015 թվականին իրականացվել է 297 համերգ՝ 90569 հանդիսատեսով (2014 թվականին՝ 344 համերգ, 97959 հանդիսատես), 2012-2013 թվականների 400 և 367 համերգի ու 120254 և 114084 հանդիսատեսի համեմատ:

ՀՀ Շիրակի մարզում գործող համերգային կազմակերպություններում 2015 թվականին իրականացվել է 18 համերգ 11690 հանդիսատեսով (2014 թվականին՝ 40 համերգ 19948 հանդիսատեսով)՝ 2012-2013 թվականների 34 և 36 համերգի ու 18404 և 21848 հանդիսատեսի համեմատ:

Գյումրու պետական սիմֆոնիկ նվագախմբի համար 2015 թվականին ձեռք են բերվել երաժշտական գործիքներ, իսկ «Արամ Խաչատրյան» համերգասրահը վերազինվել է ժամանակակից լուսաձայնային սարքավորումներով:

Երաժշտարվեստի ոլորտին պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 1,562.4 և 1,734.6 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 1,766.9 մլն դրամ:

<u>Կինոարվեստի</u> ոլորտում պետական քաղաքականությունն ուղղվել է կինոարտադրանքի ստեղծմանը, Հայաստանում և միջազգային ասպարեզում հայրենական կինոարտադրության ներկայացմանը, հայկական կինոժառանգության թվայնացմանը:

Կինոարտադրության ծրագրերով 2014-2015 թվականներին նկարահանվել է համապատասխանաբար 19 և 15 խաղարկային ֆիլմ (որից՝ 4-ը և 8-ը շարունակվող), այդ թվում՝ 4-ական մուլտիպլիկացիոն, 14 և 10 վավերագրական ֆիլմեր (որից 1-ը և 3-ը՝ շարունակվող), թվայնացվել է 2 և 14 վավերագրական, վերականգնվել է 2-ական խաղարկային ֆիլմ, 2012-2013 թվականների 24 և 26 խաղարկային կինոնկարի (որից՝ 5-ը և 4-ը շարունակվող), 5-ական մուլտիպլիկացիոն, 13 և 15 վավերագրական (որից տարեկան 2-ը՝ շարունակվող) ֆիլմերի համեմատ, թվայնացվել է 5 և 6 վավերագրական, վերականգնվել է 2-ական խաղարկային ֆիլմի համեմատ:

Ոլորտում գործում է 2 պետական կինոկազմակերպություն, որոնք համագործակցում են շուրջ 14 մասնավոր հայաստանյան և 5 օտարերկրյա կինոկազմակերպությունների հետ և իրականացվում են 11 համատեղ կինոնախագծեր: Համագործակցություն է իրականացվում նաև ոլորտի շուրջ 27 կազմակերպությունների հետ (հիմնադրամներ, միություններ, մշակութային ՀԿ-ներ, ՍՊԸ-ներ, ՓԲԸ-ներ):

Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում 2013 թվականից պետական աջակցություն է ցուցաբերվում «Ռոբերտ Սահակյանցի անվան անիմացիոն արվեստանոց» հասարակական կազմակերպությանը:

Ազգային կինոյի զարգացման հիմնադրամի հետ համատեղ 2014 թվականին իրականացվել է հայ կինեմատոգրաֆիստների ստեղծագործությունների ամենամյա «Հայակ» ազգային կինոյի երրորդ մրցանակաբաշխությունը, որի նպատակն է նպաստել հայկական ազգային կինոմշակույթի զարգացմանն ու տարածմանն աշխարհում, խթանել հայ երիտասարդ և ավագ սերնդի կինեմատոգրաֆիստների գործունեությունը:

2014-2015 թվականներին ապահովվել է հայկական արտադրության ֆիլմերի և անհատ ստեղծագործողների մասնակցությունը 27 միջազգային կինոփառատոների և կինոշուկաների:

Վերջին երկու տարիներին Հայաստանում իրենց գործունեությունն են շարունակել արդեն ավանդական դարձած «Ոսկե ծիրան», «ՌեԱնիմանիա» անիմացիոն, «Ռոլան» մանկապատանեկան, «Նոֆի» ոչ կոմերցիոն ֆիլմերի, «Կին», «Ես եմ» երիտասարդական ֆիլմերի և «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային «Կինոէքսպրես. Հայաստան-Վրաստան» շրջիկ կինոփառատոները:

2009 թվականից Հայաստանը Կաննի միջազգային հեղինակավոր կինոփառատոնի շրջանակներում գործող կինոշուկայում ներկայանում է առանձին տաղավարով, որտեղ կազմակերպվում են արդյունավետ մասնագիտական հանդիպումներ տարբեր երկրների կինոընկերությունների հետ: 2014 թվականին «Կաննի դասականներ» արտամրցութային ծրագրով ցուցադրվեց Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի՝ Մարտին Սկորսեզեի Համաշխարահային կինոյի ֆոնդի կողմից 1,5 տարվա ընթացքում վերականգնված տարբերակը:

Իր գործունեությունն է շարունակել 2012 թվականին ստեղծված «Հայ արտ սինեմա» հիմնադրամը, որի հիմնական նպատակն է աջակցել ժամանակակից հայ կինեմատոգրաֆիայի զարգացմանը, կրթական համակարգում ստեղծել ռեժիսուրայի բարձրագույն դասընթացներ, նպաստել մասնագիտական կայուն գիտելիքների և փորձի ձեռքբերմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում ժամանակակից հայ կինոյի հանրահռչակման և մրցունակության ապահովման նպատակով: 2014 թվականին ցուցադրվել են «Կինոռեժիսուրայի բարձրագույն դպրոցի» 10 մասնակից-ուսանողների հեղինակային տասը ֆիլմի դիպլոմային աշխատանքները:

2012 թվականից սկսած Հայաստանի ազգային կինոկենտրոնն անդամակցել է Եվրոպական տեսաձայնային դիտարանին (օբսերվատորիային): 2014-2015 թվականներին շարունակվել է մասնակցությունն օբսերվատորիայի աշխատանքներին և տեսաձայնային արվեստի մասնագիտացված խնդիրների վերաբերյալ համաժողովներին:

2015 թվականին հայ-ռուսական մշակութային համագործակցության և Հայաստանում Ռուսաստանի մշակույթի օրերի շրջանակում կազմակերպվեց «Դովլաթովի օրեր» ծրագիրը:

Կինոարվեստի ոլորտին ՀՀ պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 729.3 և 756.3 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 740.1 մլն դրամ:

<u>Կերպարվեստի</u> ոլորտում կարևորվում են ժամանակակից հայ կերպարվեստի զարգացումը և հայ նկարիչների ստեղծագործությունների հանրահռչակումը:

Վերջին երկու տարիներին աջակցություն է ցուցաբերվել.

- հայ ժամանակակից արվեստի ներկայացմանը հեղինակավոր միջազգային Expo-ներին և արվեստի բիենալեներին, այդ թվում՝ Վենետիկի 56-րդ բիենալեում, որին մասնակցում է 53 երկիր, Հայաստանի տաղավարն արժանացել է «Ոսկե առյուծ» գլխավոր մրցանակին, Հայաստանի մասնակցությամբ Լեհաստանի Սոպոտ քաղաքի պետական պատկերասրահում կազմակերպված «Հայաստանի ժամանակակից արվեստը» խորագրով ցուցահանդեսին, Պորտուգալիայի Գիմարայնշ քաղաքում կազմակերպված ժամանակակից տեքստիլ արվեստի միջազգային բիենալեին (Contexstile 2014-Contemporary Texstile Art Biennial),
- Հայաստանի նկարիչների միության ցուցասրահներում կազմակերպված «Նոյի երկրորդ վերադարձը» խորագրով «Արևավիշապ» գրաֆիկական հումորի միջազգային փառատոնին, ՀՀ նկարիչների միության անդամների 20 ցուցահանդեսին, գեղանկարիչներ Արարատ Սարգսյանի և Սարգիս Համալբաշյանի կողմից կազմակերպված «Քայլ ձևափոխություն և ձևաստեղծման միջև» խորագրով ցուցահանդեսին, Վահագնի թաղամասում երիտասարդ նկարիչ Արման Մանուկյանի «Յոթ մեղքեր» խորագրով ցուցահանդես-ներկայացմանը, Գյումրու «Սրբացյալ ընտանիք» քանդակագործության միջազգային գիտաժողովին:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ.

- Գերմանիայի Հերֆորդ քաղաքում՝ «Արմին Տ.Վեգների և Սյորեն Կիերկեգորի տեքստի միջմշակութային և միջդիսցիպլինար իմպրովիզացիա» նախագծի շրջանակներում կազմակերպված ցուցահանդեսին,
- «Հայկական ներկապնակ» ծրագրի «Վերածնունդ» խորագիրը կրող նկարչական փառատոնի շրջանակներում Հայոց 110 աշխատանքի ցուցադրությանը,
- ՀՀ Արագածոտնի մարզի Ուշի գյուղի վերականգնված մշակույթի տանը նկարիչ Ա.Հովսեփյանի հեղինակած 15 աշխատանքի նվիրաբերմանը:

Ստեղծագործությունների ձեռքբերման ուղղությամբ գնվել է քանդակագործներ Վան Խաչատուրի «Նախնիների աշխարհ» շարքից 2 ստեղծագործություն, Ֆ.Առաքելյանի հավաքածուից «Զրույց» խորագրով Գյումրու ֆոլկլորային քանդակը, Ա.Արամյանի «Երվանդ Քոչար» քանդակի բրոնզե տարբերակը, գեղանկարիչներ Գ.Աբրահամյանի «Ձմեռը Եղեգնաձորում» գեղանկարը, Տ.Ասատրյանի «Պիերո» ստեղծագործությունը, ՀՀ վաստակավոր նկարիչ Ա.Բաղդասարյանի «Իմ հիշողությունները» կտավը:

Հայաստանում իրականացվել է կերպարվեստի 12 ցուցահանդես, մասնավորապես, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ «Հիշողության պատուհաններ» և «Պատասխան՝ 100 տարի անց. անցյալը ներկայում», Հ. Թումանյանի թանգարանում՝ «Ամենյան Հայոց Որբերի Հայրիկը», Հայաստանի ազգային պատկերասրահում՝ «Խոստովանանք արվեստի լեզվով» և «Հովհաննես Զարդարյան. Գաղթ», Կոմիտասի թանգարան-ինստիտուտում՝ «Ծաղկած ծիրանի», «Գաֆէսճեան» արվեստի կենտրոնում՝ Ս.Պողոսյանի «Մեծ մորս աչքերի լռությունը» և Տ.Ձիթողցյանի «Հայելիներ», «Սարգիս Մուրադյան» ցուցասրահում Ն.Արմենակյանի «Վերապրածներ», Թեքեյան կենտրոնում՝ «Հիշողություն», Հայաստանի նկարիչների միությունում՝ «Լեռն իմ Մասիս» և «Հիշում ենք և պահանջում» խորագրերով ցուցահանդեսները:

Կերպարվեստի ոլորտին պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 60.8 և 30.8 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 60.2 մլն դրամ:

<u>Պարարվեստի</u> ոլորտում վերջին երկու տարիներին ֆինանսական միջոցները հիմնականում նպատակաուղղվել են ոլորտի համաչափ զարգացմանը, որի արդյունքում 3 պետական համույթ իրականացրել են ավելի քան 20 նոր պարային բեմադրություն:

2015 թվականին ՀՀ մշակույթի նախարարության համակարգի համույթներն իրականացրել են 74 համերգ 24615 հանդիսատեսով, 2014 թվականի՝ 77 համերգի, 42212 հանդիսատեսի համեմատ, 2012-2013 թվականների 32 և 74 համերգի ու 39069 և 44249 հանդիսատեսի համեմատ:

2014-2015 թվականներին պետական և համայնքային համույթները ձեռք են բերել նոր ազգագրական տարազներ (2014թ.՝ ՀՀ Արարատի մարզի Արգավանդ համույթի «Վարք Հայոց», ՀՀ Արագածոտնի մարզի Սասուն համայնքի «Սասուն» և Ուջան համայնքի «Կարոտ» համույթների ավանդական երգի-պարի խմբեր, 2015թ.՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արագած համայնքի «Արագած», «Վան», «Ակունք» ազգագրական, «Կարին» ավանդական երգի-պարի համույթներ):

Բրիտանական խորհրդի Հայաստանյան մասնաճյուղ «Պար առանց սահմանների» նախագծի շրջանակներում պետական աջակցությամբ իրականացվել է «Մի լքիր ինձ» պարային ներկայացումը:

Աջակցություն է ցուցաբերվել «Գութան» ազգագրական երգի-պարի փառատոնի կազմակերպմանը, որին մասնակցել է 11 ազգային երգի-պարի համույթ:

Միջազգային նախագծերին համույթների մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև ազգային պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը նպաստելու նպատակով ժողովրդական և ավանդական երգի-պարի համույթներին ցուցաբերվել է աջակցություն, մասնավորապես.

2014 թվականին՝ Պրահայում կայացած միջազգային 14-րդ ֆոլկլորային փառատոնին «Մարգարիտներ» ազգագրական երգի-պարի համույթի (դիպլոմներ, ոսկե մեդալ), Լիոնում կայացած «Պարի Ոդիսևսը» միջազգային պարային մրցույթին «Վերածնունդ» մանկապատանեկան համույթի պարուսույց Մ. Հովհաննիսյանի (դիպլոմներ), Աթենքում պարի համաշխարհային 37-րդ կոնգրեսին որպես կոնգրեսի անդամ «Բերդ» պարային անսամբլի, եվրոպական մի շարք երկրներում կայացած պարի միջազգային փառատոներին «Գեղարդ» ժողովրդական պարի համույթի, «Հայաստանի մշակութային օրերն Իսրայելում» միջպետական միջոցառումներին և Ֆրանսիայի քաղաքներում Հայաստանի պարարվեստի «Բարեկամություն» պետական համույթի, Քիշնևում խուլերի գեղարվեստական ինքնագործունեության միջազգային մրցույթ-փառատոնին Խուլերի մշակույթի պալատի պարի խմբի, Պարի համաշխարհային խորհրդի (World Dance Council) անդամ պետությունների համաժողովին և Անգլիայի բլեքփուլյան պարի փառատոնին հայաստանյան պատվիրակության մասնակցություններին, Դանիայում և Նիդերլանդներում իրականացված Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթի հյուրախաղերի կազմակերպմանը:

2015 թվականին՝ «Հայաստանի մշակութային օրերը Չինաստանում» միջպետական միջոցառումներին «Բերդ» պարային անսամբլի, ՌԴ-ի Ռոստովյան շրջանում կազմակերպված 4-րդ ազգային ստեղծագործական «Содружество» միջազգային փառատոնին «Նինահար» ժողովրդական երգի և պարի համույթի, Գրոզնի քաղաքում կայացած Մախմուդ Էսամբաևի անվան սոլո պարային 7-րդ միջազգային մրցույթ-փառատոնին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի չորս արտիստի, Սանկտ Պետերբուրգում «Կոնսերվատորիայի միջազգային շաբաթ» փառատոնին «Ակունք» ազգագրական համույթի, ՌԴ Վորոնեժ քաղաքում ԱՊՀ մասնակից-երկրների պարարվեստի պրոֆեսիոնալ ուսումնարանների և քոլեջների «ԱՆՏՌԵ» փառատոնին Երևանի պարարվեստի պետական քոլեջի ուսանողների մասնակցություններին և եվրոպական 5 քաղաքներում Հայաստանի պարի պետական անսամբլի հյուրախաղերի կազմակերպմանը:

«Մշակութային մարզ» ծրագրի շրջանակներում.

2014 թվականին աջակցություն է ցուցաբերվել Արցախում, ՀՀ Արմավիրի, ՀՀ Կոտայքի մարզերում Հայաստանի պարի պետական անսամբլի հյուրախաղերի կազմակերպմանը, ՀՀ

Գեղարքունիքի մարզում «Մարաթուկ» մշակութային կենտրոնի կողմից անցկացված «Վերադարձ դեպի արմատներ» ավանդական պարերի անվճար ուսուցման ծրագրին, ՀՀ Արագածոտնի մարզում «Առաջընթաց» երիտասարդական կազմակերպության կողմից անցկացված ազգագրական երգի և պարի համույթների մարզային «Զարթնիր լաո...» փառատոնին:

2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել ՀՀ Շիրակի և ՀՀ Արմավիրի մարզերի զինվորական զորամասերում Հայաստանի պարի պետական անսամբլի հյուրախաղերի և ՀՀ Տավուշի մարզում «Սահմանն իմ հոգում» խորագրով բարեգործական, Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթի համերգների կազմակերպմանը, «Հորովել» երգի-պարի համույթի մենահամերգի իրականացմանը Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում:

Պարարվեստի ոլորտին պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 242.6 և 302.8 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվել է հատկացնել 312.2 մլն դրամ:

Ժամանակակից արվեստի զարգացման ներկա փուլում առաջնահերթ է երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Խնդրի լուծման կարևոր գործիք է *դեբյուտային և երիտասարդական ծրագրերի* իրականացումը, որոնց շարունակականությունը հնարավորություն է տալիս ոլորտը համալրել նոր ստեղծագործական ուժերով, ինչպես նաև ապահովել ոլորտի սահուն սերնդափոխության իրականացումը:

Արվեստի տարբեր բնագավառներում 2014-2015 թվականներին իրականացվել են դեբյուտային և երիտասարդական ծրագրեր, այդ թվում.

Թատերարվեստի գծով՝

2014 թվականին աջակցություն է ցուցաբերվել 27 դեբյուտային («Արտ ֆեստ» երիտասարդական բաց փառատոնի շրջանակներում), 6 երիտասարդական («Արտ ֆեստ» երիտասարդական հանրապետական բաց փառատոն, «Երեք խոզուկներ» մյուզիքլ, «Հավատա քո աստծուն», «Ուժը», «Փղիկ Հորթընը», «Պիերո») և 1 նորարարական («Բռնիր քեզ մեկնած ձեռքը») ծրագրերի:

2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել «Արտ ֆեստ» երիտասարդական հանրապետական բաց փառատոնին, որը մեկնարկեց ուսանողական թատրոն-լաբորատորիայի «Մեկ թագավորի թատրոն» բեմադրության ցուցադրությամբ, երիտասարդ բեմադրիչներ Ռ. Պի-պոյանի («Մեղապարտ կրքեր») ժամանակակից բալետային և Ն. Գրիգորյանի («Ճաշկերույթ բնության գրկում») ներկայացումների բեմադրություններին: Ապահովվել է Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի ուսանողների մասնակցությունը Ֆրանսիայի Թուլուզ քաղաքում կայացած «Բեմական կայծակ» և Մոսկվայի Շչուկինի անվան թատերական ինստիտուտի ռեժիսորական

միջազգային փառատոներին, ինչպես նաև 4 ռեժիսորի և 15 ուսանողի մասնակցությունը միջազգային մրցույթներին, փառատոներին ու ստուգատեսներին, վարպետության դասերին:

Այսպիսով, 2014-2015 թվականներին իրականացվել են 27 դեբյուտային, 1 նորարարական, 6 երիտասարդական նախագծեր՝ 2012-2013 թվականների 16 դեբյուտային, 4 նորարարական, 3 երիտասարդական նախագծերի համեմատ:

Երաժշտարվեստի գծով՝ 2014-2015 թվականներին աջակցություն է ցուցաբերվել համապատասխանաբար 4 և 7 երիտասարդական կոլեկտիվի ու 18 և 12 անհատ կատարողի մասնակցությանը միջազգային նախագծերին, Հայաստանում անցկացվել է 2 և 1 երաժշտական փառատոն ու 3 և 2 մրցույթ: Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթին 2014 թվականին մասնակցել է 26 դաշնակահար 10 երկրից, 2015 թվականին՝ 25 ջութակահար 17 երկրից: Երիտասարդ կոմպոզիտորների «Դեբյուտ» փառատոնի շրջանակներում 2014 թվականին կատարվել է 9 ուսանող-ստեղծագործողների և 17 երիտասարդ կոմպոզիտորների 26 կամերային ստեղծագործություն, իսկ 2015 թվականին՝ 26 կոմպոզիտորի նույնքան ստեղծագործություն:

Այսպիսով, 2014-2015 թվականներին ապահովվել է 11 երիտասարդական կոլեկտիվի, 30 անհատ կատարողի մասնակցությունը միջազգային նախագծերին, իրականացվել է 8 նախագիծ՝ 2012-2013 թվականների 5 երիտասարդական կոլեկտիվի ու 22 անհատ կատարողի, 4 նախագծի համեմատ:

Կինոարվեստի գծով՝ 2014-2015 թվականներին աջակցություն է ցուցաբերվել համապատասխանաբար 12 և 10 դեբյուտային ու 4-ական ուսանողական ֆիլմերի, 14 և 10 երիտասարդ կինոգործիչ մասնակցել է փառատոների և կինոարվեստանոցների՝ 4 և 6 երկրում: 2014 թվականին աջակցություն է ցուցաբերվել «ԵՍ ԵՄ» միջազգային երիտասարդական կինոփառատոնի իրականացմանը, որի շրջանակներում ներկայացվել է երիտասարդ կինոգործիչների ավելի քան 60 աշխատանք (կինոփառատոնն իրականացվում է 2 տարին մեկ): 2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել երիտասարդ արվեստագետների «Մենք ենք, մեր ֆիլմերը» կինոփառատոնի իրականացմանը, որն անցկացվել է երիտասարդական մայրաքաղաք հռչակված Ստեփանավանում:

Այսպիսով, 2014-2015 թվականներին իրականացվել է 22 դեբյուտային, 2 ուսանողական ֆիլմերի արտադրություն, 2 կինոնախագիծ, ապահովվել է 24 երիտասարդ ստեղծագործողի մասնակցություն միջազգային կինոնախագծերի՝ 2012-2013 թվականների 23 դեբյուտային, 5 ուսանողական ֆիլմերի, 17 երիտասարդ ստեղծագործողի համեմատ:

Կերպարվեստի գծով՝ 2014-2015 թվականների հայ-ռուսական միջմշակութային համագործակցության շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել երիտասարդ նկարիչների մասնակցությանը Մոսկվայի նկարչի կենտրոնական տանը կազմակերպված «Սվյազ վրեմենի» խորագրով համամիութենական ցուցահանդեսներին, Գյոթեբուրգ (Շվեդիա) քաղաքում կայացած մշակու-

թային փոխանակման նախագծին (5 նկարիչ), Լեհաստանի Էլբլոնգ քաղաքում կայացած կերպարվեստի բնագավառի միջազգային սիմպոզիումին (7 երիտասարդ արվեստագետ): 2012-2013 թվականներին ապահովվել է հայ երիտասարդ արվեստագետների մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին և նախագծերին, մասնավորապես՝ հայ-ռուսական միջմշակութային համագործակցության շրջանակներում Մոսկվայի նկարչի կենտրոնական տանը կազմակերպվել է երիտասարդ նկարիչների համամիութենական ցուցահանդեսը:

<u>Հոբելյանական ծրագրերի և միջոցառումների շրջանակներում</u> նշվել է մշակույթի, կրթության, քաղաքական-հասարակական գործիչների և իրադարձությունների հարյուրից ավելի հոբելյան: Մշակվել, իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ: 2014-2015 թվականներին անդրադարձ է կատարվել 130 հոբելյանի, որոնք իրականացվել են 250 միջոցառումներով (երեկոներ, համերգներ, ներկայացումներ, փառատոներ, շնորհանդեսներ), 8 և 21 հեռուստահաղորդումով, գրականության տպագրությամբ (5 նոտագիրք, 23 գիրք), ֆիլմարտադրությամբ (4 և 1 վավերագրական ֆիլմ): 2012-2013 թվականներին իրականացվել են 114 հոբելյաններ՝ ընդհանուր առմամբ 236 միջոցառումներով:

Հոբելյանական միջոցառումներին պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 59.8 և 54.0 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել ևս 54.0 մլն դրամ:

- **Մշակութային ծառայությունների ապակենտրոնացում և համաչափության ապահովում**

ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման, մշակութային կյանքի աշխուժացման, միջմարզային մշակութային համագործակցության խթանման, մշակույթի (դեպի մարզերը) ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովման ուղղությամբ 2014-2015 թվականներին իրականացվել են.

- «Մշակութային մարզ» ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ մարզերում կազմակերպվել են թատերական և համերգային կազմակերպությունների հյուրախաղեր, հայկական արտադրության ֆիլմերի ցուցադրություններ ՀՀ սահմանամերձ և հեռավոր մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում, Արցախում, ինչպես նաև մարզերում գործող ստեղծագործական խմբերի ելույթներ Երևանում: Յուրաքանչյուր տարի աջակցություն է ցուցաբերվել պետական, ինքնագործ և ազգագրական համույթների շուրջ երեք տասնյակ հյուրախաղերի և միջոցառումների իրականացմանը.

- «Ճամփորդող ցուցահանդես» ծրագիրը, որն ուղղված է հեռավոր բնակավայրերի բնակչության՝ մշակութային ծառայությունների մատչելիության ապահովմանը: 2014 թվականին Հայաստանի 5 մարզերում կազմակերպվել է 15 ցուցահանդես և 2015 թվականին 6 մարզում կազմակերպվել է 19 ցուցահանդես.

- «Կինոաշուն. ազգային կինոյի ամիս» ծրագիրը, որի շրջանակներում 2014 թվականին ՀՀ 10 մարզերում և թվով 11 զորամասերում մեկ ամիս շարունակ ցուցադրվել են շուրջ 300 հայկական հին ու նոր խաղարկային, վավերագրական, անիմացիոն ֆիլմեր, 2015 թվականին՝ ՀՀ 9 մարզերում և թվով 8 զորամասում՝ շուրջ 300 հայկական հին ու նոր խաղարկային, վավերագրական, անիմացիոն ֆիլմ, ինչպես նաև՝ «Գժուկ» մանկական երգիծական կինոհանդեսի տարբեր տարիների թողարկումները.

- Հեռավոր բնակավայրերի մշակութային սպասարկումն իրականացնելու նպատակով «Շրջիկ գրադարանը» (Բիբլիոբուս) այցելել է ՀՀ Արագածոտնի, Շիրակի, Վայոց ձորի և Սյունիքի մարզեր, որի ընթացքում 2014-2015 թվականներին 6232 և 3775 միավոր գրականություն փոխանցվել է համայնքային գրադարաններին, մի շարք համայնքային գրադարաններ համալրվել են պետական պատվերով հրատարակված գրականությամբ.

- Սակավ շարժունակ անձանց գրադարանային սպասարկումն ապահովելու նպատակով «Ընտանեկան գրադարանավար» ծրագրով սպասարկել են ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզային գրադարանները՝ 2014-2015 թվականներին տրամադրելով 4375 և 9999 միավոր տեղեկույթ.

- Շարունակվել են տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար մարզային գրադարաններում տեղակայված «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի աշխատանքները՝ 2014-2015 թվականներին սպասարկվել է 335 և 162 ընթերցող:

Կարևորելով *ՀՀ մարզերում միջազգային և հանրապետական մրցույթ-փառատոների, փառատոների անցկացումը,* իրականացվել են արդեն ավանդական դարձած.

- Գյումրիում անցկացվող «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնը, որին 2014 թվականին մասնակցեցին 2706 երաժիշտ-կատարողներ Երևանից, ՀՀ մարզերից և 33 երկրներից՝ նախորդ տարվա 2415 երաժիշտ-կատարողների և 30 երկրների համեմատ, իսկ 2015 թվականին՝ 2807 երաժիշտ-կատարող՝ Երևանից, ՀՀ մարզերից և 36 երկրներից.

- «Նռան հատիկ 2015» հանրապետական 15-րդ փառատոնն իրականացվել է «Վերածնունդ» խորագրով: Փառատոնին մասնակցել է 30 թատերախումբ՝ 35 ներկայացմամբ, որոնք դիտել են 10000 երեխա Երևանից, ՀՀ մարզերից, ԼՂՀ-ից: Հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնն իրականացվում է երկու տարին մեկ անգամ.

- «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում» ենթածրագիրը, որը միտված է ՀՀ մարզերում նպատակային մշակութային քաղաքականության իրականացմանը, հաշվետու ստուգատեսների միջոցով հանրապետության քաղաքներում մշակութային կյանքի աշխուժացմանը, խթանմանն ու զարգացմանը: 2014-2015 թվականներին ծրագիրն իրականացվել է ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերում, որին յուրաքանչյուր տարի մասնակցում է շուրջ 5 տասնյակից ավելի ստեղծագործող երեխա.

- Իր գործունեությունն է շարունակել «Դպրոցական ֆիլհարմոնիա» ծրագիրը, որի շրջանակներում 2014-2015 թվականներին կազմակերպվել է համապատասխանաբար 45 և 46 դասհամերգ հանրապետության մանուկների և պատանիների համար, որոնց մասնակցել է շուրջ 12800 և 12900 երեխա:

ՀՀ մարզպետարանների կողմից յուրաքանչյուր տարի մարզերում իրականացվում են շուրջ 2 տասնյակ մշակութային բազմաբնույթ միջոցառումներ («Բերքի տոն», «Վարդավառ», «ՀՀ Անկախության օր», Պոեզիայի մշակութային փառատոն, «Բարբառների երկխոսություն», Ազգային նվագարանների մարզային փառատոներ և այլն):

ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման նպատակով պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 122.9 և 141.9 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 144.9 մլն դրամ:

- **Միջազգային համագործակցության ընդլայնում, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշում և հանրահռչակում**

Միջազգային համագործակցության ոլորտում պետական քաղաքականության ուղղություններն են՝ *հայ մշակույթի ներկայացումը արտերկրում, տեղորոշումն ու հանրահռչակումը, արտերկրի մշակույթների ներկայացումը Հայաստանում, Հայաստանի ինտեգրումը միջազգային մշակութային կազմակերպություններին:*

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է մշակութային երկխոսության, երկկողմ և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, աշխարհում հայ մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործմանը, համաշխարհային մշակույթը Հայաստանի հանրության լայն շերտերի համար մատչելի դարձնելու գործընթացների ապահովմանը, համատեղ և համաֆինանսավորվող ծրագրերի ավելացմանը:

Իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ

2014-2015 թվականներին նպաստավոր իրավական հիմքեր են ստեղծվել երկկողմ, բազմակողմ, տարածաշրջանային և միջազգային կայուն համագործակցության զարգացման և դրա շրջանակների ընդլայնման համար՝ դրանով իսկ նպաստելով պետական մշակութային քաղաքականության արդյունավետ իրականացմանը: Ակտիվ աշխատանքներ են տարվել միջազգային կոնվենցիաներին միանալու, երկկողմ և նեղոլորտային միջազգային պայմանագրեր ստորագրելու ուղղությամբ.

- ստորագրվել է 24 պայմանագիր, որից՝ 15 միջազգային (միջկառավարական՝ 4 համաձայնագիր և 2 ծրագիր, միջգերատեսչական՝ 3 հուշագիր և 6 ծրագիր) և 9 նեղոլորտային (8-ը Հայաստանի և Ռուսաստանի թանգարանների միջև, իսկ 1-ը՝ Հայաստանի ազգային

կինոկենտրոնի և Արգենտինյան կինոռեժիսորների DAC տեսալսողական (աուդիովիզուալ) հեղինակների և ռեժիսորների գլխավոր ասոցիացիայի միջև) պայմանագիր (2012-2013 թվականներին ստորագրվել է 23-ը),

- աշխատանքներ են ընթանում «Հայաստանի պատմության թանգարանի և Իրանի ազգային թանգարանի միջև համագործակցության», «Հայաստանի պատմության թանգարանի և Չինաստանի «Գուգուն» թանգարանի միջև համագործակցության մասին» հուշագրեր, «Հայաստանի ազգային պատկերասրահի և Գրաբարի անվան համառուսաստանյան գեղարվեստական գիտավերականգնողական կենտրոնի միջև համագործակցության մասին» պայմանագիր ստորագրելու և Հայաստանի ազգային պատկերասրահի հենքի վրա նշյալ կենտրոնի մասնաճյուղ բացելու վերաբերյալ:

Փաստաթղթերի ստորագրումը նպաստում է համագործակցության զարգացմանը, հիմքեր նախապատրաստում նոր համատեղ ծրագրերի իրականացման համար:

Երկկողմ համագործակցության ուղղությամբ.

Հետևողականորեն ընդլայնվել է մշակութային համագործակցության աշխարհագրությունը՝ արդեն իսկ ավանդական դարձած ԱՊՀ, Եվրոպայի, Արևելքի երկրների հետ ունեցած համագործակցությանը զուգընթաց առանցքային է դարձել համագործակցության ակտիվացումը Իսպանիայի, Մալթայի, Սերբիայի, Բելգիայի, ինչպես նաև Հարավային Ամերիկայի երկրների (Մեքսիկա, Բրազիլիա, Արգենտինա) հետ: Համագործակցություն է ծավալվելու նաև նոր երկրների՝ Վիետնամի, Մոնղոլիայի, Եթովպիայի, Կոտ դ՛ Իվուարի, Մադագասկարի, Շվեյցարիայի հետ:

2014-2015 թվականներին իրականացվել է համապատասխանաբար 95 և 100 ծրագրային միջոցառում՝ 2013 թվականի 80-ի համեմատ:

2014-2015 թվականներին կազմակերպվել են 24 փոխադարձ մշակույթի օրեր, «Մշակութային սեզոններ», «Բարեկամության օրեր» կամ «Մշակութային տարիներ» (2012-2013 թվականների 20-ի համեմատ), կայացել են պաշտոնական պատվիրակությունների 110 փոխայցելություններ՝ 2012-2013 թվականների 100-ի համեմատ, յուրաքանչյուր տարի կազմակերպվել է 90 հանդիպում՝ 2013 թվականի 80-ի համեմատ:

Երկկողմ համագործակցության առաջնահերթություններից է արտերկրում հայ մշակույթի հետևողական ներկայացումն ու հանրահռչակումը: Այս համատեքստում 2014-2015 թվականներին.

- Իսրայելում, Կորեայում (անց էին կացվում առաջին անգամ), Չինաստանում, Ռուսաստանում անց են կացվել Հայ մշակույթի օրեր.

- Հայաստանյան կոլեկտիվները (Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Հայաստանի երիտասարդական նվագախումբ, Հայաստանի կամերային երգչախումբ, «Հովեր» երգ-

չախումբ, Հայաստանի պարի պետական անսամբլ, Թաթուլ Ալթունյանի անվան երգ ու պարի պետական անսամբլ, Կոմիտասի անվան լարային քառյակ և այլն) հյուրախաղերով հանդես են եկել Լեհաստանում, Ֆրանսիայում, Նորվեգիայում, Հոլանդիայում, Դանիայում և Ճապոնիայում, Չինաստանում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Էստոնիայում, Լիտվայում, Գերմանիայում,

- Հայաստանը ներկայացել է հեղինակավոր միջազգային հարթակներում, ինչպիսիք էին. «Միդեմ» երաժշտական ինդուստրիայի միջազգային փառատոնը Ֆրանսիայում (Պատվավոր երկրի կարգավիճակով), Վենետիկի արվեստի բիենալեն («Հայություն» խորագրով ցուցադրությունը արժանացավ «Ոսկե առյուծ» գլխավոր մրցանակի), Պրահայի «Կվադրինալե» թատերաբեմական արվեստի և թատերական ճարտարապետության ցուցահանդեսը՝ «Կարմիր կարկուտ» բեմանկարչական ինստալյացիայով, Պեկինի միջազգային 7-րդ բիենալեն՝ «Երազավայր» խորագրով ցուցադրությամբ:

Փոխադարձաբար արտերկրի մշակույթը ներկայացվել է Հայաստանում՝ մասնավորապես կայացել են.

- Թուրքմենստանի, Հորդանանի (առաջին անգամ), Ռուսաստանի, Բելառուսի, Գերմանիայի Սաքսոնիա-Անհալտ երկրամասի մշակույթի օրերը,

- Հայաստանի ազգային պատկերասրահում բացվել է լեհ անվանի նկարիչ Թեոդոր Աքսենտովիչի ցուցահանդեսը, տեղի են ունեցել շեքսպիրյան հեղինակավոր «Գլոբ թատրոնի» հյուրախաղերը, Դանիայի Հասլև քաղաքի իգական երգչախմբի, Իսրայելի ֆիլհարմոնիկ նվագախմբի, արտերկրի երաժիշտ-կատարողների (Լիտվա, Գերմանիա, Դանիա, Ավստրիա, ԱՄՆ, Իտալիա, Արգենտինա, Ռուսաստան) համերգները և այլն:

Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ.

Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները կազմել են 2015 թվականին իրականացվող ծրագրերի առանցքը: Հայաստանում և արտերկրում իրականացվել են երաժշտական ծրագրեր, թատերական, բալետային, օպերային և կինոնախագծեր, ցուցահանդեսներ, գրական փառատոներ, միջոցառումներ, գրքերի և ալբոմների հրատարակություններ:

Հայաստանում.

«100 համերգ» համերգաշարի շրջանակներում կայացել է 20, իսկ «Երևանյան հեռանկարներ» փառատոնի շրջանակներում 6 համերգ, բեմադրվել է 2 բալետային ներկայացում «Զույգ արեգակներ» և «Արշիլ Գորկի», 7 թատերական ներկայացում՝ «Զգացողությունների թանգարան», «Փարիզյան դատավճիռ», «Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը», «Անրի Վեռնոյ», «Դարի արշալույսն ու դարի մայրամուտը», «Հետաքննություն», «Մեկ ժամ հիշողություն», աջակցություն է ցուցաբերվել 17 ֆիլմի արտադրությանը, այդ թվում՝ 4 խաղարկային, 12 վավերագրական և 1 անիմացիոն: Հայաստանում իրականացվել է 12 ցուցահանդես, մասնավորապես՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ «Հիշողության պատուհաններ» և «Պատաս-

խան՝ 100 տարի անց. անցյալը ներկայում», Հ. Թումանյանի թանգարանում՝ «Ամենայն հայոց որբերի հայրիկը», Հայաստանի ազգային պատկերասրահում՝ «Խոստովանանք արվեստի լեզվով» և «Հովհաննես Զարդարյան. գաղթ», Կոմիտասի թանգարան-ինստիտուտում՝ «Ծաղկած ծիրանի», «Գաֆեսճէան» արվեստի կենտրոնում՝ Սահակ Պողոսյանի «Մեծ մորս աչքերի լռությունը» և Տիգրան Ձիթողցյանի «Հայելիներ», «Սարգիս Մուրադյան» ցուցասրահում՝ Նազիկ Արմենակյանի «Վերապրածներ», Թեքեյան կենտրոնում՝ «Հիշողություն», Հայաստանի նկարիչների միությունում՝ «Լեռն իմ Մասիս» և «Հիշում ենք և պահանջում», 2 միջազգային նախագիծ՝ «Արևավիշապ-2015» գրաֆիկական միջազգային փառատոնը և Գյումրու «Սրբացյալ ընտանիք» քանդակագործության միջազգային գիտաժողովը: Իրականացվել է նաև թվով 3 նախագիծ՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը և հայկական քաղաքակրթությանը. Հայաստանի պատմության թանգարանում՝ «Տարագիր գերդաստաններ» և «Կոչեմ ապրողաց» պատմական ցուցահանդեսները, «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ «Վերապրած ձեռագրեր»: «Հիշատակի ժառանգությունը» խորագրի ներքո անց են կացվել Եվրոպական ժառանգության օրերը, որին մասնակցել է Հայաստանի և ԼՂՀ-ի մշակութային 86 հաստատություն ու կազմակերպություն: Կայացել է «Գրական տապան-ապրիլ» միջազգային գրական փառատոնը, «Գաֆեսճէան» արվեստի կենտրոնում՝ ArmbookExpo ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին Հայաստանի և Հայոց ցեղասպանության թեմայով աշխարհում հրատարակված գրքերը: «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումի շրջանակներում 2015 թ. ապրիլին Հայաստանի ազգային գրադարանը ներկայացրել է «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» խորագրով ցուցադրությունը: Պետական ծրագրերով իրականացվել է 30 գրքի և 8 խտասկավառակի հրատարակում, այդ թվում՝ «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրով՝ 5 գիրք՝ մեկ պատկերագիրք, 8 էլեկտրոնային խտասկավառակ, «Գրականության հրատարակում» ծրագրով՝ 25 գիրք, որից՝ 7-ը՝ հայերեն, 11-ը՝ թարգմանություններ այլ լեզուներից հայերեն, 7-ը՝ հայերենից այլ լեզուներ: Այլ ծրագրերով իրականացվել է 13 գրքի հրատարակություն, որից՝ 7-ը՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ պետական հանձնաժողովի աջակցությամբ, 4-ը՝ մշակույթի նախարարության այլ ծրագրերով, 2-ը՝ համատեղ:

Արտերկրում.

«100 համերգ» համերգաշարի շրջանակներում 32 երկրում կայացել է 68 համերգ: Արտերկրի հեղինակավոր նվագախմբերի, երգչախմբերի և աշխարհահռչակ մենակատարների մասնակցությամբ 7 երկրում (Իսրայել, Էստոնիա, Բելգիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ավստրիա) իրականացվել է «Քեզ հետ, Հայաստան» («With You, Armenia») համերգաշարը: Հայաստանը պատվավոր հյուրի կարգավիճակով մասնակցել է «Միդեմ-2015» մշակութային արտադրանքի ցուցահանդես-տոնավաճառին, որտեղ 14 հայաստանյան համույթներ և անհատ կատարողներ

հանդես են եկել 6 համերգով: Հայկական կերպարվեստը ներկայացվել է 2 հեղինակավոր միջազգային հարթակներում. Վենետիկի բիենալեում՝ «Հայություն» խորագրով ցուցադրությամբ, որը ներկայացնում էր 18 սփյուռքահայ արվեստագետ (Հայաստանի տաղավարն արժանացավ «Ոսկե առյուծ» գլխավոր մրցանակի) և Պեկինի միջազգային բիենալեում՝ «Երազավայր» խորագրով ցուցադրությամբ, որին մասնակցում էր 8 արվեստագետ տարբեր երկրներից: «Կարմիր կարկուտ» ինստալյացիայով Հայաստանը ներկայացել է Պրահայի թատերաբեմական արվեստի և թատերական ճարտարապետության «Կվադրինալե» հեղինակավոր ցուցահանդեսին: 9 երկրում (Բելառուս, Գերմանիա, Ֆրանսիա, Բուլղարիա, Լիտվա, Թուրքիա, Շվեյցարիա, ՌԴ, Վրաստան) կազմակերպվել են «Այլևս երբեք» խորագրով կարճամետրաժ ու լիամետրաժ ֆիլմերի ցուցադրություններ, իրականացվել է 4 նախագիծ՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը և հայկական քաղաքակրթությանը, այդ թվում. Հռոմի հեղինակավոր Վիտտորիանո թանգարանային համալիրի կենտրոնական ցուցասրահում «Հայաստան. տապանի ժողովուրդ» ցուցահանդեսը՝ 2 կատալոգի հրատարակմամբ, Ռուսաստանի ազգագրական թանգարանում՝ «Հայ ավանդական մշակույթի աշխարհը» ցուցահանդեսը՝ կատալոգի հրատարակմամբ: «Թանգարանային գիշեր» միջոցառման շրջանակներում արտերկրի ՀՀ դեսպանություններում և մշակույթի կենտրոններում կազմակերպվել են Ռուբեն Գալչյանի հեղինակած «Հայացք Հայաստանի պատմությանը քարտեզագրական փաստաթղթերի միջոցով» թեմատիկ ցուցադրությունը և «Հայաստանի պատմությունը քարտեզներով» կատալոգի շնորհանդեսը: Հայաստանը Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերի ցուցադրությամբ մասնակցել է գրքի միջազգային 12 ցուցահանդես-տոնավաճառի, այդ թվում՝ Մինսկի, Փարիզի, Ալմաթիի, Լոնդոնի, Թեհրանի, Սալոնիկի, Վարշավայի, Նյու Յորքի, Մոսկվայի, Գյոտեբորգի, Ֆրանկֆուրտի, Գվադալախարայի:

2014-2015 թվականներին յուրաքանչյուր տարի մասնակցություն է ապահովվել 20 երկրում կայացած շուրջ 60 միջազգային մրցույթների, ցուցահանդեսների, տոնավաճառների, փառատոների:

Միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ. Միջազգային կառույցների և կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրամիություն, ԱՊՀ և ՀՀՄՀ, Եվրախորհուրդ, ՍԾՏՀ, Ֆրանկոֆոնիա) հետ հետագա համագործակցության զարգացման նպատակով 2014-2015 թվականներին իրականացվել է համապատասխանաբար 27 և 18 համաֆինանսավորվող ու համատեղ ծրագիր:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակներում.

Հայաստանը մինչ օրս վավերացրել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված 7 կոնվենցիաներից 5-ը, ինչի արդյունքում մինչև 2014 թվականի դեկտեմբերը հանդիսանում էր «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոմիտեի, իսկ 2015 թվականից դարձել է «Զինված ընդհարման դեպքում մշակութային

արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիաների միջկառավարական կոմիտեի անդամ: Ներկայում Հայաստանը հանդիսանում է 3 միջկառավարական կոմիտեների անդամ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունվել են «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի» կիրարկման և մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ներառված տարրերի կարգավիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պարբերական զեկույցը, «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանման մասին» կոնվենցիայի կիրարկման մասին» Հայաստանի Հանրապետության պարբերական զեկույցը:

Աշխատանքներ են տարվել «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» և «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցառումների մասին» կոնվենցիաների կիրարկման մասին» պարբերական զեկույցները պատրաստելու ուղղությամբ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակները համալրվել են հայկական ավանդական մշակույթի տարրերով: 2014 թվականին ցանկում ընդգրկվել է «Լավաշ. ավանդական հացի պատրաստումը, նշանակությունը և մշակութային դրսևորումները Հայաստանում» հայտը: Լրամշակվել է «Հայկական քոչարի. ավանդական խմբապար» անվանակարգային փաթեթը:

Ապահովվել է մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում անցկացվող միջկառավարական կոմիտեների նիստերին, միջազգային սեմինարներին և գիտաժողովներին (յուրաքանչյուր տարի՝ 6-7):

Համալրվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների օրացույցները: 2014 թվականին այդ ցանկում ներառված են Թորոս Թորամանյանի ծննդյան 150 և Ոսկան Երևանցու ծննդյան 400-ամյակները: Մինչ օրս Հայաստանից ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբելյանների ցանկում ներառվել է 22 հայտ:

Մասնակցություն է ապահովվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հայտարարված միջազգային ակցիաներին (տարիներ, շաբաթներ, օրեր): 2012 թվականին Հայաստանը մասնակցում է «Գեղարվեստական կրթության միջազգային շաբաթին»: 2014 թվականից գործում է «ԱՊՀ մասնակից երկրների գեղարվեստական կրթության օբսերվատորիա» կայքէջը, որտեղ Հայաստանը ներկայացված է իր առանձին էջով: Մասնակցություն է ապահովվում նաև Ջազի համաշխարհային օրվան, Գրքի և հեղինակային իրավունքի օրվան և այլն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրման 70-ամյակի շրջանակներում՝

- Երևանում և Փարիզում տեղի է ունեցել «Տիկնիկները հանուն խաղաղության և միջմշակութային երկխոսության» համաշխարհային երթ-հավաքը, որը նվիրված էր նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին,

- Փարիզի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կայացել է «Երիտասարդությունը հանուն խաղաղության» համերգը (Հայաստանի երիտասարդական նվագախմբի և շնորհալի երիտասարդ-կատարողների մասնակցությամբ),

- Երևանում կայացել է «Մշակութային քաղաքականություն. քաղաքականություն մշակույթի համար. մշակույթի դերը կայուն զարգացման գործում 2015 թ. հետո» միջազգային 3-րդ կոնֆերանսը, որին մասնակցել է 85 մարդ 30 երկրից:

Եվրամիության «Արևելյան գործընկերության» ծրագրի «Մարդկանց միջև շփումներ» պլատֆորմի շրջանակներում.

- շարունակվել են աշխատանքները «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին միանալու (համաձայնագիրը կստորագրվի 2016 թվականի ընթացքում) ուղղությամբ, որը հնարավորություն կընձեռի հայ ստեղծագործողներին ակտիվորեն մասնակցելու ԵՄ շրջանակներում մշակույթի ոլորտում տարվող դրամաշնորհային ծրագրերին, իրականացնելու բազմաբնույթ փառատոնային և այլ մշակութային ծրագրեր, կդյուրացնի հայ արվեստագետների մուտքը եվրոպական շուկա՝ նպաստելով նորարարական և ստեղծագործական ուղղությունների զարգացմանը, ապահովելով ստեղծագործողների շարժունակությունը,

- ակտիվ համագործակցություն է ծավալվել ԵՄ շրջանակներում մեկնարկած «Culture 2» ծրագրի «Culture and Creativity» տարածաշրջանային ենթածրագրին,

- մասնակցություն է ապահովվել «I Culture» ծրագրին, որի շրջանակներում հայաստանյան երիտասարդ ստեղծագործողները վարպետության դասեր են ստացել անվանի երաժիշտ-դաշնակահարների մոտ:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում.

Շարունակվել է համագործակցությունը 2009 թվականից մեկնարկած «Պատմական քաղաքների մշակութային ժառանգության վերականգնում» պիլոտային ծրագրի շրջանակներում, որը 2014 թվականից իրականացվում է «Պատմական քաղաքներում համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ» (COMUS) խորագրով և նոր ձևաչափով: Ծրագիրը ներառվել է «Հայաստան-ԵԽ 2015-2017 թվականների Գործողությունների ծրագրում»: Հայաստանից ծրագրում ընդգրկված են Գյումրի և Գորիս քաղաքները: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն սեմինարներ, խորհրդատվական աշխատանքային հանդիպումներ և կոնկրետ գործողություններ, որոնք կնպաստեն Գյումրու և Գորիսի ենթակառուցվածքների հետագա զարգացմանը, պատմական միջավայրի պահպանմանն ու ներկայացմանը:

Հայաստանը 2014 թվականին դարձել է «Եվրոպական կինոյին աջակցության եվրոպական հիմնադրամի» (EURIMAGES) կազմակերպության անդամ և հնարավորություն է ստացել օգտվելու հիմնադրամի աջակցության ֆոնդերից:

Եվրոպական ժառանգության ցանցի (HEREIN) շրջանակներում առցանց համագործակցություն է իրականացվում 42 երկրի մշակութային ժառանգության ոլորտի պատասխանատուների հետ: 2015 թվականին Հայաստանն առցանց ներկայացրեց նաև ոլորտի ազգային զեկույցը:

Հայաստանը 2015 թվականից Եվրախորհրդի «Մշակութային ուղիներ» ծրագրի լիիրավ անդամ է: Վերոնշյալ համաձայնագրի անդամ է հանդիսանում ԵԽ 15 երկիր: Ներկայումս համաձայնագրի շրջանակներում գործում է 20-ից ավելի մշակութային ուղի, ինչպես օրինակ՝ «Վիկինգների ճանապարհը», «Մոցարտի եվրոպական ուղիները», «Ձիթենու ճանապարհները», «Ճենապակու եվրոպական ուղիները» և այլն: Անդամակցությունը «Մշակութային ուղիներ» ծրագրին հնարավորություն կընձեռի ԵԽ հարթակում անդամ երկրների հետ համատեղ իրականացնել հայ պատմամշակութային ժառանգության հանրահռչակմանն ուղղված մշակութային ծրագրեր:

ԱՊՀ երկրների հետ հումանիտար համագործակցության շրջանակներում.

Շարունակել է գերակա մնալ համագործակցությունը ԱՊՀ մշակութային խորհրդի շրջանակներում, որտեղ Հայաստանը նախագահում է 2012 թվականից: Այս համատեքստում 2015 թվականի հուլիսի 10-11-ը Հայաստանում անց է կացվել ԱՊՀ մշակութային համագործակցության խորհրդի հոբելյանական XXX նիստը:

Մասնակցություն է ապահովվել ԱՊՀ շրջանակներում իրականացվող միջոցառումներին՝ մասնավորապես «ԱՊՀ երկրների երիտասարդական Դելփյան խաղերին», «ԱՊՀ երկրների գիտական և ստեղծագործական մտավորականության համաժողովին», «ԱՊՀ մշակութային մայրաքաղաքներ» ծրագրին, «Համագործակցության աստղեր» և «Համագործակցության դեբյուտներ» մրցանակաբաշխություններին:

ԱՊՀ-ի հետ համագործակցության ձևաչափում իր կարևորությամբ առանձնանում է Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի (ՀՀՄՀ) հետ համագործակցությունը, որի աջակցությամբ անց են կացվել ավանդական դարձած «Արամ Խաչատրյանի անվան երիտասարդ կատարողների միջազգային փառատոնը», «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը, «Վերածնունդ» մրցույթ-փառատոնը:

Անկախ Պետությունների Համագործակցությունը 2016 թվականին նշում է վերոնշյալ կառույցի կազմավորման 25-ամյակը: Հայաստանը ակտիվորեն մասնակցելու է ԱՊՀ կազմավորմանը նվիրված վիրտուալ ցուցահանդեսին:

Աշխատանքներ են ընթանում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում՝ մշակույթի առանձին ոլորտների (կինո, տեսալսողական, հուշարձանների վերականգնում և

մշակութային արժեքների արտահանում և ներմուծում) օրենսդրության նույնականացման և լիբերալիզացման ուղղությամբ:

Այլ միջազգային կառույցների հետ համագործակցության ուղղությամբ.

Շարունակվել է համագործակցությունը միջազգային այլ կառույցների (Ֆրանկոֆոնիա, ՍԾՏՀ և այլն) և ոլորտի մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Եվրոպա Նոստրա»-ի, ICCROM-ի, ICOM-ի, ITI-ի, Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի հետ: Այդ համատեքստում.

- Երևանում 2014 թվականին կայացել է ITI-ի «Նոր ձայներ, նոր հանդիսատես. երկխոսության ժամանակներ» խորագրով թատերական ինստիտուտների 34-րդ միջազգային համաժողովը, որին մասնակցում էր 300 պատվիրակ աշխարհի 40 երկրից,

- «Երերույք» հնագիտական հուշարձանը և Անի-Պեմզա գյուղը» 2015 թվականին ընդգրկվել են «Եվրոպա Նոստրա» կազմակերպության «7 առավել վտանգված հուշարձանների» ցանկում, իսկ «Օժանդակություն տեղական հաստատությունների մշակութային ժառանգության պահպանման և վերականգնման ոլորտում» կրթական ծրագիրն արժանացել է «Եվրոպա Նոստրա» մրցանակի:

- Երևանում 2015 թվականին տեղի է ունեցել ICOM-ի տարեկան համաժողովը, որի շրջանակներում կայացել է «Եվրոպա Նոստրա» կազմակերպության մրցանակի արժանացած «Օժանդակություն տեղական հաստատությունների մշակութային ժառանգության պահպանման և վերականգնման ոլորտում» կրթական ծրագրի շնորհանդեսը,

- կազմակերպվել է Ֆրանկոֆոն երկրների ԱԳ նախարարների երևանյան համաժողովի մշակութային ծրագիրը:

Ընդհանուր առմամբ 2014-2015 թվականներին իրականացվող միջոցառումների և փոխանակումների արդյունքում Հայաստանից գործուղվել և Հայաստան է այցելել շուրջ 5000 մարդ:

Սփյուռքի հետ համագործակցություն.

Հայաստանի Հանրապետությունը հայապահպանությունն ընդունում է որպես ազգային անվտանգության հիմնարար արժեք և հետամուտ է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը Հայաստանում և Սփյուռքում: Հայապահպանության համար կարևորվում է հայոց լեզվի և գրականության, հայկական մշակույթի, հայ պատմագիտության և հայագիտության այլ ճյուղերի՝ որպես ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ու անվտանգությունն ապահովող և ազգային ինքնությունը մարմնավորող գործոնների, զարգացումը:

Կարևորելով սփյուռքահայ արվեստագետներին հայաստանյան մշակութային դաշտ ներգրավելու, ինչպես նաև Սփյուռքում հայապահպանության խնդիրները՝ աջակցություն է ցուցաբերվում Սփյուռքում գործող մշակութային կենտրոնների գործունեությանը, տրամադրելով

հայ մշակույթը ներկայացնող հայալեզու գրականություն, ֆիլմեր, ալբոմներ, դիդակտիկ նյութեր, ինչի արդյունքում Թբիլիսիում, Ջավախքում և Վրաստանի այլ հայաշատ վայրերում իրականացվել են մշակութային միջոցառումներ, հրատարակվել գրքեր, Իտալիայի «Պո Արաքս» մշակութային կազմակերպությունում կազմակերպվել են հայոց լեզվի, պատմության և մշակույթի մասին դասընթացներ:

2014-2015 թվականներին աջակցություն է ցուցաբերվել Պրահայի «Օրեր» ամսագրին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի և հայ-չեխական մշակութային կապերի մասին համարները պատրաստելու և հրատարակելու համար, և Շտուտգարդտի հայ համայնքին՝ մշակութային ծրագիր իրականացնելու համար:

Մշտական աջակցություն է ցուցաբերվում նաև հայաստանյան կոլեկտիվների հյուրախաղերին սփյուռքահայ գաղթօջախներում և սփյուռքահայ արվեստագետների ներկայացմանը Հայաստանում:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման նպատակով ՀՀ սփյուռքի նախարարության կողմից 2014-2015 թվականներին իրականացվել են մի շարք մշակութային միջոցառումներ, մասնավորապես.

- Արդեն 7 տարի իրականացվում է «Մեր մեծերը» ծրագիրը, որի շրջանակներում վերջին երկու տարիների ընթացքում իրականացվել են հայազգի նշանավոր 9 անհատների մեծարման միջոցառումներ, 2014 թվականին՝ Գ. Գյուլբենկյանին, Հ. Թումանյանին, Կոմիտասին, Սիամանթոնին և Արշիլ Գորկուն, իսկ 2015 թվականին՝ Դ. Վարուժանին, Փ. Թերլեմեզյանին, Համաստեղին, Անդրանիկ Օզանյանին, ինչպես նաև միսիոներներ-արդարներին նվիրված.
- Ցեղասպանության տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում 2014 թվականին վերահրատարակվել է «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ» պատկերագիրքը, տպագրվել է «Programs of Genocide in the Ottoman Empire (1876- 1920)» գիրքը, կազմակերպվել է Ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ՝ տարածաշրջանային հանձնաժողովների հավաքը Հայաստանում՝ մինչև 50 ներկայացուցիչների մասնակցությամբ, իրականացվել են «Արմին Թ. Վեգների և Սյորեն Կիերկեգորի մեկական տեքստի միջմշակութային և միջգիտակարգային իմպրովիզացիա» նախագիծը Գերմանիայում, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված դասախոսություններ՝ ԱՊՀ համայնքներում: 2015 թվականին իրականացվել են Հայոց ցեղասպանության պատմաաշխարհագրական հիմնախնդիրներին նվիրված գրքի հրատարակությունը, «Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական դրությունը 1914-1917 թվականներին», «Ժամանակակից Թուրքիա. առերեսում պատմության հետ» խորագրով գիտաժողովները, «Նոր օսմանականությունը որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական գաղափարախոսություն» խորագրով կլոր սեղան-քննարկումները, «100 տարի. Արևմտյան

Հայաստանի նահանգների և ժամանակակից տարազներ» ցուցադրությունը, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված դասախոսությունները.

- Իրականացվել է ավելի քան 8 նախագիծ, այդ թվում՝ «Հայկական առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների», «Հայկական ճարտարա-պետության, ճարտարագիտության և շինարարության մարտահրավերներն ու ձեռքբերումները 100 տարի անց. կվերակառուցենք կրկին», իսլամացած հայերի հիմնախնդիրներին նվիրված համաժողովները, «Հայոց ցեղասպանության իրավական հիմնախնդիրներին նվիրված» խորագրով միջազգային գիտաժողովը.

- Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության հետ համատեղ 7-րդ անգամ իրականացվել է «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում կազմակերպվել են «Մայրենիի պաշտպան», «Լավագույն հայկական համայնք», «Հայկական ավանդական ընտանիք», «Լավագույն գեղարվեստական խումբ» մրցույթները և այլն.

- Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ծրագրի շրջանակներում իրականացվել են սիրիահայ երեխաների նկարների 1 ցուցահանդես, 3 էքսկուրսիա շուրջ 100 երեխաների և պատանիների համար, արվեստագետի գրքի 1 շնորհանդես, ձեռագործ վարպետների և հրուշակագործների ձեռքի աշխատանքների ու հրուշակեղենի 1 ցուցահանդես-տոնավաճառ: Կազմակերպվել են սիրիահայ արվեստագետների 2 համերգ, ճամբարային հանգիստ շուրջ 50 երեխաների համար, էքսկուրսիաներ թանգարաններ, տեսարժան վայրեր, սիրիահայերի հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան-քննարկում, ինչպես նաև մշակութային այլ միջոցառումներ.

- Երկու տարին մեկ անգամ Հայաստանում կազմակերպվում է «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը, որի շրջանակներում 2014 թվականին իրականացվել են «Լրագրողների համահայկական 7-րդ համաժողովը», «Պարարվեստի օրերը», «Երգչախմբային արվեստի օրերը», «Հայկական նվագարանների փառատոնը», անհատ կատարողների ելույթները: Փառատոնի նպատակն է նպաստել Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք կապերի և համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը, Սփյուռքում հայ մշակույթի, մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, սատարել Հայրենիքի և Սփյուռքի երիտասարդ ստեղծագործողների միջև մշակութային կապերի խորացմանը, համատեղ ծրագրերի մշակմանը և իրականացմանը.

- «Սփյուռք» ամառային դպրոց» ծրագիրը, որի նպատակն է հայապահպանության խթանումը հայոց լեզվի ուսուցման, սփյուռքի հայկական կառույցների ներկայացուցիչների մասնագիտական որակների բարձրացման միջոցով: 2014 թվականին ծրագրին մասնակցել է 222 սփյուռքահայ 20 երկրից, իսկ 2015 թվականին՝ 225 սփյուռքահայ աշխարհի 21 երկրից: Ծրագիրն իրականացվում է Երևանի պետական համալսարանի հետ համագործակցությամբ:

Միջազգային և սփյուռքի հետ մշակութային համագործակցության ապահովման նպատակով պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 504.1 և 475.7 հազ. դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 662.1 հազ. դրամ:

Ազգային փոքրամասնությունների ինքնության պաշտպանություն.

Վերջին տարիներին պետական ծրագրերում կարևոր տեղ են զբաղեցնում ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանումն ու զարգացումը: Այդ նպատակով կազմակերպվում են նրանց ազգագրությունն ու ժամանակակից արվեստը ներկայացնող ցուցահանդեսներ, համերգներ, փառատոներ, մասնավորապես՝

2014 թվականին աջակցություն է ցուցաբերվել «Հայաստանը մեր տունն է» խորագրով ամենամյա «Սինջար» եզդիների ազգային միավորում» ՀԿ-ի կողմից եզդիական երգերի փառատոների, «Ազգային պատկերասրահ» փառատոնի շրջանակներում ազգությամբ հրեա, դաշնակահար Վիլլի Վայների ելույթի կազմակերպմանը, Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ստեղծագործությունների «Ալմանախ-2» ժողովածուի հրատարակմանը: Պետական պատվերով հրատարակվել է Ալեքսանդր Պորյադոչնիի «Արծաթե թելը» պոեմը:

2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել «Եզդիների ազգային միություն» ՀԿ-ին՝ ՀՀ մարզերում եզդիական մշակութային, կրթական, տոնական ավանդական միջոցառումների կազմակերպման համար, ինչպես նաև «Մատիտով» մանկապատանեկան նկարչական ցուցահանդեսին: «Միջէթնիկ և միջմշակութային համագործակցությունների կենտրոն» մարդասիրական ՀԿ-ին՝ «Նարեկացի» արվեստի միությունում եզդիների ցեղասպանության դատապարտմանը նվիրված լուսանկարչական ցուցահանդեսի անցկացմանը, ՀՀ ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդին՝ «Հայաստանի ազգային փոքրամասնություններն ընդդեմ ցեղասպանությունների» խորագրով Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառման կազմակերպմանը, հույների ցեղասպանության մասին «Արգոնավորդների հետքերով» վավերագրական ֆիլմի հայերեն թարգմանությանը («Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» ՀԿ), «Մինորա» հրեական մշակութային կենտրոն ՀԿ-ին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Վիլլի Վայների 60-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական երեկոյի կազմակերպմանը:

Ոլորտին պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է յուրաքանչյուր տարի 3.0 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել ևս 3.0 մլն դրամ:

10.1.1.2. Հիմնական խնդիրները

Մշակութային ժառանգության պահպանություն

Թանգարաններ.

- Կարևոր խնդիր է մշակութային արժեքների միասնական տեղեկատվական էլեկտրոնային շտեմարանում պետական ու մասնավոր հավաքածուների և արտերկրում հայկական մշակութային արժեքների վերաբերյալ տվյալների համալրումը.
- Կարևորվում է ըստ մշակութային արժեքների բնույթի էլեկտրոնային շտեմարանների ստեղծումը և համալրումը.
- Դեռևս կարևորվում է թանգարանների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը՝ շենքերի հիմնանորոգումն ու վերանորոգումը, ցուցադրական մակերեսների ընդլայնումը, ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինումը, անվտանգության համակարգերով ապահովումը.
- Կարևոր խնդիր է ֆոնդապահոցների ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինումը և ֆոնդային նոր կահույքով ապահովումը, թանգարանների ֆոնդային տարածքների ընդարձակումը.
- Շարունակում է կարևորվել թանգարանային ֆոնդերի համալրումը մշակութային արժեքներով.
- Շարունակում է խնդիր մնալ թանգարանային գործունեության արդի պահանջներին համահունչ մասնագիտական գիտելիքներ ունեցող կադրերով համալրումը:

Գրադարաններ

- Կարևորվում է գրադարանային հավաքածուների պահպանումը՝ անվտանգության արդի համակարգերի կիրառմամբ.
- Շարունակում է կարևոր մնալ հնատիպ և հազվագյուտ գրքերի և պարբերական մամուլի նպատակային համալրումը, վերականգնումը, թվանշայնացումը.
- Դեռևս լիարժեք լուծված չէ գրադարանների գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման հարցը՝ շենքերի վերանորոգմամբ.
- Կարևորվում է միջգրադարանային կապերի զարգացումը, պետական և համայնքային գրադարանների համագործակցությունը, համայնքային գրադարանների հանրային գրադարանի կարգավիճակ ստանալը, դրանց շենքային պայմանների բարելավումը և նյութատեխնիկական բազայի վերազինումը.
- Դեռևս հրատապ են Հայաստանի ազգային գրապալատի շենքի հիմնանորոգման ու ջեռուցման համակարգի տեղադրման, տպագիր նյութերի ազգային անձեռնմխելի հավաքածուների պահպանության համար անհրաժեշտ տարածքի ապահովման խնդիրները.
- Շարունակում է խնդիր մնալ գրադարանային ոլորտում արդի պահանջներին համահունչ մասնագիտական գիտելիքներ ունեցող կադրերի պատրաստումը.
- Կարևորվում է գրադարանների ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնումը:

Արխիվային գործ

- Արխիվային հավաքածուների պահպանման, համալրման, հաշվառման աշխատանքներում առկա զարգացման միտումներին զուգընթաց դեռևս շարունակում է հրատապ մնալ արխիվային փաստաթղթերի թվայնացման խնդիրը.
- Դեռևս հրատապ է արխիվապահոցներում անհրաժեշտ ջերմախոնավային ռեժիմի պահպանման խնդիրը.
- Արդիական է արխիվի համակարգչային սարքավորումների նորացման խնդիրը:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

- Դեռևս շարունակում է խնդիր մնալ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման ոլորտի իրավական դաշտի կանոնակարգումը.
- Շարունակում է առաջնահերթ մնալ պահպանվածության առումով առավել վտանգված պատմամշակութային հուշարձանների և դրանցում առկա որմնանկարների ամրակայման, վերականգնման, թվայնացման հարցը՝ հետագա քայքայումից և անդառնալի կորստից փրկելու համար.
- Արդիական է հուշարձանների պահպանության բնագավառում պետություն-մասնավոր հատվածներ (այդ թվում՝ հասարակական, միջազգային կազմակերպություններ, անհատ բարերարներ, համայնքի բնակչության ներգրավվածություն) համագործակցության ներդրած ձևաչափի շարունակականության ապահովումը.
- Շարունակում են խնդիր մնալ Հայաստանում և արտերկրում հայկական պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ուղղված անհրաժեշտ գործընթացների իրականացումը (պետական կադաստրի ստեղծում և վարում, պահպանական գոտիների օգտագործման ռեժիմի սահմանում, հաշվառման փաստաթղթերում նշված տվյալների ճշգրտում և լրամշակում), հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը.
- Դեռևս շարունակում է խնդիր մնալ պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հուշարձանների սեփականատերերի և օգտագործող-ների փոխհարաբերությունների կանոնակարգումը (պահպանական պարտավորագրերի ինստիտուտի կիրառումը).
- Շարունակվում է կարևորվել պատմամշակութային հուշարձանների հանրահռչակման գործընթացի արդյունավետության բարձրացումը, հուշարձանի հանդեպ համազգային հոգածության ձևավորումը.
- Չնայած ոլորտում իրականացվող ծրագրերին՝ դեռևս խնդիր է պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման կարճաժամկետ ու երկարաժամկետ համալիր ծրագրերի կազմումը.

- Կարևորվում է պատմամշակութային հուշարձանների հանրահռչակման գործընթացի արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև արտերկրում գտնվող ուսումնասիրված, վավերագրված, հաշվառված հայկական հուշարձանների հանրահռչակումը:

Ոչ նյութական մշակութային ժառանգություն

- Կարևորվում է ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերի և մշակութային տարածքների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկերի համալրումը, միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծումը.
- Կարևոր խնդիր է ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերով ավանդական արհեստների, ժողովրդական ստեղծագործության, ազգային նվագարանագործության գիտելիքների և հմտությունների փոխանցումը.
- Կարևոր խնդիր է ժողովրդական վարպետների և ժողովրդական ստեղծագործության վերաբերյալ առցանց տեղեկատվական հարթակների ստեղծումը.
- Կարևորվում է արհեստագործական արտադրանքի արդիականացումը և կենցաղում ներդրման մեխանիզմների մշակումը:

Ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի (թատերարվեստ, պարարվեստ, երաժշտարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ) զարգացում, մշակութային արտադրանքի տարածում, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտում և ստեղծագործական գործընթացների խթանում

- Դեռևս լուծված չեն մշակութային կազմակերպությունների՝ թատրոնների, համերգասրահների բնականոն գործունեության պատշաճ ապահովման խնդիրները՝ շենքերի և շինությունների հիմնանորոգումը, սեփական տարածքներ չունեցող և անբավարար պայմաններում գործող թատերահամերգային կազմակերպություններին անհրաժեշտ տարածքների տրամադրումը, արդիական նյութատեխնիկական միջոցների համալրումը.
- Խնդիր է համարվում մատուցվող ծառայությունների որակի ապահովումը, խաղացանկերի համալրումը նոր ստեղծագործություններով, ժողովրդական կոլեկտիվների երկացանկերի թարմացումը նոր մշակումներով, երաժշտական գործիքների ձեռքբերումն ու վերանորոգումը.
- Առկա է բարձր որակավորում ունեցող մասնագետներով (ստեղծագործական և տեխնիկական) ոլորտի համալրման խնդիրը՝ վերապատրաստումների և վարպետության դասերի միջոցով.
- Հրատապ է կինոարվեստի ոլորտի օրենսդրական դաշտի կարգավորումը և լուծված չեն հայկական կինոժառանգության պահպանության և օգտագործման խնդիրները՝ ֆիլմերի թվայնացման ու հանրայնացման միջոցով:

Միջազգային համագործակցության ընդլայնում, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշում և հանրահռչակում

- Կարևորվում է միջազգային մշակութային համագործակցությունը խթանող և կանոնակարգող երկկողմ (պայմանագրեր, համաձայնագրեր, հուշագրեր, ծրագրեր, արձանագրություններ) և բազմակողմ (կոնվենցիաներ, բազմակողմ համաձայնագրեր) իրավապայմանագրային դաշտի ընդլայնումն ու կիրարկումը, նեղոլորտային համագործակցությունը խթանող պայմանագրերի ստորագրումը.
- Արդիական է երկկողմ համագործակցության զարգացման համատեքստում նոր ձևաչափերի կիրառումը, որը կնպաստի հայ մշակույթի հանրահռչակմանը արտերկրում և արտերկրի մշակույթների ներկայացմանը Հայաստանում: Առանցքային է դառնում հայ մշակույթի հանրահռչակմանը միտված մեծածավալ ծրագրերի իրականացումը.
- Կարևոր խնդիր է բազմակողմ համագործակցության շրջանակներում հարևան պետությունների կողմից հայ մշակութային ժառանգության նկատմամբ կեղծարարության կանխարգելումը, որն առավել ակնհայտորեն դրսևորվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հարթակում: Այդ համատեքստում կարևորվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի տարբեր հարթակներում Հայաստանի դիրքերի ամրապնդմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
- Շարունակում է արդիական մնալ միջազգային մյուս կազմակերպություններին արդյունավետ ինտեգրվելու խնդիրը՝ մասնավորապես անդամակցումը Եվրամիության «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի «Մշակույթ» բաղադրիչին, ինչպես նաև ակտիվ մասնակցությունը Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ծրագրին:

Մշակութային ծառայությունների ապակենտրոնացում և համաչափության ապահովում

- Դեռևս շարունակում է խնդիր մնալ ՀՀ մարզերում վերանորոգված մշակույթի տների, կենտրոնների, ակումբների նյութատեխնիկական բազայի համալրումը, երաժշտական գործիքների և սարքավորումների ձեռքբերումը.
- Առկա են ՀՀ մարզերում մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության ապահովման և մշակութային կյանքի աշխուժացման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման խնդիրները.
- Կարևորվում է ՀՀ մարզերում բնակչության գեղագիտական զարգացումն ու մշակութային ծառայությունների մատուցումը, ինչը կապված է մշակույթի տների և կենտրոնների ոչ լիարժեք կենսագործունեությամբ, մշակութային ենթակառուցվածքների սակավությամբ:
- Ազգային փոքրամասնությունների հետ համագործակցություն և էթնիկ ինքնության պահպանում.

- Դեռևս խնդիր է ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերին բազմակողմանի աջակցումը:

10.1.2. ՈԼՈՐՏԻ (ՀԱՄԱԿԱՐԳԻ) ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.1.2.1.Նպատակները

* ***Մշակութային ժառանգության պահպանություն և ազգային ավանդույթների վերարտադրում*** (հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժնի 1-ին պարբերություն):

Մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանում, օգտագործում ու հանրահռչակում, գիտական, տեխնիկական և գեղարվեստական ուսումնասիրությունների, տեղական և միջազգային մակարդակներում մշակութային ժառանգության ճանաչելիություն, մշակութային զբոսաշրջության խթանում:

* ***Ժամանակակից արվեստի զարգացում, մշակութային արտադրանքի տարածում, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտում և ստեղծագործական գործընթացների խթանում*** (հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժնի 2-րդ պարբերություն):

Խաղացանկերի և երկացանկերի ժանրային ու ոճական բազմազանության և որակի, միջազգային ասպարեզում մշակութային արտադրանքի մրցունակության ապահովում, ստեղծագործական ներուժի բացահայտման ու զարգացման համար պայմանների ստեղծում և ներգրավում ժամանակակից ստեղծագործական գործընթացներում:

* ***Մշակութային ծառայությունների ապակենտրոնացում և համաչափության ապահովում*** (հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժնի 5-րդ պարբերություն):

ՀՀ մարզերում գործող մշակութային կազմակերպությունների բնականոն գործունեության, դեպի մարզեր մշակութային ծառայությունների ապակենտրոնացման, մշակութային գործունեություն իրականացնելու հավասար պայմանների ապահովում:

* ***Միջազգային համագործակցության ընդլայնում, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշում և հանրահռչակում*** (հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշում, ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժնի 7-րդ պարբերություն):

Արտերկրի հետ մշակութային երկխոսության ձևաչափերի ընդլայնում և խորացում, հայ մշակույթի հանրահռչակում, հայաստանյան հասարակությանը աշխարհի ժողովուրդների

մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովում, միջազգային կազմակերպություններին և կառույցներին անդամակցում ու արդյունավետ ինտեգրում, միջազգային հարթակներում Հայաստանի դիրքավորում, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների մասնակցության աճի ապահովում:

10.1.2.2. Գերակայությունները

Մշակույթի ոլորտի զարգացման գերակա ուղղություններն են.

- Ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում՝ ՀՀ օրենքների, օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունմամբ.
- Մշակութային ժառանգության թվայնացմանն ուղղված տեղեկատվական շտեմարանների ստեղծման ու համալրման շարունակականության ապահովում.
- Ազգային հենքի և ավանդույթների վրա՝ ժամանակակից արվեստի ծառայությունների ստեղծում և տարածում, երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտում, նոր մտահղացումների և գաղափարների ներդրում, ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծում.
- Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի հաշվառման, պահպանության, վերականգնման ապահովում.
- Մշակութային կյանքի, մշակութային ծառայությունների մատուցման ապակենտրոնացման միջոցով մշակույթի համաչափ զարգացման քաղաքականության շարունակական իրականացում՝ մշակութային բարիքներից օգտվելու համահավասարության ու մատչելիության ապահովում.
- Դպրոցահասակ երեխաների (հատկապես ՀՀ մարզերի)՝ արվեստին հաղորդակցվելու պետական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ մշակութային և կրթական ծրագրերի ներդաշնակեցման միջոցով.
- Աշխարհում հայ մշակույթի տեղորոշում ու հանրահռչակում, միջազգային կազմակերպություններին և կառույցներին Հայաստանի արդյունավետ ինտեգրում ու միջազգային հարթակներում Հայաստանի նպատակային դիրքավորում.
- Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության՝ պատմական, հոգևոր, մշակութային արժեքների պաշտպանության շարունակական ապահովում:

10.1.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտին (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է ուղղել 2017 թվականին՝ **13,775.9** մլն դրամ, 2018 թվականին՝ **13,854.9** մլն դրամ և 2019 թվականին՝ **13,770.9** մլն դրամ *(*2016-2018 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2017 թվականին նախատեսվել էր 13,815.3 մլն դրամ, 2018 թվականին՝ 13,899.3 մլն դրամ*)*:

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով մշակույթի ոլորտին պետական բյուջեով նախատեսված ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի, համապատասխանաբար՝ 0.25; 0.23; 0.22 % :

Ծախսերը 2017 թվականին 2016 թվականի նկատմամբ կնվազեն 5%-ով՝, 2018 թվականին՝ 2017 թվականի նկատմամբ կաճեն 0.6 %-ով՝, 2019 թվականին՝ 2018 թվականի նկատմամբ կնվազեն 0.6 %-ով:

2017-2019 թվականներին մշակույթի ոլորտի բյուջետային հատկացումների փոփոխությունները հիմնականում պայմանավորված են.

- «Իմ Հայաստան» փառատոնի անցկացման ծախսերի նախատեսմամբ՝ 84.0 մլն դրամ /նախատեսվում է 2 տարին մեկ անգամ՝ 2016թ. և 2018թ./.
- Մշակութային միջոցառումների ծախսերի աճով՝ 2.2 մլն դրամ.
- Ա.Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում ներդրումների նախատեսմամբ՝ 5.0 մլն դրամ.
- Էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերի նվազմամբ, կապված սակագների փոփոխության հետ՝ 41.6 մլն դրամ.
- «Մշակութային օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն» ծրագրի գծով ծախսերի նվազմամբ՝ 564.5 մլն դրամ.
- «Հուշարձանների վերանորոգում և վերականգնում» ծրագրի գծով ծախսերի նվազմամբ՝ 50.0 մլն դրամ:

Մշակույթի ոլորտի 2015-2019 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների ներկայացված են 10.1. աղյուսակում:

Աղյուսակ 10.1. Մշակույթի ոլորտի պետական ծախսերը 2015-2019 թվականների՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս	Խմբերի անվանումները	Փաստացի բյուջե	Հաստատված բյուջե	2017-2019թթ ՄԺԾԾ		
		2015թ	2016թ	2017թ	2018թ	2019թ
08	**Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը, այդ թվում**	**13 589.1**	**14 507.4**	**13 775.9**	**13 854.9**	**13 770.9**
08.02.01.	Գրադարաններ	1 761.2	1 772.5	1 766.3	1 766.3	1 766.3
08.02.02.	Թանգարաններ և ցուցասրահներ	2 247.8	2 286.6	2 278.6	2 273.6	2 273.6
08.02.03.	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	46.6	47.1	47.0	47.0	47.0
08.02.04.	Այլ մշակութային հիմնարկներ	848.4	854.5	849.5	849.5	849.5
08.02.05.	Արվեստ	6 941.7	7 269.3	7 172.2	7 172.2	7 172.2
08.02.06.	Կինեմատոգրաֆիա	677.8	658.7	658.3	658.3	658.3
08.02.07.	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	173.1	173.5	173.3	173.3	173.3
08.04.02.	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	242.8	295.7	295.7	295.7	295.7
08.02.07.	Հուշարձանների վերանորոգում և վերականգնում	275.9	300.0	250.0	250.0	250.0
	Մշակութային օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն	373.8	849.5	285.0	285.0	285.0

Ըստ ուղղությունների 2017 թվականի ծախսերի տեսակարար կշիռը մշակույթի ոլորտին ուղղված հատկացումներում կունենա հետևյալ պատկերը:

Գծանկար 10.1. 2017 թվականի մշակույթի ոլորտում ծախսերի կառուցվածքը՝ ըստ ենթախմբերի (%)



10.1.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Մշակույթի ոլորտում, պետական բյուջեից ստացված հատկացումների հետ մեկտեղ, ծախսերի իրականացմանն են ուղղվում նաև սեփական եկամուտները:

Սեփական եկամուտները գոյանում են հիմնականում վճարովի ծառայությունների մատուցումից, տոմսերի վաճառքից, դահլիճների և տարածքների վարձավճարից, կինոնկարների իրացումից, ինչպես նաև ստացվող նվիրատվություններից:

Վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներն ուղղվում են աշխատավարձի լրավճարներին, ապրանքների ձեռքբերմանը, գրքային և թանգարանային հավաքածուների համալրմանը:

2015-2019 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են ըստ տարիների, համապատասխանաբար՝ 1,722.8; 1,635.6; 1,618.9; 1,630.4 և 1,634.6 մլն դրամ:

Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը ներկայացված են 10.2. աղյուսակում:

Աղյուսակ 10.2. ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը 2015-2019 թվականներին՝ ըստ առանձին կազմակերպությունների (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս	Պետական աջակցություն ստացող իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների անվանումները	2015թ.		2016թ.		2017թ.		2018թ.		2019թ.	
		ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին
		փաստացի		Ծրագիր		կանխատեսում					
	ԸՆԴԱՄԵՆԸ	**9581.3**	**1722.8**	**9947.2**	**1635.6**	**9928.3**	**1618.9**	**9928.3**	**1630.4**	**9928.3**	**1634.6**
	այդ թվում՝										
08	**1.Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից, որից**	**9581.3**	**1522.7**	**9947.2**	**1602.0**	**9928.3**	**1609.3**	**9928.3**	**1620.8**	**9928.3**	**1625.0**
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	***86.3***	***13.7***	***86.1***	***13.9***	***86.1***	***13.9***	***86.0***	***14.0***	***85.9***	***14.1***
08.02.01.	ՀՀ ՄՆ ենթակայության գրադարաններ	1340.0	36.1	1350.0	25.5	1347.0	13.5	1347.0	16.7	1347.0	16.7
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*97.4*	*2.6*	*98.1*	*1.9*	*99.0*	*1.0*	*98.8*	*1.2*	*98.8*	*1.2*
08.02.01.	«Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ	79.3	4.9	79.1	5.1	79.1	5.1	79.1	5.1	79.1	5.2
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*94.2*	*5.8*	*93.9*	*6.1*	*94.0*	*6.0*	*93.9*	*6.1*	*93.9*	*6.1*
08.02.02	ՀՀ ՄՆ ենթակայության թանգարաններ	1590.7	343.9	1641.1	349.4	1636.5	349.4	1636.5	349.4	1636.5	349.4
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*82.2*	*17.8*	*82.4*	*17.6*	*82.4*	*17.6*	*82.4*	*17.6*	*82.4*	*17.6*
08.02.02	«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ	159.6	19.0	163.4	19.3	163.0	19.3	163.0	19.3	163.0	19.3
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*89.4*	*10.6*	*89.4*	*10.6*	*89.4*	*10.6*	*89.4*	*10.6*	*89.4*	*10.6*
08.02.02	«ՀՀ Գեղարքունիքի մարզի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ	17.6	0.0	17.8	0.0	17.8	0.0	17.8	0.0	17.8	0.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*99.9*	*0.1*	*99.8*	*0.2*	*99.8*	*0.2*	*99.8*	*0.2*	*99.7*	*0.3*

08.02.02	«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ	44.4	1.5	43.1	4.0	43.1	4.0	43.1	4.0	43.1	4.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*96.8*	*3.2*	*91.5*	*8.5*	*91.5*	*8.5*	*91.5*	*8.5*	*91.5*	*8.5*
08.02.02	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններ		26.6	244.0	27.5	243.8	28.5	243.8	28.6	243.8	28.6
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*0.0*	*100.0*	*89.9*	*10.1*	*89.5*	*10.5*	*89.5*	*10.5*	*89.5*	*10.5*
08.02.03.	«Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» ՊՈԱԿ	39.1	0.8	39.5	0.4	39.5	0.4	39.5	0.6	39.5	0.7
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*98.1*	*1.9*	*99.0*	*1.0*	*99.0*	*1.0*	*98.5*	*1.5*	*98.4*	*1.6*
08.02.04.	«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	524.3	130.6	531.7	120.0	530.7	120.0	530.7	120.0	530.7	120.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*80.1*	*19.9*	*81.6*	*18.4*	*81.6*	*18.4*	*81.6*	*18.4*	*81.6*	*18.4*
08.02.04.	«Երևանի կենդանաբանական այգի» ՊՈԱԿ	252.7	207.7	253.5	223.7	253.4	223.7	253.4	223.7	253.4	223.7
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*54.9*	*45.1*	*53.1*	*46.9*	*53.1*	*46.9*	*53.1*	*46.9*	*53.1*	*46.9*
08.02.04.	«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ	35.9	15.7	33.8	18.5	33.8	18.5	33.8	18.5	33.8	18.5
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*69.5*	*30.5*	*64.6*	*35.4*	*64.6*	*35.4*	*64.6*	*35.4*	*64.6*	*35.4*
08.02.05.	«Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	1284.9	199.1	1298.2	190.4	1295.2	181.0	1295.2	181.0	1295.2	181.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*86.6*	*13.4*	*87.2*	*12.8*	*87.7*	*12.3*	*87.7*	*12.3*	*87.7*	*12.3*
08.02.05.	«Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ	333.6	41.2	337.3	31.2	336.1	58.6	336.1	60.8	336.1	63.1
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*89.0*	*11.0*	*91.5*	*8.5*	*85.2*	*14.8*	*84.7*	*15.3*	*84.2*	*15.8*
08.02.05.	ՀՀ ՄՆ ենթակայության թատրոններ	1562.9	282.7	1575.0	322.7	1570.7	322.5	1570.7	323.4	1570.7	323.9
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*84.7*	*15.3*	*83.0*	*17.0*	*83.0*	*17.0*	*82.9*	*17.1*	*82.9*	*17.1*

08.02.05.	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններ	359.9	72.6	362.8	73.3	362.6	73.3	362.6	73.3	362.6	73.3
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*83.2*	*16.8*	*83.2*	*16.8*	*83.2*	*16.8*	*83.2*	*16.8*	*83.2*	*16.8*
08.02.05.	Գեղարքունիքի մարզի «Լ.Քալանթարի անվ. դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	50.2	1.1	50.5	1.1	50.5	1.2	50.5	1.3	50.5	1.5
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*97.8*	*2.2*	*97.9*	*2.1*	*97.7*	*2.3*	*97.5*	*2.5*	*97.1*	*2.9*
08.02.05.	Սյունիքի մարզի «Ա.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	71.9	2.9	72.2	3.0	72.1	3.0	72.1	3.0	72.1	3.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*96.1*	*3.9*	*96.0*	*4.0*	*96.0*	*4.0*	*96.0*	*4.0*	*96.0*	*4.0*
08.02.05.	ՀՀ ՄՆ ենթակայության համերգային կազմակերպություններ	1471.0	127.6	1489.8	179.3	1489.3	179.3	1489.3	179.3	1489.3	179.3
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*92.0*	*8.0*	*89.3*	*10.7*	*89.3*	*10.7*	*89.3*	*10.7*	*89.3*	*10.7*
08.02.05.	«Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ	166.4	3.6	166.9	2.8	166.8	2.8	166.8	2.8	166.8	2.8
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*97.9*	*2.1*	*98.3*	*1.7*	*98.3*	*1.7*	*98.3*	*1.7*	*98.3*	*1.7*
08.02.06.	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ	151.0	5.0	151.5	4.8	151.4	5.1	151.4	9.9	151.4	11.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	*96.8*	*3.2*	*96.9*	*3.1*	*96.7*	*3.3*	*93.9*	*6.1*	*93.2*	*6.8*
	2.Ստացվող նվիրատվություններից, *որից*	**0.0**	**200.1**	**0.0**	**33.6**	**0.0**	**9.6**	**0.0**	**9.6**	**0.0**	**9.6**
08.02.05	ՀՀ ՄՆ ենթակայության թատրոններ		36.4		16.5						
08.02.05	ՀՀ ՄՆ ենթակայության համերգային կազմակերպություններ		87.8		7.0		7.0		7.0		7.0
	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններ		0.2								
08.02.04.	«Երևանի կենդանաբանական այգի» ՊՈԱԿ		64.7		2.9		0.8		0.8		0.8

08.02.05.	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններ		11.0		7.2		1.8		1.8		1.8

10.2. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

10.2.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.2.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտում 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն թվով 28 ծրագրերի իրականացմանը՝ պետական կառավարման 11 մարմինների միջոցով:

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտում պետության միջամտությունն իրականացվում է հետևյալ բնագավառներում.

√ Հեռուստառադիոհաղորդումների

√ Հրատարակչական և տեղեկատվական

Հեռուստառադիոհաղորդումների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները հիմնականում ուղղվում են հանրային հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների, Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը, հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակմանը, տնտեսական վերլուծությունների ծառայությունների իրականացմանը, Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստմանը, ձեռքբերմանը և տարածմանը:

Հանրային հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստումն ու հեռարձակումը իրականացնում են՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ները:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ը, որի հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը:

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության գործունեության հիմքում դրված են ՀՀ Սահմանադրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջները, վերջինով պայմանավորված՝ լիազորությունների իրականացումը:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակումն իրականացնում է «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության հայաստանյան մասնաճյուղը:

Համաձայն «հաշվարկային բանալու» սկզբունքի՝ «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության գործունեության ծախսերում ՀՀ մասնաբաժինը կազմում է 1.5 տոկոս:

«Տնտեսական վերլուծությունների ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը իրականացնում է հետևյալ ծառայությունները՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող գործունեության լուսաբանում հեռուստահաղորդումների միջոցով, հանրապետական և մարզային ԶԼՄ-ներում; հեռուստահաղորդումների, էլեկտրոնային կայքերի, հանրապետական թերթերի, սոցիալական ցանցի շուրջօրյա մշտադիտարկում, տեղեկատվության մշակում, վերլուծություն և ռիսկերի կառավարում, ՀՀ կառավարության գործունեությանը վերաբերող վերլուծությունների և ուսումնասիրությունների իրականացում:

«Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում» ծրագրի շրջանակներում իրականացվում են հեռուստահաղորդումների, տեսահոլովակների պատրաստում, ինչպես նաև ճանաչողական, ուսուցողական ֆիլմերի ձեռք բերում և տարածում սփյուռքի հայկական համայնքներում:

Հրատարակչական և տեղեկատվական բնագավառի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները հիմնականում ուղղվում են գրականության հրատարակմանը, պետական և ոչ պետական մամուլին աջակցմանը, հրատարակչական, տեղեկատվական, տպագրական (ՀՀ պաշտոնական տեղեկագրերի, այլ պոլիգրաֆիական արտադրանքի, միջազգային պայմանագրերի հրատարակում, ՀՀ մուտքի վիզաների և վերադարձի վկայականների տպագրում) և թարգմանչական ծառայությունների իրականացմանը (Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների համաձայն ներկայացվող ազգային զեկույցների և այլ թարգմանությունների կատարում), տեղեկատվության ձեռքբերմանը և արխիվացմանը, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը նպաստող հրատարակչական ծրագրերի իրականացմանը:

Բնագավառի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը և Սփյուռքը:

10.2.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

<u>Հեռուստառադիոհաղորդումների բնագավառ</u>

Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը 2014-2015 թվականներին շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը, պատրաստել և օրական 24 ժամ հեռարձակել է հաղորդումներ «Առաջին» (ՀՀ տարածքում և Արցախում) և միջազգային (ՀՀ տարածքում և տարածքից դուրս) ալիքներով:

Հանրային հեռուստաընկերությունը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում և սահմանված պահանջներին համապատասխան պատրաստել և հեռարձակել է տարբեր թեմատիկ ուղղություններով հաղորդումներ՝ նպատակ ունենալով առավելագույնս բավարարել հանրության տարբեր շերտերի և սոցիալական խմբերի հեռուստատեսային պահանջմունքները և ապահովել տեղեկացված լինելու նրանց սահմանադրական իրավունքը:

Հանրային հեռուստաընկերությունը 2014-2015 թվականներին պատրաստել և հեռարձակել է ինը թեմատիկ ուղղություններով հաղորդումներ, որոնց ծավալները ներկայացված են **10.3 աղյուսակում**:

Աղյուսակ 10.3. 2014-2015 թվականներին Հանրային հեռուստաընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	**«Առաջին» ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)**		**Արբանյակային ալիքով հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)**	
	2014 թվական	**2015 թվական**	**2014 թվական**	**2015 թվական**
Լրատվական, լրատվական-վերլուծական	593.0	621.0	852.0	983.0
Քաղաքական, տնտեսական, հասարակական	1,392.0	1,482.0	2,287.0	2,129.0
Մշակութային	3,014.0	2,073.0	2,093.0	1,479.0
Կրթական, մանկապատանեկան	619.0	594.0	349.0	318.0
Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմական	737.0	844.0	839.0	1,021.0
Մարզական	651.0	313.0	200.0	253.0
Երաժշտական	684.0	886.0	1.376.0	860.0
Զվարճալի-ժամանցային	642.0	1,472.0	481.0	1,428.0
Հոլովակներ, այլ հաղորդումներ	400.0	449.0	255.0	262.0
Ընդամենը	**8732.0**	**8734.0**	**8732.0**	**8733.0**

Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ մեծ տեղ են գրավել մշակույթին, մասնավորապես՝ հայկական մշակույթին նվիրված հաղորդումները: Դրանք բազմաբնույթ են իրենց ընդգրկումներով և հեռուստադիտողին են ներկայացնում մեր ազգային մշակույթում նշանակալի հետք թողած, ճանաչված ու սիրված արվեստագետներին, ինչպես նաև միջազգային մշակութային կարևոր իրադարձությունները, անդրադառնում են հայության ապագայի, նրա մշակութային ժառանգությանը:

Մշակութային հաղորդումները 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին» ալիքի եթերի համապատասխանաբար 34.5 և 23.7 տոկոսը: Մշակութային հաղորդումներից առանձնացել են՝ «Արվեստանոց», «Արվեստակիրներ» և «Արտկանոն» հաղորդումները:

2015 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է գեղարվեստական, հեռուստատեսային բազմասերիանոց, վավերագրական, փաստագրական ֆիլմերի և մուլտֆիլ-

մերի կրկնօրինակման աշխատանքները, մասնավորապես՝ Հանրային հեռուստաընկերությունը ձեռք է բերել արտասահմանյան վերջին տարիների արտադրության ճանաչված ֆիլմերի և մուլտֆիլմերի հեռարձակման իրավունքները, որոնց գծով իրականացրել է կրկնօրինակման աշխատանքներ՝ բացառապես հայերեն լեզվով հեռարձակելու համար: Բացի այդ, Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել հայրենական արտադրության ֆիլմեր:

Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումները 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին» ալիքի եթերի՝ համապատասխանաբար 15.9 և 17.0 տոկոսը: Այս հաղորդումներից առանձնացել են «Խորհրդարանական շաբաթ», «Հրապարակում», «Զինուժ», «Մարտիկ», «02», «Հանրային օրակարգ», «Եռանկյունի», «Ազատ գոտի», «Մասնագիտությունը՝ լրագրող», «Նվիրյալներ», «Դեպի Արցախ», «Ջավախք՝ լեռնեցիների օրրան», «Մերոնք» և այլն:

Հանրային հեռուստաընկերության եթերում շարունակել է հեռարձակվել «Հայ ասպետ» հեռուստամրցախաղը, որի նպատակն է՝ որպես ազգային անվտանգության գործոն, նոր սերնդի ինտելեկտուալ դաստիարակությունը:

2015 թվականին հեռարձակվել են նաև նոր հաղորդաշարեր՝ «Հայաստանը մենք ենք» հաղորդաշարը, որի նպատակն է հեռուստադիտող երեխաներին հաղորդակից դարձնել Հայաստանի տեսարժան վայրերի և իրենց հասակակիցների հետ, և «Ինչուների մոլորակ» հաղորդաշարը, որը նոր պատուհան է դեպի գիտելիքների անծայրածիր աշխարհ:

Կրթական և մանկապատանեկան հաղորդումները 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին» ալիքի եթերի՝ համապատասխանաբար 7.1 և 6.8 տոկոսը:

Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմական հաղորդումներից առավել հատկանշական են՝ «Հայաստանի ճամփեքով», «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Հայաստանի առեղծվածները», «Հոգևոր հայրենիք», «Մայրիկների ակումբ» հաղորդաշարերը և այլն: Նշված հաղորդումների շարքը 2015 թվականին համալրել է «Անծանոթ Հայաստան» հեռուստանախագիծը, որը փորձում է պատասխանել հայոց պատմությանը վերաբերող, դեռևս անպատասխան մնացած հարցերին, բացահայտել Հայաստանի և հայերի հետ կապված անհայտ կամ քիչ ծանոթ պատմությունները և իրադարձությունները:

Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմական հաղորդումների տեսակարար կշիռը 2014-2015 թվականներին «Առաջին» ալիքի եթերում կազմել է համապատասխանաբար 8.4 և 9.7 տոկոս:

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումներից են՝ «Առաջին լրատվական», «Տեսանկյուն», «Խորհրդարան» հաղորդաշարերը: «Առաջին լրատվական»-ը «Առաջին» ալիքի ամենօրյա գլխավոր լրատվական ծրագիրն է, որը համակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող հրատապ և ուշագրավ իրադարձությունները:

Լրատվական և լրատվական-վերլուծական հաղորդումների տեսակարար կշիռը 2014-2015 թվականներին «Առաջին» ալիքի եթերում կազմել է՝ համապատասխանաբար 6.8 և 7.1 տոկոս:

Բազմազան է նաև Հանրային հեռուստաընկերության «Առաջին» ալիքի մարզական եթերը: Մարզական հաղորդումները 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին» ալիքի եթերի համապատասխանաբար 7.5 և 3.6 տոկոս: Շախմատին, որպես Հայաստանում հենակետային մարզաձևի, նվիրված է երկու հաղորդաշար՝ «Շախմատ-64» և «Շախմատի աշխարհ»: Հաղորդաշարերը համակողմանիորեն լուսաբանում են շախմատի աշխարհում տեղի ունեցած շախմատային կարևոր միջոցառումները, տեղեկություն տալիս մեր մարզիկների մասնակցության մասին և քննարկում Հայաստանում շախմատի զարգացման նախադրյալներն ու ուղղությունները, ներկայացնում են հանրակրթական դպրոցներում շախմատի՝ որպես ուսումնական առարկայի, դասավանդման արդյունավետության և շախմատային աշխարհի լավագույնների մասին պատմող տեսանյութեր ու սյուժեներ: Ֆուտբոլային կյանքի անցուդարձն է ներկայացնում «Լրացուցիչ ժամանակ» հաղորդաշարը: Հաղորդաշարը ներկայացնում է բացառիկ հարցազրույցներ ու ռեպորտաժներ, լուսաբանում միջազգային ֆուտբոլի շաբաթվա ամենահետաքրքիր դրվագները:

2015 թվականի ընթացքում հեռարձակվել են մի շարք սպորտային իրադարձություններ, մասնավորապես՝ ըմբշամարտի և ծանրամարտի Եվրոպայի և աշխարհի առաջնությունների խաղերը, Հայաստանի ֆուտբոլի ազգային առաջնության խաղերը, 2016 թվականի Եվրոպայի ֆուտբոլի առաջնության և 2018 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության որակավորման փուլի շրջանակներում Հայաստանի ազգային հավաքականի խաղերը, ինչպես նաև լուսաբանվել են այլ սպորտային միջոցառումներ:

2015 թվականին 2014 թվականի համեմատ աճել է զվարճալի-ժամանցային թեմատիկ ուղղություններով հաղորդումների տեսակարար կշիռը՝ կազմելով «Առաջին» ալիքի եթերի 16.9 տոկոսը (2014 թվականի՝ 7.4 տոկոսի համեմատ): 2015 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են «Մեր մեջ ասած», «Գուշակիր մեղեդին», «Հայաստանի համը», «Ճակատագրեր. օվկիանոսից այն կողմ», «Ընտանյոք հանդերձ», «Հատուկ բաժին» հաղորդումները և հեռուստաֆիլմերը: 2014-2015 թվականներին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է ցուցադրել հանրահայտ «Օսկար» ամենամյա կինոմրցանակաբաշխությունը:

2014-2015 թվականներին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է ցուցադրել նաև մեծ ճանաչում վայելող երաժշտական այնպիսի խոշոր միջոցառումներ, ինչպիսիք են «Եվրատեսիլ 2014/2015», «Մանկական եվրատեսիլ 2014/2015», աշխարհահռչակ դասական համերգներ և այլն:

Սիրված երաժշտական հաղորաշարերից են «Երաժշտական փոստարկղ» և «Երգ երգոց» երաժշտական ծրագրերը:

Երաժշտական հաղորդումները 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին» ալիքի եթերի՝ համապատասխանաբար 7.8 և 10.1 տոկոսը:

2014-2015 թվականներին Հանրային հեռուստաընկերության «Առաջին» ալիքի և միջազգային ալիքի հաղորդումները հեռարձակվել են օրական 24 ժամ:

«Առաջին» ալիքի հեռարձակումը ՀՀ տարածքում և Արցախում իրականացվել է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով: 2015 թվականի ընթացքում ՀՀ տարածքում անալոգային հեռարձակմանը զուգահեռ սկսվել է նաև Հանրային հեռուստաընկերության «Առաջին» ալիքի թվային հեռարձակումը հանրապետության որոշ մարզերում և Երևան քաղաքում, որը մինչև տարեվերջ ընգրկել է հանրապետության ամբողջ տարածքը:

2015 թվականին Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հեռարձակումն արտերկրում, ՀՀ տարածքում և Արցախում ապահովվել է «Գլոբքասթ Ֆրանս» (Globecast France) և «Արքիվա» (Arqiva) ընկերությունների միջոցով բաց ազդանշանով՝ «Հոթբըրդ 13D» (Hotbird 13D) և «Յութելսաթ 36B» (Eutelsat 36B) արբանյակների միջոցով, որոնց հեռարձակման տիրույթը ներառել է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա, Իրան, Ռուսաստանի հիմնական մասը՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները: Բացի դրանից, «Գլոբքասթ Ֆրանս» ընկերության միջոցով իրականացվել է նաև միջազգային ալիքի հեռարձակում «Գալաքսի 19» (Galaxy 19) արբանյակի միջոցով, որի հեռարձակման ծածկույթն ընդգրկում է ամբողջ Հյուսիսային Ամերիկան:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է նաև իր աշխատանքներն արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային կապուղիներով միջազգային ալիքը հեռարձակելու ուղղությամբ: ԱՊՀ երկրներում, հատկապես՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում, ինչպես նաև Վրաստանում, շարունակել են աճել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների՝ կաբելային ցանցով հեռարձակման ծավալները: Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության միջազգային ալիքի հաղորդումները հեռարձակվել են ֆրանսիական տարբեր ընկերությունների, օրինակ՝ «Օրանժ» ընկերության կողմից: ԱՄՆ-ում կաբելային ցանցի միջոցով միջազգային ալիքը շարունակել է հեռարձակվել «Վերայզոն» ընկերության միջոցով, որը ոլորտի առաջատարներից է, ինչպես նաև մի շարք այլ՝ ինտերնետային լուծումներով մեծ տարածում ունեցող ընկերությունների միջոցով:

Հանրային հեռուստաընկերության միջազգային հեռուստաալիքը ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում և հարակից շրջաններում հասանելի է նաև 18.10 և 20.5 թվային վերգետնյա չկոդավորված ալիքներով, ինչը հնարավորություն է տալիս այդ շրջաններում բնակվող ավելի քան կես միլիոն հայ բնակչությանը անվճար և դյուրին ձևով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:

Հանրային հեռուստաընկերությունն իր պաշտոնական վեբ կայքի (www.1tv.am) միջոցով իրականացրել է հեռարձակում իրական ժամանակում՝ հասանելի դարձնելով հաղորդումների համաժամանակյա դիտումն ամբողջ աշխարհում: Ներկայումս Հանրային հեռուստաընկերության եթերին կարելի է հետևել ինչպես անհատական համակարգչով, այնպես էլ բջջային հեռախոսներով և պլանշետներով: Ստեղծվել են հավելվածներ (Application) հանրաճանոթ IOS և Android համակարգերի համար, որոնք կարելի է ներբեռնել անվճար: Կայքը հնարավորություն է տալիս նաև առցանց դիտել արդեն հեռարձակված և արխիվացված հեռուստահաղորդումները՝ հեղինակային և հեռարձակման իրավունքների խիստ պաշտպանությամբ:

2015 թվականին հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 9.6 տոկոսը՝ 2014 թվականի 15.4 տոկոսի փոխարեն:

Հեռուստահաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար 2,566.7 և 4,947.9 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 4,828.0 մլն դրամ:

2015 թվականին հատկացումների կտրուկ աճը պայմանավորված է՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված թեմատիկ ուղղություններին համապատասխան նոր հեռուստատեսային հաղորդաշարերի և հաղորդումների պատրաստմամբ և ձեռքբերմամբ, ֆիլմերի և հեղինակավոր միջազգային սպորտային, մշակութային և այլ նշանակալից միջոցառումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմամբ, Հանրային հեռուստաընկերության առևտրային գովազդի դադարեցման հետևանքով եկամուտների փոխհատուցմամբ, Հայաստանի Հանրապետությունում թվային հեռուստահեռարձակման ապահովման շրջանակներում հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալությամբ:

Հանրային հեռուստաընկերության տեխնիկական վերազինման նպատակով 2014-2015 թվականներին ձեռք է բերվել համապատասխանաբար՝ 178.0 և 296.4 մլն դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ նյութական և ոչ նյութական ակտիվներ, ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով հատկացվել է համապատասխանաբար 122.0 և 209.0 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 129.9 մլն դրամ:

Ավելին, ՀՀ Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև կնքված տեխնիկա-տնտեսական համագործակցության շրջանակներում Հանրային հեռուստաընկերությունը 2015 թվականին դրամաշնորհի տեսքով ստացել է տեխնիկապես վերազինված շարժական հեռուստակայան իր օժանդակ մեքենայով՝ 3,233.7 մլն դրամ արժողությամբ, իսկ Եվրոպական հեռարձակողների միության անդամակցության շրջանակներում անհատույց ստացել է արբանյակային ազդանշանի ընդունման ժամանակակից տեխնիկական սարքավորումներ՝ 78.2 մլն դրամ արժողությամբ:

Հանրային հեռուստաընկերությանը շենքերի և շինությունների հիմնանորոգման նպատակով 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար 220.0 և 135.0 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 200.0 մլն դրամ:

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում և Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է յուրաքանչյուր տարի իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքներ՝ հաշվի առնելով վերոհիշյալ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու համար ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 216-Ն որոշման համաձայն ստեղծվել է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը:

Հոգևոր-մշակութային հեռուսպաալիքի գործունեությունն ամբողջությամբ ուղղված է հոգևոր բարոյական արժեքների քարոզչությանը, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը:

2014-2015 թվականներին հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պատրաստել և օրական հեռարձակել է 18 ժամ տևողությամբ հեռուստահաղորդումներ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին ընկերությունը հեռարձակել է 6.578 ժամ հաղորդումներ 2014 թվականի՝ 6.591 ժամ հաղորդումների դիմաց, 7 թեմատիկ ուղղություններով (մշակութային լրատվություն, մշակութային հաղորդումներ, հոգևոր հաղորդումներ, երաժշտական ծրագրեր և համերգներ, մանկական հաղորդումներ, ուսումնական և այլ հաղորդումներ ու գիտահանրամատչելի, ուսումնական վավերագրական կինոնկարներ):

Մշակութային լրատվության հաղորդաշարերն են՝ «Ձայնագիր», «Մշակութային ազդագիր» և «Թեմա» հաղորդաշարերը: «Ձայնագիր» հեռուստահաղորդաշարը լուսաբանել է Հայաստանի երաժշտական կյանքը, ներկայացրել երևանյան համերգասրահներում կազմակերպված ժողովրդական, աշուղական, ակադեմիական և ժամանակակից երաժշտության նշանակալից միջոցառումները: 2015 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են Հայաստանում կայացած մի շարք երաժշտական փառատոներ՝ «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնը, «Երևանյան» միջազգային փառատոնը, «Արամ Խաչատրյան» միջազգային փառատոնը, «Վերադարձ» դասական երաժշտության փառատոնը, «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնը, «Նոր անուններ» միջազգային փառատոնը, ջազ և ռոք փառատոները: Ներկայացվել են նաև միջազգային հռչակ վայելող նվագախմբերի, դիրիժորների և կատարողների մասնակցությամբ, հայկական և եվրոպական հոգևոր երաժշտության, ազգային

երաժշտության, ավանդական երգ ու պարի համույթների, աշուղական երաժշտական համույթների համերգներ:

«Մշակութային ազդագիր» հաղորդաշարն իր լսարանին ներկայացրել է հանրապետության պատկերասրահներում, ցուցասրահներում ու թանգարաններում անցկացվող միջոցառումները, լուսաբանել մշակույթի ոլորտում վաստակ ունեցող անձանց գործունեությունը: 2015 թվականին հեռուստադիտողին ներկայացվել են հայաստանյան թատրոնների պրեմիերաներն ու խաղացանկերը: «Մշակութային ազդագիրը» հիմնական ու հատուկ թողարկումներով թատերասեր հանդիսատեսին հնարավորություն է տվել հետևել Հայաստանում կազմակերպված բոլոր կինո և թատերական փառատոններին՝ բրիտանական ֆիլմերի փառատոն, «Արևավիշապ» գրաֆիկական հումորի միջազգային փառատոն, կատարողական արվեստների փառատոն, Գաֆէսճեան արվեստի կենտրոնում կազմակերպված «Մեկ կադր» կարճ ֆիլմերի միջազգային փառատոն, Նորարար փորձառական արվեստի կենտրոնում (ՆՓԱԿ) կազմակերպված «Թատրոն իքս» հանրապետական թատերական փառատոն, երևանյան «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն, «Երկնքից 3 խնձոր ընկավ...» հեքիաթասացության և բարբառի փառատոն, «Գրական տապան» միջազգային փառատոն, «Հայֆեստ» միջազգային թատերական փառատոն և այլն:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը համագործակցում է «Շողակաթ» հեռուստաընկերության հետ, որի պատրաստած հոգևոր-մշակութային և հոգևոր-եկեղեցական հաղորդումները համահունչ են Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության ծրագրային քաղաքականությանը: 2015 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համագործակցության արդյունքում հեռարձակել է մի շարք հաղորդումներ («Գիրք ճանապարհի»՝ հայ գրականության պատմության մեջ շրջադարձային արժեք ունեցող գրական գործերի մասին, «Հանրագիտարան»՝ հայ և համաշխարհային գիտության, արվեստի ու հասարակական կյանքի մեծերի մասին տեսահանրագիտարան, «Թանգարաններ»՝ Հայաստանում գործող թանգարանները ներկայացնող հաղորդաշար, «Հայտնի և անհայտ կինո»՝ հանրահայտ ռեժիսորների կյանքն ու գործունեությունը ներկայացնող հաղորդաշար, «Հայ Առաքելական Եկեղեցու խորհուրդները»՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծեսերի խորհուրդն ու մեկնությունը, «Խորհուրդ խորին»՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Սուրբ Պատարագի մեկնությունը, «Մանուկ դպիրներ»՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում ծառայող մանուկների մասին. ովքեր են և ինչ արժեհամակարգում են մեծանում, «Դեպի տուն»՝ հաղորդաշար, որտեղ հայրենիք վերադարձած հայերը պատմում են իրենց գերդաստանի պատմությունը և խոսում հայրենիք վերադառնալու պատճառների մասին, և բազմաթիվ այլ հոգևոր-մշակութային հաղորդումներ:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

Հեռարձակման ծախսերը 2014-2015 թվականներին կազմել են ընդհանուր ծախսերի համապատասխանաբար՝ 33.4 և 32.6 տոկոսը:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային հաղորդումների արտադրության և հեռարձակման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար 147.8 և 150.2 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել ևս 150.2 մլն դրամ:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության տեխնիկական վերազինման նպատակով ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից հատկացվել է 7.6 մլն դրամ (ձեռք է բերվել համակարգչային և հեռուստատեսային տեխնիկա):

Հայաստանի հանրային ռադիոընկերության կողմից 2014-2015 թվականներին պատրաստվել և հեռարձակվել են հաղորդումներ հետևյալ ծավալներով՝ «Առաջին ծրագիր» և «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») ռադիոալիքներով օրական 24-ական ժամ, «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքով, սկսած 2015 թվականի հունիսի 1-ից՝ օրական 24 ժամ, արտասահմանի և Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների համար օտարալեզու հաղորդումներ՝ օրական 3 ժամ 15 րոպե:

Ստորև ներկայացված են Հանրային ռադիոընկերության կողմից 2014-2015 թվականներին հեռարձակված հաղորդումների ծավալները:

Աղյուսակ 10.4. 2014-2015 թվականներին Հանրային ռադիոընկերության կողմից հեռարձակված հաղորդումների ծավալները ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	**Հեռարձակված հաղորդումների ծավալները (ժամ)**	
	2014 թվական	**2015 թվական**
«Առաջին ծրագիր» ռադիոալիք, այդ թվում	**8,760.0**	**8,760.0**
Լրատվական, լրատվական-վերլուծական	1,414.0	1,402.0
Քաղաքական, տնտեսական, հասարակական	502.0	484.0
Մշակութային, պատմական	1,246.0	1,328.0
Երիտասարդական	751.0	516.0
Մանկապատանեկան	604.0	348.0
Կրթական և հայոց լեզու	264.0	304.0
Ժամանցային	568.0	1,077.0
Հոգևոր	266.0	190.0
Երաժշտական	2,904.0	2,800.0
Այլ	241.0	311.0
«Երկրորդ ծրագիր» (Իմ ռադիո) ռադիոալիք	**8,760.0**	**8,760.0**
«Հոգևոր-մշակութային» ռադիոալիք		**5,136.0**

ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի համար պատրաստվող հաղորդումներ, այդ թվում՝	**1,726.0**	**1,642.0**
ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հեռարձակման համար պատրաստվող (8 լեզուներով)	1,179.0	1,186.0
www.armradio.info կայքէջի համար պատրաստվող (5 լեզուներով)	547.0	456.0

Հանրային ռադիոընկերության ծրագրային քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ են ունեցել հաշմանդամների, տարեցների, ընտանիքի, կանանց, պատանիների, մանկավարժների, զինվորականների, գյուղացիների, արվեստագետների, ուսանողների և սոցիալական այլ խմբերի հիմնահարցերին վերաբերող հաղորդաշարերը: Ուշադրության առարկա են եղել գրեթե բոլոր ոլորտների և բնագավառների իրավական կարգավորմանն առնչվող հարցերը:

Հանրային ռադիոընկերության ծրագրային քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ են ունեցել հաշմանդամների, տարեցների, ընտանիքի, կանանց, պատանիների, մանկավարժների, զինվորականների, գյուղացիների, արվեստագետների, ուսանողների և սոցիալական այլ խմբերի հիմնահարցերին վերաբերող հաղորդաշարերը: Ուշադրության առարկա են եղել գրեթե բոլոր ոլորտների և բնագավառների իրավական կարգավորմանն առնչվող հարցերը:

Կարևորվել է Հանրային ռադիոյի եթերից հնչող կարծիքների հավասարակշռվածությունը, ներկայացվել են թե՛ իշխանական և թե՛ ընդդիմադիր գործիչների տեսակետները: Պետական, քաղաքական, սոցիալական ու մշակութային որևէ իրադարձություն դուրս չի մնացել Հանրային ռադիոընկերության տեսադաշտից: Ներկայացվել են հասարակական կյանքի տարբեր ոլորտների առավել ուշագրավ իրադարձությունները, ինչպես նաև ՀՀ կառավարության և Ազգային ժողովի գործունեությունը:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերում իրենց ուրույն տեղն են ունեցել երաժշտական հաղորդումները, որոնք կազմել են եթերի՝ համապատասխանաբար 33.2 և 32.0 տոկոսը: Երաժշտական հաղորդումների խմբագրությունը ունկնդրին մատուցել է հայկական, ժողովրդական, գուսանական, ազգագրական, ժամանակակից և դասական, բազմաժանր ու բազմաոճ երաժշտական ստեղծագործություններ՝ ներկայացնելով հայ մեծանուն կոմպոզիտորների արժեքավոր ստեղծագործությունները: Կազմակերպվել են ժամանակակից երաժշտական մշակույթի հիմնահարցերի պրոֆեսիոնալ քննարկումներ՝ արվեստագետների, մտավորականների, կոմպոզիտորների, երգիչների և բնագավառի հիմնահարցերով մտահոգ մասնագետների մասնակցությամբ: Մեծ լսարան են արձանագրել «Էտյուդներ», «Կամերտոն», «Երաժշտությունն ու մենք», «Արմատներ», «Մի գավաթ սուրճ Ալիսայի հետ...» հաղորդումները: Հաղորդացանցի ամբողջական նկարագիրն առավել հայեցի դարձնելու համար հաղորդումների

երաժշտական ձևավորման նախապատվությունը տրվել է հայկական մեղեդիներին: «Գանձարան» հաղորդաշարը ներկայացնում է Հանրային ռադիոյի ֆոնդում պահպանված բացառիկ ձայնագրությունները: Հանրային ռադիոյում շարունակել են իրենց գործունեությունը էստրադային սիմֆոնիկ նվագախումբը, «Սայաթ-Նովա» աշուղական երգի, «Արևիկ» մանկապատանեկան և Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլները: Վերջիններս համալրել են Հանրային ռադիոյի ֆոնդը նոր ձայնագրություններով, որոնք պարբերաբար հնչել են Հանրային ռադիոյի երաժշտական ծրագրերում:

Լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումները անդրադարձել են քաղաքական, հասարակական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին և 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին ծրագրի» ռադիոեթերի՝ համապատասխանաբար 16.1 և 16 տոկոսը:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագրի» եթերում շարունակել են հեռարձակվել մշակութային և պատմական մի շարք հաղորդումներ, որոնք 2014-2015 թվականներին կազմել են ռադիոեթերի՝ համապատասխանաբար 14.2 և 15.2 տոկոսը: Հաղորդումները ընդգրկում են հանրապետության և համաշխարհային մշակութային դաշտը բոլոր շերտերով:

Ռադիոլրագրության բազմազան ժանրերով (հարցազրույց, դիմանկար, ռադիոկոմպոզիցիա և այլն) պատրաստվող հաղորդումները՝ «Վերնատուն», «Մեկ դերասանի թատրոն», «Մեր ձայնադարանի ֆոնդից», «Գրական հանդիպումները», «Պոեզիա», «Նրանք ապրում են մեզ հետ», «Ասույթներ», «Մեծերի ձայնը», «Գիրք ճանապարհի», անդրադարձել են անցյալի և ներկայիս մշակութային բարձր արժեքներին ու ճանաչված արվեստագետներին, վեր հանել դաշտում առկա խնդիրները, որոնք միտված են օգնելու ձևավորվող մշակութային քաղաքականությանը:

Մշակութային հաղորդումները տարվա ընթացքում ընդգրկել են հայ ժողովրդի երևելիների հոբելյանները՝ երիտասարդ ունկնդրին ճանաչելի դարձնելով այն մտավորականներին ու արվեստագետներին, որոնց ստեղծածը հուսալի հենարան է կյանք մտնող սերունդների համար: Մշակութային և պատմական հաղորդումներից առանձնացել են նաև «Ժամանակի վկան», «Հայաստանը մեր տունն է» հաղորդումները:

Երիտասարդական հաղորդումներրը 2014-2015 թվականներին կազմել են ռադիոեթերի՝ համապատասխանաբար 8.6 և 5.9 տոկոսը: Այս հաղորդումներից առանձնանում է «Լյուն-Սե» ամենօրյա հաղորդաշարը, որը ներկայացնում է Հայաստանի, Արցախի և արտասահմանի երիտասարդական անցուդարձը:

Մանկապատանեկան հաղորդումները («Զարթուցիչ», «Հայ թեք», «Երեք ույու չորս», «Պստիկաշեն») 2014-2015 թվականներին կազմել են ռադիոեթերի՝ համապատասխանաբար 6.9 և 4.0 տոկոսը և ուղղորդված են տարբեր տարիքային խմբերի՝ ամենափոքրերից մինչև պատանեկան: Կրթադաստիարակչական և տեղեկատվական գործառույթների շնորհիվ խմբա-

գրությունը ձգտել է բավարարել երեխաների տեղեկատվական և կրթական հետաքրքրասիրությունը: Յուրաքանչյուր կիրակի եթեր է հեռարձակվել մանկական ռադիոթատրոն:

Ժամանցային հաղորդումները 2014-2015 թվականներին կազմել են «Առաջին ծրագրի» եթերի՝ համապատասխանաբար 6.5 և 12.3 տոկոսը: Այս հաղորդումներից առանձնանում են «Խելք խելքի» ինտելեկտուալ, ուսուցողական և ժամանցային հաղորդումը, «Կեսգիշերից առաջ» ժամանցային հաղորդումը, «Երգի պատմություն» երաժշտական-վերլուծական հաղորդումը, և «Առավոտը հանրայինում» հաղորդաշարը:

Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր» ռադիոալիքը («Իմ ռադիո»-ն) միտված է մատուցելու բազմաժանր ու բազմաոճ երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագրեր երիտասարդների համար, որոնք ներկայացնում են անցյալի մեծ վարպետների, ժամանակակից հայ և օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները:

Համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 27-ին N 36-Ա որոշման՝ Հանրային ռադիոընկերությանը տրամադրվել է նոր հաճախականություն, որով 2015 թվականի հունիսի 1-ից Երևան քաղաքում և հարակից շրջաններում եթեր է հեռարձակվել «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքը: Մասնավորապես, հեռարձակվել են «Գանձասար», «Ակունք», «Աշխարհայացք», «Հայելի», «Ծնողական ժողով», «Բնանկարի հայ վարպետները», «Հոգևոր զրույցներ», «Տաղարան», «Գիրք Սաղմոսաց», «Մտորումներ», «Կրոններ և մշակույթներ», «Երաժշտական կամուրջ» հոգևոր-մշակութային հաղորդումները և հաղորդաշարերը, որոնք ուղեկցվել են հայ և համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծագործություններով:

ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և արտասահմանի լսարանի համար 13 լեզուներով պատրաստվել են «Երևանի ձայն» ամենօրյա լրատվական հաղորդումները:

Հաղորդումներն օտարներին և աշխարհասփյուռ հայությանն են ներկայացրել հայաստանյան իրադարձությունները, ծանոթացրել Հայաստանի պատմությանը, արծարծել Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը, Հայ դատին և ցեղասպանության ճանաչմանը վերաբերող հարցեր: Արտասահմանի համար պատրաստվող օրվա բոլոր հաղորդումների ձայնագրությունները և տեքստերը տեղադրվել են Հանրային ռադիոընկերության www.armradio.info կայքէջում, ինչը ունկնդրին հնարավորություն է ընձեռում հաղորդումները կարդալ ու լսել օրվա ցանկացած ժամի: Հաղորդումներից 5-ը՝ ռուսերեն, ֆրանսերեն, վրացերեն, գերմաներեն և իսպաներեն, տեղադրվում են միայն կայքէջում, իսկ 8-ը՝ պարսկերեն, եզդիերեն, քրդերեն, ասորերեն, հունարեն, ադրբեջաներեն, թուրքերեն և արաբերեն, հեռարձակվում են նաև միջին և կարճ ալիքներով Մերձավոր Արևելքի և հարևան երկրների լսարանի համար:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով (եզդիերեն՝ 30 րոպե, ասորերեն՝ 15 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, հունարեն՝ 15 րոպե) հաղորդումներն ամեն օր հեռարձակվում են նաև Հայաստանի տարածքում:

2014-2015 թվականներին «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվել է ՀՀ ողջ տարածքում օրական 24 ժամ՝ գերկարճ տիրույթի հաճախականություններով (Երևանում՝ 107.7 Մհց), «Իմ ռադիո»-ն հեռարձակվել է Երևանում և Երևանի հարակից շրջաններում օրական 24 ժամ՝ 103.8 Մհց հաճախականությամբ, ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումները հեռարձակվել են կարճ ալիքով և գերկարճ տիրույթի հաճախականությունով, Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հաղորդումները 8 լեզուներով հեռարձակվել են միջին և կարճ ալիքներով, իսկ ՀՀ Ազգային ժողովի դռնբաց նիստերը ուղիղ եթերով հեռարձակվել են գերկարճ 69.7 Մհց հաճախականությունով:

«Հոգևոր-մշակութային» ռադիոալիքը հեռարձակվել է Երևանում և Երևանի հարակից շրջաններում՝ օրական 24 ժամ՝ 91.1 ՄՀց հաճախականությամբ:

Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Ռադիո» և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, ինչպես նաև Հանրային ռադիոընկերության սեփական տեխնիկական միջոցներով:

Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հեռարձակվել է նաև առցանց՝ www.armradio.am կայքէջով:

2015 թվականին հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 16 տոկոսը՝ 2014 թվականի 14.3 տոկոսի փոխարեն:

Ռադիոհաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 666.7 և 778.5 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 785.3 մլն դրամ:

2014-2015 թվականներին Հայաստանի հանրային ռադիոընկերությունը իրականացրել է շենքի հիմնանորոգման ծրագիր: Այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է յուրաքանչյուր տարի 50.0 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 70 մլն դրամ:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2014-2015 թվականներին պատրաստվել և հեռարձակվել են միջինում օրական, համապատասխանաբար 8.7 և 16.3 ժամ հեռուստահաղորդումներ և 24 ժամ ռադիոհաղորդումներ:

Հեռուստահաղորդումները 2014 թվականին հեռարձակվել են հինգ թեմատիկ ուղղություններով՝ քաղաքական (տնտեսական, հասարակական), մշակութային, մարզական, երաժշտական (ժամանցային) և այլ հաղորդումներ, իսկ 2015 թվականին ավելացել է ևս երկու ուղղություն՝ լրատվական (լրատվական-վերլուծական) և մանկական:

Ռադիոհաղորդումները 2014 թվականին հեռարձակվել են հինգ թեմատիկ ուղղություններով՝ լրատվական (լրատվական-վերլուծական), մշակութային, մարզական, երաժշտական (ժամանցային) և այլ հաղորդումներ, 2015 թվականին ավելացել է երկու ուղղություն՝ քաղաքական (տնտեսական, հասարակական) և մանկական, իսկ մարզական հաղորդումները դադարել են հեռարձակվել:

Նշված հեռուստառադիոհաղորդումների ուղղություններից գերակշռող ծավալ են ունեցել երաժշտական (ժամանցային) հաղորդումները, 2015 թվականին կազմելով հեռուստաեթերի 70.3 տոկոսը (2014 թվականին՝ 63.0 տոկոս), իսկ ռադիոեթերի 79.6 տոկոսը (2014 թվականին՝ 83.1 տոկոս):

Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում հեռարձակվել են գեղարվեստական և փաստագրական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, մուլտֆիլմեր, տեսահոլովակներ, հայ և արտասահմանյան երգիչ-երգչուհիների երաժշտական և համերգային տարբեր ծրագրեր, ինչպես նաև իր մշտական տեղն է ունեցել ազգագրական երգն ու պարը, իսկ Շիրակի հանրային ռադիոյի եթերում հեռարձակվել են «Շիրակի առավոտը միասին», «Աստղային պատմություններ» և «Մինչ կեսգիշեր» հաղորդաշարերը, ինչպես նաև մշտապես հնչել է հայկական, ռուսական և արտասահմանյան բարձրաճաշակ երաժշտություն:

Շիրակի հանրային հեռուստատեսության եթերում լրատվական, լրատվական-վերլուծական հաղորդումները 2015 թվականին կազմել են հեռուստաեթերի 11.9 տոկոսը, իսկ ռադիոեթերի 9.9 տոկոսը (2014 թվականին՝ 5.7 տոկոս): 2015 թվականից Շիրակի հանրային հեռուստառադիոյի հեռուստատեսության եթերում իր ուրույն տեղն է գտել «Օրագիծ» լրատվական ծրագիրը, որը բազմակողմանիորեն լուսաբանում է օրվա ընթացքում Շիրակի մարզում և Գյումրիում տեղի ունեցող հրատապ և ուշագրավ իրադարձությունները, ինչպես նաև անդրադառնում է Հայաստանում և աշխարհում կատարվող տնտեսական, քաղաքական, մշակութային ու միջազգային իրադարձություններին, և կիրակնօրյա «Հետագիծ» լրատվական-վերլուծականը, որը ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրադարձությունները:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացվել է Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը իրականացվել է FM տիրույթում՝ 102.5 ՄՀց հաճախականությամբ:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի միջոցով:

2015 թվականին հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 5.5 տոկոսը՝ 2014 թվականի 7.8 տոկոսի փոխարեն:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից հեռուստառադիոհաղորդումների արտադրության, ձեռքբերման և հեռարձակման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է՝ համապատասխանաբար 27.3 և 91.4 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 94.6 մլն դրամ:

2015 թվականին հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է հեռուստառադիոհաղորդումների ծավալների աճով:

2014-2015 թվականներին Շիրակի հանրային հեռուստառադիոն իրականացրել է տեխնիկական վերազինման ծրագիր: Այդ նպատակով 2014-2015 թվականներին Շիրակի հանրային հեռուստառադիոյին հատկացվել է՝ համապատասխանաբար 2.0 և 8.9 մլն դրամ:

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ն շարունակել է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը:

ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների շրջանակներում 2014-2015 թվականներին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը յուրաքանչյուր տարի իրականացրել է 10 հետազոտություն:

2015 թվականին իրականացված հետազոտություններն են՝ «Ռադիոն՝ որպես տեղեկատվության աղբյուր. Հանրային ռադիոյի լսարանի ակնկալիքների և գնահատականների չափում», «Հեռուստատեսության դերը հասարակության ձևավորման գործընթացում», «Հայկական հեռուստաալիքների վերաբերյալ հասարակական ընկալումների և պատկերացումների, լսարանի ուղերձների բացահայտում», «Հայկական հեռուստատեսության վերաբերյալ հասարակական ընկալումները և պատկերացումները, «Մարզային կարիքների գնահատում, ԶԼՄ-ում կարիքների ներկայացման չափում», «Հասարակության սոցիալ-հոգեբանական մթնոլորտի չափում, հեռուստատեսության ազդեցությունը սոցիալ-հոգեբանական մթնոլորտի վրա», «Սփյուռքի հայկական համայնքներում հայապահպանության իրականացման գործում հեռուստատեսության և ռադիոյի դերը» և երեք առանձին սոցիոլոգիական հետազոտություններ, որով ուսումնասիրվել են հասարակության ընկալումները ազատության ֆենոմենի, հավասարության և անկախության հայեցակարգերի վերաբերյալ:

2015 թվականին Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից պատրաստվել է «Հարթակ» ռադիոհաղորդաշարը: Հաղորդաշարի նպատակն է հնչեցնել հանրության կարծիքն ու փորձագետների տեսակետները հանրությանը հուզող բազմաթիվ հարցերի շուրջ: Ռադիոհաղորդաշարի շրջանակներում ներկայացվող թեմաների վերաբերյալ իրականացվել են ընդհանուր առմամբ 25 սոցիոլոգիական հետազոտություններ, որոնք ուղղված են եղել հաղորդման շրջանակներում արծարծվող թեմաների վերաբերյալ փաստացի և հիմնավորված տվյալներ ներկայացնելուն, թեմաների վերաբերյալ իրականացված սոցիոլոգիական

հետազոտությունների տվյալները հասարակության լայն զանգվածներին հասանելի դարձնելուն: 2015 թվականի մարտ ամսից սկսած պատրաստվել է 36 ռադիոհաղորդում, որոնք շաբաթական մեկ անգամ հեռարձակվել են Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր» ռադիոալիքի եթերով՝ 25-30 րոպե տևողությամբ:

Այդ աշխատանքներն իրականացնելու նպատակով 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է՝ համապատասխանաբար 9.4 և 44.7 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 44.3 մլն.դրամ:

2015 թվականին հատկացումների աճը պայմանավորված է բարձրակարգ մասնագետների ներգրավման միջոցով պարբերական սոցիոլոգիական հետազոտությունների ծավալի ավելացմամբ և որակի բարձրացմամբ, ինչպես նաև սոցիոլոգիական հետազոտությունների քանակի աճով:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը այլ եկամուտների հաշվին 2015 թվականին իրականացրել է «Սփյուռքահայերի սոցիալ-մշակութային կարիքների ուսումնասիրում» սոցիոլոգիական հետազոտությունը, որն ուղղված է եղել բացահայտելու Սփյուռքի հայ համայնքների ներկայացուցիչների մշակութային կարիքները, նկարագրելու լեզվական, կրթական և մշակութային բնութագիչները, դուրս բերելու հայոց լեզվի պահպանման խնդիրները, Սփյուռքի հայ համայնքների ներկայացուցիչների միջև սոցիալական կապերը, հարաբերությունները, ազգային ինքնության և հայի հետ նույնականացման տարրերը:

Հանրային հեռուստաընկերությունը և Հանրային ռադիոընկերությունը 2015 թվականին ապահովել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի՝ Երևանի պետական համալսարանի հետ համատեղ ստեղծած «Մասս մեդիա» կրթական կենտրոնի բնականոն գործունեությունը: Կրթական կենտրոնի նպատակն է՝ մեդիաարտադրության ոլորտի բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող կադրերի շարունակական որակավորումը, որն էլ հետագայում կնպաստի Հանրային հեռուստառադիոընկերության ենթակայության տակ գտնվող ընկերություններում սահուն սերնդափոխությանը:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 2014 թվականին՝ 119.9 մլն դրամ, 2015 թվականին՝ 131.9 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 145.0 մլն դրամ:

«Տնտեսական վերլուծությունների ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2015 թվականին պատրաստվել է 58 հեռուստահաղորդումներ, 2014 թվականի՝ 80 հաղորդումների դիմաց (շեշտը դրվել է յուրաքանչյուր հաղորդման մեջ ներկայացվող թեմաների քանակի, արդիականության, հրատապության և այլ որակական ցուցանիշների վրա):

Հեռուստահաղորդումների, էլեկտրոնային կայքերի, հանրապետական թերթերի, սոցիալական ցանցերի վերաբերյալ հրապարակումների թիվը 2014-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 400 և 1.800 միավոր:

2014 թվականից սկսած իրականացվել են ՀՀ կառավարության գործունեությանն առնչվող տեղեկատվական ռեսուրսների վերլուծություններ ու ուսումնասիրություններ, այդ թվում՝ մասնագիտական վերլուծություններ, որոնց հիման վրա պատրաստվել են տեղեկատվական և վերլուծական հոդվածներ և հրապարակումներ, ապահովվել են պատրաստի նյութերի տեղաբաշխումը սոցիալական ցանցերում, հեռուստաեթերում, էլեկտրոնային և տպագիր ԶԼՄ-ներում: 2015 թվականին պատրաստվել է 8.400 վերլուծական նյութ:

«Տնտեսական վերլուծությունների ծառայություններ» ծրագրի իրականացման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է յուրաքանչյուր տարի 191.2 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 191.5 մլն դրամ:

«Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում» ծրագրի շրջանակներում 2014-2015 թվականներին իրականացվել է «Սփյուռքի ժամ» հաղորդաշարը, աջակցություն է ցուցաբերվել «Մերոնք», «Տեսանկյուն», «Ժառանգորդի իրավունքով» հաղորդաշարերին, «Արմնյուզ» հեռուստաընկերության «Աշխարհասփյուռ» հաղորդմանը, «Հայ Սփյուռք» ֆիլմաշարին, Հայոց լեզվի ուսուցողական ծրագրերի իրականացմանը: Աջակցություն է ցուցաբերվել նաև «Ավանգարդ», «Գոլոս Արմենիի» թերթերին և aravot.am, news.am, tert.am լրատվական կայքերին:

Ծրագրի շրջանակներում պատրաստվել են ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերը ներկայացնող տեսահոլովակներ:

2014 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցները կազմել են՝ 49.8 մլն դրամ, 2015 թվականին՝ 51.8 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 52.6 մլն դրամ:

<u>Հրատարակչական և տեղեկատվական բնագավառ</u>

Հրատարակչական և տեղեկատվական ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ գրքային արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը, տարածումն ու հանրահռչակումը, բնակչության՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովումը, գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Հրատարակչական և տեղեկատվական բնագավառում հիմնական ծրագրերն են՝ «Գրականության հրատարակում», «Աջակցություն գրականության հրատարակմանը», «Պետական մամուլի հրատարակում», «Ոչ պետական մամուլի հրատարակում», «Գրական ժառանգության պահպանում և տարածում», «Հրատարակչական, տեղեկատվական, տպագրական ծառայություններ»,

«Թարգմանչական ծառայություններ», «Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայություններ», «Հանրային իրազեկման ապահովում», ինչպես նաև Սփյուռքի հայապահպանության ծրագրերը:

Գրքային արտադրանքի միջոցով գրական-մշակութային ժառանգության պահպանման, զարգացման, տարածման ու հանրահռչակման ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից ստացվող հատկացումներն ուղղորդվում են «Գրականության հրատարակում» և «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրերի իրականացմանը:

«Գրականության հրատարակում» ծրագրի շրջանակներում 2014-2015 թվականներին առանցքային տեղ է ունեցել հայկական մշակութային ժառանգության հանրահռչակմանը նվիրված գրականության հրատարակումը:

Հրատարակվել են ճարտարապետությանը, գեղանկարչությանը և մանրանկարչությանը նվիված ուսումնասիրություններ և ալբոմներ («Քրիստոնեաարևելյան գորգը», «Հայ մանրանկարիչներ» մատենաշար, «Հայկական հուշարձանները կերպարվեստում», «Իմպրեսիոնիզմի ժառանգությունը և հայ գեղանկարչությունը 19-20-րդ դդ. առաջին կեսին», «Արարատ», «Հայկական գունապնակ» մատենաշար և այլն):

Ընդգրկուն է եղել Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված գրականության հրատարակությունը՝ հրատարակվել են ուսումնասիրություններ, ականատեսների վկայություններ, գիտահանրամատչելի և գեղարվեստական գրականություն, ինչպես հայերեն, այնպես էլ այլ լեզուներով («Կոմիտաս. կյանքն ու ստեղծագործությունը» (գիտահանրամատչելի վեպ), «Թուրքիան և հայկական հարցը» (ուսումնասիրություն, ռուսերեն), «Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում բռնաճնշումների և ցեղասպանության ենթարկված հայ բժիշկներ», «Հայերի ցեղասպանությունը և եվրոպական հրապարակախոսությունը» (ռուսերեն), «Դարի կողոպուտ. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ.» (անգլերեն) և այլն):

Զգալի տեղ է հատկացվել հոբելյանական գրականության («Արմեն Գուլակյան» (կյանքն ու գործունեությունը), «Հուշարձան» (Հրաչյա Հովհաննիսյանի կյանքն ու գործը), Թորոս Թորամանյանի «Նամականի», Պարույր Սևակի «Պոեմներ» և այլն), մանկական պատկերազարդ գրականության («Փիթր Փեն» (վիպակ), «Տարբեր ժողովուրդների հեքիաթներ» (հայերեն), «Պինգ-Վինը» (պատմվածքների ժողովածու) և այլն), սփյուռքահայ գրականության («Ավազե ամրոցի աղջիկները» (վեպ), «Հայու բեկորներ» («Սփյուռքահայ գրողներ» մատենաշար), «Ընտրանի» («Սփյուռքահայ գրողներ» մատենաշար) և «Դպրոցական գրադարան» մատենաշարի («Վերք Հայաստանի. Ողբ հայրենասերի» (վեպ) և «Սպանված աղավնի» (պատմվածքներ, վիպակ) հրատարակմանը:

«Գրականության հրատարակում» ծրագրով 2014-2015 թվականներին հատկացվել է յուրաքանչյուր տարի 102.0 մլն դրամ, որն ուղղվել է 10 և 6 ենթաուղղությունների, 55 և 40 անուն գրքերի հրատարակմանը (2012-2013 թվականներին հատկացվել է համապատասխանաբար 92.4 և 102.0 մլն դրամ, որն ուղղվել է 9 և 12 ենթաուղղությունների, 56 և 58 անուն գրքերի հրատարակմանը): 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 77.2 մլն դրամ (6 ենթաուղղություն, 27 անուն գրքի հրատարակում):

«Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրով հիմնականում աջակցություն է ցուցաբերվել ժամանակակից գրողների աշխատանքների հրատարակմանը, այդ թվում՝ սկսնակ գրողներին՝ հրատարակելու իրենց գիտահանրամատչելի և գեղարվեստական ստեղծագործությունները, թարգմանելու և տարածելու ինչպես հայ գրականության նշանակալի ստեղծագործություններն օտար լեզուներով, այնպես էլ այլ ժողովուրդների գրականության արժեքավոր նմուշները՝ հայերեն:

«Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրով 2014-2015 թվականներին հատկացվել է՝ համապատասխանաբար 40.0 և 39.1 մլն դրամ, որն ուղղվել է 10 և 9 ենթաուղղությունների, 54 և 61 անուն գրքերի, հոբելյարներին նվիրված 6 և 7 էլեկտրոնային հրատարակությունների թողարկմանը (2012-2013 թվականներին հատկացվել է 39.6 և 39.1 մլն դրամ, որն ուղղվել է յուրաքանչյուր տարի 10 ենթաուղղությունների, 64 և 74 անուն գրքերի հրատարակմանը, այդ թվում՝ էլեկտրոնային հրատարակությունների թողարկմանը): 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 64.8 մլն դրամ (10 ենթաուղղություն, 84 անուն գրքի հրատարակում և 8 էլեկտրոնային հրատարակությունների թողարկում):

«Գրական ժառանգության պահպանում և տարածում» ծրագրով 2014-2015 թվականներին կազմակերպվել է յուրաքանչյուր տարի 17 գրքի, տպագիր արտադրանքի և այլ հրատարակությունների շնորհանդեսներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ (ներառյալ միջազգային), 19 գիտական համաժողովներ, գրական փառատոներ, մրցույթներ, երեկոներ:

«Գրական ժառանգության պահպանում և տարածում» ծրագրով 2014-2015 թվականներին հատկացվել է՝ համապատասխանաբար 26.3 և 26.4 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 26.5 մլն դրամ:

Ընդլայնվել են հայ գրքին նվիրված և ընթերցանության խթանմանը նպաստող հանրապետական միջոցառումները: Համագործակցելով ոլորտի մասնավոր և հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների հետ՝ ՀՀ մշակույթի նախարարությունն աջակցել է Հայաստանի մարզերում և Լեռնային Ղարաբաղում գրքի ցուցահանդես-տոնավաճառներին, հայ գրողների ստեղծագործությունների թարգմանությանն այլ լեզուներով, հայ ժամանակակից գրողների հոբելյանների կազմակերպմանը, գրքի վարկի բարձրացմանը և ընթերցանության խթանմանը նպաստող բազմաբնույթ միջոցառումների և փառատոների

կազմակերպմանը («Մանկական գրքի միջազգային օր», «Պոեզիայի համաշխարհային օր», «Գիրք նվիրելու օր», «Մուտքը՝ գրքով», «Մանկապատանեկան գրքի շաբաթ», «Գրքարվեստ» հանրապետական մրցույթ և այլն):

2015 թվականին կազմակերպված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Գրական տապան-ապրիլ» փառատոնը (մասնակցում էին Հայոց ցեղասպանության թեմայով ստեղծագործած գրողները) և «Գրական տապան 2015» ամենամյա միջազգային փառատոնը կրում էին «Խոսք հանուն կյանքի» և «Գրողը և XXI դարի աղետների մարտահրավերը» խորագրերը: «Գրական տապան 2015»-ի շրջանակում կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ հայ գրողների և արտասահմանյան հյուրերի մասնակցությամբ: Տեղի են ունեցել անվանի գրողներ Քրիս Բոհջալյանի «Ավազե ամրոցի աղջիկները», Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյան» և այլ գրքերի հայերեն թարգմանությունների շնորհանդեսները:

«Գաֆէսճեան» արվեստի կենտրոնում սեպտեմբերի 24-26-ը կայացել է Armbook Expo ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են Հայաստանի և Հայոց ցեղասպանության թեմայով Հայաստանում և աշխարհում 2015 թվականին հրատարակված գրքերը (հրատարակվել է ցուցահանդեսի կատալոգը):

Արտերկրում՝

Հայաստանը մասնակցել է գրքի միջազգային 15 ցուցահանդես-տոնավաճառի՝ Մինսկի, Փարիզի, Լոնդոնի, Թեհրանի, Սալոնիկի, Վարշավայի, Նյու Յորքի, Մոսկվայի, Գյոտեբորգի, Ֆրանկֆուրտի և այլն:

Մասնակցություն է ապահովվել գրական նախագծերի՝ Ռումինիայի «Curtea de Arges Poetry Nights» պոեզիայի միջազգային փառատոնին (ներկայացվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված «Հողը կը խօսի» գիրքը) և Լեհաստանի Բիգդոշչ քաղաքի պոեզիայի միջազգային 4-րդ սիմպոզիումին:

«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումի համատեքստում 2015 թվականի ապրիլի 22-23-ը Հայաստանի ազգային գրադարանը ներկայացրել է «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» խորագրով ցուցադրությունը՝ նվիրված Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին, որտեղ ընդգրկված էին Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրական, գեղարվեստական, պատմական, վերլուծական, հրապարակախոսական բնույթի շուրջ 3.0 հազար գրքերից 900-ը՝ հրատարակված աշխարհի 37 երկրում 23 լեզուներով:

2014-2015 թվականներին Հայոց ցեղասպանության թեմայով աշխարհում հրատարակվել է 360 գիրք, որից 119-ը՝ Հայաստանում (88-ը՝ հայերեն, 31-ը՝ օտար լեզուներով), 241 օտարալեզու գիրք՝ այլ երկրներում: Իրականացվել են՝ «Ավազե ամրոցի աղջիկները» (Ք. Բոհջալյան՝ լատվիերեն), «1915. Արհավիրքի օրեր» (Վ. Մինախորյան՝ ռուսերեն), «Շշուկների մատյան» (Վ. Ոսկանյան՝ պարսկերեն), «Աքսորվածները» (Ջոյս Վան Դայկ՝ հայերեն), «Անրի Վեռնոյ.

հայազգի տարագրից մինչև ժողովրդական կինոյի մեծ բանասեր» (Ռոժե Վինյո՝ հայերեն), «Նեմեսիս» (Պ. Կոսիի՝ հայերեն և ռուսերեն), «1915 թվականին հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործության դատապարտման իրավական հիմքերը» (Ռոդնի Դաքեսյան՝ հայերեն), «Հայաստանի պատմությունը քարտեզներում» (Ռ. Գալչյան՝ անգլերեն), «Կոմիտաս» (Ա. Շահ-նազարյան՝ հայերեն), «Մամփրե արքան» (Մ. Գալշոյան՝ անգլերեն), «Գյուլունյա» (Մ. Եսայան՝ անգլերեն), «Երևան-Փարիզ. 1915-1940» (Ռ. Անգալադյան՝ հայերեն-ֆրանսերեն), «Եղեռն՝ եղեռնից հետո» (Ս. Կարապետյան՝ հայերեն-անգլերեն) գրքերի թարգմանություններն ու հրատարակությունները:

Բնակչության՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովման ուղղությամբ.

«Պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են՝ «Հայաստանի Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթերի հրատարակմանը:

2014-2015 թվականներին հատկացվել է՝ համապատասխանաբար 70.8 և 72.2 մլն դրամ (2012-2013 թվականներին աջակցության չափը կազմել է 68.9 և 69.8 մլն դրամ): 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 73.1 մլն դրամ:

«Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով նախատեսված հատկացումները հնարավորություն են տալիս ապահովել ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող, գրական մշակութային, էլեկտրոնային, մարզական, մարզային և այլ բնույթի ոչ պետական մամուլի շարունակականությունը, հայերեն և ազգային փոքրամասնությունների լեզուներով ստանալ և տարածել տեղեկատվություն, ծանոթանալ հանրապետության գրական-մշակութային կյանքին, հանրապետական, տարածաշրջանային և միջազգային անցուդարձին:

Ծրագրի իրականացումը կարևոր է մասնավորապես ազգային փոքրամասնությունների համար, որոնք կարողանում են դրա շնորհիվ զարգացնել իրենց ազգային լեզուն և գրականությունը:

2014-2015 թվականներին աջակցություն է ցուցաբերվել համապատասխանաբար 69 և 62 անուն թերթի և ամսագրի հրատարակմանը, որի համար հատկացվել է 47.7 և 47.1 մլն դրամ (2012-2013 թվականներին աջակցություն է ցուցաբերվել տարեկան 69 անուն թերթի և ամսագրի հրատարակմանը, որի համար հատկացվել է 47.8 և 47.4 մլն դրամ): 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 49.1 մլն դրամ:

«Հրատարակչական, տեղեկատվական, տպագրական ծառայություններ» ծրագրով 2014-2015 թվականներին նախատեսված հատկացումների շրջանակներում հրատարակվել են՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր՝ 1,067.0 և 1,311.4 հազ. մամուլով, Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրեր՝ 461.3 և 417.5 հազ. մամուլով, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրեր (ռուսերեն)՝

5.4 և 12.7 հազ. մամուլով, Երևանի իրավական ակտերի տեղեկագրեր՝ 33.5 և 19.9 հազ. մամուլով, քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու 661.0 և 753.8 հազ. մամուլով: 2015 թվականին հրատարակվել է նաև ՀՀ Սահմանադրությունը՝ 600.0 հազ. մամուլով, որի համար ՀՀ կառավարության 17.12.2015 թվականի N 1471-Ն որոշմամբ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ արդարադատության նախարարությանը հատկացվել է 33.0 մլն դրամ:

Նշված ծրագրի հատկացումների շրջանակներում ձեռք է բերվել նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացում օգտագործվող պոլիգրաֆիական արտադրանք (պետական գրանցումների վկայականներ, գրանցամատյաններ, ձևեր), ինչպես նաև հրատարակվել և տպագրվել են միջազգային պայմանագրեր, մուտքի վիզաներ, ՀՀ վերադարձի վկայականներ և պաշտպանված ձևաթղթեր:

2014-2015 թվականներին ծրագրով հատկացվել է համապատասխանաբար 401.3 և 432.5 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 386.5 մլն դրամ:

«Թարգմանչական ծառայություններ» ծրագրով նախատեսված հատկացումները ուղղվում են ՀՀ, ԵՄ և ՄՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ինչպես նաև ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ այլ առանցքային փաստաթղթերի թարգմանության իրականացմանը, համապատասխանաբար՝ հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն, հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն:

Նշված ծրագրի շրջանակներում թարգմանված էջերի ծավալը 2014 թվականին կազմել է՝ 20.302 էջ, 2015 թվականին՝ 21.871 էջ, 2016 թվականին նախատեսվում է թարգմանել 25.588 էջ:

Թարգմանչական ծառայությունների իրականացման համար 2014-2015 թվականներին հատկացվել է 172.5 և 185.9 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 217.5 մլն դրամ:

2014-2015 թվականներին իրականացվել են նաև Սփյուռքի հայապահպանության ծրագրեր՝ «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ», «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» և «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում:

«Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2014 և 2015 թվականներին շարունակվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային օրաթերթի հրատարակման, արևմտահայերենից՝ արևելահայերեն և հակառակը՝ փոխարկչի շտեմարանի ընդլայնման, էլեկտրոնային գրադարանի և Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարանի սպասարկման աշխատանքները:

Էլեկտրոնային գրադարանում արդեն մուտքագրվել է ավելի քան 1.300 գիրք, հոդված, ձայնագրություն և այլ նյութեր՝ Հայաստան-Սփյուռք գործակցության շրջանակներում

համայնքների պատմության, ցեղասպանության, արցախյան հիմնախնդրին առնչվող գիտական, վերլուծական, գեղարվեստական պատմական գրականություն, ինչպես նաև մանկական գրականություն և դասագրքեր: 2014-2015 թվականներին մուտքագրվել է համապատասխանաբար՝ 300 և 350 գիրք:

«Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ծրագրի իրականացման նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է յուրաքանչյուր տարի 33.0 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է նույնպես հատկացնել 33.0 մլն դրամ:

«Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» ծրագիրը մեկնարկել է 2010 թվականին:

Ծրագիրը շարունակվել է 2014-2015 թվականներին, 2014 թվականին Սփյուռքի կրթօջախների կողմից ստացվել է ավելի քան 130.000 կտոր գրականության պահանջ, որի դիմաց առաքվել է 45.046 կտոր ուսումնական նյութեր, 2015 թվականին առաքվել է 50.300 կտոր ուսումնական գրականություն և էլեկտրոնային նյութեր:

Այդ նպատակով 2014-2015 թվականներին հատկացվել է յուրաքանչյուր տարի 10.0 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է նույնպես հատկացնել 10.0 մլն դրամ:

2014-2015 թվականներին շարունակվել է նաև «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակումը, 2014 թվականին տարեգիրքը հրատարակվել է 2.500 օրինակով, իսկ 2015 թվականին՝ 2.100 օրինակով:

«Հայկական սփյուռք» եռալեզու տարեգիրքը յուրօրինակ հաշվետվություն և պատմագրություն է հայկական սփյուռքի մասին, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում ծանոթանալ Հայաստանում և Սփյուռքում համահայկական կազմակերպությունների, հոգևոր կառույցների, Հայ համայնքների, ՀՀ պետական մարմինների կողմից իրականացված հիշարժան ծրագրերին, միջոցառումներին:

2014-2015 թվականներին տարեգրքի հրատարկման համար հատկացվել է՝ համապատասխանաբար 7.9 և 7.8 մլն դրամ, 2015 թվականին նախատեսվում է հատկացնել 8.2 մլն դրամ:

10.2.1.3. Հիմնական խնդիրները

Հեռուստառադիոհաղորդումների բնագավառում հիմնական խնդիրներն են.

✡ շարունակել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության տեխնիկական վերազինման և շենք-շինությունների հիմնանորոգման փուլային աշխատանքները,

✡ թվային տեխնոլոգիաներին անցման միջոցով բարձրացնել հաղորդումների հեռարձակման որակը և ապահովել համապատասխանությունը միջազգային չափանիշներին,

✡ պատրաստել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը

լսարանի հետ, արձագանքում են ոչ միայն հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին, այլև հանպատրաստից բարձրացնում են նոր հարցեր և փնտրում ոչ ստանդարտ լուծումներ,

✡ ավելացնել այն հաղորդումների քանակը, որոնք վերաբերում են հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի՝ ծերերի, ծնողազուրկ երեխաների, հսկողությունից դուրս մնացած դեռահասների, գործազուրկների և հաշմանդամների խնդիրներին, ինչպես նաև հանրության մեջ նրանց նկատմամբ ձևավորել համարժեք և հանդուրժողական վերաբերմունք,

✡ բոլոր հաղորդումներում սահմանել կենդանի, բայց կանոնական հայերենի գերակայությունը՝ որպես եթերի լեզվական քաղաքականության առանցքային պայման: Իրականացնել ազգային երգի և երաժշտության հանրահռչակումը՝ շարունակելով համապատասխան հաղորդաշարերի և համերգների հեռարձակումն ու պատրաստելով նորերը, ներկայացնել հայ ժողովրդի պատմության ուսանելի և հաղթական դրվագները, բացահայտել պատմության առեղծվածները,

✡ շարունակել հեռարձակել ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, պաշտպանության նախարարության, ոստիկանության գերատեսչական հաղորդումները, զանազան հաղորդումներում պատշաճ առիթներով մեծարել զոհված և ողջ մնացած հերոսներին,

✡ ցուցադրել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմեր, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացում, ճանաչելի և սիրելի դարձնել հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց,

✡ մշտապես ուշադրության կենտրոնում պահել հանրության համար կարևոր որոշումների քննարկման և ընդունման ընթացքը,

✡ Երևանի պետական համալսարանի հետ համատեղ մշակված կրթական ծրագրի շրջանակներում գործող «Մասս մեդիա» կրթական կենտրոնում շարունակել նեղ մասնագիտացված հեռուստատեսային արհեստավարժ կադրերի պատրաստումը,

✡ մշակել և կիրառել հանրային կարծիքի ուսումնասիրման նորագույն մեթոդներ՝ ավելի արդյունավետ և նպատակային դարձնելով հաղորդումների հասցեականությունն ու ծրագրման աշխատանքները, պահպանել անհրաժեշտ համամասնություն սոցիալական խմբերի խնդիրների լուսաբանման ոլորտում,

✡ ապահովել օտարերկրյա ֆիլմերի և հաղորդումների կրկնօրինակման և թարգմանության բարձր որակ,

✡ ընդլայնել հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի և Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաև եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները,

✡ ժամանակակից տեխնիկական լուծումների շնորհիվ մշտապես նորացնել Հանրային հեռուստաընկերության համացանցային կայքը՝ հնարավորություն ընձեռելով Հայաստանի և

սփյուռքի հեռուստադիտողներին ուղիղ եթերում բարձր որակով հետևելու Հանրային հեռուստատեսության միջազգային ալիքով հեռարձակվող հաղորդումներին ու լրատվությանը, ինչպես նաև դիտելու արդեն հեռարձակված հաղորդումներն ու փաստագրական ֆիլմերը,

✡ թվայնացնել վերջին 50 տարիների հայաստանյան կարևոր իրադարձություններին վերաբերող արխիվային նյութերը, ստեղծել քարտարան և համացանցային կայքէջի միջոցով ապահովել նյութերի հասանելիությունը,

✡ իրազեկել հասարակությանը ՀՀ կառավարության գործունեության, իրականացվող ծրագրերի և առկա խնդիրների մասին և դարձնել մասնակից իրականացվող բարեփոխումներին,

✡ պահպանել և արմատավորել Սփյուռքի հայկական համայնքներում ազգային ինքնությունը, կանխել ուծացումը, նպաստել հայոց լեզվի, ազգային, մշակութային ավանդույթների պահպանմանը, ինչպես նաև Սփյուռքի համայնքներին ապահովել Հայաստանի մասին լիարժեք և հավաստի տեղեկատվությամբ:

Հրատարակչական և տեղեկատվության բնագավառում հիմնական խնդիրներն են.

✡ ներկայացնել թարգմանական գրականության միջոցով հայ մշակույթը արտերկրում և համաշխարհային գրականությունը հայ ընթերցողին,

✡ բարձրարժեք գրականությանը և որակյալ հրատարակումներին աջակցելու միջոցով խթանել գրաշուկայի զարգացումը, աջակցել հայաստանյան և արտերկրի հրատարակիչների հրատարակչական նախաձեռնություններին, որը հնարավորություն կտա բարձրացնել տպագիր արտադրանքի որակը, նպաստել հեղինակների հետ համագործակցությանը,

✡ պահպանել և զարգացնել գրահրատարակչության ազգային ավանդույթները, գրքային արտադրանքի միջոցով վերհանել ու նորովի վերարժևորել անցյալի արժեքները,

✡ նպաստել հրատարակվող գրականության պոլիգրաֆիական որակի բարձրացմանը,

✡ ապահովել սփյուռքի համայնքներում Հայաստանի մասին լիարժեք և հավաստի տեղեկատվության մատչելիությունը,

✡ խթանել ընթերցանությանը, ապահովելով գրքերի վաճառքի գնի մատչելիությունը:

10.2.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.2.2.1. Նպատակները

Հեռուստառադիոհաղորդումների բնագավառի նպատակներն են.

◆ Հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անաչառ, հավաստի, օպերատիվ, համակողմանի, ամբողջական և սպառիչ լուսաբանման ապահովում,

◆ Հանրության սեռային, տարիքային, սոցիալական, էթնիկական բոլոր խմբերի բարոյական և գեղագիտական պահանջմունքների բավարարում՝ առաջնորդվելով համամարդկային և ազգային բարձր արժեքների պահպանման և հանրահռչակման սկզբունքով,

◆ Հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության, գթասրտության և հանդուրժողականության գաղափարների տարածմանը նպաստում,

◆ Հայ ժողովրդի պատմական հիշողության, լեզվի, գրականության, ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանմանն ու հարատևմանը միտված հանրային ձեռնարկումների խթանում՝ ապահովելով դրանց լուսաբանման շարունակական և հարաճուն ընթացքը,

◆ աջակցում մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը միտված հանրային ձեռնարկումներին՝ երեխաների մեջ ձևավորելով օրինակելի, բարոյական և գեղագիտական արժեքների ընկալման մշակույթ,

◆ Հայկական աշխարհի միասնական տեղեկատվական դաշտի ձևավորում՝ նպաստելով Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը, հայ ներուժի համախմբմանը և արտերկրի հայ գաղթօջախներում հայապահպանությանը:

Հրատարակչական և տեղեկատվության բնագավառի հիմնական նպատակներն են.

◆ Գրքային արտադրանքի միջոցով հայ ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում, տարածում և հանրահռչակում,

◆ Բնակչության՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի ապահովում,

◆ Գրատարածման բնագավառում միջազգային համագործակցության զարգացում,

◆ Իրավական ակտերի թարգմանությունների մատչելիության ապահովում, երկրի միջազգային պարտավորությունների պատշաճ կատարում,

◆ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև կապերի ամրապնդում, սփյուռքահայության ազգային, լեզվամշակութային ինքնության պահպանում, մայրենի լեզվի մոռացության, հայկական մշակութային արժեքները կորցնելու վտանգի, ուծացման դեմ պայքարում:

10.2.2.2.Գերակայությունները

Հեռուստառադիոհաղորդումների բնագավառում 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի համար հիմք է հանդիսանում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստառադիոընկերությանն ամրագրված լիազորությունների իրականացումը՝ մասնավորապես օրենքով սահմանված թեմատիկ ուղղություններով հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման ապահովումը:

2017-2019 թվականներին հեռուստառադիոհաղորդումների գերակա ուղղություններն են.

- Հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայալեզու, սեփական և հայրենական արտադրության հաղորդումների բազմազանության ապահովում, հաղորդումների բովանդակության և որակի բարելավում (հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.2.8.4. Հեռահաղորդակցությունը» բաժին):
- Սփյուռքում հայապահպանությանն աջակցելու, երիտասարդության շրջանում մայրենի լեզվի նշանակալիությունը բարձրացնելու, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցության ակտիվացմանը նպաստելու նպատակով հանրային հեռուստատեսության միջազգային ալիքով հեռարձակվող հաղորդումների բովանդակության և որակի բարելավում (*հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.1.3. Սփյուռքը» բաժին):*
- Տեխնիկական վերազինման և նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում և տարածքից դուրս հաղորդումների հեռարձակման բարձր որակի, ինչպես նաև EBU-ի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան տեխնիկական մակարդակի ապահովում (*հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.2.8.4. Հեռահաղորդակցությունը» բաժին)*:

Հրատարակչական և տեղեկատվության բնագավառում 2017-2019 թվականներին գերակա ուղղություններն են.

•Գրքային արտադրանքի միջոցով հայ ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանում, զարգացում, տարածում և հանրահռչակում (*հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժին):*

•Հայոց պատմությանը, մշակույթին, հայ մեծերին նվիրված գրականության հանրահռչակում (*հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժին):*

•«Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրի շեշտադրում (*հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժին):*

- Հայ գրքի, տպագիր այլ արտադրանքի բովանդակային և տպագրական որակների բարձրացում, միջազգային շուկայում մրցունակության ապահովում (*հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.4.5. Մշակույթը» բաժին):*
- Իրավական ակտերի պաշտոնական տեղեկագրերի հրատարակում և թարգմանությունների իրականացում (*հիմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36, 62 և 67-րդ հոդվածներ*):

• Հայաստան-Սփյուռք գործակցության դինամիկ զարգացում, Սփյուռքում և Հայաստանում գործող կազմակերպությունների համագործակցության ակտիվացում, հայապահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում (հիմք՝ ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր՝ «2.1.3. Սփյուռքը» բաժին):

10.2.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է ուղղել 2017 թվականին՝ **8,339.0** մլն դրամ, 2018 թվականին՝ **8,297.9** մլն դրամ և 2019 թվականին՝ **8,372.5** մլն դրամ (*ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2017 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 8,377.2 մլն դրամ, 2018 թվականին՝ 8,434.2 մլն դրամ*):

Ծախսերը 2017 թվականին 2016 թվականի նկատմամբ կնվազեն՝ 0.04 %-ով, 2018 թվականին՝ 2017 թվականի նկատմամբ՝ 0.5 %-ով, իսկ 2019 թվականին 2018 թվականի նկատմամբ կաճեն՝ 0.9 % -ով:

2017-2019 թվականներին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի միջնաժամկետ ծրագրով ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կկազմի, համապատասխանաբար՝ 0.15, 0.14 և 0.13%:

2017-2019 թվականներին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի բյուջետային հատկացումների փոփոխությունը հիմնականում պայմանավորված է.

● ՀՀ արտաքին գործերի նախարարության հրատարակչական ծախսերի փոփոխությամբ, 2017 և 2019 թվականներին ծախսերի աճով, յուրաքանչյուր տարի՝ 57.0 մլն դրամով, իսկ 2018 թվականին ծախսերի նվազմամբ՝ 57.0 մլն դրամով (պայմանավորված է ՀՀ մուտքի վիզաները, ՀՀ վերադարձի վկայականները և դեսպանությունում օգտագործվող պաշտպանված ձևաթղթերը երկու տարին մեկ տպագրմամբ);

● ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծախսերի աճով, համապատասխանաբար՝ 14.5, 16.0 և 17.6 մլն դրամով (համաձայն ՀՀ Նախագահի 03.07.2007թ. N Ղ-1212 հանձնարարականի՝ յուրաքանչյուր տարի ՀՀ մասնաբաժնի չափի ավելացում 10%-ով);

● Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի («Արլիս») գծով հակերության դեմ պայքարի ծրագրի իրականացման հետ կապված կապիտալ ծախսերի չնախատեսմամբ՝ 4.6 մլն դրամ (2016 թվականին ձեռք է բերվել սերվեր);

- «Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակում» ծրագրի չնախատեսմամբ՝ 15.3 մլն դրամ;
- «Տնտեսագիտական հրապարակումներ» ծրագրի ծախսերի նվազմամբ՝ 60.0 մլն դրամով (ինտերնետային կայքում տեսահրապարակումների և տեսատեղեկատվության զետեղման ծախսեր);
- Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում» ծրագրի գծով ծախսերի նվազմամբ՝ 2.2 մլն դրամով, կապված տպաքանակի նվազման հետ;
- էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերի նվազմամբ՝ 1.3 մլն դրամով, կապված սակագների փոփոխության հետ;
- տեխնիկական վերազինման ծախսերի փոփոխությամբ, ընդ որում՝ 2017 և 2019 թվականներին ծախսերի աճով, համապատասխանաբար՝ 101.5 և 200.0 մլն դրամով, իսկ 2018 թվականին ծախսերի նվազմամբ՝ 31.3 մլն դրամով;
- Հիմնանորոգման ծախսերի փոփոխությամբ՝ 2017 և 2019 թվականներին ծախսերի նվազմամբ, համապատասխանաբար՝ 101.3 և 200.0 մլն դրամով, իսկ 2018 թվականին ծախսերի աճով՝ 31.3 մլն դրամով («Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում):

2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում Հանրային հեռուստաընկերության տեխնիկական վերազինման նպատակով նախատեսվում է հատկացնել ընդհանուր առմամբ՝ 831.5 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ԱՍԲ նկարահանման տաղավարների HD թվային ձևաչափի հեռուստատեսային տեխնիկայի և լուսային սարքավորումների, արտատաղավարային նկարահանումների ապահովման համար նախատեսված լուսային սարքավորումների և այլ անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում:

2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում Հանրային հեռուստաընկերության հիմնանորոգման նպատակով նախատեսվում է հատկացնել 368.7 մլն դրամ:

Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայություն-ների ոլորտի 2015-2019 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների ներկայացված են **10.6. աղյուսակում:**

Աղյուսակ 10.6. Ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտի 2015-2019 թվականների ծախսերը՝ ըստ ուղղությունների (մլն դրամ)

բաժին	խումբ	դաս	Ոլորտի ուղությունները	2015 թ. փաստացի	2016 թ. պետական բյուջե	2017-2019 թթ. ՄԺԾԾ		
						2017թ.	2018թ.	2019թ.
			ԸՆԴԱՄԵՆԸ	**8,394.0**	**8,342.5**	**8,339.0**	**8,297.9**	**8,372.5**
08	03	01	Հեռուստառադիոհա-ղորդումներ	6,818.6	6,723.0	6,744.1	6,760.0	6,777.6
08	03	02	Հրատարակչություններ, խմբագրություններ	1,172.6	1,195.3	1,169.8	1,112.8	1,169.8
08	03	03	Տեղեկատվության ձեռքբերում	376.1	388.3	387.5	387.5	387.5
01	01	03	Արտաքին հարաբերություններ	26.7	35.9	37.6	37.6	37.6

Ըստ ուղղությունների 2017 թվականին ծախսերի տեսակարար կշիռը ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին ուղղված հատկացումներում կունենա հետևյալ պատկերը.

Գծանկար 10.2. 2017 թվականին ռադիոյի և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական ծառայությունների ոլորտին ուղղված հատկացումների տեսակարար կշիռը ըստ ուղղությունների



10.2.4. ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Բացի պետական բյուջեից ստացվող եկամուտներից, ոլորտի կազմակերպություններն եկամուտներ են ստանում նաև վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից (գովազդից, վճարովի եթերաժամանակից, հովանավորությունից, հրատարակչական և այլ աշխատանքներից):

Վճարովի ծառայություններից ստացված եկամուտներն ուղղվում են կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը, աշխատողների աշխատավարձերի վճարմանը, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքի ձեռքբերմանը, հրատարակչական և այլ ծախսերի իրականացմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2015-2019 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են ըստ տարիների, համապատասխանաբար՝ 1,038.4, 696.4, 601.0, 601.0 և 601.0 մլն դրամ:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2015-2019 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են ըստ տարիների, համապատասխանաբար՝ 196.7, 235.8, 182.1, 182.1 և 182.1 մլն դրամ:

Տեղեկատվության ձեռքբերման գծով 2015-2019 թվականներին վճարովի ծառայությունների մատուցումից ստացված և կանխատեսվող եկամուտները կազմում են յուրաքանչյուր տարի՝ 17.2 մլն դրամ:

Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին իրականացված և կանխատեսվող ծախսերը ներկայացված են **10.7 աղյուսակում:**

Աղյուսակ 10.7. Ըստ առանձին կազմակերպությունների ՀՀ պետական բյուջեի և վճարովի ծառայությունների հաշվին 2015-2019 թվականներին իրականացված և կանխատեսվող ծախսերը (մլն դրամ)

Բաժին, խումբ, դաս, ծրագիր	Կազմակերպությունների անվանումները	2015թ. փաստացի		2016թ.		2017թ.		2018թ.		2019թ.	
		ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին	ՀՀ պետական բյուջեի հաշվին	Վճարովի ծառայությունների հաշվին
08.03.	**ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում**	**6828.4**	**1252.3**	**7041.8**	**949.4**	**6844.4**	**800.3**	**6844.4**	**800.3**	**6844.4**	**800.3**
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*84.5*	*15.5*	*88.1*	*11.9*	*89.5*	*10.5*	*89.5*	*10.5*	*89.5*	*10.5*

08.03.01.	**ՀԵՌՈՒՍՏԱ-ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ, այդ թվում**	**6036.9**	**1038.4**	**6191.4**	**696.4**	**6058.9**	**601.0**	**6058.9**	**601.0**	**6058.9**	**601.0**
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*85.3*	*14.7*	*89.9*	*10.1*	*91.0*	*9.0*	*91.0*	*9.0*	*91.0*	*9.0*
08.03.01.02,11,13	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	5063.3	972.8	5197.2	591.9	5134.7	500.7	5134.7	500.7	5134.7	500.7
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*83.9*	*16.1*	*89.8*	*10.2*	*91.1*	*8.9*	*91.1*	*8.9*	*91.1*	*8.9*
08.03.01.03,12	«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ	828.6	43.7	855.3	65.4	785.3	67.4	785.3	67.4	785.3	67.4
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*95.0*	*5.0*	*92.9*	*7.1*	*92.1*	*7.9*	*92.1*	*7.9*	*92.1*	*7.9*
08.03.01.04,14	«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ	100.3	8.5	94.6	18.1	94.6	11.8	94.6	11.8	94.6	11.8
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*92.2*	*11.2*	*83.9*	*12.0*	*88.9*	*12.0*	*88.9*	*12.0*	*88.9*	*12.0*
08.03.01.06	«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ	44.7	13.4	44.3	21.0	44.3	21.1	44.3	21.1	44.3	21.1
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*76.9*	*23.1*	*67.8*	*32.2*	*67.7*	*32.3*	*67.7*	*32.3*	*67.7*	*32.3*
08.03.02.	**ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ, ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում**	**709.0**	**196.7**	**765.7**	**235.8**	**700.9**	**182.1**	**700.9**	**182.1**	**700.9**	**182.1**
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*78.3*	*21.7*	*76.5*	*23.5*	*79.4*	*20.6*	*79.4*	*20.6*	*79.4*	*20.6*
08.03.02.01.	«Հանրապետություն» ՓԲԸ	46.3	72.4	46.9	97.0	46.9	97.0	46.9	97.0	46.9	97.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*39.0*	*61.0*	*32.6*	*67.4*	*32.6*	*67.4*	*32.6*	*67.4*	*32.6*	*67.4*
08.03.02.01.	«Հայաստանի Հանրապե-տություն -Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ	25.9	8.7	26.2	10.5	26.2	10.5	26.2	10.5	26.2	10.5
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*74.9*	*25.1*	*71.4*	*28.6*	*71.4*	*28.6*	*71.4*	*28.6*	*71.4*	*28.6*
08.03.02.04.	«Էկոնոմիկա հանդես» ՓԲԸ	84.3	1.5	99.3	0.6	39.3	1.9	39.3	1.9	39.3	1.9
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*98.3*	*1.7*	*99.4*	*0.6*	*95.4*	*4.6*	*95.4*	*4.6*	*95.4*	*4.6*
08.03.02.07.	«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ	340.2	56.6	349.3	58.3	344.6	58.3	344.6	58.3	344.6	58.3
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*85.7*	*14.3*	*85.7*	*14.3*	*85.5*	*14.5*	*85.5*	*14.5*	*85.5*	*14.5*

08.03.02.09.	«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ	185.9	48.0	217.5	60.0	217.4	5.0	217.4	5.0	217.4	5.0
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*79.5*	*20.5*	*78.4*	*21.6*	*97.8*	*2.2*	*97.8*	*2.2*	*97.8*	*2.2*
08.03.02.15.	«Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ	26.4	9.5	26.5	9.4	26.5	9.4	26.5	9.4	26.5	9.4
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*73.5*	*26.5*	*73.8*	*26.2*	*73.8*	*26.2*	*73.8*	*26.2*	*73.8*	*26.2*
08.03.03.01.	**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ («Արմենպրես» ՓԲԸ)**	**82.5**	**17.2**	**84.7**	**17.2**	**84.6**	**17.2**	**84.6**	**17.2**	**84.6**	**17.2**
	տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում %	*82.7*	*17.3*	*83.1*	*16.9*	*83.1*	*16.9*	*83.1*	*16.9*	*83.1*	*16.9*

10.3. ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

10.3.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.3.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Հանգստի և սպորտի ոլորտի 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն 24 ծրագրերի իրականացմանը՝ երեք պետական կառավարման մարմինների միջոցով:

Հանգստի և սպորտի ոլորտում քաղաքականությունը մշակվում է պետական լիազորված մարմնի՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից և իրականացվում է հասարակական կազմակերպությունների (Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե, ՀՀ մարզական 32 ֆեդերացիաներ, հաշմանդամային սպորտով զբաղվող 4 կազմակերպություն և այլն) և «Սպորտի և երիտասարդության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով:

Նախարարությունը սպորտի ոլորտում մշակում է իր ռազմավարությունը՝ նպատակ ունենալով զարգացնելու հետևյալ ուղղությունները՝

√ մեծ նվաճումների սպորտ

√ մանկապատանեկան և մասսայական սպորտ

Մեծ նվաճումների սպորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են օլիմպիական խաղերին, փառատոներին, աշխարհի, Եվրոպայի, Հայաստանի Հանրապետության առաջնություններին, համաշխարհային ունիվերսիադաներին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մասնակցության ապահովմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը, միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցա-

նակակիրներին դրամական մրցանակների հանձնմանը, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացմանը:

Մեծ նվաճումների սպորտի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի հավաքական թիմերի անդամները, հաշմանդամ, ինչպես նաև այլ երկրների մարզիկները:

Մանկապատանեկան և մասսայական սպորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոների, «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացմանը, մանկապատանեկան սպորտի մասսայականացմանը, շախմատիստների պատրաստմանը:

Մանկապատանեկան և մասսայական սպորտի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը:

10.3.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

Մեծ նվաճումների սպորտ

Հանգստի և սպորտի ոլորտի հատկացումների զգալի մասը (2014-2015 թվականներին, յուրաքանչյուր տարի 52.5 տոկոսը) ուղղվել է ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստմանը և առաջնությունների անցկացմանը: Նշված նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցները նպաստում են միջոցառումների և մասնակիցների, ինչպես նաև աշխարհի, Եվրոպայի մրցաշարերին հավաքական թիմերի մարզիկների նվաճած մրցանակների քանակի ավելացմանը:

2008-2015 թվականներին աշխարհի, Եվրոպայի, ՀՀ առաջնությունների, ուսումնամարզական հավաքների, մասնակիցների, ինչպես նաև աշխարհի, Եվրոպայի առաջնություններում ազգային հավաքական թիմերի մարզիկների կողմից նվաճած մրցանակների քանակը ներկայացված են **10.8** և **10.9 աղյուսակներում:**

Աղյուսակ N 10.8. 2008-2015 թվականներին աշխարհի, Եվրոպայի, ՀՀ առաջնությունների, ուսումնամարզական հավաքների և մասնակիցների քանակը

Միջոցառումների անվանումները և մասնակիցները	2008-2015թթ. միջոցառումների և մասնակիցների քանակը							
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Աշխարհի և եվրոպայի առաջնությունների քանակը	85	135	159	175	135	156	156	147
մասնակիցների քանակը	2000	1729	1955	2115	1850	1900	1900	1900
ՀՀ առաջնությունների քանակը	78	84	90	92	92	92	90	93
մասնակիների քանակը	5504	6700	7600	9600	9600	9640	9440	9500

Ոսումնամարզական հավաքների քանակը	85	126	83	140	130	122	133	127

Աղյուսակ 10.9. Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում ազգային հավաքական թիմերի մարզիկների կողմից 2008-2015 թվականներին նվաճած մեդալների քանակը

Մեդալների տեսակները	2008-2015թթ. նվաճած մեդալների քանակը							
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ոսկե մեդալ	27	32	43	34	30	31	32	37
Արծաթե մեդալ	40	47	51	37	46	45	37	46
Բրոնզե մեդալ	41	56	63	64	74	67	49	56
Ընդամենը	**108**	**135**	**157**	**135**	**150**	**143**	**118**	**139**

Վերջին յոթ տարիներին առավել կարևոր են իրականացված հետևյալ միջոցառումները և ձեռքբերված նվաճումները.

2009 թվական

Երևանում անց են կացվել բռնցքամարտի աշխարհի պատանեկան, ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունները, համահայկական խաղերը:

2010 թվական

Սինգապուրում առաջին պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցել են 14 մարզիկներ, որոնք նվաճել են 1 արծաթե (ծանրամարտ) և 3 բրոնզե (ծանրամարտ, ձյուդո և ըմբշամարտ) մեդալներ:

2011 թվական

Առանձնահատուկ և աննախադեպ հաղթանակ է գրանցվել Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքական թիմի կողմից: Հայկական սպորտի պատմության մեջ առաջին անգամ շախմատի տղամարդկանց ՀՀ հավաքական թիմը աշխարհում գրավեց 1-ին տեղը:

2012 թվական

Լոնդոնի 30-րդ օլիմպիական խաղերին մասնակցել են Հայաստանի հավաքականի 24 մարզիկներ 10 մարզաձևերում, որոնք նվաճել են 2 բրոնզե և մեկ արծաթե մեդալներ:

Ստամբուլում շախմատի համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի տղամարդկանց հավաքականը ճանաչվել է հաղթող:

2013 թվական

Ֆրանսիայի Նիս քաղաքում Ֆրանկոֆոնյան 7-րդ խաղերին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցել է 5 մարզաձևով (աթլետիկա, ազատ ըմբշամարտ, ձյուդո, սեղանի թենիս, հեծանվային սպորտ) և նվաճել է 3 ոսկե և 3 բրոնզե (ազատ ըմբշամարտ, ձյուդո) մեդալներ:

2014 թվական

2014 թվականին Նան Ջինգի (Չինաստան) ամառային 2-րդ պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցել են Հայաստանի հավաքականի 14 մարզիկներ, որոնք նվաճել են 2 ոսկե մեդալ (ծանրամարտ), 2 արծաթե մեդալ (հունահռոմեկան ըմբշամարտ, հրաձգություն), 3 բրոնզե մեդալ (ըմբշամարտ, բռնցքամարտ):

2014 թվականի Սոչիի ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանը մասնակցել է 12 հոգով, որից 11-ը՝ մարզիկներ, մարզիչներ:

2014 թվականի Սոչիի ձմեռային պարալիմպիկ խաղերին մարզիկ՝ Նվեր Ավանեսյանը հադես է եկել դահուկային սպորտի մարզաձևում և 51 մասնակիցների շրջանում զբաղեցրել է 34-րդ տեղը:

2015 թվական

2015 թվականին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկները աշխարհի և Եվրոպայի առաջնություններում 12 մարզաձևերից (ազատ ոճի ըմբշամարտ, հունա-հռոմեական ըմբշամարտ, թաեքվոնդո, ձյուդո, հրաձգություն, բռնցքամարտ, ծանրամարտ, շախմատ, սամբո, ուշու, մարմնամարզություն, հեծանվային սպորտ) նվաճել են 37 ոսկե, 46 արծաթե և 56 բրոնզե մեդալներ:

Արթուր Ալեքսանյանը դարձել է աշխարհի չեմպիոն (հունա-հռոմեական ըմբշամարտ), Տիգրան Մարտիրոսյանը և Տիգրան Կիրակոսյանը՝ Եվրոպայի չեմպիոն (ծանրամարտ և սամբո), Արթուր Թովմասյանը՝ Համաշխարհային ուսանողական խաղերի չեմպիոն (մարմնամարզություն):

2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մարզիկները նվաճել են 2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի օլիմպիական խաղերի 29 ուղեգիր հետևյալ մարզաձևերից, հունա-հռոմեական ըմբշամարտ՝ 4-ը, ազատ ոճի ըմբշամարտ՝ 4-ը, մարմնամարզություն՝ 3-ը, ծանրամարտ՝ 7-ը, բռնցքամարտ՝ 4 -ը, աթլետիկա՝ 5-ը, ձյուդո՝ 1-ը և հրաձգություն՝ 1-ը :

2014-2015 թվականներին «ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 929.8 և 929.6 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 930.0 մլն դրամ:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով միջոցները տրամադրվում են «Հայաստանի կույրերի միավորում», «Խուլերի հայկական սպորտային կոմիտե», «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» և «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպություններին:

2014-2015 թվականներին նշված ծրագրի հատկացումների շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի կողմից անց են կացվել ՀՀ առաջնություններ 4 մարզաձով (ֆուտզալ, ըմբշամարտ, շախմատ, վոլեյբոլ), որին մասնակցել են՝ համապատասխանաբար 189 և 196 մարզիկներ:

«Հայաստանի կույրերի միավորում» ՀԿ-ի կողմից անց է կացվել ՀՀ շախմատի առաջնություն, որին մասնակցել են՝ համապատասխանաբար 17 և 27 մարզիկներ:

«Հայկական հատուկ օլիմպիադաներ» ՀԿ-ի կողմից անց է կացվել ֆուտզալի առաջնություն, որին մասնակցել են՝ համապատասխանաբար 40 և 60 մարզիկներ: 2014 թվականին 5 մարզիկներ մասնակցել են Հատուկ օլիմպիադաների համաեվրոպական խաղերին, իսկ 2015 թվականին 3 մարզիկներ մասնակցել են ԱՄՆ–ում կայացած Հատուկ օլիմպիադաների աշխարհի ամառային խաղերին, որտեղ նվաճել են 1 ոսկե մեդալ (ազատ լող):

«Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» ՀԿ-ի կողմից 2014-2015 թվականներին անց է կացվել հաշմանդամային մարզական փառատոն, որին մասնակցել են, համապատասխանաբար 113 և 120 մասնակիցներ: 2015 թվականին պարականոէի աշխարհի առաջնությանը մասնակցել են 2 մարզիկներ:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի իրականացման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 8.9 և 10.8 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 9.0 մլն դրամ:

«Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում» ծրագիրը մեկնարկել է 2009 թվականին:

Նշված ծրագրի շրջանակներում թոշակի հատկացումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ Նախագահի 2009 թվականի հունվարի 14-ի ՆԿ-1-Ն կարգադրությամբ հաստատված կարգի:

Ծրագիրը նպատակ ունի խրախուսել բարձր արդյունքների հասած մարզիկներին և նրանց մարզիչներին և հանդիսանում է բարձր նվաճումների խթան:

2009-2015 թվականներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ ստացողների թիվը ներկայացված է **10.10 աղյուսակում:**

Աղյուսակ N 10.10. 2009-2015 թվականներին ՀՀ Նախագահի անվանական թոշակ ստացողների թիվը

ՀՀ Նախագահի անվանական թոշակ ստացողները	Ըստ տարիների թոշակ ստացողների թիվը						
	2009	2010	2011	2012	2013	2014	2015
մարզիկներ	44	65	62	72	68	68	62
մարզիչներ	57	85	82	91	96	100	87

«Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում» ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 2014 թվականին՝ 160.0 մլն դրամ, 2015 թվականին՝ 146.1 մլն դրամ, իսկ 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 150.0 մլն դրամ:

Մանկապատանեկան և մասսայական սպորտ

Մանկապատանեկան և մասսայական սպորտի հիմնական ծրագրերն են՝ «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում, «Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում», «ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում», «Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում» և «Շախմատիստների պատրաստման ծառայություններ»:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը անց է կացվում 4 տարիքային խմբերով, Հայաստանի Հանրապետության՝ 42, Լեռնային Ղարաբաղի՝ 7, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների միջև:

Մասնակիցների թիվը 2014 թվականին կազմել է 2.067 ընտանիք, որից 16-ը՝ հաշմանդամ ընտանիք (6.249 մարդ), նախորդ տարվա նկատմամբ մասնակիցների թիվը աճել է 126-ով:

2015 թվականին մրցույթին մասնակցել է 2.065 ընտանիք, որից 19-ը՝ հաշմանդամ ընտանիք (6.252 մարդ):

Մասնակիցների թվի աճը պայմանավորված է բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզչությամբ և գյուղական համայնքների ավելի ակտիվ մասնակցությամբ:

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով ՀՀ պետական բյուջեից 2014 թվականին հատկացվել է 151.9 մլն դրամ, 2015 թվականին՝ 117.7 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 119.3 մլն դրամ:

2015 թվականին ծախսերի նվազումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված ծրագրի հատկացումները ուղղվել են «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» և «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթների անցկացմանը:

«Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի («Սպորտլանդիա») նպատակն է՝ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական դաստիարակության միջոցով առողջության ամրապնդումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությունը:

Մրցույթը անց է կացվել Հայաստանի Հանրապետության 39 համայնքներում և ԼՂՀ-ի մայրաքաղաք Ստեփանակերտում: Ի-ին փուլի մրցումներին մասնակցել է Հայաստանի Հանրապետության մարզերի և Ստեփանակերտի 232 նախադպրոցական հիմնարկ (2784 երեխա): Եզրափակիչ փուլը անց է կացվել Երևանում, որին մասնակցել են 1-ին տեղեր գրաված հիմնարկները:

«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովումը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կյանք վերադարձը:

Մրցույթին մասնակցել են լսողական, տեսողական և հենաշարժողական խնդիրներ ունեցող 165 հաշմանդամ: Մրցույթը ընդգրկել է 7 մարզաձև՝ շախմատ, շաշկի, թենիս, դարթս, լող և բասկետբոլ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը մեկնարկել են 2010 թվականին և անց են կացվում Հայաստանի Հանրապետության 38 տարածաշրջաններում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում, 4 փուլով:

2014-2015 թվականներին խաղերի մասնակիցների թիվը կազմել է՝ համապատասխանաբար 31.450 և 31.245 մարդ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով ՀՀ պետական բյուջեով 2014 և 2015 թվականներին հատկացված և 2016 թվականին նախատեսված միջոցները կազմում են յուրաքանչյուր տարի 7.0 մլն դրամ:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնն անց է կացվել Հայաստանի Հանրապետության 10 մարզերի 48 քաղաքային և գյուղական համայնքներում և ԼՂՀ-ում (Ստեփանակերտ), որին 2014-2015 թվականներին մասնակցել են՝ համապատասխանաբար 22.000 և 24.125 մարդ:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, ինչպես նաև 2016 թվականին նախատեսվում է հատկացնել յուրաքանչյուր տարի 6.9 մլն դրամ:

«Մանկապատանեկան սպորտի մասսայականացում» ծրագիրն իրականացվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ 2 փուլով՝ հունիս և օգոստոս ամիսներին, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում՝ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:

2014-2015 թվականներին մարզչական սեմինարներին մասնակցել է համապատասխանաբար՝ 180 և 125 մարդ:

«Մանկապատանեկան սպորտի մասսայականացում» ծրագրի իրականացման համար 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է, ինչպես նաև 2016 թվականին նախատեսվում է հատկացնել յուրաքանչյուր տարի՝ 8.0 մլն դրամ:

«**Շախմատիստների պատրաստման ծառայություններ**» ծրագիրն իրականացվում է «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի միջոցով, որը հիմնադրվել է 2002 թվականին:

Անցած տարիների ընթացքում հիմնադրամը պատշաճ կերպով կարողացել է իրականացնել իր առջև դրված ծրագրային նպատակները և մեծ լումա է ներդրել շախմատի զարգացման գործընթացում:

Մասնավորապես. ակադեմիայի կողմից կազմակերպվել են մի շարք շախմատային մրցաշարեր և հավաքներ: Մրցաշարերից առավել աչքի են ընկել Տիգրան Պետրոսյանի 75-ամյակին նվիրված «*Ղարաբաղ 2004*» միջազգային հուշամրցաշարը և աշխարհում նախադեպը չունեցող ինտերնետային թիմային միջազգային մրցաշարը, որոնք միջազգային հանրությանը ներկայացրեցին Հայաստանի շախմատային աշխարհը մի նոր, առավել բարենպաստ տեսանկյունից:

Մրցաշարերի շարքը լրացրեցին «*Ղարաբաղ 2005*», «*Սևանա Լիճ*» (2005-2015թթ.) և մանկապատանեկան «*Ջերմուկ*» (2006-2015թթ.) միջազգային մրցաշարերը, Կարեն Ասրյանի անվան միջազգային մրցաշարը, ինչպես նաև ՄԱԿ-ի գավաթ մանկապատանեկան մրցաշարը (2005-2008թթ.):

Բացի վերը նշվածից, հիմնադրամի ջանքերի շնորհիվ Եվրոպայի առաջնություններում ակադեմիայի սաները յոթ անգամ դարձել են չեմպիոն (մինչև 10, 12, 16 և 18 տարեկանների խմբերում), վեց անգամ՝ փոխչեմպիոն (մինչև 12 և 16 տարեկանների խմբերում), երեք անգամ՝ բրոնզե մեդալակիր, ինչպես նաև աշխարհի առաջնություններում ակադեմիան տվել է երկու չեմպիոն, երեք փոխչեմպիոն և երեք բրոնզե մեդալակիր:

Մինչև 16 տարեկանների Համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի թիմը, որի անդամներից երեքը ակադեմիայի սաներն էին, 2010 թվականին դարձել է չեմպիոն, իսկ 2011 թվականին՝ գրավել երրորդ տեղը:

Միջազգային այլ մրցաշարերում ակադեմիայի սաները նվաճել են ավելի քան 48 մրցանակային տեղեր: Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի կողմից պատրաստվել է ութ միջազգային գրոսմայստեր, վեց միջազգային վարպետ, չորս ՖԻԴԵ-ի վարպետ, երեք ՖԻԴԵ-ի մարզիչ և մեկ միջազգային կարգի մրցավար: Մի քանի սան արդեն լրացրել են գրոսմայստերի և միջազգային վարպետի առաջին, երկրորդ նորմերը:

2014-2015 թվականներին Հայաստանի շախմատային ակադեմիան իրականացրել է յուրաքանչյուր տարի թվով 1000 երեխաների անվճար ուսուցում Երևանում և մարզերում, ինչպես նաև կազմակերպել է մրցաշարեր և վերապատրաստել մարզիչների:

Շախմատիստների պատրաստման նպատակով ՀՀ պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է 254.4 և 251.2 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 127.7 մլն դրամ: 2014-2015 թվականների անց են կացվել՝ Հայաստանում աշխարհի շախմատի թիմային և Երևանում շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնությունները:

10.3.1.3. Հիմնական խնդիրները

Մեծ նվաճումների սպորտում հիմնական խնդիրներն են.

✡ սպորտի բարձրագույն նվաճումների ապահովման ուղղությամբ քաղաքականության մշակում,

✡ սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակում և իրագործում,

✡ օլիմպիական շարժման զարգացում, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցում,

✡ պարալիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հաշմանդամների մասնակցությանը, ինչպես նաև հաշմանդամների շրջանում ֆիզկուլտուրային և մարզական ծրագրերի իրականացմանն աջակցում,

✡ միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդում,

✡ միջպետական մարզական հարաբերությունների զարգացում:

Մանկապատանեկան և մասսայական սպորտում հիմնական խնդիրներն են.

✡ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների ակտիվացում սպորտի ոլորտում,

✡ մարզական ներուժի օգտագործում, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավում,

✡ սպորտով զբաղվելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծում հասարակության հաշմանդամ մարզիկների համար,

✡ առողջ ապրելակերպը կենցաղ ներմուծելու նպատակով ԶԼՄ-ների հնարավորինս լայն օգտագործում, հատկապես՝ հեռուստաընկերությունների:

✡ ՀՀ տարածքում շախմատի զարգացում, տաղանդավոր երեխաների բացահայտում և կրթում:

10.3.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.3.2.1. Նպատակները

Հանգստի և սպորտի ոլորտի հիմնական նպատակներն են.

- Բարձրակարգ մարզիկների պատրաստումը, օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում և այլ միջազգային մրցասպարեզներում երկրի վարկանիշի բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:
- Բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը:
- Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը:
- Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:
- Հանրապետությունում ձևավորված շախմատային ավանդույթների սերնդեսերունդ փոխանցումը և ազգի շախմատային ներուժն ի շահ երկրի օգտագործումը:

10.3.2.2.Գերակայությունները

ՀՀ 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով հանգստի և սպորտի ոլորտի հիմնական գերակայությունների համար հիմք են հանդիսանում՝ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրը (*«2.4.6.3. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը» բաժին)* և Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագրերը: Հիմնական գերակայություններն են.

Մեծ նվաճումների սպորտ

- Օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների նպատակային նախապատրաստում և մասնակցության ապահովում:
- Հաշմանդամային մարզական հասարակական կազմակերպություններին պետական աջակցության ապահովում:

- Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող միջազգային պաշտոնական մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում:
- Պետության կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստելու նպատակով իրավական ակտերի ստեղծում:
- Միջպետական մարզական հարաբերությունների զարգացում:
- Եվրոպական ընտանիքին ինտեգրվելու գործընթացի շարունակական կենսագործում:

2017-2019 թվականներին մեծ նվաճումների սպորտում ակնկալվող արդյունքները՝ օլիմպիական խաղերին (2018 թվականի Հարավային Կորեայի ձմեռային խաղեր), ինչպես նաև օլիմպիական փառատոներին, պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցության ապահովումն է, վարկանիշային միջազգային մրցումներին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին լավագույն ձևով մասնակցությունն է:

Մանկապատանեկան և մասսայական սպորտ

- Բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում:
- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում:
- Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում:
- Տաղանդաշատ շախմատիստների բացահայտում և անվճար ուսուցում:

10.3.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանգստի և սպորտի ոլորտին (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է ուղղել՝ 2017 թվականին՝ **1,678.4** մլն դրամ, 2018 թվականին՝ **1,671.2** մլն դրամ, 2019 թվականին՝ **1,648.7** մլն դրամ (*ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2017 թվականին նախատեսվել էին ծախսեր՝ 1,683.2 մլն դրամ, 2018 թվականին՝ 1,705.8 մլն դրամ*):

Ծախսերը կնվազեն 2017 թվականին 2016 թվականի հաստատվածի նկատմամբ՝ 8.7 % -ով, 2018 թվականին 2017 թվականի նկատմամբ՝ 0.4 %-ով, իսկ 2019 թվականին 2018 թվականի նկատմամբ՝ 1.3 %-ով:

ՀՀ 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով հանգստի և սպորտի ոլորտի պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2017-2019 թվականներին կկազմի, յուրաքանչյուր տարի՝ 0.03%:

2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում ոլորտին ուղղված հատկացումների նվազումը հիմնականում պայմանավորված է առանձին ծրագրերի ավարտմամբ և միջոցառումների անցկացման ժամանակացույցով:

Միաժամանակ, հատկացումները աճել են, որը հիմնականում պայմանավորված է.

● 2017 և 2019 թվականներին Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովման ծախսերի նախատեսմամբ, յուրաքանչյուր տարի՝ 44.0 մլն դրամ;

● 2017 թվականին Ֆրանկոֆոնիայի 8-րդ մարզամշակութային խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովման ծախսերի նախատեսմամբ՝ 29.7 մլն դրամ;

● 2018 թվականի Հարավային Կորեայի ձմեռային օլիմպիական և պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ծախսերի նախատեսմամբ, համապատասխանաբար՝ 24.3 և 6.9 մլն դրամ;

● 2018 թվականի Բուենոս Այրեսի 3-րդ ամառային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ծախսերի նախատեսմամբ՝ 54.1 մլն դրամ;

● 2017-2019 թվականներին Համաշխարհային ունիվերսիադային մասնակցության ծախսերի նախատեսմամբ՝ 23.0 մլն դրամ:

10.4. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

10.4.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10.4.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ երիտասարդների թիվը (*ըստ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 54 արձանագրային որոշման 33-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության» հայեցակարգի՝ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտ են հանդիսանում 16-30 տարեկան ՀՀ քաղաքացիները*) 2014-2015 թվականներին կազմել է ամբողջ բնակչության շուրջ 25 %-ը:

Երիտասարդական ոլորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են Երևանում և մարզերում երիտասարդական ծրագրերի, ինչպես նաև «Արի տուն» ծրագրի իրականացմանը, երիտասարդ ընտանիքներին աջակցմանը:

Երիտասարդական ոլորտի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդները և երիտասարդ ընտանիքները, Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունները, Լեռնային Ղարաբաղի և սփյուռքահայ երիտասարդները:

10.4.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

Վերջին տարիներին իրականացված երիտասարդական ծրագրերն ուղղված են ոլորտի կառավարման ապակենտրոնացմանը դեպի հասարակական սեկտոր, երիտասարդական քաղաքականության ինստիտուցիոնալ զարգացմանը, կառավարման համակարգի աշխատանքների թափանցիկության ապահովմանը և երիտասարդության համար իրականացվող ծրագրերում երիտասարդների մասնակցության գործընթացի ակտիվացմանը, ինչպես նաև ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Իրականացված, հատկապես ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերում, ընդգրկված են եղել տարբեր պետական կառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2014-2015 թվականներին իրականացվել են ինչպես ամենամյա դարձած, այնպես էլ մի շարք նոր միջոցառումներ մասնավորապես՝

«Երիտասարդական հեռուստահաղորդաշարերի, ֆիլմերի, սոցիալական տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում» ծրագրի շրջանակներում իրականացվել են «Երիտասարական հեռուստահաղորդաշար», «Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաքի հռչակման մասին» միջոցառումները, որոնք նպաստում են երիտասարդության հրատապ թեմաների վերաբերյալ երիտասարդ քաղաքացիների իրազեկվածության աստիճանի բարձրացմանը:

«Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են՝ Եվրոպայի խորհրդի «Երիտասարդական քարտի միջոցով երիտասարդության շարժունակություն» ընդլայնված մասնակի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարման իրականացումը, «Երիտասարդ առաջնորդների վերապատրաստում» միջոցառումը: Վերջինիս նպատակը՝ երիտասարդներին պատրաստել որպես առաջնորդների՝ հետագայում համայնքային կյանքի զարգացման և հայապահպանության գործին իրենց ակտիվ մասնակցությունը բերելու նպատակով:

«Պետական երիտասարդական քաղաքականությունը ՀՀ մարզերում. Խորհրդակցությունների կազմակերպում և երիտասարդական ծրագրերի շրջանակներում այցելություններ ՀՀ մարզեր» ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումներն են՝ «Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագրի և ծրագրի միջոցառումների նախագծի հանրային քննարկումներ», «Հանդիպում-քննարկում մարզաբնակ երիտասարդության շրջանում», «100 գաղափար Հայաստանի համար» միջոցառման հայտերի ուսումնասիրություն և մրցույթ. այցելություններ Հայաստանի Հանրապետության մարզեր»:

«Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանն ուղղված ծրագրեր»-ի շրջանակներում առցանց դրամաշնորհային համակարգի միջոցով հասարակական կազմակերպություններին տրամադրվել է համապատասխանաբար՝ 38 և 41 դրամաշնորհ, իրականացվել է «Ուսուցման կազմակերպում՝ ուղղված երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների և հմտությունների զարգացմանը» միջոցառումը:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների, թմրամոլության կանխարգելման նպատակով երիտասարդների իրազեկության բարձրացմանն ուղղված կրթական-տեղեկատվական միջոցառումների մշակում և իրականացում, նյութերի հրատարակում» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մարզերում կազմակերպվել է սեմինար-դասընթացներ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի օգտագործման դեմ պայքարի վերաբերյալ երիտասարդների իրազեկության մակարդակի բարձրացում» թեմայով՝ 2014-2015 թվականներին համապատասխանաբար՝ Լոռու և Սյունիքի մարզերում թվով 50 երիտասարդների մասնակցությամբ:

«Երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում, աջակցություն ԼՂՀ պետական երիտասարդական քաղաքականությանը և հասարակական կազմակերպություններին» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

«Ֆիզիկական և կենսաբանական բարդ համակարգերի մոդելավորման տեխնոլոգիաներ» ամառային գիտական դպրոց-սեմինար», «Հզոր ենք միասին» բանակ-հասարակություն կապի ամրապնդում», «Մեթոդական աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական կազմակերպություններին և երիտասարդներին»:

«Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոներ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ, կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում» ծրագրի շրջանակներում իրականացվել են՝ «Միասնական աջակցություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականին», «Գիտություն և ինովացիա-2015» միջազգային երիտասարդական գիտաժողով», «Տրանսհայաստան. հյուսիս-հարավ մարաթոնյան վազք և երիտասարդների առողջ ապրելակերպի խթանում» միջոցառումները և այլն :

Երիտասարդական ծրագրերի իրականացման նպատակով 2014-2015 թվականներին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է՝ համապատասխանաբար 249.4 և 252.7 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 258.1 մլն դրամ:

2014-2015 թվականներին իրականացվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ՝ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաք՝

Սիսիանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի, «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք՝ Ստեփանավանի երիտասարդներն ընդդեմ թրաֆիքինգի, «Գիտելիքների մրցարշավ ընդդեմ թրաֆիքինգի» միջոցառումները:

Միջոցառումների մասնակիցները դասընթացների և խաղերի միջոցով ծանոթացել են թրաֆիքինգի խնդիրներին և դրա կանխարգելման ուղիներին, տեղեկացվել են այն կազմակերպությունների մասին, որոնց կարող են դիմել թրաֆիքինգի հետ կապված ցանկացած հարցով:

2014 թվականին «Ինֆորմացիոն ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության միջոցով կազմակերպվել է մրցանակաբաշխություն՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի պայքարի վերաբերյալ լավագույն լրագրողական լուսաբանման համար:

Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է 5.7 և 8.0 մլն դրամ, 2016 թվականին նախատեսվում է հատկացնել ևս 8.0 մլն դրամ:

Սփյուռքի երիտասարդության համար կազմակերպվող «Արի տուն» ծրագիրը մեկնարկել է 2009 թվականին:

2014 թվականին «Արի տուն» ծրագրի շրջանակներում Հայաստան է այցելել 1.071, իսկ 2015 թվականին՝ 1.103 սփյուռքահայ երիտասարդ: 2016 թվականին նախատեսվում է ներգրավել մինչև 1.400 սփյուռքահայ երիտասարդ:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ Հայաստան-հայրենիքն աշխարհասփյուռ հայ երիտասարդների համար ճանաչելի դարձնելը, սփյուռքահայ երիտասարդ սերնդին հայ ժողովրդի սովորությունների ու ավանդույթների, հայ ընտանիքի և հայ մարդու կերպարի առանձնահատկությունները ներկայացնելը ու սփյուռքահայ երիտասարդության հայրենական դաստիարակությանն աջակցելը:

Ծրագիրը նախատեսված է 13-18 տարեկան սփյուռքահայ երիտասարդների համար, որոնց թիվը նախատեսվում է յուրաքանչյուր տարի ավելացնել, ինչպես նաև ընդլայնել աշխարհագրությունը:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության ճանաչողական այցելություններ Հայաստան» ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է՝ համապատասխանաբար 84.4 և 93.5 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 100.0 մլն դրամ:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշմամբ, որի մեջ ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի N 303-Ն որոշմամբ կատարվել է մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ երիտասարդ ամուսինների գումարային տարիքի

առավելագույն շեմը սահմանվել է 65 տարեկան՝ նախկինում 60-ի փոխարեն, ինչպես նաև ծրագրում ընդգրկվել է երեխա ունեցող երիտասարդ միայնակ ծնողը: Ծրագրում իրականացված փոփոխությունները ենթադրում են վերաֆինանսավորվող վարկերի ծավալների (շուրջ 30 տոկոոսով), ինչպես նաև ծրագրի շահառուների թվի ավելացում :

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երիտասարդ ընտանիքներին տրամադրել հիփոթեքային վարկ առնվազն 10 տարի ժամկետով, 10.5-11 տոկոսով: Պետությունը համաֆինան-սավորում է տրամադրված վարկերի տոկոսագումարները Երևանում՝ 2, իսկ ՀՀ մարզերում՝ 4 տոկոսով:

Ծրագրի հիմնական նպատակը՝ երիտասարդ ընտանիքների բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում արդյունավետ պետական աջակցության համակարգի ներդրումն է:

Ծրագրի շրջանակներում 2014-2015 թվականներին տրամադրվել է համապատասխանաբար՝ 370 և 272 վարկ: 2016 թվականի տարվա սկզբի դրությամբ վարկառուների թիվը կազմել է՝ 1.978 :

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում» ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից 2014-2015 թվականներին հատկացվել է համապատասխանաբար՝ 249.8 և 362.6 մլն դրամ: 2016 թվականին նախատեսվում է հատկացնել 449.3 մլն դրամ:

10.4.1.3. Հիմնական խնդիրները

Երիտասարդության ոլորտում առաջնահերթ խնդիրներն են՝

✡ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի ճանաչելիության ապահովումը բոլոր մակարդակներում, ինչպես նաև երիտասարդների շրջանում պետական երիտասարդական քաղաքականության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը,

✡ երիտասարդական պետական քաղաքականության միասնականության ապահովումը պետական, մարզային և համայնքային մակարդակներում՝ հաշվի առնելով մարզային և համայնքային երիտասարդների խնդիրների և կարիքների առանձնահատկությունները,

✡ պետական գերակա աջակցության ապահովումը, ուղղված երիտասարդների սոցիալ-մշակութային, հոգևոր և ֆիզիկական, կրթական, գիտական զարգացմանը, երիտասարդ քաղաքացիների հանրօգուտ և հասարակական գործունեությանը և նախաձեռնությունների իրականացմանը,

✡ պետության կողմից երիտասարդներին տրամադրվող սոցիալական ծառայությունների երաշխավորումը կրթության, դաստիարակության, մշակութային, հոգևոր և ֆիզիկական զարգացման, առողջապահական, աշխատանքային ոլորտներում,

✡ երիտասարդների ներքին և արտաքին միգրացիոն գործընթացների կանխմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

✡ երիտասարդական պետական քաղաքականության փաստարկվածության և արդյունավետության բարձրացման, երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման բարելավման, կայունության և շարունակականության ապահովումը:

✡ Սփյուռքի և Հայաստանի երիտասարդության միջև կապերի ամրապնդումը,

✡ հիպոթեքային վարկավորման միջոցով երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանով ապահովումը:

10.4.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

10.4.2.1.Նպատակները

Երիտասարդության ոլորտում քաղաքականությունն ուղղված է հիմնական նպատակի իրականացմանը՝ ստեղծել սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային պայմաններ երիտասարդների ներուժի իրացման, զարգացման, մասնակցության խթանման համար՝ ուղղված Հայաստանի Հանրապետության զարգացմանը և հզորացմանը, ազգային անվտանգության ամրապնդմանը:

Վերը նշված նպատակը ենթադրում է երիտասարդության ոլորտում հետևյալ գործողությունների իրականացումը.

- Խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում):
- Զարգացնել երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները:
- Նպաստել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը և երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը, ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ և կրթված երիտասարդություն:
- Աջակցել սփյուռքահայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանը:
- Աջակցել երիտասարդ ընտանիքներին:

10.4.2.2.Գերակայությունները

Հայաստանի Հանրապետության երիտասարդության ոլորտի 2017-2019 թվականների գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 19.05.2014թ. N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրից (*«2.4.6.2. Երիտասարդությունը» բաժին),* ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 54 արձանագրային որոշմամբ հաստատված Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգից, ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1693-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության

երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 ռազմավարության և միջոցառումների ծրագրից: Ոլորտի գերակա ուղղություններն են.

- Հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը:
- Երիտասարդության զբաղվածության հնարավորությունների մեծացումը:
- Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանումը:
- Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանումը:
- Մարզային, համահայկական և միջազգային նշանակության երիտասարդական միջոցառումների կազմակերպումը:
- Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացում, հայապահպանություն, ուծացման կանխումը:
- Բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում երիտասարդ ընտանիքներին աջակցությունը:
- Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացումը:

10.4.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով երիտասարդության ոլորտին նախատեսվում է ուղղել 2017 թվականին՝ **861.9** մլն դրամ, 2018 թվականին՝ **949.2** մլն դրամ, 2019 թվականին՝ **1,037.7** մլն դրամ (*<< 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով յուրաքանչյուր տարի նախատեսվել էին ծախսեր՝ 827.4 մլն դրամ*):

Ծախսերը կաճեն 2017 թվականին՝ 2016 թվականի հաստատվածի նկատմամբ 4.2%-ով, 2018 թվականին 2017 թվականի նկատմամբ՝ 10.1 %-ով, իսկ 2019 թվականին 2018 թվականի նկատմամբ՝ 9.3%-ով:

Միջնաժամկետ հատվածում երիտասարդության ոլորտի հատկացումների աճը պայմանավորված է.

- «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի ծախսերի աճով, կապված վերաֆինանսավորվող վարկերի ծավալների (շուրջ 30 տոկոոսով), ինչպես նաև ծրագրի շահառուների թվի ավելացման հետ:

ԳԼՈՒԽ 11. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

11.1. ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ գյուղատնտեսությունը, 2010-2015 թվականների միջին տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 18.4 %-ը: 2015 թվականին գյուղատնտեսության հաշվին ապահովվել է երկրի համախառն ներքին արդյունքի 17.3%-ը: Ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսական համակարգ, որը ներառում է ավելի քան 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Աղյուսակ 11.1

ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ		
Ծառայությունների շրջանակի նկարագրություն	**Շահառուների շրջանակի նկարագրություն**	**Պետական հատվածի կողմից մատուցվող ծառայությունների գծով ծախսերի փոխհատուցման ծավալը**
1.Գյուղատնտեսության կառավարման ոլորտում ծառայությունների մատուցում	ՀՀ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներ	Ամբողջությամբ
2.Հողերի բերրիության պահպանմանն, բարձրացմանն և բնական կերհանդակների (արոտների) բարելավմանն ուղղված ծառայություններ	ՀՀ հողօգտագործողներ	Ամբողջությամբ
3.Բույսերի պաշտպանության բնագավառում ծառայությունների մատուցում	Գյուղատնտեսական կուլտուրաներ մշակող ֆերմերներ	Անտառների և գյուղատնտեսական մշակաբույսերի մասով
4.Անասնաբուժության բնագավառում ծառայությունների մատուցում	Գյուղատնտեսական կենդանիների սեփականատերեր	Ամբողջությամբ
5.Անտառային տնտեսության ոլորտում ծառայությունների մատուցում	ՀՀ ազգաբնակչություն	Ամբողջությամբ
6.Անասնաբուծության բնագավառում ծառայությունների մատուցում	Գյուղատնտեսական կենդանիների սեփականատերեր	Ամբողջությամբ
7.Ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատաս-խան գյուղատնտեսության վարման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցում	ՀՀ ֆերմերային տնտեսություններ	Ամբողջությամբ
8.Բույսերի կարանտինի և բուսասանիտա-	ՀՀ ազգաբնակչություն	Ամբողջությամբ

րական վիճակի բարելավման բնագավառում ծառայությունների մատուցում		
9.Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	ՀՀ ազգաբնակչություն	Մասնակի
10.Գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելի գներով մատակարարում	ՀՀ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներ	Գնի մի մասի սուբսիդավորում

11.1.2. Վերջին երկու տարիներին ոլորտի զարգացման միտումները

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2015 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, ոլորտում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելիության բարձրացմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանն ու անտառային տնտեսության զարգացմանը:

Իրականացված պետական քաղաքականության և գյուղատնտեսությունում տնտեսավարողների ջանքերով 2012, 2013, 2014 և 2015 թվականներին գյուղատնտեսությունում գրանցվել են էական դրական տեղաշարժեր: Համախառն արտադրանքի աճը 2012 թվականին կազմել է 9.5%, 2013 թվականին՝ 7.1%, 2014 թվականին՝ 7.2%, իսկ 2015 թվականին՝ 11.7%:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը ընթացիկ գներով և համախառն արտադրանքի աճը 2012-2015թթ. համար ներկայացված է ներքոհիշյալ աղյուսակ 11.2-ում:

Աղյուսակ 11.2

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը և նրա աճի տեմպը 2012-2015թթ.

	2012թ.	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը /ընթացիկ գներով/ մլրդ դրամ	841.5	918.6	993.4	1002.2
Համախառն արտադրանքի աճը նախորդ տարվա նկատմամբ	9.5	7.1	7.2	11.7

2015 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի 60.5 տոկոսը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 39.5 տոկոսը անասնապահությանը:

Գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքները և համախառն արտադրանքի ցուցանիշները 2012-2015թթ. ներկայացված են 11.3-րդ և 11.4-րդ աղյուսակներում:

Աղյուսակ 11. 3

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները (հազ. հեկտար)

Գյուղատնտեսական դաշտային մշակաբույսերը	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**2015թ. 2014թ. նկատմամբ %**
Հացահատիկային մշակաբույսեր	172.2	178.4	188.7	201.3	106.7
Կարտոֆիլ	31.2	30.7	31.6	33.3	105.4
Բանջարեղեն	25.2	25.4	26.4	29.1	110.2
Բոստանային մշակաբույսեր	5.1	5.4	5.8	6.8	117.2
Կերային մշակաբույսեր	66.9	74.7	77.1	78.2	101.4
Տեխնիկական մշակաբույսեր	3.5	3.5	3.2	3.1	96.9
Ընդամենը	304.2	318.1	332.8	351.8	105.7

Աղյուսակ 11.4

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի արտադրության ծավալները (հազ. տոննա)

Բուսաբուծական հիմնական մթերքները	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**2015թ. 2014թ. նկատմամբ %**
Հացահատիկ	456.1	548.8	590.6	637.9	108.0
Կարտոֆիլ	647.2	660.5	733.2	761.7	103.9
Բանջարեղեն	849	875.8	954.6	1031.5	108.0
Բոստան	205.1	208.1	245.7	286.8	116.7
Պտուղ	331.7	338.1	291.0	386.5	132.8
Խաղող	241.4	240.1	261.3	309.2	118.3

Վերջին տարիներին նկատելիորեն բարձրացել է այգիների ինտեսիվացման մակարդակը: Դա պայմանավորված է նաև խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի որոշակի մեղմացմամբ:

2015 թվականին աճ է գրանցվել նաև հիմնական անասնագլխաքանակի և անասնապահական հիմնական մթերքների արտադրության բնագավառում:

Գյուղատնտեսական հիմնական կենդանիների գլխաքանակի փոփոխությունը 2012-2015թթ. ներկայացված է 11.5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 11.5

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (տարեվերջի դրությամբ (հազ. գլուխ)

	2012թ.	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**2015թ. 2014թ. նկատմամբ %**
Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	661.0	677.6	688.5	701.5	101.9
այդ թվում՝ կովեր	303.3	309.6	313.9	318.6	101.5
Խոզերի գլխաքանակը	145.0	139.8	142.4	174.8	122.8
Ոչխարների և այծերի գլխաքանակը	674.7	717.6	745.8	778.1	104.3

Անասնապահական հիմնական մթերքներից 2015 թվականին նախորդ տարվա նկատմամբ ավելացել է մսի, կաթի և բրդի արտադրության ծավալները:

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները ներկայացված են 11.6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 11.6

Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները

Անասնապա-հական հիմնական մթերքները	Չափի միավորը	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**2015թ. 2014թ. նկատմամբ %**
Միս (կենդանի քաշով)	հազ.տ	130.3	146.8	163.3	176.1	107.8
Կաթ	հազ.տ	618.2	657	700.4	728.6	104.0
Ձու	մլն հա	658.1	615.2	641.8	659.8	102.8
Բուրդ	տոննա	1272	1420	1471	1702	115.7

Գործող վերամշակող ընկերությունների կայուն գործունեության արդյունքում բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման վիճակը: 2015 թվականին մթերվել և վերամշակվել է 280.9 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող՝ նախորդ տարվա 232.1 հազ. տոննայի դիմաց:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բույսերի պաշտպանության, անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև բարձրորակ սերմերի, տոհմային և մթերատու բարձր հատկանիշներ ունեցող կենդանիների մատակարարման, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի, վարկերի մատչելիության բարձրացման և այլ ուղղություններով:

11.1.3. Հիմնական խնդիրները

Գյուղատնտեսության առջև ծառացած են հետևյալ հիմնական խնդիրները.

- կենդանիների վարակիչ հիվանդությունների ախտորոշումը, սննդամթերքի անվտանգության լաբորատոր փորձաքննության իրականացումը,

- գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում վնասակար օրգանիզմներով վարակվածության աստիճանի բարձր մակարդակի նվազեցումը, առողջ և բարձր բերքի ստացումը, որը կհանգեցնի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը,

- ՀՀ տարածքում վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելումը, դրանց օջախների վերացումը, կայուն համաճարակային վիճակի ապահովումը, ՀՀ տարածքը կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանումը և կենդանական

ծագման հումքի ու սննդամթերքի արտադրության, վերամշակման, պահպանման, իրացման, ինչպես նաև ներմուծվող և արտահանվող բեռների անվտանգության ապահովումը,

- գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բուսասանիտարական մոնիտորինգի իրականացումը, կարանտին և առավել վնասակար օրգանիզմների տարածման արեալների ճշտումը, փորձանմուշների փորձաքննությունների միջոցով թաքնված ու նոր օջախների հայտնաբերումը, թունանյութերի լաբորատոր փորձաքննությունների կատարումը,

- ապօրինի գործողություններից անտառների պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը և պետությանը պատճառված վնասների նվազեցումը,

- վարկավորման պահանջարկի և մատչելիության ապահովումը (չնայած վերջին ժամանակահատվածում վարկերի մատչելիության ուղղությամբ որոշակի դրական տեղաշարժերի),

- Եվրամիությունում ընդունված չափանիշներին համապատասխան Հայաստանում արտադրվող և վերամշակվող կենդանական ծագման մթերքի անվտանգության և որակի ապահովումն ու հսկողությունը,

- Հայաստանի Հանրապետությունում արտադրված կենդանական ծագման մթերքի մեջ մնացորդային նյութերի քանակական հայտնաբերումը:

11.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

11.2.1. Նպատակները

Գյուղատնտեսությունում 2017-2019 թվականներին վարվող քաղաքականությունը կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Գյուղատնտեսության ոլորտի նպատակները բխում են ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ընդհանուր նպատակներից և ամրագրված են ՀՀ Նախագահի 2011 թվականի ՆՆԿ 91-Ն կարգադրությամբ հաստատված ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգում, ՀՀ կառավարության 2013 թ. մայիսի 16-ի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N 515-Ա, ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն, ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի «ՀՀ անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 1232-Ն որոշումներով հաստատված ծրագրային փաստաթղթերում:

Գյուղատնտեսության ոլորտում 2017-2019թթ. միջնաժամկետ ծրագրի նպատակներն են.

- օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի բարեփոխումներ և կառավարման բարելավում,

- հողերի բերրիության պահպանում և բարձրացում,

- ՀՀ անտառային տարածքների պահպանություն ապօրինի հատումներից,

- ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարում, գյուղացիական տնտեսություններին համապատասխան խորհրդատվական ծառայությունների մատուցման ապահովում,

- գյուղատնտեսության բնագավառում հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրում,

- գյուղատնտեսական մշակաբույսերի բարձրորակ բերքի անկորուստ ստացում, բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպում, դրանց տարածման շրջանակների նվազեցում,

- կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումներ, ներմուծվող և արտադրվող անվտանգ կենդանական ծագման մթերքներով բնակչության ապահովում, կարանտին օրգանիզմների և կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի և կենդանիների միջոցով հանրապետության տարածք վարակիչ հիվանդությունների ներթափացման կանխարգելում և պարենային ապահովության ու պարենային անվտանգության մակարդակի բարձրացում:

11.2.2. Գերակայությունները

2017-2019թթ. վարվող քաղաքականությունը կնպատակաուղղվի ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվեն գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության կազմակերպման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման, բնակչության աղքատության մակարդակի կրճատման համար:

Նշված քաղաքականության իրականացման համար նախատեսվում է 2017-2019թթ. պետական բյուջեներով ծախսերը նպատակաուղղել հետևյալ գերակա ուղղություններին.

- Անասնաբուժություն և հակահամաճարակային միջոցառումներ (պատվաստուկների ձեռքբերում, պատվաստատումների իրականացում, կարանտինային միջոցառումներ),

- Անտառպահպանական ծառայություններ,

- Անտառային պետական մոնիտորինգի իրականացում,

- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում,

- Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար,

- Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար,

- Գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ խորհրդատվությամբ ապահովում,

- Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտում ծառայություններ,

- Հողերի ագրոքիմիական հետազոտություն և բերրիության բարձրացման միջոցառումներ,

- Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ,

- Սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի արտադրության, վերամշակման, պահման, իրացման բոլոր փուլերում, ինչպես նաև ներմուծման և արտահանման դեպքերում անասնաբուժասանիտարական պահանջների նկատմամբ անվտանգության վերահսկողության իրականացում,

- Սննդամթերքի անվտանգության ոլորտներին վերաբերվող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերի մոտարկումը Եվրամիության պահանջների չափանիշներին և համապատասխանեցումը Եվրասիական Տնտեսական Միության համապատասխան բնագավառների վերաբերյալ օրենսդրությանը,

- «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում,

- Նոր ախտորոշման մեթոդների կիրառման և արդիական սարքավորումների ներդրման միջոցով վարակիչ հիվանդությունների և սննդամթերքի անվտանգության անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր հետազոտությունների արդյունավետության, որակի և հավաստիության բարձրացում:

11.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

11.3.1 Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գյուղատնտեսության ոլորտում 2017-2019թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

<u>«Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ»</u>

Բուսաբուծության կայուն զարգացման տեսակետից կարևորագույն միջոցառումներից մեկը բույսերի նոր սորտերի փորձարկումների և դրանց արդյունքների հիման վրա արտադրության մեջ

լավագույն սորտերի ներդրման կազմակերպումն է: Այդ աշխատանքներն ունեն շարունակական բնույթ և համապետական մասշտաբով ապահովում են հայրենական և արտերկրի սելեկցիոն կենտրոնների կողմից բուծված արդյունավետ սորտերի օգտագործման և այդ նվաճումների իրավական պաշտպանության խնդիրների լուծումը:

Նշված ծրագրի իրագործումը հնարավորություն է ընձեռում կանխել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի ու տնկանյութի օգտագործումը և ապահովել կոնդիցիոն սերմերի վերարտադրություն:

Նախատեսվող միջոցառումներն են՝

- սորտային նույնականացման աշխատանքների իրականացում,

- սերմերի խմբաքանակներից նմուշների ընտրություն,

- սերմնանմուշների լաբորատոր փորձարկումների կազմակերպում:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 59.0 մլն դրամ:

«Բույսերի պաշտպանության միջոցառումներ»

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երեք բաղադրիչով.

1. Պայքար մկնանման կրծողների դեմ: Նախատեսվում Է գյուղական համայնքներին անհատույց տրամադրել մկնասպան քիմիական միջոց՝ գյուղացիական տնտեսությունների կողմից մկնանման կրծողների դեմ պայքար կազմակերպելու նպատակով, ինչպես նաև կենտրոնացված կարգով պայքար իրականացնել տրակտորային ցրիչներով:

2. Պայքար մորեխների դեմ: Այս ծառայությունը կիրականացվի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններում, խոտհարքներում, արոտներում և այլ հողատեսքերում ինչպես կենտրոնացված կարգով, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների միջոցով՝ նրանց անհատույց հատկացնելով համապատասխան բույսերի պաշտպանության միջոցներ:

3.Պայքար անտառի վնասակար օրգանիզմների դեմ: Նախատեսվում է հանրապետության անտառային տարածքներում ավիացիայի միջոցով իրականացնել պայքարի կենտրոնացված ծառայություններ:

Նշված Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 100.0 մլն դրամ:

«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ»

Այս Ծրագրի իրականացումն ուղղված է գյուղատնտեսության ոլորտի հողերի բերրիության պահպանման և բարձրացման ընդհանուր նպատակի կատարմանը՝ պարարտանյութերի խնայողաբար, արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ օգտագործման միջոցով:

Ծրագրի իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարում ակնկալվում է ստանալ հանրապետության 170 համայնքների հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող և պարարտանյութերի պահանջարկի համար ագրոքիմիական քարտեզներ, մշակաբույսերի պարարտացման համար գիտականորեն հիմնավորված և կազմված երաշխավորագրեր:

Նշված արդյունքներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- գյուղատնտեսական նշանակության հողատարածությունների ագրոքիմիական դաշտային հետազոտություններ (հողանմուշների նմուշառում),

- հողանմուշների լաբորատոր փորձաքննություններ և գնահատում,

- ագրոքիմիական քարտեզների կազմում և համայնքներին հանձնում,

- մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում և համայնքներին հանձնում:

Միջոցառումները կրում են շարունակական բնույթ և յուրաքանչյուր համայնքի համար այն պետք է կատարվի 5 տարին մեկ անգամ՝ հաշվի առնելով, որ հողի բերրիության հիմնական ցուցանիշներ հանդիսացող սննդատարրերի պարունակությունը էական փոփոխություն է կրում այդ ժամանակահատվածում:

Այս ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 71.3 մլն դրամ:

<u>«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»</u>

Հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով իրականացվում են ամենամյա հակաանասնահամաճարակային կանխարգելիչ պարտադիր միջոցառումներ:

Այս ծրագրով նախատեսվում է գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, վարրոատոզ, խեկ վարակիչ մաշկաբորբ) դեմ պայքարի հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

Ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն հակաանասնահամաճարակային վիճակի ստեղծմանը, պահպանմանը և ամրապնդմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարորակ անասնապահական մթերքի և հումքի արտադրության ապահովմանը, կենդանիների և

մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանությանը, ինչպես նաև կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատմանը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 1,188.5 մլն դրամ:

«Գյուղական խորհրդատվական ծառայություններ»

Նշված ծրագրով նախատեսվում է 2017-2019թթ. շարունակել ագրարային տեխնոլոգիաների գնահատման և ցուցադրական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև գյուղական վայրերի բնակչությանը մատուցել գյուղատնտեսության ոլորտին վերաբերող խորհրդատվական ծառայություններ: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է գյուղատնտեսության ոլորտում ձևավորել կայուն խորհրդատվական համակարգ, որը ֆերմերներին հնարավորություն կտա բարձրացնել գյուղմթերքների արտադրության ծավալները, որակը և կազմակերպվածությունը, ինչն էլ կհանգեցնի գյուղատնտեսական արտադրանքի իրացվելիության մակարդակի բարձրացմանը և նրանց եկամուտների ավելացմանը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 397.1 մլն դրամ:

«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցում»

Այս ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի ունենալ բույսերի վնասակար օրգանիզմներով վարակվածության ճշտված արեալ, կանխատեսման համար հետազոտված գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որի արդյունքում նվազագույնի կհասցվի ոչ նպատակային քիմիական պայքարի կատարումը, կնպաստի շրջակա միջավայրի քիչ ախտոտվածությանը, ինչպես նաև հանրապետությունում յուրաքանչյուր տարի գյուղատնտեսական կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության բարձր մակարդակ, որը կբերի հողօգտագործողների ֆինանսական միջոցների խնայողության և պարենային անվտանգության ապահովման:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 135.2 մլն դրամ:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար»

Հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական նյութական միջոցների գների սուբսիդավորման միջոցով հողօգտագործողներին մատչելի գնով անհրաժեշտ պարարտանյութերի

ձեռքբերման հարցում աջակցելը՝ դրանով իսկ հողերի արդյունավետ օգտագործման, ցանքատարածությունների ու գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 2,560.0 մլն դրամ:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար»

Հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի հիմնական նպատակն է գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական նյութական միջոցների գների սուբսիդավորման միջոցով հողօգտագործողներին մատչելի գնով անհրաժեշտ դիզելային վառելանյութի ձեռքբերման հարցում աջակցելը և հողերի արդյունավետ օգտագործման, ցանքատարածությունների ու գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման միջոցով գյուղացիական տնտեսությունների եկամուտների բարձրացմանը նպաստելը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 330.0 մլն դրամ:

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»

Ծրագրի իրականացման նպատակը գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է: Ծրագրի իրականացման հիմքն է ՀՀ կառավարության 31.03.2011թ. N349-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» կարգը, որով նախատեսվել է սուբսիդավորել գյուղացիական տնտեսությունների տրամադրված վարկերի տոկոսադրույքները 6 տոկոսի չափով:

Ծրագրի իրականացման արդյունքում կապահովվի գյուղատնտեսությունում տնտեսավարողների կարողությունների ընդլայնումը, գարնան գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը, ինչպես նաև բերքահավաքի, աշնանացանի, արտադրանքի պահպանման համար գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի (հատկապես վարելահողերի օգտագործման մակարդակի բարձրացման համար) բարենպաստ պայմանների ստեղծումը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 1,163.0 մլն դրամ:

«Անտառապահպանական ծառայություններ»

Ծրագիրն իրականացվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջոցով, որի տնօրինությանը հանձնված հանրապետության անտառային պետական ֆոնդի տարածքը կազմում է ավելի քան 344.2 հազ. հա, որտեղ անտառտնտեսվարում իրականացնելու համար գործում են 19 անտառտնտեսության մասնաճյուղեր:

Անտառային տարածքները պահպանելու համար անտառշինական նախագծերի համաձայն ստեղծվել են 83 անտառպետություններ և 509 պահաբաժիններ: Ծրագրով նախատեսված ծախսերն ուղղվելու են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 887 աշխատակիցների աշխատավարձերին:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 1,201.4 մլն դրամ:

«Անտառային պետական մոնիթորինգի իրականացում»

Ծրագիրն իրականացվում է «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և ուղղված է ՀՀ անտառային տարածքների պահպանության, վերարտադրության, պաշտպանության ընդհանուր նպատակի կատարմանը՝ անտառային պետական մոնիտորինգի միջոցով:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 54.6 մլն դրամ:

«Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում»

Ծրագրի իրականացման նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կենդանիների հիվանդությունների և վարակամերժության (իմունայնության) աստիճանի որոշմանն ուղղված լաբորատոր փորձաքննությունների իրականացում, բույսերի կարանտին, առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերում, բույսերի պաշտպանության միջոցների ազդող նյութի որոշման նպատակով փորձաքննությունների իրականացում, ինչպես նաև ռեակտիվների, ախտահանիչների և այլ միջոցների պահպանում ու բաշխում:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 347.0 մլն դրամ:

«Բուսասանիտարական համակարգի բարելավում և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն»

Ծրագրով նախատեսվում է 2017-2019թթ. յուրաքանչյուր տարում իրականացնել 20 կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց դեմ պայքարի միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցերի մշակում և 500 օրինակից տպագրում:

Միաժամանակ ծրագրով նախատեսվել է իրականացնել նաև բուսասանիտարիայի տեսչության աշխատակիցների (42 հաստիքային միավոր) վերապատրաստման գործընթացը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 4.3 մլն դրամ:

«Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ»

Ծրագրով նախատեսվում է հանրապետությունում կենդանական և բուսական ծագմամբ սննդամթերքի պարտադիր փորձաքննության և բուսասանիտարական ստուգման իրականացում:

Նշված գործառույթն իրականացվելու է սննդամթերքի արտադրության և իրացման կետերից փորձանմուշներ վերցնելու և դրանք լաբորատոր փորձաքննության ենթարկելու միջոցով:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 10.0 մլն դրամ:

«ԵՄ-ի փորձարկման ռեֆերենս մեթոդներով մեղրի և ձկան փորձաքննությունների ծառայություններ»

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հանրապետությունում արտադրված մեղրում և ձկնամթերքում մնացորդների (դեղամիջոցներ, պեստիցիդներ և այլն) առկայության մոնիթորինգ:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 30.0 մլն դրամ:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր

Ծրագրի նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,829.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,579.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 249.4 մլն. դրամ, 2018թ.՝ 2,462.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,306.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 155.6 մլն. դրամ, 2019թ.՝ 6,882.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 5,526.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,355.5 մլն. դրամ:

2. Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա/ Գյուղական ֆինանսավորման աջակցություն (իրականացվում է ԳՖԿ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջոցով)

բ/ գյուղական ենթակառուցվածքների վերականգնում, մասնավորապես ոռոգման և բազմանպատակ կենցաղային ջրամատակարարման համակարգեր,

գ/Ֆերմերների իրազեկության բարձրացում և աջակցություն,

դ/ Ծրագրի կառավարում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,007.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 971.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 36.04 մլն. դրամ, 2018թ.՝ 937.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 918.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 18.3 մլն. դրամ, 2019թ.՝ 1,995.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,889.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 105.7 մլն. դրամ:

3. ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

ա/ Գյուղական ֆինանսավորման աջակցություն (իրականացվում է ԳՖԿ-ի և ՀԳՏՏՋՀ-ի միջոցով)

բ/ գյուղական ենթակառուցվածքների վերականգնում, մասնավորապես ոռոգման և բազմանպատակ կենցաղային ջրամատակարարման համակարգեր,

գ/Ֆերմերների իրազեկության բարձրացում և աջակցություն,

դ/ Ծրագրի կառավարում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 979.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 796.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 182.6 մլն. դրամ, 2018թ.՝ 1,346.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,229.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 117.2 մլն. դրամ, 2019թ.՝ 2,645.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,358.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 287.0 մլն. դրամ:

4. Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսված են 826.6 մլն. դրամի չափով վարկավորմանն ուղղվող միջոցներ:

ԳԼՈՒԽ 12. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

12.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12.1.1 Ոլորտի (համակարգի) ընդհանուր նկարագիրը

Բնապահպանության ոլորտի խնդիրն է հնարավորինս առավելագույն չափով նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները:

Կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն, արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունքն են, և դրանք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են:

Ուշադրության արժանի են նաև վտանգավոր քիմիական նյութերը, կայուն օրգանական աղտոտիչները, արտադրության պրոցեսում առաջացող վտանգավոր արտադրական թափոնները, ինչպես նաև մարդու կենսագործունեության հետևանքով առաջացած կենցաղային թափոնները, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը և որոնց գործածությունը պահանջում է կառավարման լուրջ մոտեցում:

Հասարակության կայուն զարգացումը, ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության ներդաշնակ երկմիասնական գործունեությունը պարտադիր կերպով ենթադրում է համապատասխան կառավարման համակարգի առկայություն, որը հասարակական գիտակցության բարձր աստիճանի, օրենսդրական կատարյալ դաշտի, օրենքների ու օրինականության գերակայության պայմաններում կոչված է ապահովելու երկրի ներսում բնօգտագործման և բնապահպանության նկատմամբ պետական-հասարակական վերահսկողության ու կարգավորման հակակշիռների գործուն մեխանիզմների արդյունավետ աշխատանքը:

Հայաստանի տնտեսության զարգացումը առաջիկա տարիներին շարունակելու է ունենալ տեխնածին բնույթ և, այդ առումով, հանրապետությունում առկա բնապահպանական հիմնախնդիրների (հիմնահարցերի) լուծումն ավելի է բարդանալու, ավելի ծախսատար է դառնալու: Նույնիսկ ներկա վիճակով Հայաստանի շրջակա բնական միջավայրը պահպանելու համար

հանրությունից պահանջվելու է լրացուցիչ բնապահպանական միջոցառումների ու ծախսերի կատարում:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման արդյունքների շահառուները՝ Հայաստանի Հանրապետության բնակչությունն ու միջազգային հանրությունն է, որոնց համար երկրում և տարածաշրջանում ստեղծվում/ապահովվում է բարենպաստ/անվտանգ շրջակա միջավայր:

	Ծառայությունների շրջանակի նկարագրություն		Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	1001	Բնապահպանության ոլորտում քաղաքականության մշակման, տեսչական և աջակցության ծառայություններ, ծրագրերի համակարգում	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
2.	1016	Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական ծառայություններ	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
3.	1025	Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովող պայմանների սահմանում	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ
4.	1133	ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում	ՀՀ համապատասխան համայնքների բնակչություն	Ամբողջությամբ
5.	1155	Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ	ՀՀ բնակչություն	Ամբողջությամբ

12.1.2 Վերջին երկու տարիների ոլորտի (համակարգի) զարգացման միտումները

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանության ոլորտի զարգացումն ընթացել և ընթանում է բյուջետային հատկացումների և միջազգային ֆինանսական/բնապահպանական կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների ընձեռած հնարավորությունների շրջանակներում, նպատակաուղղված լինելով՝

- կանխարգելել/կամ նվազեցնել շրջակա միջավայրի հետագա աղտոտումը,
- պահպանել կենսաբազմազանությունը,
- ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռությունն ապահովող պայմանները,
- չվերականգնվող բնական ռեսուրսների գծով ապահովել դրանց բանական և արդյունավետ օգտագործումը:

Վերջին տարիներին, ելնելով սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխությունից, իրականացվել են բնապահպանության ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի կատարելագործման և արդիականացման (թարմացման) աշխատանքներ՝ այդ թվում ընդունվել են մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող օրենսդրական նախագծեր և ծրագրեր, ապահովվել է դրանց կիրարկման գործընթացը՝ համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակման և իրականացման միջոցով: Այդ ամենը բարձրացրել է երկրում վարվող բնապահպանական քաղաքականության արդյունավետությունը՝ այն դարձնելով ավելի հասցեական և գործուն:

2014 -2015թթ. ՀՀ բնապահպանութան նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվ իրավական ակտերի թվաքանակի դինամիկան

Նորմատիվ ակտերի տեսակը	Նորմատիվ ակտերի քանակն՝ ըստ տարիների	
	2014թ.	2015թ.
Օրենքներ	5	7
ՀՀ կառավարության որոշումներ	30	32
ՀՀ վարչապետի որոշումներ	5	8
Գերատեսչական ակտեր	9	9

Բնապահպանական միջոցառումներ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտի զարգացումները հիմնականում իրականացվել են կայուն զարգացման գերակայությունների շրջանակներում և ՀՀ Կառավարության որոշմամբ հավանության արժանացած ծրագրերին համապատասխան:

Դրական տեղաշարժեր են արձանագրվել մի շարք ուղղություններով:

Ա. Օրինաստեղծ աշխատանք

ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են՝

- «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի փաթեթը (ներառում է օրենքի 3 նախագիծ),
- «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը (ներառում է օրենքի 4 նախագիծ):

2015 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել են ռազմավարական (հայեցակարգային) նշանակություն ունեցող ներքոհիշյալ փաստաթղթերը՝

- ՀՀ-ում անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը,

- «ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ ներդրումը»,
- ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և 2016-2020 թվականների գործողությունների ազգային ծրագիրը:

Բ. Կենսաբազմազանության պահպանության ոլորտի գծով՝

Բ.1. Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների տեղում բնական ցիկլի վերականգնում

Նախատեսված **400.0 հազ.հատ** մանրաձկան դիմաց հաշվետու տարվա ընթացքում աճեցվել և Սևանա լիճ է բաց թողնվել ավելի քան **605.5 հազ. հատ** գեղարքունի և ամառային իշխան տեսակի մանրաձուկ:

Բ.2. ԲՀՊՏ տարածքների ճշտում, քարտեզագրում և գրանցում

ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 731-Ն որոշմամբ ճշգրտվել և հստակեցվել են «Զանգեզուր» պետական արգելավայրի և «Արևիկ» ազգային պարկի սահմանները:

ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N1119-Ն որոշմամբ «Արգելոցա-պարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Էրեբունի» պետական արգելոցի տարածքն ընդլայնվել է 31,52 հա-ով և ներկայումս կազմում է 118,75 հա:

Բ.3. Թույլտվություններ /լիցենզիաներ

Հաշվետու տարվա տվյալներով ձևակերպվել և սահմանված կարգով տրամադրվել են. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով (CITES) կարգավորման ենթակա վայրի կենդանիների թվով՝ 2238 թառափազգիների արտահանման թույլտվություններ (2014թ.՝ 1650), որոնցից 2101 ձկան համար 1754,2 տ (2014թ.՝ 1622) ընդհանուր քաշով և 112 հատ (2014թ.՝ 16) թառափի խավիարի համար 2171.7 կգ ընդհանուր քաշով:

Բ.4. Անտառտնտեսական աշխատանքներ

Բնության հատուկ պահպանվող տարածքներում 2015թ.-ի ընթացքում իրականացվել են 31,0 հա անտառապատման, 15,0 հա տնկարանի հիմնման և տնկանյութի աճեցման աշխատանքներ:

Գ.Ջրային ռեսուրսների պահպանություն

Գ.1. Արարատյան դաշտի սփորերկրյա քաղցրահամ ջրերի պաշարների վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացում

2015թ. շարունակվել են Արարատյան դաշտում ապօրինի շահագործվող հորատանցքերի լուծարման և/կամ կոնսերվացման, փականային ռեժիմի բերման, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությամբ /ՋԹ/ տրված ջրաքանակների վերանայման աշխատանքները: 2014-2015թթ.

լուծարված, ինքնաշատրվանող խորքային հորերի կոնսերվացման կամ փականային ռեժիմի բերելու արդյունքում տարեկան խնայվել է **701,5 մլն**. մ^3/տարի ջուր:

Համաձայն ՀՀ կառավարության 18.09.2014թ. N1111-Ն որոշման պահանջների, գոյություն ունեցող ՋԹ-ներում կատարվել են նաև ջրօգտագործման ծավալների և (կամ) ռեժիմների կրճատման սահմանափակումներ և սահմանվել են նոր չափաքանակներ. խնայվել է **19623.5**լ/վ ջրաքանակ, որը տարեկան կազմում է շուրջ **618.8մլն մ^3**: Արդյունքում խնայված ջրաքանակի հաշվարկային ընդհանուր ծավալը կազմել է 41 867.8 լ/վ կամ տարեկան **1320.3 մլն մ^3**:

ԵՄ «Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանության» ծրագրի շրջանակներում ձկնաբուծական տնտեսությունների 3 հորատանցքերում տեղադրվել են թվային ջրաչափական սարքավորումներ և գործարկվել է ստորերկրյա ջրերի մոնիթորինգի նոր դիտահոր, որի վրա տեղադրվել են ժամանակակից ավտոմատ սարքավորումներ:

Գ.2. Սևանա լճի հիմնահարցերի լուծում

Սևանա լճի մակարդակը 31.12.2015թ. դրությամբ կազմել է **1900.19 մ**, ինչը նախորդ տարվա նույն օրվա դրությամբ (**1900.13 մ**) բարձրացել է **6 սմ-ով**:

Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնված ջրաքանակը կազմել է **167.743 մլն մ^3**՝ 2014թ. ցուցանիշից **101.89 մլն մ^3**-ով պակաս:

Արփա-Սևան ջրատարով տարեսկզբից Սևանա լիճ դեկտեմբերի 31-ի դրությամբ մուտք է գործել **111.619 մլն մ^3** ջրաքանակ, ինչը **18.610 մլն մ^3**-ով պակաս է 2014թ. նույն ցուցանիշից (**130.229 մլն մ^3**):

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծրագրի շրջանակներում 2015թ. իրականացվել են **142.5հա** տարածքի մաքրման աշխատանքներ (տարեկան ծրագիրը՝ 135 հա):

Գ.3. Ջրավազանային կառավարման պլանների մշակում

2015թ. ԱՄՆ ՄԶԳ «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի շրջանակներում մշակվել են Հարավային, ինչպես նաև «Հայհիդրոէներգանախագիծ» ՓԲԸ-ի կողմից պետական բյուջեի շրջանակներում Արարատյան դաշտի ջրավազանային կառավարման պլանների նախագծերը:

<u>Դ. Ընդերքի և հողերի պահպանության բնագավառ</u>

ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով ֆինանսական նախադրյալներ են ստեղծվում ապօրինի շահագործված կամ լքված հանքավայրերի տարածքներում ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ընդհանուր մուտքերը 30.12.2015թ. դրությամբ կազմել են 902.1 մլն դրամ, որից 18.2 մլն դրամ գումարը մուտքագրվել է 2015թ. ընթացքում, իսկ բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով

մշտադիտարկումների կատարման համար՝ 44.4 մլն դրամ, որից 2.1 մլն դրամ գումարը մուտքագրվել է 2015թ. ընթացքում:

Ե. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում

«Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի փաթեթի ընդունման արդյունքում էականորեն բարելավվել է այդ օրենքի կիրարկման արդյունավետությունը, հատկապես՝ վտանգավոր թափոնների անձնագրավորման (ծավալների աճ 3.7 անգամ) և թափոնների հեռացման վայրերի ռեեստրային գրանցման (ծավալների աճ 2.3 անգամ) աշխատանքների գծով:

«Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիայի նախնական գնահատում ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում իրականացվել է սնդիկի հիմնական աղբյուրների և սնդիկ պարունակող ապրանքների ու թափոնների հաշվառում՝ Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիան հետագայում ՀՀ կողմից վավերացնելու նպատակով:

Զ. Մթնոլորտային օդի պահպանություն

Մշակվել է «ՀՀ Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրումներ» (INDC) փաստաթուղթը, որը հաստատվել է ՀՀ կառավարության 10.09.2015թ. նիստի արձանագրային որոշմամբ և 28.09.2015թ. ներկայացվել Կլիմայի փոփոխության կոնվենցիայի քարտուղարություն: 30.11.2015թ. կոնվենցիայի 21-րդ համաժողովում (Փարիզում) ՀՀ Նախագահն իր ելույթում հիշատակել է այդ փաստաթղթի հիմնական դրույթները:

Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի կողմերի հանդիպման 21-րդ նստաշրջանի լիագումար նիստում քննարկվել է համաձայնագրի նախագիծը, որի վերաբերյալ իր առաջարկություններն է ներկայացրել նաև Հայաստանը, որոնք, հետագայում գրեթե ամբողջությամբ ընդունվել են: Համաձայնագիրը հավանության է արժանացել և ընդունվել է 11.12.2015թ. կայացած եզրափակիչ լիագումար նիստում:

Իրականացվել է սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագծերի քննություն և տրամադրվել չափաքանակների/արտանետման 166 թույլտվություն /2014թ՝.135/, որից 68-ը նոր, իսկ 98-ը՝ վերաձևակերպումով: Օզոնային շերտը քայքայող նյութերի՝ ՀՀ ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) կազմել են 114.02 տ/տ՝ /2014թ. 126.69 տ/տ/:

Է. Շրջակա միջավայրի վրա ներգործության պետական մոնիթորինգի բնագավառ

Մակերևութային ջրերի նմուշառման 131 դիտակետում իրականցվել են մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիտորինգի միջոցառումներ, որոնք ընդգրկում են հանրապետության մեծ և միջին մեծության 42 գետ, 6 ջրամբար և Սևանա լիճը: Օդային ավազանի որակի

դիտարկումներ կատարվել են ՀՀ 11 քաղաքում և Սյունիք գյուղում, որտեղ որոշվում են օդի գետնամերձ շերտում ծծմբի և ազոտի երկօքսիդների պարունակությունները: Ընդհանուր առմամբ գործում է **6** ավտոմատ և **17** ստացիոնար դիտարկման կայան և **230** պասիվ նմուշառման դիտակետ:

Ը. Փորձաքննություն

2015թ. փորձաքննության ներկայացված 142 նախագծերից դրական եզրակացություն է տրվել 100–ին, բացասական՝ 1-ին, ընթացքի մեջ է 41 նախագիծ:

Թ. Միջազգային համագործակցություն

24.12.2015թ. Երևանում կայացած հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 13-րդ նիստի շրջանակներում ստորագրվել է նոր Փոխըմբռնման հուշագիր՝ ՀՀ բնապահպանության նախարարության և ԻԻՀ շրջակա միջավայրի պահպանության վարչության միջև:

ՌԴ հետ երկկողմ համագործակցության հուշագիրը պատրաստ է ստորագրման, իսկ Ղազախստանի և Բելառուսի հետ երկկողմ համագործակցության հուշագրերը համաձայնեցման փուլում են:

Մշակվել են ՀՀ մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա վտանգավոր թափոնների ցանկերը, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի ցանկը, որոնց տեղափոխումը սահմանափակ է ԵՏՄ մաքսային տարածքով ներմուծման և արտահանման դեպքում, ինչպես նաև մշակվել են այդ վտանգավոր թափոնների և նյութերի արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների տրամադրման գործընթացի առանձնահատկությունները:

Իրականացվել է 33 միջազգային ծրագիր (22 ազգային և 11 տարածաշրջանային), այդ թվում՝ «Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի հետ համագործակցության հանձնաժողովի 09.10.2015թ. նիստի որոշմամբ հավանության է արժանացել «Ազգային պորտֆելիո ԳԷՀ-6» ծրագրային փաստաթուղթը:

Ժ. Տեսչական վերահսկողական աշխատանքներ

2015 թվականին ՀՀ բնապահպանական պետական տեսչության կողմից իրականացվել են ստուգումներ **128** կազմակերպությունների և ֆիզիկական անձանց մոտ (2014 թվականին՝ **132**):

Տեսչական վերահսկողական աշխատանքներն ընդգրկել են ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի, կենդանական աշխարհի, բուսական աշխարհի և հողերի պահպանության, ընդերքի շահագործման, թափոնների առաջացման և տեղադրման ոլորտները:

Կատարված տեսչական ստուգումների, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների տեղափոխման և օգտագործման օրինականության պահպանման նպատակով կազմակերպված

շրջայցերի և տեսչության վարույթին հանձնված գործերի քննության արդյունքում հայտնաբերվել են **872** խախտումներ (2014թ.՝ **894**):

Կազմվել է վարչական տուգանքի **794** ակտ՝ **61,3** մլն դրամ ընդհանուր գումարով (2014թ.՝ **820 ակտ՝ 66.43 մլն դրամ**):

Կազմվել է վնասի հատուցման **535** արձանագրություն՝ **198.77 մլն դրամ** գումարով (2014թ.՝ **551 արձանագրություն՝ 447.1մլն դրամ**):

Ապօրինի ծառահատումների քանակը հնարավորինս նվազեցնելու նպատակով ՀՀ ԲՆ աշխատակազմի ԲՊ տեսչությունն իրականացրել է բնապահպանական վերահսկողություն ՀՀ անտառային, ընդհանուր օգտագործման անտառածածկ և հատուկ պահպանվող անտառային տարածքների նկատմամբ: Վերահսկողությունն իրականացվել է ստուգումների, ուսումնասիրությունների և ստուգայցերի միջոցով:

Ցուցանիշի անվանումը	2014թ.	2015թ.
1.Ստուգվել է օբյեկտ /հատ/	**132**	**128**
2. Ստուգումների և իրականացրած այլ գործառույթների արդյունքում հայտնաբերվել է խախտում /հատ/	**894**	**872**
1. Կազմվել է վարչական տուգանքի ՝ • ակտ /հատ/ • ընդհանուր գումարը /հազ.դրամ/	 **820** **66 435,0**	 **794** **61 300.0**
3.Կազմվել է վնասի հատուցման՝ • արձանագրություն /հատ/ • ընդհանուր գումարը /հազ.դրամ/	 **551** **447 125,9**	 **535** **198 771.0**
4. Կիրառած պատժամիջոցներից պետական բյուջե է մուտքագրվել /հազ.դրամ/	**130 000,0**	**215 025.9**
1. Իրավապահ մարմիններ և դատարաններ է ներկայացվել՝ • գործ /հատ/ • գանձման ենթակա ընդհանուր գումարը /հազ.դրամ/	 **296** **103 480,0**	 **284** **201 527.4**

12.2. ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12.2.1. Ոլորտի (համակարգի) նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

12.2.1.1. Նպատակները

2017-2019 թթ. ժամանակահատվածում ելնելով երկրի անվտանգության ու կայուն զարգացման շահերից, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային ռազմավարական ծրագրի հիմնարար դրույթներով, բնապահպանության ոլորտում կառավարության կարևորագույն նպատակներն են՝

- շարունակել ուժեղացնել պետության վերահսկողությունը շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ՝ օդի, ջրի որակի, կանաչ տարածքների, աղբամշակման բարձր չափանիշների սահմանմամբ,
- հիմնանորոգել կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանները և կառուցել նորերը,
- շարունակել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության միջոցառումների իրականացումը,
- ապահովել անտառապատման և անտառավերականգնման ծավալների հետագա աճը, անտառների ապօրինի հատումների կանխումը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը, ավտոտրանսպորտից վնասակար նյութերի արտանետումների նվազեցումը, ջրի և անտառի ազգային ծրագրերի ամբողջական իրականացումը,
- ընդլայնել բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը և կատարելագործել դրանց կառավարման մեխանիզմները,
- մշակել և կիրառել նոր մոտեցումներ հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման և էկոլոգիական կրթության ու դաստիարակության հարցերում,
- ուժեղացնել ընդերքի շահագործման, ինչպես նաև բնական պաշարների վերականգնման ու վերարտադրության նկատմամբ վերահսկողությունը,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել բնական միջավայրի ռադիոակտիվ աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը, բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման համակարգի զարգացումը:

12.2.1.2. Գերակայությունները

Բնապահպանական ոլորտի զարգացման գերակայությունները հիմնվելու են հետևյալ առանցքային հիմնադրույթների վրա՝

1) Առաջիկա տարիների բնապահպանական ոլորտի ռազմավարությունը պետք է միտված լինի բնապահպանական քաղաքականության օրենսդրական և նորմատիվային դաշտի կատարելագործմանն ու արդիականացմանը:

Կմշակվի և կընդունվի «Բնապահպանական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը:

2) Բնապահպանական ազդեցության գնահատման և վերահսկման համակարգը պետք է վերանայվի. տնտեսավարող սուբյեկտներին պետք է ցուցաբերվի տարբերակված մոտեցում՝ ըստ նրանց գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության աստիճանի: Դրանով կպակասի շրջակա միջավայրի վրա սահմանափակ ազդեցություն ունեցող ձեռնարկությունների նկատմամբ վարչարարությունը՝ խթանելով լավագույն՝ բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը, հեռանկարում ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող հին տեխնոլոգիաների դուրսմղումը: Անհրաժեշտ է ստեղծել պայմաններ՝ հանրային վերահսկողության ապահովման համար:

3) Բնապահպանական կառավարման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ է պարզեցնել, հստակեցնել և ներդնել էլկառավարում: Վարչարարության կատարելագործմանը զուգընթաց, անհրաժեշտ է զարգացնել բնապահպանական գործունեության, էներգախնայողության և ռեսուրսախնայողության խրախուսման մեխանիզմներ, այդ թվում նաև՝ ներդնելով հանրային մասնավոր գործընկերության սկզբունքները և ձեռնարկությունների բնապահպանական վարկանշման, էկոպիտակավորման, ինքնամոնիթորինգի մեխանիզմները:

4) Ներկայումս կիրառվող բնօգտագործման և բնապահպանական վճարների փոխհատուցման գումարները զիջում են փաստացի պատճառվող վնասն ավելի քան 20-30 անգամ: Մասնավորապես՝ տնտեսության զարգացման նպատակով որոշ ոլորտների համար բնապահպանական վճարների և ռեսուրսների օգտագործման դիմաց սահմանված 0-ական կամ ցածր դրույքաչափերի արտոնությունների հետագա կիրառումը խիստ ռիսկային է: Այս առումով՝ բնապահպանական քաղաքականության տնտեսական մեխանիզմները պետք է վերանայվեն հետևյալ հիմնական ուղղություններով.

Հիմնական մակրոտնտեսական կանխատեսումներում (ցուցանիշներում) շրջակա միջավայրի աղտոտման և բնական ռեսուրսների գերշահագործման բաղադրիչի գնահատման մեթոդաբանության մշակում և ներառում:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների աստիճանական բարձրացում, որը մի կողմից հնարավորություն կտա բարձրացնելու բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, իսկ մյուս կողմից՝ լրացուցիչ եկամուտներ ապահովելու պետական բյուջեի համար, որն ուղղակիորեն կբարձրացնի բնապահպանական միջոցառումների բյուջետային ֆինանսավորումը:

Ռեսուրսների (նյութերի) ցիկլային օգտագործումը տնտեսապես շահավետ դարձնելու համար, հարկերի և թույլտվությունների (սահմանափակումների) գործող համակարգում (հատկապես՝ բնօգտագործող կազմակերպություններում) «կանաչ տնտեսության» անցմանը նպատակաուղղված խթաններ ստեղծելու նպատակով բնօգտագործման վճարների դրույքաչափերի վերանայում: Հարկային և ֆինանսական լծակների նպատակային օգտագործման արդյունքում տնտեսական խթանների ստեղծում՝

ընդերքօգտագործման փակ եղանակին անցման և պոչամբարների առաջացման կանխարգելման ուղղությամբ:

Գործող ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի պահանջների համապատասխանեցում՝ էներգաարդյունավետ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրման, էկոլոգիապես մաքուր և բարձր որակ ունեցող արտադրանքի արտադրության և (կամ) գնումների ապահովման համար:

5) Հողերի նպատակային նշանակության ապահովման, հողերի կարգավիճակի փոփոխման և դեգրադացիայի ներկա բացասական միտումների կանխարգելման համար կմշակվեն և կիրագործվեն համապատասխան տնտեսական և վերահսկման մեխանիզմներ, որոնք, մասնավորապես չխոչընդոտելով տնտեսավարողների կողմից խելամիտ շահույթի ստացման մակարդակը, կնպաստեն հանքարդյունաբերության, արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման ծավալների նվազեցմանը, օգտահանմանը ու կապահովեն թափոնակուտակիչների և աղբավայրերի կայուն կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձևավորումը, կմշակվեն էկոհամակարգային ծառայությունների գնահատման չափորոշիչներ:

Կստեղծվի ՀՀ տարածքի հողերի աղտոտվածության ուսումնասիրման մշտադիտարկման ցանց՝ հանրապետության հողային ծածկույթի և, հատկապես, լեռնահանքային արդյունաբերության հետ կապված հողերի վիճակի վերաբերյալ համապարփակ տեղեկատվական բազա հիմնելու նպատակով:

Կմշակվի դիֆերենցված հարկման համակարգ, որը կխթանի գյուղատնտեսական հողերի՝ վարելահողերի և արոտավայրերի նպատակային և օրգանական շերտի պահպանությունը ապահովող կայուն օգտագործումը:

Կառավարության կողմից կմշակվեն և կգործարկվեն ֆինանսական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ խթանելու համար դեգրադացված հողերի ռեկուլտիվացիան: Այդ խնդրի իրագործման համար հատկապես կակտիվացվի միջազգային համագործակցությունը, այդ թվում՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ներքո նոր ձևավորվող գլոբալ ֆինանսական աջակցության մեխանիզմների միջոցով («Կանաչ կլիմայական հիմնադրամ» (Green Climate Fund), «Արտանետումների նվազեցում անտառահատումից և անտառների դեգրադացիայից» (REDD+), «Ադապտացիոն ֆոնդ»):

6) Կշարունակվեն բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման համակարգի կատարելագործման աշխատանքները, որը ենթադրում է օրենսդրական դաշտի կատարելագործում, համակարգի ընդլայնում, Շիկահողի արգելոցի հիման վրա կենսոլորտային արգելոցի ստեղծում, կենսառեսուրսների մշտադիտարկման և հաշվառման համակարգի զարգացում, կայուն կառավարման ապահովում և համայնքային մասնակցության մեխանիզմների զարգացում: Կիրականացվեն հատուկ ուսումնասիրություններ Վայքի կարստային քարանձավների (Մոզրովի և Արջի) նոր ճյուղավորումների հայտնաբերման, վերջիններիս պահպանման և զբոսաշրջության նպատակներով օգտագործման համար:

7) Կմշակվի և կիրականացվի անտառի ազգային ծրագիրը՝ հանրապետության անտառներում և անտառային հողերում անտառվերականգնման, անտառապատման, ինչպես նաև անտառների որակական հատկանիշների բարելավման և նոր անտառների հիմնման նպատակով: Անտառապատման և անտառվերականգնման աշխատանքներին զուգընթաց կկատարելագործվեն ապօրինի հատումների վերահսկողության մեխանիզմները:

8) Կշարունակվեն Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009թ. աշխատանքային ծրագրի համաձայն իրականացվող համապատասխան միջոցառումները:

9) Բնապահպանական մշտադիտարկման համակարգի կատարելագործումն ապահովելու համար կսահմանվեն մշտադիտարկման միասնական մոտեցումներ և չափորոշիչներ՝ շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ վստահելի տեղեկատվության հավաքագրման և այլ աղբյուրներից ստացվող վիճակագրական տեղեկատվության համալրման նպատակով:

10) Կմշակվեն ՄԱԿ-ի «Ռիո+20» կայուն զարգացման գագաթաժողովի որոշումներին համահունչ «կանաչ» նորամուծությունների ներդրման խրախուսման համապատասխան տնտեսահրավական մեխանիզմներ, այդ թվում՝ պետության և միջազգային աջակցության ճանապարհով:

11) ՀՀ Կառավարությունը կշարունակի տեղական ինքնակառավարման մարմինների՝ բնապահպանական պլանների մշակման և իրականացման աշխատանքներին համակողմանի աջակցությունը:

12) Էկոլոգիական կրթության, հանրային իրազեկման և հանրության մասնակցության համար կակտիվացվեն համալիր միջոցառումների իրականացման աշխատանքները:

12.3. ԾԱԽՍԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՀՀ կառավարության կողմից վարվող քաղաքականությունից ելնելով 2017-2019թթ. ՄԺԾԾ-ի ծախսերի մակարդակի վրա ազդող հիմնական գործոն է հանդիսանում 2017-2019թթ. պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման առանձին ծախսատեսակների ֆինանսավորման գծով ուղղվող բյուջետային հատկացումների աճը:

Ա. *<u>«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի կատարմանը նպատակաուղղված Սևանա լճի համալիր ծրագրի շրջանակներում իրականացման ենթակա միջոցառումների և ենթածրագրերի կատարման ապահովում.</u>*

Ա. Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառման նպատակով շարունակվելու է «Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան ու խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություններ» ծրագրի իրականացումը, այդ թվում՝

- Սևանա լճի ձկների (սիգի, կարպի, իշխանի) ներկա վիճակի, տարածական տեղաբաշխման, կենսաբանական և էկոլոգիական հատկանիշների բացահայտում՝ յուրաքանչյուր տարին 1 անգամ,

Ծրագրի իրականացման համար յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 7.62 մլն դրամ:

Բ. *<u>Ջրային ռեսուրսների պահպանության բնագավառում</u>* Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարում, այդ թվում՝ հիդրոերկրաբանական մոնիտորինգի արդյունքների ամփոփ հաշվետվության կազմում, յուրաքանչյուր տարվա համար 1-հաշվետվություն:

2017-2019թթ. այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է 136.4 մլն դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 45.5 մլն դրամ:

Գ. *<u>Կենսաբազմազանության պահպանության բնագավառում</u>*

Ծրագրավորվող ժամանակահատվածում բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը ապահովող ծրագրերին 2017-2019թթ. ուղղվելու է 2,568.1 մլն. դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 856.0 մլն դրամ: Երեք տարվա հանրագումարային ֆինանսավորման ծավալները ըստ համապատասխան տարածքների կազմելու են՝

1) «Սևան» ազգային պարկի գծով՝	807.4 մլն դրամ,
2) «Դիլիջան» ազգային պարկի գծով՝	412.2 մլն դրամ,
3) Արգելոցապարկային համալիրի գծով՝	402.7 մլն դրամ,
4) «Խոսրովի անտառ»պետական արգելոցի գծով՝	363.2 մլն դրամ,
5) «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի գծով՝	408.3 մլն դրամ,
6) «Արփի լիճ» ազգային պարկի գծով՝	127.5 մլն դրամ,
7) «Զիկատար» պետական արգելավայրի գծով՝	46.8 մլն դրամ:

Բացի նշվածից ծրագրավորվող ժամանակահատվածում բյուջետային հատկացումների հաշվին փոխհատուցվելու են Կովկասյան տարածաշրջանային կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծախսերը:

Այս նպատակով 2017-2019թթ. նախատեսվել է հատկացնել 21.4 մլն դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 7.1 մլն դրամ:

Դ. *Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի աշխատանքներ*

Շրջակա միջավայրի վիճակի մոնիտորինգի 2017-2019թթ. միջնաժամկետ ծրագիրը ուղղված է լինելու մթնոլորտային օդի և մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացմանը:

2017-2019թթ. այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է 481.1 մլն դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 160.4 մլն դրամ:

Ե. *Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքներ*

Ծրագրվող ժամանակահատվածում «Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայություններ» ծրագիրը կիրականացվի ելնելով Օրհուսի Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակներից, այդ թվում՝

- նախատեսվում է ՀՀ ԲՆ պաշտոնական կայքի սպասարկում, համապատասխանաբար յուրաքանչյուր տարի 3-ական կայք,
- ՀՀ ԲՆ տվյալների շտեմարանների ձևավորում և դրանց միջև տեղեկատվության փոխանակում ապահովող համակարգչային համակարգերի թարմացում և սպասարկում՝ ըստ տարիների 3-ական շտեմարան,
- ՀՀ ԲՆ բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի սպասարկում, տեղեկատվության ամփոփում և տրամադրում տարածքային (տեղական) կենտրոններին, ըստ տարիների՝ 13-ական կենտրոն:

2017-2019թթ. այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է 61.5 մլն դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 20.5 մլն դրամ:

Զ. *Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման ոլորտ*

Նախատեսվում է իրականացնել թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման և վնասազերծման, ինչպես նաև սակավաթափոն ու անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակում և լուսաբանման աշխատանքներ:

2017-2019թթ. այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է 49.9 մլն դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 16.6 մլն դրամ:

Է. ***<u>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններ</u>***

Նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության եզրակացությունների տրամադրումը:

2017-2019թթ. այս աշխատանքների իրականացման համար հատկացվելու է 135.7 մլն դրամ կամ յուրաքանչյուր տարվա համար 45.2 մլն դրամ:

Ը. ***<u>«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում</u>***

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն համապատասխան համայնքների կողմից իրականացվելիք բնապահպանական ծրագրերի ֆինանսավորումն ապահովելու համար 2017-2019թթ. ծրագրավորվել է ընդհանուր առմամբ 524.4 մլն դրամ, այդ թվում՝ 2017թ.՝ 148.8 մլն դրամ, 2018թ.՝ 285.0 մլն դրամ, 2019թ.՝ 90.6 մլն դրամ:

Միաժամանակ ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր

Ծրագրի նպատակն է աջակցել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանը:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

ա/ կապիտալ ծախսեր (ներդրումայինծախսեր)՝

- թափոնների հավաքման բեռնատարներ, կոնտեյներներ/արկղներ, հավաքման նոր կետեր,
- նոր աղբավայրի կառուցում (ներառյալ շինություններն ու կառույցները),
- մասնագիտացված սարքավորումներ աղբավայրի աշխատանքների համար,
- փոխանցման կայանների շինարարություն

բ/տեխնիկական համագործակցություն (Խորհրդատվական Համաձայնագրեր),

- ծրագրի իրականացում և գնումների աջակցություն, կորպորատիվ զարգացման և շահագրգիռ կողմերի ասնակցության ծրագիր,
- լրացուցիչ բնապահպանական և սոցիալական հետազոտություններ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 309.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 258.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսա-

վորում՝ 51.6 մլն. դրամ, 2018թ.՝ 519.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 432.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 86.5 մլն. դրամ, 2019թ.՝ 865.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 144.2 մլն. դրամ:

2. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել՝

- Երևանի տարածքում երկու խցիկներից բաղկացած՝ նոր աղբավայրի կառուցման գործընթացում,
- Նոր աղբավայրի համար մասնագիտակցված տրանսպորտային միջոցների և սարքավորումների գնման գործընթացում
- Գոյություն ունեցող աղբավայրի տարածքում մակերեսի մեկուսացմանգործընթացում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 230.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 192.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 38.4 մլն. դրամ, 2018թ.՝ 288.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 48.1 մլն. դրամ, 2019թ.՝ 530.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 442.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 88.4 մլն. դրամ:

3. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների ծրագիր (I փուլ) (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է բարելավել Երևան քաղաքում և շրջակա շրջաններում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգը:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

- Մոտ 29 հա ընդհանուր տարածքով և թափոնների կուտակման մոտ 8.4 մլն. խորանարդ մետր ծավալով նոր սանիտարական աղբավայրի 2 գոտիների և օժանդակ ենթակառուցվածքի կառուցում:
- Մոտ 33 հա ընդհանուր տարածքով և թափոնների մոտ 7 մլն. խորանարդ մետր ծավալով Նուբարաշենի գործող աղբավայրի փակում և վերականգնում:
- Թափոնների տեսակավորման բաղադրիչներ (աղբահանության կոնտեյներներ, և մեքենաներ՝ վերամշակող նյութերի և կենսաթափոնների առանձին աղբահանման համար)

Առաջին բաղադրիչը նոր սանիտարական նախագծել, կառուցել և շահագործել Նուբարաշենի առկա աղբավայրի հարակից շուրջ 29 հա տարածքը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 230.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 192.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 38.4 մլն. դրամ, 2018թ.՝ 288.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 48.1 մլն. դրամ, 2019թ.՝ 530.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 442.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 88.4 մլն. դրամ:

4. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է վերամշակել Կոտայքի մարզի կոշտ թափոնները: Դրամաշնորհային ծրագիրն ուղղված է հիմնական վարկային ծրագրի աջակցմանը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 309.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 258.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 51.6 մլն. դրամ, 2018թ.՝ 929.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 774.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 154.9 մլն. դրամ, 2019թ.՝ 1,153.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 961.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 192.2 մլն. դրամ:

ԳԼՈՒԽ 13. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԿԱՊ

13.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

Տրանսպորտի և կապի ոլորտների ՀՀ պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները ՀՀ կառավարության՝ տրանսպորտի և կապի ոլորտներում վարած քաղաքականությանը համապատասխան ապահովում են տնտեսության մյուս ճյուղերի (ոլորտների) կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկը՝ տրանսպորտային փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների) և կապի ծառայությունների (ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների, փոստի) մատուցման բնագավառներում՝ նպատակ ունենալով տեխնիկապես արդյունավետորեն բավարարելու բնակչության կարիքները:

ՀՀ տրանսպորտային համակարգի կարևորագույն բաղկացուցիչն է ճանապարհային տնտեսությունը, քանի որ երկրի ներսում տարածաշրջանների և բնակավայրերի միջև, ինչպես նաև հարևան երկրների հետ կապ ստեղծող ավտոմոբիլային ցանցի տրանսպորտա-շահագործողական վիճակի և զարգացման մակարդակի բարելավումը նպաստում է պետության կայուն տնտեսական աճին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ազգային անվտանգության բարելավմանը, միջազգային տրանսպորտային համակարգին ճանապարհային ցանցի ինտեգրմանը:

ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) վերանորգումը, վերակառուցումը և ընթացիկ պահպանումը մշտապես գտնվում է ավտոմոբիլային ճանապարհների կառավարման և տնօրինող մարմինների ուշադրության ներքո՝ հաշվի առնելով տրանսպորտային ենթակառուցվածքների կարևորությունը ՀՀ տնտեսության զարգացման բնագավառում:

Ներկայումս ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 7533.5 կմ, որը համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման, ըստ նշանակության դասակարգվում է.

- միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ - 1758.8 կմ,
- հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ – 1969.05 կմ,
- մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ - 3805.7 կմ:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն տրանսպորտի ոլորտի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է, որն իրագործվում է ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի և դրամաշնորհների) միջոցներով: ՀՀ պետական բյուջեից հատկացումների հաշվին հանրապետության ճանապարհային ցանցի բարելավման և պահպանման աշխատանքներն իրականացվում են հետևյալ ծրագրերով.

- «Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում»,

- «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում»,

- «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում»,

- «Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում»,

- արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով իրականացվող ծրագրեր:

Բացի այդ իրականացվում է նաև Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման աջակցություն, ինչպես նաև մետրոպոլիտենի և էլեկտրատրանսպորտի անխափան շահագործմանն ուղղված ծրագրեր:

Նշված ծրագրերի իրականացմամբ ՀՀ բնակչության, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անձանց համար ապահովվել են.

- տրանսպորտային ծախսերի կրճատումը, շարժման արագության բարձրացումը, տրանսպորտային միջոցների ավելորդ վազքի և ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների տևողության նվազեցումը,

- բնակավայրերի հետ ողջ տարին տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, երթևեկության անվտանգության բարելավումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և կորուստների քանակի կրճատումը, շրջակա միջավայրի վրա ճանապարհատրանսպորտային համալիրի բացասական ազդեցության նվազեցումը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Մատուցվող ծառայությունների գծով ծախսերի պետական հատվածի կողմից փոխհատուցման ծավալը

1.	Տրանսպորտի, կապի, տեղեկատվայնացման բնագավառների գործունեության պետական կառավարում, կարգավորում, պետական քաղաքականության մշակում ու իրականացում, մոնիտորինգ	Հասարակություն, պետական կառավարման այլ մարմիններ	Ամբողջությամբ
2.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության իրավասության տակ գտնվող պետական միավորների նկատմամբ լիազոր մարմնի գործառույթների իրականացում	4 պետական ոչ առևտրային կազմակերպություններ և 6 բաժնետիրական ընկերություններ	Ամբողջությամբ
3.	Լիցենզավորման գործառույթներ	«Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում» գործունեության տեսակի լիցենզավորում	Ամբողջությամբ
		«Փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրումների մատուցում» գործունեության տեսակի լիցենզավորում	
		«Հայաստանի Հանրապետությունում մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում» գործունեության տեսակի լիցենզավորում	
		«Անհատ ձեռնարկատերերի կողմից մարդատար-տաքսի մեկ ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիրի տրամադրում» գործունեության տեսակի լիցենզավորում	
		«Տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման գործունեության իրականացման համար՝ օգտագործվող յուրաքանչյուր հոսքագծի համար» լիցենզավորում:	
4.	Արտոնություն ունեցող քաղաքացիներին անվճար երթևեկության վկայականների տրամադրում	ՀՀ քաղաքացիներ	Չի փոխհատուցվում
5.	ՀՀ տարածքից բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ իրականացնելու համար թույլտվության հատկացում	ՀՀ տարածքում գործող բեռնափոխադրող և ուղևորափոխադրող կազմակերպություններ, ՀՀ բնակչություն	Չի փոխհատուցվում
6.	ՀՀ հաճախությունների	ՀՀ տարածքում գործող	Ամբողջությամբ

	բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոեթերի մոնիտորինգի, ՌԷՄ-ի և ԲՀՍ-ի տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման ծառայություններ	հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ծառայություններ մատուցող կազմակերպություններ, ՀՀ բնակչություն	
7.	ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծառայությունների մատուցում	ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներ	Ամբողջությամբ
8.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության տակ գտնվող ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման առաջնահերթ միջոցառումների ապահովման ծառայությունների մատուցում	ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներ	Ամբողջությամբ
9.	ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման և առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման ծառայությունների մատուցում	ՀՀ ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներ	Ամբողջությամբ

13.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները

Վերջին երկու տարիներին պետական բյուջեի (այդ թվում՝ արտաքին աղբյուրներից) ֆինանսավորման շնորհիվ զգալիորեն բարելավվել են միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհները և երթևեկության անվտանգությունը:

<u>Ճանապարհային տնտեսություն</u>

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 264 - Ա որոշմամբ ստեղծվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի նախագահությամբ ճանապարհային ոլորտը համակարգող խորհուրդ (միջգերատեսչական խորհրդակցական մարմին), որի հիմնական նպատակն է ՀՀ ճանապարհային տնտեսության բնագավառում իրականացվող միջոցառումների համակարգումը, մշտադիտարկման իրականացման ամփոփումը և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին:

2014-2015 թվականներին մշակվել է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման հայեցակարգը (ՀՀ կառավարության 19.06.2014թ. նիստի N 26 արձանագրության 29-րդ կետ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման 2015-2025 թվականների ֆինանսավորման ռազմավարությունը (ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 873-Ն որոշում):

Ձեռնարկվել է ճանապարհային ակտիվների կառավարման համակարգի ներդրման գործընթացը, որի նպատակն է հնարավորինս ավտոմատացնել ճանապարհների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, մշակումը, ինչը թույլ կտա ճանապարհների պահպանման և հիմնանորոգման վերաբերյալ առավել հիմնավորված և արդյունավետ որոշումներ կայացնել:

Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում ծրագրի շրջանակներում 2015թ.-ին իրականացվել են 5.9 մլրդ դրամի աշխատանքներ, այդ թվում կատարվել են 3464.5 կմ ճանապարհների ձմեռային պահպանման և 2978.9 կմ՝ ամառային պահպանման աշխատանքներ: Միաժամանակ իրականացվել է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 1720 կմ երկարությամբ առանձին հատվածների ծածկի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, ավտոմոբիլային ճանապարհների անհարթության գործակցի որոշում, ինչպես նաև ավարտվել է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների ցանցի տեսաձայնագրությունը:

Ճանապարհների պահպանում և շահագործում ծրագրի շրջանակներում 2014թ.-ին կատարվել են միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանա-

պարիների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային, ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների (3 թունել), կամուրջների (5 կամուրջ) և պարսպող հարմարանքների պահպանման աշխատանքներ, 16 տարածաշրջաններում տեղադրվել են 1966 հատ նոր ճանապարհային նշաններ, նշագծվել է 1826 կմ ճանապարհ, պահպանվել է 482 կմ արգելափակոցներ:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրի շրջանակներում 2015 թ.-ին (ճշտված պլանը կազմել է 3.2 մլրդ դրամ, կատարողականը՝ 3.1 մլրդ դրամ կամ 97.4%) իրականացվել են 43.09 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ շահագործման է հանձնվել 3.2 կմ երկարությամբ Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ ճանապարհը: Ծրագրով տնտեսվել է շուրջ 235.1 մլն դրամ, որից 151 մլն դրամն ուղղվել է հրատապ լուծում պահանջող ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներին, իսկ 84.1 մլն դրամը հետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե:

Վարդենիս-Մարտակերտ մայրուղու հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամին տրամադրվել է 5,2 մլրդ դրամ:

ՀՀ Նախագահի նախընտրական խոստումների իրականացման նպատակով վերանորոգվել են 19.5 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ, որոնցից 15.4 կմ-ը Համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին:

Բացի վերը նշվածից կնքվել է Դիլիջանի թունելի հիմնանորոգման պայմանագիրը՝ 1,0 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, որից Իրականացվել են 200.7 մլն դրամի աշխատանքներ: Մնացած աշխատանքները նախատեսվում է ավարտել 2016-2017թթ:

2014թ-ին կատարվել են 64.9 կմ երկարության ճանապարհահատվածների և մեկ տրանսպորտային օբյեկտի հիմնանորոգման աշխատանքներ: Այլ ճանապարհների հիմնանորոգման ենթածրագրի շրջանակներում «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով հիմնանորոգվել է Վարդենիս-Մարտակերտ ա/ճ Սոթք-Քարվաճառ խաչմերուկի 1-ին տեղամասի 13,05 կմ երկարությամբ հատվածը՝ 1,698.6 մլն դրամ արժեքով:

«Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում» ՀԲ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրի իրականացման ընթացքում առաջացել է շուրջ 1 մլրդ դրամ տնտեսում, որի հաշվին կհիմնանորոգեն ևս 38 կմ երկարությամբ լրացուցիչ ճանապարհահատվածներ: Ընդհանուր առմամբ 2015-2016թթ. 13.4 մլրդ դրամ գումարով կվերանորոգվեն 135 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ: Աշխատանքները պետք է ավարտվեին 2016 թվականին, սակայն աշխատանքներն ընթացել են արագ և կնքված 16 պայմանագրերից 2015 թվականին ամբողջությամբ ավարտվել են թվով 11 պայմանագրերով նախատեսված աշխատանքները՝ 12.4 մլրդ դրամ արժեքով, և 5 պայմանագրերով նախատեսված աշխատանքների գրեթե 90 տոկոսը:

Ընդհանուր առմամբ Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման վարկային ծրագրի շրջանակներում կվերականգնվի շուրջ 211 կմ երկարությամբ ճանապարհահատված՝ սկզբնական վարկային համաձայնագրով նախատեսված 170 կմ ճանապարհահատվածի փոխարեն:

ՀՀ ԱԺ-ի կողմից հավանության է արժանացել Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման լրացուցիչ ֆինանսավորման» վարկային ծրագիրը՝ շուրջ 40 մլն դոլար արժեքով:

Ծրագրի առաջին տարվա համար նախատեսվում է իրականացնել ՀՀ 4 մարզերում՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերում թվով 7 ճանապարհահատվածների ընդհանուր երկարությամբ շուրջ 61.3 կմ հատվածների վերականգնման աշխատանքներ:

Մեկնարկել է նաև Մ6 Վանաձոր-Ալավերդի - Վրաստանի սահման միջպետական ավտոմոբիլային ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիրը, որի հիմնական նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետությունը Վրաստանի Հանրապետության հետ կապող Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման շուրջ 90 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը: Ծրագրի առաջին մասն ընդգրկում է ճանապարհի կմ 0+000 – կմ 38+450 հատվածը, որը կիրականացվի Եվրոպական Ներդրումային Բանկի ֆինանսավորմամբ, իսկ 2-րդ մասը՝ կմ 38+450 – կմ 90+191 հատվածը, որը կիրականացվի Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ:

Մ6 Վանաձոր-Ալավերդի - Վրաստանի սահման միջպետական ավտոմոբիլային ճանապարհի Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսավորմամբ վերականգնվող հատվածի համար հայտարարվել են շինարարական աշխատանքների մրցույթները: Հայտեր ներկայացվել են 16 ընկերությունների կողմից, մասնակիցների հայտերը բացվել են, ընթանում է հայտերի գնահատման գործընթացը:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ծրագրով Տրանշ 1-ի 2015 թվականի տարեկան ճշտված պլանը կազմել է 4.89 մլրդ դրամ, իսկ կատարողականը՝ 6.28 մլրդ դրամ (128,4%): 2015թ դեկտեմբերի 29-ին բացվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի՝ շուրջ 31 կմ երկարությամբ Երևան-Արտաշատ և Երևան-Աշտարակ ճանապարհահատվածի երկկողմանի երթևեկությունը:

Տրանշ 2-ի 2015 թվականի տարեկան ճշտված պլանը կազմել է 6.0 մլրդ դրամ, իսկ փաստացի կատարողականը՝ 5.59 մլրդ դրամ (92.1%): Աշտարակ- Թալին իրականացվել են հնագիտական պեղումներ, հողային և ենթակառուցվածքների, ինչպես նաև ճանապարհի հիմքի նախապատրաստման աշխատանքներ:

Տրանշ 3-ի շրջանակներում 2015 թվականի տարեկան ճշտված պլանը կազմել է 329.0 մլն դրամ, որի շրջանակներում իրականացված մրցույթների արդյունքում կառուցվելիք Լանջիկ-

Գյումրի 27,5 կմ հատվածի շինարարության տեխնիկական վերահսկող կազմակերպություն է ընտրվել իտալական կոնսորցումը, իսկ կառուցման աշխատանքները՝ չինական «Սինոհիդրո Քորփորեյշն» ընկերությունը: Թալին - Լանջիկ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների համար հայտարարվել է միջազգային մրցույթ, արդյունքներն ամփովել են, պայմանագիրը կնքման փուլում է:

Տրանշ 4-ի համար Ագարակից դեպի Քաջարան 20,5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի նախագծային և վերակառուցման աշխատանքների իրականացման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հետ կնքվել է համաձայնագիր, որով կտրամադրվի 150մլն. ԱՄՆ դոլար վարկ:

Տրանսպորտ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ուշադրության կենտրոնում է գտնվում ոչ միայն ճանապարհների շինարարությունը, վերանորոգումն ու վերակառուցումը, այլ նաև դրանց պահպանման հիմնախնդիրները: Այդ նպատակով 2015թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց օրենսդրական փաթեթ, համաձայն որի բացառվեց ՀՀ ճանապարհներով 44 տոննայից ավել ընդհանուր զանգվածով տրանսպորտային միջոցների երթևեկությունը, իսկ 1 սռնու վրա ընկնող բեռնվածքը սահմանափակվեց մինչև 11,5 տոննա (բացառություն են կազմում միայն չմասնատվող բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցները): Միջոցառումը նպատակ է հետապնդում երկարացնելու ճանապարհների շահագործման ժամկետները:

Եվրասիական Տնտեսական միության շրջանակներում 2014 թվականից Եվրասիական Տնտեսական միությանը անդամակցելուց հետո, համագործակցության արդյունքում անդամ-պետությունների միջև հանվեցին բեռնափոխադրումներ իրականացվելու՝ մուտքի-ելքի, տարանցման, դեպի երրորդ երկիր և երրորդ երկրից բոլոր պարտադիր թույլտվությունները: Արդյունքում բեռնափոխադրումներ իրականացնողները ազատվեցին լրացուցիչ վարչարարությունից:

Եվրասիական Տնտեսական միության շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է «կաբոտաժային» փոխադրումների ազատականացման ծրագրին: Արդեն իսկ ստորագրվել է արձանագրություն, համաձայն որի Ռուսաստանի Դաշնությունում, Բելոռուսում և Ղրղստանում բեռնափոխադրումն ավարտելուց հետո հայկական բեռնափոխադրողները հետադարձ ճանապարհին կարող են իրականացնել մեկ «կաբոտաժային» փոխադրում, որն էլ հնարավորություն կտա կրճատելու դատարկ վազքը և ստանալ լրացուցիչ եկամուտ: Ներկայումս գործընթացի իրականացման համար կատարվում են օրենսդրական փոփոխություններ և ընթանում են բանակցություններ անդամ-պետությունների հետ «կաբոտաժային» փոխադրումներ իրականացնելու թույլտվություններ փոխանակելու նպատակով:

Ներկայումս Եվրասիական Տնտեսական միության շրջանակներում քննարկվում են մի շարք նախագծեր, որոնք միտված են փոխադրումների անվտանգության և որակի բարձրացմանը:

Տրանսպորտի բնագավառում ներկայումս իրականացվում են նաև մի շարք օրենսդրական բարեփոխումներ, մասնավորապես տրանսպորտային անվտանգության ապահովման բնագավառը կանոնակարգելու նպատակով մշակվում է «Տրանսպորտի անվտանգության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Բացի այդ տրանսպորտի ոլորտում իրականացվել են նաև մետրոպոլիտենի և էլեկտրատրանսպորտի զարգացումն ապահովող քաղաքականության միջոցառումները:

Երկաթուղու բնագավառ

Երկաթուղու բնագավառում 2015 թվականին «Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում» և ««Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում» ծրագրերի գծով նախատեսվել է 627.4 մլն դրամ, որոնց շրջանակներում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին տրամադրվել է 534.8 մլն դրամ սուբսիդիա՝ 588.4 մլն դրամի դիմաց (տնտեսվել է շուրջ 53 մլն դրամ), այդ թվում ամբողջությամբ մարվել են նախորդ տարիների պարտքերը իսկ «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ին վճարվել է 39.0 մլն դրամ:

2015 թվականին նախորդ տարվա համեմատ երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը նվազել է շուրջ 17.3%-ով և կազմել 2528.0 հազար տոննա, այդ թվում՝ ներհանրապետական փոխադրումների ծավալը՝ 18.1%-ով՝ կազմելով 1249.0 հազար տոննա, ներկրվող բեռների ծավալը նվազել է 21.1%-ով՝ կազմելով 962.5 հազար տոննա: Նույն ժամանակաշրջանում բեռնաշրջանառության ծավալը նվազել է 19.9%-ով՝ կազմելով 637.8 մլն տ/կմ:

Պատրաստվել և իրանական կողմին ստորագրման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև երկաթուղու շինարարության երկկողմ Փոխըմբռնման Հուշագիր՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության տրանսպորտի ենթակառուցվածքների շինարարության և զարգացման ընկերության միջև», որն ստորագրվել է 2016 թվականի հունվարին:

Կապի բնագավառ

ՀՀ տարածքում վերգետնյա թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի ներդրման աշխատանքները «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից ավարտվել են 30.06.2015թ. դրությամբ և նույն օրվանից թվային ազդանշանը հասանելի է ՀՀ բնակչության 100 տոկոսին:

ՀՀ տարածքում անալոգայինից թվային հեռարձակման անցման ժամանակաշրջանը և անալոգային հեռարձակման անջատման ժամկետի երկարաձգումը պայմանավորված է ՀՀ վերգետնյա թվային հեռուստահեռարձակման համակարգի ներդրման շրջանակներում սոցիալական ծրագրի իրականացմամբ՝ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի ձեռքբերմամբ և սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրելու գործընթացով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1208-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է թվով 48 733, իսկ ներկայումս ընթանում են ՀՀ կառավարության 03.03.2016թ.-ի թիվ 269 որոշմամբ լրացուցիչ 61 344 հատ DVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի ձեռք բերման աշխատանքները:

13.1.3. Հիմնական խնդիրները

Ավտոճանապարհները սարքին վիճակում պահելու համար անհրաժեշտ է մշտապես իրականացնել նորոգման և պահպանման համակարգված շարունակական աշխատանքներ:

90-ական թվականների ընթացքում այդ աշխատանքները գրեթե չէին կատարվել և հանրապետության ամբողջ ճանապարհային ցանցը հայտնվել էր զանգվածային քայքայման վիճակում: Կատարված ներդրումների արդյունքում տեղի է ունեցել հիմնական (միջպետական) ճանապարհային ցանցի վիճակի բարելավման աճ: Սակայն հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների զգալի մասը հիմնանորոգման կարիք ունեն:

ՀՀ կառավարության 27.03.2014թ. N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրով» ոլորտում պետության ծախսային քաղաքականությունն ուղղված է լինելու ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման և հիմնանորոգման համար հատկացվող պետական միջոցների ծավալների ընդլայնմանը և դրանց ծախսման արդյունավետության բարձրացմանը:

Բյուջետային հատկացումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել է ճանապարհների կառավարման միչգերատեսչական խորհուրդ, մշակվել և ընդունվել է հիմնանորոգվող ճանապարհների առաջնահերթության որոշման կարգը, ներդրվել են՝ ավելի երկար երաշխիքային սպասարկման համակարգ և ապահովագրական մեխանիզմներ, մշակվել է տրանսպորտային միջոցների առավելագույն քաշի սահմանափակման մեխանիզմ, ուժեղացվել է հսկողությունը կապալառուների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման, ինչպես նաև գնման մրցույթների գործընթացի նկատմամբ և այլն:

Բյուջետային հատկացումների արդյունավետությունը բարձրացնելու և ծրագրային բյուջետավորման հիմքերը ճանապարհային տնտեսության ոլորտում ամրապնդելու համար այնուամենայնիվ անհրաժեշտ կլինի ներդնել կառավարման ժամանակակից համակարգեր, այդ թվում.

- բյուջետային ոլորտում ճանապարհների կառավարման ծրագրերում ընթացիկ ու կապիտալ ծախսերի ծրագրային (միասնական) պլանավորման համակարգի մշակում,

- արդյունքի պլանավորման ու կատարողական ցուցանիշների և դրանց հիման վրա՝ աշխատանքների ու ծառայությունների մատուցման պայմանագրերի համակարգի կատարելագործում,

- ճանապարհների ընթացիկ սպասարկման (շահագործման) ծառայությունների գնահատման մեխանիզմների մշակում,

Ներդրումային քաղաքականության առաջնային թիրախ կհանդիսանա հանրապետության բոլոր բնակավայրերը մարզկենտրոններին առնվազն մեկ բավարար ճանապարհային երթուղով միացնող ճանապարհային հատվածների վերականգնումը, Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի կառուցումը, Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման մայրուղու վերականգնումը, ինչպես նաև տնտեսական բարձր արդյունավետություն ապահովող ճանապարհներն ու ճանապարհահատվածները:

13.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

13.2.1 Նպատակները

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի համաձայն, տրանսպորտի և կապի ոլորտի քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը, ինչպես նաև Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու շինարարությունը, Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ավտոմայրուղու վերականգնումը և կապի համակարգերի կատարելագործումը: Տրանսպորտի ու կապի կայուն և արդյունավետ զարգացումն անհրաժեշտ պայման է երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրումն ապահովելու գործընթացների տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց ՀՀ տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է, որն իրագործվում է ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ճանապարհների կառուցման վերականգնման և պահպանման ու շահագործման ծրագրերի շրջանակներում, ինչը կապահովի հետևյալ նպատակների ձեռք բերումը.

- պետական ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցի զարգացումը՝ ՀՀ բնակչության պահանջմունքների, հանրապետության տնտեսության և տրանսպորտային ենթակառուցվածքին համապատասխան, ինչպես նաև պահանջվող տեխնիկական վիճակի, ճանապարհային ցանցի անցողունակության և խտության, երթևեկության անվտանգության բարելավման և տնտեսական ակտիվության խթանման ապահովումը, և Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը,

- տրանսպորտային ծախսերի կրճատումը, շարժման արագության բարձրացումը, տրանսպորտային միջոցների ավելորդ վազքի և ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների տևողության նվազեցումը,

- բնակավայրերի հետ ողջ տարին տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, երթևեկության անվտանգության բարելավումը, ճանապարհատրանսպորտային պատահարների և կորուստների քանակի կրճատումը, շրջակա միջավայրի վրա ճանապարհատրանսպորտային համալիրի բացասական ազդեցության նվազեցումը,

- գիտատեխնիկական նվաճումների ներդրումը և հայրենական ճանապարհաշինական ոլորտի զարգացումը:

Ճանապարհաշինության բնագավառի նպատակները և կատարման նախատեսված չափորոշիչները 2017-2019թթ համար

2017-2019թթ. ճանապարհաշինության բնագավառի չափորոշիչներն արտացոլում են ճանապարհային ցանցի գծով ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք ֆինանսական միջոցների ներդրման արդյունքում միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման, ինչպես նաև հիմնանորոգման ենթակա ճանապարհահատվածների կանխատեսվող թիրախները և դրանց տեսակարար կշռի գնահատումը՝ ՀՀ ընդհանուր ճանապարհային ցանցի նկատմամբ:

Հ/հ	Կատարման ցուցանիշ	Չափ. միավ.	2017	2018	2019
1	**Ընթացիկ պահպանման ցուցանիշ ՝ երկարություն (կմ) և ճանապարհային ցանցի %**				
1.1	**ՏԿՆ տնօրինության տակ եղած ճանապարհներ**				
1.1.1	*Ամառային պահպանում,*	կմ	3043	3061	3084
1.1.2	*Ամառային պահպանում,*	%	81.6	82.1	82.7
1.1.3	*Ձմեռային պահպանում,*	կմ	3547	3550	3558
1.1.4	*Ձմեռային պահպանում,*	%	95.1	95.2	95.4
1.2	**Մարզպետարանների տնօրինության տակ եղած ճանապարհներ**				

1.2.1	*Ամառային պահպանում,*	կմ	677.0	692.0	718.0
1.2.2	*Ամառային պահպանում,*	%	17.8	18.2	18.9
1.2.3	*Ձմեռային պահպանում,*	կմ	1810.0	1870.0	1930.0
1.2.4	*Ձմեռային պահպանում,*	%	47.6	49.1	50.7
1.3	**Առանձին պահպանման հանձնված կամուրջներ և թունելների ընթացիկ պահպանում**				
1.3.1	*Սպասարկվող կամուրջների երկարություն,*	կմ	1.5	1.5	1.5
1.3.2	*Սպասարկվող կամուրջների մասնաբաժինը,*	%	100.0	100.0	100.0
1.3.3	*Սպասարկվող թունելների երկարություն,*	կմ	5.1	5.1	5.1
1.3.4	*Սպասարկվող թունելների մասնաբաժինը,*	%	100.0	100.0	100.0
1.4	**Ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների ընթացիկ պահպանման ամփոփ ցուցանիշ՝ երկարություն (կմ) և ճանապարհային ցանցի %**				
1.4.1	*Ամառային պահպանում,*	կմ	3720.0	3753.0	3802.0
1.4.2	*Ամառային պահպանում,*	%	49.4	49.8	50.5
1.4.3	*Ձմեռային պահպանում,*	կմ	5357.0	5420.0	5488.0
1.4.4	*Ձմեռային պահպանում,*	%	71.1	71.9	72.8
2	**Հիմնանորոգման ցուցանիշ՝ երկարություն (կմ) և ճանապարհային ցանցի %**				
2.1	*Միջպետական նշանակության ավտոճանապարհներ*	կմ	19.80	49.6	68.9
2.2	*Միջպետական նշանակության ավտոճանապարհներ*	%	1.13	2.82	3.92
2.3	*Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ,*	կմ	5.2	2.8	0.0
2.4	*Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ*	%	0.26	0.14	
2.5	*Մարզային նշանակության ավտոճանապարհներ*	կմ	12.6	0.0	0.0
2.6	*Մարզային նշանակության ավտոճանապարհներ*	%	0.33		
3	**Նոր շինարարության և վերակառուցման (տեխնիկական կարգի բարձրացման) ցուցացիշ**				
3.1	*Կառուցվող/վերակառուցվող ճանապարհների երկարությունը,*	կմ	37.6	52.4	68.9
4	**Արհեստական կառույցների վերանորոգում (կամուրջներ,թունելներ, հենապատեր)**				
4.1	*Կառույցների թիվը,*	հատ	7.0	0.0	1.0
5	**Երթևեկության սահունության ցուցանիշ, միջին կշռված անհարթության գործակից (IRI)**				
5.1	*Միջպետական նշանակության ճանապարհներ, IRI,*	մ/կմ	6.32	6.35	6.38
5.2	*Հանրապետական նշանակության ճանապարհներ, IRI,*	մ/կմ	7.70	7.81	7.90
6	**Վատ վիճակի ճանապարհների մասնաբաժինը**				
6.1	*Միջպետական նշանակության ավտոճանապարհներ,*	կմ	57.70	55.30	53.10
6.2	*Միջպետական նշանակության ավտոճանապարհներ,*	%	3.28	3.14	3.02
6.3	*Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ,*	կմ	394.2	390.6	388.3
6.4	*Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ,*	%	20.02	19.84	19.72
6.5	*Մարզային նշանակության ավտոճանապարհներ,*	կմ	2008.00	1990.00	1975.00
6.6	*Մարզային նշանակության ավտոճանապարհներ,*	%	52.76	52.29	51.90
6.7	**Ընդհանուր ճանապարհային ցանցի ամփոփ տվյալներ**				
6.8	*Վատ վիճակի ճանապարհներ,*	կմ	2459.90	2435.90	2416.40
6.9	*Վատ վիճակի ճանապարհների մասնաբաժինը,*	%	32.65	32.33	32.08

7	**Համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշ: Հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզկենտրոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժինը բնակավայրերի ընդհանուր թվում,**	%	67.35	67.67	67.92

13.2.2. Գերակայությունները

2017-2019թթ. ոլորտի քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղվելու է գոյություն ունեցող ճանապարհների արդյունավետ օգտագործման միջոցով հանրապետության տարածքում փոխադրումների ամբողջ ծավալով ապահովմանը: Կշարունակվեն ռազմավարական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, հիմնանորոգման, շահագործման և պահպանման աշխատանքները:

Հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն այն ճանապարհահատվածներում և ճանապարհային կառույցների օբյեկտներում, որոնք տարիներ շարունակ շարքից դուրս են եկել, տրանսպորտային միջոցների համար դարձել դժվար անցանելի և վտանգավոր: Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ նորոգումների և ձմեռային պահպանության իրականացման արդյունքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կդառնա անվտանգ, արագ և դյուրին: Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքի բարելավումը կապահովի բնականոն տրանսպորտային կապը, ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հանրապետության հեռավոր և սահմանամերձ շրջանների ու բնակավայրերի հետ, կնպաստի դրանց զարգացմանը:

Երթևեկության ինտենսիվության աճի, ծանր բեռնատար ավտոմեքենաների քանակի ավելացման, դրա հետ կապված ընդհանուր օգտագործման պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ծածկի արագ քայքայման պայմաններում ճանապարհային ցանցի պատշաճ տրանսպորտա-շահագործողական վիճակի ապահովման նպատակով միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ու պահպանման ծրագրեր՝ իրենց ենթածրագրերով:

2017-2019 թվականներին տրանսպորտի և կապի ոլորտում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայությունները

ՀՀ	Գերակա ուղղությունը			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով ՀՀ կավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017թ.	2018թ.	2019թ.	
1.	ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:			ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային

2.	ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոճանապարհ-ների վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ:	զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան՝ տրանսպորտի բնագավառի հիմնական քաղաքականությունը հանրապետության ճանապարհային ցանցի բարելավումն ու պահպանումն է:
3.	ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ:	
4.	ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքներ:	
5.	ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող կամուրջների պահպանման աշխատանքներ:	
6.	Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» և Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրերի իրականացում:	

13.3. ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

13.3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Տրանսպորտի և կապի ոլորտում 2017-2019թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծախսային ծրագրերը.

«Պետական նշանակության ավտոճանապարհների և տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում».

Ծրագրի նպատակն է հիմնանորոգել ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհային ցանցը, ինչպես նաև վթարային և վատ վիճակում գտնվող տրանսպորտային օբյեկտները: Հիմնանորոգման արդյունքում կապահովվի Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ճանապարհային ցանցից օգտվողների անխափան երթևեկությունը, որն իր հերթին կնպաստի երկրի տնտեսության զարգացմանը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019թթ-ին նախատեսվում է իրականացնել համապատասխանաբար 37.6 կմ, 52.4 կմ և 68.9 կմ երկարությամբ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների, ինչպես նաև ընդհանուր հաշվով 8 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքներ:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 2017թ.՝ 5,000.0 մլն դրամ, 2018թ.՝ 6,500.0 մլն դրամ, 2019թ.՝ 9,000.0 մլն դրամ:

«Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում».

Ծրագրի նպատակն է ապահովել անվտանգ և անխափան երթևեկության համար ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող կառույցների պահպանվածությունը:

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել միջպետական և հանրապետական նշանակության 2017թ.՝ 3043.0 կմ, 2018թ.՝ 3061.0 կմ, 2019թ.՝ 3084.0 կմ ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և, համապատասխանաբար, 3547.0 կմ, 3550.0 կմ և 3558.0 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ, ինչպես նաև երեք թունելների և հինգ կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 2017թ.՝ 7,449.5 մլն դրամ, 2018թ.՝ 8,658.0 մլն դրամ, 2019թ.՝ 9,882.9 մլն դրամ:

«Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում».

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել մարզային նշանակության 2017թ.՝ 677.0 կմ, 2018թ.՝ 692.0 կմ, 2019թ.՝ 718.0 կմ ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և 2017թ.՝ 1810.0 կմ, 2018թ.՝ 1870.0 կմ, 2019թ.՝ 1930.0 կմ ձմեռային պահպանության աշխատանքներ:

ՀՀ ընդհանուր օգտագործման մարզային նշանակության ավտոճանապարհներով անվտանգ և անխափան երթևեկություն ապահովելու նպատակով ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 2017թ.՝ 999.8 մլն դրամ, 2018թ.՝ 1,163.8 մլն դրամ 2019թ.՝ 1,330.0 մլն դրամ,:

«ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի պահպանում (սպասարկում)»:

Ծրագրի նպատակն է միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող բեռնատար տրանսպորտային միջոցների վրա հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) կիրառումը, որը հանդիսանում է միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու համար պարտադիր պայման: Հսկիչ սարքը նախատեսված է արձանագրելու բեռնատար տրանսպորտային միջոցի արագությունը, անցած ճանապարհը և ամենակարևորը՝ վարորդի վարելու և հանգստի ռեժիմները:

Տախոնետ համակարգի անընդհատ և անխափան աշխատանքն ապահովելու համար 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 27.8-ական մլն դրամ:

«Պետական աջակցություն «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ին».

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ ավտոմոբիլային ճանապարհային ցանցի նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի

գծով ճանապարհների շինարարության ընթացքում տեխնիկական չափանիշների ստուգման և աշխատանքների արդյունքների ընդունման, ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների վիճակի պարբերական ուսումնասիրության, նախագծային փաստաթղթերի իրականացված փորձաքննության, միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացում:

Կազմակերպության կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 210.4-ական մլն դրամ:

«Պետական աջակցություն «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին».

Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ միասնական երթուղային ցանցի մշակում և զարգացում, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրություն, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակում և կատարելագործում:

Կազմակերպության կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի նախատեսվում է հատկացնել 26.4-ական մլն դրամ:

«Ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում».

Ծրագրի նպատակն է ՀՀ կառավարության 07.02.2008թ. N 83-Ա որոշմամբ հաստատված Կոնցեսիոն պայմանագրի համաձայն սուբսիդավորել (մասնակի փոխհատուցել) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումներից «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի նախորդ տարվա արդյունքներով առաջացած տարեկան վնասը:

Ծրագրով 2017-2019թթ. ծրագրավորվել է 2017թ.՝ 324.0 մլն դրամ, 2018թ.՝ 331.0 մլն դրամ 2019թ.՝ 339.0 մլն դրամ:

«Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրում».

Ընկերությունը ստեղծվել է Հայաստան-Իրան երկաթուղու շինարարության նախագծի իրականացման նպատակով: Ընկերության գործունեության հիմնական նպատակների ու խնդիրների իրականացման համար նախատեսվել է 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի հատկացնել 39.1-ական մլն դրամ:

«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ».

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և

ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը:

Ծրագրով «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների իրագործման համար նախատեսվում է 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի հատկացնել 393.5-ական մլն դրամ:

«**ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցում».**

ՀՀ-ում տեղակայված ՌԴ զորամիավորումների հասցեով ռազմական փոխադրումներ իրականացնող օդանավերի սպասարկումներն իրականացնող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով 2017-2019թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 100.0-ական մլն դրամ:

«Մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աերոնավիգացիոն սպասարկման, թռիչք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցում».

ԱՄՆ-ի միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հասցեով առաքվող՝ մարդասիրական օգնության բեռներ տեղափոխող և «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության ու Գերմանիայի «Ֆրիդենսդորֆ ինտերնացիոնալ» հասարակական կազմակերպության կողմից համատեղ իրականացվող բարեգործական ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ չվերթների աերոնավիգացիոն վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների փոխհատուցման նպատակով 2017-2019թթ. նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 10.0-ական մլն դրամ:

«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում».

Մետրոպոլիտենով երթևեկության անվտանգության և ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման ապահովման նպատակով նախատեսվում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցման համար սուբսիդավորել նշված ընկերությանը 2017թ.՝ 2,738.0 մլն դրամի, 2018թ.՝ 2,731.7 մլն դրամի և 2019թ.՝ 2,759.2 մլն դրամի չափով:

Նշված գումարներից 2017թ.՝ 776.5 մլն դրամը 2018թ.՝ 770.2 մլն դրամը, և 2019թ.՝ 797.7 մլն դրամը կուղղվեն Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի և Եվրոպական Ներդրումային բանկի նկատմամբ Ընկերության ստանձնած վարկային պարտավորությունների կատարմանը:

«Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում».

Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի քաղաքապետարանին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների մասնակի սուբսիդավորման նպատակով:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտով երթևեկության անվտանգության և ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման ապահովման նպատակով նախատեսվում է 2017-2019թթ. յուրաքանչյուր տարի հատկացնել 611.1-ական մլն դրամ, որոնք կուղղվեն «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման արդյունքում կրած վնասի փոխհատուցմանը:

«Պետական աջակցություն Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար».

2017-2019թթ. ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի փողոցների ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման համար յուրաքանչյուր տարի հատկացնել 3,284.0-ական մլն դրամ:

«Պետական աջակցություն Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար». 2017-2019թթ. ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար յուրաքանչյուր տարի հատկացնել 2,272.0-ական մլն դրամ:

Միաժամանակ տրանսպորտի ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի <<Բագրատաշեն>> անցման կետի կամրջի վերակառուցման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցումը, որը կնպաստի միջազգային ստանդարտներին

համապատասխան Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող տվյալ անցակետով ատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 586.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 520.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 65.7 մլն. դրամ, 2018թ.՝ 1,501.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,291.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 210.1 մլն. դրամ, 2019թ.՝ 1,866.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,579.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 287.1 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման լրացուցիչ ծրագիր

Ծրագրի նպատակն է է հիմնանորոգել շուրջ 155 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածներ: Ծրագրի առաջին տարվա համար նախատեսվում է 4 մարզերում՝ ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի և Սյունիքի 7 ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ:

Հաշվի առնելով Կենսական նշանակության ճանապարհացանցի վերականգնման խիստ անհրաժեշտությունը, նախատեսվում է շարունակել «Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում» ծրագիրը՝ Համաշխարհային Բանկի կողմից տրամադրվող լրացուցիչ ֆինանսավորման հաշվին:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 2,120.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,860.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 260.3 մլն. դրամ, 2018թ.՝ 3,239.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,739.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 499.8 մլն. դրամ, 2019թ.՝ 4,436.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,905.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 531.7 մլն. դրամ:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը: (կմ 38+450 – կմ 90+191 հատվածը):

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 744.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 24.0 մլն. դրամ, 2018թ.՝ 1,441.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,201.5 մլն.

դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 240.3 մլն. դրամ, 2019թ. 2,191.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,826.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 365.3 մլն. դրամ:

4. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագիր,որի հիմնական նպատակն է՝ հիմնանորոգել և վերակառուցել Հայաստանի Հանրապետության կենտրոնը Վրաստանի Հանրապետության հետ կապող՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման 92 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհը: (կմ 0+000 – կմ 38+450 հատվածը):

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 744.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 24.0 մլն. դրամ, 2018թ.՝ 1,409.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,174.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 234.9 մլն. դրամ, 2019թ.՝ 2,422.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,018.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 403.7 մլն. դրամ:

5. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 2)

Ծրագրի նպատակն է Աշտարակ-Թալին 41.9 կմ հատվածի վերակառուցումը և ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

ա) ներկայումս երկշարք ճանապարհի լայնացումը մինչև քառաշարք ճանապարհի,

բ) ստորգետնյա և վերգետնյա անցումների և փոխհատումների վերակառուցում,

գ) T-աձև հատումների կառուցում՝ տեղական ճանապարհների համայնքների հետ կապ ապահովելու նպատակով:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև ներդրումային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծերի ուսումնասիրություններ, շինարարության վերահսկողություն, գնումների և կարողությունների հզորացման աշխատանքներ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 2.247.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,053.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 193.1 մլն. դրամ, 2018թ.՝ 3.,968.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,675.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 292.9 մլն. դրամ, 2019թ.՝ 13,314.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 12,263.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,050.5 մլն. դրամ:

6. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3)

Ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի մասնաբաժին, որը ընդգրկում է Թալին-Գյումրի 27,5կմ հատվածը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 980.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 817.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 163.4 մլն. դրամ, 2018թ.՝ 1,441.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,201.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 240.3 մլն. դրամ, 2019թ.՝ 3,340.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,823.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 516.7 մլն. դրամ:

7. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր (Տրանշ 3)

Ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի մասնաբաժին, որը ընդգրկում է Թալին-Լանջիկ 18,7 կմ հատվածը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,066.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 865.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 201.8 մլն. դրամ, 2018թ.՝ 1,845.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,537.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 307.6 մլն. դրամ, 2019թ.՝ 4,481.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,946.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 535.3 մլն. դրամ:

8. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի ծրագիր

Ծրագիրը հանդիսանում է հիմնական ծրագրի մասնաբաժին՝ Քաջարան-Ագարակ հատվածում, որի շրջանակներում իրականացվելու է մոտ 20.5 կմ ճանապարհահատվածի ուսումնասիրությունը, հսկողությունը և վերակառուցումը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 288.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 48.1 մլն. դրամ, 2018թ.՝ 692.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 576.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 115.4 մլն. դրամ, 2019թ.՝ 1,996.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,682.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 314.3 մլն. դրամ:

9. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագիր (Տրանշ 3):

Փոխկապակցված է համանուն վարկային ծրագրի հետ, իրականացվում է վարկային ծրագրի ժամկետներում նույն ուղղվածությամբ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,441.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,201.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 240.3 մլն. դրամ, 2018թ.՝ 1,730.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,441.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 288.4 մլն. դրամ, 2019թ.՝ 1,730.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,441.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 288.4 մլն. դրամ:

10. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

ա) ուղևորների սպասարկման որակի բարելավում,

բ) մետրոպոլիտենի գծերի, կայարանների, շենքերի, կառույցների, էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացում,

գ) մետրոպոլիտենի օբյեկտներում սանիտարատեխնիկական վիճակի և աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության ապահովում,

դ) էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացում, թունելային ջրատարի և շարժասանդուղքների վերանորոգում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 1,883.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,415.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 468.2 մլն. դրամ:

11. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Նշված ծրագիրը հանդիսանում է մետրոպոլիտենի վերակառուցման հիմնական ծրագրային փաթեթի մասնաբաժին, որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 328.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 250.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 77.7 մլն. դրամ:

12. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Նշված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է մետրոպոլիտենի վերակառուցման հիմնական ծրագրային փաթեթի մասնաբաժին, որի նպատակն է վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 1,543.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,187.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 356.1 մլն. դրամ:

13. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է շարունակել վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են արդիականացնել վագոնները, շարժասանդուղքները, ապահովել էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացումը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 288.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 48.1 մլն. դրամ, 2018թ. 865.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 144.2 մլն. դրամ, 2019թ. 1,441.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,201.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 240.3 մլն. դրամ:

14. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է շարունակել վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են արդիականացնել վագոնները, շարժասանդուղքները, ապահովել էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժակազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացումը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 288.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 48.1 մլն. դրամ, 2018թ. 865.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 144.2 մլն. դրամ, 2019թ. 1,441.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,201.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 240.3 մլն. դրամ:

15. E5P աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երրորդ դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է շարունակել վերականգնել և բարելավել Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, որի շրջանակներում նախատեսվում են արդիականացնել վագոնները, շարժասանդուղքները, ապահովել էլեկտրամատակարարման և կապի համակարգերի, շարժա-

կազմերի և տեխնոլոգիական սարքավորումների անխափան շահագործման հուսալիության բարձրացումը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 312.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 72.1 մլն. դրամ, 2018թ. 312.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 72.1 մլն. դրամ, 2019թ. 312.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 240.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 72.1 մլն. դրամ:

16. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է բարելավել Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները:

Նշված վարկային ծրագրի շրջանակներում կատարված տնտեսումների հաշվին նախատեսվում են կառուցել երկու տրանսպորտային հանգույց՝ Արշակունյաց-Գարեգին Նժդեհ և Արշակունյաց-Բագրատունյաց խաչմերուկներում: Նշված վայրերում Արշակունյաց պողոտայի ուղղությամբ նախատեսվում է կառուցել էստակադաներ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 5,373.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 5,152.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 221.8 մլն. դրամ, 2018թ.՝ 4,171.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,952.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 218.9 մլն. դրամ:

17. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է բարելավել քաղաքային ենթակառուցվածքները, այդ թվում՝ Արգավանդ - Շիրակ, Դավիթաշեն - Աշտարակ և Բաբաջանյան - Աշտարակ ճանապարհահատվածը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 3,937.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,839.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 97.6 մլն. դրամ, 2018թ.՝ 7,189.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 6,895.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 293.2 մլն. դրամ, 2019թ.՝ 10,324.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 9,367.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 957.5 մլն. դրամ:

18. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր

Ծրագրի նպատակն է Գյումրի քաղաքում հիմնական ճանապարհների վերակառուցում և հանրային լուսավորության արդիականացում, այդ թվում՝ ասֆալտի և մայթերի նորոգում, ջրահեռացման համակարգերի վերականգնում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 173.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 144.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 28.8 մլն. դրամ, 2018թ.՝ 346.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 288.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 57.6 մլն. դրամ, 2019թ.՝ 490.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 408.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 81.7 մլն. դրամ:

19. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է Երևանում ստեղծել հուսալի լուսավորության ցանց (մոտ 28 փողոցներում), ապահովել էլեկտրաէներգիայի էական խնայողություն, ներդնել արտաքին լուսավորության ցանցի հեռակառավարման համակարգ, փոխել վթարված հենասյուները, փոխարինել առկա լուսատուները LED լուսատուներով:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ. 432.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 360.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 72.1 մլն. դրամ, 2018թ. 461.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 384.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 76.9 մլն. դրամ, 2019թ. 490.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 408.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 81.7 մլն. դրամ:

ԳԼՈՒԽ 14. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

14.1 ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավասություններից են խմելու և ոռոգման ջուր մատակարարող, ջրահեռացում իրականացնող, ջրային ոլորտում առևտրային գործունեություն ծավալող ընկերություններում պետական բաժնեմասերի (ինչպես նաև արտաքին ֆինանսական աղբյուրների հաշվին ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակների) կառավարումը, հիդրոտեխնիկական կառույցների շինարարության ու շահագործման ապահովումը և այլն:

Ոլորտի խմելու ջրի մատակարարումն ու կեղտաջրերի հեռացումն իրականացվում է «Երևան-ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, իսկ ոռոգման համակարգի պահպանումն ու շահագործումը՝ «Սևան-Հրազդանյան-ջրառ» ու «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ների և «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով ստեղծված 37 ջրօգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ) միջոցով:

Ոռոգման ոլորտում վարկային որոշ ծրագրերի իրականացման նպատակով համակարգում գործում է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, իսկ Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի պահպանման և տեխնիկական վիճակի բարելավման ու նորոգման նպատակով Կոմիտեի ենթակայությամբ գործում է ««Արփա-Սևան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը: Կոմիտեի ենթակայությամբ գործում է նաև «Մելիորացիա» ՓԲԸ-ն, որն իրականացնում է կոլեկտոր-ադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների վերահսկման, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակների որոշման գործառույթները:

Կոմիտեի համակարգում գործում է նաև ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը, որը ստեղծվել է և իր գործունեությունն իրականացնում է համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N 686-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ֆինանսավորումն ապահովելու կանոնակարգը հաստատելու մասին» N 677-Ն որոշման:

Կոմիտեն իրականացնում է «Հայջրմուղկոյուղի», «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Մելիորացիա» ՓԲԸ-ների 100 տոկոս պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարումը, իսկ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի մասով՝ 77.72 տոկոսի, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 85.12 տոկոսի և «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասով՝ 78.18 տոկոսի կառավարումը: Միաժամանակ Կոմիտեին (ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության) վերապահված են նախկին Երևանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գործող ջրային համակարգերի «Երևան Ջուր» ՓԲԸ-ին վարձակալության տրված և ջրօգտագործողների ընկերություններին անհատույց օգտագործման տրամադրված գույքի սեփականատերի իրավասությունները:

Անցած տարիների ընթացքում Կոմիտեի աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության մասին օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ջրային ոլորտի բարեփոխումներին վերաբերվող ՀՀ կառավարության որոշումները, կառավարության կողմից սահմանված ոլորտի գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները: Այդ նպատակով շարունակվել են աշխատանքները համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, կոյուղու մաքրման կայանների շահագործման հանձնման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում Կոմիտեի համակարգմամբ կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

1. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացման նպատակով դեռևս 14.08.2014թ. ընդունվել են ՀՀ կառավարության «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N883-Ն և ««Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը սահմանելու մասին» N888-Ն որոշումները:

Ջրամատակարար կազմակերպությունների կողմից սպասարկվող գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցման գործընթացը կազմակերպելու նպատակով 2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 19.02.2015թ. N140-Ա որոշմամբ ստեղծվել է

միջգերատեսչական հանձնաժողով: ՀՀ վարչապետի 27.04.2015թ. N 309-Ա որոշմամբ հաստատվել է միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը:

Ընդունվել են ՀՀ կառավարության 13.08.2015թ. «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությանը և ֆինանսավորման ծրագրին հավանություն տալու մասին» N 38 արձանագրային և 15.10.2015թ. ««Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից օգտագործվող և պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը փոխանցելու ձևը, գնման ընթացակարգի կիրարկման կարգը, գնման մասնակցին ներկայացվող նախաորակավորման պահանջները սահմանելու, ՀՀ կառավարության 14.08.2014թ. N888-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1233-Ն որոշումները:

2. Ոռոգում-ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ« և «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 37 ՋՕԸ-ների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում: Ոռոգման ոլորտում նախատեսվել է կիրառել մասնավոր կառավարման խորհրդատվական ծառայություններ, որի ներգրավման ուղղությամբ աշխատանքները և դոնոր կազմակերպությունների հետ բանակցություններն ընթացքի մեջ են:

3. Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար 2015 թվականի ընթացքում կատարվել են՝ վտանգավոր հատվածներում նոր ժամանակավոր ամրակապերի տեղադրում՝ շուրջ 187 տ, երեսարկի կառուցում՝ շուրջ 305 գծմ, ցեմենտային և ստուգիչ լցամղում՝ շուրջ 3234 քմ: Արդյունքում լուծվել է թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցերը:

4. Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումը 2015 թվականին կազմել է շուրջ 21.81 մլրդ դրամ՝ 2014 թվականի 21.28 մլրդ դրամի դիմաց կամ՝ ավել է գանձվել 530 մլն դրամ:

Խմելու ջրի ոլորտում ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրման տոկոսը 2015 թվականին կազմել է 96.14 %, իսկ ոռոգման ոլորտում՝ 81.27 %:

Խմելու ջրի մասով 2015 թվականին գանձվել է շուրջ 17.58 մլրդ դրամ՝ 2014 թվականի 17.17 մլրդ դրամի դիմաց կամ՝ ավել է գանձվել շուրջ 410 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում 2015 թվականին գանձվել է 4.23 մլրդ դրամ՝ 2014 թվականի 4.11 մլրդ դրամի դիմաց կամ՝ ավել է գանձվել շուրջ 120 մլն դրամ:

5. Հաշվի առնելով 2015 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ գործոնները՝ ոռոգման համակարգն ունեցել է էլեկտրաէներգիայի գերածախս: Սակայն ընդհանուր՝ խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից 2015

թվականին էլ.էներգիայի ծախսը կազմել է 226 մլն կՎտ.ժամ՝ 2014 թվականի 239.7 մլն կՎտ.ժամի դիմաց կամ՝ համակարգում քիչ է ծախսվել 13.7 մլն կՎտ.ժամով:

Նշվածի համար կարևոր հանգամանք է հանդիսացել նաև Սևանա լճից 2015 թվականին 2014 թվականի համեմատ 100 մլն մ^3 քիչ ջրի բացթողումը, ինչի պարագայում դեֆիցիտը լրացվել է Մխչյան-2 և Ռանչպար-2 պոմպակայաններով շուրջ 50 մլն մ^3 լրացուցիչ ջրի արտադրությամբ:

6. 2015 թվականին ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունները ՀՀ պետական բյուջե փոխանցել են շուրջ 5.01 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

7. 2015 թվականի ընթացքում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը:

8. 2015 թվականին Սևանա լճից օրենքով սահմանված կարգով բաց է թողնվել շուրջ 167.7 մլն մ^3 ջուր, ինչը նախորդ հինգ տարիների միջին ցուցանիշից ցածր է 50 մլն մ^3-ով: Արփա-Սևան թունելով Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 109.5 մլն մ^3 ջրաքանակ: Սևանա լճի մակարդակը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է շուրջ 1900.2 մ: 2015 թվականի ընթացքում Սևանա լճի մակարդակը 2014 թվականի համեմատ բարձրացել է 6 սմ-ով:

9. Համակարգի խմելու ջուր մատակարարող կազմակերպությունների սպասարկման տարածքում բաժանորդների մոտ 2015թ. տեղադրվել են 862737 հատ ջրաչափական սարք, որը 2014 թվականի համեմատությամբ ավել է 34363 հատով: Ջրաչափությունը կազմում է 93.2 %:

10. Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ, այդ թվում՝ առաջնահերթ 4 ջրամբարաշինական ծրագրերի մասով (Վեդի, Կապս, Եղվարդ, Մաստարա) իրականացվել են համապատասխան աշխատանքներ, այդ թվում՝

Վեդու ջրամբար: Զարգացման Ֆրանսիական Գործակալության (ԶՖԳ) ֆինանսավորմամբ՝ դրամաշնորհ, 2013-2014թթ.-ին սկսվել և ավարտվել է «Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարություն» ծրագրի շրջանակներում նախատեսված տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրությունը: Ներկայում իրականացվում է ջրամբարի և ոռոգման համակարգի շինարարության համար մանրամասն նախագծման և մրցութային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները, որը նախատեսվում է ավարտել 2016 թվականի օգոստոսին, որից հետո կմեկնարկվեն շինարարարական աշխատանքները:

Կապսի կիսակառույց ջրամբար: Ծրագրի իրականացման ընթացքում (2014-2015թթ.) Գերմանիայի վերակառուցման ու զարգացման բանկի (KFW) ֆինանսական աջակցության (դրամաշնորհ) միջոցներով խորհրդատուն («CES Consulting Engineers Salzgitter GmbH», «AHT

Group AG Management & Engineering» և «Երևանի պետական ճարտարապետական և շինարարական համալսարան» ՀՁ) իրականացրել է «ՋՈՒՀԿ/Ախուրյան գետ-Կապսի ջրամբարի և Կապսի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում» տեխնիկա-տնտեսական հիմնավորման (ՏՏՀ) ուսումնասիրությունը: ՏՏՀ ուսումնասիրությունից հետո իրականացվել է «մանրամասն նախագծի և մրցութային փաստաթղթերի պատրաստման» խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցութային գործընթացը:

2016 թվականի մարտի 10-ից մեկնարկվել է «ՋՈՒՀԿ/Ախուրյան գետ, Փուլ 1, Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցում» Ծրագրի «մանրամասն նախագծի և մրցութային փաստաթղթերի պատրաստման» աշխատանքները:

Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նպատակով 2014թ. հունիսին սկսվել են նախնական իրագործելիության ուսումնասիրությունները երկու փուլով, որոնք ավարտվել են 2015թ. հունիսին: Ներկայումս ընթանում են ջրամբարի իրագործելիության ուսումնասիրությունները, որոնք կավարտվեն 2016թ. օգոստոսին: Այնուհետև կսկսվեն նախագծման աշխատանքները: Ծրագիրը ֆինանսավորում է Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալությունը (ՃՄՀԳ):

Մասրարայի ջրամբարի կառուցման իրագործելիության ուսումնասիրությունների համար հատկացվել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Տարածաշրջանի Կարողությունների Զարգացման Հավատարմագրային Հիմնադրամի (ECAPDEV) դրամաշնորհ: Միաժամանակ նախապատրաստվում է ծրագրի կոնցեպցիան՝ նույն հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնելու համար:

Ոռոգման ոլորտում Համաշխարհային բանկի հետ իրականացվում են էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման միջոցով մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքի նվազեցմանն ուղղված համապատասխան ծրագրեր (մասնավորապես, Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգ, Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգ, Բաղրամյան-Նոյակերտ ինքնահոս ոռոգման համակարգ և այլն):

11. Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում, կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման ծրագրերով իրականացվել են՝

ա) շուրջ 155.0 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, ինչպես նաև 29.2 կմ ընդհանուր երկարությամբ դրենաժային ցանցի վերականգնման, նորոգման և մաքրման աշխատանքներ:

բ) Արարատյան հարթավայրում տեղադրված 450 դիտողական հորատանցքներում գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2015 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ջրի և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման շարունակականության ավելացումը և այլն:

14.1.2 Հիմնական խնդիրները

Ջրային տնտեսության ոլորտում էապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, դրված նոր գաղափարների իրացումն ու նոր հիմնախնդիրների լուծումը:

Այդ կապակցությամբ կարևորվում են՝

1. Խմելու ջրի ոլորտում բարեփոխումների գործողությունների ծրագրի իրականացումը՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի:

2. Կառուցվածքային փոփոխությունները՝ Կոմիտեում պետական գույքի կառավարման, օպերատորների կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման, ներդրումների ուղղությունների և ծավալների սահմանման, ծառայությունների որակի գնահատման իրականացման, խմելու և ոռոգման համակարգերի հետագա արդյունավետ շահագործման համար համակարգում մասնագիտացված համապատասխան կառույց ունենալու նպատակով:

3. Ոռոգման ոլորտում մասնավոր կառավարման խորհրդատվական ծառայությունների կիրառման ապահովում, ինչպես նաև ոռոգման ոլորտի կազմակերպությունների ֆինանսական առողջացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

4. «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Մելիորացիա» ՓԲԸ-ների բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև ՋՕԸ-ների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

5. Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Եվրոմիության Հարևանության Ներդրումային հիմնադրամի, Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովումը:

6. Խմելու ջրի կայուն, հուսալի և անվտանգ մատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում ու կառուցում, ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում, ինչպես նաև

ջրամատակարար կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերում ուսումնասիրությունների ավարտում և ներդրումային ծրագրերի նախապատրաստում:

7. Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների և ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների շարունակությունը:

8. Ոռոգման ջրանցքների, ջրատարների, պոմպակայանների վերականգնում և նորոգում, ինչպես նաև ինքնահոս համակարգերի կառուցում:

9.Ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստում, այդ թվում՝ առաջնահերթ Վեդու, Կապսի, Եղվարդի և Մաստարայի ջրամբարաշինական ծրագրերի իրականացման նպատակով:

10. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ վերահսկողության իրականացումը.

11. Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար նախատեսված աշխատանքների իրականացման ապահովումը:

14.2 ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

14.2.1 Նպատակները

Հիմնական նպատակներն են՝

- ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպումը.

- մասնավոր կառավարման, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքով նախատեսված կառավարման համակցված և խորացված ձևերի կիրառումը.

- համակարգի կազմակերպությունների կառավարման համակարգի բարելավումը, ինչպես նաև ֆինանսական կենսունակության բարձրացումը՝ ի հաշիվ շահագործման և պահպանման ծախսերի կրճատման, կորուստների նվազեցման և հավաքագրման մակարդակի բարձրացման,

- բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը, պահպանել գրունտային ջրերի մակարդակը թույլատրելի խորություններում, կանխարգելել հողատեսքերի երկրորդային աղակալումն ու ալկալիացումը, կանխարգելել տարափոխիկ հիվանդությունների տարածումը և նպաստել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը:

14.2.1.1 ՀՀ կառավարության բաժնետիրական դերը խմելու ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերություններում

ՀՀ կառավարության 14.08.2014թ. N888-Ն և N883-Ն որոշումներով համապատասխանաբար սահմանվել են խմելու ջրի ոլորտի ընկերությունների կողմից («Հայջրմուղկոյուղի», «Լոռիջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ներ) սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձևը և ժամկետը և պետական-մասնավոր գործընկերու-

թյան հետագա զարգացմանն ուղղված Հայաստանում խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 14.08.2014թ. N888-Ն որոշման համաձայն ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը նախատեսվում է դիտարկել որպես միասնական գույքային համալիր, որի հետագա օգտագործումն ու պահպանումը, պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում, նախատեսվում է վարձակալական հիմունքներով տրամադրել մեկ կառավարչի՝ 15 տարի ժամկետով: Միաժամանակ ՀՀ կառավարության 14.08.2014թ. N883-Ն որոշմամբ հաստատված ծրագրով նախատեսվել է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում վարձակալ կազմակերպության ընտրության գործընթացի կազմակերպմանը, ծախսածածկող սակագներին ուղղված ուսումնասիրությունների քննարկմանը (մասնավորապես՝ վարձակալ ընկերությանը ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորում չի հատկացվելու, վարձակալական ընկերության համար սահմանված սակագինը ներառելու է վարձակալի բոլոր ծախսերը և խելամիտ շահույթը, վարձակալ ընկերության կողմից վարձակալած ենթակառուցվածքներում կապիտալ ներդրումների նպատակով պետության նախկինում և նոր ստանձնած վարկային պարտավորությունների սպասարկման ֆինանսական պարտքերի մի մասը պետք է փոխհատուցվի սակագնի հաշվին՝ վարձավճարի տեսքով, սակագնի մեջ պետք է նախատեսվեն պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների համապատասխան ծախսերը, որոնք թույլ կտան ապահովել ջրային համակարգերի բնականոն շահագործումն ու պահպանումը և սակագները պետք է լինեն մատչելի բնակչության առավել ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների համար), բանակցությունների վարմանը և հաղթող կազմակերպության ճանաչմանը:

ՀՀ կառավարության 15.10.2015թ. N 1233-Ն որոշման հիման վրա ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալության փոխանցելու ժամկետը երկարաձգվել է և 2016թ. հունիսի 1-ի փոխարեն սահմանվել է 2017թ. հունվարի 1-ը: Միաժամանակ ՀՀ կառավարության 10.03.2016թ. N271-Ն որոշմամբ հավանության է արժանացել ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգի մասնակցության հայտերի հրավերը և վարձակալության պայմանագրի նախագիծը:

Ջրամատակարարման ոլորտում պետության կողմից նախորդ տարիներին և 2016թ-ին իրականացվել են մի շարք ֆինանսական ուղղակի և անուղղակի աջակցության միջոցառումներ, որոնց ամբողջությունը ապահովել է ոլորտային նպատակների իրականացումը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է 2013-2015 թթ. փաստացի և 2016 թվականի կանխատեսվող ոլորտի ֆինանսական հոսքերի ամփոփ պատկերը:

Ջրամատակարարման ոլորտի ֆինանսական ուղղակի և անուղղակի հոսքերի դինամիկա՝ առանց «Երևան Ջուր» ՓԲԸ-ի տվյալների (մլն դրամ)

	Ֆինանսավորման տեսակ	Ֆինանսավորման աղբյուր	2013թ. փաստացի	2014թ. փաստացի	2015թ. փաստացի	2016թ. կանխատեսվող
1	Հասույթ	Սպառողներ	5,593.6	6,814.1	6,934.9	7,278.3
2	Գանձման տոկոս		98.0%	97.9%	96.0%	95.4%
3	Տոկոսավճարների ներում (չստացված եկամուտ)	ՀՀ պետական բյուջե	583.8	625.8	852.8	810.7
4	Սուբսիդիա ընկերու-թյուններին, այդ թվում՝	ՀՀ պետական բյուջե	1,764.8	1,808.3	4,259.0	5,450.0
4.1	Վարկի վերադարձման համար	ՀՀ պետական բյուջե	601.3	881.2	2,965.8	3,755.1
5	Նվիրատվություններ	ՄԱԶԾ	137.4	-	-	-
6	Կառավարման վճար	ՀՀ պետական բյուջե	1,674.5	2,324.6	724.3	591.6
7	Ներգրավված վարկեր	ՀԲ, ԱԶԲ, ՎԶԵԲ, ԵՆԲ, ԿՖՎ	10,886.2	15,071.1	9,605.7	7,663.2
8	ՀՀ կառավարության համաֆինանսավորում	ՀՀ պետական բյուջե	5,155.4	4,199.0	2,561.2	1,946.3
9	Դրամաշնորհներ	ԵՄ, ՎԶԵԲ, ԿՖՎ	563.4	3,396.1	1,571.7	2,441.8
10	ՀՀ կառավարության համաֆինանսավորում	ՀՀ պետական բյուջե	-	519.3	201.9	563.5
11	Դրամաշնորհներ	Քարակերտ, Մայիսյան համայնքներ	3.0	3.0	-	-
12	Այլ		7.5	3.8	4.6	3.2
	Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանում		26,369.6	34,765.0	26,716.1	26,748.6

Հաշվի առնելով, որ 2017թ. հունվարի 1-ից կդադարեցվի ընկերությունների հիմնական գործունեությունը և ընկերությունների կողմից սպասարկվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կկառավարվեն վարձակալության սկզբունքով՝ մեկ կառավարչի միջոցով, ուստի 2017-2019թթ. ժամանակահատվածի համար կանխատեսումային ցուցանիշներ հնարավոր չէ հաշվարկել:

14.2.2 Գերակայությունները

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության ոլորտի 2017-2019 թվականների գերակայությունները բխում են ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը

և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»-ի և կնքված վարկային համաձայնագրերի պահանջներից:

Ոլորտի գերակա ուղղություններն են.

- խմելու ջրի կայուն և հուսալի ջրամատակարարում, որակի ապահովում, ջրի կորուստների կրճատում,

- ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգում ու կառուցում,

- ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում,

- ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստում,

- ջրամատակարարման ծառայությունների որակի բարելավման նպատակով ջրային համակարգերի հիմնանորոգմանը, տեխնիկական վերազինմանը, ինչպես նաև ներտնտեսային ցանցերի վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացում,

- համակարգի կազմակերպությունների ֆինանսական կենսունակության բարելավում՝ կառավարման համակարգի բարելավման և մասնավորի հետ համագործակցության խորացման միջոցով:

14.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

14.3.1. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

2017-2019թթ. ժամանակաշրջանում ոլորտի զարգացման կարևորագույն նպատակների իրագործման շրջանակներում շարունակվելու է ըստ բնագավառների ներքոհիշյալ ծրագրերի կատարումը.

1. Ոռոգման համակարգերի սուբսիդավորման ծրագրեր

Հայաստանի Հանրապետության ոռոգման ոլորտում ներկայում գործում են երկու կազմակերպա-իրավական տեսակի կազմակերպություններ՝ ոռոգում-ջրառ իրականացնող 2 փակ բաժնետիրական ընկերություններ և 37 ջրօգտագործողների ընկերություններ:

ա/ «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրով նախատեսվում է ոռոգման համակարգում ստեղծված ՋՕԸ-ների ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության

տրամադրում՝ ՋՕԸ-ների համար հաստատված ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով: Այդ նպատակով 2017-2019թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 5,375.4 մլն դրամ:

<u>բ/ «Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրում»</u> ծրագրով նախատեսվում է ոռոգում-ջրառ իրականացնող թվով 2 ընկերությունների ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության տրամադրում՝ վերջինների համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով: Այդ նպատակով 2017-2019թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 1,138.4 մլն դրամ:

<u>2. «Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ»</u>

Նշված ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝

ա) հանրապետությունում կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքներ,

բ) Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ,

գ) Կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում,

դ) ՀՀ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման, նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 321.5 մլն դրամ:

<u>3. «Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրություն»</u>

Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կատարում է ջրային համակարգերի հիդրոտեխնիկական կառուցվածքների զննում, դիտարկումներ և չափումներ, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրություն, ինչպես նաև ջրային համակարգերում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տալիս է մասնագիտական եզրակացություններ:

Հանձնաժողովի հետագա արդյունավետ գործունեության ապահովման նպատակով 2017-2019թթ. ժամանակահատվածում յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է հատկացնել 11.8 մլն դրամ:

<u>4. «Արփա-Սևան թունելի շահագործման, պահպանման ծրագիր»</u>

Ծրագրով նախատեսվում է «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի պահպանում ու շահագործում՝ ապահովելով համակարգի անվտանգ, անխափան շահագործումն և պահպանումը, ինչը թույլ է տալիս առավելագույն քանակի ջուր տեղափոխել Սևանա լիճ:

Նկատի ունենալով, որ Աբու-Դաբի Զարգացման Հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արփա-Սևան» թունելի հիմնանորոգման ծրագիրն ավարտվում է 2016 թվականին, ուստի, 2004 թվականի օգոստոսի 17-ին կնքված ՆԾՁԲ-04/36 պայմանագրի համաձայն, որով նախատեսվել է «Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի ջրային համակարգը հանձնել հավատարմագրային կառավարման («Արփա-Սևան» ԲԲԸ), նախատեսվում է 2017-2019 թվականների համար յուրաքանչյուր տարի Արփա-Սևան թունելի պահպանման և շահագործման նպատակով հավատարմագրային կառավարչի պահպանման ծախսերի համար հատկացնել 270,5 մլն դրամ:

Միաժամանակ ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման ծրագիր

Ծրագրի նպատակն է ոռոգման նոր համակարգերի կառուցումը՝ նվազեցնելով ոռոգման կախվածությունը հոսանքատար մեխանիկական ոռոգումից, դարձնելով այն տնտեսապես շահավետ և կայուն: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա/ Ոռոգման համակարգի բարելավում, այդ թվում՝ մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով, մեխանիկական ոռոգման ջուր տեղափոխող հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում: Կֆինանսավորի ոռոգման համակարգերի կառուցումը Մեղրի, Գեղարդալիճ, Բաղրամյան-Նորակերտ և Քաղցրաշեն համակարգերում:

բ/ Կառավարման տեղեկատվություն, այդ թվում՝ տեխնիկական հետազոտություններ, կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման (SCADA) համակարգի տեղադրում: Մայր ջրանցքների և մի քանի այլ ջրընդունիչ կետերի 71 դիտակետում կտեղադրվի ջրաչափման և ջրի հոսքի կառավարման սարքի ժամանակակից մոդել:

գ/ Ծրագրի կառավարում և ՋՕԸ-ների աջակցման թիմ, այդ թվում՝ նախնական նախագծային փաստաթղթերի պատրաստումը, շինարարական աշխատանքների համակարգումն ու մոնիտորինգը, մրցութային փաստաթղթերի պատրաստումը և գնումային գործընթացի կառավարումը, ծրագրի գործողությունների մոնիտորինգը և ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունների պատրաստումը, ՋՕԸ-ների ամրապնդմանն ուղղված գործողությունների իրականացումը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 3,646.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,261.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 384.9 մլն. դրամ:

2. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագիր

Ծրագրի նպատակն է Շիրակի մարզում՝ Ախուրյան գետի վրա, գյուղատնտեսական նպատակներով արդյունավետ ոռոգման համակարգի ստեղծում, որը կհանդիսանա գետի ամբողջ ավազանի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման մաս:

Ծրագրով նախատեսվում է ավարտին հասցնել կիսակառույց պատվարը, օժանդակ կառույցները և վերականգնել թունելները, ինչը կապահովի ստորին բիեֆում տարաժաշրջանների անվտանգությունը: Կապսի ջրամբարի կառուցման առաջին փուլով նախատեսվում է վերականգնել և կառուցել Կապսի ջրամբարը ընդհանուր 25 մլն մ^3 ծավալով, ինչպես նաև կանոնավոր մոնիթորինգի գործընթացի ստեղծում, այդ թվում գոյություն ունեցող ջրաչափական կետերի վերակառուցում և նոր/լրացուցիչ ջրաչափական կետերի կառուցում Ախուրյան գետի վերին հոսանքի երկայնքով: Կապսի ջրամբարի պատվարային հանգույցը 1-ին փուլում նախատեսվում է կառուցել այնպես, որ հետագայում հնարավոր լինի պատվարը բարձրացնել՝ հասցնելով ջրամբարի ծավալը 60 մլն մ^3-ի:

Երկրորդ փուլում հնարավոր կլինի իրականացնել առաջին փուլում մշակվելիք ջրային համակարգի ինտեգրված կառավարման պլանը և վերականգնել կամ արդիականացնել գյուղատնտեսական տարածքների ոռոգման համակարգերը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 943.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 778.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 165.4 մլն. դրամ, 2018թ.՝ 1,495.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,326.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 169.2 մլն. դրամ, 2019թ.՝ 4,147.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,016.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 130.5 մլն. դրամ:

3. Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վերդու ջրամբարի կառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է Վեդու ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցումը, ինչը կբարձրացնի ջրապահովման մակարդակը և կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել պատվարը, օժանդակ կառուցվածքները, փոխադրող համակարգը՝ գետից մինչև ջրամբար և հեռացնող խողովակաշարը (ինքնահոս): Վեդու 29 մլն մ^3 ընդհանուր ծավալով ջրամբարի կառուցումը կբարձրացնի Վեդի և Արարատ ՋՕԸ-ների շուրջ 3200 հա հողատարածքների ջրապահովման մակարդակը, շահագործումից կհանվեն թվով 11 պոմպակայաններ՝ տարեկան կտնտեսելով շուրջ 19մլն կվտ/ժամ էլեկտրա-

էներգիա: Բացի այդ, երկրորդ/երրորդ կարգի ջրանցքների վերակառուցման և ցանցի արդիականացման արդյունքում կկրճատվեն ոռոգման ջրի կորուստները, ինչպես նաև շահագործման և պահպանման ծախսերը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,173.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 962.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 211.5 մլն. դրամ, 2018թ.՝ 1,973.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,720.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 252.7 մլն. դրամ, 2019թ.՝ 4,264.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,954.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 310.1 մլն. դրամ:

4. Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր

Ծրագիրը կնպաստի բարելավել և արդիականացնել Հայաստանի ոռոգման համակարգերը՝ կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, ոռոգման համակարգերում կրճատել բարձր ջրակորուստները, նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսումները կամ բարձրացնել էներգածախսատար համակարգերի արդյունավետությունը, վերանախագծել ներտնտեսային ցանցերը՝ գոյություն ունեցող հողօգտագործման մեթոդներին համապատասխան: Զարգացման նպատակի իրականացմանը ենթադրվում է հասնել հետևյալ միջոցառումների միջոցով.

ա) մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգերով,

բ) որոշ մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում,

գ) ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում,

դ) ՋՕԸ-ների կառավարչական ներուժի ամրապնդում և Ծրագրի կառավարում, շինարարական փաթեթների նախապատրաստում, խորհրդատվական ծառայություններ և այլն:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 797.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 652.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 144.2 մլն. դրամ, 2018թ.՝ 1,387.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,236.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 151.2 մլն. դրամ, 2019թ.՝ 3,341.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,184.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 156.4 մլն. դրամ:

5. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը՝ վերակառուցելով ջրամատակարարման ցանցը, փոխարինելով ճնշման պոմպերը և բնակարանների առանձին միացումները: Այս ծրագրով Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցում նախատեսվում է վերականգնել շուրջ 152 կմ ընդհանուր երկարությամբ ջրագծեր և

մասնավոր 39000 միացումներ՝ մոտ 22 կմ ընդհանուր երկարությամբ և կառուցել շուրջ 30 նոր բակային պոմպակայաններ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 1,197.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 997.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 199.6 մլն. դրամ, 2018թ.՝ 1,835.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,529.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 305.9 մլն. դրամ:

6. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը՝ ջրամատակարարման ցանցի վերակառուցման, ջրահեռացման համակարգերի բարելավման միջոցով և համարվում է նախորդ ծրագրի մասնաբաժին ԵՆԲ-ի աջակցությամբ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 1,607.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,339.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 267.9 մլն. դրամ, 2018թ. 1,441.8 մլն. դրամ վարկային միջոցներ:

5. Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է աջակցել Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավմանը և համարվում է նախորդող վարկային ծրագրերի դրամաշնորհային մասնաբաժին:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 1,543.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,286.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 257.3 մլն. դրամ, 2018թ.՝ 1,543.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,286.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 257.3 մլն. դրամ:

6. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականցվող Երևանի ջրամատակարարման բարելավման դրամաշնորհային ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավում, հոսակորուստների կրճատում, ինչպես նաև ծառայության մակարդակի բարձրացում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 120.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 98.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 21.8 մլն. դրամ, 2018թ.՝ 120.4

մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 98.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 21.8 մլն. դրամ:

7. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

8. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերի նպատակն է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնումը: Ծրագրի շրջանակներում նախատեսված է 6 քաղաքներում և 37 գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 856.9 մլն դրամ, 2018թ.՝ 1,289.5 մլն դրամ, 2019 թ.՝ 3,620.8 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ. 977.5 մլն դրամ, 2018թ.՝ 1,468.9 մլն դրամ, 2019թ.՝ 3,286.2 մլն դրամ:

9. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

10. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականցնել Գյումրի քաղաքի 2-րդ գոտու հյուսիսային մաս, Սավոյան փողոցից դեպի հյուսիս, Օդանավակայանի բնակելի թաղամասերի, Շիրակացի փողոցի հարակից թաղամասերի, Սևերսի թաղամասի և Ե/գ թաղամասից մինչև Սելեկցիոն կայան ընկած հատվածի բաշխիչ ցանցերի վերականգնման, Գյումրի քաղաքի առավել

ռիսկային կետերի (Աթոյան, Շիրակացի, Ղուկասյան փողոցների) կոյուղու համակարգի և այլ բաշխիչ ցանցերի վերականգնման աշխատանքներ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 939.0 մլն դրամ, 2018թ.՝ 1,589.7 մլն դրամ, 2019թ.՝ 3,065.9 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 1,123.4 մլն դրամ, 2018 թ.՝ 1,326.9 մլն դրամ, 2019 թ.՝ 3,341.1 մլն դրամ:

11. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղ-կոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

12. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերա-կանգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերով ամբողջությամբ կավարտվի Վանաձոր քաղաքի ջրամատակարարման համա-կարգի նորացումը: Ծրագրված է նաև կառուցել Վանաձոր համայքնի թիվ 8 (Դիմաց, Լագեր թաղամասեր) ճնշումային գոտու բաշխիչ ցանցը, Նովոսելցովո ջրատարի երկայնքով ձգվող 12 գյուղական համայնքների բաշխիչ ցանցերը, նաև թվով 3 ջրամբարներ: Վանաձոր քաղաքում կփոխարինվեն կոյուղու որոշ հատվածներ: Այս փուլի ավարտից հետո Վանաձորի օղակաձև համակարգն ամբողջությամբ կգործի, ինչն էլ թույլ կտա հարավային և հյուսիսային ջրաղբյուր-ները կապակցել միմյանց, արդյունքում համակարգում կապահովվի ջրամատակարարման անընդհատություն՝ շուրջօրյա ջրի մատակարարում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկան ողջ տարածքում:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019թթ. ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 788.8 մլն դրամ, 2018թ.՝ 825.6մլն դրամ, 2019 թ.՝ 490.2 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերա-

կանգնման ծրագրի երկրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 1,140.7 մլն դրամ, 2018թ.՝ 1,031.9 մլն դրամ, 2019 թ.՝ 380.5 մլն դրամ:

13. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ,

14. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլ

Ծրագրերի նպատակն է կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, կոյուղու, պոմպակայանի, կոլեկտրի, կոյուղու ցանցի վերականգնումը, ինչպես նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերա-կանգնումը, ինչը կնպաստի Արմավիր և Մեծամոր քաղաքների և Նորապատ համայնքի կեղ-տաջրերի մաքրման իրականացմանը: Աշխատանքներ կիրականացվեն նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերա-կանգնման համար: Արմավիր քաղաքի ջրամատակարարման համակարգի բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատելու ջրի կորուստները և բարձրացնելու այդ համա-կարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր ակունք» ՓԲԸ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 615.9 մլն դրամ, 2018թ.՝ 615.2 մլն դրամ, 2019 թ.՝ 476.0 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 2017-2019 թվականներին ծրագրված են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ 2017թ.՝ 1,136.9 մլն դրամ, 2018թ.՝ 685.6 մլն դրամ, 2019 թ.՝ 719.5 մլն դրամ:

15. Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ

Ծրագրի նպատակն է ջրամատակարար ընկերությունների կողմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 2,168.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,807.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 361.5 մլն. դրամ, 2018թ.՝ 2,168.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,807.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 361.5 մլն. դրամ:

16. Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման դրամաշնորհային ծրագրի երրորդ փուլ

Ծրագրի նպատակն է կեղտաջրերի մաքրման կայանի կառուցումը, կոյուղու, պոմպակայանի, կոլեկտորի, կոյուղու ցանցի վերականգնումը, ինչը թույլ կտա Արմավիր, Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայնքի կեղտաջրերի մաքրման աշխատանքներ իրականացնել: Աշխատանքներ կիրականացվեն նաև Արմավիր քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի առավել վթարային ճանաչված հատվածների վերականգնման համար: Արմավիր քաղաքի ջրամատակարարման համակարգի բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև կրճատելու ջրի կորուստները և բարձրացնելու այդ համակարգի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 495.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 413.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 82.6 մլն. դրամ, 2018թ.՝ 548.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 456.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 91.4 մլն. դրամ:

ԳԼՈՒԽ 15. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ

15.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը.

Էներգետիկան ունի ռազմավարական նշանակություն երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկ համակարգը դիտվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկը:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկը հանդիսանում է՝ ժամանակակից էներգետիկ սարքավորումների կիրառմամբ /նվազագույն ծախսերով արտադրող կայանների կառուցմամբ/ ապահովել հնարավորինս մատչելի գներով հուսալի էներգամատակարարում՝ բոլոր սպառողների կարիքները բավարարելու համար՝ միևնույն ժամանակ խթանելով երկրում էներգախնայողությունը:

Էներգետիկայի բնագավառը իր մեջ ներառում է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերը: Այն ընդգրկում է շուրջ 4100 ՄՎտ (մեգավատ) ընդհանուր տեղակայված հզորությամբ էլեկտրակայաններ, որից տնօրինելին՝ մոտ 2400 ՄՎտ, շուրջ 35000 կմ ընդհանուր երկարությամբ տարբեր լարման էլեկտրահաղորդման գծեր, ավելի քան 9000 էլեկտրական ենթակայաններ, շուրջ 140 մլն մ^3 տարողությամբ գազի ստորգետնյա պահեստարան, 1740 կմ մայրուղային և ավելի քան 11007 կմ բաշխիչ գազատար ցանցեր, 2227 գազակարգավորիչ կետեր ու բազում այլ հանգույցներ, սարքեր ու սարքավորումներ, որոնց զգալի մասը սպառել են իրենց ծառայության ժամկետները կամ գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում:

Տեղակայված արտադրական հզորությունների 38%-ը շահագործվում է ավելի քան 40 տարի, ՋԷԿ-երի (ջերմային էլեկտրակայան) հիմնական սարքավորումների աշխատանքի տևողությունը անցել է սահմանային 200 հազ. ժամը, իսկ դրանց տեխնիկատնտեսական և բնապահպանական ցուցանիշները չեն համապատասխանում միջազգային պահանջներին, ՀԷԿ-երում (հիդրոէլեկտրակայան) /Ձորա ՀԷԿ, Սևան-Հրազդանյան կասկադ, Որոտանի ՀԷԿ-երի համակարգ/ տեղակայված սարքավորումների 70%-ը շահագործվում է ավելի քան 40 տարի, իսկ 50%-ը՝ ավելի քան 50 տարի, ՀԱԷԿ-ի (Հայկական ատոմային էլեկտրակայան) գործող երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետն ավարտվում է 2016 թվականին:

Ուստի ժամանակի հրամայական է դարձել արտադրող նոր հզորությունների ստեղծումը, արտադրական հզորությունների սերնդափոխության և արդիականացման հարցը, ինչը պահանջում է, որպեսզի բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքավորումներն ու տեղակայանքները ապամոնտաժվեն նախապես մշակված ժամանակացույցի համաձայն՝ չազդելով համակարգի

հուսալիության և անվտանգության աստիճանի վրա:

Վերջին տարիներին արտադրող հզորությունների, էլեկտրական էներգիայի տեղափոխող, բաշխող ցանցերի սերնդափոխության և արդիականացման համար պետական բյուջեի խողովակներով ներգրավվել են Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (ՃՄՀԳ), Գերմանական KfW բանկի, Համաշխարհային բանկի (ՀԲ), Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) միջոցները:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, ատոմային էներգետիկայի հետագա զարգացմանը, էներգակիրների մատակարարման տարատեսականացմանը և տեղական առաջնային /վերականգնվող, այլընտրանքային/ էներգապաշարների լիիրավ օգտագործմանը և էներգախնայողության ժամանակակից միջոցների իրականացմանն ու նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Բնական պաշարների ոլորտում քաղաքականության հիմնական ուղղվածությունը հանդիսանում է ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը և երկրաբանական վերահսկողության իրականացումը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը[37]
1.	Էներգետիկայի և բնական պաշարների բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	Ամբողջությամբ
2.	Էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցման, վերականգնման և վերանորոգման ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	Համաֆինանսավորման չափով
3.	Վերականգնվող էներգետիկայի ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	Համաֆինանսավորման չափով
4.	Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագիր	ՀՀ բոլոր քաղաքացիներ	Համաֆինանսավորման չափով
5.	Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ	ՀՀ բոլոր քաղաքացիներ	Ամբողջությամբ
6.	Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	ՀՀ բոլոր քաղաքացիներ	Ամբողջությամբ

15.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները

Էներգետիկ ոլորտը կարևոր է երկրի տնտեսական կայուն զարգացման համար և ներդրումներն էներգետիկայի բնագավառում ամրապնդում են զարգացման հեռանկարները: Էներգետիկայի բնագավառը երկրի խոշորագույն հարկատուներից է:

Վերջին տարիներին էներգետիկ ոլորտում ներդրումային քաղաքականության առումով իրականացվում է պետության մասնակցության կրճատում, ինչը պայմանավորված է որոշ ենթակառուցվածքների մասնավորեցմամբ և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցների, ինչպես նաև սեփական միջոցների ուղղակի ներգրավմամբ:

Էներգետիկ ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերի գծով 2009-2015թթ ֆինանսավորումը 2005-2008թթ. համեմատ աճել է և շարունակելու է աճել 2017-2019 թվականներին, ինչը պայմանավորված է այդ տարիներին ծրագրերի հիմնական աշխատանքների իրականացմամբ և նոր ծրագրերի մեկնարկով:

Էներգահամակարգում խոշոր ներդրումային ծրագրերն իրականացվում են օտարերկրյա պետությունների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից միջպետական և միջկառավարական համաձայնագրերի հիման վրա ներգրավված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին, որոնք նպատակաուղղվում են էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցմանը, վերականգնմանը և վերանորոգմանը:

Ընդհանուր առմամբ 2011-2015թթ. ընթացքում Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), Եվրոպական Ներդրումային Բանկի (ԵՆԲ), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ), Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) տրամադրած վարկային և դրամաշնորհային միջոցներով իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարվել են շուրջ 27 մլրդ դրամի աշխատանքներ, որից շուրջ 12 մլրդ դրամ՝ 2014-2015 թվականների ընթացքում:

2014-2015 թվականների ընթացքում էլեկտրաէներգետիկական օբյեկտների կառուցման, վերականգնման և վերանորոգման ծառայությունների գծով իրականացվել են.

2014թ. ավարտվել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) տրամադրած՝ 14,6 մլն եվրո վարկային միջոցներով իրականացված «Գյումրի-2» ենթակայանի ամբողջական վերակառուցումը: Ենթակայանի վերաթողարկման պաշտոնական արարողությունը տեղի է ունեցել 2014թ. սեպտեմբերի 13-ին: Ծրագրի իրականացման արդյունքում էապես բարելավել է Գյումրի քաղաքի և Շիրակի տարածաշրջանի էներգամատակարարման հուսալիությունը: Սա KfW

բանկի ֆինանսավորմամբ ամբողջությամբ վերակառուցված 220 կՎ լարման 4-րդ ենթակայանն է «Վանաձոր-2», «Կամո» և «Ալավերդի-2» ենթակայաններից հետո:

2011թ. մեկնարկած Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ (39 մլն ԱՄՆ դոլար) իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում կառուցվում են Հրազդան ՋԷԿ-ից մինչև Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած շուրջ 230 կմ երկարությամբ Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ օդային գծերը: Այն կարևոր նշանակություն ունի հանրապետության կենտրոնական և հարավային շրջանների միջև հուսալի էլեկտրական կապ ապահովելու գործում: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2014թ. սեպտեմբերին: 2015թ. ծրագրի գլխավոր կապալառուի կողմից իրականացվել են սարքերի ու սարքավորումների ներկրման և շինարարական աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի շրջանակներում Հրազդան-Շինուհայր էլեկտրահաղորդման օդային գծի վերակառուցման նպատակով կնքված պայմանագրերի արդյունքներով տնտեսված միջոցների շրջանակներում նախատեսվում է վերակառուցել շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերը, որոնք շահագործման մեջ լինելով 1962 թվականից, մշտապես գտնվելով մթնոլորտ արտանետված ագրեսիվ քիմիական նյութերի ազդեցության տակ, ենթարկվել են կոռոզիայի և չեն կարող ապահովել սպառողների հուսալի և անխափան էլեկտրամատակարարումը:

Այդ նպատակով վարկային համաձայնագրում կատարվել է համապատասխան լրացում՝ ծրագրի ծավալներում ներառելով նշված օդային գծերի վերակառուցումը: Իրականացվել են այդ օդային գծերի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման և տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքները և մշակվել է գլխավոր կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերի փաթեթը: Միջազգային մրցույթի արդյունքում 2016 թվականին նախատեսվում է կնքել գլխավոր կապալառուի պայմանագիր և մեկնարկել ծրագրի իրականացումը:

Վերականգնման արդյունքում կբարձրանա էլեկտրահաղորդման գծերի թողունակությունը, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

2014թ. մեկնարկել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագիրը (188,2 մլն ԱՄՆ եվրո), որի շրջանակներում նախատեսվում է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը:

Ծրագրի առաջին փուլի իրականացման նպատակով բանակցվել և կնքվել են՝ 2014թ. դեկտեմբերի 9-ին KfW բանկի հետ՝ 75,0 մլն եվրոյի և 10,2 մլն եվրոյի, 2015թ. մարտի 16-ին

Եվրոպական Ներդրումային Բանկի հետ՝ 10,0 մլն եվրոյի վարկային և 2016թ. մայիսի 30-ին KfW բանկի և Եվրամիության Հանձնաժողովի (“NIF”) հետ 10,0 մլն եվրոյի դրամաշնորհային համաձայնագրեր: Նշված միջոցների շրջանակներում նախատեսվում է Այրումում 500/400 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի 350 ՄՎտ հզորությամբ փոխակերպիչ կայանի և կայանից մինչև վրացական սահման շուրջ 8 կմ երկարությամբ 500 կՎ օդային գծի կառուցումը:

Ծրագրի երկրորդ փուլի իրականացման նպատակով KfW բանկի հետ բանակցվել և 2015թ. դեկտեմբերի 11-ին կնքվել է նաև 83,0 մլն եվրո արժողությամբ վարկային և ծրագրային համաձայնագիր, որի շրջանակներում նախատեսվում է կառուցել Դդմաշենում 400/220 կՎ մեկ ավտոտրանսֆորմատորով նոր 400/220կՎ ենթակայան և Դդմաշենից մինչև Այրում ենթակայան երկշղթա հենարաններով 400 կՎ միաշղթա օդային գիծ՝ ապահովելով 350 ՄՎտ հզորությամբ էլեկտրաէներգիայի փոխանակում: Նշված միջոցների շրջանակներում նախատեսվում է նաև իրականացնել 220 կՎ Լոռի և 110 կՎ Թումանյան 1 և 2 գծերի վերակառուցումը:

Նշված փուլերը նախատեսվում է իրականացնել զուգահեռ և ավարտել 2018 թվականին:

Իրականացված միջազգային մրցույթի արդյունքում կնքվել է ծրագրի նախապատրաստման, վերահսկման և կառավարման խորհրդատվական ծառայության պայմանագիր:

2016 թվականին նախատեսվում է իրականացնել ծրագրի գլխավոր կապալառուի ընտրության միջազգային մրցութային գործընթաց, կնքել պայմանագրեր և մեկնարկել ծրագրի իրականացումը:

Էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար:

2015թ. մեկնարկել են.

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ)_աջակցությամբ (40 մլն ԱՄՆ դոլար) իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել 220 կՎ «Հաղթանակ», 110 կՎ «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» ենթակայանները: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

2016թ. հունիս-հուլիս ամիսներին նախատեսվում է կնքել գլխավոր կապալառուի և վերահսկող խորհրդատուի պայմանագրեր և մեկնարկել ծրագրի իրականացումը:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ) (52 մլն ԱՄՆ դոլար) աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Աշնակ ենթակայանը, Երևանի ՋԷԿ-ի ենթակայանը և կառուցել պահուստային կարգավարական կառավարման կենտրոն (ՊԿԿԿ):

Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը, բարելավել համակարգի կառավարումը և աջակցել բավարար էլեկտրամատակարարում ապահովելուն ուղղված ջանքերին:

2016թ. հունիս-հուլիս ամիսներին նախատեսվում է կնքել Երևանի ՋԷԿ-ի և «Աշնակ» ենթակայանների վերակառուցման գլխավոր կապալառուի պայմանագրեր և մեկնարկել ծրագրի իրականացումը:

ՊԿԿԿ բաղադրիչով իրականացված մրցույթի արդյունքում 2015թ. դեկտեմբերի 17-ին կնքվել է սարքավորումների տեխնիկական մասնագրերը պատրաստող անհատ խորհրդատուի պայմանագիր:

Նախատեսվում է միջազգային մրցույթի արդյունքում 2016թ. կնքել ՊԿԿԿ-ի կառուցման գլխավոր կապալառուի պայմանագիր և մեկնարկել ծրագրի իրականացումը:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման» ծրագիրը (37 մլն ԱՄՆ դոլար), որի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել Կարգավարական կառավարման ավտոմատացված համակարգը (SCADA), ինչպես նաև վերակառուցել 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանները:

Իրականացված միջազգային մրցույթի արդյունքում կնքվել են ծրագրի «Կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման (SCADA)/էներգիայի կառավարման (EMS) համակարգերի ընդլայնման և արդիականացման աշխատանքների վերահսկողություն և կառավարում» և «Ենթակայանների վերակառուցման աշխատանքների վերահսկողություն և կառավարում» խորհրդատվական ծառայությունների, ինչպես նաև 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման գլխավոր կապալառուի պայմանագրեր: Կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման բաղադրիչով 2016թ. հունիս-հուլիս ամիսներին նախատեսվում է կնքել գլխավոր կապալառուի պայմանագիր և մեկնարկել ծրագրի իրականացումը:

Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ իրականացվող Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը (**300 մլն ԱՄՆ դոլար, որից 270 մլն ԱՄՆ դոլար վարկ և 30 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ),** որի շրջանակներում նախատեսվում է երկարացնել Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը: ՀԱԷԿ-ի շահագործման լրացուցիչ ժամկետում անվտանգ շահագործումը կապահովի ՀՀ-ում սպառման համար արտադրվող էլեկտրական էներգիայի շուրջ 40%-ը, ինչպես նաև այն կտա լրացուցիչ ժամանակ՝ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի համար շարունակելու բանակցություններն այլ ներդրողների հետ: Մեկնարկել են շահագործման ժամկետի երկարաձգման 1-ին փուլի աշխատանքները:

Էներգետիկայի ոլորտում իրականացվող ներդրումներն առավելագույնս նպաստում են էներգամատակարարման հուսալիության և անվտանգության բարձրացմանը, տեխնիկական և առևտրային կորուստների նվազեցմանը, էլեկտրաէներգիայի մատակարարման անջատումների քանակի կրճատմանը և շահագործման ծախսերի իջեցմանը:

Այսպես.

2015 թվականին արտադրվել է 7798,2 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը 2014 թվականի համեմատ ավել է 0,62 %-ով: «ՀԷՑ» ՓԲԸ մուտք գործած էլեկտրաէներգիայի քանակը կազմել է 6206,9 մլն կՎտժ: Վերջինիս կողմից սպառողներին առաքվել է 5523,99 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որը 2014 թվականի 5415,7 մլն կՎտժ-ի դիմաց ավել է 2 %-ով: Փաստացի կորուստները կազմել են 11,1 %, նախորդ տարվա 12,73 %-ի դիմաց:

2015 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի ներհոսքը Հայաստանի Հանրապետություն կազմել է 173,6 մլն կՎտժ՝ նախորդ տարվա 205,8 մլն կՎտժ-ի դիմաց:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից արտահանվել է 1422,6 մլն կՎտժ էլեկտրաէներգիա՝ նախորդ տարվա 1305,3 մլն կՎտժ–ի դիմաց:

Համակարգին բնորոշ է վճարումների ուժեղ կարգապահությունը՝ էլեկտրականության և գազի վճարների հավաքագրման մակարդակը կազմում է շուրջ 100%:

Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության անհրաժեշտ մակարդակի ապահովման խնդրում վերջին տարիներին կարևորվում են նաև վերականգնվող էներգառեսուրս-ների օգտագործումը և էներգախնայողությունը:

Էներգախնայողության ուղղությամբ.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության ծրագիր

Էներգախնայողության ծրագրի դրամաշնորհի համաձայնագիրը կնքվել է 2012թ. ապրիլի 20-ին: Ծրագրի նպատակն է կրճատել հանրային շենքերի և համայնքային լուսավորության էներգասպառումը: Ծրագրի ավարտման ժամկետն է 30.06.2016թ: Ծրագրի ֆինանսավորումը կազմում է 2,12 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 0,3 մլն ԱՄՆ և դրամաշնորհ՝ 1.82 մլն ԱՄՆ դոլար: Բացի այդ Հիմնադրամին կառավարման հանձնված շրջանառու միջոցներից ծրագրին ուղղվում է 8,0 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի շրջանակներում կատարվում են ջերմամեկուսացման, ջեռուցման համակարգերի արդիականացման ներդրումներ, էներգարդյունավետ լուսավորության կիրառում, որոնց արդյունքում առաջացած խնայողությունից շահառուները կվերադարձնեն ներդրումները: Միջին խնայողությունը կազմում է 51 %, ետգնման ժամկետը 7 տարի:

2015թ. ծրագրի շրջանակներում իրականացվել են էներգախնայողության միջոցառումներ 10 քրեակատարողական հաստատություններում, ինչպես նաև 13 այլ հանրային օբյեկտներում,

նշված օբյեկտներում իրականացվել են տեխնիկական հսկողության, չափման և փորձարկման սարքավորումների ձեռքբերման, շուկայի ուսումնասիրության և հիմնադրամի առաջիկա գործառնական ծրագրի մշակման, ինչպես նաև երկրորդ ազգային էներգախնայողության գործողությունների ծրագրի մշակման և ներկայացման աշխատանքներ:

Վերականգնվող էներգետիկայի ուղղությամբ 2015 թվականին մեկնարկել են.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման դրամաշնորհի ծրագիրը, որի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետությանը՝ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի նախատեսվող ծրագրի նախապատրաստման հարցում:

Ծրագրի ֆինանսավորումը կազմում է 2,5 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 0,5 մլն ԱՄՆ դոլար և ՀԲ/ՎԷԸԾ դրամաշնորհ՝ 2,0 մլն ԱՄՆ դոլար:

2015թ. ընթացքում իրականացվել են արևային ներուժի գնահատման և տեղանքների ընտրության աշխատանքներ, ձեռք են բերվել արևային ներուժի գնահատման չափիչ սարքավորումներ՝ արևային ներուժի իրատեսական քարտեզ, տվյալներ ստանալու և այդ տվյալների հիման վրա ճշգրիտ արևային ճառագայթման պարամետրերի չափման արդյունքներ ստանալու համար: 2015թ. ընթացքում արևային ՖՎ կայանների համար պատշաճ տեխնիկատնտեսական հիմնավորումներ կատարելու, մրցութային փաթեթների կազման և ներդրողների ներգրավման ու նրանց հետ բանակցման համար ընտրվել է խորհրդատու կազմակերպություն:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Քարքառում, հետախուզական հորատման միջոցով, էլեկտրաէներգիայի արտադրության համար բավարար ռեսուրսի առկայության և որակի հաստատումը և մասնավոր հատվածին երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման գործում ներգրավումը:

Ծրագրի ֆինանսավորումը կազմում է 10,69 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ 2,14 մլն ԱՄՆ դոլար և ՀԲ/ՎԷԸԾ դրամաշնորհ՝ 8,55 մլն ԱՄՆ դոլար:

2015թ. ընթացքում իրականացվել են ճանապարհի տեղանքին մոտեցման, հորատման հարթակի և անհրաժեշտ ջրամատակարարման նախագծման և շինարարության աշխատանքները և հեղինակային վերահսկողությունը:

Գազիֆիկացման ուղղությամբ.

Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի (Մեղրի և Ագարակ համայնքների) գազի բաշխման ցանցի կառուցման ծրագիրը (2,0 մլն ԱՄՆ դոլար), որի շրջանակներում նախատեսվում է Մեղրի և Ագարակ համայնքների բնակչությանն ապահովել բնական գազով, որը կբարելավի բնակչության կենսապահովման պայմանները՝

էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործումը և ջեռուցումը, ինչը կնպաստի անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը:

Ավարտվել են նախագծման աշխատանքները և Իրանից համապատասխան սարքերի, սարքավորումների և նյութերի մատակարարումները և մեկնարկել են Մեղրի քաղաքի գազիֆիկացման շինարարական աշխատանքները: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2016 թվականին:

Բնական պաշարների ոլորտի զարգացումն ընթացել է միայն ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ համապատասխան հաստատված ծրագրերի իրագործման միջոցով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար ՀՀ պետական բյուջեից տրվող ֆինանսավորումը 2010-2014թթ. 2007-2009թթ. համեմատ կրճատվել է մոտ 5 անգամ, իսկ 2014 թ.-ից հետո ֆինանսավորում չի կատարվել:

15.1.3. Հիմնական խնդիրները

Էներգետիկ համակարգի հիմնական խնդիրները շարունակվելու են կապված լինել բնագավառի զարգացման՝ ներդրումային, ֆինանսական և այլ ծրագրերի մշակմամբ, բարոյապես ու ֆիզիկապես մաշված առանձին օբյեկտների ու կառույցների հրատապ վերակառուցման ու արդիականացման գործում առկա վարկերի արդյունավետ օգտագործման և հնարավոր նոր վարկերի ձեռքբերման, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և արտադրական հզորությունների ողջամիտ օգտագործման, ինստիտուցիոնալ բարեփոխումների հետագա կատարելագործման, էլեկտրաէներգետիկական շուկայի շարունակական ազատականացման և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրման գործընթացի ակտիվացման հետ (Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 11.4 բաժին)

Վերը նշված խնդիրների լուծումը կապահովի հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի մատակարարում, որն էլ իր հերթին կխթանի երկրի տնտեսական կայուն զարգացմանը:

2017-2019թթ. միջնաժամկետ հատվածում էներգետիկայի բնագավառի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում դասվում են.

- «Լալվար», «Նոյեմբերյան» «Թումանյան 1 և 2» 110 կՎ և «Լոռի» 220 կՎ էլեկտրահաղորդման օդային գծերի վերականգնումը,
- «Երևանի ՋԷԿ-ի», «Աշնակ», «Ագարակ-2», «Շինուհայր», «Հաղթանակ» 220 կՎ և «Չարենցավան-3», «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերակառուցումը,
- Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցումը,
- էլեկտրաէներգետիկ համակարգի պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցումը,

- SCADA համակարգի երկրորդ փուլի իրականացումը,

- Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

- Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերի իրականացումը,

- Քարքար տեղամասում երկրաջերմային աղբյուրների հետախուզական հորատման աշխատանքների իրականացումը,

- Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայությունների իրականացումը,

- ՀՀ տարածքում ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայությունների իրականացումը,

- Համայնքների գազիֆիկացումը:

Միջնաժամկետ հատվածում Հանրապետության բնական պաշարների ուղղությամբ կիրականացվեն.

- ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցում, հաշվառում, ստացված արդյունքների վերլուծություն և ընդհանրացում, հանքավայրերի և օգտակար հանածոների պաշարների հաշվառում, օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների մասին տեղեկանքների տրամադրում, ուսումնասիրության և հանքարդյունահանման նպատակով ընդերքի տեղամասերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և քարտագրամների կազմում, երկրաբանական հաշվետվությունների հավաքում և կենտրոնացված պահպանում, ֆոնդային նյութերի տրամադրում, օրենսդրական ակտերի նախագծերի մշակում:

Էներգետիկայի և ընդերքօգտագործման ոլորտների խնդիրներն ունեն առավել ընդհանրական բնույթ և դրանց սպասվելիք արդյունքները ներկայումս հնարավոր չէ գնահատել թվային արտահայտությամբ:

15.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

15.2.1. Նպատակները

2017-2019թթ. միջնաժամկետ հատվածում էներգետիկայի ոլորտի հիմնական նպատակներն են.

1) էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը,

2) ատոմային էներգետիկայի զարգացումը, մասնավորապես նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը և ՀԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացումն ու շահագործման նախագծային ժամկետի երկարացումը,

3) էներգառեսուրսների մատակարարման տարատեսականացումը և տարածաշրջանային ինտեգրումը,

4) ֆիզիկապես և բարոյապես մաշված էներգատեղակայանքների վերակառուցումը/ վերազինումը կամ դրանց կոնսերվացումն ու ապամոնտաժումը,

5) վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործման և էներգախնայողության ապահովումը:

Էներգետիկայի ոլորտի նպատակներն անմիջականորեն բխում են Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի, ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի դրույթներից:

Ընդերքօգտագործման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը միտված կլինի հետևյալ միջոցառումների իրականացմանը՝

- աջակցություն ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի զարգացման նպատակով առավել շահութաբեր, տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող և էներգախնայող արտադրատեսակների արտադրման համար ընտրված արտադրատեսակների արտադրության կազմակերպմանը.
- օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման ընթացքում բարձր արդյունավետություն ապահովող տեխնոլոգիաների կիրառության խթանում, ինչն ընդերքի բարձր արտադրողական և համալիր օգտագործման հնարավորություն կընձեռի՝ շրջակա միջավայրի վրա ունենալով նվազագույն բացասական ազդեցություն.
- ընդերքօգտագործման ոլորտում արդյունավետության բարձրացման, տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը և օտարերկրյա ներդրումները խթանելու համար կիրականացվի օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի (քարտեզներ և երկրաբանական փաստագրման առաջնային նյութեր) թվայնացում, իսկ թվայնացված տեղեկությունը կհրապարակվի համապատասխան կայքում:

2.2. Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում			1. ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «2.2.8.1 Էներգետիկան» կետ, 2. ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» «11.4 Էներգետիկա» բաժին
2.	Վերականգնվող էներգետիկայի միջոցառումների իրականացում			
3.	Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանն ուղղված միջոցառումների իրականացում			
4.	ՀՀ տարածքում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցում, դրանց արդյունքում ստացված տեղեկատվության հաշվառում, պահպանում և տրամադրում			Համաձայն «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի դրույթների
5,	Ռադիոակտիվ թափոնների փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում և թաղում			ՀՀ կառավարության 2014 թվական-ի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր
6	Հանրապետությունում գազամատակարարման ցանցի ընդլայնում			Մարզերի սոցիալ տնտեսական զարգացման ծրագրեր

15.3 ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

15.3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Միջնաժամկետ հատվածում էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում գոյություն ունեցող ծրագրերն անմիջականորեն նպաստում են բնագավառների ընդհանուր նպատակների ու գերակայությունների իրականացմանը, որոնք էլ ուղղակիորեն բխում են կառավարության որդեգրած քաղաքականությունից:

1. Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ

Ծրագրի շրջանակներում իրականացվում է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում և թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

Ծրագիրն իրականացվում է «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ի կողմից:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին նախատեսվում է հատկացնել համար 35,091.8 հազար ՀՀ դրամ:

2. Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն

Ծրագրի շրջանակներում կշարունակվի երկրաբանական ֆոնդի գործունեության արդյունավետության բարձրացումը՝ նպատակաուղղված նրա հիմնական գործառույթների իրականացման ապահովմանը:

Ծառայությունը մատուցվում է «Հանրապետական երկարաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի կողմից:

Ծրագրի իրականացման համար 2017-2019 թվականներին նախատեսվում է հատկացնել համար 20,571.0 հազար ՀՀ դրամ:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր.**

Ծրագրի նպատակն է բարելավել հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումը, թողունակության մեծացումը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերակառուցել Հրազդան ՋԷԿ-ից մինչ Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ օդային գծերի շուրջ 230 կմ հատվածը: Նշված գիծը միացնում է էլեկտրահամակարգի երկու հիմնական էլեկտրաէներգիա արտադրող կայանները (Հրազդան ՋԷԿ, Որոտան կասկադ):

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 5,110.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,260.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 850.6 մլն. դրամ, 2018թ.՝ 3,054.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝1,851.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,203.2 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում նախատեսվում է փոխարինել «Հաղթանակ» 220 կՎ, «Չարենցավան-3» և «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների 30 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումները:

Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանների, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 3,556.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,268.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 288.3 մլն. դրամ, 2018թ.՝ 5,767.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝4,806.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 961.2 մլն. դրամ, 2019թ.՝ 6,920.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 5,767.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 1,153.4 մլն. դրամ:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում 220 կՎ «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է նպաստել էներգետիկ անվտանգության և սպառողների էլեկտրամատակարարման հուսալիության բարձրացմանը, էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

Նախորդ տարիների ընթացքում Համաշխարհային բանկի աջակցությամբ 220 կՎ «Շինուհայր» ենթակայանը մասնակիորեն վերակառուցվել է: Ենթակայանում փոխարինվել են առաջնային լարման 220 կՎ լարման սարքվածքները, սակայն երկրորդային շղթաները, ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի սարքվածքները հնացած են և չեն բավարարում հուսալի և անվտանգ էլեկտրաէներգիայի հաղորդման պահանջները:

«Ագարակ-2» ենթակայանում, որն անմիջականորեն կապված է իրանական 230 կՎ լարման ցանցի հետ, նախատեսվում է տեղադրել լրացուցիչ 220/110 կՎ ավտոտրանսֆորմատոր, որն էներգահամակարգի տվյալ հատվածում կապ կստեղծի 220 և 110 կՎ լարման էլեկտրահաղորդման գծերի միջև և հնարավորություն կտա 110 կՎ «Ագարակ-1» ենթակայանից սնվող սպառողներին ապահովել էլեկտրաէներգիայի պահուստային սնուցմամբ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,363.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,112.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 251.3 մլն. դրամ, 2018թ.՝ 2,235.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,018.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 216.6 մլն. դրամ, 2019թ.՝ 4,826.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 4,575.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 250.9 մլն. դրամ:

4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման ծրագիր

Համակարգում արդեն իսկ ներդրված SCADA համակարգը լիարժեք գործող ու արդյունավետ դառնալու համար անհրաժեշտ է ընդլայնել և արդիականացնել համակարգը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է լրացուցիչ տեղադրել շուրջ 200 կմ օպտիկամանրաթելքային մալուխ, զգալիորեն ավելացնել SCADA համակարգից օգտվողների քանակը, արդիականացնել գոյություն ունեցող ծրագրային փաթեթը և ստեղծել հարևան երկրների SCADA համակարգերի հետ տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 889.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 696.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 192.2 մլն. դրամ, 2018թ.՝ 965.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 866.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 98.9 մլն. դրամ, 2019թ.՝ 3,401.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,834.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 566.9 մլն. դրամ:

5. Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականցվող<<Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I>> Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայանների ծրագիր

Ծրագրի նպատակն է միացնել հայկական և վրացական էներգահամակարգերը՝ վրացական սահմանին մոտ՝ Այրումում (Հայաստան) տեղակայվող 500/400/220 կՎ բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանով (վերջնական հզորությունը 1050 ՄՎտ): Վրացական կողմից միացումը կլինի «Մառնեուլի» ենթակայանից 500 կՎ գծի միջոցով, հայկական կողմից միացումը կլինի Հրազդանից 400 կՎ գծի միջոցով (առաջին փուլում՝ «Ալավերդի» 220 կՎ գոյություն ունեցող գծի միջոցով):

Էլեկտրահաղորդման գծի կառուցմամբ զգալիորեն կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային փոխշահավետ համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման՝ ԱՊՀ երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 865.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 144.1 մլն. դրամ, 2018թ.՝ 980.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 817.0 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 163.4 մլն. դրամ, 2019թ.՝ 2,433.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,162.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 271.0 մլն. դրամ:

6. ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր

Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) գործող էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետը՝ համաձայն ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից տրամադրված շահագործման լիցենզիայի ավարտվում է 2016թ.:

ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործումն ապահովելու և լրացուցիչ ժամկետում շահագործման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրում նշված աշխատանքները՝ ամբողջ ծավալով և համապատասխան ժամկետներում:

ՀԱԷԿ-ի շահագործման լրացուցիչ ժամկետում անվտանգ շահագործումը կապահովի ՀՀ-ում սպառման համար արտադրվող էլեկտրական էներգիայի շուրջ 40%-ը, ինչպես նաև այն կտա լրացուցիչ ժամանակ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի համար շարունակել բանակցությունները այլ ներդրողների հետ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 20,163.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 14,383.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 5,779.8 մլն. դրամ, 2018թ.՝ 53,815.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝44,203.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 9,612.2 մլն. դրամ, 2019թ.՝ 69,494.8 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 60,302.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 9,192.6 մլն. դրամ:

7. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի վերակառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը, բարելավել համակարգի կառավարումը և աջակցել բավարար էլեկտրամատակարարում ապահովելուն ուղղված ջանքերին:

Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի հիմնանորոգմամբ կկրճատվի Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի սարքավորումների խափանումների հաճախականությունը: Նախատեսվում է նաև Երևանի ՋԷԿ-ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկման աջակցություն:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է նաև համակցված ցիկլով նոր էներգաբլոկի ծրագրի նախապատրաստման աշխատանքներ: Էլեկտրաէներգետիկ համակարգին պահանջվում է գազով էլէկտրաէներգիայի արտադրության նոր հզորություն՝ մատակարարման կարողության ճեղքվածքը մինչև 2020թ. կանխելու համար: ՀՀ կառավարությունը նախատեսում է կառուցել նոր ՀՑԷ՝ մասնավոր հատվածի ներգրավմամբ, ինչը կպահանջի մի շարք նախապատրաստական գործողություններ: Այն կներառի տեխնիկատնտեսական ուսումնասիրություն, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում, գործառնությունների խորհրդատվություն և նոր ՀՑԷ համար պահանջվող այլ տեխնիկական աջակցություն:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 807.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 672.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 134.5 մլն. դրամ, 2018թ.՝ 901.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 720.9 մլն.

դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 180.4 մլն. դրամ, 2019թ.՝ 3,614.6 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 3,123.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 490.6 մլն. դրամ:

8. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման շրջանակներում «Աշնակ» ենթակայանի վերակառուցման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավման ծրագիր:

Աշնակ 220/110/10 կՎ ենթակայանը կարևոր նշանակություն ունի Հայաստանի արևմտյան և հյուսիս-արևմտյան հատվածների սպառողներին հուսալի էլեկտրաէներգիա մատակարարելու տեսանկյունից: Ծրագրով նախատեսվում է վերոհիշյալ ենթակայանի վերակառուցումն ու համակարգի կառավարման բարելավման աշխատանքներ, որոնց արդյունքում կկրճատվեն սարքավորումների տեխնիկական պատճառներով առաջացող խափանումները և կբարելավվի էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունը:

Նախատեսված է նաև պահուստային կարգավարական կենտրոնի հիմնում, որը կնպաստի էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավմանը, ինչպես նաև անհրաժեշտ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում Էլեկտրահաղորդման ցանցի պահպանության համար:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 576.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 480.6 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 96.1 մլն. դրամ, 2018թ.՝ 1,406.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,201.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 205.2 մլն. դրամ, 2019թ.՝ 3,172.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,643.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 528.6 մլն. դրամ:

9. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգետիկական ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր

Համաձայնագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 30 մլն ԱՄՆ-ի դոլար վարկ: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում էլեկտրաէներգիայի մատակարարման համարժեքության և հուսալիության պահպանման ջանքերին՝ էլեկտրաէներգիա արտադրող «ՀԱԷԿ», «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների և «Հրազ. ՋԷԿ» ԲԲԸ-ի, ինչպես նաև էլեկտրաէներգիա բաշխող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակը բարելավելու միջոցով:

Ծրագիրն իրականացվելու է «ՀԱԷԿ» և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ների կողմից:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 230.7 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 192.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 38.5 մլն. դրամ, 2018թ.՝ 461.4 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 384.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 76.9 մլն. դրամ, 2019թ.՝ 692.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 576.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 115.3 մլն. դրամ:

10. ՌԴ աջակցությամբ իրականացվող Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագային ժամկետի երկարացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն ուղղված է համանուն վարկային ծրագրի գծով իրականացվող աշխատանքների պայմանագրային կանխավճարների ֆինանսավորմանը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 3,118.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,559.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 558.9 մլն. դրամ, 2018թ.՝ 4,459.0 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 4,264.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 194.6 մլն. դրամ, 2019թ.՝ 1,648.5 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,345.8 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 302.7 մլն. դրամ:

11. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային հետախուզական հորատման դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի միջոցները կուղղվեն Քարքար տեղամասում երկրաջերմային աղբյուրների հորատման համար, որից հետո ներդրողներին կառաջարկվի ամբողջական հետազոտված տեղամաս երկրաջերմային էլեկտրակայանի կառուցման համար:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 2,478.6 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,065.4 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 413.0 մլն. դրամ, 2018թ.՝ 1,555.0 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,295.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 259.1 մլն. դրամ:

12. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող <<Դրամաշնորհ արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման համար>> դրամաշնորհային ծրագիր

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արտադրական մասշտաբի արեգակնային ֆոտոէլեկտրական կայանների զարգացման ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել արևային էներգիայի ռեսուրսի գնահատում, արևային ՖՎ պանելների գնում, թեստավորում և արևային էներգիայի ռեսուրսի գնահատման սարքավորումների գնում: Նախապես ընտրված տեղանքներում կիրականացվեն արեգակնային ճառագայթման չափումներ ու եղանակային պայմանների գրանցումներ, ինչպես և իրագործելիության նախնական ուսումնասիրություններ:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 1,902.8 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,685.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 216.9 մլն. դրամ:

ԳԼՈՒԽ 16 ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

16.1 ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը.

ՓՄՁ-ի ոլորտն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015 թվականին հետևողական աշխատանք է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցությամբ համապատասխան ծրագրերի իրականացման ուղղությամբ: Մասնավորապես իրականացվել է «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագիրը, որի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվել է 152.3 *մլն դրամ*: Բացի այդ, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Ընդ որում սույն ծրագրով նախատեսված ծրագրային ուղղությունների (միջոցառումների) գերակշիռ մասը (շուրջ 90 տոկոսը) նպատակաուղղվել է Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում սկսնակ ու գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և, ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրի իրականացման շրջանակներում ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 13243 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի. ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ-ի սուբյեկտների 5.1%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 94.9%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Ստորև ներկայացվում է «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2015 թվականի ծրագրի իրականացման համատեքստում ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագիրը՝ ամփոփ աղյուսակի տեսքով.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	**ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում**	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի աշխատակիցներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը ՀՀ պետական բյուջեի հաշվին կատարվել է մասնակիորեն, (մասնավորապես՝ ապահովվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ պահպանման ծախսերը), մասամբ՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ եկամուտների, ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:
2.	ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)	Երևանի և ՀՀ մարզերի սկսնակ ՓՄՁ սուբյեկտներ (սկսնակ գործարարներ)	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:
3.	ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	Երևանի և ՀՀ մարզերի սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:

4.	ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն	Երևանի և ՀՀ մարզերի սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է. վարկային երաշխավորությունների տրամադրման մասով՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի միավորված դրամագլխի ամորտիզացումների հաշվին, իսկ կապիտալի ֆինանսավորման և ուղղակի վարկավորման մասով՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրված միջոցների հաշվին:
5.	Տեղական տնտեսական զարգացում	ՀՀ մարզերի սկսնակ և գործող և ՓՄՁ սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:
6.	Ոլորտային բիզնեսներին աջակցություն	ՀՀ մարզերի սկսնակ և գործող և ՓՄՁ սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:
7.	Կանանց ձեռներեցությանն աջակցություն	Երևանի և ՀՀ մարզերի սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:

8.	Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում	Երևանի և ՀՀ մարզերի սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ին տրամադրված շահաբաժնի, ինչպես նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:
9.	Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում	Երևանի և ՀՀ մարզերի սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ	Տվյալ միջոցառման (ծառայության) փոխհատուցումը կատարվել է միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների (այդ թվում՝ համաֆինանսավորման տարբերակով) հաշվին՝ վերջիններիս հետ համագործակցության շրջանակներ.

<u>Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները</u>

ՓՄՁ-ի ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները պայմանավորված են ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության ծրագրերի (գործարար ծրագրերի ու նախաձեռնությունների) արդյունավետ և նպատակային իրականացմամբ, ինչպես նաև ՓՄՁ-ի ոլորտի զարգացմանը նպատակաուղղված համապատասխան ենթակառուցվածքների պահպանմամբ և ամրապնդմամբ:

ՓՄՁ-ի պետական աջակցության 2014 և 2015 թվականների ծրագրերի իրականացումն ապահովվել է ինչպես ՀՀ 2014 և 2015 թվականների պետական բյուջեների, այնպես էլ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ձևավորված դրամագլխի ու այլ եկամուտների, «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ստացված եկամուտներից Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի տրամադրված շահաբաշժնի և միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին:

Ընդհանուր առմամբ 2002-2015թթ. ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 3.504.3 մլն դրամ, որի հաշվին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել շուրջ 96000 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

Վերջին երկու տարիների (2014–2015թթ.) ՓՄՁ-ի ոլորտի զարգացման միտումները ինչպես ֆիզիկական (ոչ ֆինանսական), այնպես էլ ֆինանսական ցուցանիշների կտրվածքով զգալիորեն տարբերվում են նախորդ տարիների, մասնավորապես 2008-2013թթ. ՓՄՁ-ի ոլորտի զարգաց-

ման միտումներից, որը հիմնականում պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությամբ ՀՀ ֆինանսական և տնտեսական զարգացումների, այդ թվում նաևՓՄՁ-ի ոլորտի զարգացման միտումների վրա.

- ՀՀ 2014-2015թթ. պետական բյուջեներից ֆինանսական հատկացումները կազմել են 304,3 մլն դրամ, որի հաշվին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 31931 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին;
- ՀՀ 2008-2013թթ. պետական բյուջեներից ֆինանսական հատկացումները կազմել են 1,624.6 մլն դրամ, որի հաշվին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 42000 սկսնակ և գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

<u>Հիմնական խնդիրները</u>

ՓՄՁ-ի ոլորտի հիմնախնդիրներն են.

- ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեության խթանման համապատասխան ենթակառուցվածքների և մեխանիզմների թուլություն,
- ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ֆինանսական (վարկային) միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարություններ՝ պայմանավորված դրանց կարճաժամկետայնությամբ և այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությամբ, ինչը լուրջ խնդիր է հանդիսանում հատկապես արտադրության ոլորտում (մասնավորապես արտադրության գիտատար ճյուղերում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար),
- սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն սկսելու հետ կապված գործարար հմտությունների և ֆինանսական միջոցների պակաս,
- գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններ,
- ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացման, վերջիններիս կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանման հնարավորությունների պակաս:

16.1.2 Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

<u>Նպատակները</u>

ՓՄՁ-ի ոլորտի զարգացման ռազմավարական նպատակներն են՝

1) պետական ուղղակի աջակցության գործիքների միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանումը.

2) ՓՄՁ-ի զարգացման ճանապարհով երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը նպաստելը.

3) ՓՄՁ-ի զարգացման միջոցով երկրի տնտեսության բազմազանեցմանը նպաստելը և զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովումը.

4) ՓՄՁ-իսուբյեկտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

Գերակայությունները

ՓՄՁ-ի ոլորտի միջնաժամկետ կտրվածքով (2017-2019թթ.) գերակայություններն են.

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017թ.	2018թ.	2019թ.	
1	ՓՄՁ-ի պետական ուղղակի աջակցության գործիքների միջոցով երկրում ՓՄՁ-ի զարգացման խթանում՝ նպաստելով երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը, տնտեսության բազմազանեցմանը և ապահովելով բնակչության զբաղվածության ու ինքնազբաղվածության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը (ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովում)			Հայաստանի Հանրապետության 2014-2015 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշման հավելված), ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվող ետական աջակցություն ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2017 թվականի, 2018 թվականի և 2019 թվականի ծրագրեր:

16.1.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)</u>

2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում ՓՄՁ-ի ոլորտում ծախսային ծրագրերի (պարտավորությունների) իրականացումը մեծապես կնպաստի ՓՄՁ-ի ոլորտի գերակայությունների և ՓՄՁ-ի ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրային նպատակների և գերակայությունների իրականացմանը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է յուրաքանչյուր տարի հատկացնել 152.6-ական մլն դրամ, որը կուղղվի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատողների) վարձատրությանը:

16.2 ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.2.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ փակ բաժնետիրական ընկերությունը «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում, իրականացնում է հետևյալ ծառայությունները՝

- ընդունում եւ գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները,

- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական եւ ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային ստանդարտների եւ այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը ազգային ստանդարտների կարգավիճակով՝ ստանդարտացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան,

- կազմակերպում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների փորձաքննություն,

- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային կազմակերպություններում,

- մասնակցում է միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին,

- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ եւ համակարգում դրանց գործունեությունը,

- ստեղծում եւ վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,

- իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների եւ ուղեցույցների, դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը) եւ պատասխանատվություն է կրում դրանց պահպանման համար:

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲ ընկերությանը ամրագրված ծառայությունները ֆինանսավորվում են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության ամենամյա բյուջեի մասին ՀՀ օրենքի 04 բաժնի, 01 խմբի, 01 դասի 03. Ստանդարտների մշակման ծառայություններ, որով ծառայությունները խմբավորվում են՝

1. Ազգային ստանդարտների մշակում,

2. Ստանդարտացման միջազգային (ISO, IEC, ITU), եվրոպական (CEN) և միջպետական (ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ) ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում,

3. Ստանդարտացման ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում:

Նշված ծառայությունների գծով շահառուներ են հանդիսանում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում արտադրանքների արտադրությամբ, աշխատանքների կատարմամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, հասարակական կազմակերպությունները, գիտահետազոտական կազմակերպությունները, սպառողները, ինչպես նաև ցանկացած ֆիզիկական անձիք (այսուհետ՝ ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմեր):

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Ազգային ստանդարտների մշակում	Ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմեր	Ամբողջությամբ
2.	Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում	Ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմեր	Ամբողջությամբ
...	Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում: Էլեկտրոնային թվային տեղեկատվական որոնման ավտոմատացված համակարգի (ստանդարտների էլեկտրոնային կատալոգ) և ստանդարտացման նորմատիվ	Ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմեր	Ամբողջությամբ

	փաստաթղթերի էլեկտրոնային գրադարանի հիմնում, ինչպես նաև ստանդարտների առ-ցանց էլեկտրոնային վաճառքի մեխանիզմների ներդնում		

Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները

2013 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14284.4 հազ. դրամ:

2014 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14059.6 հազ. դրամ:

2015 թվականին Ստանդարտների ազգային ինստիտուտի պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 14300.0 հազ. դրամ:

Ազգային ստանդարտների մշակման աշխատանքների ֆինանսավորումը 2012 թվականին կազմել է 6831.8 հազ. դրամ, 2013 թվականին՝ 9509.4 հազ. դրամ, 2014 թվականին՝ 8560.4 հազ. դրամ, 2015 թվականին՝ 8800.8 հազ. դրամ: 2015թ. մշակվել է 56 ազգային ստանդարտ, ստանդարտների ազգային ֆոնդից սպասարկվել են մոտ 10000 այցելուներ և 30 բաժանորդ կազմակերպություններ:

Միջազգային, եվրոպական և միջպետական ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը 2012 թվականին կազմել է 3515.0 հազ. դրամ, 2013 թվականին՝ 2444.6 հազ. դրամ, 2014 թվականին՝ 1887.1 հազ. դրամ, 2015 թվականին՝ 2062.4 հազ. դրամ:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների ֆինանսավորումը 2012 թվականին կազմել է 3499.0 հազ. դրամ, 2013 թվականին՝ 2330.4 հազ. դրամ, 2014 թվականին՝ 3612.1 հազ. դրամ, իսկ 2015 թվականին՝ 3436.8 հազ. դրամ:

2012-2015թթ. գնման ենթակա սարքավորումների և նյութերի ֆինանսավորում չի տրամադրվել:

Հիմնական խնդիրները

Ոլորտում հիմնական խնդիրը շարունակում է մնալ ազգային ստանդարտների մշակման հարցը տնտեսության գերակայող ճյուղերում՝ ռազմաարդյունաբերություն, շինարարություն, էներգախնայողություն և էներգաարդյունավետություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և կապի միջոցներ, համապատասխանության գնահատում, սննդաարդյունաբերություն, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն, առողջապահություն և այլն: Այս խնդրի գծով կատարված է զգալի աշխատանք, մասնավորապես տնտեսության ճյուղերի համար ՀՀ ազգային ստանդարտների գործող ֆոնդում առկա են շուրջ վեց հազար ազգային ստանդարտներ,

որոնք հիմնականում ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունված միջազգային և տարածաշրջանային (եվրոպական և միջպետական) ստանդարտներ են:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված նախատեսվում է շուրջ 1200 միջպետական ստանդարտների ներդրման աշխատանքների իրականացում, որոնց կամավոր սկզբունքով կիրառման արդյունքում ապահովվում է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումը:

16.2.2 Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

Ազգային ստանդարտների մշակման ծրագրի նպատակն է աջակցել հայրենական արտադրանքի արտանահման ծավալների ավելացմանը, հայրենական արտադրողներին հնարավորություն տալ ապահովել տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջները, արտադրել միջազգային շուկայում մրցունակ արտադրանք, ներդնել նորագույն տեխնոլոգիաներ և կիրառել միջազգային լավագույն փորձը՝ տարաբնույթ տնտեսական զարգացումը խթանող խնդիրների հանգուցալուծման համար:

Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցության և աշխատանքների կազմակերպման ծրագրի նպատակն է հայրենական արտադրողների շահերի պաշտպանումը միջազգային և տարածաշրջանային շուկաներում և արտադրանքի մրցունակության բարձրացումը:

Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման ծրագրի նպատակն է ունենալ միջազգային, եվրոպական, միջպետական և այլ պետությունների, ինչպես նաև ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ և պատշաճ և հավաստի տեղեկատվություն տրամադրել ձեռներեցներին, բիզնեսի ներկայացուցիչներին և պետական կառավարման մարմիններին գործող ստանդարտների վերաբերյալ:

Գերակայությունները.

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Ազգային ստանդարտների մշակում			«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի I կետ: ՀՀ ստանդարտացման ամենամյա ծրագիր: Առևտրի Համաշխարհային կազմակերպու-
2	Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում			

3	Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդի վարում և տեղեկատվական սպասարկում	թյան «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի պահանջներ:

16.2.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)</u>

Ոլորտի ծախսային ծրագրերն են՝

1) «Ազգային ստանդարտների մշակում»,

2) «Միջպետական և եվրոպական ստանդարտացման կազմակերպությունների հետ համագործակցություն և աշխատանքների կազմակերպում»,

3) «Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպում»:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 14.3–ական մլն դրամ:

16.3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.3.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՀՀ կառավարության գործունեության առաջնայնություններից մեկը եղել և մնում է տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի զարգացումը: ՏՏ ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է, որը մեծապես նպաստում է երկրի տնտեսության աճին, մրցունակության և արտադրողականության բարձրացմանը, հավելյալ արժեք ապահովող աշխատատեղերի ստեղծմանը և երկրի վարկանիշի բարձրացմանը:

2001թ. ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ ՀՀ ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը, 2008թ.՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգը, իսկ 2010թ.՝ Հայաստանում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը: ՀՀ Նախագահի 2001թ. հուլիսի 20-ի N ՆՀ-896 հրամանագրով ստեղծվեց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (այսուհետ՝ ՏՏԶԱԽ), որի նախագահը ՀՀ վարչապետն է: ՏՏԶԱԽ-ը, հանդիսանալով կապող օղակ ՀՀ կառավարության և ՏՏ բիզնեսի, կրթական հաստատությունների, ՏՏ հասարակական կազմակերպությունների, դոնոր և միջազգային կազմակերպությունների միջև, կազմակերպում և անց է կացնում էլեկտրոնային հասարակության կայացմանն ու ՏՏ արդյունաբերության խնդիրների լուծմանը նպաստող քննարկումներ:

ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 27-ի N 1165 որոշմամբ՝ Համաշխարհային բանկի հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում, հիմնվեց «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը: 2001թ.-ից գործում է «Վիասֆերտեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերությունը:

Ընդունվել են ոլորտին առնչվող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, 2004թ.-ի դեկտեմբերի 14-ի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՆՀՕ-40 և 2005թ-ի հուլիսի 8-ի «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» N ՀՕ-176 ՀՀ օրենքները:

Վերջին տասնամյակում կնքվել են փոխըմբռնման հուշագրեր այնպիսի տեխնոլոգիական առաջատար ընկերությունների հետ, ինչպիսիք են «Մայքրոսոֆթը», «ԱյԲիԷմը», «Օրակլը», «ՋիԷֆԱյը» և այլն:

2013թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության նախաձեռնությամբ Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակում Հայաստանում հիմնվել է առաջին վենչուրային ֆոնդը, որն ուղղված է նորարարական գաղափարների գեներացմանն ու սկսնակ ընկերությունների (start-ups) ձևավորմանը: 2014թ. Ֆոնդի կառավարիչ «Գրանատուս Վենչուրս» ընկերության կողմից «Ուայ Քասթր» (WiCastr) և «Սոլոլըրն» (SoloLearn) ընկերությունների հետ ստորագրվեցին առաջին երկու պայմանագրերը: Վերոնշյալ վարկային ծրագրի շրջանակում 2013թ. Իրականացվել է նաև ՀՀ-ում առաջին հավաստագրման կենտրոնի գործարկումը:

2014թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությանն ուղղված օրենքը, որով SS ոլորտի նոր ստեղծվող, սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին կտրամադրվեն հարկային արտոնություններ, մասնավորապես շահութահարկի 0% դրույքաչափի և եկամտային հարկի 10% դրույքաչափի կիրառում: Արդյունքում, ակնկալվում է ոլորտի նոր ընկերությունների ձևավորում և աշխատատեղերի ստեղծում:

Միևնույն ժամանակ, 2014թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում համապատասխան լրացումը, որի համաձայն ինտերնետի տարանցիկ փոխադրման ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից:

ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացման նպատակով անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծման (օրենսդրորեն էլ. առևտրի սահմանման) և նախադրյալների ապահովման ուղղությամբ մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի ոլորտի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի փաթեթը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը

1.	Տեղեկատվական և հեռահաղորդակ-ցային տեխնոլոգիաների ներդնում	Հայաստանի Հանրապետություն	Ամբողջությամբ

Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները

Ոլորտն այսօր ապահովում է բարձր եկամտաբերություն և գրավիչ է խոշորածավալ օտարերկրյա ներդրումների համար:

2015թ. SS ոլորտի հետազոտության արդյունքներով ոլորտում գրանցվել է 21% աճ: 2014թ. համեմատ 2015թ. ավելացել է նաև SS ոլորտի ընկերությունների և զբաղվածների թվաքանակը, ինչպես նաև աճել է ոլորտի շրջանառությունը, մասնավորապես, 2015թ. ոլորտի ընկերությունների թվաքանակը 2014թ. 396-ի փոխարեն կազմել է 450, ոլորտում ներգրավված մասնագետների թվաքանակը 2014թ. 11560-ի փոխարեն կազմել է 13000 /սպասարկող անձնակազմի հետ միասին՝ ավելի քան 15000/, ոլորտի շրջանառությունը 2014թ. 474.9 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն կազմել է 559 մլն ԱՄՆ դոլար:

Էլեկտրոնային կառավարման համակարգերի առավելագույն կիրառումը խթանելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ներդրվել է www.e-gov.am էլեկտրոնային կառավարման պորտալը, որի նպատակն է մեկտեղել Հայաստանի Հանրապետության պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների շտեմարանները և հարմարավետ միջավայր ստեղծել դրանց օգտագործման համար:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011 թվականի հունվարի 26-ին ստորագրված «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» N7963-AM վարկային համաձայնագրի համաձայն՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 24 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով վարկ: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում մրցունակ էլեկտրոնային հասարակության ձևավորմանը և ձեռնարկությունների նորարարությանը՝ ամրապնդելով դրանց հիմքում ընկած ենթակառուցվածքները և նպաստավոր միջավայրը: Համաձայնագրի շրջանակում իրականացվում են այնպիսի լայնածավալ ծրագրեր, ինչպիսիք են՝ Վենչուրային կապիտալի/ սկսնակ ձեռնարկությունների աջակցման հիմնադրամի ստեղծման, ԱՄՆ-ի Սիլիկոնյան հովտում վաճառքի գրասենյակի հիմնման, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ստեղծման, Նորարարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հիմնման, «Թվային քաղաքացի», SS-ի արտադրողականության բարձրացմանը, կադրերի կատարելագործմանը, վաճառքի ծավալների և օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմանն ուղղված SS-ի ոլորտի զարգացման տարբեր ծրագրեր: Վարկային ծրագիրն ավարտվելու է 2016թ. հունիսի 30-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևողականորեն և աստիճանական կերպով շարունակում է աջակցել ոլորտի հետագա զարգացմանը:

2014թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել էր 80 մլն ՀՀ դրամ՝ որպես պետական աջակցություն՝ ուղղված ՏՏ ոլորտի զարգացմանը: Նշված ծրագրի շրջանակում կատարվել են հետևյալ միջոցառումները՝

- ***Հայաստանի ՏՏ-ի ոլորտը ներկայացնելը և խթանելը Հայաստանում և արտերկրում, հետազոտությունը, հասարակական իրազեկումը***

Միջոցառման շրջանակում հարցումներ են իրականացվել ոլորտում գործող մոտ 200 ընկերությունների շրջանում, կատարվել է տվյալների վերլուծություն և պատրաստվել է ՏՀՏ ոլորտի 2014թ. հաշվետվությունը:

- ***«Հայաստանում կազմակերպվող ցուցահանդեսներ, համաժողովներ»*** միջոցառման շրջանակում անց են կացվել մի շարք համաժողովներ, ցուցահանդեսներ, մրցույթներ: Դրանք են՝

ա) 2014թ. հոկտեմբերի 3-5-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում տեղի ունեցավ «ԴիջիԹեք Էքսպո 2014» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսը, որին մասնակցեցին տեղական և արտասահմանյան 130 կազմակերպություններ: Ցուցահանդեսն ունեցավ շուրջ 30000 այցելու:

բ) «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառում.

2014թ. դեկտեմբերին կայացավ վենչուրային համաժողով, որը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու «Գաղափարից դեպի բիզնես» դրամաշնորհային մրցույթի 1-ին փուլի արդյունքում տեղեկատվական, հաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների, ճարտարագիտության, գյուղատնտեսություն, մաքուր տեխնոլոգիաների ոլորտների 65 ծրագրերից ընտրված 15 ներդրումային ծրագրերին: Գնահատման արդյունքում նշված ծրագրերից հաղթող ճանաչվեցին 5 ծրագրեր, որոնք արժանացան դրամական մրցանակների:

գ) «ՏՏ ոլորտի մասնավոր հատվածի հետ «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» արտագնա հանդիպում-քննարկումների ֆինանսավորում» միջոցառման շրջանակում 2014թ. կազմակերպվել են «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» խորագրով անցկացվող արտագնա հանդիպում-քննարկումներ, որոնք նպաստել են ոլորտում հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը: Միջոցառման շրջանակում 2014թ. տեղի է ունեցել նաև Բիզնես ինովացիոն ֆորումը, որը կարևոր հարթակ հանդիսացավ Հայաստանում ինովացիոն զարգացման մարտահրավերների, տեխնոլոգիական ոլորտում կրթության և աշխատուժի, ինչպես նաև տեխնոլոգիական ձեռներեցության հիմնախնդիրների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների քննարկման համար:

դ) «Դիջիթեք բիզնես ֆորում» միջոցառման շրջանակում 2014թ. հունիսի 20-21-ը տեղի ունեցավ «Խելացի լուծումներ՝ խելացի բիզնեսի համար» խորագիրը կրող 7-րդ ամենամյա

«Դիջիթեք» բիզնես ֆորումը, որին մասնակցեցին և իրենց տեխնոլոգիական լուծումները ներկայացրեցին 64 կազմակերպություններ: Ֆորումն ունեցավ ավելի քան 3000 այցելու:

ե) «ԱրմԹեք 2014» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի կազմակերպում» միջոցառման շրջանակում 2014թ. Նյու Յորքում կայացել է «ԱրմԹեք 2014» համաժողովը: Համաժողովի ընթացքում ՀՀ կառավարության անունից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրվեց հետագա համագործակցությանն ուղղված փոխըմբռնման հուշագիր: Համաժողովի շրջանակում «Գրանատուս Վենչուրս» ընկերությունը պայմանագրեր ստորագրեց 2 ընկերությունների հետ:

- ***«Միջազգային համագործակցություն»*** միջոցառման շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ա) «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի ծրագրի իրականացում» միջոցառման շրջանակում կազմակերպվել են 26 երկարաժամկետ դասընթացներ, որոնց մասնակցել են 530 մասնակից: 2014թ. ՄԻԿ-ը կազմակերպել է իր 7-րդ պրակտիկայի ծրագիրը մասնավոր ընկերությունների հետ համատեղ՝ հավաքագրելով 34 երիտասարդ մասնագետ/ուսանող: ՄԻԿ-ի կողմից շարունակվել է նաև աքսելերացիոն ծրագրերի իրականացումը:

բ) «Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում 2014թ. ընթացքում կենտրոնում իրականացվել են 58 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ շուրջ 586: Կազմակերպվել են նաև 20 սեմինարներ, մասնակիցների թիվը՝ 350:

գ) «Ինթել», «Սիսկո», «Նեյշնլ Ինսթրումենթս», «Նոկիա» և այլ վերազգային ընկերությունների հետ կարողությունների զարգացման համատեղ ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում շարունակվել են աշխատանքները «Ինթել» ընկերության հետ ստորագրված հուշագրում ամրագրված դրույթների իրականացման ուղղությամբ: «Սիսկո» ընկերության հետ համագործակցության շրջանակում Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի տարածքում կազմակերպվել են CISCO տեխնոլոգիաների դասընթացներ: «Նեյշնլ Ինսթրումենթս»-ի հետ համատեղ իրականացվող Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրի շրջանակում 4000 ուսանողներ մասնակցել են ANEL-ի կողմից կազմակերպված դասընթացներին, նախաձեռնվել են 55 հետազոտական ծրագրեր: «Նոկիա» ընկերության հետ համատեղ իրականացվող Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի ծրագրի շրջանակում կազմակերպվել են մի շարք թեմատիկ դասընթացներ, որոնց մասնակցել են ավելի քան 90 երիտասարդ մասնագետներ և ուսանողներ: Իրականացվել են Հայաստանում «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի տարածքի ինժեներական և ներքին ցանցերի նախագծման աշխատանքները:

2015թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացվել էր 91460 հազ. ՀՀ դրամ՝ որպես պետական աջակցություն՝ ուղղված ՏՏ ոլորտի զարգացմանը: Նշված ծրագրի շրջանակում կատարվել են հետևյալ միջոցառումները՝

• ***Հայաստանի ՏՏ-ի ոլորտը ներկայացնելը և խթանելը Հայաստանում և արտերկրում, հետազոտությունը, հասարակական իրազեկումը***

Միջոցառման շրջանակում հարցումներ են իրականացվել ոլորտում գործող մոտ 200 ընկերությունների շրջանում, կատարվել է տվյալների վերլուծություն և պատրաստվել է ՏՀՏ ոլորտի 2015թ. ամփոփ հաշվետվությունը: Հետազոտության արդյունքների համաձայն՝ ՏՏ ոլորտում ակտիվ աշխատում են ավելի քան 450 ընկերություններ /նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 14%/, ոլորտում ներգրավված է մոտ 13000 մասնագետ, սպասարկող անձնակազմի հետ միասին՝ ավելի քան 15000, ոլորտի ընդհանուր շրջանառությունը կազմում է շուրջ 550 մլն ԱՄՆ դոլար, ոլորտի շրջանառության աճը կազմել է ավելի քան 17%:

• ***«Հայաստանում կազմակերպվող ցուցահանդեսներ, համաժողովներ»*** միջոցառման շրջանակում անց են կացվել մի շարք համաժողովներ, ցուցահանդեսներ, մրցույթներ: Դրանք են՝

ա) 2015թ. հոկտեմբերի 2-4-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում տեղի ունեցավ միջազգային ամենամյա «Դիջիթեք Էքսպո 2015» տեխնոլոգիական ցուցահանդեսը, որին մասնակցեցին տեղական և արտասահմանյան շուրջ 170 ընկերություններ: Այս տարի ցուցահանդեսն ունեցավ ավելի քան 45000 այցելու:

բ) «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովի ֆինանսավորում» միջոցառում.

2015թ. հունիսին հայտարարվել է «Գաղափարից դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթը հետևյալ ուղղություններով՝ գյուղատնտեսություն, մաքուր տեխնոլոգիաներ և ՏՀՏ, ճարտարագիտություն և բարձր տեխնոլոգիաներ: Ընդհանուր առմամբ, ստացվել է 90 հայտ, որոնք ուսումնասիրվել են ամերիկյան և տեղական փորձագետների կողմից, և լավագույն 26 ծրագրերն անցել են եզրափակիչ փուլ: 2015թ. հոկտեմբերին Երևանում կայացած «ԱրմԹեք 2015» համաժողովի շրջանակում տեղի է ունեցել նաև վենչուրային համաժողով, որի արդյունքում վերոնշյալ մրցույթի 26 ծրագրերից հաղթող ճանաչվեցին 5 ծրագրեր՝ արժանանալով դրամական մրցանակների:

գ) «ՏՏ ոլորտի մասնավոր հատվածի հետ «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» արտագնա հանդիպում-քննարկումների ֆինանսավորում» միջոցառման շրջանակում 2015թ. կազմակերպվել են «ՏՀՏ լիդերները՝ առանց փողկապների» խորագրով անցկացվող արտագնա հանդիպում-քննարկումներ, որոնք նպաստել են ոլորտում հանրային իրազեկման մակարդակի բարձրացմանը: Միջոցառման շրջանակում 2015թ. տեղի է ունեցել նաև Բիզնես ինովացիոն ֆորումը, որը կարևոր հարթակ հանդիսացավ Հայաստանում ինովացիոն զարգացման

մարտահրավերների, տեխնոլոգիական ոլորտում կրթության և աշխատուժի, ինչպես նաև տեխնոլոգիական ձեռներեցության հիմնախնդիրների բացահայտման և դրանց հաղթահարման ուղիների քննարկման համար:

դ) «Դիջիթեք բիզնես ֆորում» միջոցառման շրջանակում 2015թ. հունիսի 19-ին և 20-ին իրենց տեխնոլոգիական լուծումները ներկայացրեցին ավելի քան 40 ընկերություններ: Ֆորումի շրջանակում առաջին անգամ անցկացվեց «Դիջիբիզնես» մրցանակաբաշխությունը, որի նպատակն էր ոչ տեխնոլոգիական ոլորտներում գործող հայկական ընկերությունների շրջանում խրախուսել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:

ե) «ԱրմԹեք 2015» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի կազմակերպում» միջոցառման շրջանակում 2015թ. հոկտեմբերի 12-ին Երևանում կայացած «ԱրմԹեք 2015» գլոբալ համաժողովին մասնակցել են տեղական և միջազգային տեխնոլոգիական ընկերությունների, պետական և միջազգային կառույցների, վերազգային հայտնի ընկերությունների, համալսարանների, գիտահետազոտական կենտրոնների, սկսնակ ընկերությունների շուրջ 350 ներկայացուցիչներ: «Արմթեք 2015»-ը նշանավորվեց այն փաստով, որ առաջին անգամ՝ հոկտեմբերի 14-ին, «ԱրմԹեք»-ի հատուկ նիստ անցկացվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում**, որին մասնակցեցին շուրջ 150 մասնակիցներ:**

«Միջազգային համագործակցություն» միջոցառման շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ա) «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի ծրագրի իրականացում» միջոցառման շրջանակում կազմակերպվել են 47 երկարաժամկետ դասընթացներ, որոնց մասնակցել են 623 մասնակից: Կենտրոնը «Մայքրոսոֆթ ԱրԷյ»-ի հետ համատեղ 2015թ. հունիսի վերջին անվճար վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել Հայաստանում գործող բանկերի շուրջ 40 SS մասնագետների համար: ՄԻԿ-ը կազմակերպել է նաև մասնավոր ընկերությունների հետ համատեղ պրակտիկայի ծրագիր: ՄԻԿ-ի կողմից շարունակվում է նաև աքսելերացիոն ծրագրերի իրականացումը:

բ) «Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում 2015թ. ընթացքում կենտրոնում իրականացվել են 59 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ ու 18 սեմինարներ: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ շուրջ 1072: Ուսումնական գործունեության հետ մեկտեղ՝ կենտրոնն իրականացնում է նաև արդի գիտահետազոտական աշխատանքներ «ՊԱՐԱՄ» գերհամակարգչով:

գ) «Վերազգային ընկերությունների հետ կարողությունների զարգացման համատեղ ծրագրերի իրականացում» միջոցառման շրջանակում իրականացվել են մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության հետ համատեղ իրականացվող Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրի շրջանակում

3500 ուսանողներ մասնակցել են ANEL-ի կողմից կազմակերպված դասընթացներին, մշակվել է պրակտիկայի ծրագիր ANEL-ում ուսանողների համար և պրակտիկա են անցել 450 ուսանողներ, նախաձեռնվել են 20 հետազոտական ծրագրեր, ինչպես նաև ծառայություններ են ստացել 16 տարբեր ընկերություններ/թիմեր: «Նոկիա»-ի հետ համատեղ իրականացվող Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի ծրագրի շրջանակում կազմակերպվել են մի շարք թեմատիկ դասընթացներ ու սեմինարներ, որոնց մասնակցել են ավելի քան 30 երիտասարդ մասնագետներ և ուսանողներ: 2015թ. մայիսին ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ»-ի միջև ստորագրվել են մի շարք համաձայնագրեր՝ ոլորտում նոր համատեղ նախաձեռնությունների իրականացման նպատակով: 2015թ. հաջողությամբ գործում է Հայաստանում «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը: Վերջինիս կողմից կազմակերպվել են տարբեր սեմինարներ և միջոցառումներ, որոնց շրջանակում ՏՏ ոլորտի սկսնակ ընկերություններին և թիմերին «IBM»-ի կողմից տրամադրվել է մենթորություն՝ բիզնեսի զարգացման համար: Կենտրոնի կողմից, ընդհանուր առմամբ, տրամադրվել է բիզնես խորհրդատվություն 30 ստարտափ/սկսնակ թիմերի, կազմակերպվել են 40 դասընթացներ և սեմինարներ, որոնց մասնակցել են ավելի քան 600 մասնակիցներ:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի (ՏՏՋԱԽ) քարտուղարության գործունեության ապահովում» միջոցառման շրջանակում ՏՏՋԱԽ-ի քարտուղարության կողմից կազմակերպել է մեկ նիստ: Ձևավորվել են խորհրդի և ՏՏ ոլորտի հայեցակարգից բխող աշխատանքային խմբեր՝ 5 հիմնական ուղղություններով: Հաշվետու ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, կազմակերպվել է աշխատանքային խմբերի 8 հանդիպում: ՏՏՋԱԽ քարտուղարության կողմից մշակվել և գործունեության մեջ է դրվել http://itdsc.am/ կայքը, որը կծառայի որպես էլեկտրոնային կառավարման գործիք՝ խորհրդի գործունեությունը կանոնակարգելու համար

<u>Հիմնական խնդիրները</u>

ՏՏ ոլորտի զարգացման միտումների հետ մեկտեղ, ոլորտում առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ: Դրանք են՝ մասնավորապես, ՏՏ ոլորտում մրցունակ կրթական միջավայրի զարգացման, միջազգային չափանիշներին համապատասխանող տեխնոլոգիական մասնագետների ուսուցման ու վերապատրաստման առկա դժվարությունները, տեխնոլոգիական ձեռներեցությունը խթանող ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման, ՏՏ ոլորտում բարենպաստ գործարար միջավայրի ապահովման, նոր վերազգային կազմակերպությունների և օտարերկրյա ներդրումների ներգրավման, ՏՏ ոլորտի զարգացումն ու էլեկտրոնային հասարակության կայացումն ապահովող կիրարկման մեխանիզմների բարելավման հետ կապված խնդիրները, ոլորտի տեղական ընկերությունների արտադրանքի և ծառայությունների արտահանման և միջազգային շուկայում կայուն դիրքավորման բարդությունները, արագ զարգացող տեխնոլո-

գիական աշխարհում Հայաստանի մրցունակության պահպանման հետ կապված խնդիրները, ժամանակակից ենթակառուցվածքների անբավարարությունը:

Նշված հիմնախնդիրների հաղթահարմանն են ուղղված 2017թ. ընթացքում նախատեսվող ծրագրային միջոցառումները՝ կարևոր նախապայման հանդիսանալով ոլորտի զարգացման նոր ռազմավարության և երկրի ընդհանուր տնտեսական աճի ապահովման համար:

16.3.2 Ոլորտի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

<u>Նպատակները</u>

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման և պետական աջակցման հիմնական նպատակներն են.

- Հայաստանում ՏՀՏ կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համատարած կիրառվող էլեկտրոնային ծառայություններով, խոշորածավալ տեղական ՏՏ շուկայի առկայությամբ և առաջադեմ գիտելիքահենք արդյունաբերությամբ երկրի վարկանիշի ապահովումը,
- Մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ ու ծառայություններ մատուցող ընկերություններով, համաշխարհային շուկաներում մրցունակ տեղական ՏՏ արտադրանքով զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացումը,
- Համաշխարհային շուկայում մրցակցային առավելություններ ունեցող «Հայկական ՏՏ ապրանքային նշան»-ի ներթափանցումն ու ներկայությունն ապահովող միջոցառումների իրականացումը,
- Հայկական ՏՀՏ ոլորտի մի շարք կարևոր բնագավառների աճը խթանելու նպատակով համապատասխան կրթությամբ մասնագետների պատրաստման, որակյալ աշխատուժի աճի պահպանման և զարգացման խնդիրների լուծումը,
- Ոլորտի արդյունավետության աճի պահպանումը և առավել զարգացումը (տարեկան մինչև 20% չափով),
- Որակյալ աշխատուժի աճի պահպանումը և առավել զարգացումը (տարեկան մինչև 12% չափով):

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Ոլորտի կարողությունների և նվաճումների խթանում			«ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N511-Ա որոշումը, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշումը, ՀՀ կառավարության 28.08.2008թ. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N35 արձանագրային որոշումը
2	Ոլորտի հնարավորությունների ներկայացում Հայաստանում և արտերկրում, հասարակական իրազեկում			
3	Ոլորտում ներդրումների և արտահանումների խթանում			
4	SS ոլորտի մասնագետների որակական մակարդակի և մրցունակության բարձրացում			
5	Ոլորտի զարգացումը խթանող ենթակառուցվածքների ձևավորում			
6	SS ոլորտի արտադրողականության աճ և տեղեկատվական հասարակության կայացում			

16.3.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով SS ոլորտի խթանման ծառայությունների ծրագրով հատկացվել է գումար՝ 98660 հազ. դրամի չափով:

2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվող հետևյալ ծրագրերը կհանդիսանան ՀՀ 2016թ. պետական բյուջեով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ծրագրով» նախատեսված ֆինանսավորման շարունակությունը և մեծապես կնպաստեն SS ոլորտի գերակայությունների և ոլորտի զարգացման պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացմանը: Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 98.7-ական մլն դրամ:

16.4 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.4.1. Ծրագրի ընդհանուր նկարագիրը.

ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության իրականացումը նպաստում է «Համապատասխանության գնահատման մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին» և «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքների արդյունավետ կիրառմանը, ապահովվելով ՀՀ-ում արտադրվող, ներմուծվող և իրացվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և չափագիտական կանոններին ու նորմերին:

Միաժամանակ վերոհիշյալ աշխատանքներն ապահովվում են մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց և պետական գույքի, ոչ պարենային արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անվտանգությունը, տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը, սպառողների իրավունքների, շրջակա միջավայրի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, ձեռնարկատիրական և արտադրական գործունեության վնասակար ազդեցությունից ու սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոններից պաշտպանությունը:

Իրականացվող աշխատանքներն ապահովում են նաև պետական չափագիտական վերահսկողության ոլորտում չափագիտական կանոնների ու նորմերի պահպանումը, խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը և վերացումը, չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	ՀՀ տարածքում տեխնիկական կանոնակար-գերի պահանջների և չափագիտական կանոն-ների ու նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման շրջանակում փորձանմուշների ձեռքբերում և համապատասխան հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում փորձարկումների իրականացում	ՀՀ տարածքում արտադրանք արտադրող, ներմուծող, իրացնող և ծառայություն մատուցող տնտեսավարող սուբյեկտները, ինչպես նաև բոլոր սպառողները	Ամբողջությամբ

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

Նշված ծրագրի միջոցառումների կատարման ուղղությամբ իրականացվում են տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի և ծառայությունների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողություն և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական չափագիտական վերահսկողություն: Բոլոր ստուգումները անցկացվում են բացառապես ՀՀ կառավարության 28.03.2013թ. N 370-Նորոշմամբ հաստատված ստուգաթերթերի հիման վրա:

Ստուգումներ իրականացնելիս առաջնային նշանակություն է տրվել լայն սպառման ապրանքների, ինչպես նաև դիզելային վառելիքի, բենզինի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության, չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողությանը: Վերահսկողությունը իրականացվել է նշված արտադրատեսակների արտադրման և իրացման փուլերում համապատասխանաբար արտադրող, ներմուծող և իրացնող տնտեսավարող սուբյեկտներում:

2013 թվականի ընթացքում տեսչության կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողություն է իրականացվել 353 տնտեսավարող սուբյեկտներում, 190-ում հայտնաբերվել են 238 խախտումներ, 1 տնտեսավարող սուբյեկտի ղեկավար խոչընդոտել է ստուգման իրականացմանը:

Պետական վերահսկողության արդյունքների հիման վրա 13 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու մասին, խախտումներ թույլ տված 238 պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 27070000 դրամի չափով:

2014 թվականի ընթացքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարի կողմից 08.01.2014թ. N2-Ա հաստատված Շուկայի վերահսկողության պետական տեսչության 2014թ. ստուգումների ծրագրով և ՀՀ Վարչապետի գրավոր թույլտվությամբ Տեսչության կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողություն է իրականացվել 283 տնտեսավարող սուբյեկտներում, 157-ում հայտնաբերվել են 195 խախտումներ, 2 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներ խոչընդոտել են ստուգման իրականացմանը:

Պետական վերահսկողության արդյունքների հիման վրա 2 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու մասին, խախտումներ թույլ տված 197 պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 84800000 դրամի չափով:

Հիմնական խնդիրները

Ծրագրի հիմնախնդիրներն են.

- Ոչ պարենային արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների՝ բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) անվտանգության ապահովումը:
- Տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը:
- Պետական չափագիտական վերահսկողության ոլորտում չափագիտական կանոնների ու նորմերի պահպանումը, խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը և վերացումը, չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:
- թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մասնագիտացված, այդ թվում՝ մանրածախ առուվաճառքի և դրանցով գործարքների իրականացման պայմանների պահպանման ոլորտներում խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը և վերացումը, սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

16.4.2. Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

Ծրագրի իրականացման նպատակն է ՀՀ-ում արտադրանք արտադրող, ներմուծող, իրացնող և ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրանքի և մատուցվող ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի համապատասխանության ապահովումը՝ պետական վերասկողություն իրականացման միջոցով:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Արտադրանքի և ծառայությունների անվտանգության ապահովում, պետության և սպառողների շահերի պաշտպանություն:			«Տեխնիկական կանոնակարգման մասին», «Ստանդարտացման մասին», «Թանկարժեք մետաղների մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և այլ իրավական ակտերով:

16.4.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվել է յուրաքանչյուր տարի 30.0-ական մլն դրամ: Նշված գումարը կուղղվի «Փորձանմուշների ձեռքբերման ծախսեր»-ի, «Փորձանմուշների փորձարկման ծախսեր»-ի և «Տեսչության աշխատանքների թափանցիկություն /ծառայությունների լուսաբանում և հանրային իրազեկում/» միջոցառումների իրականացմանը:

16.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.5.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը

I. Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիր

Սույն ծրագիրը մշակվել է ապահովելու երկարաժամկետ հեռանկարում նպաստելու տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը՝ կազմակերպությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման: Միջոցառումներն ուղղված են տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը, արտահանման ներուժի բացահայտմանը, արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, համապատասխան ենթակառույցների ձևավորմանը, կրթության որակի և մատչելիության բարձրացմանը:

Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի նպաստելու ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում, որը միտված է նպաստելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով:

II. Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագիր

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության Զբոսաշրջության Համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿԶՀԿ) կանխատեսումների՝ 2030 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը կհասնի 1.8 միլիարդի:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ զբոսաշրջության մասնաբաժինը ներդրումների ընդհանուր ծավալում կազմում է մոտ 7%, համաշխարհային սպառողական ծախսերի 11%, բոլոր հարկային մուտքերի 5% և համաշխարհային ծառայությունների առևտրի մեկ երրորդը:

Զբոսաշրջության կայուն զարգացումը նպաստում է կայուն տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը և այլն:

Զբոսաշրջությունը Հայաստանում, վերջին տարիներին, շնորհիվ զբոսաշրջության ոլորտում վարվող նպատակային պետական քաղաքականության, ինչպես նաև շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության համագործակցության, արձանագրում է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: Վերջին հինգ տարիներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 9.0 տոկոս:

2015 թվականին Հայաստան է այցելել 1 միլիոն 192 հազար այցելու՝ 1.0 տոկոսով պակաս, քան 2014 թվականին:

Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության իրականացման շրջանակներում 2005 թվականից Հայաստանում գործողության մեջ է դրվել «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» (10.06.2004թ. N 946-Ն) ՀՀ կառավարության որոշումը, որի համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանալով ՀՀ կառավարության լիազորած մարմինը իրականացնում է Հայաստանում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում:

III. Պետական աջակցություն Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման ծրագիր

Սույն ծրագրի մշակումը պայմանավորված է Հայաստանի զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ ՀԶՀ)՝ Հայաստանի ազգային մրցունակության և Արդյունաբերության զարգացման հիմնադրամների, գործունեության շարունակական, Հայաստանի գիտելիքահեն տնտեսության զարգացման և համաշխարհային զարգացումների գործընթացում համահայկական ներուժի համախմբմամբ տնտեսական բեկումնային առաջընթացի ապահովման անհրաժեշտությամբ:

Ծրագրային միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ կառավարության կողմից գերակա ընտրված արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտների զարգացմանն, ինչպես նաև ներդրումների ներգրավմանն ուղղված ՀԶՀ ծրագրերի իրականացմամբ՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, համապատասխան ենթակառուցվածքների գնահատման, դրանց

զարգացմանը խթանող միջոցառումների և հանրային իրազեկման ապահովման խնդիրների իրականացմամբ:

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1523-Ն որոշման համաձայն՝ Արդյունաբերության զարգացման և Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամների միաձուլման արդյունքում ստեղծվել է Հայաստանի զարգացման հիմնադրամը, որը պետք է ապահովի Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիր, Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագիր, ինչպես նաև լուսաբանվածության և շահառուների հետ շարունակական աշխատանքների իրականացումը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում	Հայաստանի Հանրապետություն, արդյունաբերական ոլորտի ընկերություններ	Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
2.	Արդյունաբերության ոլորտի ընկերություններին վարկավորման սուբսիդավորման և սերտիֆիկացման համաֆինանսավորման ցուցաբերում		Կատարվում է ա/ վարկավորման տոկոսագումարի մասնակի սուբսիդավորում՝ 3 տոկոսի չափով, բ/ համաֆինանսավորում՝ սերտիֆիկացման ծառայությունների ուղղակի կատարված ծախսերի 50 տոկոսի չափով:
3.	«Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում»		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
4.	Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
5.	Արդյունաբերության ոլորտում հետազոտության իրականացում.		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
6.	Հայկական զբոսաշրջային արդյունքի միջազգային և ներքին շուկաներում խթանում	Հայաստանի Հանրապետություն, զբոսաշրջության ոլորտի ընկերություններ	Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
8.	Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:

9.	Մարդկային ռեսուրսների զարգացում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
10.	ՀՀ մրցունակ և շարունակական օդային փոխադրումների Ծառայությունների մատուցման ծրագրի խթանում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
11.	Զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության ապահովում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
12.	Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավում և Հայաստանի ներդրումային միձավարի բարելավում	Հայաստանի Հանրապետություն	Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

I. Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիր.

Համաձայն ԱՎԾ ցուցանիշների 2014 թվականին արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է (համադրելի գներով) 1219.3 մլրդ դրամի արտադրանք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 2.7%-ով: Իրացված արտադրանքից արտահանվել է 473.3 մլրդ դրամի արտադրանք (շուրջ 38.8%-ը):

Ծրագրի շրջանակներում 2014 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

I. **«Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում, սփյուռքահայերի տեղեկատվական բազայի ստեղծում»** ծրագրով կազմակերպվել են 11 շնորհանդեսներ և/կամ ֆորումներ:

II. ***Արդյունաբերության ոլորտի ընկերություններին վարկավորման սուբսիդավորման և սերտիֆիկացման համաֆինանսավորման ցուցաբերում.***

1) «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում սուբսիդավորվել է 22 ընկերություն:

2) «Արտերկրում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում» ենթածրագրով բավարարվել է 13 կազմակերպությունների հայտեր:

3. Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում.

1) «Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների մասնակցություն» ենթածրագրի շրջանակներում իրականացվել է 5 միջոցառում:

2) «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրով 2014 թվականին 11 միջազգային ցուցահանդեսների մասնակցություն համար 75 հայկական ընկերություններին տրամադրվել է աջակցություն:

3) «Արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և դիստրիբյուտորների այցելություններ Հայաստան և/կամ արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթածրագրով 2015 թվականին Հայաստան և/կամ արտերկիր են այցելել 60 ներկայացուցիչներ:

4. **«Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում** 2014 թվականին կազմակերպվել 5 դասընթաց:

5. «Արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտության իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվել է 1 հետազոտություն:

Համաձայն ԱՎԾ ցուցանիշների՝ 2015 թվականին արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է (համադրելի գներով) 1351.8 մլրդ դրամի արտադրանք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5.2%-ով: Իրացված արտադրանքից արտահանվել է 527.3 մլրդ դրամի ապրանքներ (շուրջ 39%-ը):

Ծրագրի շրջանակներում 2015 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. «Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում, սփյուռքահայերի տեղեկատվական բազայի ստեղծում» ծրագրով կազմակերպվել են 12 շնորհանդեսներ և/կամ ֆորումներ:

2. *Արդյունաբերության ոլորտի ընկերություններին վարկավորման սուբսիդավորման և սերտիֆիկացման համաֆինանսավորման ցուցաբերում.*

1) «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում 2015թ. սուբսիդավորվել է 16 ընկերություն:

2) «Արտերկրում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում» ենթածրագրով 2015թ. բավարարվել է 12 կազմակերպությունների հայտեր:

3. Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում.

1) «Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների մասնակցություն» ենթածրագրի շրջանակներում 2015 թվականին իրականացվել է 8 միջոցառում:

2) «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրով 2015 թվականին 16 միջազգային ցուցահանդեսների մասնակցություն համար հայկական ընկերություններին տրամադրվել է աջակցություն:

3) «Արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և դիստրիբյուտորների այցելություններ Հայաստան և/կամ արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթածրագրով 2015 թվականին Հայաստան և/կամ արտերկիր են այցելել 140 ներկայացուցիչներ:

4. ***«Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ծրագրի շրջանակներում*** *2015 թվականին կազմակերպվել են հետևյալ դասընթացները.*

- Կազմակերպվել է Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի համար «Դեղերի անվտանգություն» և «Գլոբալ կարգավորման պահանջներ» հեռահար վերապատրաստման դասընթացները:

Նշված դասընթացներին 2014-2015թ. մասնակցել են 100 անձ, որից «Դեղերի անվտանգություն» դասընթացի թվով 55 մասնակիցներից համապատասխան սերտիֆիկատներ են ստացել 45-ը, իսկ «Գլոբալ կարգավորման պահանջներ» դասընթացի թվով 45 մասնակիցներից՝ 36-ը:

- 2015թ. հուլիսի 22-24-ը Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն (GIZ) Հայաստանյան գրասենյակի «ԵՄ թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագրի շրջանակներում Հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է ուսուցողական դասընթաց՝ «Սթարթափներ. Բիզնես մոդելի մշակումը և առաջարկային փաթեթի պատրաստումը ներդրողների համար» թեմայով:
- 2015թ. հոկտեմբերի 26-30-ը անց են կացվել մի շարք դասընթացներ՝ մասնագիտական սեմինարներ և վարպետության դասեր (ոսկերիչ/դիզայներ, Ֆրանսիա):
- 2015թ. սեպտեմբերի 22-24-ը CBI-ի ծրագրերի ղեկավարի և ներկայացուցչի հետ կազմակերպվել են հանդիպումներ թվով 5 գինեգործական կազմակերպությունների հետ, որոնք ընդգրկված են CBI-ի հնգամյա աջակցության ծրագրում, ինչպես նաև քննարկվել են Հիմնադրամի հետ հետագա համագործակցության ծրագրերը:
- 2015թ. սեպտեմբերի 23-ին անցկացվել է «Մասնագիտական ցուցահանդեսներին գինու ներկայացման հմտությունների զարգացում» խորագրով վերապատրաստման դասընթաց, որը վարվել է Երևանի Գինու ակադեմիայի դասախոսների կողմից:
- Suze la Rousse գինու համալսարանի, Rhône-Alpes դեպարտամենտի և Գինու Ակադեմիայի հետ համգործակցությամբ, մասնագիտական վերապատրաստման ծրագրերի շրջանակներում 12 մասնագետ 10-օրյա դասընթացներին են մասնակցել Suze la Rousse-ի համալսարանում:

• «Հայաստանի արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների մրցունակության բարձրացում՝ իրացման արդիականացման և մուտք դեպի շուկա ապահովելով» UNIDO ծրագրի շրջանակներում կազմակերպվել թեթև արդյունաբերության ոլորտի դասընթաց:

5. «Արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտության իրականացում» ծրագրի շրջանակներում իրականացվել է «ՀՀ սննդի և խմիչքների արդյունաբերության արտադրանքի դեպի Ռուսաստանի Դաշնություն արտահանման հնարավորությունների և առկա խնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն» շուկայի ուսումնասիրություն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան մրցույթի միջոցով, որով ուսումնասիրվել և բացահայտվել է Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելուց հետո Ռուսաստանի Դաշնություն շուկա հայկական սննդի և խմիչքների ոլորտների արտադրանքների արտահանման հնարավորությունները, առկա խնդիրները և ներկայացվել մուտքի ապահովմանն ուղղված առաջարկներ:

II. Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագիր

Զբոսաշրջության ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները պայմանավորված են զբոսաշրջության ոլորտի զարգացման գործընթացների և պետական քաղաքականության արդյունավետ և նպատակային իրականացմամբ, զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված համապատասխան ենթակառուցվածքների ստեղծմամբ և զարգացմամբ:

2000 թվականից ի վեր Հայաստանում իրականացվում են զբոսաշրջության զարգացման պետական տարեկան ծրագրեր, որոնք հիմնականում ուղղվել են մարքեթինգային քաղաքականության իրականացմանը, մասնավորապես Հայաստանի, որպես զբոսաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի նկարագրի ձևավորմանը և շարունակական կատարելագործմանը:

2008-2013 թվականներին Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները ներկայացվել են 45-ից ավելի միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում, տարեկան տպագրական և տեսանյութերի *հազարավոր* օրինակներ տարածվել պահանջարկի շուկաներում, *հարյուրավոր* մասնագիտացած լրագրողների և տուրօպերատորների համար կազմակերպվել են ճանաչողական այցեր Հայաստան՝ արդյունքում 2008 թվականին գրանցվել է 558.443 միջազգային այցելու, որոնց թիվը տարեկան դինամիկ աճելով 2013 թվականին հատել է 1.084.188 սահմանագիծը 2012 թվականի համեմատ աճելով 12.6%:

Միջազգային այցելությունների դինամիկան սկսած 2008 թվականից հետևյալն է.

Տարիներ	ժամանած զբոսաշրջիկների քանակը	աճը %
2008	558.443	2008/2007- 9.4%
2009	575.281	2009/2008- 3.0%

2010	683.979	2010/2009- 18.9%
2011	757.935	2011/2010- 10.3%
2012	843.330	2012/2011- 11.3%
2013	1.084.188	2013/2012- 12.6%
2014	1.203.746	2014/2013- 11.3%
2015	1.192.000	2015/2014- -1.0%
2016	1.251.600 կանխատեսում	2016/2015- 5.0%

Համաձայն վիճակագրական տվյալների 2008-2013 թթ. տարեկան միջին աճը կազմել է 10,9%, իսկ 2014–2015թթ.՝ 5.2%: Այս տարբերությունը բացատրվում է համաշխարհային քաղաքական փոփոխություններով, տարադրամի կտրուկ տատանումներով:

Համեմատելով 2014-2015թթ. զարգացմանմիտումները նախորդող 2008-2013թթ.միտումների հետ ակնհայտ է Հայաստան ժամանող զբոսաշրջիկների դինամիկ աճը:

Բացառությամբ 2015 թվականի, որի ընթացքում ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի նվազումը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնությունից և Վրաստանից այցելությունների նվազմամբ՝ համապատասխանաբար 6 և 11 %-ով (ընդհանուր շուրջ 60000-ով): 2015թ. 9 ամիսների տվյալներով ՌԴ-ից արտագնա զբոսաշրջիկների թիվը 2014թ. նույն ժամանակահատվածի հետ համեմատ նվազել է 31%-ով,ինչը հիմնականում պայմանավորված է տարածաշրջանային տնտեսական խնդիրներով:

Զբոսաշրջության ոլորտում հիմնական ֆինանսական ցուցանիշն են ներգնա ժամանումների քանակը և դրանից ստացվող եկամուտները՝ Հայաստան ժամանած յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսում է մոտ 1000 ԱՄՆ դոլար:

Ներքին զբոսաշրջային այցելություններ.

2014թ-ին հանրապետության տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է շուրջ 860 հազար՝ (ՀՀռեզիդենտներ), ինչը 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 28.4 %-ով:

2015 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է շուրջ 872 հազար՝ 1.4 տոկոսովավելի, քան 2014 թվականին: 2015 թվականին 2014 թվականի համեմատ պակաս են իրացվել սոցիալական փաթեթով հանգստի իրականացումը:

Ենթակառուցվածքներ. հյուրանոցային տնտեսության օբյեկտներ

Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների 2008 թվականին միջազգային զբոսաշրջիկ են ընդունել 49 հյուրանոց, իսկ 2013-ին՝ 77 հյուրանոց:

2014 թվականինմիջազգային զբոսաշրջիկ են ընդունել 77 հյուրանոց, իսկ 2015-ին՝ 65 հյուրանոց, ինչը պայմանավորված է հյուրանոցային տնտեսության այլ օբյեկտների աճով:

Համաձայն հավաքագրված տվյալների՝ 2015 թվականին ՀՀ տարածքում գործել են 337 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ (հյուրանոց, մոթել, հյուրանոցատիպ հանգրվան,

առողջարան, պանսիոն, հանգստյան կամ մասնագիտացված տուն, զբոսաշրջային բնակատեղի (hostel), ճամբար՝ ըստ“Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված տեսակների), որոնցից 36 %-ը Երևանում և 64%-ը ՀՀ մարզերում՝

- 122-ը Երևանում՝ ապահովելով 3472 համար և 5963 ննջատեղ,
- 215-ը մարզերում՝ ապահովելով 6710 համար և 14272 ննջատեղ:

Հայաստանում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների հյուրանոցային համարների և ննջատեղերի ընդհանուր քանակը կազմում է համապատասխանաբար 10182 և 20235:

2015 թվականին միայն հյուրանոցների քանակը Հայաստանում կազմել է 186 (6874 համար և 13169 ննջատեղ), որից՝

- 70-ը Երևանում՝ ապահովելով 3102 համար և 5200 ննջատեղ,
- 116-ը մարզերում՝ ապահովելով 3772 համար և 7969 ննջատեղ:

2015 թվականի Հայաստանում գործել է 13 առողջարան, 39 հանգստյան տուն, 3 պանսիոն, 9 հոսթել, 1 մոթել:

2014 թվականինշահագործմանէհանձնվել10 հյուրանոց(470համար, 1040 ննջատեղ).

2015 թվականին շահագործման է հանձնվել 4 հյուրանոց (392 համար, 663 ննջատեղ).

Բացի վերոնշյալ հյուրանոցային տնտեսության օբյեկտներից Հայաստանում (հիմնականում ՀՀ մարզերում և գյուղական համայնքներում) գործում են ավելի քան 200 զբոսաշրջային տներ, որոնք գործում են Bed&Breakfast սկզբունքով (B&B):

2015 թ-ի դրությամբ ՀՀ-ում որակավորված են 25 ՀՏՕ՝ 9 հյուրանոց, 14 զբոսաշրջային տուն և 1 պանսիոն: Հյուրանոցաշինության զարգացումը բացատրվում է աճող պահանջարկով, ինչը նաև խթանում է Հայաստան միջազգային հյուրանոցային ցանցերի ներգրավումը:

Եթե համեմատել 2000 թվականի հետ, 2000 թվականը ընդունելով որպես մեկնարկային զբոսաշրջության վիճակագրության համար, ապա Հայաստանում գործում էր 3-4 հյուրանոց՝ միայն Երևան քաղաքում, ընդ որում դեռ չէին գործում զբոսաշրջային տները:

2014-2015թթ. ընթացքում զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները նույնպես հիմնականում բացահայտվել են ոլորտի զարգացման պետական տարեկան ծրագրի իրականացման արդյունքում:

Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է հեղինակավոր մի շարք միջազգային ցուցահանդեսներում՝ 2014 թ-ին՝ 4, իսկ 2015թ-ին՝ 7:

Ազգային ավանդական միջոցառումների կազմակերպման շրջանակներում 2014 թ-ին ՀՀ Լոռու, Վայոց Ձորի, Շիրակի,Սյունիքի և Տավուշի մարզերում կազմակերպվել են թվով 6 փառատոներ, իսկ 2015 թ-ին՝ 5:

Միջազգային համագործակցության շրջանակներում.

2014թ. փետրվարի 21-ին ստորագրվել է ՀՀ և ԻԻՀ միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության տեխնիկական հանձնաժողովի երկրորդ նիստի արձանագրությունը:

2014 թվականի հոկտեմբերի 1-4-ը Հայաստանի պատվիրակությունը Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում մասնակցել է ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության Գործադիր Խորհրդի 99-րդ նստաշրջանի աշխատանքներին, որի օրակարգում ներառված էր Ադրբեջանի Հանրապետության կողմից ներկայացված «Prevention of Promotion of Conflict Zones as Tourism destination and Using Tourism for Illegal Purposes» (Հակամարտության գոտիները որպես զբոսաշրջային կենտրոն խթանելը կանխարգելելու վերաբերյալ) բանաձևի նախագիծը, որով փորձ է արվում արգելափակել աշխարհում բոլոր չճանաչված երկրների, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցությունը զբոսաշրջային ցուցահանդեսներին և այլ

միջոցառումներին՝ միաժամանակ, սահմանափակելով կամ արգելելով նրանց ներկայացումը որպես զբոսաշրջավայր: ՀՀ էկոնոմիկայի և արտաքին գործերի նախարարությունների համագործակցության արդյունքում ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդի 99-րդ նստաշրջանի օրակարգից հանվել է ադրբեջանական կողմի առաջարկած նախագիծը՝ ընդունելով հետևյալ որոշումը.

1) ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհրդի 99-րդ նստաշրջանի օրակարգը հաստատել առանց 8-րդ կետի՝ Ադրբեջանի կողմից ներկայացված <<Prevention of Promotion of Conflict Zones as Tourism destination and Using Tourism for Illegal Purposes>> բանաձևի նախագծի:

2) Հարցի քննարկումը փոխանցել ՄԱԿ ԶՀԿ Էթիկայի հանձնաժողովին՝ վերջինից խնդրելով այն քննարկել Հռոմում 2014 թվականի նոյեմբերի 17-18-ը կայանալիք իր հերթական նիստի ընթացքում և կարծիք ներկայացնել Գործադիր Խորհրդին հաջորդ նստաշրջանի ընթացքում Ադրբեջանի ներկայացրած առաջարկության վերաբերյալ զբոսաշրջության էթիկայի տեսանկյունից:

III. Պետական աջակցություն Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման ծրագիր

Ներկայումս լիարժեք իրականացվում են ներդրումների ներգրավման, արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտներում նախատեսված ծրագրերը, ինչպես նաև ծրագրերի իրականացումն ապահովող միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը, գործարկումը և ծրագրային միջոցառումների հանրահին իրազեկման աշխատանքները:

<u>Հիմնական խնդիրները</u>

I. Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիր.

Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի նպաստելուն ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում, որը միտված է տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով:

Արդյունաբերական քաղաքականության ուղղակի թիրախը արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումն է:

Ծրագրի իրականացման խնդիրները բխում են սույն հայտի 1.1 կետում ներկայացված ՀՀ օրենքներով, որոշումներով և ծրագրերով սահմանված դրույթների պահանջներից: Ստորև ներկայացված են արդյունաբերական քաղաքականության հիմնական թիրախները և իրականացվող քաղաքականության արդյունքում անկնալվող արդյունքները միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում:

	Ցուցիչ	2010թ.	2015թ.	2020թ.
Տնտեսության արտահանելի հատվածի մեծացում	Ապրանքների արտահանման և ՀՆԱ հարաբերակցությունը	11%	16%	19%
	Ընդհանուր արտահանման ծավալը, մլն. ԱՄՆ դոլար	1,011	1,800-2,100	2,800-3,300
Տնտեսության արտահանելի հատվածի դիվերսիֆիկացում	Ապրանքների արտահանման ծավալն, առանց մետաղական հանքահումքային արտադրանքի և ադամանդի, մլն ԱՄՆ դոլար	385	700-900	1,300-1,500
Հայկական ապրանքների մրցունակության բարձրացում	Վերամշակող արդյունաբերության արտադրողականության (մեկ աշխատողի հաշվով ավելացված արժեք) իրական աճ, %		5%	4%

Բացի այդ, մասնավորապես անհրաժեշտ լուծել հետևյալ խնդիրները.

- Համագործակցել մասնավոր հատվածի հետ՝ ոլորտային զարգացման ռազմավարությունների իրականացման նպատակով,
- Նպաստել արտահանման ներուժ ունեցող ընկերությունների ռազմավարությունների և գործառնությունների կատարելագործմանը,
- Բացահայտել արտահանման ներուժ ունեցող նոր ոլորտները և նպաստել այդ ոլորտներում արտահանման կարողությունների ձևավորմանը և զարգացմանը,
- Աջակցել Հայաստանում ավելացված արժեքի ստեղծման հնարավորությունների ընդլայնմանը
- Ներգրավել միջազգային ընկերություններ,
- Ուղղորդել և ձևակերպել խնդիրներ գործարար միջավայրի բարեփոխումների համար.
- Նպաստել գործարարների աջակցման կառույցների կարողությունների զարգացմանը:

II. Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագիր

Համաձայն «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի զբոսաշրջությունը հռչակված է որպես տնտեսության գերակա ճյուղ, որի հիմնախնդիրն է ամրապնդել և բարձրացնել համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը՝ ապահովելով ներգնա և ներքին զբոսաշրջության և զբոսաշրջությունից ստացվող եկամուտների շարունակական աճ նպաստելով աշխատատեղերի քանակի աճին (ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N422-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրի 196 կետ):

Զզբոսաշրջային կենտրոնների հայտարարումը և զարգացումը, նոր զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծումը, զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացումը հանդիսանում են այն խնդիրները, որոնց լուծմանն ուղղված են լինելու առաջարկվող ծրագրային միջոցառումները (ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N422-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրի 197, 198 կետեր):

Միաժամանակ հաշվի առնելով համաշխարհային զբոսաշրջության զարգացման միտումները և նախորդ տարիներին Հայաստանում զբոսաշրջության զարգացման պետական ծրագրերի իրականացման արդյունքների վերլուծությունը՝ շարունակում են արդիական մնալ և լուծում պահանջող մի շարք խնդիրներ՝

1) ապահովել զբոսաշրջության ոլորտում արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացում՝ միջազգային զբոսաշրջային շուկայում պատշաճ ներկայացնել հայրենական զբոսաշրջային արդյունքը: Այս բնագավառում կապահովվի Հայաստանի մասնակցությունը հանրահայտ զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ առնվազն տարեկան 8 ցուցահանդեսի, յուրաքանչյուրին առնվազն 5-8 զբոսաշրջային օպերատորների մասնակցությամբ, յուրաքանչյուր ցուցահանդեսի շրջանակներում յուրաքանչյուրի կողմից առնվազն 5 պայմանավորվածության ձեռքբերում, ինչի արդյունքում կպահպանվի Հայաստան միջազգային զբոսաշրջիկների աճի դինամիկան /այս մասով մոտ 5%/:

Տպագրելով տարեկան մի քանի հազար գովազդային նյութեր, ստեղծելով և վերարտադրելով Հայաստանի զբոսաշրջային արդյունքը գովազդող տեսանյութեր, հաղորդաշարեր կատարելագործվում է գովազդատեղեկատվական համակարգը և զբոսաշրջիկը ստանում է պատշաճ որակի բազմալեզու նյութեր (6 լեզուներով 12000 հատ բրոշյուր և 12000 հատ Հայաստանի քարտեզ), որոնք առավել գրավիչ են դարձնում հայկական զբոսաշրջային արդյունքը: Գովազդային նյութերը հազարավոր հավանական զբոսաշրջիկների ուշադրություն են գրավում, որոնց մի մասը հետագայում այցելում են Հայաստան (հստակ նշել այդ զբոսաշրջիկների թիվը հնարավոր չէ):

2) ապահովել հայրենական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը միջազգային զբոսաշրջային շուկայում:

- 2013թ. նոյեմբերի 21-ի ՀՀ կառավարության նիստի N48 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Համաշխարհային զբոսաշրջային շուկայում ՀՀ մրցունակության բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, որի ընդունումը և ծրագրի համատեղ և արդյունավետ իրականացումը կնպաստի «Համաշխարհային զբոսաշրջության և ճամփորդության մրցունակության զեկույցում» ՀՀ դիրքի բարելավմանը և զբոսաշրջության մրցունակության համաթվով Հայաստանը կարող է կրկին առաջընթաց արձանագրել:

- Սույն խնդրի լուծմանն ուղղված իրականացվում են հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման և պարբերական գնահատման գործընթացների շրջանակներում տարեկան մի քանի հյուրանոցային տնտեսության օբյեկտ կստանան որակավորման վկայականներ, ինչը 5%-ով կգերազանցի նախորդ տարիներին որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվը, միաժամանակ ապահովելով հյուրանոցային ծառայությունների որակի բարձրացում:

3) ապահովել Հայաստանի ինտեգրումը համաշխարհային զբոսաշրջային շուկա, ակտիվ և արդյունավետ միջազգային համագործակցությունը: Հայաստանի անդամակցությունը ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային կազմակերպությանը ենթադրում է ակտիվ մասնակցություն վերջինիս կողմից իրականացվող ծրագրերին և կազմակերպվող միջոցառումներին՝ Գլխավոր ասամբլեաներ, մի շարք հանձնաժողովներ, տարբեր այլ միջոցառումներ: Ենթադրվում է նաև ակտիվ մասնակցությունը մի շարք այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների զբոսաշրջային ոլորտի միջոցառումներին, ինչպես նաև զարգացման ծրագրերին /ԱՊՀ, ՍԾՏՀ և այլ/: Այս միջոցառման քանակական արտահայտումը կարելի է տալ նշված միջոցառումներին մասնակցության ապահովմամբ՝ տարեկան մոտ 4 միջոցառման:

Արդյունավետ օգտագործելով Հայաստանի զբոսաշրջային ներուժը, ակտիվորեն զարգացնելով և կատարելագործելով ոլորտի գովազդատեղեկատվական ապահովման համակարգը, ամրապնդելով նյութական բազան, կրճատելով ոլորտում մասնագետ կադրերի պակասը և ձեռք բերելով զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ աջակցություն ոչ պետական այլ աղբյուրներից՝ կապահովվեն ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվաքանակի տարեկան աճ միջինը 10%-ի չափով, կստեղծվեն պայմաններ Հայաստանի ամբողջ տարածքում մշակութային և բնական ժառանգության պահպանման և վերականգնման համար, մարզերում և համայնքներում կստեղծվեն զբոաշրջության և հանգստի կենտրոններ:

III. Պետական աջակցություն Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման ծրագիր

Սույն ծրագրի իրականացման խնդիրներից է Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագրի, Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագրի, ինչպես նաև Հայաստանի զարգացման հիմնադրամի բնականոն աշխատանքների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որով ապահովելու է Հիմնադրամի աշխատակիցների վարձատրությունը և վարչական ծախսերի փոխհատուցումը:

16.5.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

I. Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում նպաստել տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացմանը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև արդյունաբերության ոլորտի մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացմանը: Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի 2017-2019 թվականներին ՀՆԱ-ում արդյունաբերության արտադրանքի ծավալների առաջանցիկ աճին:

Մասնավորապես ակնկալվում է հետևյալ նպատակների իրականացում.

1) Նպաստել Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված ոլորտային ռազմավարությունների գործողությունների ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

2) Պետական աջակցության գործիքների միջոցով խթանել արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը:

3) Նպաստել արտահանելի հատվածի ընդլայնմանը, մասնավորապես, արտահանման տեսականու և շուկաների դիվերսիֆիկացմանը:

4) Աջակցել տեղական արտադրանքի ներկայացվածությանն արտաքին շուկաներում:

5) Նպաստել Հայաստանի Հանրապետության մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացմանը և ներդրումային ակտիվության բարձրացմանը:

Ծրագրի իրականացումը նախատեսում է հետևյալ արդյունքները՝

1) տնտեսության արտահանելի հատվածի մեծացում և դիվերսիֆիկացում.

2) հայկական ապրանքների մրցունակության բարձրացում.

3) գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստուման աջակցության ցուցաբերում:

4) պետական և մասնավոր հատվածների փոխշահավետ համագործակցություն:

II. Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագիր

Համահունչ ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511 -Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2.2.5. Զբոսաշրջություն մասի, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 -Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 9.2 կետի, ՀՀ կառավարության որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին, ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ի արձանագրային որոշմամբ հաստատված «Զբոսաշրջության զարգացման հայեցակարգի»՝ զբոսաշրջության ոլորտի 2017-2019թթ. պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել զբոսաշրջության նեդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային տնտեսական զարգացման գործընթացում՝ պայմանավորված.

1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,

2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,

3) աշխատատեղերի ստեղծմամբ:

Զբոսաշրջության ոլորտում 2017-2019թթ. Հայաստանի զբոսաշրջային արդյունքը նորովի կներկայացվի միջազգային զբոսաշրջային շուկայում: Կամրապնդվի և կկատարելագործվի համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և ապահով երկրի նկարագիրը:

III. Պետական աջակցություն Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման ծրագիր

Ծրագրի հիմնական նպատակն է Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագրի, Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագրի, ինչպես նաև Հայաստանի զարգացման հիմնադրամի բնականոն աշխատանքների ապահովման ուղղված միջոցառումների իրականացման համար Հիմնադրամը համալրել որակյալ մասնագետներով ծրագրային միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1.	Արտահանվող ապրանքների ծավալների ավելացման նպաստում, արտահանելի նոր ապրանքատեսակների բացահայտում, այդ թվում՝ նպատակային շուկաներում հայկական ապրանքների առաջմղման միջոցով, ներդրումների ներգրավման աջակցություն, ֆինանսական մատչելի միջոցների ապահովում՝ արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորման միջոցով, հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացման աջակցություն, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում, արդյունաբերական արտադրանքի որակական մակարդակի և մրցունակության բարձրացում, մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում և վերապատրաստման միջոցառումների իրականացում, հետազոտական աշխատանքների ապահովում:			ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված «Կայուն զարգացման ծրագրի», ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը
2.	Միջազգային զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովում և Հայաստանի շարունակական ինտեգրում միջազգային զբոսաշրջային շուկա			ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվող զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրեր, ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 2.2.2.5 կետ, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 -Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 9.2 կետ
3.	Հայաստանի ամբողջ տարածքում մշակութային և բնական ժառանգության պահպանում և վերականգ-նում, Հայաստանի մարզերում զբոսաշրջության և հանգստի կենտրոնների ձևավորում			ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր՝ 198 կետ, ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ին արձանագրային որոշմամբ հաստատված Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ
4.	Զբոսաշրջության զարգացման հայեցակարգից բխող միջոցառումների իրականացում՝ ուղղված զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանն ու զարգացմանը, զբոսաշրջային ռեսուրսների գնահատմանը և գույքագրմանը, նոր զբոսաշրջային ռեսուրսների և գրավչությունների բացահայտմանը և ձևավորմանը, զբոսաշրջային նոր, գրավիչ և մրցունակ փաթեթների ձևավորմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանն ու ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացման ապահովմանը:			ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 13-ին արձանագրային որոշմամբ հաստատված Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ՝ մշակված համահունչ ՀՀ կառավարության ծրագրերին

5.	Զբոսաշրջության ոլորտում որակի համակարգի կատարելագործումը և շահագործում	2017-2019թթ. կշարունակվի հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը, ինչը կապահովի ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում: Համահունչ է ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի 197 կետին:
6.	Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագրի, Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագրի, ինչպես նաև Հայաստանի զարգացման հիմնադրամի բնականոն աշխատանքների ապահովման ուղղված միջոցառումների իրականացման	ՀՀ կառավարության 27.05.2014թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշմամբ հաստատված 4-րդ գլխի 8-րդ և 9-րդ կետերը:

16.5.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)</u>

I. Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիր

ՀՀ կառավարության կողմից հաստատված արդյունաբերության ոլորտի ռազմավարությունը ներառում է արդյունաբերական քաղաքականության իրականացմանը հիմնական կենտրոնացման ոլորտների նախորոշումը և համապատասխան ոլորտային ռազմավարությունների իրականացումը:

ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ գերակա հայտարարված ուղղությունների հետ միջոլորտային փոխազդեցությունները (սիներգիա) նպաստելու են նախաձեռնությունների ազդեցության մեծացմանը: Այդ առումով, արդյունաբերական ռազմավարության ոլորտային կիզակետերի ընտրության ժամանակ այն դիտվում է որպես կարևոր գործոններից մեկը: Սույն ռազմավարության ոլորտային հերթականությունների սահմանման համար առանցքային նշանակություն ունեն ՀՀ կառավարության կողմից գերակա սահմանված հետևյալ ոլորտները, որոնցում հաստատվել են ոլորտային զարգացման ռազմավարությունները կամ իրականացվում են առանցքային նախագծեր.

- Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ,
- Զբոսաշրջություն,
- Առողջապահություն,

- Կրթություն,
- Գյուղատնտեսություն:

Ռազմավարությունը ենթադրում է պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում նախաձեռնությունների համակարգված և ներդաշնակ գործունեություն:

Ռազմավարության իրականացման հիմնական կառույցներն ու խորհրդակցական մարմիններն են.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը,
- Ոլորտի ընկերությունների շահերը ներկայացնող կառույցներ,
- Հայաստանի զարգացման հիմնադրամ,

Ռազմավարությամբ նախանշված արտահանման տեսանկյունից առավել հեռանկարային համարվող ոլորտներից՝ դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, ճշգրիտ ճարտարագիտություն, կոնյակագործություն և գինեգործություն, թեթև արդյունաբերություն (տեքստիլ և կոշիկ), ոսկեգործություն, ադամանդագործություն և ժամագործություն, պահածոների, հյութերի և ջրերի արտադրություն ոլորտներ: Նշված ոլորտներում քաղաքականության մշակման և իրականացման համար ձևավորվել են ոլորտային խորհուրդներ, ինչպես նաև ոլորտային խորհուրդների քարտուղարություններ՝ պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավմամբ:

Հարկ է նշել, որ Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագրի շրջանակներում 2017-2019թթ. իրականացվելու հետևյալ միջոցառումները.

1. Գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում ենթածրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում օտարերկրյա ու հայկական ընկերությունների, պոտենցիալ ներդրողների, սփյուռքահայ գործարարների, պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսության, նրա առանձին ոլորտների և կազմակերպությունների զարգացման հնարավորությունների, ներդրումային ծրագրերի ներկայացմանը և քննարկմանը: Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն 5 շնորհանդես և (կամ) համաժողով և (կամ) այլ համանման միջոցառումներ: Ակնկալվում է մշակող արդյունաբերության ոլորտների տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել աջակցություն՝ օտարերկրյա պետությունում մասնակցության համար, կատարված ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում)՝ մինչև 50 տոկոսի չափով՝ ըստ տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված հայտի.

2. արդյունաբերության ոլորտի ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ՝

ա. արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում ենթածրագիրը նախատեսում է արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտների, ինչպես նաև պաշտպանական և ազգային անվտանգության կարիքների համար արտադրություն և (կամ) ճարտարագիտական ծառայություններ իրականացնող կազմակերպություններին «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում: Սուբսիդավորվելու է վարկի տոկոսադրույքի երեք տոկոսային կետին համարժեք գումարը: Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման աջակցություն տրամադրել առնվազն 10 սուբյեկտի,

բ. օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում ենթածրագրի շրջանակում նախատեսվում է մշակող արդյունաբերության ոլորտներում արտադրվող ապրանքների համար արտահանվող երկրի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներմուծման և (կամ) իրացման համապատասխանության սերտիֆիկատների, Մաքսային միության համապատասխանության հայտարարագրերի կամ այլ համարժեք փաստաթղթի (փաստաթղթերի), օտարերկրյա պետությունում դեղերի գրանցման և այլ համարժեք փաստաթղթերի ստացման ու դրանց վերագրանցման, Հայաստանի Հանրապետությունում կենսահամարժեքության փորձաքննության համար կատարված ծախսերի մասով պետական աջակցության ցուցաբերում՝ ծախսերի համաֆինանսավորման 50 տոկոսի չափով: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է աջակցություն տրամադրել կազմակերպություններին առնվազն 12 հայտի համար.

3. հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում.

ա. օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է գովազդային արշավների կազմակերպում, այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում, էլեկտրոնային ռեսուրսների պատվիրում, արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի ձեռքբերում և տրամադրում ընկերություններին, հայկական բրենդների ձևավորման, օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի համտեսների, շնորհանդեսների, մրցույթների ու նորաձևության ցուցադրությունների, «ԷՔՍՊՈ» միջազգային ցուցահանդեսներում Հայաստանի Հանրապետության մասնակցության աշխատանք-

ների կազմակերպման և (կամ) իրականացման, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումների մասնակցության և (կամ) կազմակերպմանն աջակցություն: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է նպատակային շուկաներում և (կամ) Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրանքի առաջմղման առնվազն 5 միջոցառման կազմակերպում և (կամ) իրականացում,

բ. ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է թիրախային շուկաներում և Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպություններին ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրում: Օտարերկրյա պետությունում կամ Հայաստանում ցուցահանդեսներին մասնակցությունը և (կամ) կազմակերպումը կարող են լինել հետևյալ ձևաչափերով՝ միասնական հայկական տաղավարով մասնակցություն. այս դեպքում մասնակցության կազմակերպումն իրականացվում է միասնական տաղավարի սկզբունքով, որի վարձակալության, կառուցապատման, ձևավորման և դրա հետ կապված տպագրական նյութերի, կահույքի և սարքավորումների վարձակալության, մասնակիցների գրանցման ծախսերն իրականացվում են ծրագրի շրջանակներում Հայաստանի հիմնադրամի կողմից: Առանց միասնական տաղավարի մասնակցություն. այս դեպքում տաղավարների ձեռքբերման, կազմակերպչական աշխատանքների իրականացման և մասնակիցների ծախսերի շուրջ 50 տոկոսն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով: Անհատական մասնակցություն. այս դեպքում ընկերությունները, նախապես համաձայնեցնելով հիմնադրամի հետ, մասնակցում են ցուցահանդեսներին՝ ներկայացնելով և հիմնավորելով ծախսերը, ստանում են փոխհատուցում՝ շուրջ 50 տոկոսի չափով: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է աջակցել ընկերություններին՝ առնվազն 10 ցուցահանդեսի մասնակցելու նպատակով: Ցուցահանդեսների կազմակերպման և (կամ) մասնակցության աջակցության տրամադրման կարգը սահմանում է հիմնադրամը,

գ. գործարար կապերի հաստատում ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցության տրամադրում՝ Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա գործարարների, դիստրիբյուտորների, մասնագետների, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների գործարար այցելության, տեղական արտադրողների օտարերկրյա պետություն գործնական այցելությունների կազմակերպման նպատակով: Սույն միջոցառումը կնպաստի աշխատանքային կապերի ստեղծմանը և հնարավոր արտահանման գործընկերների ձեռքբերմանը: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է աջակցել (կազմակերպել) արտահանմանն օժանդակող կառույցների, դիստրիբյուտորների առնվազն 60 ներկայացուցչի այցելությանը Հայաստանի Հանրապետություն և (կամ) տեղական արտադրողների այցելությանը օտարերկրյա պետություն: Ակնկալվում է արդյունաբերական ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել աջակ-

ցություն՝ կատարված ծախսերի փոխհատուցում (համաֆինանսավորում)՝ մինչև 50 տոկոսի չափով.

4. Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է մշակող արդյունաբերության ոլորտների ընկերությունների և ազատ ունկնդիրների կարողությունների զարգացում: Մասնավորապես՝ նախատեսվում է արդիական տեխնոլոգիաների ու նեղ մասնագիտացված ուղղություններով Հայաստանում և (կամ) օտարերկրյա պետությունում ուսուցման ու վերապատրաստման կազմակերպում և անհատական խորհրդատվության տրամադրում՝ ներգրավելով որակավորված մասնագետներ պետական, մասնավոր, գիտական շրջանակներից, այդ թվում՝ օտարերկրյա պետությունից: Ընդ որում՝ դասընթացների իրականացման անհրաժեշտությունը որոշվում է ոլորտի ներկայացուցիչների հետ համաձայնեցված և (կամ) շուկայի պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա: Սույն միջոցառումը կարող է ներառել արտադրության կազմակերպման, մարքեթինգի, մտավոր սեփականության իրավունքի, ֆինանսական հոսքերի կառավարման, ապահովագրության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտների արհեստագործական և այլ մասնագիտական դասընթացների իրականացում: Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է ապահովել առնվազն 3 դասընթացի կազմակերպում.

5. Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է իրականացնել առնվազն 1 հետազոտություն:

Վերոնշյալ միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններին աջակցությունը տրամադրվում է հետևյալ սկզբունքներով՝

1) Վերոնշյալ միջոցառումների 1-ին կետի, 2-րդ կետի «բ» ենթակետի, 3-րդ կետի «բ» (առանց միասնական տաղավարի և անհատական մասնակցություն) և «գ» ենթակետերի մասով ծախսերի փոխհատուցում և (կամ) համաֆինանսավորում՝ մինչև 75 տոկոսի չափով.

2) 2-րդ կետի «ա» պարբերության մասով տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում՝ յոթ տոկոսային կետին համարժեք գումարի չափով:

6. Արտահանման աջակցման խորհրդի որոշումների հիման վրա Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտներին աջակցության տրամադրում:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 475.0-ական մլն դրամ:

II. Պետական աջակցություն զբոսաշրջության ոլորտի միջոցառումների իրականացման ծրագիր

Զբոսաշրջության ոլորտի ծախսային ծրագրերի իրականացման նպատակն է ՀՀ-ում զբոսաշրջության կայուն զարգացումը՝ զբոսաշրջային ծառայությունների որակի բարձրացման, ժամանակակից բարձր արդյունավետ ու մրցունակ զբոսաշրջային արդյունքի ձևավորման ու միջազգային զբոսաշրջային շուկա արտահանման միջոցով: Մասնավորապես, Հայաստանը դարձնել միջազգային շուկայում հաճախելի երկրներից մեկը, Հայաստանի, որպես ներդրումների համար ապահով, զբոսաշրջության համար գրավիչ և ապահով երկրի նկարագրի շարունակական ձևավորումն ու ամրապնդումը համաշխարհային զբոսաշրջային շուկայում:

Ծրագիրը յուրաքանչյուր տարի հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ, որի 2017-2019թթ. ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված կլինեն միջազգային ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճի ապահովմանը, մասնավորապես հայկական զբաս-շրջային արդյունքի դիվերսիֆիկացման և մրցունակության ապահովմանը, Հայաստանի ինտեգրմանը համաշխարհային զբոսաշրջային շուկա:

Նախորդ տարիներին Ծրագրի իրականացումն արդեն իսկ ապահովել է որոշակի արդյունքներ, ինչը նաև շարունակական բնույթ է կրելու 2017-2019թթ.՝ նպաստել ՀՀ կայուն տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, համայնքների համաչափ տնտե-սական զարգացմանը, պետական բյուջե մուտքերի և բնակչության եկամուտների ավելացմանը:

2017-2019թթ. Հայաստանում զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրերի իրակա-նացումը հիմնականում կլուծի հետևյալ խնդիրները.

1) կիրականացվի զբոսաշրջության բնագավառում ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն՝ հայրենական զբոսաշրջային արդյունքը պատշաճ կներկայացվի միջազ-գային զբոսաշրջային շուկայում,

2) կզարգանա միջազգային համագործակցությունը՝ կկատարվեն իրավապայմանագրային պարտավորությունները,

3) կապահովվի հայրենական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը համաշխարհային զբոսաշրջային շուկայում,

4) զբոսաշրջությունը համաչափ կզարգանա ՀՀ մարզերում, ներգրավելով տեղի համայնքների բնակչությունը:

Զբոսաշրջության ոլորտում մարքեթինգային քաղաքականության իրականացման՝ Հայաստանի, որպես ներդրումների համար կայուն և ապահով, զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկիր նկարագրի ձևավորման և միջազգային շուկայում այդ նկարագրի արդյունավետ ներկայացման նպատակով 2001 թվականին հիմնադրվել է «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որը 2001 թվականից մինչև 2010 թվականը իրականացրել է հետևյալ գործառույթները՝ միջազգային

զբոսաշրջային ցուցահանդեսներին Հայաստանի մասնակցության ապահովումը, գովազդային և տեղեկատվական նյութերի մշակումը, տպագրումը և տարածումը, օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջային օպերատորների ճանաչողական այցերի կազմակերպումը, ավանդական տոնակատարությունների կազմակերպումն ու անցկացումը: «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի լուծարման արդյունքում 2010 թվականից զբոսաշրջության ոլորտում մարքեթինգային քաղաքականությունը իրականացնում է «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը», որը 2014թ. լուծարվել է և ստեղծվել է «Հայաստանի զարգացման հիմնադրամը»:

Վերջինս զբոսաշրջության ոլորտում կիրականացնի հետևյալ հիմնական գործառույթները.

1) համաշխարհային, տարածաշրջանային և ներքին շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում,

2) աջակցություն միջազգային և ներքին շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացումը:

ՀՀ կառավարության 2013 թվականի նեյեմբերի 21-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Համաշխարհային զբոսաշրջային շուկայում ՀՀ մրցունակության բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, որի շրջանակներում, ի թիվս այլ միջոցառումների նախատեսված է

1) Զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգի կատարելագործման գործընթացի շրջանակներում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում,

2) Զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրային միջոցառումների, ինչպես նաև պետական մասնավոր համագործակցության շրջանակներում պետական համաֆինանսավորման ընդլայնում:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 188.4–ական մլն դրամ:

III. Պետական աջակցություն Հայաստանի զարգացման հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացման ծրագիր

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է նպաստել ՀՀ տնտեսական զարգացմանը և աջակցել ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումներին, ինչպես նաև աջակցել ընտրված ոլորտներում միջոցառումների իրականացմանը:

Ակնկալվող արդյունքները, մասնավորապես, ներառում են՝

- պետական-մասնավոր համագործակցության խթանման և նախատեսվող միջոցառումների իրականացման միջոցով նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը՝ արդյունաբե-րական ոլորտի արտահանման ծավալների ավելցմանը, Հայաստանը որպես զբոսաշրջության գրավիչ երկրի ճանաչմանը, ներդրումների ծավալների ավելացմանը,

- գերակա ծրագրերի իրականացման միջոցով նպաստել ընտրված թիրախային ոլորտների զարգացմանը,
- ապահովել ՀԶՀ կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ հանրային լայն իրազեկում տեղական և միջազգային շուկաներում,
- ապահովել Հայաստանի առաջմղման քաղաքականություն և բարձրացնել Հայաստանի մասին միջազգային իրազեկվածության աստիճանը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 409.0 –ական մլն դրամ:

16.6 ՀՀ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.6.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը

Հավատարմագրման ոլորտը հանդիսանալով որակի ենթակառուցվածքի համակարգի բաղկացուցիչ մաս՝ էական ազդեցություն ունի ՀՀ տնտեսական զարգացման վրա: Հավատարմագրումը հանրային շահերը ներկայացնող ծառայություն է և նպաստում է առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը, համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը, նախադրյալներ է ստեղծում շուկա մուտք գործող ապրանքների և ծառայությունների բարձր որակի ապահովման համար:

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ-ում համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման ծառայություններ մատուցող միակ մարմինը «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ն է, որը ստեղծվելով ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 19-ի N 890-Ն որոշմամբ՝ իր գործունեությունը սկսել է 2012թ. դեկտեմբերից: Իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ապահովում է հավատարմագրման գործընթացի իրականացումը, մասնավորապես՝ ընդունում, գրանցում է հավատարմագրման հայտը, իրականացնում է հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (համապատասխանության գնահատման մարմինների, այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացված հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն, համապատասխանության գնահատում՝ ըստ ՀԳՄ-ի գտնվելու վայրի, կազմակերպում է տեխնիկական կոմիտեների աշխատանքը, հրավիրում է հավատարմագրման խորհրդի նիստը, որի արդյունքում ընդունվում է որոշում ՀԳՄ-ին հավատարմագրելու, հավատարմագրումը մերժելու, հավատարմագրման ոլորտը ընդլայնելու, կրճատելու, հավատարմագրման վկայագրի

գործողությունը կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու վերաբերյալ: Ձևակերպում, գրանցում է հավատարմագրման վկայագիրը, ապահովում է հավատարմագրված ՀԳՄ-ների պարբերական գնահատման իրականացումը, վարում է հավատարմագրված ՀԳՄ-ների և հավատարմագրման գործընթացում ընդգրկված գնահատողների ու փորձագետների, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների և Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրները և այլն:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի կայացում	Հայաստանի Հանրապետություն, Հավատարմագրման ազգային մարմին, Հավատարմագրման խորհուրդ, համապատասխանության գնահատման մարմիններ, ՀՀ տարածքում ապրանքներ ու ծառայություններ արտադրողները, իրացնողները և ներմուծողները, սպառողները	Ֆինանսական միջոցների հատկացումը կարող է իրականացվել ՀՀ պետական բյուջեից, վարկային միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

Հավատարմագրման ոլորտի վերջին տարիների զարգացման միտումները պայմանավորված են ՀՀ և Եվրոպական միության միջև Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովումով: Անհրաժեշտություն էր առաջացել իրականացնել բարեփոխումներ որակի ենթակառուցվածքների բնագավառում, ՀՀ օրենսդրական դաշտը մոտարկել ԵՄ օրենսդրական դաշտին և ապահովել հավատարմագրման ազգային մարմնի գործունեությունը միջազգային ու եվրոպական պահանջներին համապատասխան:

2014 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկություններ է ներկայացվել հավատարմագրման ոլորտին առնչվող հետևյալ օրենսդրական և իրավական ակտերի մշակման, փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

2. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2010թթ.)» 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշման հիման վրա՝ ՀԱՄ-ում կառավարման համակարգ ներդնելու նպատակով, մշակվել է կառավարման համակարգի ընթացակարգեր՝ ներառյալ ձևեր և քաղաքականություններ:

3. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են միջազգային սեմինարների, խորհրդակցությունների, դասընթացների:

4. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կայքէջի ստեղծման, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների, և Մաքսային Միության տեխնիկական կոնոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների, հայտարարագրերի միասնական ռեեստրների ազգային մասերի ձևավորման ավտոմատացված ծրագրային ապահովման նպատակով, մշակվել է Հավատարմագրման ազգային մարմնի գործառույթների ավտոմատացման համակարգի տեխնիկական առաջադրանքը: Հիմք ընդունելով մշակված տեխնիկական առաջադրանքը, ծրագրավորողների կողմից ստեղծվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կայքէջը (www.armnab.am) և նշված ռեեստրները և տարվում են պահանջվող տեղեկատվության մուտքագրման աշխատանքներ:

2014 թվականին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից հավատարմագրվել են 20 փորձարկման լաբորատորիա, 7 սերտիֆիկացման մարմին և 1 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին:

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից միջազգային չափանիշներին համապատասխան հավատարմագրման համակարգի ձևավորման ուղղությամբ 2015 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկություններ է ներկայացվել հավատարմագրման ոլորտին առնչվող հետևյալ օրենսդրական և իրավական ակտերի մշակման, փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, մասնավորապես՝

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,

- «Հավատարմագրման եվրոպական համագործակցությանը (ՀԵՀ (EA) Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարի մուծման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,

- «Լաբորատորիաների հավատարմագրման միջազգային համագործակցությանը (ԼՀՄՀ (ILAC) Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարի մուծման մասին» որոշման նախագիծ,

- ուսումնասիրվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն կարծիք է ուղարկվել Մաքսային միության «ՄՄ ՏԿ 032/2013 Գերճնշմամբ աշխատող սարքավորումների անվտանգության մասին», «ՄՄ ՏԿ 026/2012 Փոքրածավալ նավերի անվտանգության մասին», «ՄՄ ՏԿ 001/2011 Երկաթուղային շարժակազմի անվտանգության մասին», «ՄՄ ՏԿ 002/2011 Արագընթաց երկաթուղային տրանսպորտի անվտանգության մասին», «ՄՄ ՏԿ 003/2011 Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ,

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացվել են առաջարկություններ 2015թ· հուլիսի 20-ին կայացած Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական միջոցառումների իրականացման խորհրդատվական կոմիտեին կից տեխնիկական կարգավորման և համապատասխանության գնահատման Ենթակոմիտեի երկրորդ նիստի № 16-41/որ արձանագրության վերաբերյալ,

- մասնակցել են Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության շրջանակներում կայացած հանդիպմանը ԵԱՏՄ ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացվել են Եվրասիական տնտեսական միության միասնական տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման հարցերը,

- մասնակցել են Մոսկվայում կազմակերպված ԵԱՏՄ պայմանագրի հավելված 10-ի, 9-րդ կետի համաձայն ԵԱՏՄ հանձնաժողովի կողմից մշակված «Միջլաբորատոր համեմատական փորձարկումների իրականացման կազմակերպման կարգ»-ի նախագծի քննարկմանը: Խորհրդակցության արդյունքում ստորագրվել է արձանագրություն,

- ի կատարումն 2014թ. հունվարի 24-ի «ԱՊՀ անդամ երկրների հավատարմագրման ազգային մարմինների համագործակցության մասին» հուշագրի 1-ին կետում նշված դրույթի՝ մասնակցել են Մոսկվայում կազմակերպված հավատարմագրման տարածաշրջանային կազմակերպության ստեղծման հարցերով ՄՊԽ Աշխատանքային խմբի 3-րդ և հավատարմագրման հարցերով գիտատեխնիկական հանձնաժողովի 36-րդ նիստերի աշխատանքներին: Նիստերի աշխատանքների արդյունքում ստորագրվել են արձանագրություններ,

- մասնակցել են Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, որի ընթացքում քննարկվել են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը, համապատասխանության գնահատման սխեմաները և Մաքսային Միության այլ որոշումներ,

- մասնակցել են Մոսկվայում կազմակերպված «Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության հավատարմագրման համակարգերի մոտարկում» ծրագրի շրջանակներում կազմակերպված կոնֆերանսի աշխատանքներին: Կոնֆերանսի ընթացքում փորձի փոխանակման նպատակով անցկացվել են երկկողմ հանդիպումներ ՌԴ-ի հավատարմագրման մարմնի ներկայացուցիչների հետ, քննարկվել են մի շարք հարցեր կապված հավատարմագրման համակարգի և հավատարմագրման գործընթացի համապատասխանեցմանը միջազգային և տարածաշրջանային պահանջներին: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ քննարկվել են խնդիրներ՝ կապված ՄՄ տեխնիկական կանոնակարգերի շրջանակներում իրականացվող համապատասխանության գնահատման աշխտատանքների հետ և առաջարկվել լուծումներ: Կոնֆերանսի ընթացքում քննարկված հարցերը կօգնեն Հայաստանի Հանրապետությունում

հավատարմագրման ազգային համակարգի բարեփոխման և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման աշխատանքների արդյունքների երկկողմ և բազմակողմ ճանաչման հարցում:

2. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2010թթ.)» 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշման հիման վրա՝ ՀԱՄ-ում կառավարման համակարգ ներդնելու նպատակով, մշակվել և ներդրվել են կառավարման համակարգի ընթացակարգերը՝ ներառյալ ձևերը և քաղաքականությունները:

3. Իրականացվել է 13 փորձարկման լաբորատորիաների և 6 արտադրանքի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N 1313-Ն որոշումը՝ վերջիններս գրանցվել են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում:

4. Գործարկվել է սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների և Մաքսային միության տեխնիկական կոնոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի միասնական ռեեստրները, մասնավորապես ներառվել է՝

1) 716 համապատասխանության հայտարարագիր,

2) 17 համապատասխանության սերտիֆիկատ:

5. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015թ· մայիսի 21-ի N 552-Ն որոշումը, վարվել է ՀՀ տեխնիկական կանոնակարգերին համապատասխան համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրը, մասնավորապես ներառվել է՝

1) 648 համապատասխանության հայտարարագիր,

2) 164 համապատասխանության սերտիֆիկատ:

6. Հիմք ընդունելով «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ վարվել է հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ռեեստրը: Ռեեստրում ներառվել են ՝

1) 14 արտադրանքի սերտիֆիկացման մարմին,

2) 41 փորձարկման լաբորատորիա,

3) 2 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին,

4) 2 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին,

5) 1 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին:

2015 թվականին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից հավատարմագրվել են 15 փորձարկման լաբորատորիա, 5 սերտիֆիկացման մարմին և 3 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմին:

<u>Հիմնական խնդիրները</u>

<u>Հավատարմագրման ոլորտի կարևոր խնդիրներից են՝</u>

- միջազգային չափանիշներին համապատասխան հավատարմագրման ազգային համակարգի ձևավորում,

- հավատարմագրման աշխատանքների արդյունքների՝ հավատարմագրման վկայագրերի և հաշվետվությունների, համապատասխանության սերտիֆիկատների, փորձարկման արձանագրությունների փոխճանաչում,

- արտաքին և ներքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում, ապրանքների մրցունակության բարձրացում և միջազգային շուկայում ինտեգրման նախապայմանների ստեղծում,

- համապատասխանության գործընթացում ընդգրկված փորձագետների մասնագիտական ուսուցման առկա դժվարությունները:

Նշված խնդիրների իրականացումը կապված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության բնագավառի գերակա խնդրի հետ և ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում ամրագրված ընդհանուր տնտեսական խնդիրների և նպատակների հետ:

Նշված խնդիրների իրականացումը կապված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության բնագավառի գերակա խնդրի և ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում ամրագրված ընդհանուր տնտեսական խնդիրների և նպատակների հետ:

16.6.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

<u>Նպատակները</u>

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը միջազգային և եվրոպական, ինչպես նաև Մաքսային միության անդամ-երկրների հավատրամագրման համակարգերին ինտեգրումն է, այդ թվում՝ հավատարմագրման արդյունքների բազմակողմ և երկկողմ ճանաչման (ԲՃՀ, ԵՃՀ) համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցությունը, ինչը կվերացնի առևտրային խոչընդոտները, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, կբացառի նույն ապրանքի կրկնական փորձարկման և կրկնական սերտիֆիկացման անհրաժեշտությունը և կնպաստի տնտեսության զարգացմանը:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Միջազգային, եվրոպական չափանիշներին համապատասխան հավատարմագրման ազգային համակարգի ձևավորում: Միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում: Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության բարձրացում:			«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք, ՀՀ էկոնոմիկայի նախարարության բնագավառի գերակայող ուղղությունները և ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերում ամրագրված ընդհանուր տնտեսական խնդիրները և նպատակները, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությանը հավանություն տալու մասին» 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N1693-Ն որոշում

16.6.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել ՀՀ-ում հավատարմագրման ազգային մարմնի կայացման գործընթացի արդյունավետ իրագործումը, Հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացումը:

Ներկայումս ՀՀ-ում գործում են հավատարմագրված 45 փորձարկման լաբորատորիա, 15 սերտիֆիկացման մարմիններ և 4 տեխնիկական հսկողություն իրականացնող մարմիններ:

Ծրագրի իրականացման 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածի համար նախատեսվել է հատկացնել յուրաքանչյուր տարի 13.9-ական մլն դրամ:

16.7 ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՂ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.7.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը

Տեսչական բարեփոխումների ներդրման նպատակով ստեղծվել է Տեսչական Բարեփոխումների Համակարգման Խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ), որի գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող Խորհրդի քարտուղարություն (այսուհետ՝ Քարտուղարություն): Քարտուղարություն կոչված է օժանդակելու տեսչական բարեփոխումների ներդրման գործընթացին՝ իրականացնելով տեխնիկական և կազմակերպչական աջակցություն, ինչպես նաև պատասխանատու է ստուգում իրականացնող մարմիններում

ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի մշակման և ներդրման, ստուգաթերթերի մշակման, պետություն – մասնավոր հատված երկխոսության կազմակերպման և հետադարձ կապի ապահովման, բարեփոխումների մոնիտորինգի և գնահատման, հանրային կապերի, տեսուչների վերապատրաստման ծրագրերի կազմակերպման համար:

Հայաստանում ընթացող տեսչական բարեփոխումների այս փուլում նախատեսվում է իրականացնել գործող տեսչական համակարգի և իրականացվող ստուգումների օպտիմալացման ծրագիր, որի նպատակն է առավել արդյունավետ տեսչական համակարգի ձևավորումը բոլոր շահառուների տեսանկյունից.

1. Սպառողների համար՝ անվտանգության ապահովում,

2. Տնտեսավարող սուբյեկտների համար՝ կանխատեսելի գործարար միջավայրի ապահովում, զերծ ավելորդ բյուրոկրատիայից և անհարկի ճնշումներից՝ տեսուչ-տնտեսավարող սուբյեկտ հարաբերությունների նոր հարթակում,

3. Պետության համար՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, անվտանգության ապահովման առավելագույն մակարդակի պայմաններում:

Մի շարք զարգացած և զարգացող երկրներում նմանատիպ խնդիրների լուծման համար կիրառվող գործիքները հիմնականում ներառում են օրենսդրական դաշտի վերանայումը և համապատասխան օրենսդրական փոփոխությունները, կառուցվածքային և կառավարման համակարգի բարեփոխումները, տեղեկատվական համակարգի բարելավումը՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, կադրային փոփոխություններն ու մասնագետների որակավորման բարձրացումը:

Տեսչական բարեփոխումներիշարունակականությունը ապահովելու, արդյունավետ և արդիական տեսչական համակարգ ձևավորելու համար ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել իրականացնել տեսչական համակարգի և ստուգումների օպտիմալացման ծրագիրը, որը նպատակ ունի օպտիմալ թվով մարմինների և տեսուչների միջոցով իրականացնել առավել բարձր արդյունավետությամբ ստուգումներ, որոնք կբերեն հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և պետական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Իրականացվող բարեփոխումները հնարավորություն կտան վերահսկողական ռեսուրսը ուղղել բացառապես այն ոլորտները, որտեղ հանրության համար կարող են առաջանալ վտանգներ, այսինքն տեսչական ռեսուրսն ուղղվի բացառապես անվտանգության ապահովմանը: Հաշվի առնելով սահմանափակ ռեսուրսները՝ արդյունավետ տեսչական համակարգ կարելի է ստեղծել համադրելով վերահսկման ենթակա ոլորտների օպտիմալ քանակն ու ռիսկի գնահատման վրա հիմնված ստուգումների համակարգը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակին կարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուց-ման ծավալը
1.	Տեսչական համակարգի օպտիմալացում	Ստուգում իրականացնող պետական մարմիններ, տնտեսավարող սուբյեկտ-ներ,	Ամբողջությամբ
2.	Տեսչական բարեփոխումների մոնիթորինգի անցկացում	Տնտեսավարող սուբյեկտ-ներ, Ստուգում իրականացնող պետական մարմիններ,	Ամբողջությամբ
3.	Ռիսկի վրա ներդրված համակարգի կատարելագործում (մեթոդաբանու-թյունների, ստուգաթերթերի վերա-նայում և թարմացում)	Ստուգում իրականացնող պետական մարմիններ, տնտեսավարող սուբյեկտ-ներ, սպառողներ	Ամբողջությամբ

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

Վերջին երկու տարիների ընթացքում տեսչական բարեփոխումների աշխատանքները հիմնականում ուղղված են եղել տեսչական մարմինների օպտիմալացման կազմակերպման իրավական հիմքերի, ինչպես նաև ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կիրարկման ապահովմանը:

Հիմնական խնդիրները

ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1135-Ն որոշմամբ սահմանված ոլորտային խնդիրներն ընդհանուր առմամբ լուծվել են իրականացվող տեսչական բարեփոխումների ընթացքում, սակայն բարեփոխումների շարունակականությունը ապահովելու, արդյունավետ և արդիական տեսչական համակարգ ձևավորելու համար, ՀՀ կառավարությունը ձեռնամուխ է եղել իրականացնել տեսչական համակարգի և ստուգումների օպտիմալացման ծրագիր, որը սահմանված է ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի թիվ 40-59 արձանագրային որոշմամբ:

ՀՀ տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգում և տեսչական համակարգի օպտիմալացման գործողությունների համառոտ ծրագրում սահմանվել են տեսչական համակարգի առկա հիմնական խնդիրները. այդ թվում՝

- ✓ Տեսչական և քաղաքականություն մշակող մարմինների շահերի բախումները, դրանից բխող բացասական ազդեցությամբ,
- ✓ Տեսչություններում առկա ոչ արդյունավետ կառավարման համակարգերը,
- ✓ Ռեսուրսների ոչ օպտիմալ օգտագործումը,

- ✓ Տեսչական մարմինների գործառույթների համընկնում և կրկնորդումների առկայություն
- ✓ Արդյունավետ բողոքարկման մեխանիզմների բացակայությունը,
- ✓ Գործընթացների կարգավորման բացերը և կարգավորման թերի մեխանիզմները,
- ✓ Տեսչությունների գործառույթների, վերահսկման գործիքների ու մեթոդների ոչ արդիականությունը,
- ✓ Տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ տեսուչների կանխակալ մոտեցումը,
- ✓ Տեսուչների մասնագիտական ցածր պատրաստվածությունը,
- ✓ Տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը,
- ✓ Տեղեկատվության հավաքագրման, մշակման միասնական բազայի, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման միասնական համակարգի բացակայությունը:

Առկա խնդիրները լուրջ խոչընդոտ են հանդիսանում պատշաճ հսկողության իրականացման, հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության և պետական ռեսուսների արդյունավետ օգտագործման համար:

16.7.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները

Նպատակները

Այս փուլում տեսչական բարեփոխումների հիմնական նպատակը օպտիմալացման ծրագրի իրականացումն է, որն ուղղված է լուծում տալու վերհանված հիմնախնդիրներին՝ ձևավորելով նոր արդյունավետ տեսչական համակարգը, որը կպաշտպանի պետության, հասարակության և տնտեսավարող սուբյեկտների շահերը՝ համապատասխանելով միջազգային չափանիշներին:

Ծրագրի նպատակն է տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացումը, որը ֆիսկալ նպատակ չի հետապնդում, այսինքն ստուգում իրականացնող մարմինների արդյունավետությունը չի չափվելու գանձված տուգանքների քանակով ու մեծությամբ:

Ընդհանուր առմամբ ծրագրի նպատակն է՝

1. Պետության համար՝ ռեսուրսների առավել օպտիմալ և արդյունավետ օգտագործում,
2. Գործարարների համար՝ առավել ազատ և ճնշումներից զերծ միջավայրի ապահովում,
3. Սպառողների համար՝ անվտանգության ապահովում:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Տեսչական համակարգի օպտիմիալացման ծրագրի	Տեսչական համա-կարգի օպտիմիա-	Տեսչական համա-կարգի օպտիմիա-	«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օչենք, ՀՕ-254-Ն, ուժի մեջ է

	իրականացում	լացման ծրագրի իրականացում	լացման ծրագրի իրականացում	09.01.2015թ., ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի թիվ 40-59 արձանագրային որոշում:
2	Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործում (մեթոդաբանությունների, ստուգաթերթերի վերանայում և թարմացում)	Տեսչությունների կողմից կատարվող ստուգումների մոնիթորինգի իրականացում	Տեսչությունների կողմից կատար-վող ստուգումների մոնիթորինգի իրականացում	

16.7.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)</u>

2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվող ծրագիրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Տեսչական բարեփոխումների իրականաց-ման 2016 թվականի նախատեսված ծրագրի շարունակությունը, որի նպատակն է տեսչական համակարգի զարգացման պետական աջակցության ծրագրային նպատակների իրականացումը:

Ծրագրի իրականացման համար 2016-2018թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 15.0–ական մլն դրամ:

16.8 «ԳՅՈՒՄՐՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.8.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է ապահովելու Գյումրի և Վանաձոր քաղաքներում տեղե-կատվական և բարձր տեխնոլոգիաների (SS և ԲՏ) ոլորտի հետագա զարգացումը՝ Գյումրիում և Վանաձորում ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծման և զարգացման միջոցով: Ծրագրի միջոցառումներն ուղղված են Գյումրիում և Վանաձորում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը:

Ծրագրի շրջանակում Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոններում կիրակա-նացվեն մասնագետների պատրաստման և կարողությունների շարունակական զարգացմանն ուղղված կարճաժամկետ և երկարաժամկետ ուսումնական ծրագրեր՝ դասընթացների, սեմինար-ների և այլ ձևաչափերով հետազոտական աշխատանքների և արտադրական պրակտիկայի

զուգորդմամբ: Ուսումնական ծրագրերի հիմնական ուղղությունները կլինեն՝ ճարտարագիտություն, մուլտիմեդիա, վեբ ծրագրերի մշակում, ինտերնետային ծրագրերի մշակում, 3D մոդելավորում, մոբայլ լուծումների ծրագրավորում, խաղային ծրագրավորում, համակարգչային ծրագրավորում և այլն:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուներիշրջանակին կարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Տեխնոլոգիական կենտրոնների գործունեության կառավարում	ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, ՀՀ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր	ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից
2.	Ներդրումային ծրագրերի պատրաստում և գործընկերների ներգրավում		ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից
3.	Ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաներ՝ տեղական և միջազգային ճանա-չում ունեցող ընկերությունների հետ		ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից
4.	Ուսումնական դասընթացների անցկացում, գիտահետազոտա-կան (R&D) ծրագրերի իրականացում		ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

2014 թվականին իրականացրած ծրագրերը

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանն ուղղված միջոցառումներ

«Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում» միջոցառման շրջանակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ստեղծման ծրագրի իրականացման աշխատանքների արդյունավետ կազմակերպման, համակարգման և կառավարման միասնականությունն ապահովելու համար 2014թ. հունվարի 9-ի N13-Ն ՀՀ կառավարության որոշմամբ կենտրոնի գործունեության ծրագրի իրականացման գլխավոր օպերատոր է ճանաչվել «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը:

2014թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնը տրամադրում է տեխնոլոգիական աջակցություն և ինկուբացիոն ծառայություններ ինչպես գործող, այնպես էլ սկսնակ կազմակերպություններին և ձեռներեցներին՝ խթանելով վերջիններիս զարգացումը և ներքին ու արտաքին շուկաներ մրցունակ արտադրանքի դուրսբերումը:

Կենտրոնում տեղակայվել են հետևյալ կազմակերպությունները.

– «Դ-Լինկ» (D-Link)- Թայվան

– «Դիջիթըլ Փոմըգրանեթ» (Digital Pomegranate/ITechnology)- ԱՄՆ

– «ՋիԷնՍի-Ալֆա» (GNC Alfa/Rostelecom)- ՌԴ

– «Ի-Վորքս» (E-Works)– Ֆրանսիա

– «Skyline ստուդիա»- ՀՀ

– Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն (GITC)- ՀՀ

– «Գյումրու լեզուների տուն»- ՀՀ

– «Թայմ Փրոդաքշըն»– ՀՀ

2014թ. Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղակայված ուսումնական, հետազոտական և ինկուբացիոն լաբորատորիաներում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ և սեմինարներ հետևյալ հիմնական ուղղություններով՝

– Ճարտարագիտություն (ներառյալ՝ հեռահաղորդակցություն և ընդունիչներ, էլեկտրատեխնիկայի, նյութերի դիմադրության հիմունքներ, կապ, ցանցային անվտանգություն, ալգորիթմներ, տվյալների անվտանգություն և այլն),

– Մուլտիմեդիա (ներառյալ՝ Adobe Photoshop, CoralDraw, 3D max, Auto CAD, AE, Rhino, Basics of Art, խաղեր և այլն),

– Web (ներառյալ՝ Web անիմացիոն ծրագրավորում (Flash, Silverlight, HTML5), համակարգչային և ցանցային խաղեր և այլն),

– Մոբայլ (ներառյալ՝ Android և IOS ծրագրավորում, անիմացիա, խաղեր և այլն),

– Գործարար հմտություններ (ներառյալ՝ ծրագրերի կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, հաշվապահություն, օտար լեզուներ և այլն),

– Մաքուր տեխնոլոգիաներ (Clean Technologies, Entrepreneurship, Innovation)**:**

Նշված դասընթացների և սեմինարների շրջանակում 2014թ. պատրաստվել և վերապատրաստվել են ավելի քան 1100 մասնագետներ:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի շրջանակում աքսելերացիոն ծրագրեր են իրականացվել Մուլտիմեդիայի, CleanTech, Ճարտարագիտության լաբորատորիաների, ինչպես նաև Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, mLab ECA-ի, ANEL և այլ կենտրոնների հետ համատեղ, որոնց շրջանակում թիմերը ստացել են գործնական և ֆինանսական աջակցություն՝ իրենց գաղափարների առաջմղման, բիզնես նախաձեռնությունների զարգացման, աշխատաթիմերի ձևավորման և ընդլայնման, սկսնակ կազմակերպությունների առաջխաղացման ուղղությամբ:

2014թ. կենտրոնում իրականացվել է «Ամառային դպրոց» ծրագիրը, որի շրջանակում ավագ դպրոցների և վարժարանների աշակերտներն դասավանդվել են «Ցանցային հիմունքներ», «Ծրագրավորման հիմունքներ», «Անգլերեն» առարկաները: Ծրագրի նպատակն է ուղղորդել աշակերտներին տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտության ընտրության հարցում:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության շրջանակում 2014թ. ձևավորվել են ավելի քան 10 թիմեր:

Կենտրոնում բիզնես աջակցություն ու խորհրդատվություն է տրամադրվել շուրջ 210 ընկերությունների, թիմերի և անհատ ձեռներեցների:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Գյումրիում առաջին միջազգային խոշոր տեխնոլոգիական «iGyumri» համաժողովը: Կազմակերպվել են «Ինովացիոն ծրագրեր և Startup բիզնեսներ», «Quick Start», «Քո տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունը Հայաստանում», «Եվրոպայի օրերը Հայաստանում», «Կերպարների մշակում, ZBrush-3dmax էքսպորտ», «Low poly modeling 3D Max,Կերպարների մշակում, Z-BRUSH-ից 3D MAX ինպորտ և հակառակը», «Ձեռնարկատիրական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում», «Ձեռներեցության հիմունքներ», «Գյումրի քաղաքի զարգացման ծրագիր» և այլ խորագրերով սեմինարներ:

«Պահպանման ծախսեր» միջոցառման շրջանակում Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գրասենյակի պահպանման համար կատարվել են կոմունալ և այլ ծառայությունների ձեռք բերման, աշխատանքային արտահագուստի գնման, տնտեսական և գրասենյակային ապրանքների գնման, ինչպես նաև շենքի և սարքավորումների ընթացիկ շահագործման, սպասարկման և վերանորոգման ծախսեր:

2015 թվականին իրականացրած ծրագրերը

«Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում»

Միջոցառման շրջանակում 2015թ. շարունակվել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի բնականոն գործունեությունը: Կենտրոնը տրամադրում է տեխնոլոգիական աջակցություն և ինկուբացիոն ծառայություններ ինչպես գործող, այնպես էլ սկսնակ կազմակերպություններին և ձեռներեցներին՝ խթանելով վերջիններիս զարգացումը և ներքին ու արտաքին շուկաներ մրցունակ արտադրանքի դուրսբերումը:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում ներկայումս տեղակայված են 23 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: Կենտրոնում գործում է նաև «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի Գյումրու մասնաճյուղը, որը զբաղեցնում է կենտրոնի 4-րդ հարկի տարածքի հիմնական մասը: Կենտրոնի առկա կիրառելի տարածքի զբաղվածությունը կազմում է 99%:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղակայված «Դ-Լինք» ընկերությունն ընդլայնվել է որպես տարածաշրջանային հետազոտական կենտրոն և տեղակայվել է կենտրոնի հարևանությամբ կառուցված 860ք.մ. մակերեսով առանձին և հարմարավետ շենքում՝ ներգրավելով լրացուցիչ տեղական մասնագետներ:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի տարածքում տեղակայված ուսումնական, հետազոտական և ինկուբացիոն լաբորատորիաներում՝ 3 Ճարտարագիտության, Մուլտիմեդիայի, Տեղեկատվական տեխնոլոգիաների և Մաքուր տեխնոլոգիաների (Cleantech) լաբորատորիաներում, իրականացվել են ուսումնական և պրակտիկ ծրագրեր:

2015թ. կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ և սեմինարներ հետևյալ հիմնական ուղղություններով՝

– ճարտարագիտություն (ներառյալ՝ հեռահաղորդակցություն և ընդունիչներ, էլեկտրատեխնիկայի, նյութերի դիմադրության հիմունքներ, կապ, ցանցային անվտանգություն, ալգորիթմներ, տվյալների անվտանգություն և այլն),

– մուլտիմեդիա (ներառյալ՝ Adobe Photoshop, Corel Draw, 3D max, Auto CAD, AE, Rhino, Basics of Art, խաղեր և այլն),

– Web (ներառյալ՝ Web անիմացիոն ծրագրավորում (Flash, Silverlight, HTML5), համակարգչային և ցանցային խաղեր և այլն),

– մոբայլ (ներառյալ՝ Android և IOS ծրագրավորում, անիմացիա, խաղեր և այլն),

– գործարար հմտություններ (ներառյալ՝ ծրագրերի կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, հաշվապահություն, օտար լեզուներ և այլն),

– մաքուր տեխնոլոգիաներ (Clean Technologies, Entrepreneurship, Innovation)**:**

2015թ. օգոստոսին կենտրոնում մեկնարկել է «Ամառային դպրոց» ծրագիրը, որի շրջանակում ավագ դպրոցների և վարժարանների աշակերտների համար կազմակերպվել են վեբ ծրագրավորման (HTML, CSS, Adobe Photoshop, Corel Draw) և «Kodu» ծրագրավորման միջավայրում խաղերի պատրաստման դասընթացներ: Ծրագրի նպատակն է ուղղորդել աշակերտներին տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտության ընտրության հարցում:

Կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ նաև Գյումրու դպրոցների աշակերտների համար: Մասնավորապես, ս.թ. մայիս-հունիս ամիսներին 7-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպվել են «Kodu» ծրագրավորման դասընթացներ: Դասընթացների ընթացքում աշակերտները սովորել են ծրագրավորման հիմունքներ, խաղերի և անիմացիաների պատրաստում, ալգորիթմական մտածելակերպ և ձեռք են բերել թիմում աշխատելու ունակություն:

Կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացներին մասնակցել են 703 ուսանողներ և մասնագետներ:

Ձեռներեցության զարգացման նպատակով աշխատանքներ են իրականացվել Գյումրու SS կենտրոնի ուսանողների հետ տեխնոլոգիական թիմեր ստեղծելու ուղղությամբ, որի արդյունքում ձևավորվել են 5 թիմեր, որոնցից յուրաքանչյուրի հետ աշխատանքներ են տարվել իրենց գաղափարների առաջմղման ուղղությամբ:

Համաշխարհային բանկի «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի շրջանակում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կողմից նախաձեռնվել են Գյումրու համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթները, որոնց արդյունքում հաղթող ճանաչվեցին 12 ծրագրեր Գյումրիից: Արդեն իսկ հաղթող թիմերը հիմնել են ընկերություններ, որոնք իրենց գործունեությունն են ծավալում Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում:

«Հայաստանում մաքուր տեխնոլոգիաների գլոբալ ինովացիոն ծրագիր ՓՄՁ-ների համար» ծրագրի շրջանակում կազմակերպվել են 8-շաբաթյա ինովացիոն բիզնես գաղափարների մշակման և ձեռներեցության դասընթացներ Գյումրու համալսարանների և Երևանի պետական համալսարանի ուսանողների համար: Ծրագրի շրջանակում ձևավորվել են 29 ուսանողական թիմեր:

2015թ. ապրիլին մեկնարկել է «Հայաստանում մաքուր տեխնոլոգիաների գլոբալ ինովացիոն ծրագիր ՓՄՁ-ների համար» մրցույթը: Արդյունքում, հաղթող ճանաչվեց 4 թիմ, որոնք արժանացան դրամական մրցանակների՝ իրենց տեխնոլոգիաների նախատիպերը մշակելու համար:

Կենտրոնում բիզնես աջակցություն ու խորհրդատվություն է տրամադրվել շուրջ 135 ընկերությունների, թիմերի և անհատ ձեռներեցների:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես, «ԲարՔեմփ Գյումրի» համաժողովը, Գյումրու զարգացման ֆորումը, «Մաքուր տեխնոլոգիաներ և վերականգնվող էներգետիկա», «Տուրիզմը Հայաստանում և համագործակցություն» աշխատաժողովները, «Մայքրոսոֆթի համապարփակ առաջարկ Գյումրու բարձրագույն կրթական հաստատությունների համար», «Արդյունավետ ստարտափի սկզբունքները» սեմինարները, «Դիջիթըլ Փոմըգրանեթ» ընկերության կողմից ստեղծված «Քայլարշավ Գյումրիում» բջջային հավելվածի շնորհանդեսը, «Ինչ, որտեղ, երբ» ինտելեկտուալ խաղի հայաստանյան առաջնությունը և այլն:

«Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում»

Հաշվի առնելով Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հիմնման հաջողված մոդելը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ համատեղ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում իրականացնում է համանման տեխնոլոգիական կենտրոնի ստեղծման ծրագիր: Ծրագրի նպատակն է Վանաձոր քաղաքում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնի արդյունավետ գործունեության ապահովումը, որը կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, նոր ընկերությունների ստեղծմանը կամ ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև բիզնես աջակցության և խորհրդատվության տրամադրմանը: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի աշխատանքային տարածքն իրենից ներկայացնելու է միջազգային պահանջներին բավարարող տարածք, որը

յուրօրինակ միջավայր կիանդիսանա կրթական, հետազոտական, գործարար և ներդրումային արժեշղթայի ձևավորման համար:

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման նպատակով Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակում ավարտվել են կենտրոնի նախագծային աշխատանքները, որի հիման վրա հայտարարվել է շինարարական կազմակերպության ընտրության մրցույթ: Մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Ախուրյանի կոոպշին» ՍՊԸ և «Ագաթ-777» ՍՊԸ համատեղ ձեռնարկությունը: Արդեն իսկ սկսվել են կենտրոնի շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2016 թվականի հունիսին:

Նախքան հիմնական տարածքի գործարկումը կենտրոնն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի կողմից տրամադրված ժամանակավոր աշխատանքային տարածքում: Ներկայումս իրականացվում են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետագա բնականոն գործունեության ապահովմանն ուղղված մի շարք նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես, կենտրոնին հատկացված ժամանակավոր աշխատանքային տարածքում հիմնվել են ՏՀՏ և ճարտարագիտության ոլորտների ուղղվածությամբ ուսումնական լաբորատորիաներ, պատրաստվել և վերապատրաստվել են 787 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ, առնվազն 51 թիմերի, սկսնակ և գործող ընկերությունների տրամադրվել են բիզնես աջակցության ու խորհրդատվական ծառայություններ: Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհների ծրագրի շրջանակում դրամաշնորհ են ստացել «Իվոքա», «Էլտիդա Էլեկտրոնիքս», «Ֆայն Ինվեստ» և «Անոդ» ընկերությունները:

2015թ. օգոստոսին կենտրոնում մեկնարկել է «Ամառային դպրոց» ծրագիրը, որի շրջանակում Վանաձորի դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են վեբ ծրագրավորման (HTML, CSS, Adobe Photoshop, Corel Draw) և «Kodu» ծրագրավորման միջավայրում խաղերի պատրաստման դասընթացներ: Ծրագրի նպատակն է ուղղորդել աշակերտներին տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտության ընտրության հարցում:

2015թ. դեկտեմբերի 12-13-ին կազմակերպվել է «Հեքըթոն[ՅԱՆ] մանկություն 2015» նորարար գաղափարների և ծրագրավորման մրցույթը, որին մասնակցության հայտ են ներկայացրել ավելի քան 70 թիմ, որոնցից 18-ը՝ Վանաձորից: Մրցույթի արդյունքում մշակվեցին տարբեր բնագավառներում մի շարք պատրաստի ծրագրերի նախատիպեր, հավելվածներ և լուծումներ, որոնք հայաստանյան և միջազգային շուկա դուրս գալու ներուժ ունեն:

<u>Հիմնական խնդիրները</u>

Ծրագրի խնդիրներն են՝

- ազգային ինովացիոն համակարգի ձևավորում և համապատասխան սկզբունքների մշակում,

– բարելավել գործարար միջավայրը, բարձրացնել գործարար ծառայությունների (բիզնես-կրթության, տեղեկատվության, խորհրդատվության և այլն) տրամադրման հնարավորությունները Գյումրու և Վանաձորի ձեռներեցների համար,

– SS և ԲՏ ոլորտներում տեղական արտադրողների շահերի պաշտպանություն, ապրանքների մրցունակության բարձրացում և միջազգային շուկայում ինտեգրման նախապայմանների ստեղծում,

- մարզային բնակչության SS և ԲՏ ոլորտների մասնագիտական և ձեռնարկատիրական ունակությունների ձևավորում:

16.8.2. Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

Ծրագրի իրականացման նպատակը Գյումրի և Վանաձոր քաղաքներում ժամանակակից գիտելիքահենք և ինովացիոն ենթակառուցվածքներով տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովումն է, որը կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, նոր ընկերությունների ստեղծմանը կամ ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև բիզնես աջակցության և խորհրդատվության տրամադրմանը:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Գյումրի և Վանաձոր քաղաքների սոցիալ-տնտեսական ու բիզնես միջավայրի զարգացման նախադրյալների ստեղծում, բարձր տեխնոլոգիական աշխատատեղերի ստեղծում, համապատասխան կրթական ծրագրերի միջոցով մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում՝ Գյումրին և Վանաձորը դիտարկելով որպես ազգային ինովացիոն համակարգի բաղկացուցիչ մասեր			«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, 7-րդ հոդվածի դ) կետի, Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2011թ.հունվարի 26-ին ստորագրված «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագիր» N7963-AM վարկային համաձայնագրի, ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի «**Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին**» N1515-Ն որոշման 15-րդ կետի 8-րդ ենթակետի, ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ի «Գլխավոր օպերատոր ճանաչելու, գույքի նվիրատվության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N1203-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N1341-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N13-Ն որոշման, ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 12-ի «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2015 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N101-Ա որոշման, ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի «Անշարժ գույք հետ վերցնելու և

		գլխավոր օպերատոր ճանաչելու մասին» N227-Ա որոշման:

16.8.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Ծրագրի շրջանակում նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը, որոնք կնպաստեն Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեության ապահովմանը:

1) Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում -

Միջոցառման շրջանակում նախատեսվում է կենտրոնի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովումը: Ներգրավված մասնագետները կմասնակցեն կենտրոնի կողմից իրականացվող բոլոր ծրագրերին, մասնավորապես, նոր ընկերությունների հիմնման աշխատանքներին, գործարար կապերի հաստատմանը, թիմերի և ընկերությունների համար խորհրդատվության տրամադրմանը, գործունեության բիզնես պլանավորման փաստաթղթերի մշակմանը, միջոցառումների կազմակերպմանը և այլն: Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակում ակնկալվում է ուսումնական դասընթացների անցկացում, տեխնոլոգիական մասնագետների պատրաստում և վերապատրաստում, նոր ընկերությունների ներգրավում, բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:

Ըստ տարիների ակնկալվող արդյունքներն են.

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի 2017-2019թթ. միջոցառումների արդյունավետ կազմակերպում, տարեկան առնվազն 500 մասնագետների պատրաստում և վերապատրաստում, առնվազն 20 թիմերի և ընկերությունների համար բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում և/կամ միջոցառումների կազմակերպում:

Այս միջոցառումը նախատեսում է 2017-2019թթ. Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի աշխատակիցների վարձատրություն և գրասենյակի պահպանման համար համապատասխան ծախսեր:

2) *Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի գործունեության կառավարում*- Միջոցառման շրջանակում նախատեսվում է կենտրոնի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում: Ներգրավված մասնագետները կմասնակցեն կենտրոնի կողմից իրականացվող բոլոր ծրագրերին, մասնավորապես, նոր ընկերությունների հիմնման աշխատանքներին, գործարար կապերի հաստատմանը, թիմերի և ընկերությունների համար խորհրդատվության տրամադրմանը, գործունեության բիզնես պլանավորման փաստաթղթերի մշակմանը, միջոցառումների կազմակերպմանը և այլն: Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակում ակնկալվում է ուսումնական դասընթացների անցկացում, տեխնոլոգիական մասնագետների պատրաստում և վերապատրաս-

տում, նոր ընկերությունների ներգրավում, բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:

Ըստ տարիների ակնկալվող արդյունքներն են.

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի 2017-2019թթ. միջոցառումների արդյունավետ կազմակերպում, կրթական ծրագրերի մշակում և իրականացում, առնվազն 500 տեխնոլոգիական մասնագետների պատրաստում և վերապատրաստում, առնվազն 20 թիմերի և ընկերությունների համար բիզնես աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:

Այս միջոցառումը նախատեսում է 2017-2019թթ. տեխնոլոգիական կենտրոնի աշխատակիցների վարձատրություն և գրասենյակի պահպանման համար համապատասխան ծախսեր:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 152.0–ական մլն դրամ:

16.9 «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.9.1. Ծրագրի ընդհանուր նկարագիրը

ՀՀ ներդրումային քաղաքականությունը, ներդրումներին աջակցությունը ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է և ամրագրված է ՀՀ կառավարության գործունեության ծրագրում:

Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը, և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի ապահովմանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակում	Տնտեսավարող սուբյեկտներ,պետական մարմիններ	ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից
2.	Ներդրումների և ներդրողների պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակում և կատարելագործում	Տնտեսավարող սուբյեկտներ,պետական մարմիններ	ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից

3.	Ազատ տնտեսական գոտիների ձևավորման նպատակով համապատասխան քաղաքականության մշակում և վերանայում, օրենսդրական դաշտի բարելավում	Տնտեսավարող սուբյեկտներ,պետական մարմիններ	ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից
4.	ՀՀ-ում պետական-մասնավոր գործընկերության գործիքի ներդրման և կիրառման արդյունավետության բարձրացմանն նպաստելը և այդ գործիքի միջոցով ենթակառուցվածքների զարգացումն ապահովելը	Տնտեսավարող սուբյեկտներ,պետական մարմիններ	ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև այլ աղբյուրներից

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

ՀՀ իրական հատվածում 2013-2015թթ. կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերը, մլն ԱՄՆ դոլար

	2013		2014 հունվար-դեկտեմբեր		2015 հունվար-սեպտեմբեր	
	ներդրում	ՕՈՒՆ	ներդրում	ՕՈՒՆ	ներդրում	ՕՈՒՆ
Ընդամենը	**597,4**	**271,2**	**2 017.7**	**840.9**	**296.3**	**262.0**
աճ, %	-20.5	-52.2	2014թ.վիճակագրությունը համադրելի չէ նախորդների հետ՝ պայմանավորված ՀՀ ԱՎԾ կողմից մեթոդաբանության փոփոխությամբ		Սկսած 2015թ.-ից ԱՎԾ կողմից հրապարկվում են ընդհանուր ներդրումների զուտ հոսքերը, ինչի հետևանքով 2015թ. Վիճակագրությունը համադրելի չէ նախորդների հետ	

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսության իրական հատվածում իրականացված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերը կազմել են 296.3 մլն ԱՄՆ դոլար՝ գերազանցելով 2014 թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշը մոտ 80 մլն ԱՄՆ դոլարով: ՕՈՒՆ-ի զուտ հոսքերը 2015թ. ինն ամսվա կտրվածքով կազմել են մոտ 262.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով մոտ 38 մլն ԱՄՆ դոլարով:

2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումները հիմնականում իրականացվել են՝ Շվեյցարիայից՝ 93.4 մլն ԱՄՆ դոլար (աճը կազմել է 82.3 մլն ԱՄՆ դոլար), Գերմանիայից՝ 62.2 մլն ԱՄՆ դոլար (աճ՝ 57.8 մլն ԱՄՆ դոլար), Լյուքսեմբուրգից՝ 59 մլն ԱՄՆ դոլար (աճ՝ 44.5 մլն ԱՄՆ դոլար), Արաբական Միացյալ Էմիրություններից՝ 21 մլն ԱՄՆ դոլար (աճ՝ 21 մլն ԱՄՆ դոլար), Ֆրանսիայից՝ 20.5 մլն ԱՄՆ դոլար (աճ՝ 17.5 մլն ԱՄՆ դոլար), Միացյալ Նահանգներից՝ 16.5 մլն ԱՄՆ դոլար (աճ՝ 16 մլն ԱՄՆ դոլար), Իտալիայից՝ 5.8 մլն ԱՄՆ դոլար (աճ՝ 5.1 մլն ԱՄՆ դոլար) և Ռուսաստանից՝ 29.8 մլն ԱՄՆ դոլար (նվազում՝ 50 մլն ԱՄՆ դոլար):

Վերոնշյալ ներդրումները գլխավորապես ուղղվել են տնտեսության հետևյալ ոլորտներ՝ հանքագործական արդյունաբերություն՝ (137.2 մլն ԱՄՆ դոլար), էներգետիկա (մոտ 78.1 մլն ԱՄՆ դոլար), մշակող արդյունաբերություն (64.3 մլն ԱՄՆ դոլար), մանրածախ և մեծածախ առևտուր՝ (33.1 մլն ԱՄՆ դոլար), տեղեկատվություն և կապ (24.0 մլն ԱՄՆ դոլար) և գյուղատնտեսություն (մոտ 11.1 մլն ԱՄՆ դոլար): Զգալի աճ է արձանագրվել, մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության (աճ՝ 119.8 մլն ԱՄՆ դոլար), հեռահաղորդակցության (աճ՝ 26.8 մլն ԱՄՆ դոլար), հիմնային մետաղների արտադրության (աճ՝ 18.4 մլն ԱՄՆ դոլար), դեղագործական արտադրանքի արտադրության (աճ՝ 11 մլն ԱՄՆ դոլար), սննդամթերքի արտադրության (աճ՝ 1.3 մլն ԱՄՆ դոլար) և այլ ենթաոլորտներում:

2015թ. դրությամբ ՀՀ-ում գրանցված է օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ մոտ 6000 ձեռնարկություն:

<u>Հիմնական խնդիրները</u>

Գործարար և ներդրումային միջավայրի անընդհատ բարելավումը նախատեսվող ժամանակահատվածում կշարունակի լինել զբաղվածության աճին ուղղված պետական շրջանակային քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը և ուղղված կլինի գործարարությամբ զբաղվելը և ներդրումներ իրականացնելը դյուրինացնելուն ու անհարկի պետական միջամտությունները էականորեն կրճատելուն: Օտարերկրյա ռազմավարական ներդրումների ներգրավման տեսանկյունից կարևոր է նաև ներդրողների շահերի պաշտպանության մակարդակի հետևողական աճը:

Այդ առումով կարևորվում է Հայաստանի Հանրապետության ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագործումը, մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության զարգացման ներկա փուլում չափազանց կարևոր է հռչակել և օրենսդրորեն ամրագրել հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմաններ, թե՛ օտարերկրյա և թե՛ տեղական ներդրողների համար, անհրաժեշտություն է դառնում ներդրումների մասին նոր օրենքի ընդունումը, որը հարմարեցված կլինի բիզնեսի ծավալման արդի պայմաններին և բովանդակությանը, քանի որ 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի ընդունման պահից մինչ օրս գործարար միջավայր հասկացությունը զգալիորեն ընդլայնվել է և կրել է բովանդակային փոփոխություններ: Ներդրումները խթանելու նպատակով անհրաժեշտ է նաև ներդնել ներդրողների խրախուսման գործուն համակարգ:

16.9.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

Ծրագրի նպատակն է Հայաստանում տեսչական և ներդրումային միջավայրի բարեփոխումների իրականացումը, որը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը:

Գերակայությունները.

Ներդրումային քաղաքականության կատարելագործմամբ կիրագործվեն հետևյալ նպատակները՝ ներդրողների համար առանցքային նշանակության ոլորտներ մուտք գործելու ֆորմալ և ոչ ֆորմալ խոչընդոտների նվազում, ներդրողների պաշտպանվածության մակարդակի և օրենսդրական դաշտի կայունության բարձրացում, ավելի թափանցիկ, արդյունավետ և գործուն խթանների համակարգ:

Տեսչական բարեփոխումների շրջանակներում անհրաժեշտ է նվազեցնել ոլորտը կարգավորող օրենսդրական անհստակությունները, բարձրացնել ստուգումների թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ներդնել միջազգային սկզբունքներ, որոնք կբարելավեն գործարարհամայնքի նկատմամբ պետականվերահսկողությունը:

	Գերակա ուղղություն		Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017		
	Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի իրականացում	Ներդրումային քաղաքականություն մշակող գերատեսչության կարողությունների զարգացում	ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման
	Միջազգային ներդրումային ֆորումի անցկացման համար անհրաժեշտ գործընթացների ապահովում	Տրանսֆերային գնագոյացման մասով կարողությունների ստեղծում՝ կարգավորիչ դաշտի մշակում և աջակցություն իրավական ակտերի կիրառումն ապահովելու հետ կապված հարցերում	ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման

16.9.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագերը (պարտավորությունները)

Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագրով նախատեսվում է իրականացնել միջոցառումներ ուղղված ներդրումային միջավայրի բարելավմանն, ներդրումային

գործունեության ակտիվացմանը, ներդրումների հոսքերի մեծացմանը, ինչպես նաև տեսչական բարեփոխումներին և ստուգում իրականացնող մարմինների օպտիմալացմանը:

Ծրագրի իրականացման համար 2017թ. նախատեսվում է հատկացնել 21.0 մլն դրամ:

16.10 «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության առջև դրված խնդիրների լուծման և գործառույթների իրականացման գործընթացում առանցքային դեր ունեն մակրոտնտեսական, ոլորտային և կառուցվածքային քաղաքականությունների իրականացման արդյունքների վերլուծությունները, տնտեսական զարգացման երկարաժամկետ միտումների բացահայտումները ու կանխատեսումների իրականացումը: Հայաստանի տնտեսությունը, լինելով փոքր և բաց տնտեսություն, անմիջականորեն կրում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությունները: Հետևապես Հայաստանի տնտեսական զարգացման ընթացիկ և հեռանկարային միտումների, ճյուղային համամասնությունների ու կառուցվածքային տեղաշարժերի բացահայտումը, պահանջում է տնտեսության վրա արտաքին/ներքին գործոնների ազդեցության գնահատում կատարված խոր մասնագիտական հետազոտության արդյունքում:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունը խիստ կարևորվեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2013 թվականի դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում և ՀՀ Նախագահի կողմից հանձնարարվեց ստեղծել այնպիսի կենտրոն, որի աշխատանքի արդյունքն ավելի գործնական նշանակություն կունենա, հանդես կգա խորքային ու մանրակրկիտ վերլուծությամբ:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնն իր աշխատանքները սկսել է 2015թ. հունվարի 1-ից:

16.10.1. Ծրագրի ընդհանուր նկարագիրը

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը

1.	ՀՀ կառավարության մակրոտնտեսական, ոլորտային և կառուցվածքային քաղաքականությունների իրականացման արդյունքների հետազոտությունների և վերլուծությունների իրականացում	ՀՀ կառավարություն, պետական կառավարման մարմիններ, Հետազոտական շրջանակներ, Մասնավոր հատված	Ամբողջությամբ
2.	ՀՀ տնտեսական զարգացման երկարաժամկետ միտումների բացահայտում և կանխատեսումների իրականացում	ՀՀ կառավարություն, պետական կառավարման մարմիններ, Հետազոտական շրջանակներ, Մասնավոր հատված	Ամբողջությամբ
3.	Տնտեսության վրա արտաքին/ներքին գործոնների ազդեցության գնահատում	ՀՀ կառավարություն, պետական կառավարման մարմիններ, Հետազոտական շրջանակներ, Մասնավոր հատված	Ամբողջությամբ
4.	Ոլորտային ծրագրերի, այդ թվում՝ ՊՄԳ ձևաչափով իրականացվող, ծախսեր-օգուտներ վերլուծության իրականացում	ՀՀ կառավարություն, պետական կառավարման մարմիններ, Հետազոտական շրջանակներ, Մասնավոր հատված	Ամբողջությամբ

<u>Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները</u>

Տնտեսական հետազոտությունների կենտրոնն իր աշխատանքները սկսել է 2015թ. հունվարի 1-ից: 2014թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն էր ներկայացրել «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի ստեղծման» ծրագրի 2015թ. բյուջետային հայտը, որը հաստատվել է 40,000 հազար դրամ բյուջեով: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել տնտեսական հետազոտությունների կենտրոնի աշխատանքների և ներկայացուցչական տեսքի համար անհրաժեշտ համապատասխան գույք և համակարգչային տեխնիկա, կատարվել է կենտրոնի ադմինիստրատիվ աշխատակիցների վարձատրություն:

Տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության տնտեսական զարգացման քաղաքականության վարչության հետ համատեղ ձևավորվել է և մշտապես թարմացվում է ծրագրի շահառուների ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական ամփոփ բազա, տնտեսական հետազոտությունների կենտրոնի կողմից կատարվել են յոթ հետազոտություն.

- «2015 թվականի ՀՀ ՀՆԱ հավելաճի կանխատեսում» - աշխատանքի նպատակն էր ստոխաստիկ պրոցեսների մոդելավորմամբ 2015 թվականի համար ՀՀ ՀՆԱ հավելաճի կանխատեսումը:
- «Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման ազդեցության գնահատում»- աշխատանքի նպատակն էր Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման ազդեցության գնահատումը ինֆլյացիայի, սպառման և արտադրության վրա, ինչպես նաև պարզել արդյունաբերությունում ծախսերի աճը՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

- «Հայաստանի Հանրապետությունում չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության գնահատում» - աշխատանքի նպատակն էր ֆիզիկական ներդրման և դրամավարկային մեթոդների միջոցով գնահատել տնտեսության չդիտարկվող հատվածի մեծությունը:
- «ՀՀ տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի գործոնային վերլուծություն» - աշխատանքի նպատակն էր ռեգրեսիոն վերլուծության միջոցով գործոնային ազդեցությունների գնահատումը ՀՀ տնտեսության ճյուղերում և ենթաճյուղերում:
- «ՀՀ տնտեսության առանձին ճյուղերի 2015թ. միտումները և 2016թ. կանխատեսումները» - աշխատանքի նպատակն էր բացահայտել 2015թ. տնտեսության ճյուղերի զարգացման միտումները և աճի/նվազման պատճառները, իրականացնել համախառն ներքին արդյունքի և ճյուղերի ցուրցանիշների 2015թ. գնահատումներ և 2016թ. Կանխատեսումներ՝ ավտոնոմ էկոնոմետրիկ մոդելի միջոցով, որը ներկայացվում է միաժամանակյա ռեգրեսիոն հավասարումների համակարգի տեսքով:
- «Հայ-ռուսական տնտեսական փոխհարաբերության ազդեցության ուղիները Հայաստանի տնտեսության վրա» - աշխատանքի նպատակն էր հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների քանակական վերլուծություն երկու առանցքային շեշտադրումներով, մասնավորապես՝ ՀՀ տնտեսության վրա ազդեցության ուղիների քանական գնահատում և ՌԴ տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ ՀՀ տնտեսության զգայունության աստիճանի գնահատում:
- «ՀՀ պոտենցիալ ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի ճեղքի ոչ կառուցվածքային մեթոդներով գնահատում» - աշխատանքի նպատակն էր ոչ կառուցվածքային մեթոդներով գնահատել պոտենցիալ ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի ճեղքի մակարդակները:

<u>Հիմնական խնդիրները</u>

1. Տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակի ձևավորման և զարգացման առաջնահերությունների նախանշման նպատակով ՀՀ կառավարության մակրոտնտեսական, ոլորտային և կառուցվածքային քաղաքականությունների իրականացման արդյունքների բազմապրոֆիլ հետազոտությունների և վերլուծությունների իրականացում, ինչպես նաև ՀՀ տնտեսական զարգացման երկարաժամկետ միտումների բացահայտում և կանխատեսումների իրականացման ապահովում (տես, ՀՀ կայուն զարգացման ծրագիր՝ կետ 4 և կետ 13; ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրություն 2-րդ բաժնի, 9-րդ մասի 1-ին կետի «ա» - «ե» ենթակետեր):
2. Տնտեսության վրա արտաքին/ներքին գործոնների ազդեցության գնահատման նպատակով միկրոմակարդակում տնտեսությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տիրապետում՝ միկրոմակարդակում բազմաուղղային տնտեսագիտորեն հետազոտությունների (մոնիտորինգի) իրականացում:

3. Մասնագիտական որակների բարձրացում և որակյալ ծառայությունների մատուցում (տես ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N515-Ա որոշմում, 1-ին մաս «Ինստիտուցիոնալ զարգացում» բաժին): Տնտեսական գործընթացների անընդհատականության պայմաններում առավել կոնկրետ առաջադրանքների (սեղմ ժամկետում ոլորտային վերլուծություններ, նոր ծագած արտաքին և ներքին գործոնների ազդեցության գնահատումներ) դեպքում բարդ է լինում կենտրոնացնել ինչպես աշխատանքային ռեսուրսները, իսկ որոշ դեպքերում բավարար չեն լինում առկա մարդկային և մասնագիտական ռեսուրսները:

16.10.2. Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

• Ծրագրի նպատակն է նախանշել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակի ձևավորման գործընթացի համար անհրաժեշտ ՀՀ տնտեսական զարգացման ընթացիկ և հեռանկարային միտումների, ճյուղային համամասնությունների ու կառուցվածքային տեղաշարժերի բացահայտման, տնտեսական զարգացման ցուցանիշների կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացման աշխատանքների հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի՝

• 1. պետության համար՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակի ձևավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, մասնագիտական, կազմակերպչական և ֆինանսական ռեսուրսների առավել օպտիմալ և արդյունավետ օգտագործմանը,

• 2. Գործարարների համար բիզնեսի զարգացման, իսկ հասարակության շահագրգիռ անձանց համար՝ հնարավորինս համապարփակ տեղեկատվության տիրապետմանը:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Կենտրոնի կողմից 2016-2019թթ.կատարված աշխատանքների մոնիտորինգի իրականացում			ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N515-Ա որոշում, ՀՀ կառավարության
2	Կատարված մոնիտորինգի հիման վրա 2016-2019թթ. և տարեկան աշխատանքային ծրագրերի ճշգրտում և վերջինիս իրականացում			

3	Կենտրոնի մասնագետների ունակությունների և գիտելիքների խորացում՝ համապատասխան պարբերաբար իրականացվող վերապատրաստումների միջոցով	Կենտրոնի կողմից ներկայացվող առավել բարձր որակյալ արդյունքի ապահովում	2008թ. հոկտեմբերի 30-ի «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N1207-Ն որոշում ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 11-ի N1229-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության կանոնադրություն
4	Տնտեսական հետազոտությունների և մշտադիտարկումների իրականացում, գիտականորեն հիմնավորված մեթոդական և ռերսուրսային ձևավորված հենքի կատարելագործում, արդյունքների հրապարակայնության ապահովում	Տնտեսական հետազոտությունների և մշտադիտարկումների իրականացում, գիտականորեն հիմնավորված մեթոդական և ռերսուրսային ձևավորված հենքի կատարելագործում, արդյունքների հրապարակայնության ապահովում	

16.10.3. ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Տնտեսական հետազոտությունների կենտրոնը ստեղծվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում 2013 թվականի դեկտեմբերի 13-ին տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում ՀՀ Նախագահի կողմից տրված հանձնարարականի:

2015թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն էր ներկայացրել «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի գործունեության» ծրագրի 2016թ. բյուջետային հայտը, որը հաստատվել է 28.1 մլն դրամ բյուջեով:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի նախատեսվել է հատկացնել 28.1–ական մլն դրամ:

16.11 ««ՄԱՅՔՐՈՍՈՖԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻՈՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.11.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը

2007թ. հունվարի 30-ին Էդինբուրգ քաղաքում ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հուշագիր, որով կողմերը համաձայնվել են Հայաստանում իրականացնել մի շարք կրթական, ուսումնական ծրագրեր, հիմնել Մայքրոսոֆթ նորարարական տեխնոլոգիաների կենտ-

րոն, համագործակցել էլեկտրոնային կառավարության ծառայությունների մշակման ուղղությամբ և այլն:

Հուշագրի շրջանակում՝ «Մայքրոսոֆթ» ընկերության աջակցությամբ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ համատեղ, ՀՀ կառավարության կողմից Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տարածքում 2011թ-ին հիմնվել է Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը (ՄԻԿ), որի նպատակն է՝ կիրառելով նորարարական և արդյունավետ մոտեցում, աջակցել փոքր և միջին ձեռնարկություններում հիմնարար գիտելիքների և փորձառության ձևավորմանը՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում ինովացիոն լուծումներ մշակելու ուղղությամբ, ինչպես նաև զարգացնել բիզնես գիտելիքները՝ կայուն ձեռնարկություններ հիմնելու նպատակով: Ինովացիոն կենտրոնն ապահովում է գիտելիքների փոխանցում գործարար, տեխնիկական և կառավարմանն առնչվող տարբեր ոլորտներում՝ իրականացնելով ուսումնական դասընթացներ, գործնական սեմինարներ, գաղափարների փորձարկում (թեստավորում և ցուցադրում), ինչպես նաև նյութատեխնիկական ենթակառուցվածքի տրամադրում համատեղ ծրագրերում աշխատող տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների համար:

Հարկ է նշել նաև, որ «Մայքրոսոֆթ»-ի հետ ստորագրված հուշագրի շրջանակում «Մայքրոսոֆթ» ընկերությունը ՀՀ կրթական հաստատություններին արտոնյալ պայմաններով (3 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ծրագրային փաթեթի համար) շուրջ 10000 համակարգիչների համար տրամադրել է «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային ամբողջական փաթեթներ, որն, ըստ էության, նշանակալի ներդրում է՝ ուղղված ՀՀ հանրային հատվածի զարգացմանը: Այսուղղությամբ, «Մայքրոսոֆթ»-ի և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև ստորագրվել է "Microsoft Campus and School Agreement" լիցենզավորման պայմանագիրը:

«Մայքրոսոֆթ»-ի հետ ստորագրված հուշագրով նախատեսվում էր նաև ՀՀ կառավարության կողմից հետևողական ջանքերի գործադրում ՀՀ պետական մարմիններում «Մայքրոսոֆթ»-ի լիցենզավորված ծրագրային փաթեթների կիրառման ուղղությամբ:

Այդ նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային ֆինանսական միջոցների հաշվին (88 մլն 882 հազ. ՀՀ դրամ) 2012-2014թթ. ընթացքում ձեռք են բերվել, ընդհանուր առմամբ, 692 հատ «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային փաթեթներ, այդ թվում՝

- 100 հատ՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի համար,
- 280 հատ՝ ՀՀ կառավարության աշխատակազմի համար,
- 205 հատ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար,
- 107 հատ՝ ՀՀտարածքային կառավարման նախարարության համար:

ՀՀ հանրապետական գործադիր մարմիններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտադրանքի արտոնագրված փաթեթների ծավալներն ուսումնասիրելու և առկա իրավիճակը գնահատելու նպա-

տակով 2014թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից վերոնշյալ մարմիններից հավաքագրվել, ամփոփվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել համապատասխան տեղեկատվությունը:

«Մայքրոսոֆթ» ընկերության հետ կարևոր նախաձեռնություններից մեկն է հանդիսանում նաև Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում «Մայքրոսոֆթ» տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիայի հիմնումը: Ակադեմիայում իրականացվում են վերապատրաստման դասընթացներ ճարտարագիտական համալսարանի դասախոսական անձնակազմի և ուսանողների համար՝ «Մայքրոսոֆթ»-ի կողմից տրամադրված ծրագրերով, նյութերով և մեթոդաբանությամբ: Ակադեմիայի բոլոր ուսանողները հնարավորություն են ստանում անվճար գրանցվելու “DreamSpark” ծրագրում, որտեղից կարող են ստանալ մի շարք արտոնագրված ծրագրեր և ուսումնական նյութեր իրենց կրթական գործունեության մեջ կիրառելու նպատակով:

2014թ. սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում տեղի ունեցած «ԱրմԹեք 2014» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի շրջանակում ՀՀ կառավարության անունից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Հիմք ընդունելով վերոնշյալ հուշագիրը՝ ՀՀ վարչապետի 2014թ. դեկտեմբերի 22-ի N 1273-Ա որոշմամբ ձևավորվել է աշխատանքային խումբ, որի կողմից քննարկվել են «Մայքրոսոֆթ» ընկերության հետ հետագա համագործակցության ուղղություններն ու ծրագրերը, ինչպես նաև ՀՀ պետական մարմինների կողմից «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերման գործընթացի ապահովման ուղղությամբ իրականացվելիք հետագա քայլերը: Քննարկումների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել առաջիկա 2 տարիների ընթացքում /2016-2017թթ./ ապահովելու ՀՀ պետական կառավարման մարմինների համար «Մայքրոսոֆթ» լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերումը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	«Մայքրոսոֆթ» ընկերության լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերման ապահովում	Հայաստանի Հանրապետություն	Ամբողջությամբ

Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները

2016-2018թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվող Ծրագիրը հանդիսանում է նոր նախաձեռնություն:

Հիմնական խնդիրները

2014թ. ՀՀ կառավարության անունից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակում նախատեսվում է «Մայքրոսոֆթ»-ի հետ նոր ուղղություններով համագործակցության ծրագրերի իրականացում:

Մասնավորապես, նորարարական ենթակառուցվածքների ստեղծման, SS ոլորտում մտավոր սեփականության պաշտպանության, որակյալ կրթության ապահովման հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ նախատեսվում է «Մայքրոսոֆթ»-ի կողմից Հայաստանում «ամպային» և մոբայլ լուծումների տարածաշրջանային կենտրոնի հիմնում՝ Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքով, կրթական ոլորտում համագործակցություն, մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացում: Այս ուղղությամբ, արդեն իսկ մշակվել են ընկերության հետ ստորագրվելիք համապատասխան փաստաթղթերի նախագծերը:

Վերոնշյալ ծրագրերի իրագործման համար որպես հիմնական նախապայման՝ «Մայքրոսոֆթ» ընկերության կողմից նշվում է ՀՀ պետական կառավարման մարմինների համար ընկերության լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերման անհրաժեշտությունը:

16.11.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

Նպատակները

Ծրագրի իրականացման նպատակն է «Մայքրոսոֆթ»-ի կողմից Հայաստանում նոր ծրագրերի, մասնավորապես, Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքով Հայաստանում «ամպային» և մոբայլ լուծումների տարածաշրջանային կենտրոնի հիմնման ծրագրի, կրթական ոլորտում համագործակցության, մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

«Մայքրոսոֆթ»-ի կողմից Հայաստանում վերոնշյալ նախաձեռնությունների իրականացումը կարևորվում է հետևյալ առումով՝

- Հայաստանի միջազգային վարկանիշի բարձրացում, որպես բարձր տեխնոլոգիաներ և նորարարություն ունեցող և խթանող, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքները պաշտպանող երկիր:

- «Մայքրոսոֆթ» ընկերության, որպես համաշխարհային առաջատար կազմակերպության, գիտելիքի, ենթակառուցվածքների, կուտակված փորձի հասանելիություն և կիրառում Հայաստանում:

Հայաստանի կայուն դիրքավորումը տարածաշրջանում, որպես նորագույն տեխնոլոգիական լուծումներ առաջարկող երկիր, հատկապես՝ մոբայլ, ամպային և անվտանգության ոլորտներում:

Գերակայությունները

	Գերակա ուղղություն			Հիմնավորում՝ համապատասխան հղումներով կառավարության տնտեսական և քաղաքական ծրագրերին
	2017	2018	2019	
1	Ոլորտի կարողությունների և նվաճումների խթանում			2007թ. ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության հուշագիր, 2014թ. ՀՀ կառավարության անունից ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագիր
2	Ոլորտի հնարավորությունների ներկայացում Հայաստանում և արտերկրում, հասարակական իրազեկում			
3	Ոլորտում ներդրումների և արտահանումների խթանում			
4	SS ոլորտի մասնագետների որակական մակարդակի և մրցունակության բարձրացում			

16.11.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել 2017թ.՝ 567.1 մլն դրամ:

16.12 «ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.12.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 19.11.2015թ N 1329-Ն որոշման «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին միացման ձևով վերակազմակերպվել է և «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Հիդրոօդերևութաբանության եվ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ:

ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության եվ մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Հայպետհիդրոմետ/, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 28.11.2002թ N 1872-Ն որոշման 10-րդ կետի, որպես պետական հիդրոօդերևութաբանական ծառայություն, ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններին, ազգաբնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոօդերևութաբանական փաստացի

պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և ապագա վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ՝ անբարենպաստ հիդրոօդերևութաբանական պայմաններից բնակչությանը և տնտեսությունը պաշտպանելու, մարդկանց կյանքին, առողջությանը և սեփականությանը սպառնացող վտանգի և հնարավոր վնասի նվազեցման, շրջակա միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացման նպատակով:

Հիդրոմետ ծառայության կողմից կատարվող աշխատանքներն իրականացվում են հիմք ընդունելով ՀՀ Կառավարության որոշումներով հաստատված Հիդրոմետ ծառայության կողմից կատարման ենթակա երկարաժամկետ ծրագրերը, Համաշխարհային Օդերևութաբանական Կազմակերպության (ՀՕԿ) ստանդարտները և միջազգային համաձայնագրերը, ՀՀ հիդրոօդերևութաբանական անվտանգության հայեցակարգը, մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության հայեցակարգը, դիտարկումների պետական ցանցի օբյեկտների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական և այլ ակտեր: Կարևորվում է միջազգային հիդրոօդերևութաբանական ցանցի հետ ՀՀ պետական հիդրոօդերևութաբանական ծառայության գործունեության միասնականացումը, ՀՕԿ Կոնվենցիայի և ԱՊՀ անդամ պետությունների միջև ստորագրված միջպետական համաձայնագրերի շրջանակներում միջազգային կազմակերպությունների և այլ երկրների ազգային հիդրոօդերևութաբանական ծառայությունների հետ համագործակցության կազմակերպումը և այդ համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարումը:

<u>Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները</u>

Վերջին տարիներին հիդրոօդերևութաբանության համակարգում ոլորտի զարգացման էական միտումներ, ինչպես ֆիզիկական, այնպես էլ ֆինանսական ցուցանիշների շրջանակներում, չեն նկատվել: 2015թ. համակարգի պահպանման ծախսերի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները կազմել են 914.6 մլն դրամ՝ պայմանավորված միջին և նվազագույն աշխատավարձի աճով, իսկ 2016թ. ՀՀ պետական բյուջեից հատկացումները կազմել են ՝ 886.7 մլն դրամ: Բյուջետայի հատկացումների պակասեցումը պայմանավորված է նախ 2016թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի բարձրացման համար նախատեսված աշխատավարձի ֆոնդի նվազեցմամբ:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծախսերի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները կազմել են 2014թ. համար՝ 300.0 մլն դրամ, 2015թ. համար այն կազմել է 301. 1մլն դրամ, իսկ 2016թ՝ 302.5 մլնդրամ:

2014-2015թ.թ. բյուջետային հատկացումների աճը պայմանավորված է ՀՀ գործող նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացումներով: 2014-2015 թվականներին ՀՀ ԱԻՆ

նախարարության կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ հակակարկտային աշխատանքների ծավալների զարգացման ուղղությամբ:

Հիմնական խնդիրները.

Ոլորտի հիմնական խնդիրները նպատակաուղղված են հիդրոօդերևութաբանական ստորաբաժանումների, կայանների և դիտակետերի աշխատանքների ավտոմատացմանը, համակարգիչների և այլ կարգի նորագույն տեխնիկական միջոցների ներդրման ճանապարհով դիտարկումների ծրագրային համակարգերը միջազգային չափանիշների մակարդակին և ՀՕԿ-ի կողմից ընդունված ստանդարտներին մոտեցնելուն, գործող սարքավորումների անխափան շահագործմանը, որն իր հերթին հնարավորություն կտա բարելավել հիդրոօդերևութաբանական սպասարկման որակը:

Համակարգն ունի տեխնիկական վերազինման և արդիականացման խնդիր, քանի որ դիտարկումների պետական ցանցում ներկայում շահագործվող մասնագիտական գործիքներն ու սարքավորումները բարոյապես և ֆիզիկապես մաշված են 60-70%-ով, իսկ որպեսզի պետությունը կարողանա առավելագույնս կատարել իր հիմնական պարտավորությունները քաղաքացիների կյանքի, առողջության և ունեցվածքի պահպանության, պետության և տնտեսության կայուն զարգացման հարցերում, այն պետք է ունենա զարգացած և պարբերաբար արդիականացվող, դիտարկումների համաշխարհային ցանցում ինտեգրված հիդրոօդերևութաբանական ենթակառույց, որը պետք է հնարավորություն ունենա ՀՕԿ-ի կոնվենցիայի շրջանակներում, որին Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 1992թ., օգտվելու հարևան և այլ երկրների հիդրոօդերևութաբանական և կլիմայական տվյալներից, ինչի համար անհրաժեշտ է տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման և փոխանակման միջազգային ստանդարտներին համապատասխանող համակարգ:

Գյուղատնտեսության ոլորտի ռիսկերի մեղմման գործընթացում կարևորվում է՝ մթնոլորտային վտանգավոր երևույթների դեմ պայքարի, մասնավորապես պաշտպանվող տարածքների ընդլայնումը, հակակարկտային միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացումը, հակակարկտային պաշտպանության այլ միջոցների ներդրման աջակցությունը: Հաշվի առնելով այն փաստը, որ մթնոլորտային վտանգավոր երևույթներից տնտեսությանը ամենամեծ վնասը հասցնում է կարկտահարությունը, խիստ անհրաժեշտ է շեշտակի զարգացնել տվյալ ուղղությունը:

Անհրաժեշտ է Շիրակի մարզում հիմնել, իսկ Արմավիրի, Արարատի, Լոռու, Արագածոտնի հակակարկտային կայաններները վերազինել, իսկ շենք-շինությունները, կոմունիկացիաները վերանորոգել:

Ինչպես Հանրապետության այլ մարզերում, այնպես էլ Շիրակի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը կարկտահարությունից նախատեսվում է կազմակերպել

կենտրոնացված կարգով կառավարվող մեթոդով ու տեխնոլոգիայով՝ հեղուկացված գազով աշխատող հեռակառավարվող հակակարկտային կայանքների միջոցով, որը հնարավոր է արդյունավետ իրականացնել միայն ռադիոտեղորոշիչ համակարգերի առկայության դեպքում:

Մարզում հակակարկտային համակարգերի ներազդման գոտու ընդլայնման և կառավարման արդյունավետության բարձրացման ապահովման համար, անհրաժեշտ է ստեղծել մարզային հակակարկտային ռադիոլոկացիոն կայան:

Ակտիվ ներգործության աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար խիստ կարևոր է ռադիոտեղորոշիչ համակարգի առկայությունը:

16.12.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

<u>Նպատակները</u>

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից կատարման ենթակա պետական նշանակության աշխատանքների ծրագրի, որը հիմնված է «Հիդրոօդերևութաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթների վրա, համակարգի գործունեությունն ուղղված է հիդրոօդերևութաբանական երևույթների և պրոցեսների դիտարկումների պետական ցանցում իրականացվող հիդրոօդերևութաբանական երևույթների մոնիտորինգի արդյունքում ստացվող տեղեկատվությամբ հասարակության, պետական իշխանության մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց պահանջմունքների բավարարմանը, ինչպես նաև մթնոլորտային երևույթների կառավարմանը, ռադիոլոկացիոն և արբանյակային դիտարկումների իրականացմանը, կարկտահարությունից գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությանը և պաշտպանվող տարածքների շեշտակի ավելացմանը, ցածր ամպամածությունների և մառախուղների ցրման, երկարատև տեղումների դեմ պայքարի իրականացման ուղղությամբ փորձարարական աշխատանքների կատարմանը, ամպերի ամպրոպային ակտիվացման թուլացմանը, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության նոր մեթոդների մշակման, կատարելագործման և դրանց ներդրման նպատակով գիտափորձարարական աշխատանքների շարունակական կատարմանը:

<u>Գերակայությունները</u>

Առաջիկա 3 տարիների ռազմավարական նպատակներով պայմանավորված ոլորտի գերակայությունն է հիդրոօդերևութաբանական պետական ցանցի կայանների ու դիտակետերի համալրումը ժամանակակից սարքերով և արքավորումներով, վերազինումը նորագույն տեխնիկայով, համակարգիչների ներդնումը և կիրառումը, հիդրոօդերևութաբանական տվյալ-

ների բանկի ստեղծումը, վերստուգիչ սարքերի չափաբերման և ստուգաճշտման ապահովումը, կարկուտի դեմ պայքարի աշխատանքների իրականացումը և զարգացումը:

Առաջնահերթ հարկավոր է ձեռքբերել ռադիոտեղորոշիչ համակարգեր, ստեղծել ու կառուցել մարզային հակակարկտային կայանների բազաները, դրանք ապահովելով շենքեր-շինություններով, կոմունիկացիաներով, անհրաժեշտ սարքեր սարքավորումներով, գույքով, համապատասխան մասնագիտական կադրերով և այլն:

Հինգ մարզերում՝ ծրագրով ընտրված տարածքներում, հարկավոր է տեղադրել պահանջվող քանակի ու տիպի հակակարկտային կայանքներ, քանի որ վերոնշյալ մարզերի պաշտպանվող տարածքներում գործող համակարգերի քանակը բավարար չէ ծածկելու առաջնահերթ ինտենսիվ մշակության տարածքները: Անհրաժեշտ է կարկտի դեմ պայքարի աշխատանքներն իրականացնել հանրապետությունում փորձաշրջան անցած և ներկայումս կիրառվող տեխնոլոգիայով: Միաժամանակ պետք է փորձարկվեն նաև մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության այլ եղանակներ:

16.12.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)</u>

ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության» ՊՈԱԿ-ը հանրապետության տարածքում իրականացնում է հիդրոօդերևութաբանական երևույթների, ջրային օբյեկտների հիդրոլոգիական բնութագրերի ուսումնասիրություն, ֆոնային ռադիոակտիվության վերաբերյալ դիտարկումների կատարում, շրջակա միջավայրի մոնիթորինգի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների ու ռադիոլոկացիոն դիտարկումների կազմակերպում և իրականացում, այդ ոլորտների վերաբերյալ փաստացի և սպասվող փոփոխությունների, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքների մասին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում:

Ծառայության օպերատիվ արտադրական և ֆինանսատնտեսական գործունեությունն ուղղված է կանոնադրական պարտականությունների կատարմանը:

Ծառայության օպերատիվ արտադրական և ֆինանսատնտեսական գործունեությունը ուղղված է կանոնադրական պարտականությունների կատարմանը:

Հանրապետության տարածքում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով ներկայումս գործում են 44 օդերևութաբանական (այդ թվում 6 բարձր լեռնային դժվարամատչելի) և 3 մասնագիտացված կայաններ, որոնք գտնվում են տարբեր կլիմայական գոտիներում, սկսած ծովի մակարդակից 450մ (Բագրատաշեն) մինչև 3200մ (Արագած) բարձրության վրա: Դիտակայանների ցանցը

հանդիսանում է հիդրոօդերևութաբանական դիտակայանների համաշխարհային ցանցի անբաժանելի մասը: Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքներն ու ռադիոլոկացիոն դիտարկումները իրականացվում են 8 մարզերում գտնվող 123 համայնքների տարածքներում տեղադրված թվով 460 հակակարկտային կայանքների, ինչպես նաև ԼՂՀ տարածքում տեղադրված և միասնական կառավարման ընդհանուր համակարգին միացված 72 հակակարկտային կայանքների միջոցով:

2016թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումները կազմում են 1,189.3 մլն դրամ:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվել է 1,188.3 մլն դրամ:

16.13 «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.13.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) գործունեության նպատակը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը ուղղված գործառություններն են:

Օրենքով սահմանված կարգով ՊՈԱԿ-Ը 2016 թվականին իրականացնելու է հետևյալ ծառայությունների մատուցումը բյուջեով նախատեսված 42.4 մլն դրամ գումարի սահմաններում:

ՊՈԱԿ-ի իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1.	Կանոնակարգերի մշակում՝ տեխնածին վթարների կանխարգելում, դրանց հետևանքների վերացում, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցում, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանություն:	ՀՀ տարածքում գործող վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցված 15599 արտադրական վտանգավոր օբյեկտները շահագործող 3800 ից ավել կազմակերպություններ	Ամբողջական

Կանոնակարգերի մշակումը հնարավորություն կտա՝ առնվազն նվազագույնի հասցնել տեխնածին վթարների քանակը և դրանց հետևանքով տեղի ունեցած տեխնածին վթարների մահացու կամ ծանր ելքով դեպքերի կրճատումը:

- **<u>Վերջին երկու տարիների ծրագրի զարգացման միտումները</u>**

- ՊՈԱԿ-ը Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված մատուցված ծառայություններից ստացված միջոցների հաշվին ստեղծել է նոր աշխատատեղեր, ձեռք են բերվել նորագույն լաբորատոր սարքավորումներ, որոնց օգտագործումը զգալիորեն բարձրացրել է փորձաքննությունների որակը:

- 2015թ. մշակվել և սահմանված կարգով հաստատման են ներկայացվել տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող երեք կանոնակարգեր:

Համաձայն 13.04.2006թ «Տեխնածին վթարների, մահացու կամ ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի տեխնիկական քննության և հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 488-Ն որոշման՝ 2014թ. հաշվառվել է և տեխնիկական քննության է ենթարկվել տեխնածին վթարի 11 դեպք՝ 4-ը մահացու և 7 ծանր ելքով, 2015թ. տեղի է ունեցել տեխնածին վթարի 19 դեպք՝ 6 մահացու, 13 ծանր ելքով և1 վնասվածքով:

<u>Հիմնական խնդիրները</u>

- Չնայած ՊՈԱԿ-ի կողմից վերջին տարիների ընթացքում մշակվել են նոր կանոնակարգեր, այնուամենայնիվ, դեռևս կան բնագավառներ որոնց գծով չեն մշակվել անվտանգ շահագործման կանոնակարգերը, ինչը դժվարեցնում է այդ բնագավառներում արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական փորձաքննութան իրականացումը: Դրանց մշակումը ակնկալվում է հետագա տարիների ընթացքում:

16.13.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

- **<u>Նպատակները</u>**

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՊՈԱԿ-ի գործունեության հիմնական նպատակը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործող (շահագործման նպատակով նախապատրաստվող, կոնսերվացվող, ապամոնտաժվող) արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման գործառություններ կազմակերպելն ու իրականացնելն է, տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշակելը, ստորերկրյա կառույցների շինարարության ժամանակ և շինարարությունում վթարների վերացման պլանների կազմման և իրականացման հրահանգի, նավթի և նավթամթերքների համար ուղղահայաց գլանային պողպատե պահեստարանների, օդի բաժանումից նյութերի արտադրման և օգտագործման և ռետինի արտադրության ժամանակ անվտանգության

կանոնները պահպանելը, տեխնածին վթարի յուրաքանչյուր դեպքի, մահացու կամ ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքերի տեխնիկական քննության ենթարկելն է:

Նշված նպատակները բխում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2334-Ն որոշման պահանջներից:

Գերակայությունները

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 24 հոկտեմբերի 2005թ ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Կանոնակարգերի մշակում:

16.13.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

«Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ» ծրագիրը կատարելու պահանջով 2016թ. պետական բյուջեից ՊՈԱԿ-ին հատկացվել է 42.4 մլն դրամ, որը հնարավորություն է ընձեռնել մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել «Կարուսելների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգը:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվել է 42.4 մլն դրամ:

16.14 «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16.14.1 Ծրագրի ընդհանուր նկարագիրը.

Հայաստանը տարածականորեն գտնվում է երկրաշարժավտանգ գոտում, որտեղ երկրաշարժերը ամենահին ժամանակներից ուղեկցել են մարդկանց: Ուժեղ երկրաշարժերը մեկ անգամ չէ, որ ավերակների են վերածել շեն ու բարգավաճ քաղաքներն ու գյուղերը՝ պատճառ դառնալով մեծաքանակ մարդկային զոհերի, հսկայական նյութական ու տնտեսական վնասների:

Ուժեղ երկրաշարժերի դեմ պայքարն ունի համազգային նշանակություն:

Բնական աղետներից Հայաստանին առավելագույն վնաս են հասցրել ուժեղ երկրաշարժերը:

Սեյսմիկ ռիսկի նվազեցումը գտնվում է ՀՀ Կառավարության ուշադրության կենտրոնում: Ընդունվեցին՝ 2002 թվականի հունիսի 12-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի

մասին» N 429 որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 7-ի «Երևանի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» N 392 որոշումը:

Վերջին երկու տարիների համակարգի զարգացման միտումները

2014-2015 թվականներին ոլորտի զարգացման միտումներն ակնհայտ են, քանի որ կա որոշակի առաջընթաց բոլոր ուղղություններով: Հատկապես կարևորում ենք աշխատանքները սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ, Երևան, Գյումրի, Վանաձոր և այլ քաղաքների տարածքների սեյսմիկ ռիսկի հիմնական բաղադրիչների գնահատումը, դիտարկումների ցանցի արդիականացումը և սեյսմիկ վտանգի քարտեզագրման աշխատանքները: 2014թ-ին արդիականացվել է Երևանի սեյսմիկ հեռաչափական ցանցը ժամանակակից լայնատիրույթ GURALP 6TD սեյսմիկ հեռաչափական կայաններով, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (IAEA) տեխնիկական համագործակցության ազգային ծրագրի շրջանակներում: Ընդհանուր առմամբ ձեռք է բերվել վեց նոր սեյսմիկ կայան, որոնք տեղադրվել և գործում են՝ ՀԱԷԿ-Երևան հատվածում: Իրական ժամանակում տեղեկատվությունը հաղորդվում է նաև ՀՀ ԱԻՆ ճգնաճամային կառավարման ազգային կենտրոն (ՃԿԱԿ):

2014թ-ին Գլոբալ դիրքորոշման համակարգի ցանցի կազմակերպության մասնագետի հետ համատեղ արդիականացվել է ՍՊԾ համակարգի «Արուճ» GPS ռեֆերենց կայանը, որը միակն է Հարավային Կովկասում և ընդգրկված է համաշխարհային գեոդեզիական ծառայության եվրոպական սեգմենտում:

2013-2014 թվականներին ստեղծվել է նորագույն և հավաստի տվյալների բազա ՀՀ տարածքի տեկտոնիկայի, սեյսմաբանության, ինժեներային սեյսմաբանության ոլորտներում, որն առավել հիմնավորված հիմք կլինի ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման հավանականային նոր քարտեզի կազման ժամանակ՝ միաժամանակ, կիրառելով քարտեզների կազմման առաջադեմ տեխնոլոգիաներ, գնահատման մեթոդական միասնական մոտեցումներ ու սեյսմաշրջանացման միջազգային ստանդարտներ: Ներկայում Հայաստանի Հանրապետության տարածքի 1:500000 մասշտաբի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման համար գոյություն ունի հավանականային գնահատմամբ այնպիսի համակարգչային ծրագրեր, որոնք թույլ կտան օգտագործել այլընտրանքային սեյսմատեկտոնական մոդելներ, ինչպես նաև հաշվարկների ընթացքում հաշվի առնել տարբեր պարամետրերի անորոշությունները և դրանց ազդեցությունը վտանգի վրա, գրունտի առաջացրած առավելագույն հորիզոնական արագացումների արժեքները՝ տարբեր հեռավորություններից և տարբեր շարժումներով բնութագրվող խզվածքների համար:

Հիմնական խնդիրները.

Ծրագրի հիմնական խնդիրները հետևյալն են.

- Արդիականացնել ժամանակակից թվային չափիչ սարքավորումներով՝ ՍՊԾ համակարգի ազգային դիտացանցի սեյսմիկ տարածաշրջանային (ընդհանուր թվով 9), գրունտի ուժեղ շարժումների (ընդհանուր թվով 8), հիդրոերկրաքիմիական (ընդհանուր թվով 5) դիտակայանները:
- Ուսուցանել հասարակության տարբեր շերտերին՝ տիրապետելու սեյսմիկ պաշտպանության գործնական խնդիրներին և պատրաստ լինելու դրանք անհրաժեշտության դեպքում կիրառելու:
- Կազմել ՀՀ բոլոր խոշոր քաղաքների սեյսմիկ ռիսկի քարտեզներ:
- Գնահատել Երևան քաղաքում գոյություն ունեցող թվով 5 հատուկ և թվով 25 կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության աստիճանը և մշակել առաջարկություններ սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով:

16.14.2 Ծրագրի նպատակները և գերակայությունները ՄԺԾԾ ժամանակահատվածում

<u>Նպատակները</u>

Ծրագրի նպատակն է դիտարկումների ցանցի վերազինման, զարգացման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով հասնել սեյսմիկ վտանգի և ռիսկի հուսալի մոնիտորինգի ու գնահատման:

<u>Գերակայությունները</u>

- Վերազինել դիտարկումների ցանցը, այդ թվում՝ սեյսմիկ (տարածաշրջանային և գրունտի ուժեղ շարժումների), հիդրոերկրաքիմիական կայանների սարքավորումները փոխարինելով ժամանակակից սարքավորումներով:
- Իրականացնել ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ, ուժեղ երկրաշարժի վերաբերյալ գործողությունների և վարքականոնների ուսուցում, ՍՊԾ-ում ուսումնական կենտրոնի ստեղծում:

16.14.3 ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

<u>Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)</u>

Ներկայում ՍՊԾ համակարգի 4 ՊՈԱԿ-ները կատարում են իրենց ծրագրային պարտավորությունները, որոնք ուղղված են ընդհանուր նպատակների իրականացմանը: Սակայն, ոլորտի զարգացման և հատկապես սեյսմիկ մոնիթորինգի ապահովման նպատակով անհրաժեշտ են լրացուցիչ ներդրումներ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարները օգտագործվում են ՍՊԾ համակարգի 4 ՊՈԱԿ-ների կողմից իրականացվող հետևյալ աշխատանքների համար.

ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով շուրջօրյա ռեժիմով իրականացնում են դիտարկումներ ազգային դիտացանցի ավելի քան 150 կայաններում: Ապահովվում է ՀՀ տարածքի և տարածաշրջանի սեյսմիկ ռեժիմի գնահատումը, տեղի ունեցած երկրաշարժերի գրանցումը, համալիր տվյալների բազաների ընդլայնումը, մշակումը և, ըստ հաստատված ռեգլամենտի, օպերատիվ հաղորդագրությունների ուղարկումը:

Ընդլայնվում են ՀՀ տարածքի և տարածաշրջանի ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով սելսմոլոգիական, երկրաֆիզիկական, երկրադինամիկական, երկրաքիմիական և այլ տվյալների բազաները, իրականացվել է դրանց մշակումը, վերլուծությունը և մեկնաբանումը: Մշակվում են ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նոր մոտեցումներ և մեթոդներ:

Իրականացվել է ՀՀ և ԼՂՀ տարածքների թվով 938 շենքերի և շինությունների (դպրոց, մանկապարտեզ, եկեղեցի, բնակելի և արտադրական շենքեր, առանձին բնակարաններ, առանձնատներ և այլն) տեխնիկական վիճակի կամ սեյսմիկ խոցելիության գնահատում: Սեյսմիկ ռիսկի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման աշխատանքների շրջանակներում իրականացվել է ավելի քան 8035 բազմաբնակարան բնակելի շենքերի տվյալների բազայի հավաքագրում:

Կազմվել է ՀՀ կենսաապահովման մագիստրալային գծերի (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում, հեռախոսային կապ, ավտոճանապարհներ և երկաթուղային գծեր) սեյսմիկ ռիսկի սխեմատիկ քարտեզը: Կատարվել են աշխատանքներ ՀՀ և ԼՂՀ տարածքներում սողանքներով և փլուզումներով արտահայտված տեղամասերի համատեղված քարտեզի ստեղծման ուղղությամբ:

Իրականացվում է համագործակցություն միջազգային բազմաթիվ կազմակերպությունների հետ (ADRC, JICA, DASE, IUGG, USGS, ISDR, OECD, CTBTO և այլն): ՍՊԾ-ի մասնագետները մասնակցում են սեյսմիկ ոլորտին առնչվող բազմաթիվ միջազգային համաժողովներին:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումները կազմում են 819.3 մլն դրամ:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում նախատեսվել է 817.5 մլն դրամ:

Միաժամանակ այլ ոլորտներում նախատեսվում են շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագրերը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

1.Նպաստել տարածքներում բնակչության նյութական ու ոչ նյութական բարեկեցության աճին՝ սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ու հանրային ծառայությունների որակի ու հասանելիության բարձրացման միջոցով,

2.Օժանդակել տարածքների ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հզորացմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մոտ 120 համայնքային մակարդակի ենթածրագիր՝ սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման և նոր օբյեկտների կառուցման ոլորտում: Ինչպես և ՀՍՆՀ նախորդ ծրագրերում, նախատեսվում է համայնքային կենտրոններին, դպրոցներին և մանկապարտեզներին գույքի տրամադրում: Բացի դրանից կիրականացվեն մոտ 30 ենթածրագրեր, որոնց նպատակն է աջակցել համայնքների խմբերի/տարածքների զարգացմանն ուղղված կառավարության քաղաքականությանը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 1,508.5 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,369.7 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 138.8 մլն. դրամ, 2018թ.՝ 2,085.3 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 1,585.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 499.7 մլն. դրամ, 2019թ.՝ 3,167.1 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 2,639.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 527.8 մլն. դրամ:

2. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

- նպաստել ընտրված մարզերի տեղական տնտեսություններում զբոսաշրջության աճին, որը տեղի կունենա ենթակառուցվածքներում ներդրումներ, քաղաքային վերածնունդ, մշակութային ժառանգության վերականգնում, հմտությունների զարգացում, տուրիստական պրոդուկտների զարգացում, զանազանում և մասնավոր հատվածի ներդրումների խթանում ապահովող համալիր մոտեցման իրականացման միջոցով:
- օգնել ստեղծել և հիմնել զբոսաշրջային շրջաններ, որոնք կմիացնեն ընտրված մարզերի բազմաթիվ վայրեր:

Միասին այս գործողությունները կօգնեն ավելի մեծ թվով այցելուներ գրավել դեպի մարզեր և մեծացնել իրենց ծախսերն, իսկ դա իր հերթին կխթանի աշխատատեղերի ստեղծումը և տեղական տնտեսական աճը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

ա) ժառանգության կենտրոնների վերականգնում և զբոսաշրջային ցանցի մշակում,

բ) ինստիտուցիոնալ զարգացում:

Նշված ծրագրի շրջանակներում 2017-2019 թվականներին նախատեսվում է 2017թ.՝ 173.0 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 144.2 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 28.8 մլն. դրամ, 2018թ.՝ 317.2 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 264.3 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 52.9 մլն. դրամ, 2019թ.՝ 449.9 մլն. դրամ, այդ թվում վարկային միջոցներ՝ 374.9 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 75.0 մլն. դրամ:

3. Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագիր

Ծրագիրն ուղղված է ՀՀ մարզերի և համայնքների տարածքայինև տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, աջակցության և զարգացման մոդելների մշակմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Նշված ծրագրի շրջանակներում 2017թ. նախատեսվում է 2,341.5 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 2,065.5 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 276.0 մլն. դրամ, 2018թ.՝ 1,936.4 մլն. դրամ, այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,549.1 մլն. դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 387.3 մլն. դրամ:

16.15 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16.15.1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

16.15.1.1. Ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), որպես հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմին, պատասխանատու է տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների, գործընթացների և դրանց արդյունքների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության համակարգի կազմակերպման, պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային և հասարակական կազմակերպություններին, զանգվածային լրատվամիջոցներին ինչպես նաև հանրությանը վիճակագրական ամփոփ տեղեկատվությամբ ապահովման համար:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ ՀՀ տարածքում պետական վիճակագրության մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար օրենսդրական հիմք են հանդիսանում ՀՀ օրենքով հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» և պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիրը:

Վիճակագրության ոլորտի համար ՀՀ պետական բյուջեից հատկացումները հիմնականում ուղղվում են.

սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման, կուտակման,

ամփոփման, պահպանման, փոխանակման և տրամադրման (հրապարակման) ծառայությունների իրականացմանը,

վիճակագրական տարեգրքերի, ժողովածուների, տեղեկագրերի, մամուլի հաղորդագրությունների և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների տպագրմանը:

Ոլորտի շահառուներն են՝ վիճակագրական տեղեկատվության սպառողները՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, միջազգային և հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվամիջոցները, հանրությունը և այլն:

16.15.1.2. Վերջին տարիների ոլորտի զարգացման միտումները

ա) ՀՀ ԱՎԾ 2015 թվականի գործունեությունն ըստ «2015 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի»

«2015 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված 424 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1890) վիճակագրական աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով 2015 թվականին ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են 152 անուն՝ ընդհանուր առմամբ 6.736 տպաքանակով և մոտ 1.2 մլն. էջ ընդհանուր ծավալով վիճակագրական նյութեր, ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն): Ծրագրով նախատեսված և հրապարակված 19 անուն վիճակագրական ժողովածուները հրապարակվել են ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Միաժամանակ, համաձայն Ծրագրի, հրապարակվել են 18 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 68):

Համաձայն Ծրագրի, հրապարակվել են 13 մամուլի հաղորդագրություններ՝ (պարբերականությունը հաշվի առած՝ 38) և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 10 մարզային և Երևան քաղաքի գործակալությունների կողմից պատրաստվել են 2 անուն վիճակագրական զեկույցներ:

2015 թվականի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել է 4 մամուլի հաղորդագրություն և էլեկտրոնային փոստով պատասխանվել 184 հարցումների:

Ընդհանուր առմամբ, 2013-2015 թվականների ընթացքում ԱՎԾ կողմից կատարված աշխատանքների գծով արդյունքային ծավալները մնացել են համեմատաբար կայուն մակարդակին:

ԱՎԾ կողմից 2013-2015 թվականներին իրականացված աշխատանքների ամփոփ նկարագիրը.

Աշխատանքների անվանումները	2013թ.		2014թ.		2015թ.		Նախորդ տարվա նկատմամբ փաստացի աճը, կամ նվազումը (տոկոսով)	
	Պլան	Փաստ	Պլան	Փաստ	Պլան	Փաստ	2014թ.	2015թ
Վիճակագրական աշխատանք-ներ (հրապարակումների թիվը)	1927	1929	1865	1883	1882	1890	-2.4	0.4
Վիճակագրական հետազոտու-թյուններ (հետազոտությունների թիվը)	4	4	3	3	4	4	-25.0	33.3
Վիճակագրական ժողովածուներ (ժողովածուների թիվը)	19	19	21	21	19	19	10.5	-9.5
Վիճակագրական տեղեկագրեր (տեղեկագրերի թիվը)	68	68	68	68	68	68	0.0	0.0
Տեղեկատվական զեկույցներ (զեկույցների թիվը)	24	24	24	24	24	24	0.0	0.0
Մամուլի հաղորդագրություններ (հաղորդագրությունների թիվը)	36	39	36	36	32	38	-7.7	5.6

բ) ՀՀ ԱՎԾ 2016 թվականի զարգացման միտումներն ըստ «2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի»

«2016 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված են 428 ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 889) վիճակագրական աշխատանքներ:

Նախատեսված է իրականացնել 7 վիճակագրական հետազոտություն, որից 6-ը՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ:

Ծրագրով նախատեսված է հրապարակել 22 վիճակագրական ժողովածու՝ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Միաժամանակ, համաձայն Ծրագրի, կհրապարակվեն 18 անուն վիճակագրական տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ՝ 68), 11 մամուլի հաղորդագրություններ (պարբերականությունը հաշվի առած՝ 38) և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը՝ (պարբերականությունը հաշվի առած՝ 24):

16.15.1.3. Հիմնական խնդիրները

«Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 4-ի դրույթներով սահմանված՝ վիճակագրության ոլորտի հիմնախնդիրներն են.

✡ հազարամյակի զարգացման հռչակագրով սահմանված նպատակները բնութագրող ցուցանիշների մշտադիտարկմանն օժանդակություն,

✡ ՀԶՌԾ ցուցանիշների մշտադիտարկմանն օժանդակություն,

✡ ազգային հաշիվների համակարգի բարելավում,

✡ չհաշվառված տնտեսության գնահատման մեթոդաբանության կատարելագործում,

✡ բնապահպանության ոլորտի վիճակագրության բարելավում, ինչպես նաև ամբողջականացում, արդիականացում,

✡ վարչական ռեգիստրների ստեղծում և կատարելագործում,

✡ ֆինանսական վիճակագրությունում «ֆինանսական հաշվի» վիճակագրական տվյալների համապատասխանության ապահովում,

✡ վիճակագրական տեղեկատվության մատչելիության, թափանցիկության մակարդակի էլ ավելի բարձրացում:

16.15.2. Վիճակագրության ոլորտի նպատակները և գերակայությունները մժծծ ժամանակահատվածում

16.15.2.1.Նպատակները

Վիճակագրության ոլորտի հիմնական նպատակն է. հանրապետության սոցիալ-տնտեսական գործընթացների, բնակչության և նրա կենսագործունեության ոլորտների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, մշակումը, կուտակումը, ամփոփումը, պահպանումը, ինչպես նաև փոխանակումը և վիճակագրական տեղեկատվության տարածումը:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթների՝ ՀՀ ԱՎԾ-ն, պետական վիճակագրության իրագործման բնագավառում իր գործունեությունն իրականացնում է, հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերով սահմանված հիմնական ուղղությունները և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված միջոցառումները:

Տարեկան Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության ցանկը (հավաքագրման աղբյուրները, ներկայացման և աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) ժամկետները և հրապարակումները, որտեղ պետք է տեղադրվեն վերջիններս)՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ ՀՀ ԱՎԾ-ի համար սահմանված վերոհիշյալ հիմնական նպատակներն ու խնդիրները, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ, Հազարամյակի զարգացման հռչակագրով սահմանված նպատակները, «Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» ՀՀ օրենքը, և դրանց հիման վրա մշակվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերը:

2017-2019 թվականներին ՀՀ ԱՎԾ ռազմավարական նպատակներ են.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում վիճակագրության կառուցողական վերափոխման գործընթացների շարունակում՝ վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման միջոցով,
- Վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրառման ընդլայնում:
- Տարածքային (համայնքների, խոշոր քաղաքների) վիճակագրության համակարգի ձևավորմանն օժանդակություն և կատարելագործում:
- Վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար պաշտոնական կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության տարածման եղանակների կատարելագործում:

16.15.2.2.Գերակայությունները

ՀՀ 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրով ՀՀ վիճակագրության ոլորտի գերակայությունների համար հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրերը: 2017-2019 թվականների գերակայություններն են.

- վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում՝ շարունակել վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացումը,
- վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական

ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով շարունակել և ընդլայնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

• վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած Տվյալների տարածման հատուկ ստանդարտի), որոնք ենթադրում են նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

• վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց՝ շարունակել ներկայում գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև հնարավորին չափով նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը,

• համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեգիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների կիրառմանն ու ընդլայնմանը,

• Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման արդյունքների հիման վրա ձևավորել գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող միավորների վիճակագրական ռեգիստր,

• շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կոդավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման, ինչպես նաև պետական վիճակագրությունում արդեն իսկ ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման աշխատանքները,

• ընդլայնել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի կիրառումը՝ հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

• տեղական (համայնքային) վարչական ռեգիստրների (ներառյալ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց, կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

- ընդլայնել սեռային կտրվածքով վարվող վիճակագրական ցուցանիշների համակազմը,
- ցուցանիշների մշակման յուրաժամանակության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ իրականացնել միջոցառումներ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,
- սպառողների պահանջների և կարիքների ավելի խորն ուսումնասիրման և վիճակագրության համապատասխան իրավական դաշտի ու տվյալների տարածման կատարելագործման միջոցով նպաստել վիճակագրական տեղեկատվության նկատմամբ վստահության աճին,
- շարունակել երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրերի, ժողովածուների և այլն) թողարկումը, ինչպես նաև կատարելագործել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական բավարարման նպատակով,
- կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության տարածման եղանակները:

16.15.3. Ոլորտում իրականացվելիք ծախսային ծրագրերը

2017-2019 թվականներին ոլորտին ուղղված հատկացումները (առանց կառավարման ապարատի ծախսերի), ըստ տարիների կկազմեն՝ 2017-2018 թվականներին, յուրաքանչյուր տարի՝ **731.1** մլն դրամ, 2019 թվականին՝ **721.7** մլն դրամ (*ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2017-2018 թվականներին նախատեսվել էին յուրաքանչյուր տարի՝ 724.6 մլն դրամ*):

Ծախսերը 2017 թվականին 2016 թվականի հաստատվածի նկատմամբ կնվազեն՝ 14.7%-ով, իսկ 2019 թվականին 2018 թվականի նկատմամբ՝ 1.3%-ով:

Ծախսերի նվազումը 2017-2019 թվականների միջնաժամկետ հատվածում հիմնականում պայմանավորված է ծրագրերի ավարտմամբ, այդ թվում.

2017 թվականին՝ «Գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և անցկացում»՝ 107.5 մլն դրամ, «Չդիտարկվող տնտեսության մասով ճշգրտումների և լրահաշվարկների իրականացման նպատակով հատուկ հետազոտության

իրականացում ոչ առևտրային կազմակերպություններում»՝ 7.9 մլն դրամ և «ՀՆԱ-ի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի կատարելագործում»՝ 9.1 մլն դրամ,

2019 թվականին՝ «Ֆինանսական հաշվի» ներդրման նպատակով կազմակերպությունների ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում»՝ 9.4 մլն դրամ:

16.15.4. Արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր

Օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրված դրամաշնորհների օգտագործման մասին կանխատեսումը հետևյալն է.

◊ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական օժանդակությամբ իրականացվող «Աջակցություն գյուղատնտեսական համատարած հաշվառմանը» ծրագիր (ընդհանուր գումարը՝ 524,687 եվրո, իրականացման ժամկետը՝ 2014-2017թվականներ):

◊ «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում-II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագիր (ընդհանուր գումարը՝ 1,000,000 եվրո, իրականացման ժամկետը՝ 2015-2017 թվականներ):

ԳԼՈՒԽ 17. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

17.1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

17.1.1 Ոլորտի ընդհանուր նկարագիրը

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) շարունակում է իրականացնել պետական գույքի կառավարման, մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության կարգավորման ու լուծարման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը՝ առաջնորդվելով «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, պետական գույքի մասնավորեցման ծրագրերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները իրականացնում է «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարության վարչության ենթակայությանն առկա են եղել 26 ընկերություններ, որից 15-ը՝ 100% պետական մասնակցությամբ, 4-ը՝ 100%-ից պակաս 50%-ից ավելի և 7-ը՝ 50%-ից պակաս:

2015 թվականի ընթացքում Վարչության կողմից նախապատրաստվել և շրջանառության մեջ են դրվել պետական գույքի տնօրինման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման 50 նախագիծ (գույքի անհատույց օգտագործման, վարձակալության և նվիրաբերություն), որոնցից 39-ը ընդունվել են ՀՀ կառավարության կողմից, 4-ը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը, 5-ը գտնվում են շրջանառության մեջ, 2-ը հանվել են շրջանառությունից:

2015 թվականի ընթացքում Վարչությունում ստեղծված գույքի հանձնման-ընդունման հանձնաժողովի կողմից Վարչության հաշվեկշիռ է ընդունվել ընդամենը 869 միավոր գույք, որից՝ 620 միավոր անշարժ գույք, 249 միավոր շարժական գույք:

2015 թվականի ընթացքում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով պահանջվող շենք-շինությունների հատակագծերի կազմման նպատակով վարչության կողմից լիցենզավորված կազմակերպության միջոցով իրականացվել է 132762.92 քառ.մետր մակերեսով շենք, շինությունների և 57.00006 հա հողամասի չափագրում:

17.1.2. Վերջին երկու տարիների ոլորտի զարգացման միտումները

2014-2015թթ. Ժամանակաշրջանում ուսումնասիրվել են հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն, վարձակալական կամ այլ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա գործող առևտրային կազմակերպությունների տարեկան աուդիտի եզրակացությունները:

2015 թվականի ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների և վերլուծությունների ենթարկված առևտրային կազմակերպությունների քանակը 2014թ-ի համեմատ նվազել է 21-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության 15.01.2015թ.-ի N 41-Ա որոշմամբ գյուղական բնակավայրերում գործող մի շարք առողջապահական պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերությունները պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու հանգամանքով:

Վարչության կարևոր գործառույթներից է պետական (կամ պետական մասնակցությամբ) ընկերությունների լուծարման գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 4 առևտրային կազմակերպության լուծարման մասին ՀՀ կառավարության 3 որոշում:

Նշված ժամանակահատվածում 15 կազմակերպության լուծարման գործընթացն ավարտվել է, 5 կազմակերպություն սնանկ է ճանաչվել և դիմումները ներկայացվել են ՀՀ ընդհանուր իրավասության դատարան:

2015 թվականի ընթացքում լուծարման գործընթացում է գտնվել 30 կազմակերպություն:

2015 թվականի ընթացքում լուծարման հանձնաժողովների կողմից ձեռնարկած միջոցառումների արդյունքում մարվել է շուրջ 92,046.0 հազ. դրամի կրեդիտորական պարտք, որից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ 28,214.0 հազ. դրամի, համայնքային բյուջների գծով՝ 140.0 հազ. դրամի, աշխատավարձի գծով՝ 41,170.0 հազ. դրամի և այլ կրեդիտորական պարտք՝ 22,522.0 հազ. դրամի:

ՀՀ պետական բյուջեի N 900005029039 «Լուծարվող պետական փակ բաժնետիրական ընկերությունների հաշվարկային հաշիվներում մնացած դրամական միջոցների հավաքագրում» եկամտային հաշվին փոխանցվել է 10,196.0 հազ. դրամ, իսկ 470.0 հազ. դրամ դեբիտորական պարտքի ստացման իրավունքը վերապահվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Պետական գույքի մասնավորեցումը և օտարումը

Պետական գույքի մասնավորեցման ներկայումս վարվող քաղաքականության հիմնական նպատակներն են՝

առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի մասնավորեցման միջոցով դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և երկրում մրցակցային միջավայրի բարելավմանը նպաստելը,

պետական գույքի մասնավորեցման այն ձևերի լայնորեն կիրառումը, որոնք նպաստում են մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ներգրավմանն ու աշխատատեղերի պահպանմանը կամ ավելացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում Վարչության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել պետական գույքի մասնավորեցման մասին ՀՀ կառավարության 4 որոշման նախագիծ, որոնցից 2-ը ընդունվել են ՀՀ կառավարության կողմից:

Պետական անշարժ և շարժական գույքի օտարման մասին նախապատրաստվել է ՀՀ կառավարության 13 որոշման նախագիծ, որից 11-ը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, 2-ը ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը: Նշված նախագծերով օտարման է ներկայացվել 25 անվանում անշարժ գույք. ըստ օտարման ձևերի՝ 6-ն ուղղակի վաճառքի ձևով, 19-ը մրցույթով: Պետական գույքի օտարման նպատակով կազմակերպվել է 18 անվանում անշարժ գույքի մրցույթ, կազմակերպված 18 մրցույթներից՝ 7-ը կայացել է, 11-ը չի կայացել (մասնակիցների բացակայության պատճառով):

2015 թվականի ընթացքում Վարչության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքների սեփականաշնորհման մասին ՀՀ կառավարության 3 որոշման նախագծեր, որոնք ընդունվել են ՀՀ կառավարության կողմից, (9 ընտանիքների 21 անձի կողմից զբաղեցրած թվով 9 սենյակի վերաբերյալ):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 24-ի թիվ 305-Ն որոշման համաձայն Վարչության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել նաև Հայաստանի Հանրապետության տեղաբնակ քաղաքացիներին բնակելի տարածք նվիրելու մասին ՀՀ կառավարության 6 որոշման նախագիծ:

2015 թվականի ընթացքում աճուրդով վաճառքի է ներկայացվել 1673 լոտ, որից 473-ը՝ տրանսպորտային միջոց, 30-ը՝ լուծարման ընթացքում գտնվող ընկերությունների գույք, 29-ը՝ լուծարումից հետո մնացած մասնավորեցվող շարժական գույք, 1141-ը՝ այլ շարժական գույք:

Վաճառքի ներկայացված լոտերից վաճառվել է 1097 լոտ, որից 339-ը՝ տրանսպորտային միջոց, 756-ը՝ այլ շարժական գույք, 2-ը՝ լուծարման ընթացքում գտնվող ընկերությունների գույք:

2015 թվականի ընթացքում կազմակերպվել է նաև վարձակալության տրամադրման 227 աճուրդ, աճուրդի է ներկայացվել 66 լոտ, որից կատարվել է՝ 189-ը:

Կնքվել են թվով 13 աճուրդի կազմակերպման պայմանագիր:

Պետական գույքի մասնավորեցումից, օտարումից և վարձակալությունից ստացված միջոցները

2015 թվականի ընթացքում պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 51,977.7 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 51,178.2 հազ. դրամ, իսկ համապատասխան համայնքային բյուջեներ՝ 799.5 հազ. դրամ:

2015 թվականին պետական գույքի օտարումից ստացված մուտքերն ունեն հետևյալ տեսքը. գույքի օտարումից ստացված միջոցները կազմել են 2,436,348.1 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 2,397,005.25 հազ. դրամ, իսկ համապատասխան համայնքային բյուջեներ՝ 28,342.3 հազ. դրամ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության արտաբյուջե՝ 11,000.5 հազ. դրամ:

Վարչության կողմից կնքված ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերի հիման վրա 2015 թվականին ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքագրվել է 265,773.6 հազ. դրամ՝ նախատեսված 205,000.0 հազ. դրամի փոխարեն:

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերի հիման վրա 2015 թվականին փաստացի մուտքագրվել է 62,515.3 հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել 14,329.6 հազ. դրամ, իսկ համապատասխան ՊՈԱԿ-ների բյուջեներ՝ 47,444.5 հազ. դրամ, այլ կառավարչական հիմնարկների արտաբյուջեներ՝ 741.2 հազ. դրամ:

2015 թվականի ընթացքում պետական սեփականություն համարվող հողերի կադաստրային արժեքի վճարումից մուտքերը կազմել են 59,378.4 հազ.դրամ:

Պայմանագրային պարտավորությունների կատարումը

Վարչության գործառույթների շարքում կարևորվում է մասնավորեցման և օտարման պայմանագրերով գնորդների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

2015 թվականի ընթացքում մասնավորեցման և օտարման պայմանագրերով պարտավորություններ են ստանձնել 39 գնորդ, որոնց թվաքանակն նախորդ տարվա 25 գնորդների համեմատ ավելացել է 14-ով: Գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած ներդրումային պարտավորությունները կազմել են 1,156,628.5 հազ. դրամ՝ նախորդ տարվա ստանձնած

փաստացի 757,050.0 հազ. դրամի դիմաց, ինչպես նաև 2 գնորդի կողմից նախատեսվել է կատարել 9,180.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրումներ, ինչը նախորդ տարվա համար նախատեսված 4,270.0 հազ. ԱՄՆ դոլարի համեմատ ավելացել է 4,910.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով: Սոցիալական երաշխիքների ապահովման մասով 4 գնորդի կողմից նախատեսվել է ստեղծել 62 աշխատատեղ, որը նախորդ տարվա համար նախատեսված 47 աշխատատեղի համեմատ աճել է 15-ով:

17. 1.3. Հիմնական խնդիրները

Պետական գույքի կառավարման և մասնավորեցման ներկայումս վարվող քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

1. պետական գույքի կառավարման միասնական քաղաքականության իրականացումը՝ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան (օրենքը ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 20-ին, ՀՕ-158-Ն),

2. պետական գույքի ռազմավարական, ծրագրային կառավարման ներդրումը եռամյա ծրագրերին համապատասխան՝ պետության գույքային իրավունքների և շահերի համակարգված ամբողջական իրացման նպատակով, օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերի մշակումը, ինչպես նաև գործող իրավական ակտերի լրամշակումը՝ օրենքի դրույթներն ամբողջությամբ հաշվի առնելու (ամրագրելու) նպատակով,

3. պետական գույքի ամբողջական հաշվառման իրագործում, դասակարգում, հաշվառման գրանցամատյանների վարումը, գրանցամատյանում առկա տեղեկատվության տրամադրման կարգի սահմանումը, սահմանված կարգով սեփականության իրավունքների պետական գրանցման ապահովումը,

4. պետական գույքի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կիրառվելու է պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքը մեկ տարվանից ավելի ժամկետով վարձակալության տրամադրման կարգը՝ պետական գույքի օգտագործման այլընտրանքային տարբերակների կիրառմամբ (մրցույթ, աճուրդ և ուղղակի ձև), վարձակալությամբ տրված պետական գույքի բարելավման նպատակով ներդրումների ներգրավումը,

5. պետական գույքի օտարման և մասնավորեցման գործընթացների կանոնակարգումը և վերահսկումը,

6. պետական ու պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների լուծարման և դրանց գույքի տնօրինման, ինչպես նաև սնանկացման ու ֆինանսական առողջացման ծրագրերի հիմնավորումը և իրականացումը,

7. պետական գույքի մասնավորեցման միասնական քաղաքականության իրականացումը, առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի մասնավորեցման միջոցով դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և երկրում մրցակցային միջավայրի բարելավմանը նպաստելը,

8. պետական գույքի մասնավորեցման և օտարման այն ձևերի կիրառումը, որոնք նպաստում են մասնավորեցվող (օտարվող) առևտրային կազմակերպություններում ներդրումների ներգրավմանն ու աշխատատեղերի պահպանմանը կամ ավելացմանը:

17.2. ՈԼՈՐՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

17.2.1 Նպատակները

ՄԺԾԾ ժամանակահատվածում, պետական գույքի կառավարման ոլորտի հիմնական նպատակներն են՝

1. պետական գույքի կառավարման միասնական քաղաքականության վարումը,

2. պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (բաժնեմասեր) ունեցող իրավաբանական անձանց մրցունակության բարձրացումը, դրանց գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավումը,

3. պետական գույքի կազմի ու կառուցվածքի կանոնակարգումը և օպտիմալացումը,

4. պետական գույքի մասնավորեցման և օտարման միասնական քաղաքականության իրականացումը,

5. պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի կանոնակարգումը,

6. պետական գույքի հաշվառման համակարգի կատարելագործումը,

7. պետական ակտիվների օգտագործումը տնտեսության իրական հատվածում ներդրումներ ներգրավելու համար:

17.2.2 Գերակայությունները

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սահմանվել են հետևյալ գերակայությունները՝

- պետական գույքի կառավարման ոլորտում պետության կողմից լիազորված մարմնի իրավասությունները,
- պետական գույքի կառավարման սկզբունքներն ու նպատակները, որոնք ուղղված են պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը,

- պետական գույքի կառավարման իրականացումը ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամյա ծրագրերի հիման վրա,
- հաշվառման բազայում պետական գույքի ամբողջական ընդգրկումը, պետական գույքի հաշվառման համակարգի ընդլայնումը և կատարելագործումը,
- պետական գույքի օտարման նպատակների և պայմանների սահմանումը,
- էլեկտրոնային աճուրդով պետական գույքի օտարման իրականացումը, ինչը հնարավորություն կընձեռնի պետական գույքի օտարումն իրականացնել առավել թափանցիկ և արդյունավետ,
- հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և անհատույց սեփականաշնորհման գործընթացները,
- պետական և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման առանձնահատկությունները, ֆինանսատնտեսական վերլուծությունների հիման վրա կազմակերպությունների վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացումը, կազմակերպությունների վերակազմակերպման պայմանները և այլն:

17.3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ (ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

17.3.1. Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Պետական գույքի կառավարման ոլորտում 2016-2018թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- **Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ.**

Վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը իրականացնում է պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրագրված գույքի մասնավորեցման և օտարման գործընթացի կազմակերպում և անցկացում, որը կբերի ավելի թափանցիկ աճուրդների անցկացում, իր հետ բերելով բյուջետային մուտքեր:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել 32.9 ական մլն դրամ:

2. «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում».

Վարչության «Պետական գույքի գույքագրման, հաշվառման եւ գնահատման Գործակալություն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման աշխատանքների կազմակերպումը, պետական

գույքի հաշվառումը, պետական գույքի արժեքի որոշման շխատանքների իրականացումը, ՀՀ պետական գույքի հաշվառման ռեեստրի վարումը:

Միաժամանակ համաձայն ՀՀ կառավարության 31.03.2016թ. թիվ 340-Ն որոշման՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմին է ամրացվել Երևան քաղաքի Կառավարական թիվ 2 և 3 շենքերը և որոնց սպասարկման աշխատանքները, իրականացվելու է «Պետական գույքի գույքագրման, հաշվառման և գնահատման Գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

Ծրագրի իրականացման համար 2017-2019թթ. ժամանակահատվածում նախատեսվում է հատկացնել 268.4 ական մլն դրամ:

ԳԼՈՒԽ 18. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ

18.1. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

18.1.1 (ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ)

18.1.2 Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում

Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոնի իրավիճակի նկարագրություն

Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) պետդեպարտամենտի և ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցության արդյունքում ստեղծվել է ՀՀ պաշտպանության նախարարության Մարդասիրական ականազերծման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն):

Ստեղծումից հետո Կենտրոնն զբաղվել է ՀՀ տարածքում ականապատված տարածքների ականազերծմամբ: Մինչև 2007 թվականը Կենտրոնն աջակցություն է ստացել ինչպես ԱՄՆ պետդեպարտամենտից, այնպես էլ՝ հումանիտար ականազերծման ֆինանսավորման համար հատկացվող միջազգային այլ հիմնադրամներից: Տրամադրված աջակցությունն ուղվել է տեխնիկական միջոցների արդիականացմանն ու անձնակազմի վերապատրաստմանը: Բացի ականազերծման աշխատանքներ իրականացնելուց՝ Կենտրոնն ունեցել է նաև Հանրապետության տարածքում ականավտանգ տարածքների ուսումնասիրման, քարտեզագրման և տվյալների բազա ստեղծելու խնդիր:

ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի 42 համայնքներում առ այսօր առկա են պատերազմից մնացած ականներով և պատերազմի պայթուցիկ մնացորդներով (ՊՊՄ) վարակված տարածքներ /47 մլն.քառ. մետր ընդհանուր մակերեսով/, որոնք վտանգ են սպառնում ազգաբնակչության, առավելապես՝ երեխաների կյանքին և առողջությանը, խանգարում են նրանց ազատ տեղաշարժին, խոչընդոտում են տնտեսության և ենթակառուցվածքների զարգացմանը:

Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոնի նպատակները

ՀՀ կառավարության 2016 թվականի գերակա խնդրների շարքում ընդգրկված է ՀՀ տարածքի հումանիտար ականազերծման գործընթացի և ժամկետանց ու կիրարկման ոչ-ենթակա զինամթերքի և ռազմական տեխնիկայի ուտիլիզացման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, որի լուծման ուղղությամբ պետք է իրականացվեն հետևյալ քայլերը՝ ականային վտանգի ենթակա տարածքների՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան, ուսումնասիրում և տեխնիկական հետախուզության ու քարտեզագրման աշխատանքների իրականացում, ականազերծման գործընթացի տեղեկատվական բազայի ստեղծում (IMSMA), ճշգրտված ականապատված տարածքների ականազերծման նախապատրաստական աշխատանքների իրականացում, ուտիլիզացիայի ենթակա ռազմամթերքի համապարփակ հաշվառում և համակարգում՝ ըստ ուտիլիզացման նախատեսվող տեխնոլոգիաների, ուտիլիզացման աշխատանքային ծրագրի մշակում, գործընթացի օրենսդրական ապահովում:

Ականների վտանգի մասին իրազեկման (ԱՎԻ) և աջակցություն տուժածներին (ԱՏ) բնագավառում.

- իրազեկման համակարգի և մեթոդաբանության մշակման միջազգային փորձի ուսումնասիրում, ականային վտանգի իրազեկման պաստառների, դիդակտիկ նյութերի մատուցման ձևերի ընտրություն;
- թիրախային խմբերի տարանջատում և ըստ դրա՝ իրազեկման ձևի ընտրում,
- ականների պայթյուններից տուժած անձանց տվյալների բազայի ստեղծում,
- ԱՎԻ կադրերի պատրաստման դասընթացների կազմակերպում և պատրաստի կադրերի վերապատրաստում,
- դասընթացներն ավարտած կադրերի ներգրավմամբ ԱՎԻ քարոզչության իրականացում,
- պաստառների և այլ դիդակտիկ նյութերի պատրաստում և տարածում:

Վտանգավոր տարածքների /ՎՏ/ նշագրման բնագավառում.

- մշտական և ժամանակավոր նշագրման համակարգերի կառուցում, տեղադրում,
- տեղակայված, տեղադրված համակարգերի հանձնում տեղական համայնքներին,
- մշագրման համակարգերից օգտվելու և դրանց պահպանման կանոնների իրազեկման դասընթացների, սեմինարների կազմակերպում համայնքներում:

ԱՎԻ ծրագրերն իրականացվելու են ՀՀ ամբողջ տարածքում, իսկ ՎՏ նշագրման ծրագրերը Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում:

Տեխնիկական հետազոտության բնագավառում.

- հաստատված և կասկածելի վտանգավոր տարածքների կրճատում:

Ուսումնական բազայի ստեղծման բնագավառում.

- ականազերծողների վերապատրաստում;

- ուսումնական ականների ձեռքբերում;

- ուսումնական կենտրոնի համար գույքի ձեռքբերում:

Արդյունքում կունենանք իրազեկված և ականային վտանգից պաշտպանված քաղաքացիներ, ականազերծման աշխատանքների արդյունավետությունը կբարձրանա, ականային վտանգի ռիսկը կհասցվի նվազագույնի, հակաականային գործունեության ազգային ծրագրի մշակմամբ կսահմանվեն ոլորտի ռազմավարական խնդիրներն ու նպատակները, կպլանավորվեն իրականացվելիք աշխատանքները, կիստակեցվեն ֆինանսական միջոցների հատկացումները, իսկ ՄԺԾԾ իրականացման ժամանակահատվածում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոնի զարգացման միտումները և գերակայությունները

Ականապատված տարածքներում ականազերծման համակարգված գործողությունների շարունակական իրականացումը կապահովի Հանրապետության տարածքում չպայթած ականների քանակի նվազեցում: Ականների վտանգները կանխելու համար և բնակչությանը ականապատված տարածքներից դուրս բերելու նպատակով Հայաստանի ականազերծման ռազմավարությունը նախատեսում է ականապատված տարածքների մաքրում, ականների ռիսկերի ուսուցում՝ բնակչության անվտանգության երաշխավորման նպատակով, աղքատության նվազեցման և սահմանային գոտիների զարգացման համար, որոնք խոչընդոտում են ազգային անվտանգությանը, ինչպես նաև երկրի ընդհանուր զարգացմանը:

2017-2019 թվականներին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

ա) ԱՎԻ և ԱՏ բնագավառում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Իրազեկման համակարգի և մեթոդաբանության մշակման միջազգային փորձի ուսումնասիրում,

- ԱՎԻ կադրերի պատրաստման դասընթացների կազմակերպում,

- Պաստառների, դիդակտիկ նյութերի մատուցման ձևերի ընտրություն,

- Մուլտֆիլմի, տեսահոլովակի նկարահանում և մոնտաժ,

- Ականների/ՊՊՄ-ների պայթյուններից տուժած անձանց տվյալների բազաի ստեղծում:

- Թիրախային խմբերի տարանջատում և ըստ դրա՝ իրազեկման ձևի ընտրում,

- Թեմատիկ մուլտֆիլմի, տեսահոլովակի թողարկում և հեռարձակման կազմակերպում,

- Պաստառների և այլ դիդակտիկ նյութերի ձևավորում և պատրաստում,

- ԱՎԻ քարոզչության իրականացում:

- ԱՎԻ կադրերի պատրաստում և վերապատրաստում,

- Պաստառների և այլ դիդակտիկ նյութերի պատրաստում և տարածում,

- ԱՎԻ քարոզչության իրականացում:

բ) Վտանգավոր տարածքների/ՎՏ/ նշագրման բնագավառում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Մշտական և ժամանակավոր համակարգերի տեղադրում, կառուցում,
- Նշագրման համակարգերից օգտվելու և դրանց պահպանման կանոնների իրազեկման դասընթացների և սեմինարների կազմակերպում համայնքներում,
- Տեղակայված և տեղադրված համակարգերի հանձնում տեղական համայնքներին, փաստաթղթավորում:
- Տեղադրված համակարգերի պահպանման մոնիթորինգ:

գ) Տեխնիկական հետազոտության նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները բնագավառում.

- Հաստատված և կասկածելի վտանգավոր տարածքների կրճատում:

Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն ծրագրի 2017-2019 թվականների ծախսերը հիմնականում պահպանվել են 2016 թվականի հաստատված բյուջի մակարդակով:

18.2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐ

Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված հատկացումները կուղղվեն գոյություն ունեցող 7 ծրագրերի իրականացմանը: Նշված ծրագրերը մշակվել են 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից սահմանված կողմնորոշիչ չափաքանակների ու աշխատանքները համակարգող մշտապես գործող խմբի կողմից արված առաջարկությունների ու դիտողությունների հիման վրա և կիրականացվեն պետական կառավարման 5 մարմինների միջոցով (տես Աղյուսակ 18.2.4.):

18.2.1 Հասարակական կարգի պահպանության ապահովում, ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանում և պետավտոհամարանիշների ձեռքբերում

Ոստիկանության համակարգում իրավիճակի նկարագրություն

Հասարակական հարաբերությունների զարգացման արդի պայմաններում ոստիկանության գործունեության հետագա բարելավման հիմնական կողմնորոշիչն է հանդիսանալու ժողովրդավարական հասարակարգերում ձևավորված չափանիշներին համապատասխանող ոստիկանություն ունենալու հասարակության և պետության պահանջի շարունակական իրագործումը:

Առաջիկա տարիներին նախատեսվում է էապես ընդլայնել և խորացնել համակարգային բարեփոխումները, թե օրենսդրական եւ վարչարարական նոր փոփոխություններ նախաձեռնելու և, թե գործնական կիրառության նոր գործիքներ եւ մեթոդներ ներդնելու միջոցով, հիմնական նպատակ ունենալով ըստ ամենայնի ապահովել օրենքի գերակայության սկզբունքը, բարելավել գործունեության թափանցիկությունը, էլ ավելի ամրապնդել ոստիկանության նկատմամբ հասարակության վստահությունը:

«Ոստիկանության մասին», «Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենքներով ամրագրված հիմնախնդիրներին համահունչ ոստիկանությունը պարտավոր է ապահովել՝ մարդու անվտանգությունը, նրանց իրավունքներն ու ազատությունները, հանցագործությունների նախականխումը, խափանումը, հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործերով նախնական քննությունը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը, ճանապարհային երթևեկության անվտանգությունը, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը, զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը, անձնագրային ռեժիմի պահպանումը, օրենքով նախատեսված սահմաններում ֆիզիկականական և իրավաբանական անձանց իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս օգնություն ցույց տալը և այլն:

Նշված հիմնախնդիրների և ոստիկանության կանոնադրական գործառույթների համակարգված իրագործումը յուրաքանչյուր տարի ապահովվում է՝ «Հասարակական կարգի պահպանության ապահովում», «Արտագերատեսչական պահպանություն», «Պետավտոհամարանիշների ձեռքբերում», «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց», «ՀՀ քաղաքացու անձնագրերի բլանկների տպագրություն», ինչպես նաև մասնագիտական կրթության ծախսային ծրագրերով:

ՀՀ կառավարության բյուջետային քաղաքականությանը համահունչ ոստիկանության բյուջետային հայտերը ներկայացվում են նաև ծրագրային դասակարգմամբ՝ հիմնված ծրագրային բյուջետավորման սկզբունքների վրա: Նպատակը՝ բյուջետային միջոցների դիմաց մատուցվող ծառայությունների և դրա արդյունքների հստակ վերհանելն է, գործունեության թափանցիկության և հաշվետվականության պատշաճ մակարդակն ապահովելը:

Նշված նպատակին և ծրագրային բյուջետավորման հիմնական սկզբունքներին համապատասխան ՀՀ ոստիկանության բյուջետային ծախսերը տարանջատվում են միմյանցից զատ, այսինքն՝ բյուջետային առանձին հատկացումներով ապահովված 16 քաղաքականության միջոցառումից (ծառայությունից), որոնք ֆունկցիոնալ համապատասխանությամբ պայմանավորված խմբավորված են հարաբերականորեն ինքնուրույն և ամբողջական հետևյալ 7 ծրագրում.

1) «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված ծառայություններ, մոնիտորինգ և վերահսկողություն»,

2) «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար»,

3) «Պետական պահպանություն»,

4) «Ճանապարհային անվտանգության ապահովում»,

5) «Անձնագրերի և վիզաների տրամադրում և գրանցում»,

6) «Կրթական ծառայություններ»,

7) «Ոստիկանության համակարգի աշխատողների առողջության պահպանում»:

Նախորդ 2-3 տարիներին իրականացված օրենսդրական և վարչարարական բարեփոխումների արդյունքում արդեն իսկ ապահովվել է ոստիկանության միասնական համակարգի արդիականացման և հետագա զարգացման մի շարք կարևորագույն նախադրյալներ:

Ոստիկանությունը ողջ ծավալով կատարել է իր առջև դրված խնդիրները՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հանրապետությունում վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել է կայուն հասարակական կարգը: 503 դեպքով կամ 2,9%-ով նվազել է գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակը (2014թ.՝ 17546, 2015թ.՝ 17043: Բարելավվել են հանցագործների հետախուզման աշխատանքները:

Ակտիվ շարունակվել են աշխատանքները իրավաստեղծ ոլորտում. 2015 թվականի ընթացքում շրջանառվել են 149 իրավական ակտերի նախագծեր, որոնց թվում՝ օրենքների 29, ՀՀ Նախագահի 1 հրամանագիր, կառավարության և վարչապետի 99 որոշում, ոստիկանության պետի նորմատիվ հրամանների 14 նախագիծ: Սահմանված կարգով ընդունվել է 3 օրենք, ՀՀ Նախագահի 1 հրամանագիր, կառավարության և վարչապետի 62 որոշում և ոստիկանության պետի 12

նորմատիվ հրաման: Հատկանշական է կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջանակներում՝

- «Օտարերկրացիների մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:

- «ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ մուտք գործելու և ՀՀ-ից ելքի մասին» նոր օրենքի նախագիծը:

- Կառավարության կողմից հավանության են արժանացել նաև Ոստիկանության ոլորտում 2015-2017թթ. բարեփոխումների ծրագիրը,

- Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը,

- Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ռազմավարությունը և դրանից բխող՝ 2015-2016 թվականների միջոցառումների ցանկը:

- Սահմանված ժամկետում ապահովվել է ոստիկանության պատասխանատվության ներքո գտնվող, ինչպես նաև ոստիկանության համակատարմամբ 24 ծրագրերի համակարգումը (այդթվում՝ ՀՀ 2015-2018 թթ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը):

Հատուկ պետք է նշել, որ ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է օրինագծերի փաթեթը, որով մեղմացվել են ՃԵԿ-ի կանոններով ամրագրված սահմանափակումները, նվազ հանրային վտանգավորությամբ խախտումների դեպքում սահմանվել են պատասխանատվությունից ազատող դրույթներ, որոնք առաջացնում էին բնակչության հիմնական դժգոհությունը:

Շարունակվում է ոստիկանությունում իրականցվող բարեփոխումների գործընթացը, որի կազմակերպահիրավական հենքում ընկած են կառուցվածքային և կազմհաստիքային լայնածավալ աշխատանքները՝ միտված համակարգի օպտիմալացմանը: Մասնավորապես՝

- Շարունակվել է անցումը քաղաքացիական հատուկ ծառայության,

- Հաստատվել է քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը, իսկ հաստիքները համապատասխանեցվել են զբաղմունքների դասակարգչին,

- Ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում ոստիկանությունում քաղաքացիական պաշտպանության ոլորտի աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, առկա հաստիքների հաշվին, ոստիկանությունում ստեղծվել է առանձին ստորաբաժանում Զորահավաքային աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության բաժինը, որի կարևորությունը ակնառու դարձավ Շանթ-2015 զորավարժությունների անցկացման ընթացքում և այլն:

Այդուհանդերձ ոստիկանության ղեկավարության կարևորագույն առաքելությունը մնում է ոստիկանի նոր կերպարի ձևավորման գործընթացը, նրա մասնագիտական պատրաստվա-

ծության պատշաճ մակարդակի ապահովումը, իրավական գիտելիքների զարգացումը, արտաքին տեսքն ու բարեվարքութունը:

- Ոստիկանության տարածքային բաժինների պետերի, իսկ արդեն 2015 թվականից նաև նրանց տեղակալների համար կազմակերպվել է ամենամսյա ծառայողական-մասնագիտական պարապմունքներ, որոնք անցկացնում են անձամբ ոստիկանության պետը, նրա տեղակալները և ճյուղային ծառայությունների պետերը: Ոստիկանության պետի հրամանով ձևավորված հանձնաժողովի կողմից տարածքային բաժինների ղեկավարներից ընդունվեցին ստուգարքներ: 2016թ-ից մեկնարկել է հետաքննիչների մասնագիտացված կենտրոնացված դասընթացների գործընթացը, իսկ առաջիկայում նախատեսվում են նաև մյուս հիմնական ոլորտներով մասնա-գիտական դասընթացների կազմակերպում:

Հաստատվել են ոստիկանության ծառայողի նոր համազգեստի և նոր վկայականի նկարագրերը: 2015 թվականից ոստիկանության ծառայողներին տրամադրվել է նոր համազգեստ: 2016թ.-ի փետրվարից սկսվել է նոր նմուշի ծառայողական վկայականների տրամադրումը:

Ոստիկանության կադրային աշխատանքների կատարելագործման նպատակով իրականացվել են «Կադրեր» ինֆորմացիոն համակարգի վերազինման և արդիականացման աշխատանքները:

ՀՀ տարածքում զբոսաշրջության անվտանգ ապահովման, ինչպես նաև զբոսաշրջիկների ահազանգներին օպերատիվ արձագանքելու նպատակով Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնում սահմանվել են օպերատիվ հերթապահի լրացուցիչ հաստիքներ՝ անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությամբ:

Դրա հետ մեկտեղ անգլերեն և ռուսերեն համապատասխան գրառումներով պատրաստվել են 1-02 կարճ հեռախոսահամարով պաստառներ և դրանք տեղադրվել են զբոսաշրջիկների կողմից առավել հաճախ այցելվող վայրերում, (ՀՀ-ում գործող մաքսային կետերում, պատմամշակութային վայրերում և այլն), դրանով իսկ մտցվել է տուրիստական ոստիկանության գործառութային նախնական տարրեր: Այս աշխատանքների էֆեկտիվությունը տեսանելի է նաև օպերատիվ տեսանկյունից: Հաշվետու տարում հանրապետությունում թե օտարերկրացիների կողմից և թե նրանց նկատմամբ կատարված հանցագործությունների թիվը որոշակի նվազել է (2014 թ.-ի 372-ից 2015 թ.-ին՝ 341):

Անչափահասների կողմից կատարվող հանցագործություններն ու իրավախախտումները նախականխելու, վերջիններիս իրավագիտակցությունը բարձրացնելու նպատակով հանրապետության ավագ դպրոցներում համալրվել են ոստիկանության անչափահասների գործերով ծառայության դպրոցական տեսուչների հաստիքները: Ընդհանուր առմամբ,

հանցագործություն կատարած անչափահասների թիվը ևս նվազել է (2014թ.-ին՝ 335, 2015թ.-ին՝ 325):

Հարկ է նշել, որ ընտանեկան բռնությունը ըստ էության նոր բնույթի հանցավորության դրսևորման տեսակ է և դիտարկվում է որպես լատենտային: Այնուամենայնիվ, արդեն իսկ առկա է դրական տեղաշարժ: ՔՀԳ վարչության կազմում համապատասխան վարչության ստեղծման արդյունքում իրականացված տարաբնույթ աշխատանքների շնորհիվ՝ հասարակության մեջ բարձրացել է իրազեկվածությունը և ոստիկանության նկատմամբ վստահությունը, ինչի արդյունքում աճել է հայտնաբերված ընտանեկան բռնության դեպքերի թիվը (2014-2015թթ.՝ 678 - 784):

Ոստիկանության համակարգի նպատակները

- անձի կյանքի և առողջության, իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ գործողություններից,
- հասարակության և պետության շահերի պաշտպանությունը,
- հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը,
- հանցագործությունների կանխարգելմանը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը,
- անչափահասների հանցավորության խմբավորմանը հակազդելու, ոստիկանության տեսադաշտում գտնվող անչափահասների հետ տարվող կանխարգելիչ դաստիարակչական աշխատանքների բարելավումը,
- քաղաքացիների անձնագրավորման, փաստաթղթավորման և հաշվառման գործընթացի կատարելագործումը,
- Հայաստանի Հանրապետությունում ավտոճանապարհային երթևեկության վթարայնության նվազեցման, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության բարձրացումը,
- ոստիկանական գործունեության իրավական դաշտի կատարելագործումը,
- հանցավորության դեմ պայքարի ոլորտում միջազգային ոստիկանական և այլ կառույցների հետ փոխհամագործակցության ակտիվացումը,
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի պարտադիր ժամկետային զինծառայողների և պայմանագրային զինծառայողների տեսակարար կշռի փոփոխման միջոցով արդյունավետության բարձրացումը,
- Քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի անցման խորացումը և կատարելագործումը,

- Պետավտոհամարանիշներով ապահովումը:

Ոստիկանության ոլորտում զարգացման հիմնական գերակայություններն են.

Տվյալ միջնաժամկետ հատվածում ոստիկանության հիմնական նպատակներն են հանդիսանալու՝

ա) հանցագործությունների կանխարգելման, դրանք ծնող պատճառների եւ պայմանների վերացման գործում իրավապահ եւ շահագրգիռ պետական մյուս մարմինների գործունեության համակարգման առկա մակարդակի բարելավումը,

բ) հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների, հանցագործություն կատարելու համար պատասխանատվության եւ պատժի անխուսափելիության սկզբունքի իրագործման կատարելագործումը,

գ) հատկապես՝ թրաֆիկինգի եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,

գ) հասարակական կարգի եւ հասարակական անվտանգության ամրապնդման առավել արդյունավետ մեթոդների և ձևերի ներդրումը, ճգնաժամային իրավիճակների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը, անձնակազմի, ինչպես նաեւ կարեւորագույն նշանակության օբյեկտների գործունեության անվտանգության ապահովումը,

դ) նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնմամբ ոստիկանության կադրերի պատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման բնագավառում ինովացիոն կրթական համակարգի շարունակական ներդրումը,

ե) ոստիկանության նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարելավումը այդ թվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես նաև.

- քրեագիտական ծառայության վերազինումը՝ հատկապես թմրամիջոցների (նաեւ սինթետիկ ծագում ունեցող), հոգեներգործուն նյութերի, կեղծված դեղորայքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,

- տեղեկատվական շտեմարանների օգտագործմամբ դիմապատկերի միջոցով անձանց նույնացման եղանակով հանցագործությունների բացահայտման և հետախուզվողների հայտնաբերման ավտոմատացված համակարգի ներդրումը.

զ) հասարակական կարգի ապահովման, հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման եւ բացահայտման աշխատանքներում հասարակական կազմակերպությունների եւ քաղաքացիների ներգրավվածության ակտիվացումը,

է) ոստիկանության կողմից մատուցվող ծառայությունների որակի հետևողական բարելավումը

ը) ոստիկանության գործունեության նկատմամբ բնակչության վստահության ըստ ամենայնի բարձրացումը:

Այսպիսով միջնաժամկետ հեռանկարում ոստիկանության գործունեության հետագա զարգացման գերակա խնդիրներն են հադիսանալու հասարակական կարգի և անվտանգության, հանցավորության դեմ պայքարի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետության հետագա բարձրացումը, ոստիկանության նկատմամբ հասարակության վստահության էլ ավելի ամրապնդումը, հասարակության առջև հաշվետվողականության բարելավումը, ոստիկանի նոր կերպարի ըստ ամենայնի ձևավորումը, որը նախատեսվում է ապահովել առկա ուժերի և միջոցների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, շահառուներին մատուցվող ծառայությունների որակը բարելավելու, համակարգում կոռուպցիոն ռիսկերը կրճատելու միջոցով:

Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Հասարակական կարգի պահպանության ապահովում ծրագրի 2017-2019 թվականներին ծախսերը հիմնականում պահպանվել են 2016 թվականի հաստատված բյուջեի մակարդակով:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն ծրագրի 2017-2019 թվականներին ծախսերը ավելացել են 367.6 մլն դրամով, որը պայմանավորված է 39 ջրամատակարարման օբյեկտի (խմելու ջրի աղբյուրներ, օրվա կարգավորող ջրամբարներ, կապտաժներ, խորքային հորեր, խորքային պոմպակայաններ, արտեզյան հորեր) պահպանությունը ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման կողմից պահպանություն իրականացնելու հանգամանքով: Նշված ջրամատակարարման օբյեկտների պահպանման գծով ծախսերը հաշվարկվել են 2005 թվականի հուլիսի 14-ի N 1176-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան:

Պետավտոհամարանիշների ձեռքբերում ծրագրով ծախսերը պահպանել են ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված մակարդակը: 2017-2019 թվականներին միջնաժամկետ ծախսերի ծրագրի ժամանակահատվածում, յուրաքանչյուր տարի ըստ կանխատեսումների, ձեռքբերվող քանակը կկազմի 53934 զույգ պետավտոհամարանիշ:

18.2.2 Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում

Ազգային անվտանգության համակարգում իրավիճակի նկարագրություն

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, գործելով ՀՀ օրենդրական դաշտի պահանջների սահմաններում, ինչպես նաև 2001 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված՝ «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքով, կատարում է բազմաբնույթ ծառայություններ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավասության սահմաններում, մասնավորապես, ՀՀ ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների, ազատության և օրինական շահերի ապահովումը, Հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը, անվտանգության ապահովման և ամրապնդման, պետական պահպանության, տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման նպատակով համապատասխան տեղեկատվությունների հավաքումը, ռազմարդյունաբերական, տնտեսական, ատոմային էներգետիկայի, տրանսպորտի, կապի, էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերական, ռազմավարական օբյեկտների, առաջնային գիտական մշակումների ոլորտներում անվտանգության ապահովումը, ահաբեկչության, կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ու կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեության բացահայտումը, կանխումն ու խափանումը:

«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ 2005 թվականից ՀՀ պետական բյուջեում ընդգրկվել է «Պետական պահպանության ապահովում» ծրագիրը: Այդ Ծրագրի շրջանակներում իրականացվում է պետական պահպանություն՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովման և պետական օբյեկտների պաշտպանության ոլորտի գործառույթ, որն իրականացվում է իրավական, կազմակերպական, պահպանական, ռեժիմային, օպերատիվ-հետախուզական, տեխնիկական և այլ միջոցառումների համակցմամբ:

Ազգային անվտանգության համակարգի նպատակները

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի ապահովում,
- պետական սահմանների պահպանություն, սահմանային գոտու անձեռնմխելիություն,
- օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության կանխում,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաների անվտանգության ապահովում,
- պետական բարձրաստիճան պաշտոնյաներին հատուկ կապով ապահովում,
- պահպանվող օբյեկտներին սպառնացող վտանգի կանխատեսում և բացահայտում,
- պահպանվող օբյեկտներին սպառնացող վտանգի կանխարգելման համար համալիր միջոցառումների իրականացում,

- պահպանման ենթակա օբյեկտների անվտանգության ապահովումը նրանց մշտական կամ ժամանակավոր գտնվելու վայրում,
- ահաբեկչության դեմ պայքարին մասնակցություն,
- սահմանված անցագրային ռեժիմի պահպանում,
- համակարգի անձնակազմի հետ տարվող աշխատանքների և ծառայողների մասնագիտական պատրաստականության կատարելագործում նրանց իրավական և սոցիալական պաշտպանվածության ապահովում:

Ազգային անվտանգության համակարգի զարգացման հիմնական գերակայություններն են.

- սննդամթերքի, հանդերձանքի, նորագույն հատուկ տեխնիկայի, սարքավորումների, զենքի և զինամթերքի ձեռքբերման շարունակական գործընթացի ապահովումը:
- տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիայի տարբեր դրսևորումների և տնտեսության զարգացմանը խոչընդոտող այլ երևույթների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների ակտիվացումը,
- օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացումը,
- պետական սահմանի շուրջօրյա հսկում և պահպանում, այդ թվում նաև էլեկտրոնային համակարգերով և ծառայողական կենդանիներով (շներ, ձիեր և այլն),
- հետախուզական միջոցառումների անցկացում,
- հակահետախուզության ոլորտի ընդլայնում, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից օգտագործվող գործակալական ցանցի բացահայտում,
- ռազմական հակահետախուզական աշխատանքների իրականացում, հավանական հակառակորդի կողմից ռազմական ոտնձգությունների կանխում,
- ռադիո-հակահետախուզության անցկացում,
- գաղտնի տեղեկատվության հրապարակման կասեցում,
- միջուկային անվտանգության ապահովման աշխատանքների իրականացում,
- մաքսանենգության դեմ պայքարի ապահովում,
- ահաբեկչության դեմ պայքարի գործընթացի կազմակերպում և անցկացում,
- նյութատեխնիկական բազայի բարելավման շարունակական գործընթացի ապահովում,
- օրենքով վերապահված այլ գործողությունների իրականացում:

Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Ազգային անվտանգության ապահովում և պետական պահպանության ապահովում ծրագրերի 2017-2019 թվականներին ծախսերը հիմնականում պահպանվել են 2016 թվականի հաստատված բյուջեի մակարդակով:

18.2.3 Կալանավայրեր

Քրեակատարողական համակարգում իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թվով 12 քրեակատարողական հիմնարկներից:

Ծառայությունը կազմակերպում է քրեական պատիժների կատարման կապակցությամբ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և որոշումների կատարումը, կալանավորվածներին կալանքի տակ պահելը, ինչպես նաև դատապարտյալների և կալանավորվածների փոխադրումներին աջակցելը, քրեակատարողական հիմնարկներում օրինականության, այնտեղ պահվող անձանց, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող անձնակազմի և քաղաքացիների անվտանգությունն ապահովելը, դատապարտյալների և կալանավորվածների կյանքի և առողջության պահպանման, անհատական, կրթական և մշակութային զարգացման պայմանների ապահովումը, դատապարտյալների և կալանավորվածների սոցիալհոգեբանական վերականգնումը, աջակցությունն իրավապահ մարմիններին՝ հանցագործությունների կանխարգելման և բացահայտման աշխատանքներում, ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների գործունեության համակարգումը:

2009 թվականին ընդունված քրեակատարողական ծառայության 2009-2016 թվականների զարգացման հայեցակարգի շրջանակներում քրեակատարողական ծառայությունում ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար Արմավիրի մարզում 2006-2016 թվականների ընթացքում իրականացվել են 9,289.5 մլն դրամի շինարարական աշխատանքներ: Նշված շինարարական աշխատանքները կավարտվեն 2016 թվականին:

Ծառայության պահպանման նպատակով ոչ առաջնահերթ ծախսային ուղղությունները մատնանշվում են՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ ուղղություններով կատարվող ծախսերն ավելացնելու անհրաժեշտությամբ հանդերձ՝ դրանք, այնուամենայնիվ, մյուս ուղղությունների համեմատ փոքր կարևորություն ունեն: Ոչ առաջնահերթ ծախսային ուղղություններն են.

1. գրասենյակային պարագաներ և նյութեր,
2. գույք և սարքավորումներ,
3. գործուղումներ և ծառայողական շրջագայություններ:

Քրեակատարողական համակարգի նպատակները

2017-2019թթ. ընթացքում քրեակատարողական ծառայության հիմնական նպատակները շարունակվելու են լինել՝

- օրենսդրական դաշտի կատարելագործում և ծառայողական գործունեության թափանցիկության ապահովում, կոռուպցիոն ռիսկերի նվազեցում.
- միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկների կառուցում և վերակառուցում, գերծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված այլ միջոցառումների իրականացում.
- որակյալ բժշկական ծառայության ներդնում (այդ թվում՝ հոգեբուժական ծառայությունների կատարելագործում).
- անազատության մեջ պահվող անձանց զբաղվածության, ինչպես նաև նրանց վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումների իրականացում.
- որակյալ սննդի ապահովման քաղաքականության մշակում և իրականացում.
- պատժից պայմանական վաղաժամկետ ազատման արդյունավետ չափորոշիչների և կառուցակարգերի ներդնում.
- ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պատժի կրման պայմանների բարելավում.
- քրեակատարողական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական կատարելագործում.
- քրեակատարողական ծառայողների սոցիալական պայմանների բարելավում.
- քրեակատարողական ծառայությունում էլեկտրոնային-ավտոմատացված համակարգերի մշակում և ներդնում.
- անվտանգության և պահպանության ինժեներատեխնիկական արդի համակարգերով վերազինում.
- միջազգային համագործակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ քրեական պատիժների կատարման ոլորտի միջազգային առաջադեմ փորձի ներդնման նպատակով.
- խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումների հարցերով բողոքարկման մեխանիզմների կատարելագործում:

Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

Քրեակատարողական համակարգի պահպանում ծրագրի 2017-2019 թվականներին ծախսերը հիմնականում պահպանվել են 2016 թվականի հաստատված բյուջեի մակարդակով:

18.2.4 ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն

Փրկարար ծառայության համակարգում իրավիճակի նկարագրություն

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունը (այսուհետ՝ Փրկարար ծառայություն) ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության ոլորտում գործող պետական մարմին է, իր 11 տարածքային փրկարարական վարչություններով, մշակում և իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: Նրա լիազորությունները սահմանվում են «Փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Վերջին տարիներին կառուցվածքային բարեփոխումները թերևս առավել չափով իրենց ազդեցություններն ունեցան փրկարար ծառայության վրա: Նախ՝ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության կազմում վերակազմավորվեց հրշեջ ծառայությունը, այնուհետև՝ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունը վերակազմավորվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության կազմում, հետագայում վերանվանվեց Հայաստանի փրկարար ծառայության, 2015 թվականին վերակազմավորվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կազմում՝ Փրկարար ծառայության, իսկ ներկայումս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում՝ Փրկարար ծառայության:

Համակարգի ստեղծումը համընկել է անկախ պետականության ձեռքբերման հետ, հետևաբար անցումային շրջանի բոլոր դժվարություններն ուղղակիորեն ազդել են փրկարար ծառայության ձևավորման և զարգացման վրա: 2005 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքն՝ առավել հստակեցնելով նրա դերը և տեղը պետական գործառույթների բնագավառում: 2015թ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ստորաբաժանումների և օպերատիվ խմբերի կողմից արտակարգ դեպքերի, պատահարների հետևանքների վերացման նպատակով իրականացվել են 22148 ելք, որից հրդեհների մարման նպատակով՝ 7416 ելք, փրկարարկան աշխատանքների իրականացման նպատակով՝ 14732 ելք:

Վերջին տարիների ընթացքում մեծածավալ ներդրումներ են կատարվել Փրկարար ծառայության համակարգի զարգացման ուղղությամբ՝ ձեռք են բերվել ստացիոնար գերկարճալիք ռադիոկայաններ, շարժական գերկարճալիք ռադիոկայաններ, դյուրակիր գերկարճալիք ռադիոկայաններ, ստացիոնար կարճալիք ռադիոկայաններ, սնման սարքեր, նոր հաճախականություն, մոտորանավակ, օպերատիվ ծառայության և հրշեջ փրկարարական մեքենաներ:

2011թ սեպտեմբերից փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնում հիմնվեց նոր «911» ծառայություն, ինչի արդյունքում բարձրացվեց բնակչության պաշտպանվածության աստիճանը տարաբնույթ արտակարգ իրավիճակներում: «911» ծառայության աշխարհագրության զարգացման և ընդլայնման ուղղությամբ մեծածավալ աշխատանքներ են իրականացվել և ավարտին են հասցվել ՓԾ մարզային փրկարարական վարչություններում և ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում ՃԿԿ ստեղծման գործընթացները: Ահազանգերի կենտրոնացման և համակարգված արձագանքումների իրականացման եղանակով շտապօգնության և մարդուն հրատապ օգնության ցուցաբերման բնագավառում մատուցվող ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ «911» հեռախոսահամարը արդեն գործում է ապակենտրոնացված յուրաքանչյուր մարզում՝ ահազանգման կենտրոնների սպասարկման տարածքներին համապատասխան: 2015թ. ՃԿԱԿ «911» ծառայության կենտրոնական ահազանգման կենտրոնի կողմից սպասարկվել է 21572 ահազանգ բժշկական և հոգեբանական խորհրդատվության գծով սպասարկվել է համապատասխանաբար 2536 և 297 ահազանգ: Միայն հեռախոսով իրականացված բժշկական խորհրդատվության արդյունքում հնարավոր է եղել փրկել 2 երեխայի կյանք: «SOS SISTEMS» հակահրդեհային ինքնաշխատ ազդարարման համակարգի միջոցով ստացվել է 5995 ահազանգ, որոնք սահմանված կարգով սպասարկվել են:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներին համապատասխան՝ համակարգի փրկարարական ստորաբաժանումների կողմից իրականացվում են հրամանատարաշտաբային ուսումնավարժություններ, շտաբային ուսումնավարժություններ, շտաբային վարժանքներ, հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, համայնքային և օբյեկտային համալիր ուսումնասիրություններ:

Փրկարար ծառայության համակարգում ստեղծվել է Քաղպաշտպանության հավաքական ուժերի կենտրոնը, որի խնդիրներից է հանդիսանում ՀՀ Տավուշի մարզի խմելու ջրի կապտաժների պահպանության իրականացումը

Որպես փրկարար ծառայություն՝ համակարգի հիմնական բնորոշիչը պետք է լինի փրկարարական կազմավորումների մշտական մարտական պատրաստականությունը, որոնց և ուղղվում են զարգացման հիմնական ուղղությունները:

Փրկարար ծառայությունը համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ՝ իրականացնելով փորձի փոխանակում, փոխադարձ այցելություններ, համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով, ինչպես նաև արտերկրում կազմակերպված միջոցառումներին փրկարա ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ: Համագործակցությունն իրակա-նացվում է հետևյալ ուղղություններով՝

-ՆԱՏՕ-Հայաստան անհատական գործընկերության ծրագրի շրջանակներում,

- ԱՊՀ տարերային և տեխնածին բնույթի աղետների միջպետական խորհրդի շրջանակներում,

- Հայ-շվեդա-էստոնական քաղաքացիական պաշտպանության հնարավորությունների զարգացման ծրագրի շրջանակներում,

- INESC-ի հետ ուսուցման ծրագրի իրականացման շրջանակներում,

- Սևծովյան տնտեսական համաձայնագրի շրջանակներում,

- Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (MAGATE) հետ,

- Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպության (ՔՊՄԿ) հետ

- ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի հետ և այլն:

Փրկարար ծառայության համակարգի նպատակները

Փրկարար ծառայությունն իրականացնում է արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, քաղաքացիական պաշտպանության գործառույթներ, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության (պատերազմի) ժամանակ բնակչության և տնտեսության օբյեկտների (տարածքների) պաշտպանության, ինչպես նաև փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման և այլ աշխատանքներ:

Համակարգի գերագույն նպատակը մարդկանց և տարածքների պաշտպանությունն է արտակարգ իրավիճակներում: Դրան հասնելու առաջնահերթ պայմաններից մեկը փրկարար ծառայության ստորաբաժանումների կառավարելիության ապահովումն է:

Փրկարար ծառայության համակարգի զարգացման հիմնական գերակայություններն են.

Համակարգը երկրորդական խնդիրներ չունի, քանի որ գործունեությունը կապված է մարդու կյանքի և առողջության պաշտպանության հետ: Համակարգի առաջ դրված գերակա խնդիրներից կարևորագույնը Հանրապետության ողջ տարածքում փրակարարական աշխա-տանքների կազմակերպման հնարավորության ներդրումն է:

Ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնները

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում ծրագրի 2017-2019 թվականներին ծախսերը հիմնականում պահպանվել են 2016 թվականի հաստատված բյուջեի մակարդակով:

18.2.5 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

2017-2019 թվականների հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերում կկազմի համապատասխանաբար՝ 5.83%, 5.61% և 5.25%:

2017-2019 թվականներին հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների միջնաժամկետ ծրագրով՝ հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտների պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի ծախսերի մեջ ունի հետևյալ պատկերը.

Գծանկար 18.2.1. Պետական բյուջեի ծախսերը հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում (%՝ բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ)



2017-2019 թվականներին միջնաժամկետ ծախսերի ծրագրով հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներին յուրաքանչյուր տարում նախատեսվում է ուղղել 78,744.2 մլն դրամ:

Գծանկար 18.2.2. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում ըստ ծրագրերի ծախսերի բաշխումը 2017-2019 թվականներին



Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում ծախսերի տարանջատումն ըստ ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ունի հետևյալ պատկերը.

Գծանկար 18.2.3. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում պետական ծախսերի կառուցվածքը՝ ըստ տնտեսագիտական նշանակության (%՝ ոլորտի պետական ընդհանուր ծախսերի նկատմամբ)



2015-2018 թվականների Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում բյուջետային հատկացումներն, ըստ առանձին խմբերի, ծրագրերի և ընթացիկ ու ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի, ներկայացված են Աղյուսակ 18.2.3 -ում:

Աղյուսակ 18.2.4. Հասարակական կարգի և անվտանգության, փրկարար ծառայության ու կալանավայրերի ոլորտներում բյուջետային հատկացումները 2015-2019 թվականների՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման խմբերի, ըստ ծրագրերի, կատարող պետական մարմինների և ընթացիկ ու ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (մլն դրամ)

Բաժին, Խումբ, Դաս	Ծախսերի գործառական դասակարգման խմբերի ծրագրերի անվանումները	**2015թ.**	**2016թ.**	**2017թ.**	**2018թ.**	**2019թ.**
		փաստ	***ծրագիր***	***Կանխատեսում***		
	ԸՆԴԱՄԵՆԸ այդ թվում	**76,526.2**	**78,862.1**	**78,744.2**	**78,744.2**	**78,744.2**
	- ընթացիկ ծախսեր	74,032.9	78,466.5	78,736.7	78,736.7	78,736.7
	-կապիտալ ծախսեր	2,493.3	395.6	7.5	7.5	7.5
03.01.01	**Հասարակական կարգի պահպանության ապահովում, այդ թվում՝**	**38,399.4**	**36,485.6**	**36,455.3**	**36,455.3**	**36,455.3**
	- ընթացիկ ծախսեր	*38,209.9*	*36,485.6*	*36,455.3*	*36,455.3*	*36,455.3*
	- կապիտալ ծախսեր	*189.5*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*
	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	**38,399.4**	**36,485.6**	**36,455.3**	**36,455.3**	**36,455.3**
03.01.01	**ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն**	**1,583.3**	**2,836.3**	**3,203.9**	**3,203.9**	**3,203.9**
	- ընթացիկ ծախսեր	*2,787.8*	*2,836.3*	*3,203.9*	*3,203.9*	*3,203.9*
	- կապիտալ ծախսեր	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*
	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	**2,787.8**	**2,836.3**	**3,203.9**	**3,203.9**	**3,203.9**
03.05.01	**Քրեակատարողական համակարգի պահպանում, այդ թվում՝**	**8,318.0**	**9,084.0**	**8,851.5**	**8,851.5**	**8,851.5**
	- ընթացիկ ծախսեր	*6,322.5*	*8,884.0*	*8,851.5*	*8,851.5*	*8,851.5*
	- կապիտալ ծախսեր	*1,995.5*	*200.0*	*0.0*	*0.0*	*0.0*
	ՀՀ արդարադատության նախարարություն	**8,318.0**	**9,084.0**	**8,851.5**	**8,851.5**	**8,851.5**
03.01.01	**Պետավտոհամարանիշների ձեռքբերում, այդ թվում՝**	**236.2**	**236.2**	**236.2**	**236.2**	**236.2**
	- ընթացիկ ծախսեր	*236.2*	*236.2*	*236.2*	*236.2*	*236.2*
	- կապիտալ ծախսեր	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*
	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	**236.2**	**236.2**	**236.2**	**236.2**	**236.2**
03.02.01	**Փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանում, այդ թվում՝**	**7,311.2**	**7,443.7**	**7,431.0**	**7,431.0**	**7,431.0**
	- ընթացիկ ծախսեր	*7,286.6*	*7,443.7*	*7,431.0*	*7,431.0*	*7,431.0*
	- կապիտալ ծախսեր	*24.6*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*

	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	**6,311.2**	**7,443.7**	**7,431.0**	**7,431.0**	**7,431.0**
03.01.02	**Ազգային անվտանգության ապահովում, այդ թվում՝**	**16,787.3**	**20,049.4**	**19,833.0**	**19,833.0**	**19,833.0**
	- ընթացիկ ծախսեր	*16,503.6*	*19,853.8*	*19,825.5*	*19,825.5*	*19,825.5*
	- կապիտալ ծախսեր	*283.7*	*195.7*	*7.5*	*7.5*	*7.5*
	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	**16,787.3**	**20,049.4**	**19,833.0**	**19,833.0**	**19,833.0**
03.01.03	**Պետական պահպանության ապահովում, այդ թվում՝**	**2,686.3**	**2,726.9**	**2,733.3**	**2,733.3**	**2,733.3**
	- ընթացիկ ծախսեր	*2,686.3*	*2,726.9*	*2,733.3*	*2,733.3*	*2,733.3*
	- կապիտալ ծախսեր	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*
	ՀՀ պետական պահպանության ծառայություն	**2,686.3**	**2,726.9**	**2,733.3**	**2,733.3**	**2,733.3**

ԳԼՈՒԽ 19. 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԸ

19.1. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման հիմնադրույթները

Տնտեսությունում պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտության հիմնավորման կենտրոնական տարրն է հանդիսանում պետության միջամտությունը՝ պահանջող ոլորտների սահմանումը և դրանով պայմանավորված մասնավոր ու պետական ներդրումների միջև ընտրությունը, որը և հիմք է հանդիսանում պետական ներդրումային ծրագրերի ծավալների և գերակա ուղղությունների որոշման համար:

Հայաստանում տեղի ունեցած տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում պետության դերը և մասնակցության աստիճանը տնտեսության մեջ զգալիորեն կրճատվել է: Նշված կրճատումը պայմանավորում է նաև պետական ներդրումային քաղաքականության գերակայությունների և հիմնական ուղղությունների սահմանման և դրանց պետության փոփոխվող տնտեսական դերին համապատասխանեցման անհրաժեշտությունը: Դրա հիմքն է կազմում կառավարության հստակ պատկերացումը տնտեսական զարգացման ներկա փուլում պետության տնտեսական դերակատարության մասին, որն իր արտահայտությունն է գտնում պետության տնտեսական զարգացման ռազմավարական հիմնարար փաստաթղթերում:

Այդ առումով պետական երկարաժամկետ և միջնաժամկետ ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները, գերակայությունները և ծավալային սահմանափակումները պետք է որոշվեն ելնելով ծրագրման գործողությունների հետևյալ հաջորդականությունից՝

- տնտեսությունում պետության դերի վերաբերյալ հասարակությունում ձևավորված քաղաքական կոնսենսուսի բացահայտում և հստակեցում.

- այդ կոնսենսուսի հիման վրա ձևավորված պետական ներդրումային ծրագրերի հիմնական ուղղությունների, գերակա ոլորտների, ֆինանսավորման ցանկալի ծավալների (ներառյալ ներքին և փոխառու ու դրամաշնորհային բնույթի արտաքին ռեսուրսներից ֆինանսավորումը)՝ երկարաժամկետ բնույթի սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարական պետական փաստաթղթերում արտահայտում,

- երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի հիման վրա որոշակի պարբերությամբ ձևավորված և դրանց դրույթները ըստ ծավալների և ժամկետների մանրամասնող և հստակեցնող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակում:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում առաջին բյուջետային տարվա համար նախատեսված պետական ծախսերի շրջանակը հիմք է հանդիսանում տարեկան պետական բյուջեների կազման համար, ներառյալ ներդրումային ծրագրերի մանրամասնումը, այսպիսով՝

ապահովելով պետական ծախսերի երկարաժամկետ գերակայությունների, միջնաժամկետ կանխատեսումների և կարճաժամկետ իրականացման սկզբունքների համակցումը, ինչպես նաև զարգացման ծրագրերի վրա հիմնված ծախսային քաղաքականության ապահովումը:

Ժամանակակից պետության դերը ներդրումային քաղաքականության ոլորտում պայմանավորված է և ուղղակի բխում է դրա ընդհանուր տնտեսական դերի գնահատականից: Պետությունը կայուն սոցիալական և տնտեսական զարգացման ապահովման նպատակով պետք է իրականացնի գործառույթների երկու լայն շրջանակ՝

- սոցիալական և տնտեսական զարգացմանը նպաստող հանրային բարիքների մատակարարում,

- տնտեսական և սոցիալական արդարության ապահովում, որը նպատակաուղղված է բնակչության սոցիալապես անապահով և աղքատ խավերին հիմնարար բարիքներից օգտվելու հնարավորություններ ընձեռելուն՝ համապատասխան ֆինանսական օժանդակություն տրամադրելով և/կամ համապատասխան ապրանքների և ծառայությունների մատչելիությունն ապահովելով:

Ելնելով պետության մասնակցության վերը նշված հիմնական շրջանակներից, ներդրումային ծրագրերի միջոցով պետական մասնակցության նպատակահարմարության պարզաբանման առումով շրջանակներից յուրաքանչյուրի մասով անհրաժեշտ է պատասխաններ ձևավորել հետևյալ հարցադրումներին.

- Ո՞րն է պետության ներկայիս և նախատեսվող դերը նշված ոլորտում (կարգավորում, հասարակական ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքների պահպանում և զարգացում, ծառայությունների մատչելիության ապահովում, աղքատների և անապահով խավերի պաշտպանություն և այլն):

- Ինչպե՞ս է իրագործվում պետության մասնակցությունը նշված ոլորտում և մասնակցության ինչպիսի՞ փոփոխություններ են նախատեսվում միջնաժամկետ հեռանկարում (հանրային ծառայությունների ուղղակի մատուցում պետական սեփականության հիման վրա և պետական հատվածի կողմից, ոչ պետական կառույցների հետ համագործակցելով՝ մատուցվող ծառայությունների դիմաց ոչ պետական կազմակերպությունների պետական ֆինանսավորմամբ, բնակչության որոշակի խավերի միջև ֆինանսական ռեսուրսների ուղղակի բախշմամբ և այլն): Պետության ոլորտային մասնակցության ձևերի և բնույթի փոփոխությունը պայմանավորված է սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթերով, որոնց դրույթները հետագայում մանրամասնվում և հստակեցվում են պետական ծախսային միջնաժամկետ ծրագրերում:

- Անհրաժեշտ են արդյո՞ք պետական ներդրումային ծրագրերը և պետական սեփականությունը տվյալ ոլորտում պետության արդյունավետ մասնակցության համար: Այս հարցադրման պատասխանը պայմանավորված է սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավա-

րությամբ, որը սահմանում է այն ոլորտները, որտեղ պետական մասնակցության ձևերը ենթակա են փոփոխման և սահմանում է նշված փոփոխությունների իրականացման ռազմավարությունը:

Անհրաժեշտության մասին որոշումները զարգացման ռազմավարությամբ սահմանված ոլորտներում պետական ներդրումների և պետական սեփականության վերաբերյալ կարող են չհամընկնել, այսինքն՝ պետական ներդրումային ծրագրերը, ելնելով տվյալ ոլորտում միջամտության անհրաժեշտությունից, կարող են ուղղվել նաև ոչ պետական հատված:

Պետական մասնակցության և պետական ներդրումային ծրագրերի կարիք ունեցող ոլորտների բացահայտման և մակրոտնտեսական՝ ներառյալ բյուջետային շրջանակի երկարաժամկետ կանխատեսման հիման վրա սահմանվում են պետական ներդրումային ծրագրերի գծով ծախսերի չափերը և միջոլորտային գերակայությունները:

Միջոլորտային գերակայությունների սահմանումից հետո պետական ներդրումային ծրագրերի մեջ ընդգրկված ամեն մի ոլորտի համար ընտրվում են պետական ներդրումային ծրագրերի իրականացման տարբերակները, որոնք ընդհանուր առմամբ կարող են ունենալ հետևյալ դրսևորումները՝

- Պետական ներդրումային ծրագրերը ուղղված են տվյալ ոլորտում պետական սեփականության պահպանմանը կամ զարգացմանը: Այդ դեպքում խնդիր է դրվում պահպանել կամ ավելացնել պետական սեփականության հաշվեկշռային արժեքը և/կամ հասնել այդ սեփականությունը բնութագրող որոշակի որակական ցուցանիշների նախատեսված արժեքների: Նմանօրինակ ծրագրերը նաև պետք է համապատասխան որոշումներ պարունակեն ներդրումների օբյեկտ հանդիսացող պետական սեփականության հետագա ճակատագրի, ինչպես նաև ներդրումային ծրագրերի արդյունքում առաջացած նոր պետական գույքի շահագործման համար անհրաժեշտ ընթացիկ և հետագա կապիտալ ծախսերի մասին:

- Նշված ծրագրերի հաջող իրականացման կարևոր պայման է հանդիսանում տվյալ ոլորտի պետական սեփականության գույքագրումը և պահպանման ու զարգացման ներոլորտային գերակայությունների սահմանումը, որը պետք է իրականացվի՝ ելնելով տվյալ ոլորտում պետական սեփականության առկայության անհրաժեշտության մասին կայացրած որոշումներից, ինչպես նաև ներոլորտային պետական ներդրումների ընդհանուր ծավալային սահմանափակումներից, որոնք մանրամասնեցվում են պետական ծախսերի միջնաժամկետ ծրագրերում և տարեկան բյուջեներում:

- Պետական ներդրումային ծրագրերը ուղղված են ոչ պետական սեփականության պահպանմանը: Նշված ծրագրերի անհրաժեշտությունը կարող է պայմանավորված լինել կենսական կարևորություն ունեցող և կոլեկտիվ օգտագործման առարկա հանդիսացող ոչ պետական միջոցների պահպանմանը կամ վերականգնմանը, եթե կանխավ հայտնի է ներդրումային մասնավոր ռեսուրսների բացակայության կամ խիստ սահմանափակ լինելու մասին

(ներհամայնքային ոռոգման ցանցեր, համայնքային նշանակության ճանապարհներ և այլն):

- Եթե գոյություն ունի այլընտրանք նոր պետական սեփականության ձեռք բերման կամ կառուցման ու եղած շուկայի հնարավորությունների օգտագործման միջև, ապա ընտրությունը պետք է կատարվի ելնելով տնտեսական արդյունավետության հայտանիշներից: Օրինակ պետական կառավարման բնագավառի ներդրումային ծրագրերի շրջանակներում այդպիսի այլընտրանք կարող են լինել շենքերի շինարարությունը կամ վերականգնումը և վարձակալությունը, ավտոտրանսպորտի ձեռքբերումը և պահպանումը և դրա վարձակալությունը և այլն:

- Նշված փուլի արդյունքում պետական ներդրումային ծրագրերի մեջ ընդրգրկված ոլորտների համար պետք է որոշվեն պետական ներդրումային ծրագրերի հնարավոր տեսակները՝ նշելով այն ենթաոլորտները, որտեղ դրանք կարող են կիրառվել, և համապատասխան ենթաոլորտային սահմանափակումները:

19.2. 2013-2016 թվականների հիմնական զարգացումները

2013-2016 թվականներին ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը տատանվել են ՀՆԱ-ի նկատմամբ 2.3-3.2%-ի սահմաններում՝ տարեկան կազմելով միջինը 2.7%: Միևնույն ժամանակ, բյուջեի ծախսերի ընդհանուր կառուցվածքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մասնաբաժինը տատանվել է 9.3-11.6%-ի շրջանակներում՝ կազմելով միջինը 10.6%:

Աղյուսակ 19.1 ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով 2013-2016թթ ծախսերը

	2013 թ	2014 թ	2015 թ	2016 թ
	Փաստացի[38]			Բյուջե
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր				
մլն դրամ	118,967.2	129,218.8	159,633.1	127,685.1
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	10.7%	10.8%	11.6%	9.3%
%՝ ՀՆԱ-ի նկատմամբ	2.6%	2.7%	3.2%	2.3%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր				
մլն դրամ	63,224.9	61,721.7	47,922.0	36,808.6
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	53.1%	47.8%	30.0%	28.8%
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	5.7%	5.1%	3.5%	2.7%
%՝ ՀՆԱ-ի նկատմամբ	1.4%	1.3%	0.9%	0.7%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր[39]				
մլն դրամ	55,742.3	67,497.1	111,711.1	90,876.5
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	46.9%	52.2%	70.0%	71.2%
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	5.0%	5.6%	8.2%	6.6%
%՝ ՀՆԱ – ի նկատմամբ	1.2%	1.4%	2.2%	1.7%

[38] Ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով սույն գլխում փաստացի ցուցանիշները ներկայացված են առանց արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացված ծախսերի:

[39] Սույն գլխում արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսերում ներառված են նաև ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարները:

Ֆինանսավորման աղբյուրների առումով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքում 2013-2015 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում գերակշռել են արտաքին աղբյուրների հաշվին իրականացված ծրագրերի գծով ծախսերը՝ կազմելով 57.6%, ինչն այդ ժամանակահատվածում ցուցաբերել է աճման միտում: Պահպանելով աճման միտումը՝ արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով 2016 թվականի ծախսերը ծրագրավորվել են 71.2%, որոնց գերակշիռ մասը կուղղվի ենթակառուցվածքների զարգացման ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Գծապատկեր 19.1 ՀՀ 2013-2016թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների



Ոլորտների միջև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի բաշխման և ծրագրերի առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ՀՀ կառավարությունը առաջնորդվել է պետական քաղաքականության գերակայություններով՝ դրանք արտացոլելով պետական ծախսերի, մասնավորապես ներդրումային ծրագրերում:

Աղյուսակ 19.2 ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով 2013-2016թթ ծախսերի շրջանակն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի

		2013 թ	2014 թ	2015 թ	2016 թ
		Փաստացի			Բյուջե
	ԸՆԴԱՄԵՆԸ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, որից՝	**118,967.2**	**129,218.8**	**159,633.1**	**127,685.1**
1	**Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ[40]**				
	մլն դրամ	45,414.5	37,318.5	54,038.1	32,101.2
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	38.2%	28.9%	33.8%	25.1%

[40] Ընդհանուր նշանակության պետական ծառայություններում ներառված են բյուջետային ծախսերի գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ», «Պաշտպանություն» և «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» բաժիններում ընդգրկված ծրագրերը:

		2013 թ	2014 թ	2015 թ	2016 թ
		Փաստացի			Բյուջե
2	**Սոցիալական ծառայություններ[41]**				
	մլն դրամ	13,680.7	13,514.1	17,189.3	13,085.8
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	11.5%	10.4%	10.8%	10.3%
3	**Տնտեսական ծառայություններ[42]**				
	մլն դրամ	46,213.2	64,172.6	80,309.7	82,498.1
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	38.8%	49.7%	50.3%	64.6%
4	**Այլ ծառայություններ (Հիմնական բաժինների չդասվող ծախսեր)**				
	մլն դրամ	13,658.8	14,213.6	8,096.0	0.0
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	11.5%	11.0%	5.1%	0.0%

Ոչ ֆինանսական ակտիվների գծով 2013-2016 թվականների ծախսերի զգալի մասն ուղղվել է նոր ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև հների նորոգմանը: Գործառական դասակարգման կառուցվածքում ոչ ֆինանսական ակտիվների գծով 2013-2015 թվականների ընդամենը փաստացի ծախսերի 46.8%-ը կազմել են տնտեսական ծառայությունների գծով ծրագրերը, իսկ 2016 թվականին այդ ցուցանիշը կազմում է 64.6%:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հաջորդ խոշոր խումբը դա ընդհանուր նշանակության պետական ծառայությունների գծով ծախսերն են, որոնք կազմել են ոչ ֆինանսական ակտիվների գծով 2013-2015 թվականների ընդամենը փաստացի ծախսերի 33.5%-ը, իսկ 2016 թվականին այդ ցուցանիշը կազմել է 25.1%:

Սոցիալական ծառայությունների գծով ներդրումային ծրագրերը ոչ ֆինանսական ակտիվների գծով 2013-2015 թվականների ընդամենը փաստացի ծախսերի մեջ կազմել են 10.9%-ը, իսկ 2016 թվականին այդ ցուցանիշը կազմել է 10.3%:

Գծապատկեր 19.2 ՀՀ 2013-2016թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի կառուցվածքն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի



[41] Սոցիալական ծառայություններում ներառված են բյուջետային ծախսերի գործառական դասակարգման «Առողջապահություն», «Հանգիստ, մշակույթ և կրոն», «Կրթություն» և «Սոցիալական պաշտպանություն» բաժիններում ընդգրկված ծրագրերը:

[42] Տնտեսական ծառայություններում ներառված են բյուջետային ծախսերի գործառական դասակարգման «Տնտեսական հարաբերություններ», «Շրջակա միջավայրի պաշտպանություն», «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» բաժիններում ընդգրկված ծրագրերը:

19.3. Պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման փուլում առանցքային դեր է վերագրվել ծախսերի անհրաժեշտությունը պայմանավորող գործոնների տարանջատմանը, որոնք, ըստ էության, ազդել են ինչպես առանձին ծրագրերի՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի միջնաժամկետ ծրագրում ընդգրկելու վերաբերյալ որոշումների կայացման, այնպես էլ, որոշ դեպքերում, միջծրագրային առաջնահերթությունների սահմանման պարագայում:

Ծրագիրը մշակելիս ՀՀ կառավարությունն առանձին ուղղություններով ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում տարանջատել է հետևյալ գործոնները, որոնք պայմանավորում են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի անհրաժեշտությունը՝

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնց չկատարումը հանգեցրել է (և/կամ հանգեցնելու է) հետաձգված ծախսերի կուտակմանը, ինչն, իր հերթին, ավելացնում է ընթացիկ ծախսերի վրա ճնշումը.

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է համապատասխան ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճով.

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որոնց նպատակը մատուցվող ծառայությունների որակի բարելավումն է.

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այն ոլորտներում, որտեղ մասնավոր ներդրումների ծավալներն անբավարար են (թեև այդ ոլորտների ծառայություններին ավելի շատ բնորոշ են «մասնավոր» բարիքների հատկություններ):

19.4 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրման սկզբունքները

2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրելիս ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներից բխող ընդհանուր սահմանափակումները, առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով.

- կառավարության քաղաքականության նպատակներին և գերակայություններին համապատասխանություն,

- հանրային ակտիվների չվերականգնման պարագայում՝ մատուցվող ծառայությունների ծավալների (և/կամ որակի) անկման վտանգի հաղթահարում,

- անվտանգության, ռազմավարական նշանակության և տարածաշրջանային մրցունակությանը նպաստող խդիրների լուծում,

- մասնավոր հատվածի զարգացմանը (ներդրումների ներգրավմանը) նպաստում և տնտեսական աճի խթանում,

- տարածքային կտրվածքով անհամամասնությունների մեղմում և համապատասխան ծառայությունների մատչելիության ավելացում,

- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի առանձին ծրագրերի նպատակների և արդյունքների որոշակիություն, հստակություն և հիմնավորվածություն:

19.5. 2017-2019 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

2017–2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կանխատեսվում են 383.9 մլրդ դրամի չափով, իսկ ըստ տարիների 2017 թվականին՝ 107.6 մլրդ դրամ, 2018 թվականին՝ 115.5 մլրդ դրամ և 2019 թվականին՝ 160.7 մլրդ դրամ: 2017–2019 թվականների ՄԺԾԾ-ով ծրագրավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ՀՆԱ-ի նկատմամբ կազմելու են տարեկան միջինը 2.2%՝ ընդ որում այս ցուցանիշի ամենաբարձր նիշը միջնաժամկետ ժամանակահատվածում կանխատեսվում է 2019 թվականին՝ 2.5%:

Աղյուսակ 19.3 ՀՀ 2015-2019 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների

	2015թ	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Փաստացի	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր						
մլն դրամ	159,633.1	127,685.1	107,635.1	115,536.1	160,739.7	383,910.9
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	11.6%	9.3%	8.0%	8.2%	10.7%	9.0%
%՝ ՀՆԱ նկատմամբ	3.2%	2.3%	1.9%	2.0%	2.5%	2.2%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր						
մլն դրամ	47,922.0	36,808.6	33,445.4	37,863.8	42,411.7	113,720.9
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	30.0%	28.8%	31.1%	32.8%	26.4%	29.6%
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	3.5%	2.7%	2.5%	2.7%	2.8%	2.7%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.9%	0.7%	0.6%	0.6%	0.7%	0.6%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր						
մլն դրամ	111,711.1	90,876.5	74,189.7	77,672.3	118,328.0	270,190.0
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	70.0%	71.2%	68.9%	67.2%	73.6%	70.4%
%՝ պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ	8.2%	6.6%	5.5%	5.5%	7.9%	6.4%
%՝ ՀՆԱ նկատմամբ	2.2%	1.7%	1.3%	1.3%	1.9%	1.5%

Ինչպես ծրագրային ժամանակահատվածին նախորդող տարիներին (2013-2016թթ), այնպես էլ 2017-2019 թվականների միջնաժամկետ ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մակարդակների վարքագիծը հիմնականում պայմանավորվել է արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվելիք) ծրագրերով:



	2013 թ	2014 թ	2015 թ	2016 թ	2017 թ	2018 թ	2019 թ
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	118,967.2	129,218.8	159,633.1	127,685.1	107,635.1	115,536.1	160,739.7
Ներքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր	63,224.9	61,721.7	47,922.0	36,808.6	33,445.4	37,863.8	42,411.7
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացված (իրականացվող) ծրագրերի գծով ծախսեր	55,742.3	67,497.1	111,711.1	90,876.5	74,189.7	77,672.3	118,328.0

Միջնաժամկետ ժամանակահատվածում՝ 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի գերակշիռ մասը՝ 70.4%-ը կկազմեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվելիք ծրագրերը, որից՝ 2017 թվականին 68.9%, 2018 թվականին 67.2%, 2019 թվականին 73.6%:

Գծապատկեր 19.3 ՀՀ 2017-2019թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների



Ծրագրելով նման մակարդակի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր արտաքին աղբյուրների ներգրավմամբ՝ կառավարությունը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ մի շարք ոլորտներում մասնավոր հատվածի ներգրավումը դեռևս ցածր է և պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը պետք է հանդիսանան մասնավոր ներդրումներին փոխլրացնող ու խթանող՝ ուղղված կայուն զարգացման բավարար հիմքերի ստեղծմանը և որակապես նոր տնտեսության ձևավորմանը:

19.6. 2017-2019 թվականների պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ոլորտների

Եռամյա կտրվածքով նախատեսված հատկացումներից, ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, 62.9%-ն ուղղվելու է տնտեսական ծառայությունների, 23.9%-ը՝ ընդհանուր նշանակության պետական ծառայությունների և 13.2%-ը՝ սոցիալական ծառայությունների գծով ծրագրերի իրականացմանը:

Աղյուսակ 19.4 ՀՀ 2015-2019 թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի

		2015թ	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
		Փաստացի	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
	Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, որից՝	**159,633.1**	**127,685.1**	**107,635.1**	**115,536.1**	**160,739.7**	**383,910.9**
1	**Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ**						
	մլն դրամ	54,038.1	32,101.2	27,956.5	30,448.7	33,207.5	91,612.7
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	33.8%	25.1%	26.0%	26.4%	20.7%	23.9%
2	**Սոցիալական ծառայություններ**						
	մլն դրամ	17,189.3	13,085.8	16,362.2	15,148.8	19,108.6	50,619.6
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	10.8%	10.3%	15.2%	13.1%	11.9%	13.2%
3	**Տնտեսական ծառայություններ**						
	մլն դրամ	80,309.7	82,498.1	63,316.4	69,938.6	108,423.6	241,678.6
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	50.3%	64.6%	58.8%	60.5%	67.4%	62.9%
4	**Այլ ծառայություններ (Հիմնական բաժինների չդասվող ծախսեր)**						
	մլն դրամ	8,096.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	5.1%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%

Գծապատկեր 19.4 ՀՀ 2017-2019թթ պետական ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի կառուցվածքն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի



19.6.1. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ

Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ոչ ֆինանսական ակտիվների գծով 2017-2019 թվականների ծախսերը կկազմեն 91.6 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ծրագրավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի 23.9%-ը: Այս ծառայությունների գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում տարեկան կտրվածքով կազմելու են միջինը ՀՆԱ-ի 0.5%: Ծախսերի ֆինանսավորման աղբյուրներում հիմնական մասը՝ 86.2%-ը կազմելու են ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերը:

Աղյուսակ 19.5 Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			2017-2019թթ
Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների բնագավառում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	32,101.2	27,956.5	30,448.7	33,207.5	91,612.7
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	25.1%	26.0%	26.4%	20.7%	23.9%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.6%	0.5%	0.5%	0.5%	0.5%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	26,084.6	23,669.5	26,605.8	28,649.8	78,925.1
%՝ բնագավառի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	81.3%	84.7%	87.4%	86.3%	86.2%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.48%	0.43%	0.45%	0.45%	0.44%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	6,016.6	4,287.0	3,842.9	4,557.7	12,687.6
%՝ բնագավառի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	18.7%	15.3%	12.6%	13.7%	13.8%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.11%	0.08%	0.06%	0.07%	0.07%

19.6.2. Սոցիալական ծառայություններ

Ոչ ֆինանսական ակտիվների գծով 2017-2019 թվականների ծախսերի շրջանակով (եռամյա կտրվածքով) սոցիալական ծառայությունների գծով հատկացումները կազմում են 50.6 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ծրագրավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի 13.2%-ը: Այս ծառայությունների գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում տարեկան կտրվածքով կազմելու են միջինը ՀՆԱ-ի 0.28%: Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ ծրագրային ժամանակահատվածում կգերակշռեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերը՝ կազմելով այս ծառայությունների գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 74.8%:

Աղյուսակ 19.6 Սոցիալական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Սոցիալական ծառայությունների բնագավառում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	13,085.8	16,362.2	15,148.8	19,108.6	50,619.6
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	10.3%	15.2%	13.1%	11.9%	13.2%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.24%	0.29%	0.26%	0.30%	0.28%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	4,840.0	4,443.7	4,128.9	4,167.5	12,740.1
%՝ բնագավառի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	37.0%	27.2%	27.3%	21.8%	25.2%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.09%	0.08%	0.07%	0.07%	0.07%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	8,245.8	11,918.5	11,019.9	14,941.1	37,879.5
%՝ բնագավառի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	63.0%	72.8%	72.7%	78.2%	74.8%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.15%	0.21%	0.19%	0.23%	0.21%

Գծապատկեր 19.5 Սոցիալական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների



Սոցիալական ծառայությունների գծով ներոլորտային բաշխումը (եռամյա կտրվածքով) ունի հետևյալ պատկերը՝ կրթության ոլորտին ուղղվող ծախսերը կկազմեն 31.9 մլրդ դրամ (կամ սոցիալական ծառայությունների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հատկացումների 63.0%-ը), առողջապահության ոլորտին հատկացումները՝ 10.0 մլրդ դրամ (19.8%), սոցիալական պաշտպանության ոլորտին մասհանումները՝ 7.1 մլրդ դրամ (14.0%), իսկ մշակույթի ոլորտին շուրջ 1.6 մլրդ դրամ (3.2%):

Գծապատկեր 19.6 Սոցիալական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ներոլորտային կառուցվածքը



19.6.2.1 Կրթություն

Կրթության ոլորտը, հանդիսանալով պետական քաղաքականության գերակայություններից մեկը, 2017-2019 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրում ինչպես ընթացիկ, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի առումով գտնվում է առաջնահերթությունների շարքում: Այս ուղղությամբ 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրավորված մակարդակը կազմում է 31.9 մլրդ դրամ (սոցիալական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 63.0%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 8.3%-ը: Կրթության ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կազմելու են ՀՆԱ-ի 0.18%-ը: Ծրագրային ժամանակահատվածում ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 30.5%-ը ֆինանսավորվելու է ներքին աղբյուրների հաշվին:

Աղյուսակ 19.7 Կրթության ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Կրթության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	6,703.3	9,609.1	9,727.8	12,553.0	31,889.9
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	5.2%	8.9%	8.4%	7.8%	8.3%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.12%	0.17%	0.16%	0.20%	0.18%

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	2,488.5	2,741.8	3,470.8	3,505.6	9,718.2
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	37.1%	28.5%	35.7%	27.9%	30.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.05%	0.05%	0.06%	0.06%	0.05%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	4,214.80	6,867.30	6,257.00	9,047.40	22,171.7
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	62.9%	71.5%	64.3%	72.1%	69.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.08%	0.12%	0.11%	0.14%	0.12%

Կրթության ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հիմնական նպատակը պետական սեփականություն հանդիսացող ակտիվների պահպանման և վերականգնման ճանապարհով հանրակրթական հաստատությունների բնականոն, հուսալի և անվտանգ գործունեության ապահովումն ու որակյալ ծառայությունների մատուցումն է: Այս համատեքստում ոլորտի առանցքային ծրագրերից է հանդիսանում ներքին աղբյուրների հաշվին իրականացվող կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծրագիրը, որը միջնաժամկետ ժամանակահատվածում ծրագրավորվել է 8.3 մլրդ դրամի չափով կամ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 26.1%-ը: Արտաքին աղբյուրների հաշվին կիրականացվեն ծրագրեր, որոնք ուղղված կլինեն դպրոցների սեյսմիկ անվտանգության և կրթության որակի բարելավմանը:

19.6.2.2 Առողջապահություն

Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության գերակա ուղղություններից է հանդիսանում է նաև առողջապահության ոլորտը: Այս ոլորտի գծով 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրավորված մակարդակը կազմում է 10.0 մլրդ դրամ (սոցիալական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 19.8%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 2.6%-ը: Ծրագրային ժամանակահատվածում առողջապահության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 89.5%-ը ֆինանսավորվելու է արտաքին աղբյուրների հաշվին:

Աղյուսակ 19.8 Առողջապահության ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Առողջապահության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	4,641.9	4,354.4	2,372.2	3,310.8	10,037.4
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	3.6%	4.0%	2.1%	2.1%	2.6%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.09%	0.08%	0.04%	0.05%	0.06%

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			2017-2019թթ
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	1,112.4	1,033.4	12.4	12.4	1,058.2
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	24.0%	23.7%	0.5%	0.4%	10.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.02%	0.02%	0.00%	0.00%	0.01%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	3,529.5	3,321.0	2,359.8	3,298.4	8,979.2
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	76.0%	76.3%	99.5%	99.6%	89.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.06%	0.06%	0.04%	0.05%	0.05%

Առողջապահության ոլորտում պետական ծախսային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը մարզերում հիվանդանոցային ծառայությունների մատչելիության մեծացումն ու որակի բարձրացումն է՝ արդիականացնելով մարզերի հիվանդանոցային հաստատությունները: Այս նպատակով ծրագրային ժամանակահատվածում ներքին աղբյուրների հաշվին նախատեսվում է ավարտին հասցնել Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքները:

Ոլորտում պետական ծախսային քաղաքականության առաջնահերթությունների շարքում է լինելու նաև ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման ու կառավարման նպատակով առողջապահական համակարգերի հնարավորությունների բարելավումը՝ ուղղված Հայաստանում հեմատոլոգիական և օնկոլոգիական ծառայությունների արդյունավետության բարձրացմանը:

19.6.2.3 Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանության ոլորտի գծով 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրավորվել են 7.1 մլրդ դրամ (սոցիալական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 14.0%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 1.8%-ը: Ծրագրային ժամանակահատվածում այս ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 95.0%-ը ֆինանսավորվելու է արտաքին աղբյուրների հաշվին:

Աղյուսակ 19.9 Սոցիալական պաշտպանության ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			2017-2019թթ
Սոցիալական պաշտպանության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	591.1	1,858.7	2,513.8	2,709.8	7,082.3

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	0.5%	1.7%	2.2%	1.7%	1.8%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.1%	0.1%	0.1%	0.1%	0.1%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	89.6	128.5	110.7	114.5	353.7
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	15.2%	6.9%	4.4%	4.2%	5.0%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	501.5	1,730.2	2,403.1	2,595.3	6,728.6
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	84.8%	93.1%	95.6%	95.8%	95.0%

Ոլորտի գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ուղղված կլինեն՝

- հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովմանը,

- վարչական շենքերի վերահատակագծմանը՝ հաշմանդամների ու բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժի մատչելիության ապահովման և համապատասխան միջավայրի ստեղծման նպատակով,

- սցիալական պաշտպանության ծառայությունների տրամադրման բարելավմանը, սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող և ծառայություններ տրամադրող մարմինների վերլուծական, մշտադիտարկման և գնահատման գործառույթների հզորացմանը:

19.6.2.4 Մշակույթ

Մշակույթի ոլորտի գծով 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրավորված մակարդակը կազմում է 1.6 մլրդ դրամ (սոցիալական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 3.2%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 0.4%-ը: Ծրագրային ժամանակահատվածում մշակույթի ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվելու են ներքին աղբյուրների հաշվին:

Աղյուսակ 19.10 Մշակույթի ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Մշակույթի ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	1,149.5	540.0	535.0	535.0	1,610.0
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	0.9%	0.5%	0.5%	0.3%	0.4%

Ոլորտի գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ուղղված կլինեն՝

- մշակութային օբյեկտների հիմնանորոգմանն ու շինարարությանը, մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի գործունեության ապահովման նպատակով Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի վերազինմանը,

- պատմամշակութային հուշարձանների ամրակայմանը, նորոգմանը և վերականգնմանը:

19.6.3. Տնտեսական ծառայություններ

Ոչ ֆինանսական ակտիվների գծով 2017-2019 թվականների ծախսերի շրջանակով (եռամյա կտրվածքով) տնտեսական ծառայությունների գծով հատկացումները կազմում են 241.7 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ծրագրավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի 63.0%-ը: Այս ծառայությունների գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հատկացումները ծրագրային ժամանակահատվածում տարեկան կտրվածքով կազմելու են միջինը ՀՆԱ-ի 1.4%-ը: Ծախսերի հիմնական մասը՝ 90.9%-ը կկազմեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերը:

Աղյուսակ 19.11 Տնտեսական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Տնտեսական ծառայությունների բնագավառում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	82,498.1	63,316.4	69,938.6	108,423.6	241,678.6
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	64.6%	58.8%	60.5%	67.5%	63.0%
%՝ ՀՆԱ նկատմամբ	1.5%	1.1%	1.2%	1.7%	1.4%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	5,884.0	5,332.2	7,129.1	9,594.4	22,055.7
%՝ բնագավառի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	7.1%	8.4%	10.2%	8.8%	9.1%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.1%	0.1%	0.1%	0.2%	0.1%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	76,614.1	57,984.2	62,809.5	98,829.2	219,622.9
%՝ բնագավառի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	92.9%	91.6%	89.8%	91.2%	90.9%
%՝ ՀՆԱ նկատմամբ	1.4%	1.0%	1.1%	1.6%	1.2%

Գծապատկեր 19.7 Տնտեսական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կառուցվածքն ըստ ֆինանսավորման աղբյուրների



Տնտեսական ծառայությունների գծով հատկացումների հիմնական մասը՝ 89.1%-ը կազմելու են տրանսպորտի, ջրային տնտեսության և էներգետիկայի ոլորտներում իրականացվելիք ծախսերը: Տնտեսական ծառայությունների գծով ներոլորտային բաշխումը (եռամյա կտրվածքով) ունի հետևյալ պատկերը՝ տրանսպորտի ոլորտին ուղղվող ծախսերը կկազմեն 111.1 մլրդ դրամ (կամ տնտեսական ծառայությունների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հատկացումների 46.0%-ը), ջրային տնտեսության ոլորտին հատկացումները՝ 67.9 մլրդ դրամ (28.1%), էներգետիկայի ոլորտին մասհանումները՝ 36.3 մլրդ դրամ (15.0%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտին՝ 6.2 մլրդ դրամ (2.5%), գյուղատնտեսության ոլորտին՝ 10.1 մլրդ դրամ (4.2%) և տնտեսական այլ ծառայություններին՝ 10.1 մլրդ դրամ (4.2%):

Գծապատկեր 19.8 Տնտեսական ծառայությունների բնագավառում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ներոլորտային կառուցվածքը



19.6.3.1 Տրանսպորտ

Երկրի տնտեսական աճի բարձր տեմպերի, ազգային անվտանգության և պաշտպանունակության ապահովման, բնակչության կենսապայմանների բարձրացման, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման և մրցունակության համար որպես անհրաժեշտ պայման դիտարկվում է տրանսպորտի կայուն և արդյունավետ զարգացումը:

Տրանսպորտի ոլորտի գծով 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրավորված մակարդակը կազմում է 111.1 մլրդ դրամ (տնտեսական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 46.0%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 28.9%-ը: Տրանսպորտի ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կազմելու են ՀՆԱ-ի 0.6%-ը: Ընդ որում, ծրագրային ժամանակահատվածում ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 81.5%-ը կազմելու են արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերը:

Աղյուսակ 19.12 Տրանսպորտի ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Տրանսպորտի ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	37,964.0	28,559.0	32,058.6	50,443.5	111,061.1
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	29.7%	26.5%	27.7%	31.4%	28.9%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.7%	0.5%	0.5%	0.8%	0.6%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	4,000.0	5,000.0	6,500.0	9,000.0	20,500.0
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	10.5%	17.5%	20.3%	17.8%	18.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.1%	0.1%	0.1%	0.1%	0.1%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	33,964.0	23,559.0	25,558.6	41,443.5	90,561.1
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	89.5%	82.5%	79.7%	82.2%	81.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.6%	0.4%	0.4%	0.7%	0.5%

Այս ոլորտում 2017-2019 թվականների պետական ներդրումները կուղղվեն երկու հիմնական ուղղություններով՝ ճանապարհային տնտեսությանը և Երևանի մետրոպոլիտենի վերակառուցմանը: Մասնավորապես ճանապարհային տնտեսությունում՝

- կշարունակվի միջազգային չափանիշներին համապատասխան «Հյուսիս-հարավ» առաջին արագընթաց ճանապարհի կառուցումը, որը կունենա տարածաշրջանային նշանակություն,

- կբարելավվի Երևանի քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքը և ծառայությունները,

ինչի արդյունքում կթեթևանա Երևան քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը,

- կվերականգնվեն կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածները,

- կվերականգնվի միջպետական նշանակության «Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման» ճանապարհը,

- կհիմնանորոգվեն պետական նշանակության ճանապարհների հրատապ հիմնանորոգման կարք ունեցող ճանապարհահատվածները և տրանսպորտային օբյեկտները:

Կշարունակվեն Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների վերականգնման և բարելավման աշխատանքները:

<u>Ճանապարհային տնտեսությանն</u> ուղղվող 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրավորվել են 101.2 մլրդ դրամ (տրանսպորտի ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրային հատկացումների 91.1%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 26.4%-ը: Ճանապարհային տնտեսությունում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կկազմեն ՀՆԱ-ի 0.6%-ը: Այս ուղղությամբ ծախսերի 79.7%-ը կիրականացվեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Աղյուսակ 19.13 Ճանապարհային տնտեսության 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Ճանապարհային տնտեսության ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	33,698.8	23,915.0	30,016.0	47,247.4	101,178.4
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	26.4%	22.2%	26.0%	29.4%	26.4%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.6%	0.4%	0.5%	0.7%	0.6%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	4,000.0	5,000.0	6,500.0	9,000.0	20,500.0
%՝ ճանապարհային տնտեսության ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	11.9%	20.9%	21.7%	19.0%	20.3%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.1%	0.1%	0.1%	0.1%	0.1%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	29,698.8	18,915.0	23,516.0	38,247.4	80,678.4
%՝ ճանապարհային տնտեսության ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	88.1%	79.1%	78.3%	81.0%	79.7%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.5%	0.3%	0.4%	0.6%	0.5%

<u>Երևանի մետրոպոլիտենի</u> վերակառուցման 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրավորվել են 9.9 մլրդ դրամ: Ծախսերն ամբողջությամբ կազմելու են արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերը:

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	4,265.2	4,644.0	2,042.6	3,196.1	9,882.7
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	3.3%	4.3%	1.8%	2.0%	2.6%

19.6.3.2 Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտի գծով 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրավորված մակարդակը կազմում է 67.9 մլրդ դրամ (տնտեսական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 28.1%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 17.7%-ը: Ջրային տնտեսության ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կազմելու են ՀՆԱ-ի 0.38%-ը: Ծրագրային ժամանակահատվածում ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ամբողջությամբ կիրականացվեն արտաքին աղբյուրների հաշվին:

Աղյուսակ 19.14 Ջրային տնտեսության ոլորտի 2017-2019թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Ջրային տնտեսության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	21,734.6	20,705.4	20,510.7	26,658.8	67,874.9
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	17.0%	19.2%	17.8%	16.6%	17.7%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.40%	0.37%	0.35%	0.42%	0.38%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	1,000.0	0.0	0.0	0.0	0.0
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	4.6%	0.0%	0.0%	0.0%	0.0%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.02%	0.0%	0.0%	0.0%	0.0%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	20,734.6	20,705.4	20,510.7	26,658.8	67,874.9
%՝ ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	95.4%	100.0%	100.0%	100.0%	100.0%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.38%	0.37%	0.35%	0.42%	0.38%

Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսությունը բաղկացած է ոռոգման և խմելու ջրի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերից: Այս ոլորտում միջնաժամկետ ժամանակահատվածի համար ծրագրավորված ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 31.4%-ը կուղղվի ոռոգման համակարգերում ներդրումների իրականացմանը, իսկ 68.6%-ը՝ խմելու ջրի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի վերականգնմանը և բարելավմանը:

Ոռոգման համակարգերում ներդրումներն ուղղված կլինեն.

- ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծմանը՝ նոր ջրամբարների կառուցմամբ,

- մեխանիկական ոռոգումից ինքնահոս ոռոգման անցմանը, ինչը կնվազեցնի ոռոգման կախվածությունը հոսանքատար մեխանիկական ոռոգումից և կդարձնի ոռոգումը տնտեսապես շահավետ ու կայուն,

- առկա համակարգերի վերականգմանն ու արդիականացմանը:

Կառավարությունը, իր քաղաքականության շրջանակներում, ոռոգման համակարգը դիտելով որպես գերակա ուղղություն՝ դա պայմանավորում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և պարենային անվտանգության առումով գյուղատնտեսության կարևոր նշանակությամբ, որի հետագա աճը կարող է էապես վտանգվել՝ պայմանավորված ոռոգման համակարգի հիմնախնդիրներով: Ոռոգման համակարգում կատարվող պետական ներդրումների առաջնային նպատակը տնտեսական աճի խոչընդոտների վերացումն ու գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճն է:

Ոռոգման համակարգերում պետական ներդրումների իրականացման համար 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կկազմեն 21.3 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 5.5%-ը:

Աղյուսակ 19.15 Ոռոգման համակարգերում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			2017-2019թթ
Ոռոգման համակարգերում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	6,657.9	5,992.3	4,019.1	11,278.5	21,289.9
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	5.2%	5.6%	3.5%	7.0%	5.5%
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					
մլն դրամ	1,000.0	0.0	0.0	0.0	0.0
%՝ համակարգին ուղղված ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	15.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր					

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			2017-2019թթ
մլն դրամ	5,657.9	5,992.3	4,019.1	11,278.5	21,289.9
%՝ համակարգին ուղղված ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	85.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

<u>Խմելու ջրի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերում</u> ներդրումներն ուղղված կլինեն Երևան քաղաքի, ինչպես նաև մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի կայուն, հուսալի և անվտանգ ջրամատակարարմանն ու ջրահեռացմանը, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացմանը, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովմանը, գյուղական բնակավայրերում կենտրոնացված ջրամատակարարման սպասարկման ընդգրկվածության ավելացմանը, ծառայությունների որակի բարձրացմանը:

Խմելու ջրի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերում պետական ներդրումներն ամբողջությամբ կիրականացվեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնց 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրավորվել են 46.6 մլրդ դրամ կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 12.1%-ը:

Աղյուսակ 19.16 Խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			2017-2019թթ
Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	15,076.7	14,713.1	16,491.6	15,380.3	46,585.0
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	11.8%	13.7%	14.3%	9.6%	12.1%

19.6.3.3 Էներգետիկա

Էներգետիկան ունի ռազմավարական նշանակություն երկրի անկախության, անվտան-գության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկ համակարգը դիտվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի հիմնական մասերից մեկը:

Էներգետիկայի ոլորտում միջնաժամկետ ժամանակահատվածի պետական ներդրումներն ամբողջությամբ կիրականացվեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնց 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծրագրավորված մակարդակը կկազմի 36.3 մլրդ դրամ (տնտեսական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 15.0%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 9.5%-ը: Այս ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կկազմեն ՀՆԱ-ի

0.2%-ը:

Աղյուսակ 19.17 Էներգետիկայի ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Էներգետիկայի ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	16,315.4	7,434.9	9,998.0	18,880.3	36,313.2
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	12.8%	6.9%	8.7%	11.7%	9.5%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.30%	0.13%	0.17%	0.30%	0.20%

Էներգետիկայի ոլորտի գծով ծրագրերն ուղղված կլինեն երկրի էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը, Հայկական ԱԷԿ-ի N2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանը, էներգահամակարգի առողջացմանն ու վերազինմանը՝ բարձրացնելով էլեկտրաէներգիայի որակական ցուցանիշները և մատակարարման հուսալիությունը, էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցմանը, որոնք կստղծեն նաև էլեկտրաէներգիայի տարանցիկ մատակարարման և արտահանման հնարավորություններ:

19.6.3.4 Շրջակա միջավայրի պաշտպանություն (Բնապահպանություն)

Այս ոլորտում միջնաժամկետ ժամանակահատվածի պետական ներդրումներն ամբողջությամբ կիրականացվեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնց 2017-2019 թվականների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրավորվել են 6.2 մլրդ դրամ (տնտեսական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 2.5%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 1.6%-ը: Այս ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կկազմեն ՀՆԱ-ի 0.03%-ը:

Աղյուսակ 19.18 Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի 2017-2019թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016թ	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	1,387.7	1,081.0	2,025.2	3,079.7	6,185.9
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	1.1%	1.0%	1.8%	1.9%	1.6%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.03%	0.02%	0.03%	0.05%	0.03%

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում պետական ներդրումներն ուղղված կլինեն Երևան քաղաքի, ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի կոշտ թափոնների վերամշակման և կառավարման բարելավման ծրագրերի իրականացմանը:

19.6.3.5 Գյուղատնտեսություն

Գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկումը Կառավարության որդեգրած քաղաքականությունն է: Կառավարությունը նպատակադրում է, բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը, գյուղում զուգահեռաբար ստեղծել կյանքի համար հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուրի լիարժեք ինքնադրսևորման համար, այն գիտակցումով, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի:

Այս նպատակադրմանն է ուղղված լինելու գյուղատնտեսության ոլորտում միջնաժամկետ ժամանակահատվածում պետական ներդրումները՝ աջակցելով անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում, նվազեցնելով գյուղական աղքատությունը, ինչպես նաև ստեղծելով ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ՝ ուղղված կենսամակարդակը: Գյուղատնտեսության ոլորտում պետական ներդրումներն ամբողջությամբ կիրականացվեն արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնց ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2017-2019 թվականներին կկազմեն 10.1 մլրդ դրամ (տնտեսական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 4.2%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 2.6%-ը: Այս ոլորտում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը ծրագրային ժամանակահատվածում միջին տարեկան կտրվածքով կկազմեն ՀՆԱ-ի 0.06%-ը:

Աղյուսակ 19.19 Գյուղատնտեսության ոլորտի 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2016 թ	2017 թ	2018 թ	2019 թ	Ընդամենը 2017-2019թթ
	Բյուջե	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Գյուղատնտեսության ոլորտի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
մլն դրամ	2,329.6	3,291.7	2,189.6	4,659.7	10,141.0
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	1.8%	3.1%	1.9%	2.9%	2.6%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.04%	0.06%	0.04%	0.07%	0.06%

19.6.3.6 Տնտեսական այլ ծառայություններ

Տնտեսական այլ ծառայություններում պետական ներդրումներն ուղղված կլինեն՝

- երկրի տարածքային զարգացման մարտահրավերների լուծմանն ու տարածքների սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, կիրառելով տարածքային համաչափ զարգացման նոր գործիքակազմը՝ տարածքային զարգացման հիմնադրամը, որը կնպաստի տարածքներում բնակչության նյութական ու ոչ նյութական բարեկեցության աճին՝ սոցիալական ու տնտեսական ենթակառուցվածքների ու հանրային ծառայությունների որակի ու հասանելիության բարձրացման միջոցով և կօժանդակի տարածքների ինստիտուցիոնալ և

ֆինանսական կարողությունների հզորացմանը,

- տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրականացմանը, որը կնպաստի առանձին տարածքներում զբոսաշրջության դերի/ներդման ավելացմանը տեղական տնտեսության մեջ՝ կիրառելով համապարփակ մոտեցում, ինչն իր հերթին կբերի ենթակառուցվածքներում ներդրումների ներգրվմանը, քաղաքային վերածնմանը, պատմամշակութային ժառանգության վերականգնմանը, հմտությունների զարգացմանը, զբոսաշրջային արդյունքի զարգացմանն ու դիվերսիֆիկացմանը, ինչպես նաև մասնավոր ներդրումների ներգրավմանը,

- Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի իրականացմանը՝ արդիականացնելով քաղաքային լուսավորության համակարգը բարեկարգված ենթակառուցվածքների, նոր էներգաարդյունավետ լուսադիոդային լամպերի և փողոցների լուսավորության վերահսկման կենտրոնի ներդրման միջոցով,

- միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական 8 փաստաթղթերի՝ շինարարական նորմերի և ձեռնարկների մշակմանը (տեղայնացմանը),

- շենքերի տեխնիկական վիճակի հետազննությունների իրականացմանն ու անձնագրավորմանը, որի արդյունքում հնարավոր կլինի կազմել 192 (որից՝ 72 բազմաբնակարան, 75 կրթական, 12 մշակութային, 12 առողջապահական և 9 մարզական) շենքերի տեխնիկական անձնագրերը, ի հայտ բերել դրանց կառուցվածքային տարրերի վնասվածքների և դեֆորմացիաների առաջացման պատճառները, հիմնավորել դրանց պահպանման և հուսալիության բարձրացման ուղղությամբ վերակառուցման հնարավորությունները և տեխնիակտնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացումը,

- քաղաքաշինական այլ ծրագրերի իրականացմանը:

Նշված ուղղություններով պետական ներդրումները 2017-2019 թվականներին կկազմեն 10.1 մլրդ դրամ (տնտեսական ծառայությունների գծով ծրագրային հատկացումների 4.2%-ը) կամ նույն ժամանակահատվածի ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդհանուր ծախսերի 2.6%-ը, իսկ միջին տարեկան կտրվածքով՝ ՀՆԱ-ի 0.06%-ը:

Աղյուսակ 19.20 Տնտեսական այլ ծառայությունների 2017-2019 թթ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շրջանակը

	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Տնտեսական այլ ծառայությունների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր				
մլն դրամ	2,244.4	3,156.5	4,701.6	10,102.5
%՝ ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նկատմամբ	2.1%	2.7%	2.9%	2.6%
%՝ ՀՆԱ նկատմամբ	0.04%	0.05%	0.07%	0.06%

	2017թ	2018թ	2019թ	Ընդամենը 2017-2019թթ
	ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ			
Ներքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր				
մլն դրամ	332.2	629.1	594.4	1,555.7
%՝ տնտեսական այլ ծառայությունների ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	14.8%	19.9%	12.6%	15.4%
Արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի գծով ծախսեր				
մլն դրամ	1,912.2	2,527.4	4,107.2	8,546.8
%՝ տնտեսական այլ ծառայությունների ոչ ֆինանսական ակտիվների գծով ընդամենը ծախսերի նկատմամբ	85.2%	80.1%	87.4%	84.6%

ԳԼՈՒԽ 20. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սույնով ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, դրանց արդյունքում պետական պարտքի բեռի փոփոխման, ռիսկերի կառավարման ռազմավարությունը:

Ներածություն

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարական ծրագիրը ներկայացնում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման և ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Այն հրապարակվում է տարեկան պարբերականությամբ և նպաստում է կառավարության պարտքի կանխատեսելի և թափանցիկ կառավարման ապահովմանը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը պարզաբանում է պարտք ներգրավելու քաղաքականությունը՝ ներառելով կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները, նպատակներն ու ծրագրերը, բացահայտում է կառավարության պարտքի կառավարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև նախանշում է այն սկզբունքները, հենանիշերն ու իրականացվելիք քայլերը, որոնց ներքո կառավարությունը չի վտանգի հարկա-բյուջետային քաղաքականության կայունությունը:

Պարտքի կառավարումը նշանակալի տեղ ունի պետական հատվածի ֆինանսների կառա-վարման գործընթացում և առանձնակի ուշադրության է արժանանում հատկապես միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում, որտեղ ռեսուրսների սահմանափակության պայմաններում կառա-վարությունը տնտեսական աճին նպաստող հարկաբյուջետային քաղաքականություն իրական-ացնելու համար պարտադրված է պարտք ներգրավել:

ՀՀ կառավարության պարտքի ցանկալի պորտֆելի ձևավորման նպատակով իրականացվում են ծախսերի և ռիսկերի վերլուծություններ՝ կիրառելով նաև Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված մոտեցումները: Վերջինիս միջոցով ուսումնասիրվում են պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները, ինչպես նաև վերլուծությունների միջոցով տրվում են պարտքի պորտֆելի և ֆինանսական ցուցանիշների վրա հնարավոր շոկերի ազդեցության գնահատականներ: Ռազմավարությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման այնպիսի սահմանափակումներ,

ինչպիսիք են ներքին շուկայի կարողությունը կամ արտաքին արտոնյալ վարկերից օգտվելու հնարավորությունների կրճատումը:

Ընդհանուր առմամբ ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ծախսերի և ռիսկերի համադրման հնարավոր տարբերակներից նախընտրելին, որն այլ կերպ անվանվում է հիմնական հնարավոր սցենար, և որի ընտրության հիմքում ընկած է ընդունելի ծախսերով ֆինանսական կարիքի բավարարումը և պարտքի կայունությունը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության նպատակները և ընդգրկման շրջանակը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը մշակվում է համաձայն 2008թ. ընդունված «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական պարտքի հետ կապված հարաբերությունները և նպատակ ունի ապահովել պետական պարտքի կառավարման գործընթացի արդյունավետ և հրապարակային կազմակերպումը:

Կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակն է կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը:

Սահմանվել են կառավարության պարտքի կառավարման հետևյալ նպատակները՝ ա) կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը, բ) պետական պարտքի կառավարման և դրամավարկային քաղաքականությունների համակարգումը: Այլ կերպ ասած, պարտքի կառավարման ռազմավարության նպատակը պարտքի պորտֆելի այնպիսի կառուցվածքի ձևավորումն է, որի պայմաններում նվազեցվում է սպասարկման ծախսերը՝ էականորեն չմեծացնելով ռիսկերը:

Ռազմավարությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության պարտքը, և կատարված վերլուծությունները չեն ներառում ՀՀ ԿԲ-ի արտաքին պարտքը, քանի որ վերջինս ստանձնվում է ՀՀ ԿԲ-ի անունից և կողմից, ինչպես նաև ՀՀ պետական պարտքի մասին օրենքի համաձայն Կենտրոնական բանկի պարտքի կառավարման նպատակները սահմանվում են Կենտրոնական բանկի մասին օրենքով:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում 2015թ. տարեսկզբից մինչև 2016թ-ի հունիս ամիսն արձանագրված զարգացումները

- ՀՀ կառավարության պարտք / նախորդ տարվա ՀՆԱ ցուցանիշը 2015թ. տարեվերջին կազմել է 46.1%: Պարտքային բեռի նման մակարդակը գտնվել է կառավարելիության շրջանակներում և չի գերազանցել պետական պարտքի մասին ՀՀ օրենքով սահմանված 50% շեմը:
- ՀՀ կառավարության պարտքի կառավարման արդյունքում մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը գտնվել է սահմանված 8-11 տարի միջակայքում՝ 2015թ. տարեվերջին կազմելով 9.7 տարի:
- Դեֆիցիտի ֆինանսավորումը ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) ուղենշային ցուցանիշը 2015թ. փաստացի կազմել է 4.4%՝ ծրագրված նվազագույնը 25%-ի դիմաց, ինչը պայմանավորված է եղել նոր եվրապարտատոմսերի թողարկման միջոցով ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին (առանց մուրհակների) դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի նվազեցմամբ:
- 2015թ. մարտի 26-ին թողարկվեցին 10 տարի մարման ժամկետով 500 մլն ԱՄՆ դոլար ծավալով եվրապարտատոմսեր՝ 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ և արժեկտրոնների վճարման կիսամյակային պարբերականությամբ: Միևնույն ժամանակ իրականացվեց 2013թ. սեպտեմբերի 30-ի թողարկման 7 տարի մարման ժամկետով 700 մլն ԱՄՆ դոլար ծավալով եվրապարտատոմսերի 200 մլն ԱՄՆ դոլար ծավալի հետգնում:
- ՀՀ կառավարությունը շարունակել է արտոնյալ պայմաններով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությունը: Նոր կնքված վարկերի արտոնյալության աստիճանի գծով ինդիկատիվ ուղենիշը Հայաստանի Հանրապետության և Արժույթի Միջազգային Հիմնադրամի փոխհամաձայնեցման արդյունքում սահմանվել է 30%: Սակայն, 2015 թվականին նոր կնքված արտաքին պարտքի արտոնյալության միջին մակարդակը կազմել է 19%, որը պայմանավորված է եղել 2015թ. մարտին արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմամբ, ինչը համաձայնեցված է եղել ԱՄՀ-ի առաքելության հետ: Հարկ է նշել, որ ներգրավված փոխառու միջոցների արտոնյալության աստիճանը գնահատելիս հաշվի են առնվում ծրագրի շրջանակներում տրամադրվող ոչ միայն վարկային, այլև դրամաշնորհային միջոցները:
- 2014թ. տարեվերջին ֆինանսական շուկայում արձանագրված անկայունության արդյունքում պետական գանձապետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի բացակայության պայմաններում 2015թ. առաջին եռամսյակում կառավարությունը դադարեցրեց պարտատոմսերի կանոնավոր տեղաբաշխումները: 2015թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացված փոխանակումների ծրագրի արդյունքում, սկսած ապրիլ ամսից, վերականգնվեց ներքին շուկայից փոխառու միջոցների ներգրավման հնարավորությունը: 2015թ. եվրապարտատոմսերի

թողարկումից ստացված միջոցների հաշվին պետական գանձապետական պարտատոմսերով պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ծրագիրը 40 մլրդ դրամից զրոյացվեց: Հետագայում ծրագիրն ավելացվեց 3 մլրդ դրամով, սակայն տարվա արդյունքներով հաջողվեց պետական գանձապետական պարտատոմսերով դեֆիցիտը փաստացի ֆինանսավորել 15.56 մլրդ դրամով:

- 2015թ. տեղաբաշխվել է 144.8 միլիարդ դրամի անվանական արժեքով պետական գանձապետական պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 127.1 միլիարդ դրամ, մարվել և հետ է գնվել ընդամենը 111.5 միլիարդ դրամի պարտատոմսեր և վճարվել է 31.1 միլիարդ դրամ տոկոսագումար:
- 2015թ. ստացվել է 409.9 մլն ԱՄՆ դոլարի արտաքին վարկեր, իսկ այդ ընթացքում մարվել է 60.9 մլն ԱՄՆ դոլարի արտաքին վարկեր և վճարվել է 45.4 մլն ԱՄՆ դոլար տոկոսագումար:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2017-2019թթ. ռազմավարությունը

Մակրոտնտեսական ենթադրությունները և հիմնական ռիսկերի գործոնները

Պարտքի ռազմավարության մշակման ժամանակ կիրառվող մակրոտնտեսական ցուցանիշները պետք է համադրելի լինեն հարկաբյուջետային քաղաքականության մշակման ժամանակ կանխատեսվող մակրոտնտեսական շրջանակի հետ: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի ռազմավարարության հիմքում ընկած են 2017-2019թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ համահունչ մակրոտնտեսական կանխատեսումներ:

Մակրոտնտեսական իրատեսական կանխատեսումների մուտքագրումը պարտքի ծախսեր/ռիսկեր այլընտրանքի վերլուծության ժամանակ առանցքային նշանակություն ունի, քանի որ դրանց շեղումները կարող են էականորեն փոխել ռիսկերի ցուցանիշների մակարդակը և ուղղվածությունը:

2017-2019թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած ցուցանիշները արտացոլված են ստորև ներկայացվող աղյուսակում:

Աղյուսակ 1. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած ցուցանիշները 2017-2019թթ. (մլրդ դրամ)

	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՆԱ (անվանական)	5,551.3	5,919.4	6,372.0
Պետական բյուջեի եկամուտներ	1,196.5	1,286.8	1,390.3
Պետական բյուջեի առաջնային ծախսեր	1,243.3	1,284.5	1,371.9

Վերջին տարիներին ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունների իրականացման միջավայրը կրում էր արտաքին աշխարհից փոխանցվող մի շարք բացասական գործոնների ազդեցությունը: Մասնավորապես, շարունակաբար նվազող արտաքին մասնավոր տրանսֆերտների պայմաններում 2014թ. տարեվերջին ՀՀ ֆինանսական շուկայում կայունությունը վերականգնելու և գնաճային սպասումները զսպելու նպատակով դրամավարկային պայմանները տևական ժամանակ խստացվել էին, ինչն իր անմիջական ազդեցությունն ունեցավ ներքին պարտքի շուկայի վրա:

2015թ. տարեվերջից սկսած դրամավարկային պայմաններն ունեցել են մեղմման միտում և 2016թ. տարեսկզբին ՀՀ կենտրոնական բանկը նպատակահարմար է համարել շարունակել դրամավարկային պայմանների թուլացումը, որն արտահայտվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազմամբ: Վերջինս արդեն իսկ դրականորեն է անդրադարձել ներքին պարտքի տոկոսադրույքների վրա, սակայն վերը նկարագրված շոկերի կրկնվելու պարագայում ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները կարող են էականորեն շեղվել ռազմավարությամբ կանխատեսված մակարդակներց:

Ուղենշային ցուցանիշները և իրականացվելիք միջոցառումները

- ՀՀ կառավարության պարտք / նախորդ տարվա ՀՆԱ հարաբերակցությունը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չի գերազանցի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված 60 տոկոս սահմանային շեմը: Կանխատեսվում է, որ 2017-2019թթ. ընթացքում յուրաքանչյուր տարվա վերջին ՀՀ կառավարության պարտք / նախորդ տարվա ՀՆԱ ցուցանիշը գերազանցելու է 50%-ը, ուստի, համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետի, 2018թ-ից սկսած յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չի գերազանցի ՀՀ ՀՆԱ-ի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը:

Աղյուսակ 2. ՀՀ կառավարության պարտքի ցուցանիշները 2016-2019թթ.

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտք (մլրդ դրամ)	2,408	2,649	2,785	2,976
% ՀՆԱ-ի նկատմամբ	44.3	47.7	47.0	46.7
% նախորդ տարվա ՀՆԱ-ի նկատմամբ	49.5	50.3	50.2	50.3

- Միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում՝ շուկայի մասնակիցների կազմի և կառուցվածքի նպատակաուղղված փոփոխության, ինչպես նաև թվաքանակի էական մեծացման պայմաններում կաճի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին փոխառու միջոցների տեսակարար կշիռը: Այն միտված կլինի նվազեցնելու փոխարժեքի հետ կապված ռիսկերը, ինչպես նաև հիմքեր կստեղծի ֆինանսական շուկայում նոր գործիքների (լողացող, ինդեքսավորվող, նպատակային և այլն) կիրառման ու շուկայի հետագա զարգացման համար:
- Կառավարությունը կշարունակի ջանքերը պետական պարտատոմսերի տեղաբաշխումների, հետգնումների և փոխանակումների էլեկտրոնային համակարգի կատարելագործման ուղղությամբ: Օտարերկրյա ներդրողների մուտքը ներքին շուկա դյուրացնելու նպատակով կստեղծվեն համապատասխան հաղորդակցության ուղիներ:
- Կիրականացվի ֆինանսական միջոցների որոշակի կուտակում, որը պարտատոմսերի շուկայում անցանկալի գործընթացների դեպքում կարճաժամկետ հատվածում թույլ կտա նվազեցնել պետական պարտատոմսերով դեֆիցիտի ֆինանսավորման չափը, իսկ կենսաթոշակային և ապահովագրական բարեփոխումների ընթացքով պայմանավորված՝ այն կճշգրտվի:
- Սույն ռազմավարության հաշվարկներում նախատեսված չեն նոր եվրապարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր, սակայն միջնաժամկետ հատվածում, հնարավոր արտաքին տնտեսական միջավայրի բացասական փոփոխության ազդեցության արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության իրականացման մեծ ռիսկերի առաջացման դեպքերում, կդիտարկվի նոր եվրապարտատոմսերի թողարկման իրականացման նպատակահարմարությունը:
- Միջազգային լավագույն փորձին համապատասխան կվերանայվի պարտքային գործառնությունները կարգավորող օրենսդրությունը:
- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից մեկը թափանցիկության ապահովումն է, ուստի կառավարությունը կապահովի պարտքի վերաբերյալ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների և ներդրողների հետ բաց ու հրապարակային աշխատանքների շարունակականությունը:
- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:
- Որպես ներքին պետական պարտքի կառավարման նպատակադրում՝ կշարունակվի դիտարկվել պարտատոմսերի իրացվելիության բարձրացումը՝ համախմբելով պետական

պարտատոմսերի թողարկումների քանակը և մեծացնելով շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը:

- Կարևորելով պետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ քայլեր կձեռնարկվեն խնայողական պարտատոմսերի ներդրողների շրջանակը մեծացնելու ուղղությամբ: Այս առումով, կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կշարունակվեն գովազդային աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում, ինչպես նաև կներդրվի պետական պարտատոմսերի մանրածախ վաճառքի էլեկտրոնային համակարգ:
- Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կշարունակվի և կխորացվի՝ նախապատվությունը տալով արտոնյալ պայմաններով, ազատ փոխարկելի արժույթով և ֆիքսված տոկոսադրույքով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը:
- Անհրաժեշտության դեպքում, արտաքին վարկատուների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրաված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:
- ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում ջանքեր կգործադրի պահպանել ԱՄՀ-ի հետ համաձայնեցված արտաքին պարտքի արտոնյալության 30% միջին մակարդակի հենանիշը:
- ՀՀ կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները հետևյալն են.

Աղյուսակ 3. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2017-2019թթ. ուղենշային ցուցանիշները

	Ուղենիշ
Վերաֆինանսավորման ռիսկ	
Մինչև մարում միջին ժամկետը	8 – 11 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%
Տոկոսադրույքի ռիսկ	
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%
Փոխարժեքի ռիսկ	
Ներքին պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ	առնվազն 20%

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կարիքը փոխառու զուտ միջոցների հաշվին 2017-2019թթ. համար պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ֆինանսական կարիքը կազմել է հետևյալը.

Աղյուսակ 4. Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կարիքը փոխառու զուտ միջոցների հաշվին 2017-2019թթ (մլրդ դրամ)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին	183.1	184.2	129.0	185.0
որից՝				
Ներքին փոխառու զուտ միջոցներ (առանց մուրհակների)	42.0	45.0	45.0	45.0
կշիռը, (%)	22.9	24.4	34.9	24.3
Արտաքին փոխառու զուտ միջոցներ	141.1	139.2	84.0	140.0
կշիռը, (%)	77.1	75.6	65.1	75.7

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծությունը

Կառավարության պարտքի ծախսերը բնութագրելու համար կիրառվել են հետևյալ ցուցանիշները՝ ա) պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը, բ) պետական բյուջեի եկամուտների մեջ տոկոսավճարի կշիռը և գ) ՀՆԱ-ի մեջ տոկոսավճարի կշիռը:

2015թ. վերջի դրությամբ առկա ՀՀ կառավարության պորտֆելի միջին տոկոսադրույքը (պարտքի տոկոսավճարի հարաբերությունը նախորդ տարվա վերջի դրությամբ պարտքի մնացորդին) կազմել է 3.9%, որը ռիսկի տեսակետից գնահատվում է չափավոր: ՀՀ կառավարության արտաքին պարտքի միջին տոկոսադրույքը, արտաքին արտոնյալ վարկերի մեծ տեսակարար կշիռ ունենալու արդյունքում, կազմել է 2.5%: Այս տոկոսադրույքն ապագայում միտված է աճելու, որովհետև միջազգային կազմակերպությունների կողմից կրճատվում է Հայաստանին տրամադրվող արտոնյալ վարկերի ծավալը: Ներքին պարտքի միջին տոկոսադրույքը կազմել է 11.0%, որն աճել է 2014թ. տարեվերջին արձանագրված փոխարժեքի շոկի ազդեցության արդյունքում:

ՀՀ կառավարությունը 2015թ. ընթացքում պարտքի գծով վճարել է 74.1 մլրդ դրամ տոկոսավճար, որը կազմել է պետական բյուջեի եկամուտների 6.3%-ը և ՀՆԱ-ի 1.5%-ը:

Երկու ցուցանիշներն էլ արտահայտում են ՀՀ կառավարության պարտքի ծախսերի չափավոր մակարդակ, սակայն երկուսն էլ միջնաժամկետ հատվածում աճում են:

Պետական պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը լուծելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը: Ռիսկերի կառավարման նպատակը չնախատեսված կորուստներից խուսափումն ու գործառնությունների անընդհատության ապահովումն է:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելում շուկայական ռիսկերից ամենաէականը փոխարժեքի ռիսկն է: Փոխարժեքի ռիսկը հիմնականում չափվում է հետևյալ երկու ցուցանիշներով՝ ա) արտարժույթով պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ և բ) արտարժույթով կարճաժամկետ ընթացիկ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ:

ՀՀ կառավարության պարտքի ներկայիս պորտֆելը կրում է փոխարժեքի մեծ ռիսկ, քանի որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի գերակշիռ մասը՝ 85.6%-ը արտարժույթով է:

Գծապատկեր 1. ՀՀ կառավարության արտարժութային և դրամով արտահայտված պարտքերի հարաբերակցությունը 2014-2015թթ.



ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը ներկայացված է ստորև՝

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2015թ. տարեվերջին

Աջ գրաֆիկը ցույց է տալիս պարտքի արտարժութային կառուցվածքը՝ SDR-ի տարանջատմամբ:

Արտարժութային պարտքի մեծ կշիռը հետևանք է պարտքի պորտֆելում երկկողմանի և բազմակողմանի վարկատուների կողմից տրամադրված փոխառությունների գերակայության, որոնք սովորաբար երկարաժամկետ, արտոնյալ ժամկետով և ֆիքսված տոկոսադրույքով փոխառություններ են: 2015թ. կարճաժամկետ արտարժութային ընթացիկ պարտքի (մարումների և տոկոսագումարների) կշիռը միջազգային պահուստների մեջ աճել է, հիմնականում եվրապարտատոմսերի հետգնման հաշվին, և 2014թ. 7.4%-ի դիմաց կազմել է 23.2% (նույն ցուցանիշը առանց հետգնման կկազմեր 10.3%):

Կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկը գնահատվել է հիմնականում երեք ցուցանիշներով՝ ա) մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը, բ) մինչև մարում միջին ժամկետը և գ) կառավարության պարտքի պորտֆելի մարման գրաֆիկը:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկը ցածր է, քանի որ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջիկա տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը կազմում է ընդամենը 4.0%: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության արտաքին պարտքի 12 ամսյա ժամկետում մարման ծավալը կազմել է ընդամենը 1.8%, իսկ ներքին պարտքինը՝ 14.8%:

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2015թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 9.7 տարի, որը ևս արդյունք է արտաքին երկարաժամկետ վարկերի մեծ տեսակարար կշռի: Ընդ որում, ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը կազմել է 10.6 տարի, իսկ ներքին պարտքինը՝ 5.7 տարի: Այս ցուցանիշը

հաստատում է ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկի չափավոր լինելը:

Վերաֆինանսավորման ռիսկն առավել պատկերավոր է ներկայացված մարման գրաֆիկի միջոցով, որտեղ 2020թ. և 2025թ. մարման մեծ ծավալները պայմանավորված են թողարկված երկու եվրապարտատոմսերի մարումներով, որոնք համապատասխանաբար կազմում են տվյալ տարում մարվող պարտքի 71.7%-ը և 75.7%-ը:

Գծապատկեր 3. Կառավարության պարտքի գծով մարումների գրաֆիկը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)



2015թ. տարեվերջի դրությամբ ձևավորված կառավարության արտաքին պարտքի մարումները սփռված են մինչև 2050թ., իսկ ներքին պարտքինը՝ մինչև 2032թ.:

Կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկը գնահատվել է հիմնականում երեք ցուցանիշներով՝ ա) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, բ) հաջորդ տարի վերաֆիքսվող պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, գ) մինչև վերաֆիքսում միջին ժամկետը:

ՀՀ կառավարության պարտքի 89.5%-ը ֆիքսված տոկոսադրույքով է, որտեղ արտաքին պարտքի 87.4%-ն է ֆիքսված տոկոսադրույքով, իսկ ներքին պարտքն՝ ամբողջությամբ: Այս պարագայում լողացող տոկոսադրույքով պարտքի տոկոսադրույքների աճը վերաֆիքսման ընթացքում չի կարող հանգեցնել ծախսերի նշանակալի աճի:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության պարտքի 14.4%-ը ենթակա է վերաֆիքսման 2016թ-ին և պարունակում է չափավոր տոկոսադրույքի ռիսկ:

Մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը 2015թ. վերջին կազմել է 8.4 տարի, որն ավելի փոքր է, քան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը, քանի որ պարտքի 10.5%-ը լողացող տոկոսադրույքով է, որը ևս ենթակա է վերաֆիքսման 2016թ. ընթացքում:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա պորտֆելի ամենամեծ ռիսկը դա փոխարժեքի ռիսկն է: Վերաֆինանսավորման տեսակետից ռիսկեր կան նաև ներքին պարտքի մարման գրաֆիկով պայմանավորված, որտեղ ներքին պարտքի մարումների մեծ մասը կենտրոնացված է առաջիկա երեք տարիներին:

Պարտքի կառավարման ռազմավարության ընտրությունը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական ռիսկերը, հատկապես պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը, նվազեցնելու նպատակով որպես երկարաժամկետ նպատակադրում դիտարկվում է կառավարության պարտքի մեջ ներքին պարտքի մասնաբաժնի ավելացումը:

Ի տարբերություն համադրելի միջազգային վարկանիշ ունեցող երկրների՝ ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը բավականին մեծ է:

Աղյուսակ 5. Նմանատիպ երկրների կառավարությունների արտաքին պարտքի ծավալի համեմատականը 2015թ. տարեվերջի դրությամբ

	Հայաստան	Վրաստան	Մակեդոնիա	Ալբանիա	Մոլդովա
ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը	83,5%	78,5%	61%	41%	16%

ՀՀ կառավարության արտաքին պարտքը ներքինով փոխարինելու դեպքում կմեծանա նաև վերաֆինանսավորման ռիսկը, քանի որ ներքին պարտքի գործիքները ժամկետայնության տեսակետից հիմնականում զիջում են արտաքին վարկերին: Սակայն, այս ռիսկը հնարավոր կլինի մեղմել՝ վերաֆինանսավորման ռիսկի կառավարման միջոցով, քանի որ այն դեռևս գտնվում է չափավոր մակարդակում:

Ընտրված ռազմավարության արդյունքում ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծությունը

Կանխատեսված մակրոտնտեսական միջավայրի պայմաններում ՀՀ կառավարության պարտքի ծախսի ցուցանիշները որոշակի աճ կարձանագրեն կանխատեսվող ժամանակահատվածի վերջում:

Աղյուսակ 6. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ցուցանիշների կանխատեսումները

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին տոկոսադրույքը (%)	4.52	4.49	4.46	4.56
Տոկոսավճար / պետական բյուջեի եկամուտներ(%)	8.42	9.04	9.19	9.14
Տոկոսավճար / պետական բյուջեի ծախսեր (%)	7.3	8.0	8.4	8.5
Տոկոսավճար / ՀՆԱ (%)	1.85	1.95	2.00	1.99

Ընդհանուր առմամբ, կանխատեսվող ժամանակահատվածի առաջին կեսում տեղի կունենա պարտքի ծավալի առաջանցիկ աճ ՀՆԱ-ի աճի նկատմամբ՝ հանգեցնելով ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի բարձրացմանը, որը 2015թ. տարեվերջին կազմում էր 44.2%: ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը կանխատեսվող ժամանակահատվածի վերջում կկազմի 4.56%: Կանխատեսվող տոկոսավճարների մակարդակը 2019թ. կլինի ՀՆԱ-ի 1.99%-ը՝ կանխատեսվող ժամանակահատվածի սկզբի նկատմամբ արձանագրելով որոշակի աճ: Ծախսերի այսպիսի սահմանափակ աճը պայմանավորված է կանխատեսվող ժամանակահատվածում ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի մեջ բազմակողմանի ներդրողներից ներգրավված պարտքի գերակայությամբ:

Ռիսկերի կառավարման տեսակետից կարևորվում են վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական ռիսկերը:

Փոխարժեքի ռիսկ

Ներքին պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ ցուցանիշը միջնաժամկետ հատվածում ձգտում է սահմանված ուղենշային մակարդակին:

Աղյուսակ 7. ՀՀ կառավարության ներքին պարտքի և արտարժութային պարտքի տեսակարար կշիռները ընդամենը պարտքում

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Ներքին պարտք / Ընդամենը պարտք (%)	17.7	18.2	19.1	19.6
ՀՀ կառավարության արտարժութային պարտք / Ընդամենը պարտք (%)	84.2	83.7	82.6	82.0

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման մեջ ներքին զուտ փոխառու միջոցների ծավալը միջնաժամկետ հատվածում աճում է, որի արդյունքում 2019թ. վերջին արտարժութային պարտքի տեսակարար կշիռը նվազում է՝ 2015թ. տարեվերջի 85.6%-ի դիմաց կազմելով 82.0%: Սակայն, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը առաջիկա տարիներին դեռևս կմնա որպես ռիսկի հիմնական գործոն:

Աղյուսակ 8. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2016-2019թթ.

(տոկոս)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
USD	47.8	50.5	52.9	55.8
SDR	38.0	35.5	33.1	30.1
EUR	8.1	8.2	8.6	9.1
JPY	5.4	5.2	4.8	4.3
AED	0.2	0.1	0.1	0.1
CNY	0.6	0.5	0.5	0.5

Եթե SDR-ի փոխարժեքը, որը կազմված է հինգ արժույթներից, տարանջատում ենք այդ արժույթների կշիռներին համապատասխան՝ USD – 41.73%, EUR – 30.93%, GBP – 8.09%, JPY – 8.33% և CNY – 10.92%, ապա ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը ստանում է հետևյալ տեսքը՝

Աղյուսակ 9. ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2016-2019թթ. SDR-ի տարանջատմամբ

(տոկոս)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
USD	63.6	65.3	66.7	68.4
EUR	19.9	19.2	18.8	18.5
GBP	3.1	2.9	2.7	2.4
JPY	8.6	8.1	7.5	6.8
AED	0.2	0.1	0.1	0.1
CNY	4.7	4.4	4.1	3.8

Փոխարժեքի ռիսկի նվազման և արդյունավետ կառավարման տեսանկյունից ապագայում չի բացառվում, որ պարտքի կառավարիչներն օգտագործեն աշխարհում տարածված հեջավորման տարբեր մոտեցումներ (օրինակ՝ արտարժութային սվոփներ):

Գծապատկեր 4. ՀՀ կառավարության արտարժութային ընթացիկ պարտքի կշիռը ՀՀ կենտրոնական բանկի արտաքին ակտիվներում 2016-2019թթ. (տոկոս)



ՀՀ կառավարության արտարժութային ընթացիկ պարտքի կշիռը ՀՀ ԿԲ-ի արտաքին ակտիվներում ցուցանիշը միջնաժամկետ հատվածում դրսևորելու է աճի միտում՝ պայմանավորված ՀՀ կառավարության արտարժութային ընթացիկ պարտքի ծավալների առաջանցիկ աճով:

Վերաֆինանսավորման ռիսկ

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է՝ պայմանավորված առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի սպասարկման գծով վճարման ենթակա գումարների ծավալներով և միջազգային ու ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներով: Պարտքի թողարկումների կազմակերպման ընթացքում ՀՀ կառավարությունը ջանում է հարթեցնել մարումների գրաֆիկը և մեղմել վերաֆինանսավորման ռիսկը: Վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում են նաև հետգնումներ, ինչպես նաև գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումները կենտրոնացվում են ուղենշային պարտատոմսերի մարման օրերին:

Աղյուսակ 10. ՀՀ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկերի ցուցանիշները 2016-2019թթ.

	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	9.3	9.1	8.5	8.0
ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	10.0	9.7	9.1	8.5
ՀՀ կառավարության ներքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	6.1	6.1	6.0	5.7

Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	4.6	5.4	5.1	14.0
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	2.3	2.7	3.0	12.9
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	14.8	17.8	13.6	18.6

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2019թ. վերջին կնվազի՝ կազմելով 8.0 տարի: Սա հիմնականում բացատրվում է նրանով, որ 2020թ. և 2025թ. մարվող և մեծ կշիռ ունեցող եվրապարտատոմսերի մարման ժամկետը ինչքան մոտենում է, այնքան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը նվազում է: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, տնտեսության վերականգնմանը զուգընթաց Հայաստանը, ըստ Համաշխարհային Բանկի դասակարգման, տեղափոխվեց միջին եկամուտ ունեցող երկրների շարքը, ինչի հետևանքով միջազգային վարկատու կազմակերպությունները և օտարերկրյա պետությունները սկսեցին աստիճանաբար խստացնել վարկավորման պայմանները՝ նվազեցնելով տրամադրվող արտոնյալ վարկային միջոցների ծավալները: Այնուամենայնիվ, մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը կանխատեսվող ժամանակահատվածում էական փոփոխություն չի կրի և կմնա սահմանված ուղենիշի միջակայքում: Այս տեսակետից, վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է չափավոր:

Ստորև ներկայացվում է նաև ՀՀ կառավարության ընթացիկ պարտքի ցուցանիշը, որն իրենից ներկայացնում է տարվա ընթացքում մարումների և տոկոսավճարների հանրագումարը:

Գծապատկեր 5. ՀՀ կառավարության ընթացիկ պարտքը 2014-2019թթ. (մլրդ դրամ)



ՀՀ կառավարության ընթացիկ պարտքի ցուցանիշը նվազում է 2016թ., որից հետո 2017-2019թթ. կրկին աճում է:

Աղյուսակ 11. ՀՀ կառավարության ընթացիկ պարտքն ըստ գործիքակազմի (մլրդ դրամ)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՀ կառավարության ընթացիկ պարտքն ըստ գործիքակազմի, որից՝	217.1	244.1	307.9	292.3
արտաքին վարկեր և փոխառություններ	66.6	84.6	108.1	117.7
տոկոսավճար	31.3	36.5	40.9	44.2
մարում	35.3	48.1	67.3	73.5
պետական գանձապետական պարտատոմսեր	119.4	127.9	168.2	143.0
տոկոսավճար	38.2	40.0	45.8	51.3
մարում	81.2	87.9	122.4	91.7
արտարժութային պետական պարտատոմսեր	31.1	31.6	31.6	31.6
տոկոսավճար	31.1	31.6	31.6	31.6
մարում	-	-	-	-

Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ ցուցանիշը 2019թ. տարեվերջին էականորեն աճում է՝ հասնելով 14.0%-ի և հիմնականում պայմանավորված է 2020թ. մարվող եվրապարտատոմսերով: ՀՀ կառավարությունը ջանալու է կանխիկ հոսքերի կառավարման գործիքների կիրառմամբ մինչ 2019թ-ը նվազեցնել այդ ռիսկը:

Տոկոսադրույքի ռիսկ

Քանի որ փոխառու միջոցների մի մասն արդեն իսկ ներգրավվում է շուկայական պայմաններով, ուստի ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել տոկոսադրույքի հետ կապված ռիսկերին: Ռազմավարական տեսանկյունից տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակն է ապահովել կառավարության պարտքի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների փոփոխությունը հնարավորինս քիչ ազդեցություն կունենա կանխատեսվող տոկոսագումարների մակարդակի վրա:

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշը կանխատեսվող ժամանակահատվածում մի փոքր վատթարանում է, սակայն մնում է կառավարելի: Այսպես, ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը 2019թ. տարեվերջին նվազում է մինչև 80.6%-ի: Չնայած ՀՀ կառավարության կողմից կանխատեսվող ժամանակահատվածում թողարկվելու է ավելի շատ ներքին պարտք, որի տոկոսադրույքը ֆիքսված է, այնուամենայնիվ, շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ծավալի կշիռը դեռևս նշանակալի չի լինելու: Մյուս կողմից, բազմակողմանի վարկատուները ավելի շատ լողացող տոկոսադրույքով նոր վարկեր են տրամադրելու և վերջիններիս ազդեցությունն ավելի է լինելու ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի վրա:

Աղյուսակ 12. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2016-2019թթ.
(տոկոս)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտք,	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝				
Ֆիքսված տոկոսադրույքով	85.5	84.6	82.8	80.6
Լողացող տոկոսադրույքով	14.5	15.4	17.2	19.4
ՀՀ կառավարության արտաքին պարտք	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում				
Ֆիքսված տոկոսադրույքով	82.4	81.2	78.7	75.8
Լողացող տոկոսադրույքով	17.6	18.8	21.3	24.2
ՀՀ կառավարության ներքին պարտք	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում				
Ֆիքսված տոկոսադրույքով	100.0	100.0	100.0	100.0
Լողացող տոկոսադրույքով	0.0	0.0	0.0	0.0

Որպես վերը նշվածի հետևանք, մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի մասնաբաժինը ևս մեծանալու է, իսկ 2019թ. այն թռիչքային աճ է ունենալու և կազմելու է ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի գրեթե մեկ երրորդը:

Աղյուսակ 13. ՀՀ կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկերի ցուցանիշները 2016-2019թթ.

	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	7.4	7.1	6.4	5.7
ՀՀ կառավարության արտաքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	7.7	7.3	6.5	5.7
ՀՀ կառավարության ներքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	6.1	6.1	6.0	5.7
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	18.9	20.7	22.1	33.2

Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	19.8	21.4	24.1	36.8
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	14.8	17.8	13.6	18.6

Պետք է նշել, որ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունները նույնպես նշանակալի ազդեցություն ունեն ՀՀ կառավարության պարտքի ռիսկի ցուցանիշների վրա, ինչպես շուկայական փոփոխականների տատանումները: Օրինակ, կանխատեսվածից ավելի ցածր ՀՆԱ-ի կամ պետական բյուջեի պակասուրդի էական աճի արդյունքում ծախսերի և ռիսկերի ցուցանիշները կարող են էականորեն վատթարանալ:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը սահմանվում է որպես արտաքին գործոնների, տեխնոլոգիաների արդյունք, ինչպես նաև անձնակազմի, կազմակերպության, գործընթացների անբավարար գործունեության հետևանք: Գործառնական ռիսկը կառավարելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի տեղեկատվության անվտանգության ապահովումը՝ ներառյալ փաստաթղթերը և տեխնոլոգիական համակարգերը: Այստեղ անհրաժեշտ է ապահովել պարտքի գրանցման և հաշվառման տվյալների բազայի այլընտրանքային պահպանումը՝ ֆորս մաժորային իրավիճակներում ամբողջական տեղեկատվության պահպանման և աշխատանքների ընթացքը չխաթարելու, պարտքային պարտավորությունները ժամանակին և անթերի իրականացնելու համար: Գործառնական ռիսկը նվազեցնելու նպատակով կմշակվեն աշխատակարգեր, որտեղ հստակորեն կսահմանվեն պարտքի կառավարմամբ զբաղվող ստորաբաժանումների տեղեկատվական հոսքերը և պարտքի կառավարման հիմնական գործառույթների ընթացակարգերը:

Զգայունության վերլուծություններ

Մինչ այժմ կատարված ծախսերի և ռիսկերի վերլուծությունը հիմնված է եղել կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա և իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմնական սցենար: Ստորև ներկայացվում է տարբեր շոկերի արդյունքում շուկայական փոփոխականների կամ ծախսերի և ռիսկերի ցուցանիշների շեղման չափը հիմնական սցենարի արդյունքներից:

Փոխարժեք

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր: Կիրառելով 30% շոկ՝ 2017թ-ին արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ՀՀ կառա-

վարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. տարեվերջին հասնում է 57.4%-ի, որը 10.7 տոկոսային կետով ավելի է հիմնական սցենարի նույն ցուցանիշից:

Կանխատեսումային փոխարժեքների համեմատությամբ ՀՀ դրամի նկատմամբ USD-ի, EUR-ի, JPY-ի, GBP-ի, AED-ի փոխարժեքների 1% շեղումը 2017-2019թթ. ընթացքում կփոփոխի ՀՀ կառավարության արտաքին պարտքը միջին հաշվով տարեկան 23.2 մլրդ դրամով: Վերոհիշյալ արժույթներից յուրաքանչյուրի փոխարժեքի 1% շեղման ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի վրա կլինի հետևյալը.

Աղյուսակ 14. ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքների 1%-ի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի վրա (մլրդ դրամ)

	2017թ.	2018թ.	2019թ.
ՀՀ կառավարության պարտք / ՀՆԱ-ի փոփոխությունը (%)	0.40	0.39	0.38
Ընդամենը	22.17	23.01	24.41
այդ թվում			
USD	14.5	15.4	16.7
EUR	4.3	4.3	4.5
GBP	0.6	0.6	0.6
JPY	1.8	1.7	1.7
AED	0.03	0.03	0.02
CNY	0.97	0.95	0.92

Տոկոսադրույք

Վերլուծելով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների տոկոսադրույքների 250 բազիսային կետի չափով աճի շոկային սցենարը, պարզ է դառնում, որ տոկոսադրույքի շոկի ազդեցությունը ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վրա մնում է չափավոր, քանի որ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. տարեվերջին հիմնական սցենարի նույն ցուցանիշի նկատմամբ ավելանալով 0.1 տոկոսային կետով՝ կազմում է 46.8%: Ընդ որում, այսպիսի շոկը կբարձրացնի ոչ միայն արտարժութային փոխառությունների տոկոսադրույքները, այլ նաև ներքին պարտքի շուկայի եկամտաբերության կորը:

Զուգահեռաբար ենթադրելով նաև էական՝ 500 բազիսային կետի չափով շոկային սցենար արտաքին պարտքի տոկոսադրույքների նկատմամբ, որի տեղի ունենալու հավանականությունը համեմատաբար ցածր է, տոկոսադրույքի շոկի ամբողջ ազդեցությունը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը բազային սցենարի նկատմամբ կավելացնի 0.7 տոկոսային կետով՝ 2019թ. տարեվերջին հասցնելով 47.4%-ի: ՀՀ կառավարության պարտքի սպասարկման տեսակետից այսպիսի էական շոկը 2019թ. տարեվերջին Տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշը կավելացնի 0.65 տոկոսային կետով:

Ստորև ներկայացվում է նաև լողացող տոկոսադրույքով պարտքի մեկ տոկոսային կետով աճի և ներքին տոկոսադրույքների մեկ տոկոսային կետով աճի ազդեցությունները:

Լողացող տոկոսադրույքների՝ 6-ամսյա ԱՄՆ դոլարի լիբորի և 6-ամսյա եվրիբորի մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում 2017-2019թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կփոփոխվեն տարեկան 8.6 մլն ԱՄՆ դոլարով: Մասնավորապես, լողացող տոկոսադրույքներից յուրաքանչյուրի ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա կանխատեսվող ժամանակաշրջանում կլինի հետևյալը.

Աղյուսակ 15. Լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների վրա

(մլն ԱՄՆ դոլար)

	2017թ.	2018թ.	2019թ.
ՀՀ կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի / Պետբյուջեի սեփական եկամուտներ (առանց դրամաշնորհի) ցուցանիշի փոփոխությունը (%)	0.30	0.32	0.35
Ընդամենը	7.3	8.5	10.0
այդ թվում			
6-ամսյա ԱՄՆ դոլարի Libor	6.8	8.0	9.3
6-ամսյա Euribor	0.5	0.5	0.7

Ներքին պարտքի շուկայում եկամտաբերության կորի մեկ տոկոսային կետով աճը կանխատեսվող ժամանակահատվածում կավելացնի ներքին պարտքի տոկոսավճարները տարեկան միջինը 1.3 մլրդ դրամով:

Աղյուսակ 16. ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսադրույքի մեկ տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի վրա

	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Տոկոսային արտահայտությամբ			
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճար / Պետբյուջեի սեփական եկամուտներ (առանց դրամաշնորհի) ցուցանիշի փոփոխությունը (%)	0.12	0.09	0.09
Դրամային արտահայտությամբ			
ՀՀ կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ)	1.4	1.2	1.3

Զգայունության վերլուծությունները թույլ են տալիս ենթադրել, որ ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վրա փոխարժեքի շոկի ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան տոկոսադրույքի շոկի ազդեցությունը, որը պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի պորտֆելում

արտարժութային պարտքի մեծ տեսակարար կշռով և ֆիքսված տոկոսադրույքով պարտքի գերակայությամբ:

Եզրակացություններ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը: Այդ նպատակով, հաշվի առնելով ներքին շուկայի սահմանափակ հնարավորությունները, ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը 2017-2019թթ. ժամանակահատվածի համար ավելացվել է և նախատեսվել տարեկան 45 մլրդ դրամ:

Կարևոր է նշել, որ միայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները բավարար չեն ՀՀ կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման համար բարեփոխումները պետք է շարունակվեն նաև ֆինանսական շուկայի այլ հատվածներում (կենսաթոշակային, ապահովագրական և այլն):

ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ՀՀ կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները:

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկերի կառավարման տեսակետից սահմանվել են ռիսկերի ուղենիշեր, որոնք որոշակի սահմանափակումների միջոցով նպատակ ունեն փոխարժեքի, տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկերը պահպանել կառավարելիության շրջանակներում:

ՀՀ կառավարության պարտքը բնութագրող 2014-2015թթ. փաստացի, 2016թ. պետական բյուջեի ծրագրային և 2017-2019թթ. կանխատեսումային ցուցանիշները

Աղյուսակ 17. ՀՀ կառավարության պարտքի հիմնական ցուցանիշները 2014-2019թթ (մլրդ դրամ)

	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Կառավարության պարտք	1,900.6	2,225.9	2,408.5	2,649.1	2,784.7	2,976.1
% նախորդ տարվա ՀՆԱ-ի նկատմամբ	41.7	46.1	49.5	50.3	50.2	50.3
Ըստ ռեզիդենտության						
կառավարության ներքին պարտք	311.7	368.4	426.2	481.6	533.0	584.3
կառավարության արտաքին պարտք	1,588.9	1,857.5	1,982.2	2,167.6	2,251.7	2,391.8
Ըստ գործիքակազմի						
արտաքին վարկեր և փոխառություններ	1,275.3	1,420.4	1,554.3	1,733.0	1,817.0	1,957.0
ներքին վարկեր և փոխառություններ	1.9	-	-	-	-	-
պետական գանձապետական պարտատոմսեր	289.9	320.8	380.2	431.9	483.7	535.4
արտարժութային պետական պարտատոմսեր	332.5	483.8	473.4	480.6	480.6	480.6
ներքին երաշխիքներ	1.0	1.0	0.6	3.6	3.4	3.1
Կառավարության պարտքի տոկոսավճար	61.6	74.1	100.6	108.2	118.2	127.1
Տոկոսավճար / պետական բյուջեի ծախսեր (%)	5.0	5.3	7.3	8.0	8.4	8.5
Տոկոսավճար / պետական բյուջեի սեփական (առանց դրամաշնորհներ) եկամուտներ(%)	5.5	6.5	8.4	9.3	9.4	9.2
Տոկոսավճար / ՀՆԱ (%)	1.28	1.47	1.85	1.95	2.00	1.99

Աղյուսակ 18. Պետական պարտատոմսերի ցուցանիշները 2014-2019թթ.

	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	289.9	320.8	380.2	431.9	483.7	535.4
% ՀՆԱ-ի նկատմամբ	6.0	6.4	7.0	7.8	8.2	8.4
ըստ մարման մնացած օրերի						
մինչև 1 տարի	56.6	54.7	57.0	86.4	96.8	107.1
1-5 տարի	134.1	149.0	209.1	211.5	236.8	262.2
5-ից ավել տարի	99.2	117.1	114.0	134.0	150.1	166.1
Միջին տոկոսադրույք (%)	13.5	14.0	13.9	13.5	13.0	12.9
Միջին ժամկետայնություն (օր)	2,003	2,065	2,075	2,021	2,014	2,025
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	700.0	1,000.1	1,000.1	1,000.1	1,000.1	1,000.1
% ՀՆԱ-ի նկատմամբ	6.9	9.6	8.7	8.7	8.1	7.5
Միջին տոկոսադրույք (%)	6.3	6.9	6.9	6.9	6.9	6.9
Միջին ժամկետայնություն (տարի)	5.8	7.0	6.0	5.0	4.0	3.0

Աղյուսակ 19. ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների ցուցանիշները 2014-2019թթ.
(մլն ԱՄՆ դոլար)

	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Կառավարության վարկեր և փոխառություններ, մլն ԱՄՆ դոլար	2,689.1	2,936.2	3,283.2	3,605.8	3,780.7	4,071.9
% ՀՆԱ-ի նկատմամբ	26.5	28.2	28.6	31.2	30.7	30.7
Ըստ ռեզիդենտության						
արտաքին վարկեր և փոխառություններ	2,685.1	2,936.2	3,283.2	3,605.8	3,780.7	4,071.9
ներքին վարկեր և փոխառություններ	4.0	-	-	-	-	-
Ըստ վարկատուի						
միջազգային ֆինանսական կառույցներից	2,257.6	2,489.2	2,759.1	3,070.7	3,169.4	3,330.2
օտարերկրյա պետություններից	411.2	423.9	500.8	511.7	588.7	720.8
առևտրային բանկերից	20.3	23.2	23.3	23.4	22.6	20.9
Միջին տոկոսադրույք (%)	1.5	1.6	2.2	2.3	2.4	2.4
Միջին ժամկետայնություն (տարի)	11.9	11.6	11.1	10.9	10.4	9.8

2017-2019թթ. ՀՀ կառավարության արտաքին պարտքի գծով կանխատեսումները կատարվել են հետևյալ ենթադրությունների հիման վրա.

- 1SDR=1.409USD, 1EUR=1.141USD, 1JPY=0.009USD, 1AED=0.272USD, 1CNY=0.155USD (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ),
- ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR՝ 2.5%, 6-ամսյա EURIBOR՝ 0.5%:

Հավելված N 1

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ
ՀՀ 2017-2019թթ ՄԺԾԾ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույնով ներկայացվում է ՄԺԾԾ (այսուհետ՝ ՄԺԾԾ) կանխատեսումներում, մասնավորապես, մակրոտնտեսական, հարկաբյուջետային կանխատեսումներում, ինչպես նաև պետական պարտքի կառավարման բնագավառում առկա ռիսկերի համառոտագիրը: Առավել մանրամասն տեսքով նյութը ներկայացված է սույն ծրագրի 2-րդ, 4-րդ և 20-րդ գլուխների համապատասխան մասերում:

1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ

Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ:

Միաժամանակ, Հայաստանի մեծ կախվածությունը գործընկեր երկրների տնտեսական զարգացումներից ընդգծում է, որ հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես կախված կլինեն համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներից:

<u>ՀՆԱ-ի աճի ուղղությամբ նպաստող ռիսկեր.</u>

Արտաքին միջավայր

• Եթե գործընկեր երկրների հետագա զարգացումները լինեն ավելի բարենպաստ, քան կանխատեսումներն են, ապա ՀՀ տնտեսական աճը կլինի ավելի բարձր: Այս իրավիճակի դրսևորումն ավելի հավանական կլինի, հատկապես, եթե Ռուսաստանի տնտեսությունը վերականգնվի ավելի արագ, քան ակնկալվում է:

• Նավթի միջազգային գների ակնկալվածից ավելի բարձր մակարդակը և հումքային այլ ապրանքների գների աճը կազդեն մեր երկրի ՀՆԱ-ի կանխատեսվածից ավելի բարձր աճի վրա հիմնականում երկու ճանապարհներով. ուղղակի՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով (մետաղների գների ավելի բարձր մակարդակի դրսևորման դեպքերում) և անուղղակի՝ Ռուսաստանից ստացվելիք մասնավոր տրանսֆերտների աճի միջոցով (վառելիքի գների աճի դեպքում):

• Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության արդյունքում սպասվածից ավելի ներդրումների ներգրավման և արտահանման շուկաների ավելի արագ ընդլայնման արդյունքում տնտեսական աճի մակարդակը նույնպես կարող է կանխատեսվածից ավելի բարձր լինել:

• Արտաքին ցնցումներով պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների գնային միջավայրի նվազումը կարող է նպաստել տեղական արտադրության աճին՝ արտադրության ցածր ծախսերի միջոցով: Բացի դրանից, ցածր գնաճային միջավայրը կարող է էականորեն խնայել սպառմանն ուղղված մասնավոր հատվածի դրամական եկամուտները, մեծացնելով ներդրումային ծախսերը, ինչը բազմարկիչի արդյունք կունենա հետագա տնտեսական աճի արագացման ուղղությամբ:

Ներքին միջավայր.

• Եթե ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումների արդյունքները՝ հատկապես գործարար միջավայրի, ինչպես նաև արդյունաբերական ապրանքների արտահանման խթանման քաղաքականության ուղղությամբ արդյունքները, արտահայտվեն ավելի արագ, քան ակնկալվում էր, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

• Կառավարության կողմից ձեռնարկված բարեփոխումների շարքում, միջնաժամկետ հատվածում տնտեսական աճի տեմպերի վրա նշանակալի ազդեցություն կարող է ունենալ նաև կենսաթոշակային համակարգի ներդրումը, որը նպաստելու է Հայաստանում ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացմանը, հետևաբար նաև տնտեսության իրական հատվածի համար վարկային խոշոր, երկարաժամկետ և մատչելի ռեսուրսների հասանելիության ապահովմանը: Այս ոլորտում իրականացվող բարեփոխումների առավել հարթ և արդյունավետ ընթացքը կարող է հանգեցնել միջնաժամկետ հատվածում տնտեսական աճի առավել բարձր տեմպերի ձեռքբերման:

• 2015 թվականին ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում 2014 թվականի տարեվերջից ստեղծված լարվածությունը հիմնականում չեզոքացվել է, ինչի արդյունքում արձանագրվել է վարկերի նկատմամբ ցածր պահանջարկ: Կանխատեսվող հորիզոնում վարկավորման պայմանների դյուրացումներով պայմանավորված ակնկալվում է վարկավորման աճի արագացում, ինչը կնպաստի նաև տնտեսության ակտիվացմանը:

ՀՆԱ-ի աճի կանխատեսումները նվազեցնող ռիսկերը կպայմանավորվեն ստորև ներկայացված և՛ արտաքին, և՛ ներքին միջավայրի զարգացումներով:

Արտաքին միջավայր.

• Աշխարհաքաղաքական իրավիճակը, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունները, ներքաղաքական անկայունությունները, ինչպես նաև հարևան պետությունների

հետ քաղաքական հակադրությունները էական ռիսկեր են առաջացնում տնտեսական աճի ապահովման տեսանկյունից, որն ավելի է սրվում Ռուսաստանի տնտեսական խնդիրներով պայմանավորված:

• Համաշխարհային տնտեսական զարգացման վերաբերյալ առկա են անորոշություններ և ավելի ցածր աճի սցենարի հավանականություն: Եվրոգոտու և ԱՄՆ-ի տնտեսական աճի տեմպերի հնարավոր դանդաղումը կհանգեցնի մեր երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի շարունակական անկման, ինչպես նաև մետաղների գների շարունակական նվազման՝ հանգեցնելով Հայաստանից ապրանքների արտահանման նվազմանը, արտահանման հաշվին արտարժույթի ներհոսքի կրճատմանը, հետևաբար և ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղմանը:

• Միջազգային ապրանքային շուկաներում գների անկայունությունը բացասաբար կազդի ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններով ամրագրված նպատակադրումների արդյունավետ իրականացման վրա:

• Մետաղների գների նվազման հետ կապված միջնաժամկետում ուղղակի օտարերկրյա ներդրումների ներհոսքի շարունակվող նվազումը կարող է զսպող ազդեցություն ունենալ թողարկման ծավալների՝ հետևաբար ՀՆԱ-ի աճի տեմպերի վրա:

• Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների կիրառման հետևանքով և նավթի գների ցածր մակարդակի պայմաններում Ռուսաստանի տնտեսական աճի տեմպերի դանդաղումը ռիսկ է առաջացնում ՀՀ ներհոսող տրանսֆերտների, արտահանման ծավալների, հետևաբար նաև Հայաստանի տնտեսական աճի տեմպի դանդաղման ուղղությամբ:

• Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում առկա են խնդիրներ՝ եկամուտների աճող անհավասարության և մակրոտնտեսական քաղաքականության վրա դրա ազդեցության հետ կապված: Միջնաժամկետում, եթե եկամուտների անհավասարության և գործազրկության բարձր մակարդակի հետագա նվազեցում տեղի չունենա, կապված վերոնշյալ ռիսկերի դրսևորման հետ, ապա վերականգնման համար անհրաժեշտ տնտեսական աճի տեմպի պակասը բացասաբար կանդրադառնա գլոբալ տնտեսության հետագա աշխուժացման վրա: Արդյունքում, գլոբալ պահանջարկի աճը կլինի ավելի դանդաղ, քան ակնկալվում է, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի տնտեսական աճի վրա:

Ներքին միջավայր.

• Ներքին միջավայրից բխող հիմնական ռիսկը բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր ավելի ցածր աճի արձանագրումն է: Կանխատեսվող հորիզոնում Կառավարությունը շարունակելու է գյուղատնտեսության օժանդակությանն ուղղված միջոցառումների իրականացումը, սակայն

բնակլիմայական անբարենպաստ պամանները կարող են լրացուցիչ ռեսուրսների ներդրման պահանջ առաջացնել՝ դանդաղեցնելով Կառավարության բարեփոխումները[43], որի պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի ցածր լինել:

- Մակրոտնտեսական քաղաքականության արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտման դեպքում տնտեսական աճի նվազեցման ուղղությամբ ռիսկ կարող է առաջանալ:

ՀՆԱ-ի աճի ուղղությամբ նպաստող ներքին և արտաքին միջավայրերի ռիսկերը կարող են հանգեցնել տնտեսության ներուժի վերականգնմանը: Այսպիսով, գնահատվում է, որ կանխատեսվող հորիզոնում տնտեսական աճի ռիսկերը հավասարակշռված են լինելու՝ պայմանավորված հիմնականում համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներով, ինչպես նաև հումքային ապրանքների գների բարենպաստ ճշգրտմամբ և տնտեսության զարգացման ներուժով:

Կանխատեսումների բաշխման հավանականությունները առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 1 Իրական ՀՆԱ կանխատեսումների հավանականային բաշխումը

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը			
	2016	2017	2018	2019
1-3	0.249	0.231	0.220	0.214
3-5	**0.315**	**0.291**	**0.287**	**0.286**
5-7	0.213	0.214	0.224	0.229

Աղյուսակ 2.6-ի 1-ին սյունը ներկայացնում է տնտեսական աճի հավանականային միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների:

Պարզության համար աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական կենտրոնական միջակայքը և հարակից միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության միջինում շուրջ 74%-ը, այսինքն՝ ընդհանուր հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 1-ից 7% միջակայքում, կազմում է մոտ 74%:

Ակնհայտ է, որ վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 2016-2019 թվականներին 3-5% միջակայքում տնտեսական աճի ձևավորվելու հավանականությունն է ամենաբարձրը (Գծապատկեր 2.7-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 6-ում՝ հոծ նշումով): Բնականաբար, սույն ծրագրի «Համախառն առաջարկ» հատվածում ներկայացված տնտեսական աճի բազային կանխատեսման

[43]Սա հիմնականում աշխատում է այն տրամաբանությամբ, որ անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում սոցիալական և տնտեսական բացասական հետևանքները վերացնելու համար կառավարությունը պարտադրված է լինելու ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում այլ ծրագրից միջոցները վերաուղղել վերոնշյալ խնդիրների լուծմանը, ինչի արդյունքում կարտամղվեն բարեփոխումների ծրագրերի համար հատկացված միջոցները:

սցենարն ընկած է վերոնշյալ ամենաբարձր հավանականությամբ տնտեսական աճի կենտրոնական միջակայքի շրջանակներում:

2. 2017-2019թթ-ին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա ազդող մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** վրա:

2.1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներ իրականացնելիս ի հայտ են գալիս հանգամանքներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից, տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից[44], նոր երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: ՄԺԾԾ տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ ՄԺԾԾ սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է նախաճգնաժամային և ետճգնաժամային 12 տարիներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, ՀՆԱ-ի միջնաժամկետ կանխատեսումներից փաստացիի շեղումները նախաճգնաժամային 2003-2008թթ ժամանակահատվածի համար եղել են 7.1-9.0 տոկոսային կետ, իսկ ետճգնաժամային 2010-2015թթ համար 1.0-2.0 տոկոսային կետ: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ-ի ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը՝ որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի կանխատեսված մակարդակից 1.2 տոկոսային կետով ավելի ցածր մակարդակի ձևավորումը 2017 թվականին, 1.6 տոկոսային կետով ցածր 2018 թվականին և 2.0 տոկոսային կետով ցածր 2019 թվականին:

2.2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին գործոններից (օրինակ, ներքին տնտեսության գնաճը՝ միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված Կառավարության և ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կառավարման դաշտից

[44]Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

դուրս ի հայտ եկող երևույթների հետ (օրինակ՝ նավթի համաշխարհային գների հնարավոր փոփոխությունները):

Ենթադրություններց շեղումների ռիսկ է ԵՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵՏՄ-ին անդամակցությունից:

2.3. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի նպատակային ցուցանիշի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը:

ԿԲ-ի կողմից միջնաժամկետ հորիզոնում գնահատվում է գնաճի կայունացում նպատակային ցուցանիշի շուրջ: Հարկ է նկատել, որ 2016 թվականի տարեսկզբից ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է գնանկումային միջավայր, սակայն ԿԲ կողմից իրականացվող հետևողական դրամավարկային քաղաքականության արդյունքում միջնաժամկետ հորիզոնում գնաճի ցուցանիշը աստիճանաբար կմոտենա նպատակային կենտրոնական արժեքին: Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են հավասարակշռված՝ գնաճի կենտրոնական արժեքից **դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով** (այսինքն՝ գնաճի ներքին սահմանը 2.5 տոկոս է) և **դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով** (վերին սահմանը 5.5 տոկոս է):

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գների նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2017, 2018 և 2019 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 1.7, 1.8 և 2.0 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.4. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

ԿԲ-ն և ՀՀ ֆինանսների նախարարությունը փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում և մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, ընդ որում, յուրաքանչյուր տարվա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմականորեն և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 5.0

տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 5 տոկոս արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 5 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2017, 2018 և 2019 թվականներին կարելի է ապահովել հարկային եկամուտների համապատասխանաբար 10.2, 10.8 և 11.9 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.5. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2015 թվականից Հայաստանը ԵՏՄ անդամ պետություն է հանդիսանում, գնահատականներում մաքսատուրքերի մասնաբաժինը հանվել է ընդհանուր հարկային եկամուտներից, որպեսզի ավելի ճշգրիտ լինեն ներքին տնտեսությունից եկող ռիսկերը: Հետճգնաժամային տարիներին ՄԺԾԾ-ում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը սահմանվում է 8.7-13%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2017, 2018 և 2019 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 8.7, 10.8 և 13% պակաս ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվում է համապատասխանաբար՝ 11.2, 16.3 և 20.7 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

Ամփոփելով վերը նկարագրված **կանխատեսումների ռիսկի և ենթադրություններից շեղումների ռիսկի** գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 2 Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն[45]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ դրամ		
	2017	2018	2019
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում			
1. Կանխատեսվածից 1.2-2.0 տոկոսային կետով ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ	-5.0	-7.0	-9.6
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-1.7	-1.8	-2.0
3. Փոխարժեքի առավելագույնը 5.0 տոկոսով արժեզրկման ռիսկ	10.2	10.8	11.9
4. Ներմուծման 8.7-13.0 տոկոսով նվազման ռիսկ	-11.2	-16.3	-20.7
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	-10.1	-16.6	-22.6

[45]ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 10.1 մլրդ դրամ 2017 թվականին, 16.6 մլրդ դրամ 2018 թվականին և 22.6 մլրդ դրամ 2019 թվականին:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների վրա ազդող գործոնի 1 տոկոս փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 3. Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, տոկոս

	ՀՆԱ	**Գնաճ**	**Փոխարժեք**	**Ներմուծում**
Միջին տարեկան ազդեցություն	0.26	0.09	0.19	0.07

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և փոխարժեքի փոփոխությունները:

Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 4. Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը		
	2017	2018	2019
2-6%	0.40	0.30	0.24
6-10%	***0.48***	***0.52***	***0.50***
10-14%	0.05	0.12	0.21

Աղյուսակ 2.9-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների:

Ակնհայտ է, որ 2017-2019 թվականների համար վերոնշյալ երեք միջակայքերի շարքում 6-10% միջակայքում հարկային եկամուտների աճի ձևավորվելու հավանականությունը ամենաբարձրն է (Գծապատկեր 2.8-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 2.9-ում՝ հոծ նշումով):

Ներդիր 2

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցումը

Իրական ՀՆԱ-ի և հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը ներկայացնող գծապատկերները ցույց են տալիս տնտեսության զարգացման ապագա ընթացքի վերաբերյալ Կառավարության գնահատականները՝ տնտեսական աճի ծրագրային ցուցանիշների վերաբերյալ, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման կանխատեսվող ընթացքը:

Կանխատեսումների հավանականային բաշխման գծապատկերի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ բոլոր կանխատեսումները ինչ-որ չափով անորոշ են: Կարևոր է հաշվի առնել ոչ միայն կոնկրետ կանխատեսված արժեքները, այլ նաև բոլոր այն վերոնշյալ ռիսկերը, որոնց արդյունքում կարող են շեղումներ առաջանալ իրական ՀՆԱ-ի կանխատեումների և հարկերի կանխատեսումների կենտրոնական արժեքներից: Հիմնվելով միայն կետային կանխատեսումների վրա հնարավոր չէ բավարար չափով տեղեկատվություն ներկայացնել դրանց հետ կապված անորոշությունների և դրանց աղբյուրների վերաբերյալ: Այդ պատճառով կարևորվում է որոշակի վստահության միջակայքի կառուցման խնդիրը, որը թույլ կտա գնահատել իրադարձությունների զարգացման հավանական ընթացքը: Իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխման ներկայացված գծապատկերները հիմնվում են Անգլիայի բանկի կողմից մշակված մեթոդաբանության վրա և հաշվի է առնում կանխատեսումների հավանականային բաշխման ասիմետրիկության առկայությունը:

Հայաստանի համար իրական ՀՆԱ-ի և հարկերի աճի կանխատեսումների բաշխման գծապատկերները կառուցվել են երեք չափորոշիչների հիման վրա.

1. կենտրոնական արժեքները, 2. անորոշության չափը (դիսպերսիան), որը ստանալու համար հիմք են հանդիսացել փաստացի պատմական շարքերի կանխատեսումային սխալները և 3. ռիսկերի հարաբերական հաշվեկշիռը՝ անհամաչափության գործակցի գնահատման նպատակով:

Ունենալով կանխատեսված կենտրոնական արժեքները, անորոշության չափը (ցրվածքը) և ռիսկերի հաշվեկշիռը՝ կառուցվել են իրական ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսումների հավանականային բաշխան գրաֆիկները 2017-2019 թվականների համար (տես՝ Գծապատկերներ 7 և 8):

ՀՆԱ-ի և հարկերի կանխատեսման գծապատկերներում կենտրոնական մուգ (կարմիր) ավելի նեղ միջակայքը ներառում է նաև կանխատեսման կենտրոնական սցենարը (կանխատեսված արժեքները): Որքան հավանականային կանխատեսումները հեռանում են կենտրոնական սցենարից, այնքան ավելի ցածր է դառնում դրանց իրագործման հավանականությունը, ինչը գծապատկերում արտահայտվում է ավելի թույլ գունավորմամբ: Ներկայացված բաշխումը սիմետրիկ չէ, քանի որ ապագայի համար առկա են տնտեսական աճի և հարկերի կենտրոնական կանխատեսումից ավելի ցածր մակարդակների ձևավորման ռիսկեր:

3.Պետական բյուջեի վրա կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին (հարկային եկամուտների պլանավորված մակարդակից փաստացի ցածր մակարդակ, արտաքին ֆինանսական միջոցների չստացում), որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 5. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[46].
(ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ դրամ

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2017	2018	2019
1. Կանխատեսածից 1.2-2.0%-ով ավելի ցածր ՀՆԱ ձևավորում	-5	-7	-9.6
2. 1.5 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	1.7	1.7	1.5
3. Փոխարժեքի առավելագույնը 5%-ով արժեզրկման ռիսկ	3.0	3.7	4.5
4. Ներմուծման 8.7-13.0%-ով նվազման ռիսկ	-11.2	-16.3	-20.7
5. Արտաքին ֆինանսական միջոցների չստացման ռիսկեր	-14.4	-20.0	-20.0
Ընդամենը	**-25.9**	**-37.9**	**-44.3**

Աղյուսակ 2.10-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի և փոխարժեքի գնահատված տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ: Հարկ է առանձնացնել փոխարժեքի առավելագույնը 5%-ով արժեզրկման ռիսկի ազդեցության գնահատականը: Եթե այս ռիսկի առարկայացման պայմաններում միջնաժամկետում առաջանում է միջինում լրացուցիչ մոտ 11 մլրդ ՀՀ դրամ հարկային եկամուտ (Աղուսակ 7), ապա նույն ռիսկի ազդեցությամբ առաջանում են նաև լրացուցիչ ծախսեր (ապրանքների, ծառայությունների և կապիտալ ծախսերի գծով): Արդյունքում, այս ռիսկի ընդհանուր ազդեցությունը պետական բյուջեի վրա գնահատվում է դրական՝ միջնաժամկետ հատվածում միջինում 3.7 մլրդ ՀՀ դրամի չափով (ֆինանսավորման պահանջի նվազում):

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2017-2019 թվականներին ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի 25.9-44.3 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 0.5-0.7%-ը: Ընդ որում՝ Կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակադրումը լինելու է սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը:

Այս պարագայում 2017-2019 թվականների համար լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման պայմաններում Կառավարության պարտքի նախորդ տարվա ՀՆԱ-ի հարաբերակցությունը գերազանցում է 50% շեմը[47], ինչը նշանակում է, որ պետական բյուջեի պակասուրդը պետք է սահմանափակվի վերջին երեք տարիների ՀՆԱ-ի միջին մակարդակի 3%-ով: Հետևաբար, միջնաժամկետ ֆինանսավորման պահանջի ռիսկերի նյութականացման պարագայում հնարավոր չի

[46]Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:
[47]Համաձայն «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, եթե կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է ՀՀ նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՀ համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը:

լինի այն չեզոքացնել լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ, այլ անհրաժեշտ կլինի նաև իրականացնել ծախսերի կասեցում՝ օրենսդրությամբ Կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում:

Ընդ որում, 2017 թվականին ֆինանսական հնարավոր պահանջն ամբողջությամբ պետք է չեզոքացվի ծախսերի կասեցմամբ՝ առավելագույնը 2017 թվականին նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 5%-ի կամ շուրջ 67.6 մլրդ ՀՀ դրամի (ՀՆԱ-ի շուրջ 1.2%-ը)[48] չափով, իսկ հետագա տարիներին աստիճանաբար հնարավոր կլինի այն բավարարել նաև պակասուրդի հաշվին:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒՄ

ՄԺԾԾ իրատեսության տեսանկյունից հարկ է առանձնացնել այն գործոնները, որոնք կարող են ազդել հարկաբյուջետային շրջանակի ծրագրային սցենարի վրա: Այդ գործոնների կազմում առավել կարևորվում են նրանք, որոնք կարող են հանգեցնել ծախսերի ծրագրերում համապատասխան վերանայումներ կատարելու անհրաժեշտության: Այդ իմաստով ՄԺԾԾ հիմքում դրված կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկեր:

Ռիսկերի աղբյուրները

ՄԺԾԾ շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից շեղումների.

(i) ներքին ռեսուրսների գծով,

(ii) արտաքին օժանդակության գծով:

<u>Ներքին ռեսուրսների մասով</u> 2017-2019թթ բյուջետային ռեսուրսների փաթեթը հիմնականում համալրվելու է հարկային եկամուտների հաշվին, որոնց գծով ծրագրային մուտքերը 2017-2019թթ կկազմեն ներքին ռեսուրսների ընդհանուր մուտքերի միջինում 98.2 %-ը: Հարկային եկամուտների հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ դրանց հավաքագրման բնագավառում Կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր կունենան նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները: Մասնավորապես,

<u>ա) Մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանություն</u>. Մակրոտնտեսական շրջանակում կատարված կանխատեսումների մասով 2017-2019թթ առկա ռիսկերի մասին նշվել է սույն փաստաթղթի 2-րդ գլխի համապատասխան մասում:

[48] Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում 2009 թվականին հնարավոր է եղել կասեցնել բյուջեով ծրագրավորված ծախսերի ընդհանուր գումարի մոտ 5 տոկոսը (ոչ գերակա համարվող ծախսեր):

<u>բ) Վարչարարական միջոցառումների իրականացում.</u> 2017-2019թթ, երբ բյուջետային միջոցների սղությունը դեռևս լուծում պահանջող խնդիրներից մեկն է լինելու, առաջադրելով հարկային եկամուտների հնարավոր հասանելի մակարդակի ապահովում, Կառավարությունը սկզբունքայնորեն շարունակելու է իրականացնել իր կողմից որդեգրված՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականությունը, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս դեպքում տնտեսության ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային, մաքսային, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է:

<u>գ) Արտաքին գործոնների ազդեցություններ.</u> Ռիսկը հնարավոր է արտաքին գործոնների (արտաքին տնտեսական շուկաներում, ինչպես նաև ՀՀ արտաքին սահմաններում իրավիճակի սրում) ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և այն գնահատել հնարավոր չէ:

<u>Արտաքին օժանդակության</u> մասով 2017-2019թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ վարկերի հաշվին:

ա) Պաշտոնական դրամաշնորհների հատկացման կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու Կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների բնագավառում դոնորների հետ փոխհամաձայնեցված որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով (ընդհանուր բնույթի բյուջետային աջակցության մասով) և ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով (նպատակային դրամաշնորհային ծրագրերի մասով):

բ) Վարկերի մասով ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու Կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների բնագավառում վարկատուների հետ փոխհամաձայնեցված որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով (ընդհանուր բնույթի բյուջետային աջակցության մասով) և ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով (նպատակային վարկային ծրագրերի մասով):

Արտաքին օժանդակության մասով 2017-2019թթ բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրման վրա կարող է ազդեցություն ունենալ նաև տարադրամի փոխարժեքի փոփոխությունը:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

<u>Ներքին ռեսուրսների</u> մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը (առաջացած ճեղքվածքը այլ ռեսուրսների հաշվին լրացնելու հնարավորության բացակայության դեպքում) ենթադրում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով Կառավարությանը վերապահված իրավասության շրջանակներում ծախսերի վերանայում՝ դրանց

կրճատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական եկամուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, այս դեպքում ծախսերի վերանայումն իրականացվելու է՝ հիմք ընդունելով դրանց գերակայությունները. առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված գումարները, որոնք կրճատման պահին կունենան գերակայության ավելի ցածր աստիճան (հաշվի առնելով նաև ծախսերի կրճատման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների առաջացումը):

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից: Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը:

Աղյուսակ 6. Արտաքին օժանդակությունը՝ ըստ նշանակության (մլրդ դրամ)

Ցուցանիշներ	2017	2018	2019
Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	**116,2**	**39,8**	**39,7**
Պաշտոնական դրամաշնորհներ	*9,5*	*10,0*	*9,9*
Վարկեր	106,7	29,8	*29,8*
Ծրագրային (նպատակային) օժանդակություն	98.8	136.5	187.8
Պաշտոնական դրամաշնորհներ	*18,2*	*15,0*	*4,1*
Վարկեր	*80,6*	*121,5*	*183,7*
Ընդամենը արտաքին օժանդակություն	**215,0**	**176,3**	**275,5**

Բյուջետային ռեսուրսների փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում և առաջացած ճեղքվածքը այլ ռեսուրսների հաշվին լրացնելու հնարավորության բացակայության դեպքում՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով Կառավարությանը վերապահված իրավասության շրջանակներում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը որպես կանոն հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրների հետ, թեև առանձին դեպքերում չի կարելի բացառել այդ ծրագրերի գծով արտաքին աղբյուրներից ստացվող միջոցների փոխարինումը ներքին ռեսուրսներով:

Փոխհատուցման հնարավորությունները

2017-2019թթ ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի վրա դրական հետևանքներ կարելի է ակնկալել բարենպաստ մակրոտնտեսական զարգացումներից, որոնք կարող են որոշ չափով փոխհատուցել արտաքին օժանդակության գծով հնարավոր «կորուստները»: Նախատեսվածի դիմաց մակրոտնտեսական միջավայրի բարելավումը բարենպաստ պայմաններ կստեղծի

լրացուցիչ հարկային եկամուտների հավաքագրման համար: Այս դեպքում հարկային եկամուտների լրացուցիչ մուտքերի՝ այլ մուտքերի հնարավոր կորուստների փոխհատուցմանն ուղղելուց հետո Կառավարությունը կարող է քննարկման առարկա դարձնել լրացուցիչ եկամուտների՝ ըստ ծախսային գերակայությունների ծախսերի ավելացմանը և (կամ) պետական բյուջեի դեֆիցիտի չափը կրճատելուն ուղղելու հարցը:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կառավարության պետական պարտքի արդյունավետ կառավարման խնդիրը լուծելու տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ռիսկերի կառավարումը: Այս առումով առաջնային նշանակություն են ստանում վերաֆինանսավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի ու գործառնական ռիսկերի կառավարումը:

Փոխարժեքի ռիսկ

Ներքին պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ ցուցանիշը միջնաժամկետ հատվածում ձգտում է սահմանված ուղենշային մակարդակին:

Աղյուսակ 7. Կառավարության ներքին պարտքի և արտարժութային պարտքի տեսակարար կշիռները ընդամենը պարտքում

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Ներքին պարտք / Ընդամենը պարտք (%)	17.7	18.2	19.1	19.6
Կառավարության արտարժութային պարտք / Ընդամենը պարտք (%)	84.2	83.7	82.6	82.0

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման մեջ ներքին զուտ փոխառու միջոցների ծավալը միջնաժամկետ հատվածում աճում է, որի արդյունքում 2019թ. վերջին արտարժութային պարտքի տեսակարար կշիռը նվազում է՝ 2015թ. տարեվերջի 85.6%-ի դիմաց կազմելով 82.0%: Սակայն, Կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը առաջիկա տարիներին դեռևս կմնա որպես ռիսկի հիմնական գործոն:

Աղյուսակ 8. Կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2016-2019թթ (%)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
USD	47.8	50.5	52.9	55.8
SDR	38.0	35.5	33.1	30.1
EUR	8.1	8.2	8.6	9.1
JPY	5.4	5.2	4.8	4.3
AED	0.2	0.1	0.1	0.1
CNY	0.6	0.5	0.5	0.5

Եթե SDR-ի փոխարժեքը, որը կազմված է հինգ արժույթներից, տարանջատում ենք այդ արժույթների կշիռներին համապատասխան՝ USD – 41.73%, EUR – 30.93%, GBP – 8.09%, JPY – 8.33% և CNY – 10.92%, ապա Կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը ստանում է հետևյալ տեսքը՝

Աղյուսակ 9. Կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2016-2019թթ. SDR-ի տարանջատմամբ (տոկոս)

	2016թ.պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
USD	63.6	65.3	66.7	68.4
EUR	19.9	19.2	18.8	18.5
GBP	3.1	2.9	2.7	2.4
JPY	8.6	8.1	7.5	6.8
AED	0.2	0.1	0.1	0.1
CNY	4.7	4.4	4.1	3.8

Փոխարժեքի ռիսկի նվազման և արդյունավետ կառավարման տեսանկյունից ապագայում չի բացառվում, որ պարտքի կառավարիչներն օգտագործեն աշխարհում տարածված հեջավորման տարբեր մոտեցումներ (օրինակ՝ արտարժութային սվոփներ):

Գծապատկեր 1. Կառավարության արտարժութային ընթացիկ պարտքի կշիռը ՀՀ կենտրոնական բանկի արտաքին ակտիվներում 2016-2019թթ. (տոկոս)



Կառավարության արտարժութային ընթացիկ պարտքի կշիռը ԿԲ-ի արտաքին ակտիվներում ցուցանիշը միջնաժամկետ հատվածում դրսևորելու է աճի միտում՝ պայմանավորված Կառավարության արտարժութային ընթացիկ պարտքի ծավալների առաջանցիկ աճով:

Վերաֆինանսավորման ռիսկ

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է՝ պայմանավորված առաջիկա տարիներին Կառավարության պարտքի սպասարկման գծով վճարման ենթակա գումարների ծավալներով և միջազգային ու ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներով: Պարտքի թողարկումների կազմակերպման ընթացքում Կառավարությունը ջանում է հարթեցնել մարումների գրաֆիկը և մեղմել վերաֆինանսավորման ռիսկը: Վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում են նաև հետգնումներ, ինչպես նաև գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումները կենտրոնացվում են ուղենշային պարտատոմսերի մարման օրերին:

Աղյուսակ 10. Կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկերի ցուցանիշները 2016-2019թթ.

	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը (տարի)	9.3	9.1	8.5	8.0
Կառավարության արտաքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	10.0	9.7	9.1	8.5
Կառավարության ներքին պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	6.1	6.1	6.0	5.7
Մեկ տարվա ընթացքում մարվող Կառավարության պարտքի կշիռը (%)	4.6	5.4	5.1	14.0
Մեկ տարվա ընթացքում մարվող Կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	2.3	2.7	3.0	12.9
Մեկ տարվա ընթացքում մարվող Կառավարության ներքին պարտքի կշիռը(%)	14.8	17.8	13.6	18.6

Կառավարության պարտքի պորտֆելի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2019թ. վերջին կնվազի՝ կազմելով 8.0 տարի: Սա հիմնականում բացատրվում է նրանով, որ 2020թ. և

2025թ. մարվող և մեծ կշիռ ունեցող եվրապարտատոմսերի մարման ժամկետը ինչքան մոտենում է, այնքան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը նվազում է: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, տնտեսության վերականգնմանը զուգընթաց Հայաստանը, ըստ Համաշխարհային Բանկի դասակարգման, տեղափոխվեց միջին եկամուտ ունեցող երկրների շարքը, ինչի հետևանքով միջազգային վարկատու կազմակերպությունները և օտարերկրյա պետությունները սկսեցին աստիճանաբար խստացնել վարկավորման պայմանները՝ նվազեցնելով տրամադրվող արտոնյալ վարկային միջոցների ծավալները: Այնուամենայնիվ, մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը կանխատեսվող ժամանակահատվածում էական փոփոխություն չի կրի և կմնա սահմանված ուղենիշի միջակայքում: Այս տեսակետից, վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է չափավոր:

Ստորև ներկայացվում է նաև Կառավարության ընթացիկ պարտքի ցուցանիշը, որն իրենից ներկայացնում է տարվա ընթացքում մարումների և տոկոսավճարների հանրագումարը:

Գծապատկեր 2. Կառավարության ընթացիկ պարտքը 2014-2019թթ. (մլրդ դրամ)



Կառավարության ընթացիկ պարտքի ցուցանիշը նվազում է 2016թ., որից հետո 2017-2019թթ կրկին աճում է:

Աղյուսակ 11. Կառավարության ընթացիկ պարտքն ըստ գործիքակազմի (մլրդ դրամ)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Կառավարության ընթացիկ պարտքն ըստ գործիքակազմի, որից՝	217.1	244.1	307.9	292.3
արտաքին վարկեր և փոխառություններ	66.6	84.6	108.1	117.7
տոկոսավճար	31.3	36.5	40.9	44.2
մարում	35.3	48.1	67.3	73.5
պետական գանձապետական պարտատոմսեր	119.4	127.9	168.2	143.0
տոկոսավճար	38.2	40.0	45.8	51.3
մարում	81.2	87.9	122.4	91.7
արտարժութային պետական պարտատոմսեր	31.1	31.6	31.6	31.6
տոկոսավճար	31.1	31.6	31.6	31.6
մարում	-	-	-	-

Մեկ տարվա ընթացքում մարվող Կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ ցուցանիշը 2019թ. տարեվերջին էականորեն աճում է՝ հասնելով 14.0%-ի և հիմնականում պայմանավորված է 2020թ. մարվող եվրապարտատոմսերով: Կառավարությունը ջանալու է կանխիկ հոսքերի կառավարման գործիքների կիրառմամբ մինչ 2019թ-ը նվազեցնել այդ ռիսկը:

Տոկոսադրույքի ռիսկ

Քանի որ փոխառու միջոցների մի մասն արդեն իսկ ներգրավվում է շուկայական պայմաններով, ուստի ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել տոկոսադրույքի հետ կապված ռիսկերին: Ռազմավարական տեսանկյունից տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակն է ապահովել Կառավարության պարտքի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների փոփոխությունը հնարավորինս քիչ ազդեցություն կունենա կանխատեսվող տոկոսագումարների մակարդակի վրա:

Կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշը կանխատեսվող ժամանակահատվածում մի փոքր վատթարանում է, սակայն մնում է կառավարելի: Այսպես, ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը 2019թ. տարեվերջին նվազում է մինչև 80.6%-ի: Չնայած Կառավարության կողմից կանխատեսվող ժամանակահատվածում թողարկվելու է ավելի շատ ներքին պարտք, որի տոկոսադրույքը ֆիքսված է, այնուամենայնիվ, շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ծավալի կշիռը դեռևս նշանակալի չի լինելու: Մյուս կողմից, բազմակողմանի վարկատուները ավելի շատ լողացող տոկոսադրույքով նոր վարկեր են տրամադրելու և վերջիններիս ազդեցությունն ավելի է լինելու Կառավարության պարտքի պորտֆելի ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի վրա:

Աղյուսակ 12. Կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2016-2019թթ. (տոկոս)

	2016թ. պետբյուջեի ծրագիր	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Կկառավարության պարտք,	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝				
Ֆիքսված տոկոսադրույքով	85.5	84.6	82.8	80.6
Լողացող տոկոսադրույքով	14.5	15.4	17.2	19.4
Կառավարության արտաքին պարտք	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում				
Ֆիքսված տոկոսադրույքով	82.4	81.2	78.7	75.8
Լողացող տոկոսադրույքով	17.6	18.8	21.3	24.2
Կառավարության ներքին պարտք	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում				
Ֆիքսված տոկոսադրույքով	100.0	100.0	100.0	100.0
Լողացող տոկոսադրույքով	0.0	0.0	0.0	0.0

Որպես վերը նշվածի հետևանք, մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող Կառավարության պարտքի մասնաբաժինը ևս մեծանալու է, իսկ 2019թ. այն թռիչքային աճ է ունենալու և կազմելու է Կառավարության պարտքի պորտֆելի գրեթե մեկ երրորդը:

Աղյուսակ 13. Կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկերի ցուցանիշները 2016-2019թթ

	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	7.4	7.1	6.4	5.7
Հառավարության արտաքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	7.7	7.3	6.5	5.7
Կառավարության ներքին պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	6.1	6.1	6.0	5.7
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող Կառավարության պարտքի կշիռը (%)	18.9	20.7	22.1	33.2
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող Կառավարության արտաքին պարտքի կշիռը (%)	19.8	21.4	24.1	36.8
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող Կառավարության ներքին պարտքի կշիռը (%)	14.8	17.8	13.6	18.6

Պետք է նշել, որ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունները նույնպես նշանակալի ազդեցություն ունեն Կառավարության պարտքի ռիսկի ցուցանիշների վրա, ինչպես շուկայական փոփոխականների տատանումները: Օրինակ, կանխատեսվածից ավելի ցածր ՀՆԱ-ի կամ պետական բյուջեի պակասուրդի էական աճի արդյունքում ծախսերի և ռիսկերի ցուցանիշները կարող են էականորեն վատթարանալ:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը սահմանվում է որպես արտաքին գործոնների, տեխնոլոգիաների արդյունք, ինչպես նաև անձնակազմի, կազմակերպության, գործընթացների անբավարար գործունեության հետևանք: Գործառնական ռիսկը կառավարելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի տեղեկատվության անվտանգության ապահովումը՝ ներառյալ փաստաթղթերը և տեխնոլոգիական համակարգերը: Այստեղ անհրաժեշտ է ապահովել պարտքի գրանցման և հաշվառման տվյալների բազայի այլընտրանքային պահպանումը՝ ֆորս մաժորային իրավիճակներում ամբողջական տեղեկատվության պահպանման և աշխատանքների ընթացքը չխաթարելու, պարտքային պարտավորությունները ժամանակին և անթերի իրականացնելու համար: Գործառնական ռիսկը նվազեցնելու նպատակով կմշակվեն աշխատակարգեր, որտեղ հստակորեն կսահմանվեն պարտքի կառավարմամբ զբաղվող ստորաբաժանումների տեղեկատվական հոսքերը և պարտքի կառավարման հիմնական գործառույթների ընթացակարգերը:

<u>Զգայունության վերլուծություններ</u>

Մինչ այժմ կատարված ծախսերի և ռիսկերի վերլուծությունը հիմնված է եղել կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա և իրենից ներկայացնում է Կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմնական սցենար: Ստորև ներկայացվում է տարբեր շոկերի արդյունքում շուկայական փոփոխականների կամ ծախսերի և ռիսկերի ցուցանիշների շեղման չափը հիմնական սցենարի արդյունքներից:

Փոխարժեք

Կառավարության պարտքի պորտֆելը պարունակում է փոխարժեքի էական ռիսկեր: Կիրառելով 30% շոկ՝ 2017թ-ին արժեզրկելով դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ, Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. տարեվերջին հասնում է 57.4%-ի, որը 10.7 տոկոսային կետով ավելի է հիմնական սցենարի նույն ցուցանիշից:

Կանխատեսումային փոխարժեքների համեմատությամբ դրամի նկատմամբ USD-ի, EUR-ի, JPY-ի, GBP-ի, AED-ի փոխարժեքների 1% շեղումը 2017-2019թթ. ընթացքում կփոփոխի Կառավարության արտաքին պարտքը միջին հաշվով տարեկան 23.2 մլրդ դրամով: Վերոհիշյալ արժույթներից յուրաքանչյուրի փոխարժեքի 1% շեղման ազդեցությունը Կառավարության արտաքին պարտքի վրա կլինի հետևյալը.

Աղյուսակ 14. ՀՀ դրամի նկատմամբ փոխարժեքների 1%-ի փոփոխության ազդեցությունը Կառավարության պարտքի վրա (մլրդ դրամ)

	2017թ.	2018թ.	2019թ.
Կառավարության պարտք / ՀՆԱ-ի փոփոխությունը (%)	0.40	0.39	0.38
Ընդամենը	22.17	23.01	24.41
այդ թվում՝			
USD	14.5	15.4	16.7
EUR	4.3	4.3	4.5
GBP	0.6	0.6	0.6
JPY	1.8	1.7	1.7
AED	0.03	0.03	0.02
CNY	0.97	0.95	0.92

Տոկոսադրույք

Վերլուծելով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու միջոցների տոկոսադրույքների 250 բազիսային կետի չափով աճի շոկային սցենարը, պարզ է դառնում, որ տոկոսադրույքի շոկի ազդեցությունը Կառավարության պարտքի պորտֆելի վրա մնում է չափավոր, քանի որ Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. տարեվերջին հիմնական սցենարի նույն ցուցանիշի նկատմամբ ավելանալով 0.1 տոկոսային կետով՝ կազմում է 46.8%: Ընդ որում, այսպիսի շոկը կբարձրացնի ոչ միայն արտարժութային փոխառությունների տոկոսադրույքները, այլ նաև ներքին պարտքի շուկայի եկամտաբերության կորը:

Զուգահեռաբար ենթադրելով նաև էական՝ 500 բազիսային կետի չափով շոկային սցենար արտաքին պարտքի տոկոսադրույքների նկատմամբ, որի տեղի ունենալու հավանականությունը համեմատաբար ցածր է, տոկոսադրույքի շոկի ամբողջ ազդեցությունը Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը բազային սցենարի նկատմամբ կավելացնի 0.7 տոկոսային կետով՝ 2019թ. տարեվերջին հասցնելով 47.4%-ի: Կառավարության պարտքի սպասարկման տեսակետից այսպիսի էական շոկը 2019թ. տարեվերջին Տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշը կավելացնի 0.65 տոկոսային կետով:

Ստորև ներկայացվում է նաև լողացող տոկոսադրույքով պարտքի մեկ տոկոսային կետով աճի և ներքին տոկոսադրույքների մեկ տոկոսային կետով աճի ազդեցությունները:

Լողացող տոկոսադրույքների՝ 6-ամսյա ԱՄՆ դոլարի լիբորի և 6-ամսյա եվրիբորի մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում 2017-2019թթ Կառավարության արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կփոփոխվեն տարեկան 8.6 մլն ԱՄՆ դոլարով: Մասնավորապես, լողացող տոկոսադրույքներից յուրաքանչյուրի ազդեցությունը Կառավարության արտաքին պարտքի սպասարկման ծախսերի վրա կանխատեսվող ժամանակաշրջանում կլինի հետևյալը.

Աղյուսակ 15. Լողացող տոկոսադրույքների 1 տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը Կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարների վրա(մլն ԱՄՆ դոլար)

	2017թ.	2018թ.	2019թ.
Կառավարության արտաքին պարտքի տոկոսավճարի / Պետբյուջեի սեփական եկամուտներ (առանց դրամաշնորհի) ցուցանիշի փոփոխությունը (%)	0.30	0.32	0.35
Ընդամենը	7.3	8.5	10.0
այդ թվում՝			
6-ամսյա ԱՄՆ դոլարի Libor	6.8	8.0	9.3
6-ամսյա Euribor	0.5	0.5	0.7

Ներքին պարտքի շուկայում եկամտաբերության կորի մեկ տոկոսային կետով աճը կանխատեսվող ժամանակահատվածում կավելացնի ներքին պարտքի տոկոսավճարները տարեկան միջինը 1.3 մլրդ դրամով:

Աղյուսակ 16. Կառավարության ներքին պարտքի տոկոսադրույքի մեկ տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը Կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի վրա

	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.
Տոկոսային արտահայտությամբ			
Կառավարության ներքին պարտքի տոկոսավճար/Պետբյուջեի սեփական եկամուտներ (առանց դրամաշնորհի) ցուցանիշի փոփոխությունը (%)	0.12	0.09	0.09
Դրամային արտահայտությամբ			
Կառավարության ներքին պարտքի տոկոսավճարի փոփոխությունը (մլրդ դրամ)	1.4	1.2	1.3

Զգայունության վերլուծությունները թույլ են տալիս ենթադրել, որ Կառավարության պարտքի պորտֆելի վրա փոխարժեքի շոկի ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան տոկոսադրույքի շոկի ազդեցությունը, որը պայմանավորված է Կառավարության պարտքի պորտֆելում արտարժութային պարտքի մեծ տեսակարար կշռով և ֆիքսված տոկոսադրույքով պարտքի գերակայությամբ:

Եզրակացություններ

Կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ պարտքի պորտֆելն ամենաշատը ենթակա է փոխարժեքի ռիսկի ազդեցությանը: Այդ նպատակով, հաշվի առնելով ներքին շուկայի սահմանափակ հնարավորությունները, ներքին զուտ փոխառու միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման ծավալը 2017-2019թթ ժամանակահատվածի համար ավելացվել է և նախատեսվել տարեկան 45 մլրդ դրամ:

Կարևոր է նշել, որ միայն Կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները բավարար չեն Կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման համար բարեփոխումները պետք է շարունակվեն նաև ֆինանսական շուկայի այլ հատվածներում (կենսաթոշակային, ապահովագրական և այլն):

Կառավարությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է Կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները:

Կառավարության պարտքի պորտֆելի ռիսկերի կառավարման տեսակետից սահմանվել են ռիսկերի ուղենիշեր, որոնք որոշակի սահմանափակումների միջոցով նպատակ ունեն փոխարժեքի, տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկերը պահպանել կառավարելիության շրջանակներում:

Պետական բյուջեի դեֆիցիտի մեծության կանխատեսումներում առկա ռիսկը.

Սույն ծրագրով բյուջետային եկամուտների գծով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակի ձևավորման պարագայում՝ առաջացած ֆինանսական ճեղքվածքը լրացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով ողջամիտ չափով փոխառու և դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր հանդիսացող այլ միջոցների ներգրավման հնարավորության դեպքում 2017-2019թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի մեծությունները կարող են գերազանցել սույն ծրագրով կանխատեսվող դեֆիցիտի չափերը: Դրան հակառակ, բյուջետային եկամուտների գծով մուտքերի ծրագրվածից բարձր մակարդակի ձևավորման և/կամ ծախսերում տնտեսումների կամ թերակատարումների առաջացման պարագայում՝ 2017-2019թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի մեծությունները կարող են պակաս լինել սույն ծրագրով կանխատեսվող դեֆիցիտի չափերից:

Բացի այդ, անկախ 2017-2019թթ համար կանխատեսվող պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների առկայության հանգամանքից, պետական բյուջեի դեֆիցիտի մեծության վրա կարող է բացասական ազդեցություն ունենալ մակրոկանխատեսումներում պարունակված ռիսկերով պայմանավորված պետական պարտք/անվանական ՀՆԱ հարաբերության մեծությունը: Մասնավորապես, խոսքը գնում է այնպիսի հանգամանքների մասին, որոնց առկայությամբ պետական բյուջեի դեֆիցիտի մեծության նկատմամբ գործողության մեջ կդրվի «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ այն է.

«Եթե կառավարության պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3%-ը:»:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԷՆԵՐԳԵՏԻԿԱ, ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ) ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1. Ներածություն

Այս հատվածը ներկայացնում է հանրապետության ենթակառուցվածքային ոլորտներում, մասնավորապես, էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով 27 կազմակերպությունների (Ընկերություններ) գործունեությանն առնչվող հարկաբյուջետային ռիսկերի գնահատականը:

2. Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման նպատակը

Հարկաբյուջետային ռիսկերի այս գնահատման նպատակն է ֆինանսական վիճակի վերլուծության միջոցով գնահատել Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման հավանականությունը, որը կարող է հանգեցնել պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների տրամադրման, սեփական կապիտալի համալրման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև Ընկերությունների կողմից պետական բյուջե կանխատեսված շահութաբաժինների, ստացված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարման և մայր գումարների չմարման:

2.1 Հարկաբյուջետային ռիսկերի գնահատման մեթոդաբանություն

Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառվել են ֆինանսական գործակիցներ, որոնք արտացոլում են կապը Ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների միջև: Մասնավորապես.

- շահութաբերություն,
- իրացվելիություն (ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերություն),
- լևերիջ (ընդհանուր պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերություն),
- բաժնեմասնակցություն (վճարված կամ տրամադրված շահութաբաժինների և սեփական կապիտալի միջին տարեկան արժեքի հարաբերություն),
- սնանկացման կանխատեսման Է. Ալթմանի գործակիցներ[49]

[49] Է. Ալթմանի «Z-միավոր» կոչվող ցուցանիշը միջազգայնորեն կիրառվում է կորպորացիաների ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը կանխատեսելու նպատակով: Այն իրենից ներկայացնում է գործակիցներով կշռված՝ գործունեության հինգ կամ չորս ընդհանուր հարաբերակցությունների գծային զուգակցում: Գործակիցները հաշվարկվել են ֆինանսական ծանր վիճակում գտնվող ընկերությունների միջազգայնորեն որոշված ընտրանքի հիման վրա):

3. Առկա իրավիճակը և դրանից բխող հարկաբյուջետային ռիսկերը

Գնահատման այս բաժնում ներկայացվում են վերը նշված ոլորտների պետական մասնակցությամբ ընկերությունների, մասնավոր ընկերությունների գործունեության և պետական-մասնավոր գործընկերության հարկաբյուջետային ռիսկերը:

3.1 Պետական մասնակցությամբ ընկերություններ

Պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության արդյունքում հարկաբյուջետային ռիսկերն են.

1. Ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում որպես ժամանակավոր օգնություն չնախատեսված բյուջետային վարկերի տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման համար բյուջետային հատկացումների անհրաժեշտության առաջացում,

2. Ընկերություններին սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. Ընկերություններից պետական բյուջեի մուտքերի կազմում նախատեսված շահութաբաժինների չստացում,

4. ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին տրամադրված վարկային միջոցների օգտագործման դիմաց հաշվարկված տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2015թ. ընթացքում (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան) էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտների թվով 20 պետական մասնակցությամբ ընկերությունների հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են 181.4 մլրդ դրամ՝ 2014թ. 153.9 մլրդ դրամի դիմաց կամ 27.5 մլրդ դրամով (17.9%-ով) ավելի: Հաշվետու ժամանակաշրջանում այդ Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 190.0 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 154.6 մլրդ դրամի դիմաց՝ կամ ավել 35.4 մլրդ դրամով (22.9%-ով):

2015թ. հանրագումարային 5.6 մլրդ դրամ վնասի առկայությունն ամբողջությամբ պայմանավորված է ջրային տնտեսության ոլորտի Ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը (վնասը) ըստ ոլորտների

հազ.դրամ

	2013թ.	2014թ.	2015թ.
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
Պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային շահույթը հարկումից հետո	**(29,686,150.2)**	**(12,872,925.3)**	**(5,575,020.8)**
Էներգետիկա	(28,656,065.0)	2,663,236.0	1,931,202.0
Տրանսպորտ	(334,497.0)	622,332.0	663,586.90
Ջրային տնտեսություն	(695,588.2)	(16,158,493.3)	(8,169,809.7)

Հաշվետու ժամանակաշրջանում ջրային տնտեսության ոլորտի մասով արձանագրված վնասի առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից դեռևս 2007թ., 2009թ. և 2010թ. հաստատված սակագներով, որոնց հաշվարկների մեջ ներառված չեն ամորտիզացիոն մասհանումները, քանի որ ջրային տնտեսության ոլորտում պետության կողմից իրականացվում են մի շարք վարկային և դրամաշնորհային ծրագրեր (թվով 29 ծրագիր), որոնք հիմնականում նպատակաուղղված են ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնմանը, ոռոգման համակարգերի կապիտալ նորոգմանը:

Ջրային տնտեսության Ընկերությունների ընթացիկ ակտիվների կազմում մեծ տեսակարար կշիռ ունեն դեբիտորական պարտավորությունները (74.2%), որը պայմանավորված է մատուցված ծառայությունների դիմաց սպառողների կողմից փոխհատուցման ցածր մակարդակով:

Հաշվետու ժամանակաշրջանում էներգետիկայի ոլորտի մասով արձանագրված վնասի առաջացման պատճառները հիմնականում պայմանավորված են «Հայկական ատոմային էլեկտրակայան» և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ների ֆինանսական վիճակի վատթարացմամբ, որի առաջացման վրա էական ազդեցություն է թողել համակարգի ընկերությունների գործունեության հետ չկապված ծախսերի կրումն ու փոխառությունների տրամադրումը, սակագների հաշվարկների հիմքում դրված ոչ իրատեսական էներգոհաշվեկշիռները և այլն:

Ընկերությունների ֆինանսական գործունեության վերլուծության արդյունքում (Ընկերությունների հաշվապահական հաշվեկշռի տվյալները բերված են աղյուսակ 2-ում) պարզվել է, որ շահութաբերության, իրացվելության, լևերիջի, բաժնեմասնակցության և ֆինանսական ծանր վիճակի կանխատեսման գործակիցների գրեթե բոլոր ցուցանիշները հաշվետու տարվա ընթացքում ցուցաբերել են հիմնականում աճի դինամիկա:

Աղյուսակ 2. Պետական մասնակցությամբ ընկերությունների հանրագումարային հաշվապահական հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի դրությամբ (ըստ ոլորտների)

հազ. դրամ

Հաշվեկշռային հոդվածներ	2015թ. Պետական մասնակցությամբ 20 ընկերություններ			
	Էներգետիկա	Տրանսպորտ	Ջրային տնտեսություն	Ընդամենը
1. Ընդամենը ակտիվներ	**509,868,146.0**	**24,904,561.4**	**217,625,257.9**	**752,397,965.3**
- Ընթացիկ ակտիվներ	165,477,320.0	4,090,264.2	14,421,085.2	183,988,669.4
- Ոչ ընթացիկ ակտիվներ	344,390,826.0	20,814,297.2	203,204,173.7	568,409,295.9
2. Ընդամենը պարտավորություններ	**429,601,477.0**	**16,002,218.0**	**102,309,205.0**	**547,912,900.0**
-Ընթացիկ պարտավորու-թյուններ	19 ,520,062.0	1,382,698.0	8,243,172.0	203,145,932.0
- Ոչ ընթացիկ պարտավորություններ	236,081,415.0	14,619,520.0	94,066,033.0	344,766,968.0
3. Սեփական կապիտալ (զուտ ակտիվներ)	**80,266,670.0**	**8,902,342.3**	**115,316,053.0**	**204,485,065.3**

Ընկերությունների հաշվեկշռի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ իրացվելիության ցուցանիշը կազմում է 0.9 (կամ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռըն ընթացիկ պարտավորությունների մեջ կազմում է 90.1%) 2014թ. համեմատ աճելով 0.3-ով կամ 30.2 տոկոսային կետով (2014թ.՝ 0.6 կամ 59.9%), որը դեռևս ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված ընթացիկ իրացվելիության նվազագույն շեմի ցուցանիշից՝ 1-ից կամ 100%-ից, որը փաստում է այն մասին, որ Ընկերությունները (հիմնականում էներգետիկայի ոլորտ) կարող են ունենալ իրացվելիության հետ կապված խնդիրներ: Լևերիջի ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջանում կազմում է 2.7 (կամ ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը զուտ ակտիվների մեջ կազմում է 268.0%) 2014թ. համեմատ աճելով 0.5-ով կամ 49.2 տոկոսային կետով, որը բարձր է միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշներից (էներգետիկայի ոլորտում՝ 1.3 կամ 130%, իսկ ջրային տնտեսության ոլորտում 1.2 կամ 120%): Այդ պարագայում Ընկերությունների կողմից կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման հետ կապված ևս կարող են առաջանալ խնդիրներ:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից բյուջետային երաշխիքներ չեն ստացել:

Հարկ է նաև նշել, որ խմելու ջրի ոլորտի թվով 4 ընկերություններին, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի հաշվարկներում ներառված են նաև միջազգային ֆինանսական կազմակերպություն-

ների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում այդ ընկերություններին ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերի մայր գումարների մարումները:

Բացի այդ ՀՀ կառավարության 14.08.2014թ. N888-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը և այլ գույքը դիտարկվում են որպես միասնական գույքային համալիր և տվյալ գույքի հետագա օգտագործումն ու պահպանումը 2017 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է իրականացնել պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում՝ մեկ կառավարչի կողմից, իսկ ՀՀ կառավարության 14.08.2014թ. N883-Ն որոշման հավելվածի 2-րդ կետով՝ 2017թ. հունվարի 1-ից խմելու ջրի ոլորտի նոր վարձակալ ընկերությանը ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորում չի հատկացվելու, ինչպես նաև վարձակալ ընկերության կողմից վարձակալած ենթակառուցվածքներում կապիտալ ներդրումների նպատակով պետության նախկինում և նոր ստանձնած վարկային պարտավորությունների սպասարկման ֆինանսական պարտքերի մի մասը պետք է փոխհատուցվի սակագնի հաշվին՝ վարձավճարի տեսքով:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտի Ընկերությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարության 12.05.2016թ. N18 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 12.05.2016թ. ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» վարկային համաձայնագիրը, որի ընդհանուր գումարը կազմում է 30.0 մլն ԱՄՆ դոլար և որի նպատակն է էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների («Հայկական ատոմային էլեկտրակայան» և «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ներ) և էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակի բարելավումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերությունների դեմ դատական վարույթում գտնվող էական իրավական հայցերի բացակայությունը՝ 2017-2019թթ. (այսուհետ՝ ծրագրային ժամանակահատված) Ընկերությունների գործունեության արդյունքում ֆիսկալ ռիսկերի առաջացումն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես միջին (ՀՀ պետական բյուջեից Ընկերություններին չնախատեսված փոխառությունների, սուբսիդիաների չնախատեսված գումարների տրամադրման, սեփական կապիտալի համալրման, ՀՀ պետական բյուջեից տրամադրված վարկերի տոկոսների և մայր գումարների մարումների չստացման կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն):

Ինչ վերաբերում է Ընկերությունների կողմից կանխատեսված շահութաբաժինների չստացման ռիսկայնության գնահատմանը, ապա հաշվի առնելով, որ պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների 2015թ. հայտարարագրված և վճարվելիք, 2014թ. ծրագրավորված և ՀՀ պետական բյուջե փաստացի վճարված շահութաբաժինների չափերի ոչ

էական շեղումները, ինչպես նաև 2017-2019թթ. համար ծրագրավորված տարեկան ցուցանիշները (2014թ. կանխատեսվել էր 129.6 մլն դրամ, մինչդեռ փաստացի մուտքագրվել է 167.4 մլն դրամ, 2015թ. կանխատեսվում է 220.6 մլն դրամ, իսկ ծրագրային ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է՝ 2017թ.՝ 245.5 մլն դրամ, 2018թ.՝ 246.6 մլն դրամ և 2019թ.՝ 246.8 մլն դրամ (ըստ ոլորտների ներկայացված են աղյուսակ 3-ում)) ՀՀ պետական բյուջե վճարվող կանխատեսված շահութաբաժինների չստացման ռիսկը գնահատվում է ցածր:

Աղյուսակ 3. Ընկերությունների (թվով 7) կազմակերպությունների կողմից միջնաժամկետ հեռանկարում (2017-2019թթ.) ՀՀ պետական բյուջե շահութաբաժինների գծով վճարման տարեկան կանխատեսումներ

հազ.դրամ

Ոլորտ	2017թ.	2018թ.	2019թ.
Էներգետիկա	**71,085.0**	**71,235.0**	**71,385.0**
Տրանսպորտ	**174,400.0**	**175,400.0**	**175,400.0**
Ջրային տնտեսություն	**0.0**	**0.0**	**0.0**
Ընդամենը	***245,485.0***	***246,635.0***	***246,785.0***

3.2 *Մասնավոր ընկերություններ*

Մասնավոր ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերը բնութագրվում են հետևյալ ուղղություններով.

1. ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին չնախատեսված փոխառությունների տրամադրում կամ սեփական կապիտալի համալրում,

2. Մասնավոր Ընկերություններին սուբսիդիաների տրամադրում կամ այլ վճարումներ կատարելու անհրաժեշտություն,

3. ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերություններին տրամադրված վարկերի դիմաց տոկոսների չվճարում և մայր գումարների չմարում:

2015թ. ընթացքում վերոգրյալ 3 ոլորտներից մասնավոր ընկերություններ (թվով 5) գործում են միայն էներգետիկայի ոլորտում, որոնց հիմնական գործունեությունից ստացված հանրագումարային եկամուտները կազմել են շուրջ 450.7 մլրդ դրամ՝ 2014թ. 503.0 մլրդ դրամի դիմաց կամ պակաս 52.3 մլրդ դրամով (10.4%-ով): Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների հանրագումարային ծախսերը կազմել են 437.4.0 մլրդ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի 478.0 մլրդ դրամի դիմաց՝ նվազելով 40.6 մլրդ դրամով (8.5%-ով):

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունների 450.7 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 437.4 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 13.3 մլրդ դրամ, որից զուտ շահույթը 10.9 մլրդ դրամ (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների հանրագումարային զուտ շահույթը

հազ.դրամ

Մասնավոր ընկերություններ	2013թ.	2014թ.	2015թ.
	Փաստ.	Փաստ.	Փաստ.
	(33,763,317.0)	24,895,446.0	10,878,228.0
1. «Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ	1,404,898.0	2,689,131.0	701,845.0
2.«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	(24,749,000.0)	34,080,000.0	(10,749,000.0)
2.1«Տրանսգազ» ՍՊԸ	(6,491.0)	34,297.0	25,675.0
3.«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	(525,820.0)	(2,022,289.0)	(81,953.0)
4.«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	(9,886,904.0)	(9,851,396.0)	21,007,336.0

Ընկերություններից երկուսը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն և «Տրանսգազ» ՍՊԸ-ն հաշվետու տարին ավարտել են շահույթով, իսկ «Գազպրոմ Արմենիա», «Հրազդանի ՋԷԿ» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների մոտ 2015թ-ին 2014թ-ի համեմատ նկատվել է շահութաբերության նվազման միտում:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 5. Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների ֆինանսական գործակիցներ

Էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերություններ	2014թ.			2015թ.		
	Ընթացիկ իրացվելիություն	Լևերիջ	Z	Ընթացիկ իրացվելիություն	Լևերիջ	Z
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
«Հրազդան ՋԷԿ » ԲԲԸ	2.1	0.6	10.4	3.1	0.3	8.8
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	0.62	0.9	2.3	0.58	1.0	2.3
«Տրանսգազ» ՍՊԸ	1.5	0.5	9.8	1.9	0.4	13.5
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ	3.4	5.5	0.5	4.4	5.6	0.6
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	0.4	46.7	2.9	0.6	3.6	3.7

Ինչպես երևում է աղյուսակից՝ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի իրացվելիության ցուցանիշը հաշվետու ժամանակշրջանում աճել է 1-ով (կամ 103 տոկոսային կետով): Ընկերության ընթացիկ գործակիցը կազմում է 4.4 (կամ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը ընթացիկ պարտավորությունների մեջ կազմում է 443.8%), որը բարձր է միջազգային պրակտիկայում ընդունված իրացվելիության նորմայի ցուցանիշից (2 կամ 200%), իսկ լևերիջի ցուցանիշը ավելացել է 0.1-ով (կամ ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը զուտ ակտիվնե-

րի մեջ կազմում է 564.9%)՝ կազմելով 5.6: Այնուամենայնիվ այն դեռևս բավականին բարձր է միջազգային պրակտիկայում էներգետիկայի ոլորտի համար ընդունված ցուցանիշից (1.3 կամ 130%), որի պարագայում բարձրացել է Ընկերության կողմից կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը:

«Տրանսգազ» ՍՊԸ-ի դեպքում իրացվելիության ցուցանիշը կազմում է 1.9 (կամ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռն ընթացիկ պարտավորությունների մեջ կազմում է 191%) հաշվետու ժամանակշրջանում աճելով 0.4-ով կամ 36.5 տոկոսային կետով (2014թ.՝ 1.5 կամ 154.5%), որն արդեն իսկ համեմատելի է միջազգային պրակտիկայում ընդունված իրացվելիության նորմայի ցուցանիշի հետ: Լևերիջի գործակիցը 2014թ. համեմատ նվազել է 0.1-ով կամ 11.3 տոկոսային կետով և կազմել 0.4 (կամ ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը զուտ ակտիվների մեջ կազմում է 35.6 %), որն ավելի քան երեք անգամ ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշից (էներգետիկայի ոլորտի համար ընդունված ցուցանիշնից (1.3 կամ 130%) դեռևս ցածր է 0.9-ով կամ 94.4 տոկոսային կետով), որի արդյունքում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է ցածր:

«Հրազդան ՋԷԿ» ԲԲԸ-ի դեպքում իրացվելիության ցուցանիշը կազմում է 3.1 (կամ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռն ընթացիկ պարտավորությունների մեջ կազմում է 314.2%) 2014թ. համեմատ աճելով 1.1-ով կամ 105.3 տոկոսային կետով, որը բարձր է միջազգային պրակտիկայում ընդունված իրացվելիության նորմայի ցուցանիշից (2.0 կամ 200%), իսկ լևերիջի ցուցանիշը 2014թ. համեմատ նվազելով 0.3–ով կամ 29.7 տոկոսային կետով կազմել է 0.3 (կամ ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը զուտ ակտիվների մեջ կազմում է 33.3 տոկոս), որը ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշից և որի արդյունքում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է ցածր:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի դեպքում իրացվելիության ցուցանիշը 2014թ. համեմատ նվազելով 0.04-ով կամ 4 տոկոսային կետով կազմել է 0.58 (կամ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռն ընթացիկ պարտավորությունների մեջ կազմում է 58.8 %), իսկ լևերիջի ցուցանիշը 2014թ. համեմատ աճելով 0.1-ով կամ 2.4 տոկոսային կետով՝ կազմել է 1.0 (կամ ընդհանուր պարտավորությունների տեսակարար կշիռը զուտ ակտիվների մեջ կազմում է 96.3%), որը դեռևս ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշից, որի արդյունքում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է ցածր:

Ինչ վերաբերում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, ապա ընթացիկ ակտիվների 14%-ով ավելացման և ընթացիկ պարտավորությունների 20.3% նվազման արդյունքում իրացվելիության ցուցանիշը 2014թ. համեմատ աճել է 0.2-ով կամ 18.6 տոկոսային կետով և կազմել 0.6 (կամ ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռն ընթացիկ պարտավորությունների մեջ կազմում է 61.8%), որը դեռևս ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված իրացվելիության նորմայի ցու-

ցանիշից: Ընդհանուր պարտավորությունների 17.3% նվազման և սեփական կապիտալի ավելի քան 10.5 անգամ ավելացման պարագայում լևերիջի ցուցանիշը նվազել է 43.1-ով կամ 4306.8 տոկոսային կետով և կազմել 365.4%, որն ավելի քան 2.8 անգամ բարձր է միջազգային պրակտիկայում էներգետիկայի ոլորտի համար ընդունված ցուցանիշից և որի արդյունքում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է բարձր:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտի մասնավոր ընկերությունների համար կիրառելով Ալտմանի բանաձևը (թեև մոդելն առաջարկված է զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար) պարզվում է, որ Ընկերությունների սննկացման հավանականությունը նախորդ ու հաշվետու տարիներին փոքր է և սնանկության գործակիցը (Z=5) գտնվում է սահմանված ապահով (բարձր) գոտում՝ Z > 2.90:

Ընդ որում մասնավոր ընկերություներից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ն գտնվում է վերոնշյալ բանաձևի ծանր (ցածր) վիճակի գոտու միջակայքում (Z=0.6; Z<1.23), «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն՝ գորշ (միջին) գոտու միջակայքում (Z=2.3; Z<2,90), իսկ «Տրանսգազ» ՍՊԸ, «Հրազդանի ՋԷԿ» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ներն ունեն բանաձևի ապահով գոտու միջակայքի համար սահմանված առավելագույն չափից բարձր ցուցանիշներ (2015թ. համար համապատասխանաբար՝ Z=13.5, Z=8.8 և Z=3.7):

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ժամկետանց վարկային պարտավորություններ:

Միաժամանակ ՀՀ կառավարության 12.05.2016թ. N18 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 12.05.2016թ. ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» վարկային համաձայնագիրը, որի ընդհանուր գումարը կազմում է 30.0 մլն ԱՄՆ դոլար և որի նպատակն է էլեկտրաէներգիա արտադրող պետական ընկերությունների ու էլեկտրաէներգիայի բաշխիչ մասնավոր ընկերության ֆինանսական վիճակի բարելավումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ՝ Ընկերությունների գործունեության արդյունքում ֆիսկալ ռիսկերի առաջացումն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես միջին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունների արդյունքները և այն, որ Ընկերությունների դեմ դատական վարույթում գտնվող էական իրավական հայցերի բացակայությունը (միայն «Գազպրոմ Արմենիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ների դեմ են առկա դատական վարույթում գտնվող ոչ էական իրավական հայցեր՝ որոնց տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում չի գերազանցում 0.5 տոկոսը), ծրագրային ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից մասնավոր Ընկերությունների գործունեության արդյունքում ֆիսկալ ռիսկերի (չնախատեսված փոխառությունների տրամադրման կամ սեփական կապիտալի համալրման, սուբսիդիաների տրամադրման կամ այլ

վճարումներ կատարելու անհրաժեշտության, ՀՀ պետական բյուջեից տրամադրված վարկերի դիմաց տոկոսների և մայր գումարների մարումների չստացման) առաջացումն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես ցածր:

3.3 Պետական-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ)

Տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտներում ՊՄԳ սխեմայի ներքո գործում են «Հարավկովկասյան երկաթուղի» և «Երևան Ջուր» ՓԲԸ-ները:

Հաշվետու ժամանակաշրջանում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդամենը եկամուտները կազմել են 21.2 մլրդ դրամ նախորդ ժամանակաշրջանի 23.5 մլրդ դրամի դիմաց կամ պակաս 9.8%-ով (2.3 մլրդ դրամով), որը հիմնականում պայմանավորված է բեռնափոխադրումների, ուղևորափոխադրումների և այլ մատուցվող ծառայությունների ծավալների նվազման հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի 21.2 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 21.1 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 159.1 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի 9.9 մլրդ դրամ ընդհանուր եկամուտների և 8.9 մլրդ դրամ ընդհանուր ծախսերի արդյունքում շահույթը կազմել է 1.0 մլրդ դրամ:

Ընկերությունների ֆինանսական գործունեության վերլուծության արդյունքում պարզվել է, որ շահութաբերության գրեթե բոլոր ցուցանիշները հաշվետու տարվա ընթացքում 2014թ. համեմատ մնացել են գրեթե անփոփոխ:

Ընկերությունների հարկաբյուջետային ռիսկերի գնահատման համար կիրառված ֆինանսական գործակիցները ներկայացված են աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 6. Պետական-մասնավոր գործընկերության սկզբունքով գործող ընկերությունների ֆինանսական գործակիցներ

Պետական-մասնավոր գործընկերություն	2014թ.			2015թ.		
	Ընթացիկ իրացվելիություն	Լևերիջ	Z	Ընթացիկ իրացվելիություն	Լևերիջ	Z
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	4.5	0.05	9.9	3.2	0.05	9.7
«Երևան Ջուր» ՓԲԸ	4.0	1.1	6.3	5.0	0.9	6.2

Չնայած «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի իրացվելիության ցուցանիշը հաշվետու ժամանակշրջանում նվազել է 1.3-ով կամ 126.7 տոկոսային կետով, այնուամենայնիվ Ընկերության ընթացիկ գործակիցը բավականին բարձր է նորմայից (2 կամ 200%) և կազմում է 3.2 կամ 321 %,

հետևաբար այս Ընկերության մոտ ընթացիկ իրացվելիության հետ կապված դժվարությունները բացակայում են: Իսկ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի իրացվելիության ցուցանիշը հաշվետու ժամանակաշրջանում աճել է 1.0-ով կամ 103 տոկոսային կետով՝ կազմելով 5.0 կամ 500.9%, որը 2.5 անգամ բարձր է նորմայից, հետևաբար այս Ընկերության մոտ ընթացիկ իրացվելիության դժվարություններ առկա չեն:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի լևերիջի տեսակարար կշիռը հաշվետու ժամանակաշրջանում մնացել է գրեթե անփոփոխ աճել է 0.1 տոկոսային կետով և կազմում է 4.8%, որը փաստում է այն մասին, որ կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը ցածր է:

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի լևերիջի ցուցանիշը հաշվետու ժամանակշրջանում 2014թ. համեմատ նվազել է 0.2-ով կամ 11.3 տոկոսային կետով և կազմել 0.9, որը դեռևս 31.7 տոկոսային կետով ցածր է միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշից (ջրային ոլորտի համար՝ 1.2 կամ 120%), որի պարագայում կրեդիտորների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարման ռիսկը գնահատվում է ցածր:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հաշվեկշռի ընթացիկ ակտիվների կառուցվածքում դեբիտորական պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում նվազել են 47.1%-ով (1,059.4 մլն դրամով)՝ կազմելով 1,191.3 մլն դրամ:

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռի ընթացիկ ակտիվների կառուցվածքում դեբիտորական պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են 12.3%-ով (198.7 մլն դրամով)՝ կազմելով 1.8 մլրդ դրամ:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հաշվեկշռի ընթացիկ պարտավորությունների մեծությունը հաշվետու ժամանակաշրջանում նվազել է 63.1 մլն դրամով (2.6%-ով) կազմելով 2,365.8 մլն դրամ (հատկապես նվազել են կրեդիտորական պարտքեր անձնակազմին՝ 38.0%-ով):

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռի ընթացիկ պարտավորությունների կառուցվածքում կրեդիտորական պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում աճել են 13.0%-ով (87.9 մլն դրամով) կազմելով 765.7 մլն դրամ:

Միաժամանակ համաձայն Ալտմանի բանաձևի, Ընկերությունների սնանկացման հավանականություն գոյություն չունի: Մասնավորապես՝ Ընկերությունների սննկացման հավանականությունը նախորդ և հաշվետու տարիների ցուցանիշների հիման վրա բացառվում է և սնանկության գործակիցը, համապատասխանաբար՝ Z=9.7, Z=6,2 ունի սահմանված ապահով գոտու համար առավելագույն չափից բավականին բարձր ցուցանիշ:

Հարկ է նաև նշել, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է, որ կոնցեդենտը (Հայաստանի Հանրապետությունը) սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումնե-

րի կոնցեսիոների տարեկան վնասը անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում (տարեկան սուբսիդիայի գումարը չի կարող գերազանցել կամ հավասար լինել տվյալ տարվա համար հայտարարված կոնցեսիոն փոփոխական տարեկան վճարի գումարին): Սուբսիդիայի համաձայնեցված չափը կազմում է արձանագրված վնասի 2015թ. 25%, 2016թ. մինչև 2038թ. 30 տոկոս (2014թ. և 2015թ. համար 328.8 մլն դրամ, իսկ 2016թ. նախատեսվել է 349.9 մլն դրամ, իսկ 2017-2019թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսվել է համապատասխանաբար՝ 324.0 մլն դրամ, 331.0 մլն դրամ և 339.0 մլն դրամ):

Միաժամանակ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված է նաև, որ կոնցեսիոները կոնցեդենտին պետք է վճարի տարեկան կոնցեսիոն վճար՝ համախառն հասույթի 2%-ի չափով (2014թ.՝ 351.6 մլն դրամ, 2015թ.՝ 344.9 մլն դրամ, 2016թ.՝ 377.2 մլն դրամ, իսկ 2017-2019թթ. յուրաքանչյուր տարվա համար համապատասխանաբար՝ 324.0 մլն դրամ, 331.0 մլն դրամ և 339.0 մլն դրամ): Հետևաբար հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիայի և նշված Ընկերության կողմից վճարվող կոնցեսիոն վճարի չափերը գրեթե համեմատելի են, ուստի Ընկերության կողմից ծրագրային ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե վճարվող կոնցեսիոն վճարի չվճարման ռիսկը գնահատվում է բավականին ցածր:

Վարկային պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ Ընկերությունները չունեն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ վարկային պարտավորություններ:

Միաժամանակ հարկ է նաև նշել, որ «Երևան Ջուր» ՓԲԸ-ն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պետք է վճարի ֆիքսված վճարներ՝ 2013թ.-471,0 մլն դրամ, 2014թ.-468,5 մլն դրամ, 2015թ.-316,9 մլն դրամ, 2016թ.-184.8 մլն դրամ: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև նշել, որ Ընկերությունն ապահովել է վարձակալության պայմանագրով սահմանված կատարողական և պայմանագրային այլ ցուցանիշների կատարումը:

